ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Զ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Զ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Ճ Ա Ռ Ե Ր

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2009

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Ո 851

Թարգմանությունը գրաբարից՝
Մարթա Արաբյանի

Սուրբ Հովհան Ոսկեբերան
Ո 851 ՃԱՌԵՐ. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009. - 344 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

«Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի

ISBN 978-9939-59-024-0 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.

Որ անապական Բանին քարոզ կոչեցար,
Բերան ոսկի, Յորմէ աղբիւր կենաց հոսեալ՝
Արբուցանելով քառավտակ բղխմամբ զընդ
հանուր տիեզերս
(շարական)

Տիեզերքի վարդապետ ու լուսավորիչ Հովհան Ոսկեբերանը հոգևոր ասպարեզ իջավ այն ժամանակ, երբ Եկեղեցին արդեն ապրել էր սարսափելի հալածանքների ժամանակաշրջանը, հռոմեական կայսրերի գահին բազմել էին նրա զավակները, սակայն ժողովուրդների մեջ դեռևս հոգու խռովք էր տիրում: Մի մասը զգում էր, որ փրկությունը քրիստոնյա լինելու մեջ է, և գնում էին չարչարանքների, մյուսները թունավորված էին հեթանոսության թույնով, դրա մահացու սնահավատությամբ և բարոյական անկումով: Սակայն հատկապես մեծ վտանգ էին ներկայացնում հերձվածողները, որոնց մեջ ամենավտանգավորն ու տարածվածը արիոսականությունն էր:

Հենց այդ ժամանակ Աստված Եկեղեցուն պարգևեց մեծագույն աստվածաբանների և քրիստոնեական վարդապետության համար մարտնչողների, որոնց մեջ առավել հռչակվեցին սուրբ Աթանաս Մեծը, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Աստվածաբանը և, անշուշտ, Հովհան Ոսկեբերանը: «Աստվածային գաղտնիքների խոհեմ քննիչ, Եկեղեցու աչք», այսպես է անվանել նրան սուրբ Իսիդորոսը, իսկ երանելի Թեոդորոսը նրան անվանել է աշխարհի մեծ լույս՝ հավատքի առաքելական ավանդը պահպանած:

Սուրբ Հոգով լցված եւ մարտիրոսի փառքով շրջապատված հայրապետը թողել է հսկայական ժառանգություն, որոնցից, դժբախտաբար, ոչ բոլորն են հասել մեզ, և որոնց կենդանարար լույսը մեկուկես հազարամյակ է՝ լուսավորում է դեպի փրկություն տանող ճանապարհը:

Սուրբ Հովհան Ոսկեբերան աստուածաբան հայրապետը ծնվել է 347 թվականին Անտիոք քաղաքում: Նա ազգությամբ ասորի էր, բարեպաշտ և հարուստ ծնողների զավակ: Շատ վաղ հասակում զրկվել է հորից, որ ասորական զորաբանակի առաջնորդ էր: Այրի Անթուսան, որ ընդամենը քսան տարեկան էր, ամբողջովին նվիրվում է որդու դաստիարակությանը: Նրա առաքինությունը հիացնում էր քրիստոնյաներին և զարմացնում հե-

թանոսներին: Հայտնի հռետոր Լիբանիոսը, որի մոտ սովորում էր Հովհանը, հիացած ասում էր Անթուսայի մասին. «Ինչպիսի՜ կանայք կան քրիստոնյաների մեջ»:

Ստանալով բազմակողմանի կրթություն և քրիստոնեական դաստիարակություն, Հովհանը ընդունվում է փաստաբանական ծառայության, սակայն շուտով որոշում է ամբողջովին տրվել Աստծո ծառայությանը և մենակեցությանը: Դեռևս իր տանը նա սկսում է ապրել խստակրոն կյանքով: Նրա վարքում կարդում ենք.՝ «Նա հույժ պահեցող էր, ճաշակում էր երկու-երեք օրը մեկ անգամ չափով ջուր և սակավիկ հաց: Իր սենյակում պարան էր կապել, և երբ տքնությունից շատ էր հոգնում, լանջով ընկնում էր պարանի վրա և սակավ հանգիստ առնելով՝ ննջում» (Մ.Մ. Ձեռ. 5334): Իր ընկերների՝ Մաքսիմոսի, Թեոդորոս Մոպսուեստացու, Բարսեղի հետ միասին Հովհանը խորությամբ սովորում է Սուրբ Գիրքը Դիոդորոսի դպրոցում:

370 թվականին Մելետիոս Անտիոքացին նրան ձեռնադրում է դպիր: Շուտով իմանալով, որ իրեն կամենում են եպիսկոպոս ձեռնադրել, փակվում է վանքում, որտեղ գրում է քահանայության մասին ճառերը: Չորս տարի նա անցկացնում է մենակեցական սխրանքների մեջ, ապա դարձալ երկու տարի պահքով և աղոթքներով ճգնում քարայրում: Միայնակեցության դեմ պայքարողների մասին իր ճառերում Հովհանը գովաբանում է անապատական կենցաղավարությունը, որտեղ մաքրված սրբված հոգին քաղցրորեն զրուցում է Արարչի հետ: Սակայն հրաշագործ հայրապետը հիվանդության պատճառով ստիպված է լինում վերադառնալ Անտիոք. չափից ավելի ճգնությունը հյուծել էր նրա մարմինը:

381 թվականի սկզբին նրան ձեռնադրում են սարկավագ. այդ ընթացքում նա զբաղվում է աղքատներին հոգ տանելով ու բարեգործությամբ: 386 թվականին ձեռնադրվում է քահանա: Նրա ձեռնադրության ժամանակ եկեղեցի է մտնում մի սպիտակ աղավնի և բոլորի աչքի առջև նստում Հովհանի գլխին՝ իբրև Սուրբ Հոգու խորհրդանիշ:

Իր քահանայության տասներկու տարիների ընթացքում նա հռչակվում է քարոզչական ծառայությամբ: Շաբաթը մեկ անգամ նա մեկնում էր Սուրբ Գիրքը: Իսկ աղքատների, այրիների, օտարականների ու բանտարկյալների մասին հոգ տանելը մնում էր նրա սիրելի գործը: Նրա՝ իբրև աստվածային հովվի, հոգեկիր վարդապետի, ճգնավորի ու աղքատասերի համբավը տարածվեց ամբողջ երկրում: Նրան լսելու էին գալիս ոչ միայն քրիստոնյաներ, այլ նաև հրեաներ, արիոսականներ, հեթանոսներ: Սիրով լեցուն նրա խոսքերը հասնում էին բոլորի հոգուն ու սրտին: Նրա քարոզները լցված էին զորությամբ ու կյանքով, քանզի նա ուսուցանում էր այն, ինչ ինքն էր ապրում, և մեկնում էր աստվածային վարդապետությունը պարզ ու բոլորին հասկանալի լեզվով:

Իր պերճախոսության համար նրան Ոսկեբերան անվանեցին: Հենց այդ ժամանակ նա իր հոտին էր քարոզում խորունկ մեկնաբանությունը Ծննդոց գրքի, Մատթեոսի, Հովհաննու ավետարանների, Պողոս առաքյալի թղթերի, Սաղմոսների, Եսայիի մարգարեության գրքերը:

Նա ընդդիմանում էր շքեղությանը և հարուստների ագահությանը, նրանց սրբապղծությանն ու աստվածանարգությանը, նրանց անբարոյությանն ու դաժանությանը, կոչում էր զղջալու, գթասրտության ու ողջախոհության:

Նա հայրական սիրով էր հոգում բոլորի փրկության համար և այդ սիրով ապաշխարության էր տանում մեղավորներին՝ ասելով. «Որքան էլ ընկնես, կանգնի՛ր, և որքան էլ մեղանչես, դարձի՛ր, և կներվեն քո մեղքերը: Եվ եթե բազում անգամ մեղանչես, բազում անգամ զղջա՛ և կմխիթարվես»: Եվ հուսահատությունն ամբողջովին հեռացնում էր մադկանցից՝ ասելով. «Սատանան մեղավորներին հուսահատությամբ առավել է կործանում, քան այլ մեղքերով, և թույլ չի տալիս զղջալ, դառնալ, խոստովանել ու ապաշխարել»:

Սուրբ հովիվը խարազանում էր մեղքը, այլ ոչ թե մեղավորներին. «Թեպետև հազար անգամ դու հայհոյես ինձ, ամբողջ սրտով, սրտի մաքուր խորհրդով ասում եմ քեզ՝ խաղաղություն. և չեմ կարող այպանել, քանզի իմ մեջ հայրական սեր է... Որքան ավելի սիրելով՝ քիչ սիրելի լինեմ, այնքան առավել պիտի սիրեմ ձեզ: Քանզի մեծն է կապում մեզ. մեկ սեղան է մեր առջև, մեկն է մեր Հայրը»:

Նա քարոզում էր նաև թշնամիներին սիրելու մասին՝ իր կյանքով ցույց տալով այդ սերը և վեհանձն խոնարհությունը իրեն հալածողների առջև:

Անտիոքցիները սուրբ հովվի մեջ տեսնում էին սիրո և ապաշխարության վարդապետի: Նրան համեմատում էին Հովհաննես մկրտչի և Հովհաննես ավետարանչի հետ:

Նեքտարիոս պատրիարքի մահից հետո Արկադեոս կայսեր համաձայնությամբ 398 թվականին Ոսկեբերանը ձեռնադրվում է Կ. Պոլսի պատրիարք: Իբրև պատրիարք իր առաջին քարոզում Հովհանը խոստացավ գնալ Բարսեղ Մեծի հետքով, «չպակասեցնել ջանքերն ու չվախենալ ոչ մի խոնարհ խոսքից ու գործից». «Կոստանդնուպոլսում դեռևս կան հեթանոսներ. ես կջանամ նրանց եկեղեցի բերել՝ նրանց համար քրիստոնեական կյանքի օրինակ լինելով... Կոստանդնուպոլսում կան շատ արիոսականներ ու այլ հերձվածողներ. ես նրանց դեմ ուրիշ զենք չեմ գործածի, բացի Սուրբ հոգու սուսերից, որ Աստծո խոսքն է... Աստծո օգնությամբ արիաբար կմերկացնեմ մեղքերը. երբեք տեղի չեմ տա, երբեք պայմանագիր չեմ կնքի դժոխքի հետ»:

Արքեպիսկոպոսը, ինչպես առաջ, մեղավորներին կոչում էր զղջումի, խոսելով սպասվող Դատաստանի մասին՝ հիշեցնում էր Նրա գթասրտության և անսահման սիրո մասին:

Եվ իր հոգելից քարոզներով, և՛ քրիստոնյայի իր կենցաղավարությամբ սուրբը ցույց էր տալիս, թե որն է փրկության տանող նեղ ճանապարհը: Գալով մայրաքաղաք՝ նա վաճառեց նախկին պատրիարքի հարուստ տունը և եկավ ապրելու մի սենյակում, ուր դրեց միայն ամենաանհրաժեշտ ու հասարակ իրերը, իսկ փողը տրամադրեց Եկեղեցու կարիքներին: Ողորմած հայրապետը Պոլսում կառուցեց հիվանդանոցներ, իջևանատներ, այցելում և մխիթարում էր բանտարկյալներին, օգնում սգավորներին, հալածվողներին, կարոտյալներին, հարուստներին ողորմածության էր մղում:

Ինչպես նախկինում՝ նա խիստ ժուժկալ և աղոթական կյանք էր վարում՝ շատ համեստ սեղանով, առանց հանդիսավոր ընդունելությունների ու ճաշկերույթների: Նրա համեստությունը կշտամբանք էր դառնում շատ հայտնի քաղաքակիցների ու մեղսալի կյանքով ապրող հոգևորականների փափկակեցությանը և տարօրինակ էր թվում հատկապես նախկին պատրիարքից հետո, ով սիրում էր հարստություն, շքեղ ճաշկերույթներ, հանդիսավոր ընդունելություններ կայսերական պալատում: Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքը, օրինակ, Ոսկերերանի՝ իր առջև դրած պարզ սեղանը իր կոչմանը վիրավորական համարեց :

Եվ որովհետև նա անաչառությամբ հանդիմանում էր ուղղության չեկողներին, մանավանդ Եվդոքսիա թագուհուն, ատվեց նրա կողմից և աքսորվեց Կոկիսոն, որտեղ բազում կռապաշտների քրիստոնյա դարձրեց և չդադարեց Բարձրյալի շնորհներով աստվածային Գրքերի մեկնությունները գրելուց:

Երբ սուրբը քաղաքից ելավ, նրա վարդապետությունից զրկվելու պատճառով ժողովուրդը մեծ աղմուկ ու խռովություն բարձրացրեց՝ պահանջելով հայրապետին, մինչև որ թագավորը մարդ ուղարկեց և մեծ պաղատանքներով իր աթոռ վերադարձրեց նրան:

Սուրբ Հովհանը, քաղաք գալով, համարձակությամբ շարունակում էր իր լուսավոր վարդապետությունը, հանդիմանում ու կշտամբում էր հակառակորդներին՝ գալու ճշմարտության գիտության: Դարձյալ չարը շարժեց թագուհու բարկությունը այսպիսի պատճառով. Ս. Սոֆիայի տաճարի առջև ի պատիվ թագուհու դրված արձանների մոտ տեղի էին ունենում անվայել զվարճահանդեսներ, որի պատճառով սուրբ հայրապետն իր ճառում պախարակեց ամեն տեսակի զվարճահանդեսներն ու հորդորեց հեռու մնալ նման բաներից ու թատրոններից. «Քանզի, ասում էր, դրանք ատելի են Աստծուն»: Որի համար թագուհին զայրանալով՝ նրա համար չարիք էր խորհում: Սուրբը, իմանալով այդ մասին, իր քարոզի մեջ ասաց. «Դարձյալ մոլեգնում է Հերովդիադան՝ անիրավությամբ կտրելու Հովհաննեսի գլուխը ճշմարտության պատճառով», և դեմ հանդիման նրան անվանեց հին Հեզաբել և նոր Հերովդիադա: Եվդոքսիան բարկացավ և

Զատկի օրը թույլ չտվեց Հովհանին գալ ավագ եկեղեցի և այնտեղ պատարագ մատուցել: Եվ բոլոր քաղաքացիները գնացին այն եկեղեցին, ուր Հովհաննեսն էր, իսկ ավագ եկեղեցին մնաց դատարկ: Թագուհին առավել մոլեգնեց, և դարձյալ նրա հրամանով սուրբ հայրապետը աքսորվեց: Ճանապարհը դժվարին էր, մանավանդ ձմեռ ու սառնամանիք էր: Հասնելով Կոմանա գյուղը՝ սուրբ Բասիլիսկոս եպիսկոպոսի գերեզմանին, որ վկայությամբ մարտիրոսվել էր այնտեղ, սուրբը մտավ եկեղեցի և գոհություն հայտնեց Աստծուն: Նույն գիշերը նրան երևաց Բասիլիսկոս վկան և ասաց նրան. «Քաջալերվի՛ր և զորացի՛ր, մեր եղբա՛յր տեր Հովհաննես, քանզի վաղը միասին պիտի լինենք Աստծո առջև»: Հաջորդ օրը՝ սուրբ պատարագ մատուցելուց և Աստծո Որդու փրկական մարմնին ու արյանը հաղորդվելուց հետո, նա ասաց իր սովորական խոսքերը. «Փա՛ռք քեզ, Աստվա՛ծ, ամեն բանի համար», և ողջունելով բոլորին՝ իր հոգին ավանդեց Աստծուն: Այդ կատարվեց 407 թվականի սեպտեմբերի 14-ին:

Սուրբ հայրապետի քարոզների ներկա հրատարակությունը կազմել ենք Վենետիկ, Սուրբ Ղազար, 1818 թ. հրատարակված «Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի՝ Կոստանդնուպօլսոյ արքեպիսկոպոսի հատընտիր գիրք և ճառք և ներբողեանք», հատոր առաջին, և 1861 թ. հրատարակություններից[1]:

Մ. Աբաբյան

[1] Օգտագործված գրականություն՝ Մ.Մ. ձեռ.5334,
Святитель Иоанн Златоуст, Писма о духовной жизни, Москва, 2005, стр. 5-19.

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ, ԵՐԲ ՁԵՌՆԱԴՐՎԵՑ ՔԱՀԱՆԱ

ԱՐԴԱՐԱՊԵՍ ԱՂՈԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ[1]

Արդյո՞ք ճշմարիտ է այն, ինչ պատահեց մեզ, իսկապես կատարվե՞լ է սա, խաբկանքի մեջ չե՞նք մենք, գիշեր չէ՞, և երազ չե՞ն պատահածները, ցերեկ է, և արթո՞ւն ենք բոլորս: Ո՞վ կհավատա, որ ցերեկով, երբ արթուն ու սթափ են բոլոր մարդիկ, մի չնչին ու նվաստ երիտասարդ իշխանության այսպիսի բարձունքի ելավ, քանզի գիշերով [երազի մեջ] անգամ այսպիսի բանի չես հանդիպի: Քանզի խեղված մարմին ունեցող և անհրաժեշտ կերակուրներին կարոտող որոշ մարդիկ երազում տեսնում են, որ իրենք կատարյալ ու գեղեցիկ մարմին ունեն և վայելում են արքայական սեղանից: Սակայն քուն ու երազի խաբկանք է այդ: Այդպիսին է երազների բնույթը՝ աննյութական ու սքանչելի, զարմանալի բաներով ուրախացնող: Իսկ այսպիսի բան ոչ ոք ցերեկով և հարթմնի երբևէ տեսնել չի կարող: Բայց այդ պատահեց այժմ, եղավ, կատարվեց, և դուք այդ տեսաք. գործեր, որ ավելի անհավատալի են, քան երազները: Ահա մեծ ու բազմամարդ քաղաքը, և հիացած ու խուռնընթաց բազմությունը մեր փոքրությունից ակնկալում է մեծ ու ազնիվ բաներ լսել: Եթե նույնիսկ հոսեի մշտնջենավոր գետի պես, և իմ բերանից խոսքի աղբյուրներ բխեին, այսքան մեծ բազմության առջև ահից կանգ կառներ վտակը և ետ կշրջվեր: Իսկ երբ ոչ թե գետեր են կամ աղբյուրներ, այլ փոքրիկ կաթիլ, ինչպե՞ս չենք վախե-

[1] Այս ճառը Ոսկեբերանի՝ քահանա ձեռնադրվելուց հետո առաջին ճառն է: Խոսվել է Անտիոքում, 386 թվականին:

նա, որ այն կպակասի՝ ցամաքելով երկյուղից, և կլինի այն, ինչ լինում է մեր մարմնին: Իսկ ի՞նչ է լինում մեր մարմնին: Հաճախ է պատահում, որ մեր ձեռքում բռնում ու մատների մեջ սեղմում ենք ինչ-որ բան, բայց ահից, երբ թուլանում են ջղերն ու մարմնի զորությունը, այն ընկնում է մեր ձեռքից: Այդ նույն երկյուղն ունեմ. չլինի թե այսօր էլ նույնը պատահի մեր հոգուն, և այն, ինչ մեծ չարչարանքով ամբարեցինք մեր մտքում (թեպետև քիչ ու չնչին չափով), տագնապից մոռացվի ու անհետանա՝ լքելով մեր միտքը և մեր ունկնդիրների առջև այն ամայի թողնելով:

Ուստիև աղաչում եմ ձեզ բոլորիդ՝ իշխաններիդ ու իշխանության տակ գտնվողներիդ՝ որքան տագնապ առաջացրեցիք մեր մեջ՝ ունկնդրության շտապելով, նույնքան էլ թող ձեր աղոթքները քաջալերեն մեզ՝ աղերսելով Նրան, Ով խոսք է դնում մեծ զորությամբ քարոզողների բերանում, որպեսզի մեզ էլ խոսք տա՝ բացելու մեր բերանը: Այդչափ կատարելահասակ մարդկանցդ համար դժվար բան չէ խնդրելը, որ երկյուղից թուլացած մի պատանյակ վերստին ամրանա: Արդարացի է, որ դուք կատարեք մեր խնդրանքը, քանզի հենց ձեզ համար եկանք ընկանք այդ վտանգի մեջ, ձեզ և ձեր սիրո համար առաջ, քան զորանալը, անփորձս խոսելու դրդվեց և քաջալերվեց՝ մտնելու վարդապետության ասպարեզ: Թեև նախկինում չենք եղել այս ասպարեզի մեջ, այլ միշտ ունկնդիրների կարգում և վայելել ենք անզբաղ լռությունը: Բայց ո՞վ է այնքան անզգամ ու անընտել, որ կողքից լռությամբ արհամարհի հավաքվածներիդ և տեսնելով ունկնդրության ջերմեռանդ փափագողներին՝ չխոսի, եթե անգամ բոլոր մարդկանցից անխոս մեկը լինի:

Արդ, պատրաստվում եմ խոսել եկեղեցում՝ ցանկանալով երախայրիքներից առաջինը նվիրել մեզ այս լեզուն Տվողին՝ Աստծուն: Եվ արժան է այդպես անել, քանզի Աստծուն պետք է տալ ոչ միայն կալի և հնձանի, այլ նաև խոսքերի պտուղը. և խոսքերի (պտուղն) առավել, քան խրձերինը, որովհետև այս պտուղն առավել ընտանի է մեզ, իսկ փառավորյալ Աստծու համար՝ առավել ընդունելի:

Ողկույզն ու հասկն իր ծոցից հանում է երկիրը, դրանք սնում են անձրևները, մշակում են հողագործների ձեռքերը, իսկ աստվածային օրհնություններ ծնում է հոգու բարեպաշտությունը, սնում բարի մտածությունը, և երկնային շտեմարանն է ընդունում Աստված: Ուրեմն որքան ավելի վեհ է հոգին հողից, այնքան էլ այս ընծան ավելի պատվական է այն ընծայից:

Այդ պատճառով էլ մի մարգարե, սքանչելի և մեծ այր, որի անունն Ովսեե է, այս մասին պատվիրում, ասում էր նրանց, ովքեր ընդդիմացել էին Աստծուն և կամենում էին հաշտեցնել Նրան, նրանց խրատում է իրենց հետ բերել ո՛չ թե արջառների նախիրներ, ո՛չ թէ այս կամ այն չափի նաշիհ, ո՛չ թե տատրակ, աղավնի կամ նման մեկ այլ բան: Իսկ ի՞նչ: «Բերեք ձեզ հետ, ասում է, խոսք» (Ովսե ԺԴ 6): Իսկ ինչպիսի՞ ընծա է խոսքը, թերևս կհարցնի մեկը: Շատ մեծ է և գերապայծառ, սիրելի՛, և առավել պատվական: Ո՞վ է այդ ասում: Նա, ով բոլորից առավել հավաստիորեն հասու եղավ դրան՝ խոհեմ ու մեծ Դավիթը: Երբ պատերազմում հաղթանակի համար շնորհակալությամբ պատարագ էր մատուցում Աստծուն, այսպես ասաց. «Օրհնությամբ պիտի օրհնեմ անունն իմ Աստծու և գովաբանությամբ պիտի մեծարեմ նրան» (Սաղմ. ԿԸ 31): Եվ ապա, մեզ ցույց տալով այս ընծայի առավելությունը, ավելացնում է. «Դա հաճելի կլինի Աստծուն մատաղացու հորթից ավելի, որ եղջյուրներ ու կճղակներ ունի» (ԿԸ 32):

Արդ, ես նույնպես կամենում էի այսօր մատուցել նույն զոհը և այս հոգևոր սեղանը թրջել այդ ընծայի արյամբ: Բայց ի՞նչ անեմ. իմաստուն այրը փակում է բերանս և զարհուրեցնում է ինձ՝ ասելով. «Օրհնությունը գեղեցիկ չէ մեղավորի բերանում» (Սիրաք ԺԵ 9):

Ինչպես որ պսակ կազմելիս ոչ միայն ծաղիկները պետք է անարատ լինեն, այլ նաև դրանք բոլորող ձեռքերը, այդպես էլ աստվածային օրհնությունների մեջ ոչ միայն խոսքերին է բարեպաշտություն պետք, այլ նաև հոգուն, որ հորինում է դրանք: Բայց մերը անսուրբ է, անվստահ և բազում մեղքերով լի: Այսպես կաշկանդվածների բերանը ոչ միայն նա է փակում,

այլ նաև մեկ ուրիշը, ով ավելի առաջ էր նրանից, ով նրանից առաջ սահմանեց այս. մեզ հենց այս մասին են հայտնում Դավթի՝ զոհաբերությունների մասին ասած խոսքերը: Քանզի ասելով՝ «Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքից, օրհնեցե՛ք նրան բարձունքներից» (Սաղմ. ՃԽԸ 1-2), և քիչ անց դարձյալ ասելով. «Օրհնեցե՛ք նրան երկրից»՝ երկու խոսքում էլ հրավիրելով արարածներին, որոնք երկնքում են և այստեղ՝ ներքևում, զգալիներին և իմանալիներին, երևացողներին ու աներևույթներին, երկնքից վեր և երկրի ներքո գտնվողներին, նրանցից մի խումբ կազմելով և հրամայելով փառաբանել տիեզերքի Արքային, որևէ տեղ երբևէ հրավեր չկարդաց մեղավորին, այլ այստեղ նույնպես դռները փակեց նրա առջև:

Բ. Որպեսզի ձեզ համար պարզ լինեն ասածներս, վերստին ընթերցեմ սաղմոսը. «Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքից, օրհնեցե՛ք նրան բարձունքներից: Օրհնեցե՛ք նրան, նրա բոլո՛ր հրեշտակներ, օրհնեցե՛ք նրան, նրա բոլո՛ր զորություններ» (Սաղմ. ՃԽԸ 1-2): Տեսնո՞ւմ ես օրհնաբանող հրեշտակներին, տեսնո՞ւմ ես հրեշտակապետերին, տեսնո՞ւմ ես սերովբեներին ու քերովբեներին, վերին զորություններին (քանզի երբ ասում է՝ նրա բոլոր զորություններ, նկատի ունի առհասարակ բոլոր երկնային զորքերին). դու այնտեղ տեսնո՞ւմ ես մեղավորին: Իսկ ինչպե՞ս կարելի է երկնքում տեսնել նրան, կհարցնի որևէ մեկը: Լա՛վ, ուրեմն եկ իջեցնենք քեզ այստեղ՝ երկիր՝ տեղափոխելով դեպի այդ խմբի մյուս կեսը. այստեղ էլ չես գտնի նրան. «Օրհնեցե՛ք Տիրոջը երկրի վրայից, վիշապնե՛ր և բոլո՛ր անդունդներ, գազաննե՛ր և ամեն տեսակ անասուններ, սողուններ և ամեն տեսակ թևավոր թռչուններ» (7, 10):

Զուր և անխորհուրդ չէր, որ այս ասելով՝ լռեցի. քանի որ մտքերս տագնապեցրին ինձ, և ահա դառնապես արտասվում ու սաստիկ ողբում եմ: Ի՞նչն է առավել ողորմելի, ասա՛ ինձ. ահա իրենց Արարչին բարեբանելու են հրավիրվում կարիճները, իժերն ու վիշապները, և միայն մեղավորն է դուրս առաքվում այդ սրբազան խմբերգությունից: Քանզի չար ու ամեհի գազան է մեղքը. այն, որ ոչ թե ծառայակից մարմինների վրա է ցույց տալիս իր չարությունը, այլ տերունական փառքի վրա է հեղում իր դառը թույնը: «Ձեր պատճառով, ասում է, իմ անունը հայհոյվում է հեթանոսների մեջ» (Ես. ԾԲ 5): Նույն պատճառով մարգարեն մերժեց, դուրս հանեց նրան աշխարհից՝ իբրև աստվածային գավառից, և նրա սահմաններից դուրս բնակեցրեց: Այդպես լավ երաժիշտն է քնարի վատ հնչող լարը կտրում, որպեսզի չփչացնի մյուսների ձայների ներդաշնակությունը, այդպես լավ բժիշկն է կտրում փտած անդամը, որպեսզի ախտը չվարակի մյուս՝ առողջ անդամները: Այդպես արեց նաև այս մարգարեն, երբ իբրև անմիաբան լար և իբրև ախտավոր անդամ՝ բոլոր արարածների ամբողջությունից կտրեց, դուրս հանեց մեղավորին:

Այսուհետև ի՞նչ պիտի անենք: Որովհետև մերժվեցինք ու դուրս արվեցինք, որովհետև կտրվեցինք հեռացվեցինք, պետք է լռենք: Լռե՞նք, մի՞թե ձեզնից էլ ոչ ոք թույլ չի տա մեզ՝ փառաբանելու մեր Տիրոջը, ասա՛ ինձ. ուրեմն իզո՞ւր խնդրեցինք ձեր աղոթքները, իզո՞ւր ապաստանեցինք ձեր հովանուն: Ո՛չ իզուր. չլինի՛ թե այդպես լինի: Քանզի գտա, գտա՛ փառաբանության մեկ այլ եղանակ, որովհետև ձեր խնդրվածքը իմ այս վարանման, իբրև մառախուղի մեջ, լույսի շողի պես շողաց. կգովեմ իմ ծառայակցին: Քանզի արժան է և գովել մեր ծառայակիցներին, իսկ նրանց գովությունից փառքը դեպի Տերն է բարձրանում: Եվ որ դրանով [Տերն է] փառավորվում, Ինքը՝ Քրիստոս է հայտնում՝ ասելով. «Թող փայլի ձեր լույսը մարդկանց առջև, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. Ե 16): Ահա այժմ փառաբանության այլ եղանակ, որ կարող է անել մեղավորը և չխախտել օրենքը:

Գ. Եվ արդ, ծառայակիցներից ո՞ւմ, ո՞ւմ գովենք. ոչ ուրիշի, այլ մեր բոլորի և մեր միջոցով՝ տիեզերքի վարդապետին[1], քանզի ինչպես որ նա ինքը դաստիարակեց ձեզ՝ մինչև մահ

[1] Անտիոքի Փլարիանոս եպիսկոպոսին

հաստատուն մնալ ճշմարտության մեջ, այդպես էլ դուք սովորեցրեք մյուսներին՝ ավելի շուտ հրաժարվել այս կյանքից, քան բարեպաշտությունից:

Արդ, կամենո՞ւմ եք նրա գովության պսակը բոլորել: Կամենում եմ և ես: Բայց տեսնում եմ նրա քաջ նահատակության անհատակ անդունդը և վախենում եմ՝ դուցե խոսքս խորքերն ընկղմվելով՝ չկարողանա այնտեղից դուրս գալ: Հարկ է պատմել նախնական քաջագործությունները՝ պանդխտությունը, տքնությունը, ջանքերը, ուշիմությունը, մարտերը, հաղթանակների վրա հաղթանակներ ու հաղթությունների վրա հաղթություններ կուտակելը. գործեր, որոնք գերազանց են ոչ միայն մեր, այլև ամենայն մարդկային լեզվից, որոնք առաքելական հոգեշարժ լեզվի կարիքն ունեն, որով միայն կարող են բոլորի մասին և՛ ասել և՛ ուսուցանել: Բայց, զանց առնելով մի մասը, մոտենանք մյուս՝ առավել ապահով մասին, որով և նավարկենք՝ մի փոքրիկ մակույկ առնելով:

Բեր այսուհետև խոսենք նրա ժուժկալության մասին, ասենք, թե ինչպես իշխեց իր որովայնին, ինչպես արհամարհեց փափկությունը, ինչպես ծիծաղեց ճոխ սեղանի վրա նա, ով սնվել էր մեծահարուստ տան մեջ: Ոչ մի զարմանալի բան չկա, երբ այս չորաբեկ ու խստամբեր կյանքով սկսի ապրել նա, ով իր կյանքն անցկացնում է աղքատության մեջ, ով իբրև իրեն ընկեր և ուղեկից ունի աղքատությունը, որ օրըստօրէ թեթև է դարձնում իր բեռը: Իսկ այն մարդը, ով դարձել է մեծ հարստության տեր, հեշտությամբ չի ազատվում դրա կապանքներից. ախտերի հույլներն այնպես են շրջապատում պաշարում նրա հոգին: Կրքերի քողը թանձր ու մթամած ամպի նման ընկնում է նրա աչքերի վրա և չի թողնում նայել երկինք, այլ ստիպում է աչքերը խոնարհել և երկրին նայել:

Իսկ դեպի երկինք ընթացքի մեջ չկա՛, չկա՛ ուրիշ այնպիսի խոչընդոտ, ինչպիսին հարստությունն ու դրանից բխող չարիքներն են: Այս խոսքն իմը չէ, այլ Նրա իսկ՝ Քրիստոսի վճիռը. «Ավելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ երկնքի արքայությունն» (Մատթ. ԺԹ 24): Բայց ահա այն, ինչ խիստ դժվար էր, ինչ անհնարին էր, հնարավոր եղավ: Եվ այն, ինչի պատճառով մի ժամանակ իր Վարդապետի առջև վարանում էր Պետրոսը և խնդրում էր ուսանել, փորձով սովորեցինք բոլորս, և ավելին, քան այն: Քանզի ոչ միայն ինքը ելավ երկինք, այլ նաև այնքան ժողովրդին վերցնելով՝ մտցրեց այնտեղ. նա, ով հարստության հետ ուներ նաև մեկ այլ, ոչ պակաս խոչընդոտ՝ երիտասարդությունն ու անժամանակ որբությունը, որոնք բավական են՝ դյուրելու ամեն մի մարդու:

Այսպիսի թովչանքներ ունեն, այսպիսի դեղատվություն են պատրաստում, բայց նա և՛ հաղթեց սրանց, և՛ երկինքը ստացավ, և՛ իր մեջ փոխադրեց այնտեղի իմաստությունը. չմտաբերեց ո՛չ այս կյանքի շքեղությունը, ո՛չ իր նախնիների փառքը, ո՛չ իր մարմնավոր ծնողներին, այլ նրանց, ովքեր բարեպաշտությամբ միացան իրեն, ուստիև եղավ նրանցից մեկը: Նայեց Աբրահամ նահապետին, նայեց մեծ Մովսեսին՝ նրան, ով մեծացավ արքայական տանը, մանկից եղավ սիբարյան[1] սեղանի և ընկավ եգիպտական շփոթի մեջ: Գիտե՞ք արդյոք հեթանոսների կենցաղավարությունը, թե որքան հպարտությամբ, պերճությամբ ու փափուկ կյանքով են ապրում: Արհամարհեց այդ ամենն ու դիմեց դեպի կավն ու աղյուսաշինությունը: Նա, ով արքա էր ու արքայորդի, կամեցավ ծառաների ու գերիների մեջ լինել և դրա համար դարձավ առավել գերափայլ իշխանությամբ, քան այն, որից հրաժարվեց ու լքեց:

Քանզի իր փախուստից, իր աներոջ մոտ ծառայությունից և օտարության մեջ կրած տառապանքներից հետո վերադարձավ և դարձավ թագավորի իշխան, ավելի ճիշտ՝ աստված եղավ թագավորի համար, քանզի ասում է. «Ահա ես քեզ փարավոնին իբրև աստված տվեցի» (տե՛ս Ելք Է 1): Եվ նա ավելի շքեղ էր, քան նույն ինքը՝ թագավորը, ոչ թե որովհետև պսակ ուներ, ծիրանի էր գցում վրան կամ ոսկեզօծ կառքերով շրջում, այլ որովհետև արհամարհում էր այդ ամ-

[1] Սիբարիսը Իտալիայի հին քաղաքներից էր: Քանի որ այնտեղ զեխություն էր տիրում, ուստիև սովորություն դարձավ ճոխ սեղաններն անվանել սիբարյան սեղան, ինչպես վարվում է Ոսկեբերանը:

բողջ պերճությունը. քանզի. «Արքայադստեր ողջ փառքը, ասում է, իր մեջ է՝ ոսկեհուռ զգեստների զարդարանքի ու պաճուճանքի տակ» (Սաղմ. ԽԴ 14): Արդ, վերադարձավ և ուներ գավազան՝ հրամաններ տալու ոչ միայն մարդկանց, այլ նաև երկնքին, երկրին ու ծովին, քամիների բնությանը, ջրերին ու ճահիճներին, աղբյուրներին, գետերին: Քանզի տարերքները դառնում էին այն, ինչ կամենում էր Մովսեսը. նրա միջոցով արարածը կերպարանափոխվում էր և ինչպես ժրագլուխ աղախին՝ սպասում իր Տիրոջ բարեկամի գալուն, հնազանդվում ու լսում էր նրա ամեն մի խոսքը, իբրև Նրան՝ Տիրոջը:

Սա նայեց նրան, եղավ նրա նման, այն էլ՝ երբ տակավին մանուկ էր (եթե երբևէ մանուկ եղավ, քանզի ես այնպես եմ կարծում, թէ դեռ խանձարուրից ալևորել էր նրա միտքը): Բայց մինչ մանուկ էր տարիքով, հասու եղավ ողջ իմաստությանը և հասկանալով, որ մեր բնությունը մացառուտ երկիր է, բարեպաշտության խոսքով, իբրև մանգաղով, դյուրությամբ կտրեց հեռացրեց հոգու ախտերը. երկրագործը մաքրեց անդաստանը՝ սերմը ընդունելու համար, և առնելով ընդունելով ամբողջը՝ մղեց դեպի խորքերը, որպեսզի ներսում արմատանալով՝ ո՛չ արեգակի ճառագայթներից չորանան և ո՛չ էլ փչերից խեղդվեն:

Այսպես դարմանեց իր հոգին, իսկ մարմնի ցանկությունը ճնշեց ժուժկալության դեղերով, իբրև ապերասան ձիու՝ մարմնի վրա կապեց պահքի սանձը և այնքան ետ ընկրկեց, մինչև որ չափավորությամբ արյունոտեց ցանկության բերանը: Քանզի այնպես չնեղեց մարմինը, որ սանձակոծված ձին անպիտան լինի սպասավորելու, և ոչ էլ թույլ տվեց, որ այն փափկանա, որպեսզի չլինի թե ուժեղ լինելով՝ աքացի տա երասանակալ մտքին, այլ հոգ տարավ միաժամանակ նրա և՛ առողջությանը, և՛ չափավորությանը:

Եվ ոչ միայն իր երիտասարդության օրերին էր այսպիսին, այլ դրանք անցկացնելուց հետո էլ չպակասեցրեց ջանքերը, հիմա նույնպես, երբ բազմած է ծերության՝ իբրև անդորր նավահանգստի մեջ, դարձյալ նույնն է անում: Քանզի երիտասարդությունը, սիրելի՛, նման է մոլեգին ծովի, որ լեցուն է վայրենի ալիքներով ու դժնդակ քամիներով, իսկ ծերացածների ալիքները մարդկանց ասես հանդարտ նավահանգստում հանգիստ են տալիս՝ նրանց չնորհելով ապահովություն՝ վայելելու այդ հասակից: Նույնը այժմ նաև նա է վայելում, և ինչպես արդեն ասացի, նավահանգստում բազմած՝ ոչնչով պակաս չի ճգնում, քան նրանք, ովքեր ծփում են ծովերի մեջ:

Նա այդ երկյուղը սովորեց Պողոսից, ով թեպետև երկինք բարձրացավ և անցավ նրանից էլ վեր՝ մոտեցավ երրորդին, ասում է. «Երկյուղում եմ՝ դուցե ես ինքս խոտելի լինեմ այն բանում, ինչ քարոզեցի ուրիշներին» (Ա Կոր. Թ 27): Այդ պատճառով սա էլ իր անձը բևեռեց հանապազօրյա երկյուղին, որպեսզի ցնծա հանապազօրյա անշփոթությամբ և որպեսզի անցնի բազմի դեկին՝ ոչ թե գննելու աստղերը, ծովերն ու քարաժայռերը, այլ դևերի հարձակումները, բանսարկուի խորամանկություններն ու խորհուրդների պատերազմները: Այդպես բոլոր կողմերից հսկելով չարի զորությանը՝ անվտանգ մնաց նրա հարձակումներից: Քանզի ոչ թե նայում է այն բանին, որ մակույկը երբեք անդնդասույզ չլինի, այլ ամեն բան անում է, որ նավարկողներից ոչ ոք չխռովվի: Սրանով և սրա իմաստության միջոցով մենք լիովին պարզեցինք նավի առագաստը, և հաջողակ նավարկում ենք բոլորս:

Դ. Քանզի երբ զրկվեցինք մեր առաջին հորից[1], ով սրան ծնեց մեզ համար, դառնացանք, ուստիև ողորմելի ողբեր հնչեցրինք՝ հույս չունենալով, որ նրա նման մեկ ուրիշը կընդունի այս աթոռը: Իսկ երբ երևաց սա, ամպի պես ցրվեց մեր ողջ տրտմությունը, և ջնջվեց մեր թախիծը:Նա մեր սուգը դանդաղ չվերացրեց, այլ շատ արագ, ասես հենց երանելին ինքը հարություն առավ գերեզմանից և վերստին նստեց այդ աթոռին:

Մեր հոր քաջության ու ճգնության սիրուց մոռացանք

[1] Անտիոքի Մելիտոս հայրապետից:

մեզ և չափից ավելի երկարաձգեցինք մեր խոսքը. երկարաձգեցինք ոչ թե նրա առաքինությունների մասին խոսելով (դրանց մասին խոսել դեռ չենք էլ սկսել), այլ որքան վայելում էր մեր երիտասարդությանը: Բեր այսուհետև լռենք՝ իբրև նավահանգստում, և դադարենք խոսել, թեպետև չի կամենում դադարել, այլ դառնանում ու սրտնեղում է և կամենում է ամբողջն իր մեջ հավաքել, սակայն, անհնարին է այդ: Դադարե՛նք ուրեմն հետամուտ լինել անհասանելիներին. մեզ իբրև սփոփանք բավական է այն, ինչ արդեն ասացինք: Քանզի ոչ միայն թանկարժեք յուղով լի սրվակը թափողը, այլ նաև մատի ծայրով նրան թեթևակի դիպչողն է ամբողջ օդն ու մերձավորներին անուշահոտությամբ պարուրում. հենց այդ արեցինք և մենք ոչ թե մեր խոսքերի զորությամբ, այլ նրա քաջ ճգնության ուժով: Ուրեմն լռենք, կրկին խնդրենք, պաղատենք, որ մեր բոլորի մայրը (եկեղեցին) անսասանելի ու անշարժ մնա, և Աստված մեր այս հորը, վարդապետին, հովվին, ղեկավարին շնորհի երկար օրեր:

Իսկ եթե հարց ունեք մեզ. երբևէ չենք հանդգնում մեզ քահանաների կարգում դասել, քանզի օրենք չէ վիժվածին ազնվածիններին թվին դասել, եթե հարց ունեք ինձ՝ իբրև մի վիժվածի, խնդրեցե՛ք, որ բարձունքներից մեծ զորությունն իջնի մեզ վրա: Սկզբում, երբ վարում էինք առանձին ու անզբաղ կյանք, մեզ պետք էր անբծություն, իսկ երբ մտանք այստեղ (թողնում եմ ասել, թե ինչպես՝ մարդկայի՞ն ջանքերով, թէ՞ աստվածային շնորհներով), ընծայվեցինք և հանձն առանք այս սաստիկ ու ծանր լուծը, մեզ բազում ձեռքեր ու բյուր խնդրվածքներ են պետք, որպեսզի կարողանանք այս ավանդը ողջ հատուցել Տիրոջը, Ով ավանդեց, այն Օրը, երբ հաշիվ տալու համար ատյան կանչվեն նրանք, ովքեր տաղանդներ ստացան: Ուրեմն աղոթեցե՛ք, որպեսզի չլինենք կապվողների ու խավարի մեջ առաքվողների, այլ նրանց մեջ, ովքեր թողություն գտան շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Որին փառք, իշխանություն և երկրպագություն հավիտյանս հավիտենից. ամեն:

ԸՆԿԱԾ ԹԵՈԴՈՐՈՍԻՆ

ՀՈՐԴՈՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Հմտությամբ երևելի այս Թեոդորոսը Կիլիկիայի եպիսկոպոսն էր: Անտիոքի փիլիսոփա Լիբանոսի ճեմարանում ուսանելու ժամանակ եղել է Ոսկեբերանի ընկերը: Նա, լքելով կյանքը, որին նվիրվել էր՝ սուրբ եղբայրների միաբանությունը, վերադարձավ աշխարհ: Ոսկեբերանն, իմանալով այդ մասին և վառված լինելով իր սիրելի ընկերոջը ուղղության բերելու սիրով՝ հրաշալի գրչով նրան է ուղղում երկու Հորդորական նամակ՝ երկար ու բազում իմաստներով՝ դառնալու նախկին կենցաղավարությանը, այն ժամանակ, երբ ինքը տակավին պատանի էր՝ մոտ քսաներկու տարեկան, իսկ Թեոդորոսը դեռ քսան տարեկան չկար:

Այս ճառերը նրա մատենագրության մեջ ժամանակով գրեթե առաջինն են, որոնցով նա Թեոդորոսին հրաժարվել է տալիս աշխարհիկ զբաղումներից և վերադարձնում աստվածային (Գրքերի) քննությանն ու սուրբ եղբայրների միաբանություն:

Ընկածներից յուրաքանչյուրը, եթե հոժար մտքով կարդա Ոսկեբերանի այս աստվածային գրվածքը, արդյո՞ք չի լսի այս խոսքերը և դառնա առ Աստված:

Գրության վայրը, ինչպես պարզ երևում է, Անտիոքն է, ժամանակը՝ Տիրոջ՝ մոտ 369 թվականը՝ մինչև Ոսկեբերանի՝ անապատում միայնանալը:

«Ո՞վ կտար ջուր իմ գլխին և իմ աչքերին՝ արտասուքների աղբյուրեր» (Երեմ. Թ 1). այժմ բարեպատեհ ժամանակ է և ինձ համար՝ ասելու, ավելի հարմար, քան այն ժամանակ այն մարգարեին: Թեպետև ես չպետք է ողբամ ո՛չ բազում քաղաքներն ու ո՛չ ամբողջ ազգերին, այլ մոտեցել եմ՝ լաց լինելու այն հոգու համար, ով հավասարապատիվ է բազում ազգերի, ավելի ճիշտ՝ ավելի պատվական է: Քանզի եթե Աստծո կամքը կատարող մեկը լավ է բյուր ամբարիշտներից, ապա նախկինում դու ավելի լավ էիր, քան բյուրավոր եբրայեցիներ: Այդ

պատճառով էլ ոչ ոք ինձ չի չարախոսի, եթե ես մեծապես ողբամ և կոծեմ առավել սաստիկ, քան այն մարգարեն:

Ես ողբում եմ ո՛չ թե քաղաքի քանդվելը, ո՛չ թե անօրեն մարդկանց գերությունը, այլ սրբասնյալ հոգու ամայացումն ու քրիստոսակիր տաճարի բեկումն ու քակտումը: Եթե մեկը լավ իմանար քո մտքի գեղեցկությունն այն ժամանակ, երբ այն փայլում էր, և որն այժմ բանսարկուն այրեց կրակի մեջ, ինչպե՞ս հոգոց հանելով չի առնի մարգարեի ողբը՝ լսելով, որ բարբարոս ձեռքերը պղծեցին սրբություն սրբոցը, կրակ գցելով՝ այրեցին ամեն բան՝ քերովբեներին, տապանակը, քավությունը, քարեղեն տախտակները, ոսկե ավազանը: Քանզի այս աղետը այնքան ավելի դառն է նրանից, որքան ավելի պատվական նշաններ էին պահվում քո հոգում: Այս տաճարը ավելի սուրբ էր, քան այն, քանի որ փայլում էր ոչ թե ոսկով կամ արծաթով, այլ Հոգու շնորհներով, և տապանակի ու քերովբեների փոխարեն նրա մեջ օթևանում էին Քրիստոս, Նրա Հայրը և Մխիթարիչը: Բայց այժմ այդպիսին չէ. այլ անապատ է, մերկ ու կողոպտված իր այն գեղեցկությունից ու վայելչությունից, զրկված աստվածային ու անճառելի զարդից, լքած ու թողած ամենայն զգուշություն և պահպանություն, և ո՛չ դուռ ունի, ո՛չ նիգ, այլ բաց է հոգու բոլոր ապականիչների ու գազրելի խորհուրդների առջև: Եթե ամբարտավանության, պոռնկության, ագահության և դրանցից ավելի վատթար ոգիները կամենան մտնել նրա մեջ, չկա մեկը, որ արգելի դրանց: Իսկ առաջներում, ինչպես երկինքն է անմատչելի այդ ամենի համար, այդպես էլ՝ քո մտքի մաքրությունը: Թերևս խոսքերս անհավատալի կթվան նրանց, ովքեր այժմ տեսնում են քո ամայությունն ու կործանումը, այդ պատճառով էլ ես ցավում ու ողբում եմ և չեմ դադարի այդ ամենից, մինչև չտեսնեմ քեզ քո նախկին պայծառությամբ: Զնայած մարդկանց այդ անհնարին է թվում, բայց ամեն բան հնարավոր է Աստծո համար, քանզի. «Ինքն է, որ բարձրացնում է աղքատներին գետնից և տառապյալներին վեր հանում աղբանոցից՝ նրանց որպես իշխան նստեցնելու իր ժողովրդի իշխանների կողքին, ամուլ կնոջը բնակեցնում է ցնծալից տան մեջ, իբրև մայր, որ հրճվում է զավակներով» (Սաղմ. ՃԺԲ 7-9): Երբեք մի՛ հուսահատվիր և փոխվի՛ր դեպի լավագույնը: Քանզի եթե բանսարկուն այնքան զորեղ գտնվեց, որ առաքինության ծայրակետից ու բարձունքից գցեց քեզ վերջին չարիքի մեջ, ապա Աստված առավել զորեղ կլինի քեզ կրկին կոչելու նախկին ազատության մեջ և դարձնելու քեզ ավելի երանելի, քան առաջ էիր: Միայն թե դու մի՛ վհատվիր, մի՛ կտրիր գեղեցիկ հույսդ և մի՛ արա ամբարիշտների գործերը: Քանզի ոչ թե մեղքերի բազմությունն է գցում հուսահատության մեջ, այլ՝ հոգու ամբարշտությունը: Այս մասին և Սողոմոնը ոչ պարզաբար ասաց. «Ամբարիշտն արհամարհում է չարիքները, երբ հասնում է դրանց խորքերը» (Առ. ԺԸ 3): Միայն նրանց է հատուկ դառնում այս կիրքը, երբ հասնում են մինչև չարիքների խորքերը, և հենց այս է, որ չի թողնում նրանց ետ նայել և դառնալ այնտեղից, ուր ընկել են: Այդ թյուր խորհուրդը, իբրև երկաթյա օղ, բռնությամբ ընկնելով հոգու պարանոցի վրա՝ ճնշում է նրան՝ նայելու ներքև և արգելում է նրան դառնալ ու նայել իր Տիրոջը: Բայց քաջ ու սքանչելի մարդու գործ է այդ երկաթյա օղակը խորտակելը, այդ կապանքն իր վրա դնողին հեռու վանելն ու ասելը մարգարեի այն խոսքը, թե՝ «Ինչպես աղախնի աչքներն են իր տիրուհու ձեռքին, այնպես էլ մեր աչքերն են ուղղված մեր Տեր Աստծուն, մինչև որ ողորմի մեզ: Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր, ողորմի՛ր մեզ, քանզի շատ արհամարհանք կրեցինք» (Սաղմ. ՃԻԲ 2, 3). սրանք իսկապես աստվածային ուսուցումներ են, երկնավորի՝ իմաստության հրահանգներ: Կրեցինք, ասում է նա, արհամարհանք և շատ տառապանքներ կրեցինք, բայց չենք դադարի առ Աստված նայել և չենք դադարի աղաչել Նրան, մինչև չստանանք այն, ինչ խնդրում ենք: Արի հոգին չի ընկնում ու վհատվում վրա հասած աղետների բազմությունից և բազում անգամ խնդրելուց և չստանալուց հետո չի հեռանում, այլ մնում է, խնդրում, մինչև որ «Նա ողորմի մեզ», ինչպես ասաց այն երանելին՝ Դավիթը:

Բանսարկուն մեզ գցում է հուսահատ մտքերի մեջ այն պատճառով, որպեսզի կորի առ Աստված մեր հույսը՝ ամուր խարիսխը, մեր կյանքի հաստատությունը, դեպի երկինք տանող ճանապարհի առաջնորդը, կորստյան մատնված անձանց փրկությունը, քանի որ. «Հույսով, ասում է, փրկվեցինք» (Հռ. Ը 24): Քանզի այն, իբրև երկնքից կախված անխորտակելի շղթա, դեպի վեր է պահում մեր հոգին և աստիճանաբար վեր է բարձրացնում նրանց, ովքեր ամուր բռնել են նրանից, և հափշտակելով փրկնում է մեզ այս աշխարհի չարիքներից: Արդ, եթե մեկը թուլանալով՝ թողնի սրբության այս խարիսխը, անմիջապես կընկնի և կխեղդվի՝ սուզվելով չարիքի անդունդը:

Իմանալով այս մասին՝ չարը, երբ տեսնում է մեզ չար գործերի գիտակցությունից տանջվելիս, հարձակվում է մեզ վրա և մեր մեջ է գցում հուսահատության միտքը, որ առավել ծանր է, քան կապարը, և եթե մենք ընդունենք այն մեր մեջ, այն ծանրությունից ձգվելով և շղթայից կտրվելով՝ կդանք կհասնենք չարիքների խորքերը, որտեղ այժմ տառապում ես դու. թողած հեզ ու խոնարհ Տիրոջ պատվիրանները՝ կատարում ես անագորույն բռնակալի և մեր փրկության անողոք թշնամու բոլոր հրամանները. խորտակելով քաղցր լուծը և վար նետելով թեթև բեռը՝ երկաթե կապանքների մեջ դրեցիր քեզ և պարանոցիցդ կախեցիր «էշի երկանաքարը» (Մատթ. ԺԸ 6):

Եվ արդ, որտե՞ղ դու կանգ կառնես և ե՞րբ կդադարես անդնդասույզ անել քո խեղճ հոգին՝ քեզ հարկադրելով միշտ ցած իջնել: Այն կինը, գտնելով մեկ դրամը, կանչեց իր դրացիներին և ուրախակից դարձրեց իրեն՝ ասելով. «Ուրախացե՛ք ինձ հետ» (Ղուկ. ԺԵ 8), իսկ ես հրավիրում եմ բոլոր ընկերներին՝ և՛ իմ, և՛ քո, հակառակ բանի համար, ոչ թե ասելով. «Ուրախացե՛ք ինձ հետ», այլ թե՝ «Լա՛ց եղեք ինձ հետ և նույն ողբը բարձրացրեք, լաց լինելով՝ գուժեցեք մեզ հետ: Քանի որ մեծ աղետ պատահեց մեզ, ոչ թե այսքան կամ այնքան քանքար ոսկի կորավ մեր ձեռքից, և ոչ էլ մեծ քանակությամբ թանկարժեք քարեր, այլ այս ամենից առավել

պատվականը, որ մեզ հետ միասին նավարկում էր այս մեծ ու խաղաղ ծովում. չգիտեմ ինչպես նա սասանվեց և կորստյան այն խորխորատն ընկավ»:

Եթե լինեն ոմանք, որ կխնդրեն ինձ դադարեցնել այս ողբը, մարգարեի այս խոսքը կասեմ նրանց. «Թույլ տվեք ինձ՝ դառնորեն լաց լինեմ, մի՛ աշխատեք ինձ մխիթարել» (Ես. ԻԲ 4):

Իմ այժմյան ողբն այնպիսին չէ, որ որևէ մեկը մեզ բամբասի չափազանց լացիս պատճառով, այլ այնպիսին, որի համար ո՛չ Պողոսը և ո՛չ էլ Պետրոսը ամոթ չէին համարի լաց լինել ու ողբալ՝ մերժելով ամենայն մխիթարություն: Իրավացի կլիներ իբրև փոքրոգի կշտամբել նրանց, ովքեր լացուկոծ են անում սովորական մահվան համար, բայց երբ մարմնի փոխարեն ինքը՝ հոգին է դիակ դարձել և ընկել՝ բյուր վերքեր ստացած, և իր մեռելության մեջ հիշեցնում է իր նախկին գեղեցիկ բարքը, մարած քաջողջությունն ու գեղեցկությունը, ո՞վ է այն դաժան ու անկարեկից անձը, ով հեծելու ու լաց լինելու փոխարեն սփոփանքի խոսքեր բարբառի. ինչպես որ այնտեղ չսգալը, այդպես էլ այստեղ սգալը իմաստություն է: Նա, ով հասել էր երկնքին, ով ծիծաղում էր այս ունայն կյանքի վրա, ով մարմնի գեղեցկությանը նայում էր ինչպես քարի, ով ոսկին իբրև կավ և ամենայն հաճույք իբրև տիղմ արհամարհում էր, նա մեզ համար անսպասելի անմաքուր ցանկության տապի մեջ վտանգվելով՝ կորցրեց և՛ առողջությունը, և՛ կորովը, և ապականելով գեղեցկությունը՝ ստրուկ դարձավ հեշտ ցանկություններին:

Եվ արդ, լաց չլինե՞նք այդպիսի մարդուն, ասա՛ ինձ, և չսգա՞նք, մինչև որ կրկին շահենք նրան. ա՞յդ է մեր մարդասիրությունը: Այստեղ անհնար է գտնել մարմնավոր մահվան դարման, և սակայն դա ետ չի պահում սգավորներին լաց լինելուց, իսկ հոգևոր մահը միայն այստե՛ղ է հնարավոր վերացնել, քանզի. «Դժոխքում ո՞վ կխոստովանի քեզ» (Սաղմ. Զ 6): Եվ արդ, ինչպե՞ս մեծ անմտություն չի լինի մեր կողմից, եթե այն նույն ժամանակ, երբ մարմնի մահը կոծողները, իմանալով հանդերձ, որ իրենց արտասուքներով

չեն կարող հարություն տալ վախճանվածին, այնքան սաստկորեն են տրվում դրան, մենք ոչ մի այդպիսի բան չանենք, երբ գիտենք, որ հաճախ հույս լինում է մեռյալ հոգուն վերադարձնել իր նախկին կյանքին: Մեր և մեր նախնիների ժամանակներում շատերը, շեղվելով ուղիղ կարգերից և հեռու ընկնելով նեղ ճանապարհից, վերստին այնպես ոտքի կանգնեցին, որ վերջին առաքինություններով ծածկեցին առաջինը, ստացան բրաբիոնը, պսակով պսակվեցին, փառավորվեցին հաղթողների հետ և սուրբերի դասում կարգվեցին: Բայց ով ընկած է վայելքների հնոցի մեջ, բյուր այսպիսի օրինակներ էլ ունենա, այդ գործն անհնարին է թվում նրան, բայց հենց որ սկսի ելնել այնտեղից, մշտապես դեպի առաջ ձգտելով՝ իր ետևում կթողնի կրակի զորությունը և շուշաններով ու մեծ թեթևությամբ լի կտեսնի այն ամենն, ինչ կա իր առջևում: Միայն թե չկտրե՛նք մեր հույսը և չծուլանա՛նք՝ դառնալու. քանզի նա, ով վարակվում է այդպիսի կրքերով, որքան էլ զորություն ու քաջալերություն ստացած լինի, անօգուտ կլինեն դրանք: Քանզի նա, ով մի անգամ իր առջև փակում է ապաշխարության դուռը և խցում մուտքը դեպի մրցարան, ինչպե՞ս կարող է, դրսում մնալով, մեծ կամ փոքր բարիք գործել: Ամենաչարը հենց դրա համար է անում ամեն բան, որպեսզի մեր մեջ արմատավորի այդ միտքը. դրանից հետո նրան այլևս ո՛չ ջանք պետք կլինի և ո՛չ չարչարանք՝ մեզ պարտութան մատնելու համար: Ինչի՞ համար պետք կլինեն դրանք, երբ նրանք՝ ընկածներն ու գլորվածները, չեն էլ կամենում ընդդիմանալ նրան: Ով կարողանա փախչել այդ կապանքներից, կպահպանի իր զորությունը և մինչև վերջին շունչը չի դադարի կռվել նրա դեմ, և չնայած բյուր ուրիշ անկումներ ունենա, կրկին կկանգնի և կխորտակի թշնամուն: Իսկ եթե մեկը կապված է հուսահատության մտքերով և զրկել է իրեն զորությունից, ինչպե՞ս կարող է երբևէ հաղթել և կամ ընդդիմանալ նրան, երբ փախչում է նրանից:

Բայց այստեղ դու իմ դեմ մի՛ բեր քիչ մեղանչածներին, այլ այնպես համարիր, թե մեկը լցված է ամենայն ապիրատությամբ և գործել է ամեն բան, որ նրան ամբողջովին զրկել է արքայությունից, իսկ նա ոչ թե անհավատներից է, այլ հավատացյալ և աստվածազգյաց մարդկանցից մեկը, որ դրանից հետո պոռնկացել է, շնացել, իգացել, եղել գող, հարբեցող, արվամոլ, զրպարտիչ և սրանց նման մեկ այլ բան. նույնիսկ չեմ գովի այդպիսի մարդուն, եթե իր մտքում հուսահատվի, որ անգամ մինչև խոր ծերություն ապրած լինի այդպիսի անպատմելի պիղծ կյանքով:

Եթե Աստծու բարկությունը ախտ լիներ, ապա արդարացի կլիներ, եթե մեկը հուսահատվեր՝ իբրև անկարող՝ հանգցնելու բոցը, որ բորբոքել էր այնքան չարիքներով, բայց քանի որ աստվածայինն անախտ է, եթե անգամ տանջի, եթե անգամ վրեժ լուծի, այդ կանի ոչ թե բարկության, այլ նախախնամելու և մեծ մարդասիրության պատճառով, ուստիև պետք է մեծապես հուսանք և ապավինենք ապաշխարության զորությանը:

Քանզի Իր դեմ մեղանչածներին Աստված ոչ թե Իր համար է պատժում. Նրա բնությանը ոչ մի վնաս չի հասնում, այլ այդ անում է մեր իսկ օգուտի համար, և որպեսզի մեր անմտությունն առավել չմեծանա՝ շարունակելով զանց առնել ու անտեսել Իրեն: Ինչպես լույսից հեռացածը լույսին ոչ մի վնաս չի հասցնում, այլ մեծապես վնասում է իր իսկ անձին՝ խավարի մեջ լինելով, այդպես էլ նա, ով սովորեց արհամարհել ամենակարող զորությունը, Նրան ոչնչով չի վնասում, իսկ իրեն մեծագույն վտանգի է ենթարկում: Դրա համար էլ Աստված սպառնում է պատիժներով և հաճախ ուղարկում է դրանք ոչ թե, որպեսզի վրեժխնդիր լինի, այլ որպեսզի մեզ դեպի Իրեն ձգի: Բժիշկը նույնպես խելացնորների անարգանքից ո՛չ ցավում է և ո՛չ զայրանում, այլ ամեն բան անում է՝ բժշկելու նրանց ոչ թե իր, այլ նրանց օգուտի համար. և եթե նրանք փոքր-ինչ զգոնություն ու արթնություն են ցույց տալիս, ցնծում և բերկրում է, առավել ուժեղ դեղեր է օգտագործում ոչ թե, որպեսզի նրանցից վրեժ լուծի նախկին անարգանքների համար, այլ որպեսզի ավելի շատ օգուտ տա

նրանց և կատարելապես առողջացնի: Այդպես էլ Աստված, երբ մենք ընկնում ենք ծայր անմտության (մոլեգնության) մեջ, ամեն բան ասում և անում է ոչ թե մեր նախկին մեղքերի համար վրեժ լուծելու, այլ մեր ախտը բժշկելու համար. յուրաքանչյուր ոք ողջախոհ մտածությամբ կարող է համոզվել դրանում:

Եթե որևէ մեկը այս ամենինց հետո կասկածի, մենք կհամոզենք նրան նաև աստվածային Գրքերով: Ասա՛ ինձ՝ ո՞վ եղավ ամբարիշտ առավել, քան բաբելացիների արքան, ով փորձով այնպես հասկացավ Աստուծո զորությունը, որ երկրպագեց Նրա մարգարէին և հրամայեց «զոհեր ու անուշահոտ խունկեր մատուցել նրան» (Դան. Բ 46), բայց կրկին դարձավ նախկին ամբարտավանությանը և կապանքների մեջ հնոցը նետեց նրանց, ովքեր չկամեցան իրեն Աստծուց ավելի պատվել: Բայցևայնպես այդքան անագորույնին ու ամբարիշտին՝ առավել գազանին, քան մարդուն, ապաշխարության է կոչում և տալիս, շնորհում է նրան սթափության նաև այլ առիթներ. նախ՝ այն հրաշքը գործելով հնոցի մեջ, դրանից հետո՝ այն տեսիլքը, որ տեսավ ինքը՝ թագավորը, և մեկնեց Դանիելը, որ բավական էր՝ նվաճելու նաև քարեղեն հոգին, իսկ ապա՝ այդ իրադարձությունների խրատից հետո, ինքը՝ մարգարեն, խորհուրդ տվեց նրան՝ ասելով. «Դրա համար, արքա՛, թող իմ խորհուրդը հաճելի թվա քեզ. քո մեղքերը քավիր ողորմությամբ, և քո անօրենությունները՝ աղքատներին գթալով, թերևս Աստված համբերատար լինի քո հանցանքների նկատմամբ» (Դան. Դ 24). Ի՞նչ ես ասում, ո՛վ երանելի իմաստուն. այդչափ կործանումից հետո կա՞ վերստին դարձ, այդչափ ախտից հետո՝ առողջություն, և կամ այդքան մոլեգնությունից հետո՝ կրկին զգոնության հույս. թագավորն ինքն իրենից հեռացրեց, կտրեց ամեն մի հույս նախ այն բանով, որ չճանաչեց իր Արարչին և իրեն այդքան պատվի Բարձրացնողին՝ չնայած և՛ իր, և՛ իր նախնիների հանդեպ Նրա զորության ու նախախնամության բազում նշաններ ուներ: Իսկ դրանից հետո՝ նաև այն բանով, որ ստանալով իմաստության և կանխագիտության ակնհայտ վկայություններ և տապալված տեսնելով մոգությունը, աստղագուշակությունը և սատանայական բոլոր կախարդությունները, նախկինից առավել դաժան դարձավ: Քանզի ինչ որ չկարողացան բացատրել գազարացի իմաստուն մոգերը՝ խոստովանելով, որ այն վեր է մարդկային բնությունից, նույնը Աստված հայտնեց նրան մի գերված պատանու միջոցով, և այդ հրաշքով հասցրեց նրան այն բանին, որ ոչ միայն ինքը հավատաց, այլ նաև այս վարդապետության քարոզիչն ու վարդապետը եղավ համայն տիեզերքի համար: Այնպես որ եթե մինչ այդ չէր ներվում Աստծուն չճանաչելու համար, ապա առավել ևս այդպիսի հրաշքից, իր իսկ խոստովանությունից և վարդապետությունից հետո, որ ուսուցանեց ուրիշներին: Քանզի եթե նա իսկապես չհավատար, թէ միայն Մեկ ճշմարիտ Աստված կա, այդպիսի պատիվ չէր ընծայի Նրա ծառային և կամ այդպիսի կարգ չէր սահմանի ուրիշների համար: Սակայն այդպիսի խոստովանությունից հետո նա կրկին կռապաշտ դարձավ, և նա, ով ընկնում էր իր երեսների վրա և երկրպագում էր Աստծո ծառային, այնքան մոլեգնեց, որ հնոցի մեջ նետեց Աստծո ծառաներին, ովքեր չէին կամենում երկրպագել իրեն: Ուրեմն ի՞նչ: Աստված վրեժ լուծե՞ց ուրացողից, ինչպես որ արժան էր վրեժ լուծել: Հակառակը՝ Նա իր զորության առավել մեծ նշան ցույց տվեց նրան և այդքան անմտությունից հետո նրան վերստին նախկին վիճակին դարձրեց: Եվ որ առավել հրաշալի է, որպեսզի հրաշքի մեծության պատճառով կրկին անհավատալի չթվան տեղի ունեցածները, Նա հրաշքը ցույց տվեց ոչ թե այլ բանում, այլ նույն այն հնոցում, որ բորբոքել էր արքան մանուկների համար՝ կապելով ու դրա մեջ նետելով նրանց: Անշուշտ սքանչելի ու զարմանալի կլիներ, եթե միայն կրակը հանգցներ, բայց Մարդասերը ավելի սաստիկ, ավելի մեծ ահ ներշնչելու և նրա կուրությունը ամբողջովին ցրելու համար այդ ամենից մեծ ու նոր հրաշք գործեց: Երբ թույլ տվեց, որ արքան կրակը բորբոքի այնքան, որքան կամենում է, ցույց տվեց Իր զորությունը. ոչ թե թշնամիների հնարները վերաց-

նելով, այլ դրանք հաստատուն պահելով՝ անգործ դարձրեց: Եվ որպեսզի տեսնելով, որ նրանք հաղթում են բոցին, ոչ ոք չկարծի, թե առաչոք է կատարվածը, թույլ տվեց, որ այն այրի իրենց նետողներին՝ ակնհայտ դարձնելով, որ երևացողը իսկապես կրակ էր. հակառակ դեպքում այն չէր այրի ո՛չ նավթը, ո՛չ վուշը, ո՛չ ցախը և ո՛չ էլ այնքան մարմինները: Սակայն Նրա հրամանից զորավոր ոչինչ չկա, այլ բոլոր գոյերի բնությունը հպատակվում է Նրան, Ով ոչնչից գոյություն կոչեց նրան. հենց այն ժամանակ հայտնի դարձավ այդ: Քանզի բոցը, իր մեջ առնելով ապականացու մարմինները, հեռացավ դրանցից՝ իբրև անապականներից, և ավանդը վերադարձրեց ամբողջովին ողջ, ավելին՝ մեծ շքով:

Քանզի մանուկները հնոցից դուրս եկան այնպես, ինչպես թագավորները՝ արքունիքից, այնպես որ ոչ ոք չէր ուզում նայել թագավորին, այլ բոլորը, նրան թողած, իրենց աչքերը սևեռել էին նորանշան տեսարանին. և ո՛չ թագը, ո՛չ ծիրանին և կամ արքունական փառքից մեկ այլ բան այնքան չգրավեց անհավատների ուշադրությունը, որքան տեսքը այն արդարների, ովքեր երկարաձիգ ժամեր մնալով կրակի մեջ, այնպես ելան այնտեղից, կարծես երազի մեջ էին կրել այդ ամենը: Քանզի մեր մարմնի ամենադյուրավառ մասը՝ մազերը, այնժամ աղամանդից ամուր հաղթեցին ամենակեր բոցին:

Սքանչելի էր այն, որ նրանք ոչ մի տառապանք չէին կրում՝ ոչ միայն բոցի մեջ նետված լինելով, այլ նաև՝ խոսելով. քանզի բոլորին է հայտնի, որ կրակի մեջ ընկածները, որքան ժամանակ փակ պահեն շրթունքները (թեև հրդեհին ընդդիմանալու կարճ ժամանակ ունեն), իսկ եթե պատահի, որ բացեն իրենց բերանը, անմիջապես հոգին մարմնից դուրս կթռչի:

Եվ սակայն այդքան սքանչելիքներից հետո, երբ բոլոր այնտեղ գտնվողներն ու տեսնողները ապշեցին, իսկ բացականներն այդ մասին գրավոր տեղեկացան, թագավորը, որ ուրիշների համար ուսուցիչ էր եղել, անուղղելի մնալով՝ վերստին դարձավ իր նախկին չարիքներին: Այսուհանդերձ Աստված չպատժեց նրան, այլ կրկին համբերեց՝ նրան խելամիտ

դարձնելու երազների և մարգարեի միջոցով: Իսկ երբ այս բոլոր միջոցներով էլ նա չուղղվեց, այնժամ վրա հասցրեց պատուհասը՝ ոչ թե վրեժ լուծելով նրա արածների համար, այլ կասեցնելով ապագա չարիքները և սանձելով նրա՝ առաջ ընթացող ամբարշտությունը: Սակայն այս էլ ոչ մշտապես, այլ մի քանի տարի խրատելով նրան՝ կրկին նախկին պատվին բարձրացրեց, այնպես որ նա ամենևին չտուժեց այն պատուհասից, այլ շահեց բոլոր բարիքներից մեծագույնը՝ հաստատուն հավատը առ Աստված և ապաշխարությունը նախկինում գործած մեղքերի համար:

Այսպիսին է Աստծու մարդասիրությունը. Նա երբեք չի մերժում անկեղծ ապաշխարությունը, այլ եթե մեկն անգամ չարիքների ծայրակետին է հասած լինում և այնտեղից որոշում է առաքինության ճանապարհին դառնալ, ընդունում, Իր գիրկն է բերում նրան և անում է ամեն ինչ, որպեսզի նրան դարձնի նախկին վիճակին: Եվ որ առավել մեծ մարդասիրություն է, քան սա. եթե մեկը ոչ ամբողջապես ապաշխարի, կարճատևն ու քիչն էլ երբեք չի մերժում, այլ դրա համար էլ է բազում վարձ սահմանում: Եվ այս հայտնի է Եսայի մարգարեի՝ հրեա ժողովրդի մասին ասած խոսքերից. «Մեղքի պատճառով սակավ ժամանակ տրտմություն հասցրի նրան, հարվածեցի նրան և երեսս շրջեցի նրանից, և նա տրտմեց և գնաց թախծելով: Ես տեսա նրա սրտի ճանապարհները և բժշկեցի ու մխիթարեցի նրան» (Ես. ԾԷ 17-18): Մեզ վկայում է նաև հույժ ամբարիշտ այն թագավորը, ով իր կնոջ ձեռքով մեղքերի մատնվեց, բայց հենց որ արտասվեց, քուրձ հագավ և դատապարտեց իր անօրինությունները, այնպես դեպի իրեն դարձրեց Աստծո ողորմությունը, որ մինչևիսկ ազատվեց սպառնացող բոլոր աղետներից: Քանզի Աստված Եղիային ասաց. «Տեսա՞ր, որ Աքաաբը զղջաց իմ առջև: Եվ քանի որ ընդունեց իր մեղքերը, նրան չարիք չեմ պատճառի իր կենդանության օրոք» (Գ Թագ. ԻԱ 28, 29): Նրանից հետո Մանասեն, ով իր մոլեգնությամբ ու դաժանությամբ գերազանցեց բոլորին, բռնակալի պես հիմն ի վեր տապալեց օրի-

նաւոր աստվածպաշտությունը, փակեց տաճարը և աճեցրեց կուռքերի մոլորությունները, ամբարշտացավ առավել, քան իրենից առաջ եղածները, բայց երբ զղջաց, Աստծո բարեկամների հետ դասվեց (տե՛ս Բ Մն. ԼԴ, 12): Եթե նա, նայելով իր անօրենությունների մեծությանը, հույսը կտրեր իր դարձից ու փոփոխությունից, ապա կզրկվեր այն ամենից, ինչ որ ստացավ հետո: Բայց նա, թողնելով իր բազում մեղքերը, վստահեց Աստծո անսահման գթությանը և խզեց բանսարկուի կապանքները, կանգնեց, մարտնչեց և ավարտեց գեղեցիկ ընթացքը:

Աստված կտրում, հատում է հուսահատության մտքերը ոչ միայն այն ամենով, ինչ պատահեց այս թագավորներին, այլ նաև այն խոսքերով, որ ասաց մարգարէի միջոցով. «Այսօր, երբ լսեք ձայնը նրա, մի՛ խստացրեք ձեր սրտերը դառնությամբ» (Սաղմ. ՂԴ 7,8): «Այսօր»ը կարող է վերաբերել այս բովանդակ կյանքին, եթե կամենում եք, նույնիսկ ծերությանը, քանզի ապաշխարությունը չափվում է ոչ թե ժամանակի երկարությամբ, այլ հոգևոր հոժարությամբ: Նինվեացիներին իրենց մեղքերը քավելու համար շատ օրեր պետք չեկան, այլ մեկ օրվա կարճ ժամանակը բավական եղավ՝ ջնջելու նրանց բոլոր անօրինությունները. ավազակը երկարաձիգ ժամանակի ընթացքում չէ, որ արժանացավ դրախտ մտնելուն, այլ որքան ժամանակ ծախսում է մեկը մեկ խոսք ասելու համար, այնքան վայրկյանում լվանալով իր ամբողջ կյանքի բոլոր մեղքերը՝ առաքյալներից առաջ ստացավ փառքի պսակը: Իսկ մարտիրոսները. տեսնում ենք, որ նրանք ոչ թե բազում տարիներում, այլ մի քանի օրում, հաճախ նաև մեկ օրում ձեռք բերեցին շքեղաշուք պսակը:

Ուստիև մեզ ամենուր պետք է արթնություն և սրտի բազում պատրաստություն, և եթե այնպես շտկենք մեր խղճմտանքը, այնքան սաստիկ ատենք մեր նախկին մեղսալի կյանքը և բռնենք հակառակ ճանապարհը այնպիսի ուժով, ինչպես կամենում ու պահանջում է Աստված, ապա մենք ժամանակի կարճության պատճառով ոչինչ չենք կորցնի,

քանզի հետիններից շատերը առաջ անցան առաջիններից: Քանզի դժնդակ է ոչ թե ընկնելը, այլ ընկած մնալը և կրկին չկանգնելը՝ կամավորապես չար գործելով և անհոգանալով՝ հուսահատության մտքերով կամքի տկարությունը ծածկելը: Այդպիսի մարդկանց նաև մարգարեն, իբրև տարակուսանքով, ասում է. «Նա, ով գլորվում է, մի՞թե չի ելնում, կամ նա, ով խոտորվում է, ետ չի՞ դառնում» (Երեմ. Ը 4): Եվ եթե մեզ հարցնես նրանց մասին, ովքեր հավատալուց հետո կրկին ընկան, ապա ասվածը նաև նրանց է վերաբերում, քանզի նա, ով ընկավ, նախկինում ոչ թե ընկածների, այլ կանգնածների մեջ էր. ինչպե՞ս կարող է ընկածն ընկնել:

Պետք է, պե՛տք է, որ մենք ասենք այլ բան ևս առակներից, երևելի գործերից ու խոսքերից: Այն ոչխարը, որ գտավեց իննսունիններից և ապա ետ բերվեց այնտեղից, մեզ այլ բան չի ներկայացնում, քան հավատացյալի անկումն ու դարձը: Այս ոչխարը օտար հոտից չէր, այլ մնացած ոչխարների թվից, նախկինում հովվում էր նույն հովվից, և մոլորվեց ոչ փոքր մոլորությամբ, այլ լեռներում ու առապարներում, այսինքն՝ հեռու և ուղիղ ճանապարհից ամբողջովին շեղված ճանապարհին: Եվ արդ, անտեսե՞ց մոլորվածին: Երբե՛ք: Այլ բերեց այնտեղից: Ոչ քշելով և կամ դանակոծելով, այլ Իր ուսի վրա դնելով: Ինչպես լավ բժիշկներն են երկար ժամանակ հիվանդին մեծ խնամածությամբ բժշկում՝ նրանց բուժելով ոչ միայն բժշկական միջոցներով, այլև երբեմն նաև նրանց գիջելով, նրանց առջև խոնարհվելով, այդպես էլ Աստված խիստ ապականվածին ոչ հանկարծակի ու ստիպելով է բերում առաքինության, այլ մեղմորեն և աստիճանաբար, ամենուր օգնելով, որպեսզի բաժանումն ավելի մեծ չլինի, և մոլորությունն՝ առավել երկարատև:

Եվ ոչ միայն այս, այլ նաև անառակ որդու մասին պատմող առակն է ցույց տալիս նույնը: Նա նույնպես օտար մեկը չէր, այլ որդի և եղբայր սիրասնունդ զավակի, և շեղվեց ոչ թե դեպի թեթև, այլ դեպի ծայրագույն չարիքները: Մեծատունը, ագատն ու ազնվականը դարձավ առավել խեղճ, քան

սպասավորները, օտարականներն ու վարձկանները: Բայց վերստին դարձավ իր նախկին վիճակին և կրկին ստացավ նախկին պատիվը: Բայց եթե նա հույսը կտրեր իր կյանքից և իրեն վրա հասած աղետից վհատվելով՝ մնար օտարության մեջ, ապա չէր ստանա այն, ինչ ստացավ, այլ սովալլուկ լինելով՝ բոլորից ավելի թշվառ մահով կմեռներ:

Բայց քանի որ զղջաց և չհուսահատվեց, այդքան ապականվելուց հետո դարձյալ նույն պայծառությանը եկավ, հագավ գեղեցիկ պատմուճանը և ավելի մեծության մեջ վայելեց, քան չընկած հարազատը: Քանզի. «Այս քանի՞ տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ արել. ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներս հետ ուրախություն անեի: Իսկ երբ եկավ քո այդ որդին, որը քո ունեցվածքը կերավ պոռնիկների հետ, պարարտ եզը նրա համար մորթեցիր» (Ղուկ. ԺԵ 29-30): Այսչափ է ապաշխարության զորությունը:

Արդ, մեր առջև ունենալով այսքան օրինակներ՝ չմնանք չարիքների մեջ և հույսներս չկտրենք մեր դարձից, այլ նաև մենք ինքներս ասենք. «Գնամ իմ հոր մոտ», և մոտենանք Աստծուն: Քանզի Նա երբեք չի հեռանում մեզնից, այլ մենք ենք մեզ հեռացնում Նրանից: Քանզի. «Ես մերձավոր Աստված եմ, ասում է, և ոչ հեռավոր Աստված» (Եր. ԻԳ 23): Եվ դարձյալ մարգարեի միջոցով ամբաստանում է նրանց՝ ասելով. «Ո՛չ, ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր և իմ միջև» (Ես. ԾԹ 2): Եվ արդ, քանի որ այս է, որ հեռացնում է մեզ Աստծուց, քանդենք, վերացնենք այդ դժնդակ պատնեշը, որ խանգարում է մեզ՝ մերձենալու Աստծուն:

Բայց դու լսի՛ր դրա՝ գործերով ապացույցը: Կորնթացիների մեջ մի հայտնի մարդ այնպիսի մեղք գործեց, որպիսին չհիշատակվեց անգամ հեթանոսների մեջ: Եվ նա հավատացյալներից էր և Քրիստոսին մերձ գտնվողներից, ոմանք էլ ասում են, թե երեց էր: Ի՞նչ: Պողոսը նրան հատե՞ց, կտրե՞ց փրկվողների բաժնից: Քա՛վ լիցի: Նա ինքն է, որ բազում անգամ կշտամբում է կորնթացիներին նրան ապաշխարության չբերելու պատճառով: Իսկ մեզ, կամենալով հայտնի դարձնել, որ չկա այնպիսի մեղք, որ անհնարին լինի ապաքինել, դարձյալ խոսում է այն մարդու մասին, ով մեղանչեց ավելի, քան հեթանոսները՝ ասելով. «Մատնեցե՛ք այդպիսի մեկին սատանային՝ նրա մարմնի կորստյան համար, որպեսզի նրա հոգին ապրի մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրում» (Ա Կոր. Ե 5):

Բայց այս՝ ապաշխարությունից առաջ, իսկ երբ սթափվեց. «Այդպիսի մեկի համար, ասում է, բավական է այն պատիժը, որ տրվեց շատերից» (Բ Կոր. Բ 6), և գրեց, որ մխիթարեն նրան և ընդունեն նրա ապաշխարությունը, որ սատանան չվնասի նրան:

Դարձյալ՝ երբ գաղատացիների ամբողջ ազգը գլորվեց հավատից այնքան հրաշքներ ու նշաններ գործելուց և Քրիստոսի հավատի համար զանազան փորձությունների մատնվելուց հետո, նա նրանց կրկին կանգնեցրեց: Որ նրանք հրաշքներ գործում էին, ցույց է տալիս՝ ասելով. «Իսկ արդ, նա, ով Հոգին բաշխեց ձեզ և զորություններ գործեց ձեր մեջ, օրենքի գործերո՞վ էր, թե՞ հավատի քարոզությամբ» (Գաղ. Գ 5), իսկ այն, որ նրանք հավատի համար շատ տառապանքներ կրեցին, ցույց է տալիս՝ ասելով. «Եվ այդքան փորձություններ իզո՞ւր անցան ձեր գլխով. եթե, անշուշտ, իզուր էին» (Գաղ. Գ 4): Բայց այսքան բարգավաճելուց հետո նրանք մեղք գործեցին, որ կարող էր օտարացնել նրանց Քրիստոսից, և որի մասին ինքը այսպես է խոսում. «Ահավասիկ, ես՝ Պողոսը, ձեզ ասում եմ՝ եթե դուք թլպատվեք, Քրիստոս ձեզ ոչնչով չի օգնի» (Գաղ. Ե 2), և դարձյալ՝ «Դուք, որ օրենքով եք արդարանում, Քրիստոսից կտրված եք, շնորհից ընկած» (Գաղ. Ե 4): Այսուհանդերձ, այսպիսի անկումից հետո հավաքում է նրանց՝ ասելով. «Որդյակնե՛ր իմ, դուք, որոնց համար վերստին երկունքի մեջ եմ, մինչև որ Քրիստոս կերպավորվի ձեր մեջ» (Գաղ. Դ 19)՝ ցույց տալով, որ ծայր աստիճանի ապականվելուց հետո էլ մեր մեջ կարող է կրկին կերպավորվել Քրիստոս, քանի որ Նա չի կամենում «մեղավորի մահը, այլ՝ նրա ետ կանգնելն իր չար ճանապարհից և ապրելը» (Եզեկ. ԼԳ 11):

Դառնանք ապա, ո՛վ սիրեցյալ գլուխ, և կատարենք Աստծո կամքը: Քանզի Նա մեզ ստեղծեց և գոյության կոչեց այն բանի համար, որ հաղորդակից դարձնի հավիտենական բարիքներին, որ պարգևի երկնային արքայությունը, և ոչ թե, որ գցի գեհենը և մատնի կրակին. այն ոչ թե մեզ, այլ սատանայի համար կազմվեց, իսկ մեզ համար ի սկզբանե կազմվեց ու պատրաստվեց արքայությունը: Այս երկուսն է ցույց տալիս՝ աջ կողմում գտնվողներին ասելով. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը», իսկ ձախակողմյաններին, թե՝ «Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար» (Մատթ. ԻԵ 34, 41): Իսկ արքայությունը դեռ աշխարհի արարումից առաջ պատրաստվեց մեզ համար:

Ուրեմն մեր անձերն անարժան չդարձնենք այն առագաստ մտնելուն. որքան ժամանակ այս աշխարհում ենք, թեև բյուր մեղքեր էլ գործենք, դյուրին է միանգամայն բոլորը ջնջելը բոլոր նրանց համար, ովքեր հանձն են առնում մեղքերի համար ապաշխարել: Իսկ երբ գնանք այնտեղ, որքան էլ սաստիկ զղջանք, այլևս ոչ մի օգուտ չի լինի մեզ. որքան էլ կրճատենք մեր ատամները, որքան էլ հեծեծենք, բյուրավոր անգամներ պաղատենք, ոչ ոք մատի ծայրով անգամ չի կաթեցնի մեզ՝ բոցով պատածներիս, այլ կլսենք այն, ինչ լսեց այն մեծահարուստը այն ժամանակ. «Մեծ վիհ կա մեր և ձեր միջև» (Ղուկ. ԺԶ 26): Սթափվե՛նք այստեղ, աղաչո՛ւմ եմ, և ճանաչենք մեր Տիրոջը, ինչպես արժան է ճանաչել: Միայն այն ժամանակ հարկ կլինի կտրել հույսը ապաշխարությունից, երբ դժոխքում կլինենք: Միայն այնտեղ է տկար ու անպիտան այս դեղը, իսկ քանի դեռ այստեղ ենք, այն, եթե անգամ խորը ծերության ժամանակ օգտագործվի, մեծամեծ զորություն ցույց կտա: Դրա համար էլ սատանան գործադրում է իր ողջ խորամանկությունը, որպեսզի մեր մեջ արմատավորի հուսահատության միտքը, որովհետև լավ գիտի, որ եթե մենք փոքր-ինչ էլ զղջանք, անվարձ չենք մնա: Այլ ինչպես մի բաժակ սառը ջուր տվողն ունի պատրաստված հատուցումը, այդպես էլ նա, ով ապաշխարի իր գործած մեղքերի համար թեկուզ ոչ իր գործած մեղքերի չափով, դրա փոխարենն էլ կստանա: Ոչ մի բարի գործ, անգամ շատ փոքր, չի անտեսվում Արդար Դատավորից: Եթե մեղքերը քննվում են այնքան ճշտությամբ, որ և՛ մեր խոսքերի, և՛ խորհուրդների համար վրեժ լուծվի մեզնից, ապա որքան առավել՝ մեր բարի գործերը, փոքր լինեն, թե մեծ, կհամրվեն այն ժամանակ: Այնպես որ եթե դու չես կարող ամբողջությամբ վերադառնալ նախկին խիստ կյանքին, սակայն ինչպես էլ լինի, փրկի՛ր քեզ առաջիկա մեղքից ու ցանկությունից, և այդ անօգուտ չի լինի քեզ համար: Միայն սկսի՛ր գործը և բա՛ց արա քեզ համար մուտքը դեպի սխրանքներ. քանզի որքան ժամանակ դրսում ես, այն իսկապես քեզ տաժանելի ու անհնարին է թվում: Նույնիսկ միանգամայն հեշտ ու փոքր գործերը սովորաբար մեզ դժվար են թվում մինչև փորձելը, իսկ երբ համարձակորեն ձեռնամուխ ենք լինում և փորձում, դժվարությունների մեծ մասն անհետանում է, և քաջությունը, փոխարինելով դողին ու հուսահատությանը, նվազեցնում է վախը, մեծացնում է դյուրությունը և զորացնում բարի հույսերը: Դրա համար ամենաչարը Հուդային զրկեց այս կյանքից, որպեսզի նա չսկսի սթափվել և ապաշխարության միջոցով վերադառնալ այնտեղ, որտեղից ընկավ: Անսովոր բան կբարբառեմ՝ ասելով, թե նրա մեղքն իսկ ավելի մեծ չեմ համարում, քան այն օգնությունը, որ ստանում ենք մենք ապաշխարությունից:

Այդ պատճառով էլ աղաչում ու խնդրում եմ քեզ՝ հեռացրո՛ւ քո հոգուց բոլոր սատանայական մտքերը և դարձի՛ր այդ փրկող միջոցին: Եթե ես քեզ խորհուրդ տայի՝ արագարագ և միանգամից կրկին բարձրանալ այն գագաթը, դու իրավացիորեն կդժկամեիր, իբրև միանգամայն ծանր գործ: Բայց եթե ես այժմ քեզնից խնդրում եմ այնքանը միայն, որ դու ոչինչ չավելացնես քո այդ չարիքներին, այլ այդտեղից կանգնելով՝ քեզ կրկին դարձնես հակառակ կողմը, ապա ինչո՞ւ ես դանդաղում, ինչո՞ւ ես խորշում ու հակառակվում:

Մի՞թե չտեսար, թե ինչպես ավարտեցին իրենց կյանքը ճոխության, հարբեցողության, խաղերի և կյանքի այլ խեղկատակությունների մեջ ապրողները:

Այժմ որտե՞ղ են նրանք, ովքեր փքացած ամբարտավանությամբ ու շատերի ուղեկցությամբ էին գնում հրապարակներով, ովքեր մետաքսյա հագուստներ էին հագնում և յուղերով օծվում, կերակրում էին պատառաբույծներին և մշտապես տրվում խրախճանքներին: Ո՞ւր է այժմ նրանց չքեղությունը: Անցան գնացին մեծածախս խնջույքները, երաժիշտների խմբերը, մարդահաճոների ծառայությունները, բարձրաձայն ծիծաղը, հոգու լկտիությունը, մտքերի անառակությունը, փափուկ կյանքը՝ դատարկ ու ցոփ: Ո՞ւր թռավ այս ամենը: Ի՞նչ դարձավ այն մարմինը, որ արժանանում էր այդպիսի հոգատարության ու մաքրության:

Գնա՛ գերեզմանոց, նայի՛ր փոշուն, մոխրին, որդերին, նայի՛ր այդ տեղի անարգությանն ու դառը հոգոց հանիր: Բայց երանի՛ թե պատիժը լիներ միայն այս փոշին: Դու այժմ այդ գերեզմանից ու այդ որդերից միտքդ տեղափոխիր դեպի այն անմահ որդերը, դեպի անշեջ կրակը, ատամների կրճտոցը, արտաքին խավարը, այն վիշտն ու անձկությունը, դեպի առակը Ղազարոսի ու այն մեծահարուստի, ով նախկինում այդքան հարստություն ունենալով և ծիրանի հագնելով՝ չէր կարողանում ստանալ անգամ մի կաթիլ ջուր, որի կարիքն այնքան ուներ:

Այստեղ եղածները ոչնչով լավ չեն երազից: Ինչպես հանքահորերում աշխատողները կամ մեկ այլ առավել ծանրագույն պատիժ կրողները, երբ, քնելով տաժանակիր աշխատանքից ու ամենադառը կյանքից հետո, երազում տեսնում են իրենց փափկության ու ճոխության մեջ, իսկ դրանից հետո արթնանալով քնից՝ չեն ուրախանում իրենց երազով, այդպես էլ պատահեց այն հարուստին, ով այս կյանքում, իբրև երազում, վայելեց հարստությունը, իսկ երբ գնաց այստեղից, չարչարվում էր նույն ծանր տանջանքների մեջ: Նույն բանը մտածի՛ր դու և նույն կրակը դնելով քեզ պաշարած

ցանկության հրդեհի դիմաց՝ ազատվի՛ր այն հնոցից: Քանզի ով գեղեցկապես հանգցնի այստեղի հուրը, երբեք փորձով չի ճանաչի այնտեղինը, իսկ նա, ով այստեղինը չհանգցնի, երբ այստեղից գնա այնտեղ, ավելի սաստիկ կտանջվի նրանով: Որքա՞ն կուզեիր, որ շարունակվեն այս կյանքիդ վայելքները: Ես կարծում եմ, որ ոչ ավելի, քան հիսուն տարի է մնում քեզ՝ հասնելու խորը ծերության, բայց այդ էլ դեռ հայտնի չէ մեզ, քանզի եթե վստահ չենք, թե մեր կյանքը մինչ երեկո շարունակվելու է, թե ոչ, ինչպե՞ս կարող ենք այդքան տարի երաշխավորել: Եվ միայն այդ չէ, որ անհայտ է մեզ, անհայտ են նաև իրադրությունների փոփոխությունները. հաճույքները հաճախ չեն շարունակվում երկար կյանքի հետ, այլ սկսվելուն պես դրանք անհետանում են: Սակայն եթե կամենում ես, թող լինի այնպես, որ դու այդքան տարի ապրես և ոչ մի փոփոխություն չկրես. ի՞նչ է դա անսահման հավիտյանի և դառն ու անտանելի տանջանքների համեմատ: Այստեղ և՛ քաղցր, և՛ դառը բաները վախճան ունեն, և այն էլ՝ շատ արագ, իսկ այնտեղ երկուսն էլ շարունակվում են անսահման հավիտյաններ և այնքան տարբեր են այստեղինից, որ անհնար է ասել:

Կրակի մասին լսելով՝ մի՛ կարծիր, թե այն այսպիսի կրակ է. այս կրակն այրում ու ոչնչացնում է այն ամենն, ինչ բռնում է, իսկ այն, մի անգամ բռնելով, այրում է մշտապես և երբեք չի դադարում, որի պատճառով էլ անհանգչելի է ասվում: Քանզի մեղավորները նույնպես պետք է անմահություն հագնեն ոչ թե պատվի, այլ այն տանջանքներն իբրև մշտնջենավոր ուղեկից ունենալու համար: Իսկ թե որքան դժնդակ են դրանք, խոսքերը երբեք չեն կարող արտահայտել, թեև միայն փոքր-ինչ տառապանքներ կրելու փորձառությամբ հնարավոր կլինի որոշ պատկերացում ունենալ այն մեծ տառապանքների մասին: Եթե երբևիցէ պատահի, որ մտնես չափից ավելի տաքացված բաղնիք, այնժամ պատկերացրու գեհենի կրակը. և դարձյալ՝ եթե այրվես տենդի ջերմությունից, մտքով փոխադրվիր դեպի այն կրակը և այնժամ կարող

ես լավ հասկանալ այդ տարբերությունը: Եթե բաղնիքն ու տենդն են այդպես տառապեցնում ու տագնապեցնում մեզ, ինչ պիտի զգանք այն ժամանակ, երբ կրակից ընկնենք այն գետը, որ հոսում է այն սոսկալի ատյանի առջևից, ինչպե՞ս պիտի դիմանանք: Տանջանքներից ու անտանելի խոշտանգումներից լլկվելով՝ կկրճատենք մեր ատամները, բայց ոչ ոք չի օգնի մեզ, բարձրաձայն կկոծենք, երբ բոցը սաստիկ ուժով բռնի մեզ, բայց չենք տեսնի ոչ ոքի, բացի նրանցից, ովքեր չարչարվում են մեզ հետ, և ահավոր միայնությունը:

Ով կպատմի այն սարսափների մասին, որ այն խավարի պատճառով պիտի պաշարեն մեր հոգին: Այն կրակը ինչպես ոչնչացնող, այդպես էլ լուսավոր չէ, հակառակ դեպքում խավար չէր լինի: Տագնապը, որ պատելու է մեզ այն ժամանակ, դողը, հյուծումն ու սաստիկ մոլեգնությունը միայն այն ժամանակը կարող կլինի հայտնի կերպով ցույց տալ: Բազում ու զանազան են այնտեղի չարչարանքները, և տանջանքների հոսքերը բոլոր կողմերից տեղալու են հոգու վրա:

Եթե մեկն ասի, թե հոգին ինչպե՞ս կարող է դիմանալ այդքան սաստիկ կտտանքներին և անսահման հավիտյաններ տոկալ չարչարանքներին, թող մտաբերի այն, ինչ կատարվում է այստեղ. ինչպես են հաճախ շատերը տոկում երկարատև ու ծանր հիվանդությանը: Ապա եթե մեռնում են ոչ թե, որովհետև հոգին է անհետանում, այլ որովհետև մարմինն է մաշվում, քանզի եթե մարմինը տեղի չտար, հոգին երբեք չէր դադարի չարչարվելուց: Երբ հոգին անապական և անլուծելի մարմինն հագնի, այդժամ ոչինչ չի կարողանա արգելել տանջանքների՝ հավիտյան շարունակվելուն: Այստեղ այս երկուսը, այսինքն՝ տանջանքների սաստկությունն ու երկարատևությունը, միասին լինել չեն կարող, այլ մարմնի մակհանացու բնության պատճառով մեկը պայքարում է մյուսի դեմ՝ չկարողանալով միաժամանակ կրել և՛ մեկը, և՛ մյուսը, իսկ երբ հաջորդի անապականությունը, այդ մարտը կդադարի, և այս երկու չարիքները մեծ զորությամբ հավիտյաններում կլլկեն մեզ:

Այժմ չկարծենք, թե այն չարչարանքների սաստկությունը ոչնչացնելու է մեր հոգին. այն ժամանակ չի ոչնչանալու նաև մարմինը, այլ հոգու հետ միասին հավիտյան մնալու է տանջանքների մեջ, որոնք չեն ունենալու ոչ մի վախճան:

Արդ, որքա՞ն են այս վայելքներն ու հաճույքները, և որքա՞ն ժամանակ ես կամենում դու դրանց դիմաց դնել: Թերևս հարյո՞ւր տարի կամ դրա կրկնապատի՞կը: Բայց ի՞նչ է այն անսահման հավիտյանի համեմատ: Ինչ որ մեկ օրվա երազն է ամբողջ կյանքի համեմատ, նույնն են այստեղի վայելքները հանդերձյալ վիճակի համեմատ: Եվ արդ, կգտնվի՞ մեկը, որ հաճելի երազ տեսնելու համար սիրտ անի տանջանքներ կրել ամբողջ կյանքում: Ո՞վ է այնքան անմիտ, որ այդպիսի փոխհատուցում հանձն առնի: Տակավին չեմ դատապարտում հաճույքները և երևան չեմ հանում դրանց մեջ արմատացած դառնությունները, քանզի հիմա չէ դրա մասին խոսելու ժամանակը, այլ այն ժամանակ, երբ դու կարողացած կլինես քո անձը փրկել դրանցից: Այժմ, մինչ դու բռնված ես այդ ախտով, թերևս քեզ շաղակրատ կթվանք՝ հեշտությունը դառը անվանելով, բայց երբ Աստծու շնորհներով ազատվես այդ ախտից, այդժամ շատ լավ կհասկանաս դրա չարությունը:

Ուստիև մեկ այլ ժամանակի թողնելով այդ մասին խոսելը, այժմ ասենք հետևյալը. թող վայելքները՝ վայելքներ, և հաճույքները՝ հաճույք լինեն՝ իրենց մեջ չունենալով ոչ մի տրտմեցնող կամ այպանելի բան. ի՞նչ ասենք պատրաստված տանջանքների մասին: Այն ժամանակ ի՞նչ ենք անելու մենք՝ այժմ այստեղի վայելքների՝ իբրև ստվերի ու պատկերի մեջ հեշտացողներս, իսկ այնտեղ իսկապես հավիտենական տանջանքների ենթարկվողներս, և այն էլ այն դեպքում, երբ հնարավոր էր կարճ ժամանակում ազատվել այն կտտանքներից և վայելել պատրաստված բարիքները: Աստծո մարդասիրության գործն է, որ մեր պատերազմները երկար չձգվեն, այլ կարճ, քիչ, ակնթարթի չափ (քանզի հենց այդպիսին է այս կյանքը հանդերձյալի համեմատ) պատերազմելով՝ պիտի պսակվենք անվախճան հավիտյաններում: Այն ժամանակ

պատժվողների հոգին չարչարելու է և այն միտքը, որ իրենք անփույթ գտնվեցին և իրենց անձերը հավիտենական տանջանքների մատնեցին հենց այն ժամանակ, երբ կարող էին սակավ օրերում ամեն բան ուղղել:

Որպեսզի մենք չկրենք այդ ամենը, վե՛ր կենանք, քանի դեռ բարեպատեհ է ժամանակը, քանի դեռ փրկության օրն է, քանի դեռ մեծ է ապաշխարության զորությունը: Քանզի եթե հեղգության մեջ մնանք, մեզ կըմբռնեն ոչ միայն վերևում ասված չարիքները, այլ նաև դրանցից առավել դժնդակները: Այսպիսի և առավել դառը պատիժներ կլինեն գեհենում, իսկ բարիքներից ամբողջովին զրկվելը այնպիսի ցավ, այնպիսի վիշտ ու տառապանք կպատճառի, որ եթե անգամ մեղավորների համար այնտեղ ոչ մի պատիժ պատրաստված չլիներ, միայն սա բավական է գեհենի կտտանքներից առավել չարաչար տանջելու ու տագնապեցնելու մեր հոգին:

Պատկերացրու այն կյանքի վիճակը, որքան հնարավոր է պատկերացնել այն: Քանզի իր մեծավայելչության պատճառով ոչ մի խոսք չի կարող այն ներկայացնել, սակայն այն օրինակներից լսելով՝ աղոտ պատկերացում կազմենք նրա մասին: «Ցավը, տրտմությունն ու հեծությունը պիտի անհետանան» (Ես. ԼԵ 10): Ի՞նչը կարող է երանելի լինել այդ կյանքից: Այնտեղ չկա վախ աղքատությունից, հիվանդությունից, չկա զրկող, զրկվող, չկա զայրացնող և զայրացող, չկա բարկացող, չկա նախանձող, չկա տարադեպ ցանկությամբ բորբոքվող, չկա մեկը, որ տառապի կյանքի համար անհրաժեշտը ձեռք բերելու մտահոգությունից, չկա մեկը, որ տառապի իշխանության ու տիրակալության ցանկությունից: Մեր բոլոր կրքերի մրրիկը, հանդարտվելով, կդադարի, ամեն բան խաղաղության, ուրախության ու խնդության մեջ է, ամեն բան լուռ է ու հանդարտ, ցերեկ է և պայծառություն, լույս՝ ոչ այնպիսին, ինչպիսին այստեղինն է, այլ ուրիշ, որ այնքան պայծառ է սրանից, որքան սա՝ ճրագից: Այնտեղ չկա գիշեր, ամպերը չեն ծածկում այն լույսը, այն չի այրում ու չի կիզում մարմինները: Այնտեղ չկա գիշեր, չկա երեկո,

չկա ցուրտ, չկա շոգ և ոչ էլ եղանակի փոփոխություն, այլ մեկ այլ վիճակ է, որ ճանաչելի է միայն դրան արժանացողներին: Այնտեղ չկա ծերություն, չկան ծերության աղետներ, այլ վերացել են բոլոր-բոլոր ապականացու կրքերը, քանզի ամենուր թագավորում է անապական փառքը: Իսկ որ ամենակարևորն է, մշտապես վայելում են Քրիստոսի ներկայությունը հրեշտակների, հրեշտակապետերի, վերին զորությունների հետ:

Այժմ նայի՛ր երկնքին և մտքով անցի՛ր դեպի այն, ինչ վեր է երկնքից, պատկերացրու ամբողջ արարչության կերպարանափոխությունը. նրանք չեն մնալու այսպես, ինչպես որ են, այլ պիտի լինեն շատ ավելի չքնաղ ու գեղափայլ, և ինչքան որ ոսկին է փայլուն կապարից, այնքան այն ժամանակվա արարածները լավը կլինեն այժմվանից, ինչպես երանելի Պողոսն է ասում. «Որ ստեղծվածներն իրենք էլ ազատվեն ապականության ծառայությունից» (Հռոմ. Ը 21): Այժմ այն, իբրև ապականությանն հաղորդ, կրում է շատ բան, որ հատուկ է մարմնին, իսկ այն ժամանակ, այս ամենից մերկանալով, նա մեզ ցույց կտա իր անապական գեղեցկությունը: Քանի որ մեր բնությունը ստանալու է անապական մարմին, ինքն էլ կփոխվի լավագույնի: Այնժամ ոչ մի տեղ չի լինի վեճ ու կռիվ, որովհետև մեծ միաբանություն է սուրբերի մեջ, նրանք բոլորը մշտապես համախոհ են միմյանց: Այնտեղ սատանայից կամ դևերի դարանակալությունից վախենալ չկա, չկա գեհենի սպառնալիք, չկա մահ՝ ոչ այս այժմվանը և ոչ էլ այն, որ առավել դժնդակ է սրանից, այլ այդպիսի ամեն վախ վերացված է այնտեղ: Նման այն բանին, որ թագավորի որդին է սկզբում դաստիարակվում նվաստացումներով, ահով ու սպառնալիքներով, որպեսզի ներողամտության պատճառով չփչանա և անարժան չդառնա հայրական ժառանգությանը, իսկ երբ ստանում է հայրական պատիվը, հանկարծ թոթափում է իրենից այդ ամենը և ծիրանիով, թագով ու իր անձնապահների գնդերով շրջապատված՝ նախագահում է մեծ համարձակությամբ՝ իր հոգուց մերժած բոլոր ստորա-

ցումներն ու խոնարհությունները և դրանց փոխարեն այլ բաներով պերճացած, այդպես էլ այն ժամանակ է պատահելու բոլոր սուրբերին: Որպեսզի խոսքերս քեզ սոսկ պերճախոսություն չթվան, մտովի բարձրանանք այն լեռը, որտեղ Քրիստոս պայծառակերպվեց, տեսնենք այն լուսավորությունը, որով Նա լուսավորվեց՝ չնայած Նա մեզ ցույց չտվեց գալիք հավիտյանի ամբողջ պայծառությունը. իսկ որ խնայելով էր այն, ինչ երևաց, այլ ոչ այնպես, ինչպես որ կա, հայտնի է ավետարանչի խոսքերից: Իսկ ի՞նչ է ասում նա. «Լուսավորվեց, ինչպես արեգակը» (Մատթ. ԺԷ 2): Իսկ արդ, անապական մարմնի փառքը, ոչ այս ապականացու մարմնի նման, արձակում է լույս՝ ոչ այնպիսին, որ կարող են տեսնել մահկանացու աչքերը, այլ այնպիսին, որը տեսնելու համար հարկավոր են անապական ու անմահ աչքեր: Իսկ այն ժամանակ լեռան վրա Նա նրանց ցույց տվեց այնքան, որքան կարող էին տեսնել, անվնաս պահելով տեսնողների աչքերը, սակայն դրան էլ չդիմացան, այլ ընկան իրենց երեսների վրա (տե՛ս Մատթ. ԺԷ 6):

Բայց լա՛վ, ասա՛ դու ինձ՝ եթե մեկը քեզ տաներ մի լուսափայլ վայր, որտեղ բոլորը բազմած են ոսկեճամուկ պատմուճաններ հագած, և այդ հավաքվածների մեջ ցույց տար մեկ ուրիշի, ով թանկարժեք քարերով ընդելուզված հագուստներ ուներ, իսկ գլխին՝ պսակ, և քեզ խոստանար դասել այդ հասարակության մեջ, չէի՞ր թափի բոլոր ջանքերդ՝ ստանալու համար քեզ խոստացվածը: Այժմ բա՛ց արա մտքիդ աչքերը և նայի՛ր այն տեսարանին, որ կազմված է ոչ միայն այսպիսի մարդկանցից, այլ նաև այնպիսիներից, որ պատվական են ոսկուց, թանկարժեք քարերից, արեգակի ճառագայթներից ու ամենայն երևացող պայծառությունից, ոչ միայն մարդկանցից, այլև նրանցից առավել արժանապատիվներից՝ հրեշտակներից, հրեշտակապետերից, աթոռներից, տերություններից, իշխանություններից, զորություններից: Իսկ Արքայի մասին ասել անգամ չենք կարող, թե ինչպիսին է Նա. բոլոր խոսքերից ու մտքերից բարձր ու անհասանելի են Նրա գեղեցկությունը, բարությունը, փայլը, փառքը, վայելչությունը, փառահեղությունը:

Եվ արդ, կարճժամանակյա տաժանակրություններից փախչելով՝ այսպիսի բարիքներից զրկե՞նք մեզ, ասա՛ ինձ: Եթե հարկ լիներ ամեն օր բյուր անգամ մահ, մինչև իսկ դեհենը կրել՝ տեսնելու համար Քրիստոսին՝ Իր փառքով եկած, և դասվել սուրբերի մեջ, մի՞թե արժան չէր լինի հանձն առնել այդ ամենը: Լսի՛ր, թե ինչ է ասում երանելի Պետրոսը. «Լավ է, որ մենք այստեղ լինենք» (Մատթ. ԺԷ 4): Եթե նա, աղոտ տեսնելով հանդերձյալի պատկերը, նույն պահին իրենից թոթափեց ամեն բան այն քաղցրության պատճառով, որ այն տեսությունից տպվեց իր հոգում, ապա ի՞նչ պիտի ասենք, երբ հայտնվի դրա ճշմարտությունը, երբ բացվեն արքունիքները, և տեսնենք Իրեն՝ Արքային, արդեն ոչ թե օրինակով, ոչ հայելու մեջ, այլ դեմ-հանդիման, արդեն ոչ հավատով, այլ տեսնելով:

Շատ տկարամիտ մարդիկ կան, ովքեր խնդրում են, միայն փրկվել գեհենից, իսկ ես առավել մեծ տանջանք եմ համարում այն փառքին չհասնելը, նրանից զրկվելը, և կարծում եմ՝ արժան է սգալ ոչ այնքան դժոխային տանջանքների, որքան երկնային պարգևներից զրկվելու համար, քանզի միայն սա է բոլոր պատիժներից ամենաանտանելին: Այժմ մենք հաճախ, տեսնելով արքային բազում անձնապահների ուղեկցությամբ արքունիք մտնելիս, երանի ենք տալիս նրանց, ովքեր մոտ են նրան, մասնակից են նրա խոսակցություններին, խորհրդակցում են նրա հետ և հաղորդակից են նրա փառքին, իսկ մեզ ավաղում ենք, եթե անգամ բյուր բարիքներ ունենք, ոչինչ ենք համարում դրանք՝ տեսնելով արքային շրջապատողների պատիվը՝ չնայած գիտենք, որ խաբուսիկ է այդ փայլը և անհուսալի թե՛ պատերազմների, թե՛ որոգայթների, թե՛ նախանձի պատճառով, և այս ամենից զատ ինքնին ոչ մի ուշադրության արժանի չէ: Իսկ ինչ վերաբերում է բոլորի Թագավորին, Ով ոչ թե մի մասի, այլ ամբողջ երկրի ոլորտին է տիրում, կամ ավելի ճիշտ՝ ամբողջը իր բռում է պահում

և ամբողջ երկինքը՝ Իր ափում, Ով կրում է ամեն բան Իր զորության խոսքով, Ում առջև բոլոր ժողովուրդները իբրև ոչինչ և իբրև բերանի փոշինք համարվեցին, մի՞թե վերջին պատիժ չենք համարի մենք, եթե վրիպենք այն խմբի դասակցությունից, որը շրջապատում է Նրան, և մի՞թե կուրախանանք, եթե գեհենից միայն ազատվենք: Ի՞նչը կարող է թշվառ լինել այդպիսի հոգուց:

Այս Արքան երկիրը դատելու կգա ո՛չ լծված սպիտակ ջորիներով, ո՛չ ոսկե կառքով, ո՛չ ծիրանիներով և ո՛չ թագով պճնված: Իսկ ինչպե՞ս: Լսի՛ր մարգարեներին, որ գոչում և ասում են այդ մասին, որքան հնարավոր է, որ ասեն մարդիկ. մեկն այսպես է ասում. «Մեր Աստվածը պիտի գա հայտնապես, և մեր Աստվածը չպիտի լռի, նրա առջև հուր պիտի բորբոքվի, և նրա շուրջը՝ սաստիկ մրրիկ: Եվ նա վերևից ձայն պիտի տա երկնքին ու երկրին՝ իր ժողովրդին դատելու համար» (Սաղմ. ԽԹ 3, 4): Իսկ Եսային մեր առջև է բերում նաև պատիժները՝ ասելով այսպես. «Քանզի Տիրոջ օրն ահա հասել է՝ լի անսահման բարկությամբ, ոխակալությամբ ու զայրույթով, որպեսզի աշխարհն անապատ դարձնի և մեղավորներին վերացնի այնտեղից: Արդարև, երկնքի աստղերը, Հայկի համաստեղության և երկնային բոլոր լուսատուների հետ միասին, լույս չեն տալու, արեգակն իր ծագման պահին պիտի խավարի, լուսինը նույնպես իր լույսը չպիտի տա: Զարիքի համար, ամբարիշտների մեղքերի համար վճիռ պիտի արձակեմ համայն աշխարհին, պիտի կործանեմ անիրավների հպարտությունը, ամբարտավանների մեծամտությունը պիտի խոնարհեցնեմ, իսկ մնացածներն ավելի հարգի պիտի լինեն, քան մաքուր ոսկին, մարդն ավելի հարգի պիտի լինի, քան սոփերական թանկագին քարերը: Երկինքը պիտի մոլեգնի, և երկիրը պիտի սասանվի իր հիմքերից զորությունների Տիրոջ բարկության ու ցասումի պատճառով» (Ես. ԺԳ 9-13): Եվ դարձյալ՝ «Երկնքի պատուհանները բացվեցին, և երկրի հիմքերը ցնցվեցին: Երկիրը շփոթի ու խռովության մեջ պիտի ընկնի, երկիրը պիտի տագնապի, տարակուսի ու խոնարհվի:

Երկիրը պիտի շաժվի ու ցնցվի, ինչպես այգու պահապանի տնակ, հարբածի ու երերվողի պես պիտի գլորվի և չպիտի կարողանա կանգնել, որովհետև նրա վրա ծանրացել է անօրենությունը: Այն օրը Աստված իր ձեռքը պիտի տարածի երկնային լուսատուների վրա, իսկ երկրում՝ երկրի թագավորների վրա: Եվ պիտի հավաքեն նրա ժողովրդին ու դնեն կապանքների մեջ, իտի պաշարեն ամրոցները» (Ես. ԻԴ 18-22):

Մաղաքիան նույնպես ձայնակից է լինում նրանց՝ ասելով. «Ահա գալիս է, ասում է, ամենակալ Տերը: Ո՞վ կդիմանա նրա մուտքի օրվան, և կամ ո՞վ հանգիստ կմնա նրա հայտնության ժամանակ, քանի որ նա պիտի մտնի իբրև հալոցի բոց և որպես լվացարարների օճառ: Նա կնստի՝ ձուլելու և մաքրելու՝ որպես արծաթ և որպես ոսկի» (Մաղ. Գ 2,3): Եվ դարձյալ՝ «Ահա պիտի գա Տիրոջ օրը, հնոցի նման բորբոքված և պիտի այրի նրանց. բոլոր այլազգիներն ու ովքեր անօրենություն են գործում, պիտի վառվեն, ինչպես եղեգ այն օրը, որը պիտի գա, ասում է ամենակալ Տերը, և նրանցից ոչ մի արմատ և ոչ մի ուռ չի մնալու» (Մաղ. Դ 1): Իսկ այն ցանկալի այրը. «Նայում էի, ասում է, մինչև որ աթոռներ դրվեցին, և մի ծերունի նստում էր այնտեղ. նրա հագուստը ձյան պես սպիտակ էր, նրա գլխի մազերը մաքուր էին գեղմի նման, նրա աթոռը՝ կրակի բոցի նման, և նրա անիվները՝ ինչպես բորբոքված կրակ: Նրա առջևից հոսում էր կրակե հորդ մի գետ, հազար-հազարավորներ պաշտում էին նրան, և բյուր-բյուրավորներ կային նրա առջև: Նա ատյան նստեց, և գրքերը բացվեցին» (Դան. Է 9,10): Ապա՝ քիչ հետո. «Գիշերային տեսիլքում տեսնում էի, որ ահա, երկնքի ամպերի միջից գալիս էր մեկը մարդու Որդու նման և հասնում Ծերունուն. նա բերվեց նրա առջև: Նրան իշխանություն, պատիվ և արքայություն տրվեց. բոլոր ազգերը, ժողովուրդներն ու լեզուները պիտի ծառայեն նրան. նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնի, և նրա թագավորությունը չի կործանվի: Իմ հոգին սոսկաց իմ մարմնում, իմ՝ Դանիէլիս մեջ, և իմ գլխի տեսիլքը խռովեց ինձ» (Դան. Է 13-15):

Այնժամ կբացվեն երկնային բոլոր կամարների դռները, ավելի ճիշտ՝ երկինքը կվերանա: «Երկինքը, ասում է մարգարեն, մագաղաթի պես պիտի գալարվի» (Ես. ԼԴ 4)՝ կծկվելով ինչպես մի վրանի կաշի և ծածկույթ, որպեսզի փոխվի և ավելի լավը դառնա: Այնժամ առհասարակ ամեն բան կլցվի զարմանքով, սարսափով ու դողությամբ: Այնժամ սարսափը կպատի նաև հրեշտակներին, ոչ միայն հրեշտակներին, այլ նաև հրեշտակապետերին, աթոռներին, տերություններին, պետություններին և իշխանություններին, քանզի. «Երկնքի զորությունները, ասում է, պիտի շարժվեն» (Մատթ. ԻԴ 29), քանի որ նրանց ծառայակիցներից հաշիվ պիտի պահանջվի այստեղի կյանքի համար:

Եթե այն ժամանակ, երբ մի քաղաք դատելու համար ատյան է կազմվում երկրավոր իշխաններից, սոսկում են բոլորը, անգամ նրանք, ում վտանգ չի սպառնում, ապա երբ ամբողջ տիեզերքը դատվի այնպիսի Դատավորից, Ում ո՛չ վկաներ են պետք և ո՛չ ապացույցներ, այլ առանց դրանց էլ կբացվեն բոլոր գործերը, խոսքերը և մտքերը, և ինչպես պատկերի մեջ՝ ամեն ինչ ցույց կտա և՛ այդ մեղքերը գործողին, և՛ չիմացողին, ինչպե՞ս չի դողա ու սասանվի ամենայն զորությունն: Թեպետև կրակի գետը չհորդի էլ, և ոչ էլ ահավոր հրեշտակները կանգնեն, միայն այն, որ մի վայր կանչված մարդկանց մի մասը գովաբանվի և սքանչանա, իսկ մյուս մասը անարգաբար հեռացվի՝ չտեսնելու համար Աստծո փառքը, քանզի. «Ամբարիշտը, ասում է մարգարեն, չի տեսնելու Աստծո փառքը» (Ես. ԻԶ 10). և եթե պատիժը միայն սա լիներ. մի՞թե այս բարիքներից զրկվելը ամենայն դեհենից ավելի դառը չի տանջի մերժվածների հոգին: Թե որքան մեծ է այս չարիքը, անհնարին է բառերով արտահայտել այժմ, իսկ այն ժամանակ գործերով լավ կհասկանանք: Այժմ դու ավելացրու նաև այն տանջանքը, որ ոչ միայն ամոթը կծածկի նրանց, ոչ միայն ձորձով կծածկեն գլուխները և կամ աչքերը կորացրած՝ խույս կտան, այլև քարշ կտրվեն այն ճանապարհով, որ դեպի կրակն է տանում, թե ինչպես նրանք կմոտենան չարչարանքների տեղին, կմատնվեն անագորույն զորություններին և կկրեն դրանք այն նույն ժամանակ, երբ նրանք, ովքեր բարիք գործեցին, կարժանանան հավիտենական կյանքին, պսակվելով ու բարեհամբավվելով՝ կկանգնեն արքունական դահի մոտ:

Այս ամենը՝ այդ օրը, իսկ թե ինչ է լինելու դրանից հետո, ո՞ր խոսքը կարող է ցույց տալ Քրիստոսի հետ բնակվելու բերկրանքը, օգուտն ու ցնծությունը: Քանզի հոգին, վերստանալով իր բնական ազնվականությունը, այդուհետև կարող է համարձակությամբ նայել իր Տիրոջը. հնարավոր չէ ասել, թե որքան բերկրանք կքաղի, որքան օգուտ և շահ, և կցնծա ոչ միայն ստացած բարիքներով, այլ նաև այն համոզմունքից, որ դրանք երբեք վախճան չեն ունենալու: Այդ ամբողջ ցնծությունը ո՛չ կարող ենք խոսքերով արտահայտել և ո՛չ էլ մտքով ըմբռնել: Սակայն փորձեմ ներկայացնել աղոտ և այնպես, ինչպես փոքրի միջոցով մեծերն են ցույց են տալիս:

Նայենք նրանց, ովքեր այս կյանքում վայելում են աշխարհիկ բարիքները՝ հարստություն, իշխանություն, փառք, ինչպես են նրանք, բարեկեցիկ կյանքի մեջ փքված, մտածում, որ իրենք այլևս երկրի վրա չեն, չնայած վայելում են այնպիսի բարիքներ, որոնք իրականում բարիք էլ չեն և չեն մնալու նրանց հետ, այլ երազից ավելի արագ են թռչում, եթե երբեմն միառժամանակ էլ մնում են, ապա միայն այս կյանքում են ծառայում, հետո չեն կարող ուղեկցել նրանց: Եթե դրանք են այդքան ցնծություն բերում իրենց ունեցողներին, ապա ի՞նչ ես կարծում, ի՞նչ կլինի այն հոգիներին, որոնք հրավիրվեցին դեպի երկնային բյուր բարիքները, դեպի այն բաները, որոնք միշտ հաստատուն են և անսասանելի: Եվ ոչ միայն այդ, այլև իրենց մեծությամբ ու լավությամբ այնքան բարձր են այստեղի բարիքներից, որ մարդու սրտի մեջ անգամ երբևէ չի ընկնի:

Ինչպես որ մանուկն է արգանդում, այդպես էլ մենք ենք այս աշխարհում. անձկությամբ պաշարված նստում ենք և չենք կարողանում տեսնել գալիք հավիտյանի պայծառութ-

յունն ու ազատությունը: Իսկ երբ երկունքի ժամանակը հասնի, այս կյանքը բոլոր իր ընդունած մարդկանց բերի հասցնի դատաստանի օրվան, այնժամ վիժվածները խավարից կգնան դեպի խավարը, անձկությունից դեպի առավել մեծ անձկություն, իսկ կատարյալները և արքայական պատկերի կնիքը իրենց մեջ պահողները մոտ կլինեն Թագավորին և կստանձնեն այն ծառայությունը, որով հրեշտակներն ու հրեշտակապետներն են պաշտում բոլորի Տիրոջը:

Ո՛վ բարեկամ, քեզնից խպառ մի՛ ջնջիր այդ կնիքը, այլ փութապես վերականգնելով՝ առավել լավագույն վիճակի հասցրու այն: Մարմնական գեղեցկությունը Աստված սահմանափակեց բնության սահմանների մեջ, իսկ հոգու գեղեցկությունը, որ անհամեմատ բարձր է մարմնաւոր գեղեցկությունից, ազատ է այդ հարկից ու կախվածությունից, և միանգամայն կախված է մեզնից և Աստծո կամքից: Մեր մարդասեր Տերը նաև այն բանով պատվեց մեր ցեղը, որ մեզ համար քիչ կարևորն ու քիչ օգտակարը, որի կորուստը անարժեք է, ենթարկեց բնական օրինաչափության, իսկ ճշմարիտ բարու տնօրինող դարձրեց մեզ: Եթե Նա մեզ նաև մարմնի գեղեցկության տեր կարգած լիներ, ապա մենք ավելորդ հոգսեր կունենայինք և մեր ամբողջ ժամանակը կվատնեինք անօգուտ բանի վրա՝ անփութության մատնելով հոգին: Եթե հիմա էլ, երբ չունենք այդ իշխանությունը, ամեն բան անում, բոլոր ջանքերը գործադրում ենք դրա համար և երբ վրիպում ենք ճշմարիտ գեղեցկությունից, գույներով, սնգույրներով, վարսերը հյուսելով, հագուստներով, աչքերի պագչոտությամբ և այսպիսի այլ մեքենայություններով հորինում ենք այդպիսի գեղեցկություն, ապա հոգ կտանեի՞նք արդյոք հոգու մասին, եթե մեր ձեռքին լիներ մեր մարմիններն իսկապես չքնաղագեղ դարձնելը: Քանզի եթե այդ մեր ձեռքին լիներ, այնժամ մենք ուրիշ գործով չէինք զբաղվի, այլ մեր ամբողջ ժամանակը կծախսեինք աղախնին զարդարելու անհամար պաճուճանքներով, իսկ նրա տիկնոջը թողնելու տգեղ, վատթար ու անարգ առավել, քան ամենայն ստրուկ:

Ուստիև Աստված, ազատելով մեզ այդ կործանարար հոգսերից, մեր մեջ տպավորեց լավագույն գործի կարողությունը, այնպես որ իր ոչ գեղեցիկ մարմինը գեղեցիկ դարձնել չկարողացողը կարող լինի գեղեցկության ծայրակետին հասցնել իր հոգին, եթե այն անգամ վերջին տգեղության մեջ է ընկել, և այդպիսով դարձնել այն սիրելի ու ցանկալի ոչ միայն բարի մարդկանց, այլ նաև Իր իսկ՝ բոլորի Արքայի ու Տիրոջ համար, ըստ որում և սաղմոսերգուն է այս գեղեցկության մասին խոսում՝ ասելով. «Եվ թագավորը կցանկանա քո գեղեցկությունը» (Սաղմ. ԽԴ 12):

Չե՞ս տեսնում, որ անռականոցներում տգեղ ու անամոթ կանանց չեն մոտենում անգամ ելուզակները, փախստականներն ու գազանամարտիկները, իսկ եթե նրանց մեջ լինում է գեղեցիկ, ազնվական և ամոթխած մեկը, որ հանգամանքների բերումով է ընկել այդպիսի ծայրահեղության մեջ, հարուստ, հայտնի ու մեծամեծ մարդիկ էլ չեն ամաչի ամուսնանալ նրա հետ: Եթե մարդկանց մեջ կա այդքան խիղճ և փառքի այդքան անտեսում, որ նրանք հաճախ այն պանդոկներում անարգությամբ լցված կանանց ազատում, փրկում են այն ծառայությունից և ամուսնանում նրանց հետ, ապա որքան ավելի՝ Աստծու մեջ, երբ հոգիներն իրենց սկզբնական ազնվականությունից սատանայի բռնությամբ ընկնում են այս կյանքի անառականոցը:

Այսպիսի բազում օրինակներ դու կգտնես մարգարեների մոտ, երբ նրանք խոսքն ուղղում են Երուսաղեմին, որ նույնպես ընկել էր պոռնկության և այն էր նոր և օտար պոռնկության մեջ, ինչպես ասում է Եզեկիելը. «Բոլոր պոռնիկները վարձ են առնում իրենց համար, մինչդեռ դու ինքդ էիր վարձ տալիս քո տարփածուներին, և քեզ հետ, բոլոր պոռնկացող կանանց համեմատությամբ, հակառակը տեղի ունեցավ» (Եզեկ. ԺԶ 33, 34), և դարձյալ՝ մեկ ուրիշը. «Ագռավի պես մենակ ու անօգնական՝ նստեցիր այդ ճանապարհին» (Եր. Գ 2): Եվ պոռնկացող այդպիսի քաղաքին Աստված կրկին կանչում է դեպի Իրեն:

Քանզի նաև գերությունը ոչ այնքան պատժի համար էր, որքան դարձի և ուղղվելու: Քանզի եթե Աստված կամենար վերջնականապես վրեժ լուծել նրանցից, կրկին չէր վերադարձնի հայրենիք և կրկին ավելի մեծ ու շքեղ չէր կանգնեցնի քաղաքն ու տաճարը: «Որպեսզի, ասում է, այդ տան վերջին փառքը լինի ավելի մեծ, քան նախկին փառքը» (Անգե, Բ 9):

Եթե Աստված ապաշխարությունից չզրկեց բազում անգամ անառակացած ու պոռնկացած այն քաղաքը, ապա առավել կընդունի քո հոգին, որ առաջին անգամ է ընկել: Քանզի չկա, չկա մի սիրահար, որ այնպես այրվի իր սիրելիի ցանկությունից, որքան Աստված է ցանկանում մեր փրկությունը: Մենք կարող ենք այդ տեսնել թե՛ առօրյա իրադարձությունների և թե՛ աստվածային Գրքերի մեջ:

Նայի՛ր Երեմիայի խոսքերի սկզբին և մարգարեների գրքերի այլ տեղերին, թե ինչպես էր Աստված արհամարհվում ու անտեսվում, և ինչպես էր Նա մոտենում և փնտրում բարեկամությունը նրանց, ովքեր արհամարհում ու անտեսում էին Իրեն, որի մասին հենց Ինքն է հայտնում՝ ավետարաններում ասելով. «Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, որ կոտորում էիր մարգարեներին ու քարկոծում առաքյալներին, որոնք քեզ մոտ ուղարկվեցին. քանի՛ անգամ կամեցա հավաքել քո մանուկներն, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևերի տակ, բայց չկամեցաք» (Մատթ. ԻԳ 37):

Նաև Պողոսը, գրելով կորնթացիներին, ասում էր. «Աստված էր, որ Քրիստոսով աշխարհը հաշտեցրեց իր հետ և հաշվի չառավ նրանց մեղքերը ու տվեց մեզ հաշտության խոսքը: Արդ, պատգամավորներ ենք Քրիստոսի, որպես թե ինքն Աստված մեզնով կոչ ուղղեր ձեզ. աղաչում ենք հանուն Քրիստոսի, որ հաշտվեք Աստծո հետ» (Բ Կոր. Ե 19, 20):

Այժմ համարի՛ր, որ այդ մեզ է ասվել, քանզի ոչ միայն անհավատությունը, այլ նաև անմաքուր կյանքը կարող է շարժել այդ նզովյալ թշնամությունը: «Քանզի մարմնավոր խորհուրդը թշնամություն է առ Աստված, ասում է Գիրքը, որովհետև չի հնազանդվում Աստծո օրենքին» (Հռ. Ը 7):

Քանդե՛նք այդ ցանկապատը և դո՛ւրս թողնենք մեռյալին, որպեսզի հասնենք երանելի հաշտությանը, որպեսզի կրկին Աստծո սիրելիներ ու ցանկալիներ լինենք:

Գիտեմ, որ դու հիմա սքանչանում ես Հերմիոնեի գեղեցկությամբ՝ կարծելով, թե երկրի վրա նրա գեղեցկությանն հավասար ոչինչ գոյություն չունի: Բայց եթե կամենաս, ո՛վ բարեկամ, ապա նրանից այնքան շքեղ ու չքնաղ կլինես, որքան ոսկե արձանները՝ կավեղեններից: Եթե մարմնի գեղեցկությունն է այդպես պարտության մատնում և գրավում շատերի հոգին, ապա երբ այն փայլում է հոգում, ի՞նչը կարող է հավասարվել այն գեղեցկությանն ու վայելչությանը: Մարմնավոր գեղեցկության հիմքը ուրիշ բան չէ, քան մաղաս (լորձ), արյուն, խոնավություն, մաղձ և կերած կերակրի հյութ: Դրանցով են ոռոգվում աչքերը, այտերը և բոլոր անդամները: Իսկ եթե այդ ոռոգումը ամեն օր չընդունեն որովայնից և լյարդից, մաշկը կանչքանա ու կթառամի, աչքերը կխոնարհվեն ու կընկնեն, և դեմքի ողջ գեղեցկությունը կանհետանա. այնպես, որ եթե մտածես, թե ինչ է թաքնված գեղեցիկ աչքերի տակ, ինչ՝ ուղիղ քթի տակ, ինչ՝ ռունգերի ու շրթունքների, և ինչ՝ բերանի և այտերի տակ, ապա մարմնի վայելչությունը չես անվանի այլ կերպ, քան ներկած գերեզման. այնպիսի անմաքրությամբ է այն լեցուն ներքուստ: Եթե տեսնեիր մի կարպետ՝ ապակնված այսպիսի բաներով, օրինակ՝ մաղասով ու լորձով, չէիր ուզի մատի ծայրով անգամ կպչել, անգամ չէիր նայի դրան, իսկ դրանց շտեմարանով ու ամբարանոցով հիանո՞ւմ ես:

Իսկ քո գեղեցկությունն այդպիսին չէր, [այլ դրանից այնքան բարձր], որքան երկինքն է նախապատվելի երկրից, ավելի ճիշտ, երկնքից շատ ավելի շքեղ ու պատվական: Մարմնից մերկացած հոգի ոչ ոք երբևէ չի տեսել. բայցևայնպես ես կփորձեմ ներկայացնել քեզ նրա գեղեցկությունը այլ կերպ՝ վեհագույն զորությունների համեմատությամբ:

Եվ արդ, լսի՛ր, թե ինչպես նրանց գեղեցկությունն ապշեցրեց ցանկալի այրին. երբ նա կամեցավ արտահայտել նրանց

գեղեցկությունը և չկարողացավ գտնել նրանց նման մարմին, գնաց դեպի մեռածները, բայց միայն դրանցով չբավականանալով՝ իբրև օրինակ առավ նաև կայծակի փայլը: Եվ եթե նաև դրանք ոչ ամբողջ հստակությամբ ու մերկությամբ ցույց տվեցին իրենց բնությունը, այլ շատ աղոտ ու ստվերաբար, այդուհանդերձ փայլեցին, ըստ որում հարկ էր տեսնել դրանք առանց որևէ ծածկոցի:

Մոտավորապես այդպես պետք է պատկերացնել նաև հոգու գեղեցկությունը. քանի որ. «Կլինեն, ասում է, հրեշտակների նման» (Ղուկ. Ի 36): Մարմինների մեջ անգամ նրանք, որոնք թեթև ու նուրբ են մոտենում անմարմիններին, շատ ավելի պատվական ու սքանչելի են, քան մյուսները: Երկինքը շատ ավելի գեղեցիկ է երկրից, հուրը՝ ջրից, աստղերը՝ քարերից. իսկ ծիածանով մենք ավելի ենք հիանում, քան մանուշակներով, վարդերով և երկրային բոլոր ծաղիկներով: Եվ եթե կարողանայիր մարմնավոր աչքերովդ տեսնել հոգու գեղեցկությունը, դու կծիծաղեիր բոլոր այդ մարմնավոր օրինակների վրա, որ այդքան աղոտաբար են մեզ ցույց տալիս հոգու չքնաղությունը:

Անտարբեր չլինե՛նք այդպիսի ժառանգության ու երանության հանդեպ, մանավանդ որ դեպի այդ գեղեցկությունն վերադարձը հեշտ է մեզ համար հանդերձյալի հույսով: «Որովհետև մեր թեթև նեղության առժամանակյա հաճախանքը, ասում է, մեր մեջ առաջ է բերում հավիտենական փառք, երբ մենք նայում ենք ոչ թե տեսանելի, այլ անտեսանելի բաներին, քանզի տեսանելիները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական» (Բ Կոր. Դ 17,18): Իսկ եթե նեղությունները, որոնք դու տեսել ես, թեթև ու ոչ ծանր անվանեց երանելի Պողոսը, որովհետև չէր նայում տեսանելիներին, ապա քեզ համար առավել հեշտ է հանգցնել տոփանքդ: Այժմ մենք քեզ ո՛չ դեպի այն վտանգներն ենք կոչում, ո՛չ հանապազօրյա մահվան, ո՛չ անդադար վիրավորվելու, ո՛չ ծեծի, ո՛չ կապանքների, ո՛չ տիեզերքի դեմ պայքարի, ո՛չ ընտանիքի թշնամության, ո՛չ անդադար հսկումների, ո՛չ երկարատև պանդխտության, ո՛չ նավաբեկության, ո՛չ ավազակների հարձակումների, ո՛չ մերձավորների դարանակալության, ո՛չ ընկերների համար սգալու, ո՛չ սովի, ցրտի, մերկության, շոգելու, տրտմության քոնինների և ոչ քոնիններ համար: Այժմ այսպիսի ոչինչ մենք չենք պահանջում քեզնից, այլ խնդրում ենք միայն մի բան՝ ազատվել այդ նզովյալ ստրկությունից և վերադառնալ նախկին ազատությանը՝ մտաբերելով և՛ պատիժները տոփանքներիդ համար, և՛ նախկին վարքիդ պատիվը: Քանզի եթե հարության վարդապետությանը չհավատացողները տրվեն անհոգության և ահով չտագնապեն դրա համար, զարմանալի չէ, իսկ եթե մենք, որ հանդերձյալն առավել ենք համարում, քան այստեղինը, այդչափ հեգ ու թշվառ կյանք վարենք, ոչինչ չկրենք՝ հիշելով առաջիններին, այլ իջնենք մինչև ծայր անզգայություն, կլինի մեծագույն անմտություն: Քանզի երբ հավատացյալներս անհավատների գործերն անենք կամ եթե շատ ավելի վատությամբ վարակվենք, քան նրանք (նրանց մեջ էլ կան այս կյանքի առաքինությամբ փայլողներ), ինչպիսի՞ մխիթարություն կունենանք, ինչպիսի՞ արդարացում:

Վաճառականներից շատերը, նավաբեկության ենթարկվելով, հոգով չթուլացան, այլ վերստին կանգնեցին նույն ճանապարհին, չնայած այդ դժբախտությունը նրանց պատահեց ոչ թե նրանց անփութությունից, այլ քամիների զորությունից. իսկ մենք, որ լավագույն վախճանի հույսն ունենք և լավ գիտենք, որ առանց մեր կամքի մեզ չի պատահի ո՛չ նավաբեկություն, ո՛չ էլ որևէ փոքր վնաս, մի՞թե դարձյալ չենք դառնա նույնին և շահույթ ունենա, ինչպես նախկինում, իսկ այնպես անգործ պառկած կմնանք՝ ձեռքներս մեզ վրա դրած: Եվ երանի թե միայն մեզ վրա և ոչ ընդդեմ մեզ դրած, որ հայտնի խենթություն է նշանակում: Եթե բռնցքամարտիկը, իր ախոյանին թողած, ձեռքերը դեպի իր գլուխը դարձնի և սկսի հարվածել իր երեսներին, ասա՛ ինձ, խելագարների կարգում չե՞նք դասի նրան: Բանսարկուն մեզ գայթեցրեց ու վայր գցեց, արժան չէ՞ վեր կենալ, ազատվել նրանից, ինքներս մեզ գահավեժ չանել և

նրա հասցրած վերքերին մեր վերքերը չավելացնել: Երանելի Դավիթը նույնպես ընկավ նույն անկումով, ինչ դու՝ այժմ, և ոչ միայն այդպես, այլ նաև այլ՝ մարդասպանությամբ: Ի՞նչ, նա ընկա՞ծ մնաց: Մի՞թե կրկին վեր չկանգնեց զորությամբ և չճակատեց թշնամու դեմ, նաև այնպես քաջաբար վանեց, խորտակեց նրան, որ իր մահից հետո էլ հովանի եղավ իր զարմին:

Քանզի երբ Սողոմոնը հանդգնեց այն մեծ անօրենությունը գործել և արժանի եղավ բյուր մահեր կրելու, Աստված Դավթի համար ամբողջ թողեց նրա թագավորությունը՝ ասելով այսպես. «Ես կխլեմ թագավորությունը քո ձեռքից և այն կտամ քո ծառային: Բայց քո կենդանության ժամանակ չեմ անի դա»: Ինչո՞ւ: «Հանուն քո հայր Դավթի, այլ քո որդու ձեռքից կխլեմ այն» (Գ Թագ. ԺԱ 11, 12):

Եզեկիան նույնպես, երբ ծայրահեղ վտանգի մեջ էր, թեև ինքն արդար էր, դարձյալ այն երանելիի համար օգնություն գտավ Աստծուց. «Պիտի հովանավորեմ, ասում է, այս քաղաքը, որպեսզի այն ազատեմ ինձ ու իմ ծառա Դավթի համար» (Դ Թագ. ԺԹ 34): Այսչա՛փ է ապաշխարության զորությունը:

Բայց եթե նա խորհեր այնպես, ինչպես հիմա՝ դու. իբրև թե այսուհետև հնարավոր չէ հաշտեցնել Աստծուն, և եթե իր մտքում ասեր՝ Աստված մեծ պատվով պատվեց ինձ և մարգարեների հետ դասեց, իմ ցեղակիցների իշխանությունը տվեց ձեռքս և բյուրավոր վտանգներից փրկեց ինձ. արդ, որ այդքան բարերարություններից հետո ընկա և հանդգնեցի վերջին անօրենությունները գործել, ինչպե՞ս կկարողանամ կրկին իմ քավիչը դարձնել Նրան: Եթե այսպես մտածեր, ապա ոչ միայն չէր անի այն, ինչ որ արեց դրանից հետո, այլ կջնջեր նաև իր առաջին գործերը:

Ոչ միայն մարմնավոր, այլ նաև հոգևոր վերքերն են մահ ծնում: Սակայն մենք այնքան ենք անմտանում, որ մեծապես հոգում ենք մարմնավոր վերքերի մասին և անտեսում ենք հոգևոր վերքերը: Թեև հաճախ մարմնավոր շատ վերքեր անբժշկելի են լինում, մենք չենք հուսահատվում, որքան

էլ բժիշկներից լսում ենք, թե դեղերով հնարավոր չէ բժշկել այդ ախտը, մենք պնդում, խնդրում ենք, որ գեթ դույզնինչ մխիթարություն հորինեն մեզ համար: Իսկ հոգու մեջ չկան այնպիսի ախտեր, որ անբուժելի լինեն այստեղ, քանզի նրանք բնական անհրաժեշտության ենթակա չեն, իսկ մենք այնքան անփույթ ենք լինում և հուսահատվում, կարծես այդ ախտերն օտար են մեզ: Եվ երբ ախտի բնությունը մեզ գցում է հուսահատության մեջ, այնժամ մենք, իբրև մեծ հույս ունեցողներ, մտահոգվում ենք առողջության մասին, իսկ երբ հուսահատության պատճառ չկա, այնժամ իբրև հուսահատներ, վհատվում և հրաժարվում ենք դարմաններից. այսքան առավել ենք մենք մտահոգվում մարմնի, քան հոգու համար: Այդ պատճառով էլ մարմինները ապրեցնել չենք կարող: Քանզի ով անփութության է մատնում գլխավորը և բոլոր ջանքերն ուղղում է փոքր բաներին, նա քանդում ու ոչնչացնում է երկուսն էլ, իսկ նա, ով պահպանում է կարգը՝ խնամք տածելով և պահպանելով գերագույնը, նա, չնայած չի մտահոգվում երկրորդի համար, առաջինի փրկությամբ նաև այս է փրկում և ապրեցնում: Սա մեզ բացատրում է նաև Ինքը՝ Քրիստոս՝ ասելով. «Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող, այլ վախեցեք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին ու մարմինը» (Մատթ. Ժ 28): Արդյոք կարողացա՞նք համոզել քեզ, թե երբեք չպետք է հուսահատվել հոգու ախտերի՝ իբրև անբուժելիների համար, թե՞ պետք է բերել ուրիշ փաստեր: Եթե դու ինքդ քո մեջ հազար անգամ էլ հուսահատվես, մենք հույսներս երբեք չենք կտրի քեզնից և չենք անի այն, ինչի համար դատապարտում ենք ուրիշներին, չնայած նույն բանը չէ, եթե մեկը հուսահատվում է իր համար, և կամ ուրիշը՝ ուրիշի: Քանի որ ուրիշի համար հուսահատվողը կարող է շուտով թողության հասնել, իսկ իր համար հուսահատվողը՝ երբեք: Ինչո՞ւ: Որովհետև նրա ջանքերի և ապաշխարության վրա չունի իշխանություն, այլ իշխանությունի ունի միայն իր անձի վրա: Սակայն այս ամենով հանդերձ մենք մեր հույ-

սը չենք կտրում քեզնից, եթե դու հազար անգամ էլ նույնը կրես, քանի որ հնարավոր է, որ վերադարձ լինի դեպի այն առաքինությունները և նախկին կյանքը:

Լսի՛ր նաև հետևյալը. Նինվեացիները լսեցին այն մարգարեի բարձրաձայն ու հստակ սպառնալիքը, թե՝ «Եվս երեք օր, և Նինվեն պիտի կործանվի» (Հովն. Գ 4), և չվհատվեցին հոգով, այլ չնայած Աստծուն հաշտեցնելու վստահություն չունեին, մանավանդ մարգարեության պատճառով հակառակն էր հաստատված նրանց մտքում (քանզի ոչ թե պայմանավոր խոսք էր այն, այլ պարզ ու հստակ վճիռ), այդուհանդերձ ապաշխարություն ընծայեցին՝ ասելով. «Ո՞վ գիտե, թերևս Աստված միտքը փոխի և ետ կանգնի իր խիստ բարկությունից, և կորստյան չմատնվենք»: Եվ Աստված տեսավ նրանց գործերը, քանի որ բոլորը ետ էին կանգնել իրենց չար ճանապարհներից. Աստված զղջաց այն չարիքների համար, որ ասել էր, թե կանի նրանց. և չարեց» (Հովն. Գ 9,10): Իսկ եթե հեթանոս ու իմաստությունից հեռու մարդիկ կարողացան այսքան խելամիտ լինել, ապա շատ ավելին պետք է անենք մենք, որ դաստիարակվել ենք աստվածային պատգամներով և տեսել բազում այդպիսի օրինակներ թե՛ խոսքերով, թե՛ գործերով: «Իմ խորհուրդները նման չեն ձեր խորհուրդներին, և ոչ էլ իմ ճանապարհները՝ ձեր ճանապարհներին, այլ ինչպես երկինքն է հեռու երկրից, այնպես էլ իմ ճանապարհներն են հեռու ձեր ճանապարհներից» (Ես. ԾԵ 8, 9): Եվ եթե մենք ենք ընդունում մեր բազում անգամ հանցանք գործած սպասավորներին, որոնք խոստանում են ուղղվել, և կրկին բարձրացնում նախկին պատվին, հաճախ էլ առավել վստահում նրանց, ապա առավել ևս՝ Աստված: Քանզի եթե Նա մեզ ստեղծած լիներ այն բանի համար, որ մատնի տանջանքների, ապա արդարացի կլիներ քո հուսահատությունն ու կասկածը փրկությանդ հանդեպ, բայց եթե ոչ այլ բանից, քան Իր բարությունից դրդված՝ արարչագործեց մեզ այն բանի համար, որ ժառանգորդ լինենք հավիտենական բարիքներին, և դրա համար առաջին օրվանից մինչև այսօր գործում և անում է ամեն բան, ի՞նչն է մեզ կասկածի տեղիք տալիս: Մենք մեծապես զայրացրինք Նրան, ինչպես մարդկանցից ոչ ոք: Ուստիև հարկ է մեծապես հեռու մնալ մեր այժմյան գործերից, ապաշխարել մեր գործածների համար և ցույց տալ մեծ փոփոխությունը մեր մեջ:

Քանզի Նրան այնքան չեն բարկացնում մեր մի անգամ գործած մեղքերը, որքան մեր՝ դրանից հետո սթափվել չցանկանալը: Քանզի մեղանչելը հատուկ է մարդուն, բայց մեղքի մեջ մնալը ոչ թե մարդկային բան է, այլ ամբողջությամբ դիվական:

Եվ արդ, նայի՛ր դու, թե ինչպես է Աստված այն առավելապես պարսավում այն մարգարեի միջոցով. «Այդքան պոռնկանալուց հետո ես նրան ասացի՝ դարձի՛ր դեպի ինձ, բայց չդարձավ» (Եր. Գ 6, 7): Եվ մեկ այլ տեղում, դարձյալ կամենալով ցույց տալ, թե որքան մեծ է Իր հոգացողությունը մեր փրկության համար, երբ լսեց, որ իրենց բազում անօրենություններից հետո [իսրայելացիները] խոստանում են գնալ ուղիղ ճանապարհով, ասում է. «Ո՞վ կարող է նրանց սրտերը այնպես անել, որ երկնչեն ինձնից ու պահեն իմ պատվիրանները բոլոր օրերում, որպեսզի հավիտյան լավ լինի նրանց ու նրանց որդիների համար» (Բ Օր. Ե 29): Եվ Մովսեսը, խոսելով նրանց հետ, ասում էր. «Արդ, Իսրայե՛լ, ի՞նչ է պահանջում քեզնից քո Տեր Աստվածը. միայն այն, որ երկնչես քո Տեր Աստծուց, ընթանաս նրա ցույց տված ճանապարհներով և սիրես նրան» (Բ Օր. Ժ 12): Ուրեմն, Ով հեռատուտ լինելով՝ փնտրում է մեր սերը և դրա համար անում է ամեն ինչ, Ով Իր Միածնին անգամ չխնայեց մեր սիրո համար, Ով փափագում է միշտ մեր՝ Իր հետ հաշտությունը, ինչպե՞ս չի ընդունի ու սիրի մեզ, երբ ապաշխարենք: Լսի՛ր՝ ինչ որ ասում է մարգարեի միջոցով. «Ասա՛ դու նախ քո անօրենությունները, որ արդարացվես» (Ես. ԽԳ 26): Նաև այն է խնդրում մեզնից, որպեսզի մեր՝ Իր հանդեպ սերը սաստիկ լինի: Երբ սիրողը, իր սիրելիներից բազում անարգանքներ ստանալով, իր մեջ չի հանգցնում սերը, այլ բանի համար

չի ջանում ցույց տալ այդ անարգանքները, քան նրա, որ իր սիրո սաստկությունը ցույց տալով, նրանց մղի առավել և սաստիկ սիրո:

Իսկ եթե մեղքերի խոստովանությունն ունի այսքան մխիթարություն, ապա որքա՜ն ավելի՝ դրանց՝ գործերի միջոցով լվացումը: Եթե այդպես չլիներ, այլ մեկ անգամ ուղիղ ճանապարհից շեղվածներին Աստված խոչընդոտեր դառնալ նախկինին, ապա ոչ ոք, բացի շատ քչերից ու շատ սակավաթիվներից, չէր մտնի երկնային արքայություն: Իսկ այժմ մենք ընկածների մեջ տեսնում ենք նրանց, ովքեր առավել փայլեցին: Քանզի ովքեր մեծ առավելություն ցույց տվեցին չարության գործի մեջ, նույնը ցույց կտան նաև բարիքի մեջ՝ գիտենալով, թե որքան պարտքերի պարտապան դարձրին իրենց անձերը: Որ և Ինքը՝ Քրիստոս հայտնեց, երբ այն կնոջ մասին խոսում էր Սիմոնի հետ. «Տեսնո՞ւմ ես այն կնոջը. մտա քո տուն, ոտքերիս համար ջուր չտվեցիր, իսկ սա իր արտասուքներով թրջեց իմ ոտքերը և իր մազերով սրբեց: Դու ինձ մի համբույր չտվեցիր, սակայն սա ահա տուն մտնելուցս ի վեր չի դադարում ոտքերս համբուրելուց: Դու յուղով իմ գլուխը չօծեցիր, սա անուշ յուղով ոտքերս օծեց: Դրա համար քեզ ասում եմ՝ իր անհամար մեղքերը կներվեն սրան, որովհետև ուժգին սիրեց. քանզի ում շատ է ներվում, շատ է սիրում, և ում սակավ՝ սակավ»: Եվ ասաց այն կնոջը. «Քո մեղքերը քեզ ներված են» (Ղուկ. Է 44-48):

Ուստիև բանսարկուն, իմանալով, որ երբ մեծամեծ չարիքներ գործողներն ապաշխարության սկիզբ դնեն, իբրև իրենց հանցանքների վկաներ՝ պատրաստ են այդ անելու մեծ ճգնությամբ, սարսափում ու դողում է, որպեսզի նրանք չսկսեն այդ գործը: Քանզի մի անգամ սկսելուց հետո նրանք դառնում են անսանձելի և ապաշխարությամբ, իբրև մի կրակով բորբոքված, ոսկուց առավել մաքուր են ձուլում իրենց հոգին, իրենց խղճմտանքից ու նախկին մեղքերի հիշողությունից՝ իբրև սաստիկ հողմից քշվում են դեպի առաքինության նավահանգիստ: Եվ դրա մեջ գերազանցում են նրանց, ովքեր երբեք

չընկան, քանզի սաստիկ նախանձախնդրություն են ցուցաբերում, միայն թե, ինչպես ասացի, սկսեն գործը:

Խիստ դժվարն ու ծանրն այն է. մեկ անգամ կարողանալ մուտքին մոտենալ, ոտք դնել ապաշխարության նախադռանը և վանել ու տապալել թշնամուն, որ շնչում, փոթորկում և բնավորվում է այնտեղ: Իսկ դրանից հետո նա, մեկ անգամ պարտվելով և ընկնելով այնտեղ, ուր ուժեղ էր, չի կարողանա այնչափ կատաղությամբ մոլեգնել, իսկ մենք, արդեն ունենալով քաջալերություն, դյուրությամբ ընթանանք այդ գեղեցիկ ասպարեզով:

Այսուհետև սկսե՛նք դարձը, չտապե՛նք դեպի երկնային քաղաքի ճանապարհը, ուր գրվեցինք և ուր հրամայված է մեզ բնակվել: Մեր այս հուսահատությունը ոչ միայն հասցնում է այն չարիքին, որ մեր առջև փակում է այդ քաղաքի դռները և մեզ գցում առավել անփութության ու արհամարհանքի մեջ, այլ նաև՝ որ դիվական մոլեգնության մեջ է գցում: Եվ քանզի սատանայի՝ այդպիսին դառնալու համար չեղավ այլ պատճառ, քան այն, որ սկզբում հուսահատվեց, իսկ դրանից հետո հուսահատությունից ընկավ մոլեգնության մեջ: Քանզի երբ հոգին մի անգամ հույսը կորում է իր փրկությունից, այնուհետև այլևս չի զգում, թե ինչպես է գահավիժում՝ սկսելով ամեն բան ասել և ամեն բան անել ընդդեմ իր փրկության:

Ինչպես խելագարները, գրկվելով իրենց մտքի առողջությունից, ոչնչից չեն վախենում, ոչնչից չեն ամաչում, այլ աներկյուղ հանդգնում են անել ամեն բան. ընկնում են կրակի, անդունդի, ծովի մեջ, այդպես էլ նրանք, ովքեր ընկնում են հուսահատության մեջ, առանց զսպվելու ընթանում են դեպի բոլոր չարիքները, և եթե մահը վրա չհասնի և այդ մոլությունից ու թափից չհեռացնի նրանց, նրանք բյուր չարիքներ կպատճառեն իրենց անձին:

Ուստիև աղաչում եմ, քանի դեռ չես ընկղմվել գինեհարությանդ խորքերը, վեր կաց, արթնացիր և քեզնից թոթափի՛ր սատանայական թմրությունդ, եթե չես կարող այդ անել անմիջապես, ապա արա աստիճանաբար և քիչ-քիչ:

Ինձ դյուրին է թվում այս գործը, որ դու, քեզ անմիջապես ազատելով բոլոր կապանքներից, որ կաշկանդում են քեզ, քեզ տեղափոխես ապաշխարության ճեմարան: Բայց եթե քեզ այդ դժվարին է թվում, ապա ինքնակամ հոժարությամբ ոտքդ դիր այն ճանապարհի վրա, որ տանում հանում է քեզ դեպի լավագույնը: Միայն թե դու սկսի՛ր և կընդունես հավիտենական կյանքը:

Այո՛, աղաչում և աղերսում եմ՝ քո նախկին առաքինությամբ, քո նախկին վստահությամբ դարձյալ քեզ տեսնենք նույն դագաթին և նույն արթնությամբ: Խնայի՛ր դու նրանց, ովքեր գայթակղվեցին քո գլխի պատճառով, ովքեր ընկան, հեղգացան և հույսները կտրեցին առաքինության ճանապարհից: Քանզի այժմ տխրությունն է պատել պաշարել եղբայրներին, իսկ անհավատ ու անհոգ պատանիներին՝ բերկրությունն ու ուրախությունը: Իսկ եթե դու վերստին դառնաս քո նախկին ուղիղ վարքին, հակառակը կլինի. մեր այս ամբողջ ամոթը կփոխանցվի նրանց, իսկ մենք մեծ համարձակությամբ կլցվենք, երբ կրկին կտեսնենք քեզ առավելագույն շքով պսակված և բարեհամբավված, քանզի գերագույն փառք և ուրախություն են ծնվում այդպիսի հաղթություններից: Քանի որ դու պարգևներ կստանաս ոչ միայն քո գեղեցիկ մրցության համար, այլ նաև ուրիշներին քաջալերելու և մխիթարելու, նրանց համար սքանչելի օրինակ լինելու համար, որ եթե մեկը երբևէ ընկնի նույնպիսի չարիքի մեջ, կրկին կանգնի և նորաստեղծի իր անձը:

Դու մի՛ արհամարհիր այդ օգուտն ու շահը և տրամությամբ դժոխք մի՛ իջեցրու մեր հոգին, այլ [հնարավորություն] տուր մեզ՝ ոգի առնելու և ցրելու թախծության մեգը, որ քո պատճառով պաշարել է մեզ: Քանզի այժմ մենք, մեր չարիքներն անտեսած, լալով ողբում ենք քո աղետները: Եվ եթե դու կամենաս սթափվել, բացել աչքերդ և միավորվել հրեշտակային զորքերին, մեզ կփրկես մեր այս ողբից և կջնջես մեր մեղքերի մեծ մասը: Այն, որ շատերն ապաշխարությամբ կանգնեցին, մեծապես փայլեցին ու զգաստացան բազում

անգամ առավել, քան նրանք, ովքեր երբեք չընկան, մենք ցույց տվեցինք աստվածային Գրքերից: Այդ օրինակով մաքսավորներն ու պոռնիկները երկնքի արքայությունն են ժառանգում, այդպես հետիններից շատերը դասվում են առաջիններից առաջ:

Պատմեմ քեզ նաև մեր ժամանակներում եղածների մասին, որոնց մասին դու ինքդ էլ կարող ես վկայել: Դու ճանաչում ես Ուրբանոսի պատանի որդուն՝ փյունիկեցուն, որ վաղ հասակում որբացավ և տեր եղավ մեծ ունեցվածքի, ծառաների ու անդաստանների: Նա նախ ամբողջովին հրաժարվեց վարժարանի պարապմունքներից ու ողջ կենցաղային շքեղությունից, հանեց իր շքեղ հագուստները, հանկարծակի անարգ հանդերձներ հագավ և հեռանալով ամայի լեռները՝ մեծապես իմաստացավ ոչ միայն իր տարիքի, այլ նաև իրենից մեծ ու հրաշալի այրերի համեմատ: Իսկ ապա դրանից հետո, սուրբ խորհուրդների կատարմանն արժանանալով, նա ավելի առաջադիմեց առաքինության մեջ: Բոլորն ուրախանում ու փառավորում էին Աստծուն, որ այդպիսի հարստության մեջ մեծացած, հայտնի նախնիներ ունեցող մարդը, դեռ շատ երիտասարդ տարիքում հանկարծ արհամարհելով կենցաղի շքեղությունը՝ բարձրացավ անխաբ բարձունքը: Երբ նա այդպես ճգնում էր և զարմանք էր հարուցում, որոշ խանգարող մարդիկ, որ նրա ազգականներն էին և ըստ օրենքի՝ խնամակալները, նրան դարձյալ ձգեցին նախկին շրջապատը: Ամեն բան թողնելով՝ նա շուտով իջավ լեռներից և կրկին իջավ հրապարակ: Եվ ձի նստած, բազում ուղեկիցների հետ շրջում էր քաղաքում և այլևս չէր կամենում զգոնություն հանձն առնել: Սաստիկ հեշտասիրությամբ վառված՝ ընկավ անտեղի տափանքների մեջ: Եվ ովքեր անցնում էին այն հրապարակով, ավաղ էին տալիս նրան՝ հույսները կտրելով նրա փրկությունից. նրան շրջապատում էր մարդահաճ մարդկանց բազմությունը, դրան գումարվում էին և որբությունը, երիտասարդությունն ու մեծ հարստությունը: Թեթևամտորեն ամեն բան բամբասելու հակված մարդիկ սկսեցին մեղադ-

րել նրանց, ովքեր սկզբից նրան այն (հոգևոր) ճանապարհին դրեցին՝ ասելով, թե նա և՛ հոգևոր գործերում չհաջողեց, և՛ իր գործերում պիտանի չի լինի, քանի որ ժամանակից շուտ թողնելով ուսումը՝ չկարողացավ նրանից ոչ մի օգուտ քաղել: Երբ նրանք այս էին խոսում, և ամոթը մեծ էր, որոշ սուրբ մարդիկ, որ հաճախ էին հանդիպել այսպիսի որսերի և փորձից լավ գիտեին, որ այսպիսիների համար չպետք է հուսահատվեն նրանք, ովքեր իրենց զինվել են Աստծո հույսով, ստեպ-ստեպ լրտեսում էին նրան և հենց որ տեսնում էին հրապարակում, մոտենում ու ողջունում էին նրան: Սկզբում նա բարձր ձիու վրայից մի կողմ շրջված էր խոսում իրեն հետևողների հետ. այնքան անամոթություն կար նրա մեջ:

Բայց այն գորովագութ ու որդեսեր այրերը չէին ամաչում, այլ ձգտում էին միայն մի բանի՝ գայլերից հեռացնելու գառնը, որ և արեցին համբերությամբ: Քանզի հետո նա, ասես մի ինչ-որ ապշությունից ուշքի գալով և ամաչելով նրանց անդուլ ջանքերից՝ հենց որ հեռվից տեսնում էր, որ նրանք գալիս են իր մոտ, անմիջապես ցած էր թռչում ձիուց և դեմքը խոնարհելով՝ լուռ լսում էր նրանց ասածները: Ժամանակի ընթացքում նա սկսեց ավելի ու ավելի հարգանք ու պատիվ ցույց տալ նրանց: Այս կերպ նրանք Աստծո ողորմությամբ ամբողջովին ազատեցին նրան այդ բոլոր թակարդներից, վերադարձրին նախկին միանձնությանն ու առաքինությանը: Իսկ այժմ նա այնպես է փայլում, որ իր նախկին կյանքը նրան ոչինչ է թվում իր՝ անկումին հաջորդած կյանքի համեմատությամբ: Փորձով լավ ճանաչելով որոգայթները՝ նա իր ամբողջ հարստությունը բաժանեց կարոտյալներին և իր անձն ազատելով այդ հոգսից, հատեց, կտրեց իրեն դարանակալողների բոլոր պատճառները, և այժմ երկնընթաց ճանապարհի ուղևոր դարձած՝ արդեն հասել է առաքինության գագաթին:

Սա, պատանի լինելով, ընկավ և կանգնեց, իսկ մեկ ուրիշը, որ միայն մի բնակից ուներ, երկար անապատասուն կյանքի բազում ճգնություններից, հրեշտակային կյանք վարելուց և արդեն ծերության հասնելուց հետո, չգիտեմ,

թե ինչպես, դիվական խաբեությամբ իր իսկ անփության պատճառով կամաց-կամաց մուտք տալով ամենաչարին, ընկավ կանանց հետ ապրելու ցանկության մեջ. նա, ով իրեն միանձնական կյանքի նվիրելուց հետո երբեք կին չէր տեսել: Սկզբում նա իր բնակակցին խնդրեց տալ իրեն գինի և միս՝ սպառնալով, որ եթե չստանա դրանք, ինքը կգնա շուկա: Նա այս ասում էր ոչ այնքան միս ցանկանալու պատճառով, այլ, որ առիթ ունենա քաղաք իջնելու: Բայց ընկերը, չհասկանալով և վախենալով, որ մերժելով՝ նրան մեծ չարիքի մեջ կգցի, կատարեց նրա ցանկությունը: Իսկ երբ սա տեսավ, որ իր խորամանկությունն ի դերև ելավ, թողեց կեղծելը և ակնհայտ անամոթությամբ ասաց, որ իրեն անհրաժեշտ է քաղաք իջնել: Եվ երբ նրա ընկերը չկարողացավ արգելել նրան, արձակեց նրան և հեռվից հետևելով՝ նայում էր, թե ուր է գնում նա: Երբ տեսավ, որ գնաց մտավ հասարակաց տուն, և իմացավ, որ պոռնիկ կնոջ հետ եղավ, սպասեց, մինչև որ նա հագեցրեց իր անմաքուր ցանկությունը: Երբ դուրս ելավ, նա բազկատարած ընդունեց նրան, գրկեց, ջերմորեն համբուրեց և նրա արածի համար ոչ մի հանդիմանական խոսք չասաց, այլ միայն աղաչեց, որ քանի որ արդեն կատարել է իր ցանկությունը, վերադառնա անապատում բնակության: Նա, ամաչելով ընկերոջ այդքան գթությունից, անմիջապես խոցվեց իր հոգում, զղջաց իր անառակության համար և նրա ետևից գնաց լեռ: Ելնելով այնտեղ՝ այն մարդուն խնդրեց, որ իրեն փակի առանձին խրճիթում, կնքի խցի դուռը և ըստ օրերի՝ հաց ու ջուր տա, իսկ իր մասին հարցնողներին ասի, թե մեռել է: Այս խնդրելով և այդ այրին հավանեցնելով՝ նա իրեն արգելափակեց, մնաց այնտեղ և ամենօրյա պահքով, խնդրվածքներով և արտասուքներով հոգուց ջնջում էր մեղքերի աղտը: Որոշ ժամանակ անց, երբ մոտակա երկրում երաշտ եղավ, և բնակիչները տրտմության մեջ էին, մեկը երազում հրաման ստացավ՝ գնալ և աղաչել այն փակված այրին, որ աղոթի և դադարեցնի երաշտը: Երբ նա, իր հետ վերցրած նաև ուրիշ մարդկանց, գնաց, նախ այնտեղ գտավ

միայն նրա ընկերոջը: Հարցնելով նրա մասին՝ իմացան, որ նա վախճանվել է: Իրենց խաբված համարելով՝ վերադարձան և կրկին դարձան միևնույն խնդրվածքին և նույն տեսիլքով կրկին լսեցին նախկին խոսքերը: Այդժամ շրջապատեցին նրան, ով իսկապես խաբում էր իրենց, աղաչեցին ցույց տալ իրենց այն մարդուն՝ ասելով, որ նա չի մեռել, այլ կենդանի է: Լսելով այս և տեսնելով, որ իրենց դաշինքը հայտնի է դարձել, նրանց բերեց սուրբի մոտ. նրանք քանդեցին պատը, որովհետև բոլոր մուտքերը խցված էին, և ներս մտնելով՝ ընկան նրա ոտքերը, պատմեցին պատահածի մասին՝ աղաչելով սովը հեռացնել իրենցից: Սկզբում նա ընդդիմացավ և իրեն հեռու համարեց այդպիսի համարձակությունից. այնպես իր աչքերի առջև մշտապես ուներ իր մեղքերը, կարծես դրանք հենց նոր էր գործել: Բայց երբ նրան պատմեցին իրենց ամբողջ աղետի մասին, նրան հոժարեցրին աղոթել, և երբ աղոթեց, սովը դադարեց:

Իսկ այն պատանու մասին, ով նախ եղել էր Զեբեդեոսի (որդի) Հովհանի[1] աշակերտը, ապա երկար ժամանակ ավազակապետ եղել, այն երանելի սուրբի ձեռքով վերստին որսվել ավազակների որջերից ու անձավներից ու վերադարձել նախկին առաքինություններին, դու անտեղյակ չես, այլ մեզնից ոչ պակաս լավ գիտես ամեն բան: Շատ անգամ եմ լսել, թե ինչպես էիր զարմանում երանելիի հեզության վրա, որ համբուրում էր երիտասարդի՝ մարդասպան ձեռքը, գրկում էր նրան և այդպես վերադարձնում նրան նախկին վիճակին:

Իսկ երանելի Պողոսը՝ Ոնեսիմոսին՝ անպիտանին, փախստականին, գողին, ոչ միայն սիրով շրջապատեց, մինչև նրա փոխվելը, այլև նրա տիրոջն աղաչեց, որ ապաշխարողին իր վարդապետին հավասար պատիվ անի՝ այսպես ասելով. «Աղաչում եմ քեզ իմ որդու՝ Ոնեսիմոսի համար, որի հոգևոր հայրը եղա ես իմ կապանքների մեջ. նա մի ժամանակ պիտանի չէր քեզ, բայց այժմ պիտանի է թե՛ քեզ և թե՛ ինձ:

[1] Հովհաննես ավետարանչի:

Նրան ետ ուղարկեցի քեզ մոտ. և դու ընդունի՛ր նրան որպես իմ սրտի հատորը. նրան ուզում էի ինձ մոտ պահել, որպեսզի քո փոխարեն ծառայի ինձ Ավետարանի համար իմ կրած կապանքների մեջ: Բայց առանց քո կամքի ոչինչ չուզեցի անել, որպեսզի քո բարի գործը հարկադրանքով չլինի, այլ՝ հոժարակամ: Եվ թերևս նա հեռացավ միառժամանակ նրա համար, որ ընդմի՛շտ ունենաս նրան այլևս ոչ իբրև ծառա, այլ ավելի վեր, քան ծառան, որպես մի սիրելի եղբայր. եթե նա ինձ համար սիրելի է, որչա՜փ ևս առավել կլինի քեզ համար՝ ե՛ւ իբրև ստրուկ և թե՛ իբրև եղբայր Տիրոջով: Եթե ինձ ընկերակից ես համարում քեզ, ընդունի՛ր նրան, ինչպես ինձ կընդունեիր» (Փիլիմ. Ա 10-17):

Եվ կորնթացիներին գրելով՝ նա ասում էր. «Երբ գամ, դուցե դարձյալ իմ Աստվածն ինձ նկուն դարձնի ձեր առաջ, և սուգ անեմ նախապես մեղանչած շատերի համար, որոնք չեն ապաշխարել իրենց գործած պղծության, պոռնկության և վավաշոտության համար» (Բ Կոր. ԺԲ 21), և դարձյալ. «Առաջ ասել եմ և դարձյալ կանխավ ասում եմ, եթե դարձյալ գամ, չեմ խնայելու» (Բ Կոր. ԺԳ 2): Տեսնո՞ւմ ես՝ ում համար է սգում, ում չի խնայում. ոչ թե նրանց, ովքեր մեղք չգործեցին, այլ նրանց, ովքեր չապաշխարեցին, ոչ թե պարզաբար չապաշխարեցին, այլ մեկ կամ երկու անգամ կոչվեցին ապաշխարության, բայց լսել չկամեցան: Քանզի ով ասում է. «Առաջ ասել եմ և դարձյալ կանխավ ասում եմ, որպես թե երկրորդ անգամ ներկա լինեմ ձեր մեջ, թեև այժմ հեռվից գրում եմ», ցույց է տալիս ոչ այլ ինչ, քան այն, թե պետք է երկնչել, որ այժմ մեզ էլ չպատահի այդ: Պողոսը, որ այն ժամանակ սպառնում էր կորնթացիներին, այստեղ չէ, բայց մոտ է Ինքը՝ Քրիստոս, Ով այն ժամանակ խոսում էր նրա միջոցով: Եվ եթե շարունակենք համառել, չի խնայի մեզ, այլ մեծ հարվածներ կհասցնի մեզ և՛ այստեղ, և՛ այնտեղ:

Ուրեմն. «Փութա՛նք նրա մոտ խոստովանությամբ» (Սաղմ. ՂԴ 2), հեղե՛նք Նրա առջև մեր սրտերը, քանզի. «Եթե մեղք գործեցիր, ասում է, այլևս մի՛ արա և աղոթի՛ր հին

մեղքերի համար» (Սիր. ԻԱ 1): Եվ դարձյալ՝ «Արդարն ինքն իր մասին չարախոսում է իր խոսքի սկզբին» (Առ. ԺԸ 17): Եվ արդ, չսպասե՛նք ամբաստանողին, այլ ավելի շո՛ւտ դրա-վենք նրա տեղը և այդ կերպ մեր խոստովանությամբ ավե-լի գթասի՛րտ դարձնենք Դատավորին: Լավ գիտեմ, որ դու խոստովանում ես քո մեղքերը և հեգ ու թշվառ ես համա-րում քո անձը: Բայց ես միայն այդ չէ, որ կամենում եմ, այլ նաև ցանկանում եմ այնքան հավատալ քեզ, որ այդ բանը կարող է և արդարացնել քեզ: Քանզի որքան ժամանակ չու անօգուտ դարձնես այդ խոստովանությունը. թեպետև մե-ղադրում ես ինքդ քեզ, բայց չես կարող ապագայում զերծ մնալ այդ մեղքերից: Ոչ ոք չի կարող զվարթությամբ և ըստ կարգի որևէ բան անել, եթե նախապես վստահ չլինի, թե իրեն օգուտ կբերի այն: Սերմանողը սերմերը ցանելուց հե-տո, եթե հունձք չակնկալի, երբեք չի հնձի: Ո՞վ զուր տեղը հանձն կառնի քրտինք թափել, եթե իր չարչարանքից քաղե-լու ոչինչ չունենա: Այդպես էլ նա, ով սերմանում է խոսքեր, արտասուք և խոստովանություն, եթե բարի հույսով չանի այդ, չի կարող փրկվել մեղքերից, ինչպես հուսահատության կրքով բռնվածը: Այլ ինչպես երկրագործը, որ հույսը կտրել է բերքից, այլևս ոչ մի ջանք չի թափում՝ արգելելու սեր-մերի վնասատուներին, այդպես էլ նա, ով արտասուքներով սերմանում է խոստովանություն և դրանից ոչ մի օգուտ չի ակնկալում, չի կարող հեռու վանել ապաշխարության խան-գարիչներին: Իսկ ապաշխարությունը խանգարում, փչաց-նում է կրկին նույն չարիքների մեջ մնալը: «Մեկը շինում է, մյուսը՝ ավերում. ի՞նչ օգուտ կա դրանից, բացի տանջանքից: Ով որ մաքրվում է մեռելին դիպչելուց և դարձյալ հպվում է նրան, ի՞նչ օգուտ ունի իր լվացվելուց: Ինչպես այն մարդը, ով մեղքի պատճառով ծոմ է պահում և դարձյալ գնում և նույն բանն է անում, ո՞վ կլսի նրա աղոթքը» (տե՛ս Սիր. ԼԱ 28-31): Եվ դարձյալ. «Ով արդարությունից դառնում է դեպի մեղքը, Տերը նրա համար սուր է պատրաստում» (Սիր. ԻԶ 27), և՝ «Ինչպես շունը դառնում է ատելի, երբ վերադառնում

է իր փսխածին, այնպես էլ անզգամն է իր չարությամբ, երբ վերադառնում է դեպի իր մեղքերը» (Առ. ԻԶ 11):

Ապա միայն իբրև քո անձի չարախոս չէ, որ պետք է հրա-պարակես մեղքերդ, այլ նաև իբրև ապաշխարության ճանա-պարհով արդարացող, քանզի այդպես կկարողանաս ամաչեց-նել խոստովանող հոգիդ, որպեսզի այլևս չչաղախվի նույնի մեջ: Քանզի սեփական անձը խստորեն դատափետելն ու մե-ղավոր կոչելը բոլորի և անհավատների գործն է: Շատ դերա-սաններ՝ տղամարդիկ և կանայք, երբ դառնում և նայում են իրենց պղծությանը, հեգ ու թշվառական են անվանում իրենց անձերը, սակայն բնավ էլ ոչ այդ նպատակով: Ուստիև ես երբևէ խոստովանություն չեմ համարի այդ, քանզի ոչ թե հոգու զղջումով, դառն արտասուքներով և իրենց կյանքի փոփոխությամբ են պատմում իրենց մեղքերը, այլ նրանց մի մասն այդ անում է, որպեսզի իր խոսքերի անկեղծությամբ լսողներից փառք ստանա, քանզի մեղքերի դժնդակությու-նը հավասար չի երևում, երբ դրանց մասին պատմում է ոչ թե նա, ով գործել է դրանք, այլ մեկ ուրիշը: Կան ոմանք էլ, որ սաստիկ հուսահատությունից դաժանացած և մարդկային փառքն արհամարհելով՝ մեծ լրբությամբ բոլորի առջև հրա-պարակում են իրենց մեղքերը, իբրև օտարներինը:

Ես չեմ կամենում, որ դու լինես այդպիսիներից, և ոչ էլ հուսահատությունից դաս խոստովանության, այլ բարի հույսով, և կտրելով հուսահատության արմատը՝ հակառակ ջանքերն անես: Իսկ ո՞րն է հուսահատության արմատն ու մայրը: Հեղգությունը. ավելի ճիշտ՝ միայն մայր չէ, որ կարե-լի է կոչել նրան, այլ ստնտու և մայր: Քանզի ինչպես փչա-ցող բուրդն է ծնում ցեցեր, և ապա դրանք ուտում են այն, այդպես էլ այստեղ հեղգությունն է ծնում հուսահատութ-յուն և ապա ինքը սնվում հուսահատությամբ, և փոխեփոխ միմյանց են ընծայում այն նզովյալ զորությունը, իսկ հետո՝ ճարակ դառնում: Արդ, եթե մեկը հատի և կտրի դրանցից մեկը, հեշտությամբ կարող է մյուսին հաղթել: Քանզի ով չի հեղգանում, նա երբեք չի ընկնում հուսահատության մեջ,

իսկ ով բարի հույսով սնված՝ հոգով չի վհատվում, երբեք հեղգության մեջ չի ընկնում:

Քակի՛ր այդ ամոլը և խորտակի՛ր լուծը, այսինքն՝ բազմօրինակ ու ծանր խորհուրդներդ, քանզի ոչ թե միադիմի (մտքերն) են դրանք միացնում, այլ բազմազան ու զանազանակերպ: Որո՞նք են դրանք: Պատահում է՝ ապաշխարողներից մեկը բազում ու մեծ առաքինություններով առաքինանում է և այդժամ էլ մեղանչում՝ զուգակշիռ իր բարի գործերին, և այդ միանգամայն բավական է լինում նրան հուսահատության մեջ գցելու համար, իբրև թե քակտվեց, քանդվեց շինվածը, և իր բոլոր չարչարանքներն իզուր եղան:

Եվ արդ, հարկ է և արժան է այս տեղում քաջանալ մտքով և հեռու վանել այդ միտքը. և եթե նախապես առաքինի գործեր ամբարած չունենանք դրանցից հետո գործած մեղքերի չափով, ապա ոչինչ չի արգելի մեզ իսպառ և ամբողջովին ընկնել: Հակառակը՝ առաքինի գործերը նման են ամուր զրահների, որոնք թույլ չեն տալիս, որ սուրսայր ու մահացու նետն անի իր գործը, այլ հարվածն իրենց վրա առնելով՝ մարմինը փրկում են բազում վտանգներից: Իր շատ բարի և չար գործերով այնտեղ գնացողն իր պատիժների ու չարչարանքների մեջ ստանում է որոշ թեթևացում, բայց նա, ով չունի բարի գործեր, այլ իր հետ տանում է միայն չարիքներ, հնարավոր չէ ասել, թե որքան պիտի չարչարվի, երբ առաքվի հավիտենական տանջանքների մեջ: Այնտեղ չար գործերը կհամեմատվեն բարի գործերի հետ, և եթե վերջինները ծանր լինեն և ձգեն նժարը, ոչ փոքր փրկություն կբերեն իրենց գործողին, և չար գործերի վնասը չի ունենա այնպիսի զորություն, որ շարժի նրան նախկին տեղից. բայց եթե չարիքները հաղթեն, գեհենի հրի մեջ կգցեն նրան, որովհետև բարի գործերը այնքան շատ չէին, որ կարող լինեին հակակշռել չարերի առավելությանը:

Այս ամենը մեզ ներշնչում է ոչ միայն մեր դատողությունը, այլ նաև Աստծո խոսքը: Քանզի Նա ասում է. «Յուրաքանչյուրին կհատուցի ըստ իր գործերի» (Մատթ. ԺԶ 27):

Եվ ոչ միայն գեհենում, այլ նաև արքայության մեջ բազում տարբերություններ կան, քանզի. «Իմ Հոր տան մեջ բազում օթևաններ կան» (Հովհ. ԺԴ 2), և՝ «Այլ է փառքը արեգակի, այլ է փառքը լուսնի» (Ա Կոր. ԺԵ 41): Եվ զարմանալի՞ է, որ տարբերություն դնելով այս երկու լուսատուների միջև, ասում է, թե այնտեղ նույնպես պիտի լինի այդպիսի տարբերություն, ինչպես այս կամ այն աստղի մեջ:

Ուրեմն, այս ամենն իմանալով՝ երբեք չդադարե՛նք բարի գործեր անելուց, երբեք չհրաժարվե՛նք չարչարվելուց, և եթե չկարողանանք լինել արեգակի կամ լուսնի շարքում, ապա չարհամարհե՛նք տեղը աստղերի հետ: Եթե մենք գոնե այդքան առաքինություն ունենանք, կարող կլինենք լինել երկնքում: Եվ եթե չլինենք ոսկի կամ թանկարժեք քար, ապա գեթ արծաթի որակը ունենալով մեր մեջ՝ մնանք մեր հիմքի վրա: Միայն թե չդառնա՛նք այնպիսի նյութ, որին կրակը հեշտությամբ է այրում, և եթե չենք կարողանում մեծ գործեր անել, չմնա՛նք առանց փոքրերի, քանզի մեծ անմտություն է դրանք մեզ հետ չունենալը: Ինչպես նյութական հարստությունն աճում է, երբ այն սիրողները չեն արհամարհում նաև ամենափոքր օգուտը, այդպես էլ հոգևորը: Անպատեհ է անտեսել փոքր գործերը, եթե անգամ չառաքինացանք մեծամեծ առաքինություններով, երբ Դատավորը անվարձ չի թողնում անգամ մի բաժակ սառը ջուրը: Հակառակը՝ ով չի արհամարհում փոքր գործերը, նա շատ ջանք կթափի մեծամեծերի համար, իսկ ով անտեսի առաջինները, կթողնի նաև վերջինները. որպեսզի այդպես չլինի, Քրիստոս մեծ վարձ սահմանեց նաև առաջինների համար: Ի՞նչն է ավելի հեշտ, քան հիվանդներին այցելելը. սակայն սրա համար էլ մեծ վարձատրություն սահմանեց:

Ուրեմն ձգտի՛ր հավիտենական կյանքի, բերկրի՛ր Տիրոջով և պաղատի՛ր Նրան, կրկի՛ն առ քաղցր լուծը, վերցրո՛ւ թեթև բեռը, ավելացրո՛ւ սկզբին նրան արժանի վախճան, մի՛ թողնիր, որ վատնվի այդչափ հարստությունը: Եթե համառես և քո գործերով զայրացնես Աստծուն, կորստյան կմատ-

նես քո անձը, բայց եթե առաջ, քան տեղի կունենա այդ մեծ կորուստը և ողջ մշակածդ կողողվի ջրով, փակես չարության ջրադարձը, ապա կարող կլինես դարձյալ ստանալ կորցրածդ և դրան ավելացնել ոչ քիչ աճ: Այս ամենի մասին խորհելով՝ թոթափի՛ր փոշին, վե՛ր կաց հողից և ահավոր կլինես քո հակառակորդի համար: Քանի որ նա կործանեց քեզ՝ մտածելով, թե դու այլևս ոտքի չես կանգնի, և երբ տեսնի քեզ իր դեմ բարձրացված բազկով, անսպասելիությունից խորը կխոցվի, կթուլանա՝ ի վիճակի չլինելով ցած գլորելու քեզ, իսկ դու ավելի հաստատուն կլինես և այլևս չես կրի այդ վերքը: Եթե ուրիշի աղետները կարող են ուսուցանել մեզ, ապա որքա՜ն ավելի մեր իսկ կրածները: Որը և ակնկալում եմ շուտով տեսնել քո գլխին, հույս ունեմ, որ դու Աստծո օգնականությամբ կդառնաս առավել պայծառ և կփայլես այնքան առաքինություններով, որ այնտեղ շատերից առաջ կլինես: Միայն թե մի՛ հուսահատվիր և մի՛ վհատվիր. ես չեմ դադարի քեզ այս կրկնելուց բոլոր խոսքերի մեջ, որտեղ էլ քեզ տեսնեմ, նաև ուրիշների միջոցով, որը եթե լսես, քեզ այլևս ուրիշ դեղեր պետք չեն լինի:

ՆՈՒՅՆ ԸՆԿԱԾ ԹԵՈԴՈՐՈՍԻՆ

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ

Եթե հնարավոր լիներ գրով ներկայացնել արտասուքներն ու հեծությունները, ես, այս նամակը լցնելով դրանցով, կուղարկեի քեզ: Ես արտասուք եմ հեղում ոչ թե այն բանի համար, որ դու հոգ ես տանում հայրենակիցներիդ համար, այլ այն բանի համար, որ եղբայրների միաբանությունից հեռացրեցիր քեզ, որ ոտնակոխ արեցիր դաշինքը, որ կնքել էիր Քրիստոսի հետ: Այդ ամենի համար սարսափում եմ, այդ ամենի համար հառաչում եմ, դրա պատճառով երկնչում ու դողում եմ: Քանզի թերևս ոչ ոք չի մեղադրի չզինվորագրվածին, բայց եթե զինվորների կարգն անցածներից մեկը բռնվի, իբրև դասալիք, վերջին պատիժներով կպատժվի: Դժնդակ չէ այն, ո՛վ սիրեցյալ Թեոդորոս, որ մարտիկն ընկնում է, այլ այն, որ նա ընկած է մնում. տագնապալի չէ, որ զինվորը վիրավորվում է, այլ այն, որ հարվածից հետո նա հուսահատվում է և չի հոգում իր վերքերի մասին:

Ոչ մի վաճառական, մեկ անգամ նավաբեկության ենթարկվելուց և իր բեռները կորցնելուց հետո չի դադարում նավարկելուց, այլ կրկին հատում է ծովը, ալիքներն ու ահագին անդունդները և կրկին ձեռք է բերում նախկին հարստությունը: Տեսնում ենք նաև գոտեմարտերը, թե ինչպես են բազում անգամ ընկնելուց հետո պսակներ ստանում, նաև բազում անգամ փախած զինվորների, որոնք հերոսներ են դարձել և հաղթել թշնամուն: Նույնիսկ շատերը նրանցից, ովքեր տանջանքների սաստկության պատճառով ուրացան Քրիստոսին, կրկին մարտնչեցին և այստեղից մեկնեցին՝ մարտիրո-

սության պսակն առած: Իսկ եթե նրանցից յուրաքանչյուրը հուսահատվեր առաջին հարվածից հետո, դրան հաջորդող բարիքները չէր վայելի:

Այդպես և այժմ դու, ո՛վ սիրեցյալ Թեոդորոս. եթե թշնամին փոքր-ինչ սասանեց քեզ քո տեղից, ինքդ քեզ մի՛ դցիր անդունդը, այլ մնա՛ քաջությամբ և շուտափույթ վերադարձի՛ր այնտեղ, որտեղից ելար: Եվ այդ անկումը ամոթ մի՛ համարիր, քանզի ինքդ էլ երբեք չես անարգի զինվորին, երբ տեսնես նրան պատերազմից վիրավորված վերադառնալիս: Ամոթալի է զենքը նետելն ու թշնամիներից փախչելը, բայց եթե մարտի մեջ գտնվող զինվորը վիրավորվի, եթե փոքր-ինչ տեղի տա, ոչ ոք չի լինի այնքան անխոհեմ և զինվորական գործի մեջ անփորձ, որ դրա համար դատապարտի նրան: Զեն վիրավորվում չկռվողները, իսկ նրանք, ովքեր մի անգամ գեղեցիկ արիությամբ հարձակվում են թշնամիների վրա, վիրավորվում ու ընկնում էլ են, ինչպես որ քեզ պատահեց այժմ. հետամուտ եղար շուտափույթ սպանել օձին, և այն խայթեց քեզ:

Բայց քաջալերվի՛ր. փոքր-ինչ զգոնություն, և այդ վերքի սպին անգամ չի երևա, մանավանդ եթե Աստծո շնորհով ջախջախես այն չարի գլուխը: Թող քեզ չվրդովեցնի այն, որ նա սկզբում արագ շղթայակապ արեց քեզ: Քանզի տեսավ, հասու եղավ նենգը քո առաքինությանը և շատ նշաններից հասկացավ, որ օրեցօր քաջարի ախոյան է աճում իր դեմ: Հասկացավ, որ հենց սկզբում իր դեմ այդքան և այդպիսի ճիգեր գործադրողը հետո հեշտությամբ կհարվածի ու կվանի իրեն, ուստիև փութաց, ճեպեց, հսկեց և ուժով ելավ քո դեմ, կամ, ավելի ճիշտ, իր իսկ գլխի դեմ, եթե դու կկամենաս քաջությամբ կանգնել:

Քանզի ո՞վ չզարմացավ քո՝ դեպի բարին այնքան արագ, անկեղծ ու կտրուկ փոփոխվելուց: Արհամարհվեցին խնջույքները, հեշտալից ցոփությունները, թանկարժեք հագուստները, ամբարտավանությունը, արտաքին գիտություններին ուղղված բովանդակ ջանքերն ուղղվեցին դեպի աստվածային պատգամները, ցերեկվա ժամերն անցնում էին ընթերցանությամբ, իսկ գիշերները՝ աղոթքով. չէին հիշվում հայրենական պատիվներն ու մտքով չէր անցնում հարստությունը, իսկ եղբայրների ծնկներին փարելն ու նրանց ոտքերն ընկնելը դու ավելի բարձր էիր համարում, քան ամենայն ազնվականություն:

Այս ամենը տանջում էին չարին, այս ամենը դրդեցին նրան սաստիկ պատերազմի, սակայն նա չհասցրեց մահացու վերքը: Քանզի եթե նա քեզ դցեր երկարժամանակյա անդուլ պահեցողությունից, գետնախշտի լինելուց և այլ սխրանքներից հետո, ապա այդ ժամանակ էլ հարկ չկար հուսահատվելու՝ չնայած ուրիշը մեծագույն աղետ կհամարեր այդքան ճգնություններից, չարչարանքներից ու հաղթություններից հետո անկումը: Բայց որովհետև քեզ սայթաքել տվեց այն ժամանակ, երբ դու ամրացնում էիր քո մեջքը իր դեմ մարտնչելու համար, ապա հաջողեց միայն այն, որ քեզ առավել քաջալինդ դարձրեց՝ իր դեմ պատերազմելու համար:

Քեզ՝ դեռ նոր նավարկել սովորողիդ և ոչ թե բեռնավորված նավերով վաճառականությունից վերադարձողիդ վրա հարձակվեց դժնդակ ծովահենը: Եվ ինչպես որ կորովի առյուծին սպանել պատրաստվողն է միայն նրա մորթը վնասում, իսկ նրան վնասել չի կարողանում, այլ ավելի է դրգռում իր դեմ, ավելի զգույշ ու դժվարորսալի է դարձնում, այդպես էլ բոլորի թշնամին, ճգնելով քեզ խորը վերք հասցնել, վրիպեց և դարձրեց քեզ առավել զգոն ու զգույշ:

Բ. Մարդու բնությունը անկայուն է. հեշտությամբ գայթակղվում է, և հեշտությամբ էլ ազատվում գայթակղությունից, և ինչպես որ արագ ընկնում է, այդպես արագ էլ ոտքի է կանգնում: Եվ քանի որ այն երանելի այրը՝ Դավիթը՝ ընտրյալ թագավորն ու մարգարեն, երբ բազում առաքինություններով առաքինացավ, ոչ մի բան չկարողացավ ծածկել այն, որ մարդ է, այլ ցանկացաւ ուրիշի կնոջը և կանգ չառավ այդտեղ, այլ իր ցանկության պատճառով շնացավ և շնանալու պատճառով սպանեց, սակայն կրկնակի հարվածով խորը

խոցված լինելով՝ չհանդգնեց երրորդն էլ ավելացնել իր անձի վրա, այլ շտապեց դիմել դեպի Բժիշկը և ընդունեց դեղերը՝ պահք, արտասուք, սուգ, անդադար աղոթքներ, մեղքերի հաճախակի խոստովանություն, և դրանցով այնպես շարժեց Աստծո ողորմածությունը, որ բարձրացավ իր նախկին պատվին, այնպես որ շնությունից ու սպանությունից հետո էլ հոր հիշատակը բավական եղավ ծածկելու որդու կռապաշտությունը: Քանզի նրա որդին՝ Սողոմոնը, նույն թակարդն ընկավ և իր կանանց պատճառով հեռացավ իր հայրերի Աստծուց:

Տեսնո՞ւմ ես՝ ինչպիսի չարիք է հեշտություններից հեռու չմնալը, բնական իշխանությունը հիմն ի վեր տապալելն ու այր լինելով՝ կանանց ծառա լինելը: Արդ, այս Սողոմոնը սկզբում արդար և իմաստուն էր, բայց երբ իր մեղքերի պատճառով իր ողջ թագավորությունը կորցնելու վտանգի մեջ էր, իր հոր պատվին Աստված թողեց նրան իշխանության վեցերորդ մասը:

Եվ արդ, եթե դու ջանք թափած լինեիր արտաքինների ճարտասանության համար, իսկ հետո սկսեիր անտեսել այն, ես կշտապեի հորդորել քեզ կրկին դառնալ դրան՝ հիշեցնելով քեզ ատյանն ու բեմը, այնտեղ տրվող պսակն ու խոսքի ազատությունը, բայց քանի որ մենք ընթանում ենք դեպի երկնայինը և ոչինչ ենք համարում երկրավորը, ես քեզ հիշեցնում եմ մեկ այլ ատյան ու բեմ՝ ահավոր ու սոսկալի. քանզի. «Մենք բոլորս պետք է կանգնենք Քրիստոսի ատյանի առջև» (Բ Կոր. Ե 10): Եվ դատավոր պիտի նստի Նա Ինքը, Ով այժմ անպատվվում է քո կողմից: Ի՞նչ պիտի ասենք այնժամ, ասա՛ ինձ, ի՞նչ պատասխան պիտի տանք, եթե մնանք նույն մեղքերի մեջ: Ի՞նչ պիտի ասենք. գործերի մասին հոգսե՞րը պատճառ բերենք: Բայց Նա Ինքը նախապես ասաց. «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե շահի ամբողջ աշխարհը, բայց կորցնի հոգին» (Մատթ. ԺԶ 26): Ուրիշների կողմից խաբվե՞լը, սակայն Ադամին էլ չօգնեց կնոջը մեղադրելը, երբ ասաց, թե՝ «Այն կինը, որ տվեցիր ինձ, նա խաբեց ինձ» (Ծն. Գ 12), այդպես նաև կնոջը, որ պատճառը օձին համարեց:

Այն ատյանն ահավոր է, ո՛վ սիրեցյալ Թեոդորոս, նրան ո՛չ դատախազներ են պետք և ո՛չ վկաներ, քանի որ «ամեն բան մերկ ու բաց է» այն Դատավորի առջև (Եբր. Դ 13), և հարկ կլինի պատասխան տալ ոչ միայն գործերի, այլ նաև խորհուրդների համար, քանզի այդ Դատավորը «քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները» (Եբր. Դ 12): Թերևս պատճառ կբերես բնությանդ տկարությո՞ւնը, թե՝ անկարո՞ղ էի տանել լուծը. բայց քաղցր լուծը և թեթև բեռը տանել չկարողանալն ի՞նչ պատասխան է: Մի՞թե ծանր ու դժվար է չարչարանքներից հանգստանալը, քանզի հենց դրան է կոչում մեզ Քրիստոս՝ ասելով. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու ծանրաբեռնվածներդ, և ես հանգիստ կտամ ձեզ: Առե՛ք իմ լուծը ձեզ վրա վերցրեք և սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և խոնարհ սրտով, որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. ԺԱ 28-29):

Ի՞նչն է թեթև, ասա՛ ինձ, քան այս աշխարհի հոգսերից, գործերից, վախերից ու չարչարանքներից ազատ լինելն ու անդորր նավահանգստում բնակվելը:

Գ. Աշխարհում ի՞նչն է քեզ ամենաերանելի ու բաղձալի թվում: Թերևս կասես, թե իշխանությունը, հարստությունն ու մարդկանց մոտ լավ համբավ ունենալը: Բայց ի՞նչն է այդ ամենից խղճալի քրիստոնյայի ազատության հետ համեմատ: Իշխանություն ունեցողը ենթակա է ժողովրդի ցասումին ու բազմությունների անմիտ հարձակումներին, նաև իրենից բարձր իշխանություն ունեցողներից վախի և իր ենթակայության տակ գտնվողների հոգսերի մեջ է: Երեկվա իշխանը այսօր հասարակ մարդ է, քանի որ այս կյանքը ոչնչով չի տարբերվում թատրոնից: Ինչպես որ այնտեղ է մեկը խաղում թագավորի, մյուսը՝ զորավարի, մեկ ուրիշը՝ զինվորի դերը, իսկ երբ երեկոյ է լինում, ո՛չ թագավորն է թագավոր, ո՛չ իշխանը՝ իշխան, և ո՛չ զորավարը՝ զորավար, այդպես էլ այն Օրը յուրաքանչյուրը կստանա արժանի վարձատրությունը ոչ թե իր դեմքի, այլ իր գործերի համար:

Թերևս փա՞ռքն է պատվական. բայց այն թոթափվում է, ինչպես խոտի ծաղիկը, թերևս հարստությո՞ւնը, որն ունեցողները խեղճ ու թշվառական են ասվում, քանզի. «Վա՛յ ձեզ, հարուստներիդ, որովհետև դուք ձեր մխիթարությունը ստացել եք» (Ղուկ. Զ 24), և դարձյալ՝ «Վա՛յ նրանց, ովքեր իրենց հույսը իրենց կարողության վրա են դնում և պարծենում են իրենց մեծ հարստությամբ» (տե՛ս Սաղմ. ԽԸ 7): Քրիստոնյան երբեք իշխանից՝ հասարակ մարդու, հարուստից՝ աղքատի, փառավորից՝ անփառունակի չի վերածվում, այլ հակառակը՝ նա մնում է հարուստ, երբ մուրում է, բարձրանում է, երբ ձգտում է խոնարհեցնել իր անձը, և այն իշխանությունը, որով իշխում է ոչ թե մարդկանց, այլ «աշխարհակալ խավարի» (Եփես. Զ 12) իշխանության իշխաններին, ոչ ոք չի կարող վերցնել նրանից:

Արդար է ամուսնությունը, խոստովանում եմ և ես, քանզի. «Ամուսնությունն ըստ ամենայնի հարգելի է, և ամուսնական անկողինը՝ սուրբ, բայց շնացողներին ու պոռնիկներին Աստված պիտի դատի» (Եբր. ԺԳ 4): Բայց դու այլևս չես կարող պահել ամուսնության արդարությունը, քանի որ նա, ով մի անգամ միացավ երկնավոր Փեսային և թողեց Նրան ու միացավ կնոջը, նա շնություն գործեց, թեպետև դու հազար անգամ էլ այն ամուսնություն անվանես. ավելի ճիշտ՝ այն այնքան ավելի դժնդակ է, քան շնությունը, որքան գերազանց է Աստված մարդուց: Եվ թող ոչ ոք քեզ չխաբի՝ ասելով, թե Աստված չի արգելում ամուսնությունը. այդ գիտեմ և ես. Նա չարգելեց ամուսնությունը, այլ արգելեց շնությունը, որ կամենում ես գործել դու, որ քա՛վ լիցի, որ երբևէ ամուսնությամբ կապես քեզ:

Ինչո՞ւ ես զարմանում, որ ամուսնությունը շնություն է համարվում, երբ արհամարհվում է Աստված: Սպանությունն արդարություն համարվեց, իսկ մարդասիրությունը սպանությունից առավել դատապարտվեց, քանզի մեկը կատարվեց Աստծո կամքով, իսկ մյուսը՝ հակառակ Աստծո հրամանի: Փենեեսի համար արդարություն համարվեց, երբ նա պոռնկացող կնոջն ու շնաբարո տղամարդուն միասին խոցեց, իսկ Սավուղին, որի համար այն սուրբը՝ Սամուելը, ամբողջ գիշեր արտասուք թափեց և սգալով պաղատեց, չկարողացավ փրկել դատավճռից, որ նրա դեմ սահմանեց Աստված այն բանի համար, որ նա այլազգիների թագավորին, ում արժան էր սպանել, փրկեց հակառակ Աստծո հրամանի: Արդ, եթե Աստծուն չհնազանդվելու պատճառով մարդասիրությունն առավել է դատապարտվում, քան սպանությունը, ի՞նչ զարմանալի բան կա, եթե ամուսնությունը առավել դատապարտվի, քան շնությունը Քրիստոսին անպատվելու պատճառով: Քանզի ինչպես վերևում ասացի, եթե սովորական մարդ լիներիր, ոչ ոք քեզ չէր մեղադրի, իբրև դասալիք զինվորի: Իսկ հիմա, երբ զինվորն ես դարձել այդպիսի Արքայի, դու չես քո անձի տերը: Եթե կինը չէ իր մարմնի տերը, այլ ամուսինը (տե՛ս Ա Կոր. Է 4), ապա որքան առավել նրանք, ովքեր ապրում են ի Քրիստոս, իրենց մարմնի տերը չեն: Նա, Ով անարգվում է այժմ, այնժամ Դատավոր կլինի:

Այս մասին մտաբերիր հանապազ, նաև այն հրեղեն գետի մասին, քանզի. «Նրա առջևից, ասում է, հոսում էր կրակե հորդ մի գետ» (Դան. Է 10), քանզի ում որ Նա մատնում է այն կրակին, նա այլևս երբեք չի ակնկալում, որ տանջանքները կավարտվեն: Իսկ այս կյանքի անպարկեշտ հաճույքները ոչնչով չեն տարբերվում ստվերից ու երազներից. քանզի մինչև մեղավոր գործի ավարտը մարում է հաճույքի քաղցրությունը, իսկ դրա համար տանջանքները վախճան չունեն: Ժամանակավոր է քաղցրությունը, հավիտենական է տառապանքը:

Ի՞նչն է, ասա՛ ինձ, հաստատուն մնում այս աշխարհում. թերևս հարստությո՞ւնը, որ հաճախ չի մնում մինչև երեկո, փա՞ռքը, բայց դու լսիր մի արդարի, որ ասում է. «Սուրհանդակից էլ արագ անցավ իմ կյանքը» (Հոբ Թ 25). նրանք, դեռ չկանգնած, ընթանում են, իսկ սրանք, մինչև հասնելը, թռչում:

Հոգուց պատվական ոչինչ չկա. սա անհայտ չէ նաև նրանց, ովքեր հասան ծայր անխոհեմության, քանզի. «Հո-

գուն հավասար չկա ոչինչ», ասաց արտաքին քերթողներից մեկը: Լավ գիտեմ, որ շատ ես տկարացել չարի դեմ պատերազմելու համար. գիտեմ, որ դեգերում ես հաճույքների բոցերի մեջ: Բայց եթե թշնամուն ասես՝ մենք քո հաճույքներին չենք ծառայում և քո բոլոր չարիքների արմատին չենք երկրպագում, եթե աչքերդ վեր բարձրացնես, Փրկիչը քեզնից կթոթափի այդ բոցը և կայրի նրանց, ովքեր քեզ նետեցին այդ կրակի մեջ, իսկ քեզ համար հենց այդ հնոցի մեջ կուղարկի ամպ, ցող և հողմ, այնպես որ կրակը չի մոտենա ո՛չ քո խորհուրդներին և ո՛չ էլ խղճմտանքին. եթե միայն դու ինքդ քեզ չայրես:

Հաճախ արտաքին պաշարողների զենքերն ու հնարները չկարողացան ավերել ամրացված քաղաքները, իսկ դրանց մեջ ապրող քաղաքացիներից մեկի կամ երկուսի մատնությունը առանց չարչարանքի դրանք հանձնեցին թշնամու ձեռքը: Եվ այժմ, եթե քո ներքին խորհուրդներից ոչինչ քեզ չմատնի, եթե չարը անգամ բյուրավոր արտաքին հնարներ կանգնեցնի քո շուրջը, իզուր կլինեն:

Դ. Աստծո շնորհով դու ունես շատ ցավակցողներ՝ մեծամեծ այրեր, որոնք քաջալերում են քեզ, դողում քո հոգու համար՝ սուրբ Վաղերիոսը, նրան ամեն բանով նման եղբայրը՝ Փլորենտիանոսը, Քրիստոսի իմաստությամբ իմաստնացած Պորփյուրիոսը և ուրիշ շատեր: Նրանք բոլորը ամբողջ օրը սգում ու անդադար աղոթում են և վաղուց ստացած կլինեին այն, ինչի համար աղոթում են, եթե դու կամենայիր փոքրինչ անգամ ազատել քեզ թշնամու ձեռքից:

Եվ արդ, տարօրինակ չէ՞, որ ուրիշները մինչև այժմ հույսները չեն կտրել քո փրկությունից, անդադար աղոթում են՝ իրենց ընկած անդամին իրենց մոտ վերադարձնելու համար, իսկ դու, մի անգամ ընկնելով, չես կամենում կանգնել, այլ ընկած ես մնում՝ կարծես խրախուսելով թշնամուն, թե՝ սպանի՛ր, խփի՛ր, մի՛ խնայիր: «Մի՞թե ընկածը չի բարձրանում» (Երեմ. Ը 4), ասում է աստվածային մարգարեությունը: Իսկ դու ընդդիմանում ես սրան և հակաճառում. քանզի ընկածի

հուսահատությունն այլ բան չի ասում, քան այն, թե՝ «Ով ընկնում է, այլևս չի բարձրանում»: Աղաչում եմ՝ ինքդ քեզ այդքան չարիք մի՛ պատճառիր և մեր ցավն այդքան մի՛ ավելացրու: Քո ներկայի մասին չեմ ասում, երբ դեռ քսան տարեկան չկաս, այլ եթե անգամ տարեց լինեիր, քո ամբողջ կյանքը Քրիստոսով ապրած և խորը ծերության ժամանակ կրեիր այն, ինչ հիմա ես կրում, ապա այնժամ էլ իրավացի չէր լինի հուսահատվելդ, այլ պետք էր հիշել ավազակին, որ արդարացավ խաչի վրա, տասնմեկերորդ ժամի մշակներին, որոնք ամբողջ օրվա վարձն ստացան:

Բայց ինչպես որ լավ չեն անում նրանք, ովքեր իրենց կյանքի վերջում ընկնելով՝ հուսահատվում են և չեն ուզում իրենց, այդպես էլ անվտանգ չէ սնվել այնպիսի հույսով և ասել, թե՝ «Այժմ վայելեմ այս կյանքի հաճույքները, իսկ հետո փոքր-ինչ չարչարանք հանձն առնելով՝ կստանամ ամբողջ ժամանակի վարձը»: Ես հիշում եմ, որ երբ շատերը քեզ խորհուրդ էին տալիս հաճախել ուսումնարաններ, դու հաճախ ասում էիր. «Իսկ ի՞նչ կլինի ապա, եթե ես շուտով չարիքի մեջ ավարտեմ իմ կյանքը, ինչպե՞ս կնայեմ ասողին. «Մի՛ հապաղիր դառնալ դեպի Տերը և օրեցօր մի՛ հետաձգիր» (Սիրաք, Ե 8): Հիշի՛ր այս միտքը և կապի՛ր դողին. Քրիստոս այդպես է անվանում մեր ելքն այստեղից, քանի որ այն հասնում է առանց իմաց տալու:

Մտաբերի՛ր կենցաղի հոգսերը՝ և՛ անձնական, և՛ ընդհանուր, վախը իշխաններից, քաղաքացիների նախանձը, բազում անգամ սպառնացող ծայր վտանգները, չարչարանքները, աղետները, ծառայական մարդահաճությունը, որ առաքինի ստրուկներին անգամ վայել չէ, աշխատանքների պտուղը, որ այստեղ է սպառվում. ի՞նչ կարող է լինել այս ամենից աղետալի: Շատերին էլ չհաջողվեց վայելել սեփական աշխատանքի պտուղը, այլ առաջին հասակն անցկացնելով չարչարանքների ու վտանգների մեջ, այն ժամանակ, երբ ակնկալում էին վայելել վարձը, մեկնեցին այստեղից՝ իրենց հետ չտանելով ոչինչ:

Եթե երկրավոր թագավորին հազիվ թե իշխի համարձակությամբ նայել անգամ նա, ով բազում վտանգների միջով է անցել և շատ պատերազմներ մղել, ապա ինչպե՞ս կկարողանա իր աչքերը դեպի երկնավոր Թագավորը բարձրացնել նա, ով իր ամբողջ ժամանակն ապրեց ուրիշին (ծառայելով) ու ուրիշին զինվորագրվեց:

Ե. Կամենո՞ւմ ես, որ քեզ հետ խոսեմ նաև կենցաղային հոգսերի մասին՝ կնոջ, զավակների, ծառաների: Ծանր է աղքատ կնոջ հետ ամուսնանալը, ծանր է նաև հարուստի հետ ամուսնանալը. քանզի մեկը վնասում է ունեցվածքը, մյուսը՝ ամուսնու իշխանությունն ու ազատությունը: Տագնապ է զավակներ ունենալը, առավել մեծ տագնապ է չունենալը. քանզի մեկի ժամանակ ամուսնությունն իզուր է լինում, իսկ մյուսի ժամանակ ենթարկվում ես դառը ծառայության: Երեխան հիվանդացա՞վ, փոքր վախ չէ. տարաժամ մեռա՞վ, անմխիթարելի սուգ է. ըստ յուրաքանչյուր հասակի՝ զանազանվում են նրանց համար հոգսերը, երկյուղն ու չարչարանքը: Հարկ կա՞ ասելու տմարդի ծառաների մասին: Արդ, մի՞թե կյանք է սա, ո՛վ Թեոդորոս, երբ մի հոգին այսքան մասերի է բաժանվում, այսքանին ծառայում, այսքանի համար ապրում, իսկ իր համար՝ բնավ ոչ:

Մեզ մոտ այսպիսի ոչինչ չկա, ո՛վ սիրելի, և դրան քեզ եմ վկա կոչում: Քանզի այն կարճ ժամանակում, երբ դու կամենում էիր վեր բարձրանալ այս ալիքներից, գիտես, թե որքան բերկրություն և ուրախություն էիր վայելում: Քանզի ոչ ոք ազատ չէ, բացի նրանից, ով ապրում է Քրիստոսի համար. այնպիսին վեր է բոլոր աղետներից, և եթե ինքն իրեն չկամենա անիրավել, նրան ոչ ոք երբեք չի կարողանա զրկել: Նա անմատչելի է, չի տանջվում ստացվածքները կորցնելու համար, քանզի գիտի, թե՝ «Ոչինչ չբերեցինք այս աշխարհ և ոչինչ էլ չենք կարող տանել» (Ա Տիմ. Զ 7). չի ըմբռնվում պատվասիրության կամ փառքի ցանկությամբ, քանզի գիտի, որ. «Մեր քաղաքացիությունը երկնքում է» (Փիլ. Գ 20). նրան նախատողները չեն տրտմեցնում նրան, նրան հարվածողները չեն բարկացնում նրան: Միմիայն մեկն է Քրիստոնյայի աղետը՝ Աստծուն զայրացնելը, մյուս բոլորը՝ ունեցվածքի կորուստը, հայրենիքից տարագրվելը, ծայր վտանգները նա աղետ չի համարում: Նույնիսկ այն, ինչից սարսափում են բոլորը՝ այստեղից ելքը դեպի հանդերձյալ, նրա համար ավելի քաղցր է, քան այս կյանքը: Ինչպես եթե մեկը, բարձրանալով բարձր ժայռի վրա, նստի և նայի ծովին ու նրա վրա նավարկողներին, որոնցից ոմանց ալիքներն անդնդասույզ են անում, ոմանք՝ գնալով՝ դիպչում են ծովի տակ գտնվող ժայռերին, ոմանց սաստիկ քամիները քշում են ուրիշ կողմ, ինչպես բանտարկյալների, շատերին ծածկում են ալիքները, ոմանք նավի և ղեկի փոխարեն իրենց բազուկներն են գործի դնում, շատերը տարուբերվում են մի տախտակի կամ նավի մի բեկորի վրա, ուրիշներն արդեն դիակացած՝ լողում են ջրերի երեսին, բազմօրինակ ու անթիվ են աղետները, այդպես Քրիստոսին զինվորագրվածն է, ազատվելով կենցաղի խռովություններից ու ալիքներից, նստում բարձր ու անդորր վայրում: Քանզի ի՞նչը կարող է լինել ավելի ապահով ու բարձր, քան ունենալ միայն մեկ հոգս՝ «ինչպես հաճելի լինել Աստծուն» (Ա Թեսաղ. Դ 1):

Տեսնո՞ւմ ես, Թեոդորո՛ս, այս ծովով նավարկողների նավաբեկությունը: Ուստիև աղաչում եմ քեզ՝ փախի՛ր անդունդներից, փախի՛ր ալիքներից և բարձր տեղում եղիր, որտեղից քեզ ոչինչ չի կարող հափշտակել. հարություն կա, դատաստան կա, ահավոր ատյան. երբ այստեղից ելնենք, այն է սպասում մեզ. «Մենք բոլորս Քրիստոսի ատյանի առաջ պիտի ներկայանանք» (Բ Կոր. Ե 10): Իզուր չէ, որ սպառնում է գեհենով, իզուր չէ, որ այդքան բարիքներ պատրաստվեցին:

Ստվեր և ստվերից էլ ոչինչ են այս կյանքի գործերը, լի մեծ երկյուղով, բազում վտանգներով և ծայր ստրկությամբ: Մի՛ վտանգվիր և՛ այս, և՛ այն կյանքում, քանզի կարող ես, եթե կամենում ես, երկուսն էլ ունենալ: Իսկ որ Քրիստոսով ապրողները և այստեղինն ունեն, ուսուցանում է Պողոսը՝ ասելով. «Ես պիտի խնայեի ձեզ», և դարձյալ՝ «Ես այս ձեր օգուտի համար եմ ասում» (Ա Կոր. Է 28, 35): Տեսնո՞ւմ ես՝ նա, ով Տիրոջն է հոգում, նաև այս աշխարհում է բարձր ամուսնացածներից:

Այստեղից այնտեղ գնալով՝ նրան ապաշխարություն չկա: Չկա մի բռնցքամարտիկ, որ մարտը շարունակի՝ դուրս ելնելով ասպարեզից, քանի որ հեռացել են հանդիսականները:

Նույնը հանապազ մտածիր դու և փշրի՛ր չարի սուր սուսերը, որով շատերին սպանեց, այն է՝ հուսահատությունը, որ ընկածի սրտից կտրում հատում է հույսը. դա թշնամու հզոր զենքն է, և ում մի անգամ բռնում է, պահում է ոչ այլ բանով, քան կապելով այս կապանքով, և եթե մենք կամենանք, Աստծո շնորհներով արագ կարող ենք կտրել դրանք:

Գիտեմ, որ նամակս չափից ավելի երկարեց, բայց ների՛ր ինձ, քանզի այդ արեցի ակամայից՝ դրդված սիրուց ու ցավից, որոնք ստիպեցին ինձ՝ գրելու այս նամակը: Թեպետև շատ էին նրանք, որ արգելում էին ինձ գրել՝ ասելով, թե՝ թո՛ղ սին չարչարանքդ և ժայռի վրա սերմանելդ: Բայց ես նրանցից ոչ մեկին չլսեցի, քանի որ հույս կա՛, ասում էի ես իմ մտքում, եթե Աստծո կամոք գրվածները մի օգուտ տան: Իսկ եթե պատահի այն, ինչ չէինք կամենում, մենք կշահենք գեթ այն, որ չենք մեղադրվի մեր լռելու համար և վատթար չենք լինի այն ծովագնացներից, ովքեր, տեսնելով, որ իրենց համարվեստ մարդիկ նավի՝ քամիներից ու ալիքներից ջախջախվելու ժամանակ տարուբերվում են տախտակների վրա, ամփոփում են առագաստները, ձգում են խարիսխը և իջնելով փոքրիկ մակույկի մեջ՝ ջանում են փրկել անծանոթ և այդ աղետի միջոցով ծանոթացած մարդկանց: Բայց եթե վերջիններս չուզեցան փրկվել, ոչ ոք նրանց կորստյան մատնվելու համար չի մեղադրի նրանց, ովքեր ջանում էին փրկել նրանց:

Մեր կողմից այսքանն է. բայց հույս ունենք, որ Աստծո շնորհներով դու էլ կընծայես մեզ քոնը, և կրկին կտեսնենք քեզ Քրիստոսի հոտի մեջ քաջարի, և շատ շուտով կընդունենք քեզ սուրբերի աղոթքներով առողջացած ճշմարիտ քաջողջությամբ, ո՛վ սիրելի գլուխ: Եվ եթե քո մեջ կա փոքր-ինչ ուշադրություն մեր հանդեպ, և եթե դու մեզ ամբողջովին չես ջնջել քո հիշողությունից, հաճիր գրել մեզ. դրանով մեզ շատ կուրախացնես:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԽՈՍՔԸ ԵԹԵ ՄԱՐԴՆ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՉՎՆԱՍԻ, ՆՐԱՆ ՈՉ ՈՔ ՎՆԱՍԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ[1]

Ա. Գիտեմ, որ խոսքս անսովոր ու տարօրինակ կթվա թանձրամիտներին և նրանց, ովքեր փափագում են երկրավորը, գամված են երկրին, գերված են զգայական հաճույքներով և ամենևին չեն խորհում իմանալիների մասին. նրանք անհագաբար կծիծաղեն մեզ վրա ու կարհամարհեն մեզ, իբրև թե անհավատալի բաներ ենք բարբառում: Սակայն մենք երբևէ տեղի չենք տա և հենց այդ պատճառով էլ առավել ջանադրությամբ և ապացույցներով կխոսենք այն ամենի մասին, ինչ խոստացանք: Եվ եթե նրանք միայն կամենան առանց խռովվելու և աղմկելու լսել մինչև ճառիս ավարտը, լավ գիտեմ, որ համաձայն կլինեն մեզ, իրենց նախկին մոլորության համար կդատապարտեն իրենք իրենց, մեզ իրավացի

[1] Ոսկերերանի այս հոյակապ գիրքը մեծ հռչակ ունի: Սրա վերնագիրը իր մեջ բովանդակապես ներառում է քրիստոնեական իմաստասիրության գեղեցկությունը. առհասարակ բոլորի՝ թե՛ փիլիսոփաների և թե՛ աստվածաբանների բերանում այն շրջում է իբրև անսուտ առած: Այս գրությունն հիշատակում է և ինքը՝ Ոսկերերանը՝ գրելով Կոստանդնուպոլիս՝ Ողիմպիադա անունով ազնվական և բարեպաշտությամբ հայտնի մի կնոջ, ում հաճախ և հրաշալի գրություններ էր գրում Կոկիսոնից՝ իբրև մխիթարություն նրա վշտերի: Իր չորրորդ նամակում նա այս գործի մասին նրան գրում է. «Քեզ եմ ուղարկում այն, ինչ հենց նոր գրեցի, թե՝ ով ինքը չվնասի իրեն, նրան ոչ ոք երբևէ վնասել չի կարող: Հաճախ ընթերցիր և եթե կարող ես, անգիր արա այն: Քանզի եթե կամենաս, միայն այդ գեղեցկությունը բավական կլինի քեզ: Իսկ եթե հակառակվես մեզ, հոգ չտանես քո հոգու մասին և բյուրավոր խրատներ ու հորդորներ վայելելուց հետո չկամենաս քո այդ տրտմության տիղմից վեր հանել քեզ, մենք էլ դյուրավ չենք լսի քեզ՝ հաճախ ու երկար նամակներ գրելու, եթե դու սրանից ոչ մի օգուտ չստանաս, և հոգիդ չզվարթանաս»:
Գրության վայրը Կոկիսոնն է, ժամանակը՝ մոտ 406 թվականը:

համարելով՝ ներողություն կխնդրեն՝ ասելով, թե ճիշտ չէին հասկանում այդ ամենը, և մեզնից շատ շնորհակալ կլինեն, ինչպես հիվանդները՝ բժիշկներից, երբ ազատվում են ախտերից, որոնք վարակում էին նրանց ամբողջ մարմինը:

Դու նույնպես իմ դեմ մի՛ բեր դատավճիռդ, որ այժմ պաշարում է քեզ, այլ լսի՛ր մեր խոսքերը, և այնժամ միայն կկարողանաս անվրեպ դատաստան անել, երբ անդիտություն չի վնասի հավաստի քննությանը: Ինչպես որ աշխարհիկ գործերով նիստ գումարող դատավորները, թեև տեսնում են, որ առաջին հռետորը խիստ ճարտարախոս է և իր գեղեցկախոսությամբ հեղեղում է առհասարակ ամեն բան, չեն հանդգնում հայտնել դատավճիռը, մինչև համբերությամբ չեն լսում նաև նրան հակաճառող մյուս կողմին, այլ թեև առաջինն արդարացի էր թվում, նրանք պահպանում են անաչառ ուշադրություն նաև երկրորդի համար: Քանզի գիտենք, որ դատավորների առաքինությունն հենց այն է, որ նրանք ճշգրիտ և անվրեպ հասկանան երկու կողմերին էլ ու միայն դրանից հետո հայտնեն իրենց դատավճիռը:

Այժմ էլ համընդհանուր այն կարծիքը, որ գրավել է շատերի միտքը և ժամանակի ընթացքում արմատացել բոլոր խորհուրդներում, իբրև մի ոմն հռետոր՝ բողոք է բարձրացնում համայն աշխարհում՝ այսպէս ասելով՝ ամեն բան տակնուվրա է եղել մարդկային ազգի մեջ, ամենուր սաստիկ խառնաշփոթ է. շատերն են տանջվում անիրավությունների մեջ, զրպարտվում են, հարստահարվում, չարչարանքի են ենթարկվում տկարները՝ ուժեղների, աղքատները՝ հարուստների կողմից, և ինչպես որ անհնարին է համրել ծովի ալիքները, այդպես էլ խաբվող, կեղեքվող ու տառապող մարդկանց բազմությունը. ո՛չ օրենքների ուժը, ո՛չ դատավորների ահը և ո՛չ էլ մեկ այլ բան երբեք վերջ չեն տալիս այսպիսի սրածությանն ու ախտերին, այլ օրըստօրէ աճում է չարիքը. ամենուր զրկվածների լաց է, ողբ ու արտասուք, իսկ դատավորները, որոնք կարգվել են այդ ամենն ուղղելու համար, իրենք են սաստկացնում մրրիկը և բորբոքում ախտը: Այդ պատճառով էլ շատ տգետ ու դժբախտ մարդիկ,

մի անսովոր ցասումով մոլեգնելով, մեղադրում են Աստծո տեսչությունը, երբ տեսնում են, որ բարի մարդը բռնությունների, կտտանքների ու սաստիկ նեղությունների է ենթարկվում, իսկ հանդուգն, դաժան ու անարգ մարդն հարստանում է և իշխանություն ձեռք բերում՝ շատերի համար ահարկու դառնալով և անհամար աղետներ պատճառելով աղքատներին. այս անարդարությունները լինում են և՛ քաղաքներում, և՛ գյուղերում, և՛ անապատներում, և՛ ծովում, և՛ ցամաքում:

Ուստիև մենք հարկադրված եղանք ընծայելու այս խոսքը՝ արդարացնելու համար վերևում ասված խոսքերը, մղելով մի անսովոր ու ահավոր մարտ, ինչպես նախապես ասացի, բայց պիտանի, արդարացի և շահեկանությամբ լի բոլոր նրանց համար, ովքեր կամենում են ունկնդրել ու սովորել: Քանզի կվկայվի, թե (չխռովվե՛ք) զրկվածներից ոչ ոք ուրիշից չէ, որ վնասվում է, այլ ինքն իր իսկ անձից:

Բ. Բայց որպեսզի պարզ դարձնեմ խոսքս, ե՛կ նախ քննենք, թե ինչ է անօրենությունը, ինչից է ծագել այն, և ապա՝ թե ինչ է մարդու առաքինությունը, և ինչն է վնասում այն, և ինչն է, որ թվում է, թե վնասում է, սակայն իրականում չի վնասում: Մի օրինակ. քանզի արժան է օրինակներով առաջ տանել այս խոսքը. գոյություն ունեցող յուրաքանչյուր բան իրեն վնասողն ունի. երկաթը՝ ժանգ, բուրդը՝ ցեց, ոչխարների հոտերը՝ գայլերին: Գինին կորցնում է իր զորությունը, երբ փչանում և քացախի է փոխվում, մեղրն էլ է կորցնում իր բնական քաղցրությունը և դառնահամ հեղուկ դառնում: Ցորենի բերքին վնասում է երաշտը, այգիների պտուղներին, տերևներին ու ճյուղերին՝ մորեխի չար գնդերը, մյուս ծառերին՝ թրթուրը, անբան մարմիններին՝ զանազան ախտերը: Եվ որպեսզի բոլորը չթվենք և չերկարեցնենք մեր խոսքը, ասենք՝ մեր մարմիններին էլ վնասում են ջերմության տապը, անդամալուծությունը և բազում ուրիշ ախտեր:

Եվ արդ, ինչպես որ սրանցից յուրաքանչյուրն ունի իր բարելավությունն ապականողը, եկ տեսնենք, թե ինչն է այն,

որ վնասում է մարդկային ազգին, և թե ինչն է, որ երբեք չի կարող վերացնել մարդու առաքինությունը:

Շատերն այդ մասին տարբեր կարծիքներ ունեն. հարկ ենք համարում մեջբերել խեղաթյուր կարծիքները և հերքել դրանք, ապա ներկայացնել մեր առաքինության ճշմարիտ ապականիչներին և հստակ կերպով ապացուցել, թե ոչ ոք չի կարող անիրավել մեր դեմ և ոչ էլ որևէ վնաս պատճառել մեզ, եթե մենք ինքներս չվնասենք մեր անձերին:

Արդ, ռամիկները, խեղաթյուր կարծիք ունենալով, մեր առաքինության ապականիչ են համարում տարբեր բաներ. մի մասը՝ աղքատությունը, մի մասը՝ մարմնի հիվանդությունը, մի մասը՝ ինչքերի կորուստը, մյուսները՝ զրպարտությունը, ուրիշները՝ մահը. ամբողջ օրը սգում ու ողբում են այս բաների վրա և խղճում ու արտասվում են նրանց համար, ովքեր կրում են դրանք և զարհուրած ասում միմյանց. «Ի՜նչ դժբախտություն պատահեց այդ մարդուն. հանկարծակի զրկվեց իր ամբողջ ունեցվածքից»: Իսկ մեկ ուրիշը՝ մեկ ուրիշի մասին, թե՝ «Դա ծանր հիվանդացավ, բժիշկները հույսները կտրեցին նրանից ու լքեցին նրան»:

Մեկ ուրիշը ողբում ու լաց է լինում բանտում նստածների համար, մյուսը՝ հայրենիքից տարագրվածների ու հեռավոր երկրներ աքսորվածների համար, մեկ ուրիշն էլ՝ ազատությունից զրկվածների համար, մյուսը՝ թշնամիների կողմից հափշտակվածների և գերեվարվածների, ուրիշը՝ անդունդ գլորվածների ու հրկիզվածների, մեկ ուրիշը՝ հանկարծակի փլվածքի տակ մնացածների համար, բայց ոչ ոք լաց չի լինում անօրենությամբ ապրողների համար, և որ ամեն բանից առավել դժնդակ է, նրանց երանելի են համարում, որ և դառնում է բոլոր չարիքների պատճառը:

Եվ արդ, (ինչպես արդեն աղաչեցի, չխռովվե՛ք). մենք ցույց կտանք, կբացահայտենք, որ վերոգրյալներից ոչինչ չի կարող վնասել զգոն մարդուն, երբեք չի կարող վնաս պատճառել նրա առաքինությանը: Քանզի, ասա՛ դու ինձ՝ ի՞նչ վնաս է հասնում մարդու առաքինությանը այն բանից, որ նա զրկվում է իր ունեցվածքից, և կամ երբ զրպարտիչները, ավազակները և կամ չարագործ ծառաները միանգամից թալանում են նրա ամբողջ ունեցվածքը:

Եթե հաճո թվա, մինչև մեր՝ այլ բաներ բացահայտելը, նախ նկարագրենք, թե ինչ բան է մարդու առաքինությունը, որպեսզի բազմության համար ավելի դյուրընկալելի ու պարզ դարձնենք մեր խոսքը:

Գ. Եվ արդ, ո՞րն է երիվարի առաքինությունը. ոսկե սանձ կամ ոսկե կամար, մետաքսաթելով հյուսված ծածկոց, սև ու սպիտակ պուտերով ոսկեթել գորգեր, ականակուռ զարդեր, ոսկե թելերով հյուսված բաշ ունենա՞լը, թե՞ արագ վազքն ու հաստ սրունքները, հաստատուն քայլքը, քաջազոր սմբակը, կորովի լինելը երկար ճանապարհին, պատերազմի մեջ, ճակատամարտում մեծ քաջություն ցույց տալն ու փախչելիս հեծյալին փրկելը: Մի՞թե պարզ չէ, որ վերջիններն են երիվարի առաքինությունը և ոչ թե առաջինները: Ո՞րն ես համարում էշերի ու ձիերի առաքինությունը. ո՞չ այն, որ նրանք լավ բեռնակիրներ են, հեշտությամբ են անցնում ճանապարհը, վեմի պես ամուր ոտքեր ունեն. կասե՞նք, թե այն, ինչ արտաքուստ դրված է նրանց վրա, ավելի լավն է դարձնում նրանց: Ո՛չ երբեք: Իսկ ո՞ր որթատունկերի վրա ենք մենք սքանչանում. նրանց, որ սաղարթներով ու ճյուղերո՞վ են հարուստ, թե՞ նրանց, որ պտուղներով են բեղուն: Ո՞ր ձիթենուն ենք լավ համարում. բարձրուղեշ ճյուղեր ու խիտ տերևներ ունեցողի՞ն, թե՞ իր բոլոր ճյուղերի վրա առատ պտուղներ ունեցողին: Արդ, այս նույն օրինակով առաջնորդվենք նաև մարդկանց հարցում. քննենք, ընտրենք մարդու առաքինությունը և վնասակար համարենք միայն այն, ինչը կարող է եղծել նրան:

Եվ արդ, ո՞րն է մարդու առաքինությունը. ո՛չ ունեցվածքը, որ վախենաս աղքատությունից, ո՛չ մարմնի քաջառողջությունը, որ երկնչես հիվանդությունից, ո՛չ բազմության կարծիքը, որ փախչես վատ համբավից, ո՛չ կյանքն ինքնին,

որ քեզ համար սարսափելի լինի մահը, ո՛չ ազատությունը, որ փախչես ծառայությունից, այլ ճշմարիտ և ուղիղ վարդապետությունն ու վարքի ուղղությունը: Իսկ սրանցից ինքը՝ սատանան էլ երբեք չի կարող զրկել մարդուն, եթե նա, ով ունի սրանք, գեղեցիկ ջանքերով խնամելով՝ պահպանի դրանք:

Այս մասին իմացավ այն ամենաչարն ու վայրենին՝ դևը: Սրա համար նա իր ողջ ունեցածից զրկեց Հոբին, ոչ թե, որպեսզի աղքատացնի նրան, այլ որպեսզի ստիպի նրան հայհոյության խոսք ասել: Հարվածեց ու վիրավորեց նրա մարմինը ոչ թե նրան հիվանդացնելու համար, այլ որպեսզի հիմնիվեր քակտի նրա հոգու առաքինությունը: Բայց երբ իր բոլոր մեքենայությունները գործադրեց նրա դեմ, աղքատացրեց մեծահարուստին, և որ մեզ ամեն բանից սոսկալի է թվում, բազում որդիներ ունեցողին անզավակ թողեց, երբ նրա ամբողջ մարմինը կեղեքեց առավել դաժանորեն, քան դահիճները՝ ոմանցը՝ ատյանի հրապարակում. քանի որ նրանց եղունգներն այնպիսի ակոսներ չբացեցին իրենց ձեռքն ընկածների կողերի, ինչպես որդերի բերանները՝ Հոբի մարմնի վրա. երբ նրա մասին նաև ոչ բարի կարծիք տարածեց, քանզի նրա բարեկամները, որ եկել կանգնել էին նրա մոտ, ասում էին, թե նա արժանիորեն է տանջվում, իր մեղքերի համար, և բազում այլ մեղադրանքների խոսքերով խոցում էին նրան: Երբ ոչ միայն քաղաքից, այլ նաև տնից զրկեց նրան, վտարեց օտար քաղաք, նրա համար տուն, միաժամանակ նաև քաղաք դարձրեց աղբակույտը, ոչ միայն ոչ մի վնաս չհասցրեց, այլ իր դարանների միջոցով առավել շքեղ ցույց տվեց նրան, ոչ միայն նրա ունեցվածքից ոչինչ ավար չառավ (թեև այդքան բան հափշտակեց նրանից), այլև առավել հարստացրեց նրա առաքինությունը: Քանզի այդ ամենից հետո նա առավել մեծ համարձակություն ունեցավ, ինչպես սաստիկ ու մեծ մրցության մեջ սխրագործողը:

Արդ, եթե նա, ով այսքան բան կրեց և չվնասվեց (կրեց ոչ թե որևէ մարդուց, այլ դևից, որ առավել դաժան է, քան բոլոր մարդիկ), ապա ի՞նչ պատասխան պիտի ունենան նրանք, ովքեր ասում են, թե՝ «Այսինչը ինձ մեծ տույժ ու վնաս հասցրեց»: Եթե այնքան չարությամբ լցված բանսարկուն, իր բոլոր հնարներն օգտագործելով, իր բոլոր նետերը ձգելով, միաժամանակ իր բոլոր չարիքները թափելով արդարի տան ու մարմնի վրա, ոչ մի վնաս չհասցրեց նրան, այլ ինչպես ասացի, առավել օգուտ տվեց նրան, ապա ինչպե՞ս կարող են ոմանք մեղադրել սրան կամ նրան, որ իրենց իբրև թե մեծ վնաս են հասցրել, և ո՛չ թե առավելապես հենց իրենք իրենց:

Դ. Հապա ինչպե՜ս, կհարցնի որևէ մեկը, մի՞թե սատանան չվնասեց Ադամին, չկործանեց և դրախտից չարտաքսեց նրան: Ո՛չ նա, այլ վնասվողի մեղքը. նախահայրը զգոն և արթուն չեղավ: Քանզի նա, ով այդպիսի և այդքան հնարներ գործադրելով՝ չկարողացավ սասանել Հոբին, ինչպե՞ս կարողացավ փոքր ջանքով հաղթել Ադամին, եթե Ադամ ինքը չէր, որ իր անփութությամբ մատնեց իր անձը:

Ուրեմն ի՞նչ. մի՞թե ոչ մի վնաս չկրեց նա, ում զրպարտեցին, դավաճանեցին, ունեցվածքը հափշտակեցին, զրկեցին առհասարակ ամեն բանից, հայրենի ժառանգությունից և տառապանքի մատնեցին ծայր աղքատության մեջ: Ոչ մի վնաս չկրե՛ց, այլ մեծ օգուտ, եթե արթուն է: Ասա՛ ինձ՝ ի՞նչը վնասեց առաքյալներին. մի՞թե նրանք մշտապես չէին մաքառում քաղցի, ծարավի ու մերկության դեմ և մի՞թե դրանց շնորհիվ է՛լ առավել շքեղ ու անվանի չեղան և մեծ օգնություն չգտան Աստծուց: Իսկ Ղազարոսին ի՞նչ վնաս հասցրին հիվանդությունը, վերքերը, աղքատությունն ու խնամողների բացակայությունը. թերևս հենց այդ ամենից նրա համար առավել մեծ պսակներ կազմվեցին: Ի՞նչ արեցին Հովսեփին հայրենի երկրում և օտարության մեջ վատ համբավ ունենալը (քանզի չնացող և վատաբարո համարվեց), ի՞նչ արեց նրան ծառայությունը, ի՞նչ արեց հայրենի երկրից հեռացումը. մի՞թե հենց դրանց համար մենք առավել չենք հիանում ու զարմանում նրանով:

Իսկ ի՞նչ ասեմ նրա արտաքսման, նժդեհության, աղքատության, անբարի համբավի ու ծառայության մասին: Աբելին ի՞նչ վնաս հասցրեց ինքը՝ մահը՝ բռնի, անժամանակ, իր իսկ հարազատի ձեռքով նյութված, մի՞թե դրա պատճառով ամբողջ տիեզերքը չի գովում նրան:

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես խոսքս խոստացածներից առավելը ցույց տվեց մեզ: Այն հայտնի կերպով մեզ ոչ միայն ցույց տվեց, թե չկա մի մարդ, որ ուրիշից վնասվի, այլ մանավանդ, որ մեծ շահ ունեն նրանք, ովքեր հսկում են իրենց անձերին:

«Հապա ինչի՞ համար են պատիժներն ու տանջանքը, կհարցնի մեկը, ինչի՞ համար են գեհենը, սպառնալիքները, եթե ոչ ոք չի վնասվում, և ոչ ոք չի վնասում»: Ի՞նչ ես ասում, ինչո՞ւ ես խառնում խոսքերը. ես չասացի, թե ոչ ոք չի վնասում, այլ թե՝ ոչ ոք չի վնասվում: Հապա ինչպե՞ս է, որ շատերն են վնասում, բայց ոչ ոք չի վնասվում: Այնպես, ինչպես այժմ ուսուցանեցի: Ինչպես որ Հովսեփին վնասեցին նրա եղբայրները, բայց նա ոչ մի վնաս չկրեց, Աբելին դարան նյութեց Կայենը, բայց նա թակարդի մեջ չընկավ:

Պատուհասներն ու տանջանքները դրա համար են. Աստված ոչ թե չարչարվողների առաքինության համար վերացնում է պատիժը, այլ մեղավորների պղծության պատճառով սահմանում է պատիժներ: Թեպետև դավաճանների կողմից չարիք կրողները առավել փառավոր են դառնում, բայց այդ ոչ թե դավաճանողների մտադրությունից է, այլ տառապողների արիությունից: Դրա համար վերջինների համար սահմանվեցին ու պատրաստվեցին պարգևներ նրանց՝ իմաստությունը սիրելու համար, իսկ առաջիններին՝ պատիժներ՝ չարության համար:

Ունեցվածքիցդ զրկվեցի՞ր, ասա՞ «Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա և մերկ էլ կվերադառնամ» (Հոբ Ա 21): Դրան ավելացրու և առաքելական այն խոսքը, թե՝ «Որովհետև ոչինչ չբերեցինք աշխարհ, ոչ էլ պիտի կարողանանք տանել» (Ա Տիմ. Զ 7): [Քո մասին] չար խոսքե՞ր լսեցիր, և բյուր անարգանքներով անարգեցի՞ն քեզ, հիշի՛ր այն խոսքը, որ ասում է. «Վա՛յ ձեզ, երբ բոլոր մարդիկ լավ խոսեն ձեր մասին» և՝ «Ուրա՛խ եղեք և ցնծացե՛ք, երբ մարդիկ ձեր մասին չար անուն հանեն» (տե՛ս Ղուկ. Զ 26, 22): Վտարվեցիր ու աքսորվեցի՞ր, մտածի՛ր, որ դու այստեղ հայրենիք չունես, իսկ եթե լավ իմանաս, քեզ հրամայվեց ամբողջ երկիրն իբրև օտարություն համարել: Ծանր հիվանդացա՞ր, ասա՛ դու առաքելական այն խոսքը, թե՝ «Թեպետև մեր այս արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրէ» (Բ Կոր. Դ 16): Բայց թերևս մեկը բռնի մահվա՞ն ենթարկվեց, հիշի՛ր դու Հովհաննեսին և բանտում կտրված նրա գլուխը, որը սկուտեղի վրա դրված՝ իբրև պարգևի մաս տրվեց պոռնկական պարի համար: Մտածի՛ր դրա փոխարեն հատուցման մասին, քանի որ այս բոլոր նեղությունները, որ ուրիշների կողմից հանիրավի հասնում են մարդու վրա, և՛ մեղքերն են քավում, և՛ արդարություն պատրաստում: Այսքա՛ն մեծ է սրանց օգուտը նրանց համար, ովքեր քաջասրտորեն համբերում են դրանց:

Ե. Եվ արդ, եթե ո՛չ ունեցվածքի կորուստը, ո՛չ զրպարտությունները ու անարգանքները, ո՛չ արտաքսումն ու աքսորը, ո՛չ հիվանդությունն ու չարչարանքը և ո՛չ էլ մահը, որ ամեն բանից ահավոր է համարվում, ոչ մի վնաս չեն հասցնում նրանց, ովքեր կրում են դրանք, այլ մեծապես և առավելապես օգուտ են տալիս, ապա ցույց տուր ինձ՝ ինչի՞ց կարող է վնաս կրել որևէ մեկը, եթե այս ամենը որևէ կերպ չեն վնասում նրան: Ես կկանամ ապացուցել հակառակը, որ հատկապես նրանք, ովքեր մեծապես վնասվեցին, տանջվեցին ու անբժշկելի վերքեր կրեցին, իրենք են, որ այդ ամենը պատճառեցին ուրիշներին:

Ո՞վ է առավել խեղճ ու թշվառ, քան Կայենը, որ նույն կերպ վարվեց իր հարազատի հետ: Ո՞վ է ավելի ողորմելի, քան Փիլիպպոսի կինը, որ գլխատեց Հովհաննեսին: Ովքե՞ր են առավել [ավաղելի], քան Հովսեփի եղբայրները, ովքեր վաճառեցին նրան և վտարանդի դարձրին: Ո՞վ է սատանայից առավել ողորմելի, որ այդքան չարիքներով վարակեց Հո-

բին, քանի որ նա ոչ միայն այլ հանցանքների, այլ նաև այդ չարամտության համար պիտի կրի մեծ պատիժ: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես այստեղ նույնպես մեր խոսքը խոստացվածից ավելին ցույց տվեց ձեզ:

Փորձվողներին ոչ միայն ոչ մի վնաս չեն հասցնում դարան նյութողները, այլև այդ ամենը վերադառնում, կուտակվում է դավողների գլխին: Հիրավի, եթե մարդու արժանիքը չեն ո՛չ հարստությունը, ո՛չ ազատությունը, ո՛չ հայրենիքում բնակությունը և ո՛չ ասածներից որևէ այլ բան, այլ հոգու առաքինությունները, ուրեմն, երբ վնասը պատճառվում է այս ամենին, մարդկային առաքինությունները ոչնչով չեն վնասվում:

Իսկ եթե մեկը վնաս պատճառի հոգևոր իմաստությա՞նը: Այս դեպքում նույնպես, եթե վնասվում է, վնասվում է ոչ թե ուրիշներից, այլ ինքն իրենից՝ իր իսկ անձից: Թերևս կհարցնես՝ ինչպե՞ս ինքն իրենից ու իր անձից: Երբ մեկը ծեծի ենթարկվեց մեկ ուրիշի կողմից, կողոպտվեց կամ մեկ այլ դժնդակ անիրավության ենթարկվեց, հայհոյության մի բառ ասաց, մեծապես վնասվեց. բայց ոչ իրեն հարստահարողից, այլ իր իսկ փոքրոգությունից: Ես վերևում արդեն ասացի և այժմ դարձյալ կասեմ, թե չկա մի մարդ, որքան էլ ապիրատ լինի, որ կարող լինի առավել չարիք պատճառել որևէ մեկին, քան անագորույն դևը՝ մեր անհաշտելի թշնամին, ոխերիմ բանսարկուն, բայց այն դժնդակ դևն էլ ոչ մի կերպ չկարողացավ սասանել և կործանել նրան, ով ապրում էր [Նոր] Օրենքից ու շնորհներից առաջ, թեպետև բոլոր կողմերից այդքան և այդպիսի դառը նետեր տեղացին նրա վրա: Այսպիսին է հոգու արիությունը:

Իսկ Պողո՞սը. մի՞թե չկրեց այնքան դառնություններ, որոնք դժվար է հաշվելը. կապանքներով կապված՝ նստեց բանտում, շղթաներով ամրացվեց, վտարվեց ու վտարանդի շրջեց, գանակոծության ենթարկվեց հրեաների կողմից, քարկոծվեց, ոչ միայն կաշվե ջլերով, այլ նաև գավազաններով թիկունքը պատռվեց, նետվեց ծովերը, բազում անգամ ընկավ ավազակների ձեռքը, անդադար զրկանքների ենթարկվեց թշնամիներից ու ծանոթներից, բյուրավոր դարանակալություններով դավաճանեցին նրան, պատերազմեց սովի ու մերկության դեմ, բազում ուրիշ աղետներ ու տառապանքներ կրեց մշտապես. բոլորը մեկ առ մեկ չթվելու համար ասենք՝ ամեն օր մեռավ:

Բայց այսքան ու այսպիսի տառապանքներ կրելով հանդերձ՝ նա ոչ միայն ոչ մի հայհոյության խոսք չասաց, այլև ուրախանում ու պարծենում էր սրանցով : Մի տեղում ասում է. «Ուրախ եմ իմ չարչարանքների համար» (Կող. Ա 24), և դարձյալ՝ թե՝ «Եվ ոչ այսչափ միայն, այլև պարծենում ենք, ասում է, մեր նեղությունների մեջ ևս» (Հռ. Ե 3): Եվ եթե նա, այդքան չարչարանքներ կրելով, ուրախ էր և պարծենում էր, ի՞նչ թողություն պիտի գտնես և ինչպիսի՞ պատասխան պիտի տաս, որ դրանցից մի փոքրիկ մաս անգամ չկրելով՝ հայհոյում ես:

Զ. Բայց հարստահարվելով՝ տանջվում եմ, ասում ես, և եթե չհայհոյեմ, իմ ամբողջ ունեցվածքից զրկվելով, ողորմություն տալ չեմ կարող: Այդ խոսքերը պատրվակ են՝ հնարված պատճառներ. քանզի թեև դա քեզ իսկապես ցավ է պատճառում, բայց լա՛վ իմացիր, որ աղքատությունը չի խոչընդոտում ողորմությանը: Որքան էլ աղքատ լինես, ավելի աղքատ չես, քան այն կինը, ով միայն մի բուռ ալյուր ուներ (Գ Թագ. ԺԷ 12), և նա, ով ընդամենը երկու լումա ուներ (Ղուկ. ԻԱ 2): Նրանք երկուսն էլ, իրենց ամբողջ ունեցածը տալով կարոտյալներին, նորանշան զարմանքի առիթ տվեցին, և այդքան աղքատությունը չխափանեց այդքան մեծ մարդասիրությունը, այլ երկու խերևեշի ողորմությունը այնքան առատաձեռն ու պատվական եղավ, որ ստվերեց բոլոր մեծահարուստների բոլոր ողորմությունները և հաղթեց շատ բան գցողներին մտքի հարստությամբ և ջերմեռանդության առատությամբ: Այստեղ նույնպես ոչ մի վնաս չես կրում, այլ մեծ օգուտ, քանզի փոքրիկ նվիրատվությամբ շատ բան տվողներից առավել պայծառ պսակների ես արժանանում:

Բայց որքան էլ խոսենք այս մասին, միևնույն է, մարմնասեր, այս կյանքի հաճույքների մեջ թաղված ու փափկակյաց մարդիկ չեն կարողանում հեշտությամբ թողնել այս դյուրաթառամ ծաղիկները. այդպիսին են այս կյանքի հաճույքները, և չեն ուզում հեռանալ այս ստվերներից: Բայց անգամ մարդկանցից լավագույններն են ձգտում այդ և այլ բարիքներն ունենալ, իսկ ավելի խղճալիներն ու թշվառները առավելագույն մասով ընկնում են այստեղի բարիքների ետևից, իսկ այնտեղի՝ ավելի քիչ չափով: Ե՛կ այդ իրերի աղտեղի ու տգեղ երեսներից հեռացնենք գեղանի և սոսկ արտաքին կերպարանք ունեցող դիմակները և ցույց տանք այդ անառակացած կնոջ գարշելիությունը:

Քանզի հենց այսպիսին է կյանքը նրանց, ովքեր ձգտում են հարստության և իշխանության՝ զազրելի, տգեղ, լի բազում գարշությամբ, տհաճ, անտանելի և դառնությամբ լցված:

Այս ամենն են, որ ամենայն թողությունից զրկում են դրանցով գերվածներին, քանի որ նրանց համար ցանկալի ու խիստ փափագելի է այս կյանքը, որ լեցուն է բազում տհաճություններով ու դառնությամբ, բյուրավոր չարիքներով, վտանգներով, արյամբ, սարսափներով, վիհերով, սպանություններով, ահուդողով, նախանձով, չարակնությամբ, որոգայթներով, ամենօրյա հոգսերով ու վարանումներով, որ չունի ոչ մի օգուտ և այնքան աղետների դիմաց ոչ մի պտուղ չի բերում, բացի տանջանքից, պատուհասից և հավիտենական չարչարանքներից:

Թեև այսպիսին է, բայց շատերին է այն երանելի ու անձկալի թվում, որ գերվածների անմտության նշանակն է և ոչ թե իրական երջանկություն: Այդպես փոքր երեխաներն են հիանում և ուրախանում են իրենց խաղալիքներով, իսկ հասուն մարդկանց վերաբերող բաների մասին պատկերացում անգամ չունեն: Բայց նրանք թողություն ունեն իրենց մանուկ հասակի պատճառով, իսկ սրանք չունեն ոչ մի արդարացում՝ հասուն տարիքում տղայական միտք ունենալով և լինելով ավելի անմիտ, քան նրանք են:

Ինչի՞ համար է նախանձելի հարստությունը, ասա՛ դու ինձ, և հարկ է, որ մենք հենց սրանից սկսենք մեր խոսքը, որովհետև շատերը, ովքեր վարակված են այս ծանր ախտով, այն համարում են քաջառողջությունից, կյանքից, բազմության գովասանքից, բարի համբավից, հայրենիքից, ընտանիքից, բարեկամներից, ազգակիցներից և ամեն բանից առավել պատվական: Այս հրդեհի բոցը բարձրացել է մինչև ամպերը, այս հնոցի կրակը տարածվելով՝ կլանել է ծովն ու ցամաքը: Չկա բոցը հանգցնող, իսկ բորբոքողները առհասարակ բոլորն են՝ ինչպես նրանք, ովքեր արդեն գերվել են, այդպես էլ նրանք, ովքեր դեռևս չեն գերվել, որպեսզի գերվեն: Յուրաքանչյուր ոք կարող է տեսնել, որ բոլորը՝ տղամարդ թե կին, ծառա թե ազատ, հարուստ թե աղքատ, իր կարողության չափով բարձած՝ գիշեր ու ցերեկ բեռներ են բերում՝ այս բոցի համար ճարակ պատրաստելու. ո՛չ փայտի և ո՛չ խռիվի բեռներ, որովհետև այդպիսին չէ բոցը, այլ հոգու և մարմնի անիրավության և անօրինության: Հենց սրանցով է բորբոքվում այդպիսի բոցը: Հարուստները երբեք սահման չեն դնում այդ անպատշաճ կրքին, եթե անգամ ամբողջ տիեզերքն իրենց բռի մեջ ունենան, իսկ աղքատներն էլ ջանում են հավասարվել նրանց, և այսպես, մի ինչ-որ անբուժելի կատաղություն, անսանձ մոլեգնություն, անդարմանելի ախտ ըմբռնել է բոլորի հոգին:

Այս սերը թուլացրել, պարտության է մատնել ու հոգուց դուրս մղել բոլոր մյուս սերերը՝ ընկերական ու ազգականական. ի՞նչ եմ ասում՝ ընկերական ու ազգականական, երբ կնոջ ու զավակների սերը դեռին ընկավ ու ոտնատակ եղավ (նրանցից առավել սիրելի ի՞նչ կա մարդկանց համար), քանի որ այս բարբարոս ու անագորույն տիկինը իշխում է բոլորի հոգուն: Հիրավի, այն, իբրև մի տմարդի թագուհի, իբրև մի դաժան բռնակալ, իբրև անագորույն բարբարոս, իբրև հրապարակում հռչակված գեղապանծ պոռնիկ՝ պղծում, սանձահարում, բյուրավոր վտանգներով ու պատուհասներով լլկում է նրանց, ովքեր ընտրեցին՝ ծառայելու նրան:

Ինքը, որ սոսկալի է ու դաժան, վայրենի ու անընտել, բարբարոս, գազանադեմ ու գայլից ու առյուծից առավել ամեհի, իր կողմից գերվածներին գեղեցիկ, ցանկալի ու մեղրից ավելի քաղցր է երևում և նրանց դեմ անդադար սուսեր ու զենք է կռում, անդունդներ է փորում, ձգում է դեպի վիհերն ու ստորջրյա ժայռերը, բյուրավոր տանջանքների որոգայթներ հյուսում, և նրանք, ովքեր գերվեցին նրանով և ովքեր ցանկանում են գերվել, կարծում են, թե այն երջանիկ է դարձնում իրենց: Ինչպես խոզն է հեշտանում է ու փափկանում՝ թավալվելով կեղտի ու տիղմի մեջ, և բզեզներն են անդադար դեգերում աղբակույտերի շուրջը, այդպես էլ նրանք, ովքեր բռնվել են արծաթասիրությամբ, ավելի թշվառական են, քան այս կենդանիները. այստեղ պղծությունն ավելի մեծ է, իսկ տիղմն՝ առավել գարշահոտ: Քանզի այս կրքին տրվելով՝ նրանք մտածում են մեծ վայելք քաղել դրանից. որ կախված է ոչ թե այդ բանի էությունից, այլ այն մտքից, որը տառապում է այդպիսի անմտությամբ: Սա ավելի վատթար է, քան անասնական անմտությունը: Ինչպես որ տիղմն ու աղբակույտը չեն այն բանի պատճառը, որ կենդանիները մնում են դրանց մեջ, այլ նրանց մեջ թաղված կենդանիների անմտությունը, այդպես էլ իմացիր այդ մարդկանց մասին:

Է. Իսկ ինչպե՞ս բժշկենք այս ախտով վարակվածներին, ինչպե՞ս: Եթե միայն նրանք կամենան բացել իրենց ականջները, պարզել իրենց միտքը և ողջունել մեր խոսքերը: Անբան [անասուններին] անհնարին է ուղղել կամ հեռացնել այդ անմաքուր թավալումից, որովհետև զուրկ են բանականությունից, իսկ մտքով ու բանականությամբ զարդարված լավագույն արարածներին, այսինքն՝ մարդկանց, դյուրին և շատ հեշտ է հեռացնել այդ տիղմից, այդ գարշանքից, աղբից ու պղծությունից, եթե միայն նրանք կամենան:

Ինչո՞ւ է հարստությունը քեզ շատ փափագելի թվում, ո՛վ մարդ. թերևս այն վայելքի՞ համար, որ քաղում ես սեղանից, թերևս պատվի ու անձիդ պահապանների՞ համար, որոնք հենց դրա համար են քեզ հաճոյանում, թերևս այն բանի համար, որ վրեժխնդի՞ր լինես կարողության համար քեզ վնասողներից և ահարկո՞ւ դառնաս բոլորի համար: Քանզի վայելքից, մարդահաճությունից, ահից ու վրեժխնդրությունից բացի ներկայացնելու մեկ ուրիշ պատճառ չունես, որովհետև հարստությունը քեզ ո՛չ իմաստուն է դարձնում, ո՛չ պարկեշտ, ո՛չ հեզ կամ զգոն, ո՛չ բարեհամբույր, ո՛չ մարդասեր, ո՛չ բարկությանն իշխող, ո՛չ որովայնին հրամայող, ո՛չ հաճույքներից վեր, ո՛չ չափավորություն է դաստիարակում, ո՛չ խոնարհվել է ուսուցանում և ո՛չ առաքինության այլ մասեր է բերում և արմատավորում հոգու մեջ:

Դու չես կարող ասել, թե այդչափ ջանքեր թափեցիր ու ցանկացար այն այդ պատճառներից մեկի համար, քանի որ այն ոչ միայն չի կարող տնկել կամ մշակել որևէ բարի բան, այլ եթե մարդու մեջ արդեն իսկ արմատացած է գտնում մի բարի բան, խաթարում, խափանում, փչացնում, արմատախիլ է անում և ներս է բերում դրա հակառակը՝ չափից ավելի անժուժկալություն, անվայել սրտմտություն, հանիրավի բարկություն, ամբարտավանություն, հպարտություն, անմտություն: Բայց ես չեմ խոսելու դրանց մասին: Քանզի նրանք, ովքեր գերված են այդ ախտով, քանի դեռ անձնատուր և այդ պատճառով էլ ծառա են վայելքին, չեն հանդուրժի լսել առաքինության ու մոլության մասին և տեսնել իրենց ամբաստանված, միաժամանակ նաև դատապարտված:

Ե՛կ այսուհետև թողնենք նրանց մասին խոսքը, խոսենք այլ բաների մասին և տեսնենք, թե ի՞նչ վայելք է պատճառում հարստությունը, և կամ ինչպիսի՞ պատիվ: Ես միանգամայն հակառակն եմ տեսնում ամեն բանում:

Եվ եթե կամենում եք, նախ քննենք մեծահարուստների ու աղքատների սեղանը և տեսնենք, թե դրանից ուտողներից ովքե՞ր են, որ առավել մաքուր ու իսկական հաճույք են քաղում: Նրա՞նք, ովքեր ամբողջ օրը սեղան բազմած՝ ընթրիքը ճաշին են խառնում և պայթեցնում են իրենց որովայնը, խռովում զգայարանները, կերակուրների դժվարակիր բեռով

անդնդասույզ են անում իրենց նավը, իրենց մարմինը, ինչպես նավաբեկության ժամանակ, իրենց ոտքերը, ձեռքերը, լեզուն, ամբողջ մարմինը կապկպում արբեցության ու չվայտության կապանքներով առավել սաստիկ, քան երկաթե շղթաները, և ո՛չ կարողանում են քնել հանգիստ ու քաղցր քնով, ո՛չ ազատ են սարսափելի երազներից, առավել թշվառ են դառնում, քան դիվահարները՝ կամավորապես իրենց հոգու մեջ ընդունելով դևին, իրենց ծառաների համար ծաղրի տեսարան են, իսկ նրանցից ամենախոնարհների համար՝ ողբի ու արտասուքի առարկա. չեն ճանաչում իրենց առջև գտնվողներին, չեն կարողանում ոչինչ ասել կամ լսել, այլ ուրիշների ձեռքերով բերվում և անկողին են դրվում: Թե՞ նրանք, ովքեր արթուն և առույգ են, իրենց պետքերին չափ են սահմանում, նավարկում քամու ողղությամբ և միայն քաղցելիս ու ծարավելիս մեծապես վայելում ուտելիքն ու ըմպելիքը:

Քանզի չկա մի բան, որ այնպես առիթ տա վայելքի և քաջառողջության, ինչպես քաղցելուց ու ծարավելուց հետո միայն սեղանին մոտենալը, միայն անհրաժեշտ կարիքը լրացնելը, սահմանը չանցնելն ու մարմնի վրա նրա կարողությունից ավելի բեռ չկապելը:

Ը. Իսկ եթե խոսքերս քեզ չեն համոզում, նայի՛ր նրանցից յուրաքանչյուրի մարմնին էլ, հոգուն էլ: Միթե՞ նրանք, ովքեր չափավորությամբ ու պարկեշտությամբ են ապրում (դու իմ դեմ մի՛ բեր երբեմն պատահող այն դեպքերը, երբ ոմանք հիվանդանում են այլ պատճառներով, այլ դատի՛ր ըստ այն բանի, որ պատահում է մշտապես). չէ՞ որ նրանք, ովքեր չափով են կերակուր ուտում, նրանց և՛ մարմինն է կորովի, և՛ զգայարաններն են անխաթար, և՛ նրանք իրենց գործերն անում են մեծ թեթևությամբ, իսկ չափն անցնողների մարմինները տկար են, բոլոր տեսակի մոմերից կակուղ և ենթակա բազում հիվանդությունների: Շատ շուտ վրա են հասնում և՛ հոդատապը, և՛ տհաճ դողը, և՛ անժամանակ ծերությունը, և՛ գլխացավը, և՛ ջղաձգությունը, և՛ ստամոքսի ու աղիների խանգարումը, և՛ ախորժակի խաթարումը. նրանք անընդհատ կարիք ունեն բժիշկների, անդադար դեղերի և ամենօրյա բուժումների:

Մի՞թե դրանք են վայելքները, ասա՛: Ո՞վ նրանցից, ովքեր գիտեն, թե ինչ է վայելքը, այդպես կանվանի դրանք: Վայելքը լինում է այն ժամանակ, երբ հետևում է ախորժակին, բայց ուր վայելքները կան, իսկ ախորժակ՝ ոչ, այնտեղ հանդում է վայելքը և ի չիք լինում:

Այդ պատճառով էլ հիվանդ մարդիկ, որքան էլ համեղ կերակուրներ ունենան իրենց առջև, նողկում են և սրտի դժկամությամբ ընդունում դրանցից, որովհետև չունեն ախորժակ, որը քաղցրացնում է վայելքը: Քանզի ո՛չ կերակուրների և ո՛չ էլ ըմպելիքների բնությունը, այլ ճաշակողների ախորժակն է ծնում ցանկություն և պատճառում վայելք: Այս մասին մի իմաստուն մարդ, ով ճշգրիտ հասկացավ վայելքը և կարող էր դրա մասին իմաստասիրել, ասաց. «Կուշտ մարդն արհամարհում է խորիսխը» (տե՛ս Առ. ԻԷ 7)՝ ցույց տալով, որ վայելքը ոչ թե կերակուրների մեջ է, այլ ճաշակողների ցանկությունների:

Նույն պատճառով էլ մարգարեն, թվելով սքանչելիքները, որ տեղի ունեցան Եգիպտոսում և անապատում, շատ այլ բաների հետ ասում էր նաև այս, թե՝ «Ժայռից հոսող մեղրով հագեցրեց նրանց» (Սաղմ. Զ 17): Բայց արդ, ոչ մի տեղ չի երևում, որ ժայռը նրանց համար մեղր կաթեցրեց. հապա ի՞նչ են նշանակում այս խոսքերը: Որովհետև հրեաները, չարչարանքներից ու ճանապարհից խիստ հոգնած և սաստիկ ծարավից տոչորվելով, ընկան սառը աղբյուրների վրա՝ մեծապես վայելելով ծարավից հետո, կամենալով ցույց տալ այն աղբյուրների պատճառած վայելքը՝ մեղր անվանեց ջուրը ոչ թե, որովհետև ջուրը մեղր դարձավ, այլ որովհետև ջրի վայելքը հավասարվում էր մեղրի քաղցրությանը. քանզի նրանից խմողները պապակած դիմեցին դեպի այն:

Եվ արդ, եթե այս այսպես է, և ոչ ոք չի կարող հակառակվել սրան, որքան էլ անմիտ լինի, ապա մի՞թե պարզ չէ, որ աղքատների սեղանից է մաքուր, պարզ ու գեղեցիկ վայել-

քը, իսկ մեծահարուստների սեղանից՝ անհամություն, դարշանք և պղծություն, և ինչպես այն իմաստուն այրն է ասում. «Քաղցրը դառն է թվում» (Առ. ԻԷ 7):

Թ. Բայց թերևս կասես, թե հարստությունն իրեն ունեցողների համար պատիվ է ստեղծում և հեշտացնում է թշնամիներից վրեժ լուծելը: Արդ, ասա՛ ինձ, դրա՞ համար է քեզ հարստությունը ցանկալի և ողջ հոգով փափագելի թվում, որ մեր մեջ սաստիկ ցանկություններ է արթնացնում, գործի է դնում բարկությունը, փառամոլությունը հասցնում բարձրագույն աստիճանի ու դարձնում ամբարտավան: Հարկ է թիկունք դարձնել, փախչել դրանից, առավելապես այն բանի համար, որ ինչ-որ վայրենի ու ամեհի գազաններ է ներմուծում մեր մտքի մեջ և զրկում մեզ բոլորի մոտ ճշմարիտ հարգանքից և դարձնում խաբված մեկ այլ տեսակի հարգանքից, որ դրա գույներով է միայն սնգուրված և ստիպում է այդ հարգանքը իսկական համարել, թեև այն իր էությամբ այդպիսին չէ, այլ միայն արտաքուստ է այդպիսին թվում: Նման պոռնիկ կանանց գեղեցկությանը, որ ներկերից ու սնգույրներից է գողացված. գեղեցկությունից զուրկ լինելով՝ նրանք իրենց պիղծ ու տգեղ երեսները գեղանի ու բարետես են դարձնում նրանց համար, ովքեր մի անգամ խաբվում են նրանցից, թեև ինքը գեղեցիկ չէ, այդպես էլ հարստությունն է ստիպում մարդահաճությունն ընդունել իբրև հարգանք:

Մի՛ նայիր գովասանքներին. դրանք ահից ու շողոքորթությունից են լինում, դրանք ներկեր ու սնգույրներ են, այլ մեկ-մեկ բաց արա բոլոր նրանց խղճմտանքը, ովքեր այդպես մարդահաճություն են անում քեզ, և ներսում կտեսնես բյուր դատապարտողներ, որոնք քո դեմ բողոք բարձրացնելով՝ կգոչեն, և թշնամիներիցդ ու հակառակորդներիցդ առավել կքարշեն քեզնից ու կատեն քեզ: Եվ եթե երբևէ իրադրությունների փոփոխությունը հանի այդ՝ ահից կազմված դիմակը, ինչպես արեգակ, իր ջերմագին շողերով կբացահայտի այն դեմքերը, այդժամ դու շատ պարզ կտեսնես, որ դու անցած ամբողջ ժամանակում մեծապես անարգված ես եղել նրանց կողմից, ովքեր հաճոյանում էին քեզ, և մինչ կարծում էիր, թե նրանց պատիվն ես վայելում, ատում էին քեզ և իրենց մտքում բյուր թշնամանքով ծաղրում, ցանկանում քեզ տեսնել ծայր աղետների ու թշվառության մեջ:

Քանզի ոչ մի այլ բան այնպես պատիվ չի բերում, ինչպես առաքինությունը. պատիվ ոչ ստիպված, պատիվ ոչ կեղծ, ոչ նենգության դիմակով ծածկված, այլ ճշմարիտ և անկեղծ, որ երբեք չեն կարող հափշտակել ժամանակի դժվարությունները:

Ժ. Բայց թերևս կամենում ես վրեժխնդի՞ր լինել քեզ վնասողներից: Սակայն ինչպես արդեն ասացի, հենց դրա համար էլ առավել պետք է փախչել հարստությունից: Այն ստիպում է սուր սրել ինքդ քո դեմ, ենթարկում խստագույն պատասխանատվության ապագայում և քեզ համար անտանելի պատիժներ պատրաստում: Քանզի վրեժխնդրությունը այնքան մեծ չարիք է, որ ընդհատեց Աստծո մարդասիրությունը և չեղյալ համարեց անթիվ մեղքերի՝ արդեն տրված թողությունը:

Քանզի նա, ում տասը հազար քանքարները թողնվեցին, ով սոսկ աղերսով վայելեց այնքան մեծ պարգև, երբ իր նման ծառայից պահանջեց հարյուր դահեկանի պարտքը, այսինքն՝ սկսեց վրեժ փնտրել իր դեմ գործած հանցանքների համար, իր նման ծառայի նկատմամբ խստության պատճառով ընդունեց իր անձի դատապարտությունը: Քանզի հենց այդ և ոչ ուրիշ պատճառով նա մատնվեց դահիճների ձեռքը, տանջալլուկ եղավ, ստիպված եղավ հատուցել բյուր քանքարները, ոչ մի թողություն ու արդարացում չգտավ, այլ կրեց անտանելի տանջանքները, և նրան հրամայվեց հատուցել բոլոր պարտքերը, որոնք մարդասեր Աստված կանխավ թողել էր նրան:

Արդ, հարստությունը քեզ փափագելի է թերևս այն բանի համար, որ քեզ հեշտությա՞մբ է տանում դեպի այդպիսի մեղքը: Բայց հենց այդ պատճառով էլ հարկ է գարշել նրանից, իբրև թշնամուց, իբրև ոսոխից և ահավոր մարդասպանից:

«Բայց, աղքատությունն, ասում է, ծնում է տառապանքներ, հաճախ ստիպում է հայհոյության խոսքեր ասել և հանձն

առնել ծառայական գործեր»: Ո՛չ աղքատությունը, այլ փոքրոգությունը: Ղազարոսն էլ էր աղքատ, շատ աղքատ, աղքատության հետ միասին նաև հիվանդ էր, որ առավել դառն է, քան ամենայն աղքատություն, և որն ավելի անտանելի է դարձնում աղքատությունը, իսկ հիվանդությունն՝ ավելի դառը: Հիվանդության հետ նաև խնամքի բացակայությունն ու բարերարներ չունենալն ավելի ու ավելի էին դառնացնում աղքատությունն ու հիվանդությունը: Սրանցից յուրաքանչյուրն ինքնին անտանելի է, իսկ երբ չկան խնամակալներ, աղետն առավել խիստ է դառնում, բոցը՝ ավելի դժնդակ, ցավը՝ առավել տանջալի, մրրիկն՝ առավել սաստիկ, ալիքները՝ ահարկու, հնոցը՝ առավել բոցավառ: Իսկ եթե մեկը ճշգրիտ քննի, այս ամենին մի չորրորդ բան էլ կավելանա. նրան այնքան մոտ բնակվող մեծահարուստի աներկյուղ անժուժկալությունն ու ճոխությունը: Եվ եթե մեկը կամենա բոցը բորբոքող հինգերորդ բանն էլ գտնել, շատ պարզ կտեսնի այն նրա մոտ:

Քանզի մեծահարուստը ոչ միայն շռայլում էր, այլև օրվա ընթացքում երկու, երեք, կամ ավելի ճիշտ՝ բազում անգամ տեսնում էր նրան, քանզի ընկած էր նրա մուտքի մոտ՝ ներկայացնելով ողորմելի դժբախտության տեսարան, ում մեկ անգամ նայելն իսկ կկակղեցներ անգամ ապառաժ սիրտը, սակայն երբեք չշարժեց այն տմարդիի գութը՝ օգնելու աղքատին. այլ ինքն իր առջև ուներ սիբարյան[1] սեղան, զեղուն գավաթներ, առատորեն լցվող գինի, լավագույն խոհարարների դասեր, պորտաբույծներ ու շողոքորթողներ վաղ առավոտից, նվագածուներ, մատռվակներ, ծաղրածուներ. հնարում ու գործում էր զեխության բոլոր տեսակները, հարբում էր, շվայտանում, հագուստի, սեղանի, հաճույքների ու բազում այլ բաների վրա ծախսում իր ամբողջ ժամանակը, իսկ նրան, ում ամեն օր տեսնում էր դժնդակ սովի, դաժան հիվանդության, այնքան վերքերի, միայնության ու այլ դառը աղետների մեջ, որոնք ծնվում են այս ամենից, նրան իր մտքում անգամ չէր

[1] Սիբարյան, որի բացատրությունն արդեն տվեցինք, բազմախորտիկ սեղանն է անվանում:

ընդունում: Այլ պատառաբույծներն ու մարդահաճները պայթում էին՝ չափից ավելի ուտելով, իսկ այս աղքատը և այդպիսի աղքատը, այդքան աղետներով շրջապատված, մի փշուր անգամ չվայելեց այն սեղանից, թեև այնքան ցանկացավ:

Եվ սակայն այդ ամենից ոչինչ նրան չվնասեց. ո՛չ երբևէ դառնության խոսք ասաց, ո՛չ հայհոյության բառ արձակեց, այլ ինչպես ոսկին է պայծառանում՝ ուժեղ կրակի մեջ մաքրվելով, այդպես էլ նա, այդ տառապանքներից տանջվելով, վեր կանգնեց բոլոր չարչարանքներից և դրանից ծնվող բոլոր խռովություններից: Քանզի երբ աղքատները տեսնում են հարուստներին, նախանձից ու մախանքից հալչում ու մաշվում են և իրենց կյանքը կյանք չեն համարում, այն էլ, երբ կարողանում են գտնել իրենց անհրաժեշտ պարենը, երբ ունեն իրենց խնամողներ, իսկ այս աղքատը (նրա չափ աղքատ չկար), ոչ միայն աղքատ, այլև հիվանդ, որ ոչ մի խնամակալ ու մխիթարող չուներ, այլ ընկած էր քաղաքի, իբրև ծայր ամայության մեջ, մաշվում էր դառնագույն սովից, և տեսնում էր նրան, ով ինչպես աղբյուրներից՝ լցվում էր ամեն բանով, իսկ ինքը մարդկային ոչ մի մխիթարություն չէր ճաշակում և շների առջև էր ընկած իբրև հանապազօրյա սեղան (քանզի նրա մարմինն այնպես էր թուլացել ու հյուծվել, որ նրանց հեռու վանել չէր կարող). ի՞նչ չէր կրի հոգում, եթե չլիներ սաստիկ արի ու չսիրեր իմաստությունը:

Տեսնո՞ւմ ես, որ եթե մարդ ինքն իրեն չվնասի, ոչ մի դժնդակ բան չի կրի, թեպետև բոլորը վնասեն նրան: Ես դարձյալ կրկնում եմ նույն խոսքը:

ԺԱ. Հիրավի, ի՞նչ արեցին հիվանդությունը, խնամքի բացակայությունը, շների մոտ լինելը, այն մեծահարուստի անբարի մերձավորությունը, նրա բազում զեխությունը, հպարտությունն ու ամբարտավանությունը ի՞նչ վնաս հասցրին այս նահատակին. թուլացրի՞ն նրան առաքինության մրցարանում: Ի՞նչը թուլացրեց նրա քաջապինդ հաստատունությունը: Ամենևի՛ն. հակառակը՝ աղետների բազմությունն ու

մեծահարուստի այսպիսի անգթությունն առավել ամրապնդեցին ու կորովի դարձրին նրան, նրա համար բյուրավոր պսակների, հավելյալ մրցանակների, վարձքի մեծացման առիթ և առավել մեծ հատուցման մայր դարձան:

Քանզի նա պսակների արժանացավ ոչ միայն աղքատության համար, ոչ միայն քաղցի, ոչ միայն վերքերի, ոչ միայն շների լիզելու, այլ որ ուներ այնպիսի դրացի, ով ամեն օր տեսնում և միշտ անտեսում էր իրեն, և ինքն արիաբար և մեծ համբերությամբ տարավ այդ փորձությունը, որ ոչ թե քիչ, այլ հույժ շատ մեծացնում էր իր աղքատությունը, միաժամանակ և հիվանդությունն ու միայնությունը:

Իսկ ի՞նչ եղավ երանելի Պողոսին: Մեզ ոչինչ չի արգելում կրկին հիշելու այս այրին: Մի՞թե նա բյուրավոր փորձությունների մրրիկներ չկրեց. արդ, դրանցից ի՞նչ վնաս կրեց նա. մի՞թե գերագույն պսակների չհասավ հենց նրա համար, որ քաղցեց, որ հալումաշ եղավ ցրտի ու մերկության մեջ, որ խոշտանգվեց՝ բազում անգամ ծեծվելով, որ քարկոծվեց, որ ջրասույզ արվեց:

«Բայց, կասես, նա Պողոսն էր՝ Քրիստոսի կողմից կանչված»: Ահա Հուդան էլ էր տասներկուսից մեկը, նա էլ էր կանչված Քրիստոսից. բայց ո՛չ այն, որ նա տասներկուսի թվում էր, և ո՛չ էլ կանչված լինելը նրան ոչ մի օգուտ չտվեցին, քանի որ չուներ առաքինության համար պատրաստ հոգի: Պողոսը և՛ սովի դեմ մարտնչելով, և՛ կարոտելով անհրաժեշտ պարենին, և՛ ամեն օր այնքան տառապանքներ կրելով՝ մեծ զվարթությամբ ընթանում հատում էր ճանապարհը, որ տանում է դեպի երկինք, իսկ Հուդան Պողոսից առաջ էր կանչվել, վայելել էր նույնը, ինչ որ նա, նվիրվել վերին իմաստությանը, հաղորդակից եղել սրբության սեղանին և այն սարսափելի ընթրիքին, ստացել այնքան շնորհներ, որ մինչևիսկ հարություն էր տալիս մեռելներին, սրբում էր բորոտներին և հալածում էր դևերին, և բազմիցս լսելով անուանեցվածք կյանքի մասին, այդքան ժամանակ Իր իսկ՝ Քրիստոսի հետ կենցաղավարելով, իրեն վստահված ունենալով աղքատների համար տրված փողերը, որպեսզի դրանով ինքը բժշկի իր ախտը, քանզի գող էր, այս ամենով հանդերձ նա չփոխվեց դեպի լավագույնը՝ չնայած այնքան ներողամտություն վայելեց: Քրիստոս, իմանալով, որ նա արծաթասեր է և փողի սիրուց կարող է կորչել, ոչ միայն այն ժամանակ չպատժեց նրան դրա համար, այլև որպեսզի վերջ տա նրա ախտին, վստահեց նրան նաև աղքատների համար տրված դրամները, որպեսզի նա, իր ձեռքում ունենալով այն, ինչով կարող էր հագեցնել իր ընչաքաղցությունը, երբեք չկործանվի այն սոսկալի վիհի մեջ՝ փոքրիկ չարությամբ սանձելով մեծը:

ԺԲ. Եվ այսպես ամենուր նրան, ով չի կամենում վնասել ինքն իրեն, ուրիշ ոչ ոք երբևէ վնասել չի կարող. և հակառակը՝ ով չի կամենում զվարթությամբ հսկել և իր կողմից անհրաժեշտն անել, նրան ոչ ոք երբևէ օգնել չի կարող:

Այդ պատճառով էլ Գրքի այս հրաշալի պատմությունները, իբրև բարձր, մեծ և ընդարձակ նկարի մեջ, քեզ համար պատկերում են նախնիների կյանքը՝ պատմությունը շարունակելով Ադամից մինչև Քրիստոսի գալուստը, և քեզ են ներկայացնում ինչպես գլորվածներին, այնպես էլ պսակների արժանացածներին, որպեսզի այդ ամենով խելամուտ դարձնի քեզ, որ նրան, ով չի կամենում վնասել իրեն, ոչ ոք երբևէ վնասել չի կարող, եթե անգամ ամբողջ տիեզերքը դաժան պատերազմ բարձրացնի նրա դեմ: Ո՛չ իրադրության դժվարությունները, ո՛չ ժամանակների փոփոխությունները, ո՛չ իշխանների անիրավությունները, ո՛չ չարագործների բազմությունները, ո՛չ բազմազան աղետները և ո՛չ մարդկային բոլոր դժբախտությունների հավելումը երբեք չեն կարող չնչին չափով իսկ սասանել նրան, ով արի է, զգոն և արթուն, ըստ որում ծույլ, անփույթ և ինքն իր մասին հոգ չտանող մարդուն ոչինչ չի կարող լավագույն դարձնել, եթե անգամ բազում դարմաններ մոտ լինեն:

Այս բանը շատ պարզորեն մեզ ցույց է տալիս և առակը այն մարդկանց մասին, որոնցից մեկը իր տունը չինեց ժայ-

ռի, մյուսը՝ ավազի վրա (Մատթ. Է 24), ոչ թե, որպեսզի մենք ավազ, ժայռ, քարից շինություն և հարկ հասկանանք կամ գետեր, անձրևներ և կատաղի հողմեր, որ փչեցին այդ տան վրա, այլ այդ ամենից հետևություն անենք առաքինության ու մեղքի մասին և խելամուտ լինենք, որ եթե մեկը ինքն իրեն չվնասի, նրան ոչ ոք չի կարող վնասել:

Ապա ուրեմն ո՛չ տեղատարափ անձրևը, ո՛չ սրընթաց գետերը, ո՛չ սաստկությամբ փչող կատաղի քամիները չկարողացան սասանել այն տունը. այն մնաց կանգուն և անսասան, որպեսզի դու սովորես, որ եթե մեկը ինքն իրեն չմատնի, չկա մի փորձություն, որ երբևէ կարողանա սասանել նրան: Իսկ մյուսի տունը հեշտությամբ կործանվեց ոչ թե փորձությունների սաստկության պատճառով (հակառակ դեպքում մյուսին էլ նույնը կպատահեր), այլ իր հիմարության պատճառով. նա ընկավ ոչ թե այն պատճառով, որ հողմեր փչեցին, այլ՝ որ շինված էր ավազի, այսինքն՝ ծուլության և չարության վրա: Քանզի մինչև մրրիկի՝ իր վրա փչելը այն տկար էր և անկումի պատրաստ: Այսպիսի շինությունները, եթե անգամ ոչ ոք չի դիպչում դրանց, ինքնիրեն են տապալվում:

Եվ ինչպես որ սարդոստայներն են իրենք իրենց քանդվում, եթե անգամ ոչ ոք չի կպչում դրանց, իսկ ադամանդը հարվածների տակ էլ մնում է անխորտակելի, ճիշտ այդպես էլ նրանք, ովքեր իրենք իրենց չեն վնասում, եթե անգամ բյուրավոր հարվածներ են ստանում, դառնում են ավելի զորեղ, իսկ ովքեր մատնում են իրենք իրենց, եթե անգամ ոչ ոք չի խռովում նրանց, իրենք իրենց կործանվում են հիմն ի վեր և կորստյան մատնվում: Ինչպես կորստյան մատնվեց ինքը՝ Հուդան, ով ոչ միայն չենթարկվեց այսպիսի և ոչ մի փորձության, այլև մեծագույն խնամածություն վայելեց:

ԺԳ. Կամենո՞ւմ ես՝ նաև ողջ ժողովուրդների (պատմության) լուսաբանությամբ հաստատեմ խոսքս: Ինչպիսի նախախնամություն վայելեց հրեից ազգը. բոլոր երևացող արարածները չպատրաստվեցի՞ն նրանց ծառայելու, նոր ու անսովոր չէ՞ր նրանց ապրելակերպը: Նրանք շուկա չէին ուղարկվում, բայց վայելում էին առանց վճարի ու հաշվի գնածները, ո՛չ ակոս էին բացում, ո՛չ արոր ձգում, ո՛չ հող փորում, ո՛չ սերմ էին ցանում, ո՛չ անձրևների կարիք ունեին, ո՛չ քամիների, ո՛չ տարվա եղանակների, ո՛չ արևի ճառագայթների, ո՛չ լուսնի ընթացքի, ո՛չ քամիների և ո՛չ այսպիսի այլ բաների, ո՛չ կալ էին պատրաստում, ո՛չ կալսում էին պտուղները, ո՛չ քամիների կարիք ունեին հարդը հատիկներից ընտրելու համար, ո՛չ երկանք էին պտտում, ո՛չ փուռ շինում, ո՛չ փայտ ու կրակ էին տուն բերում, ո՛չ հացթուխի կարիք ունեին, ո՛չ կացին էին գործի դնում, ո՛չ մանգաղ սրում և ո՛չ այլ արհեստի՝ ժանեկագործության, ճարտարապետության կամ դերձակության կարիք ունեին, այլ նրանց համար ամեն բան անում էր Աստծու խոսքը:

Նրանք ունեին պատրաստի սեղան՝ առանց քրտինքի և չարչարանքի. այդպիսին էր մանանան՝ միշտ նոր ու թարմ, ո՛չ աշխատանք էր պահանջում նրանցից, ո՛չ չարչարանքով մաշում: Նույնիսկ նրանց հագուստները, կոշիկները, նույն իրենք՝ մարմինները, չէին ենթարկվում իրենց հատուկ ապականությանը. քանզի այդքան երկար ժամանակում նրանց հագուստները չմաշվեցին, նրանց ոտքերը կոշտուկներով չպատվեցին, թեև այդքան շատ էին քայլում: Նրանք չհիշեցին անգամ բժիշկների, դեղերի և այդ արվեստի հետ կապված այլ բաների մասին, այնքան հեռու էր նրանցից ամեն տեսակի հիվանդություն: Քանզի. «Նրանց, ասում է, հանեց Եգիպտոսից ոսկով ու արծաթով, և նրանց ցեղի մեջ հիվանդ չկար» (Սաղմ. ՃԴ 37):

Նրանք այնպես էին ուտում, խմում, ասես այս աշխարհը թողած և այլ՝ լավագույն աշխարհ փոխադրված լինեին: Արեգակի ուժեղ ճառագայթները չէին խոցում նրանց գլուխները, քանզի տապն անջրպետում էր նրանց շրջապատող ամպը, որ ամենուր հովանի էր լինում նրանց և հյուրընկալ ծածկ էր լինում նրանց բոլոր ցեղերի համար:

Ոչ էլ գիշերով էլ ջահի կարիք ունեին՝ խավարը ցրելու

համար, այլ հրե սյունը նրանց համար աղբյուր էր անճառելի լույսի, որ նրանց երկու կարիքներն էր ընծայում՝ միաժամանակ նրանց լուսավորելով և ճանապարհով առաջնորդելով: Քանզի ոչ միայն լուսակերպ էր, այլ նաև բոլոր ուղեցույցներից առավել ճիշտ էր անապատով տանում նրանց անթվելի բազմությունը: Եվ գնում էին նրանք ոչ միայն ցամաքի, այլ նաև ծովի, ինչպես ցամաքի վրայով, համարձակորեն անցան ընության սահմանը՝ անցնելով ահագին ծովի, իբրև կարծր ու ամուր վեմի վրայով: Երբ այդ տարերքը գտնվում էր նրանց ոտքերի տակ, այդժամ նմանվում էր հաստատուն ցամաքի՝ ձգված դաշտերի ու անդաստանների, իսկ երբ թշնամիներին էր ընդունում, դառնում էր ծովի նման. նրանց համար կառք եղավ, իսկ թշնամիների համար՝ գերեզման, նրանց հեշտությամբ անցկացրեց, իսկ նրանց մեծ սաստկությամբ անդնդասույզ անելով՝ կորստյան մատնեց: Ջրերի անկարգ հոսանքները, իբրև իմաստուն ու զգոն այր, միաժամանակ ցույց տվեցին կարգ և հնազանդություն՝ մերթ պահապանի և մերթ դահճի պաշտոն ստանձնելով և նույն մեկ օրում կատարելով հակառակ գործերը:

Իսկ ի՞նչ ասենք ժայռերի մասին, որոնք գետեր բխեցրին, թռչունների երամների մասին, որոնք իրենց բազմությամբ ծածկեցին ամբողջ երկիրը: Ի՞նչ ասենք հրաշքների մասին, որ կատարվեցին Եգիպտոսում, ի՞նչ՝ նոր ու զարմանալի գործերի մասին, որ կատարվեցին անապատում, մրցանակների ու անարյուն հաղթանակների մասին: Քանզի կարծես թե պար էին պարում, այլ ոչ թե պատերազմ մղում, այդպես ընկճեցին իրենց դեմ ելնողներին և առանց զենքի հաղթեցին իրենց տերերին: Իսկ նրանք, ովքեր Եգիպտոսից դուրս իրենց դեմ պատերազմեցին, նրանց հաղթեցին փողեր փչելով ու սաղմոսներ երգելով. և այս ամենն առավել պարեր էին, քան պատերազմ, առավել խորհրդակատարություն, քան մարտ:

Այս բոլոր հրաշքները եղան ոչ միայն նրանց կարիքները լրացնելու համար, այլև որպեսզի նրանք ճշգրտորեն պահպանեին և աստվածճանաչողության վարդապետությունը,

որով սովորեցնում էր նրանց Մովսեսը, և բոլոր կողմերից հնչում էին ձայներ, որոնք քարոզում էին Տիրոջը: Քանզի նույնն էր գոչում ծովը, երբ երբեմն ոտնակոխ էր արվում իր վրայով ընթացողների կողմից և երբեմն ծով դառնում: Նույն ձայնն էին արձակում Նեղոսի վտակները՝ արյան փոխվելով, նաև գորտերը, նույնն էին հայտնում ժողովրդին մորեխի զորքերն ու թրթուրը, անապատում կատարված հրաշքները՝ մանանան, հրե սյունը, ամպը, լորամարգին և բոլոր մյուս բաները այն ժամանակ նրանց համար եղան մատյան և անջնջելի գիրք՝ իբրև շեփորով՝ ամեն օր նրանց մեջ արթնացնելով հիշողությունը և հնչելով նրանց մտքերում:

Բայց այնչափ և այնպիսի նախախնամությունից, անպատմելի բարերարություններից, մեծահրաշ սքանչելիքներից, անճառելի խնամատարությունից, երկար ժամանակ ուսուցանելուց, կրթելուց, հորդորներից, գեղապանծ հաղթությունից, նորահրաշ մրցանակներից, մեծահաց սեղաններից, վտակներ բխեցնելուց, անճառելի փառքերից հետո, որ ունեցան մարդկային բոլոր ազգերի առջև, անշնորհակալ եղան. անմիտները երկրպագեցին հորթին, սկսեցին ծառայել եզի գլխին և իրենց համար աստվածներ փնտրեցին, երբ ունեին հիշատակները Աստծու՝ նոր տրված երախտիքների, որոնք կատարվեցին Եգիպտոսում, և իրենք վայելում էին դրանք:

ԺԴ. Իսկ նինվեացիները՝ բարբարոս և այլազգի, հաղորդ չեղան այսպիսի ոչ մի բանի՝ ոչ մեծի և ոչ փոքրի. ո՛չ պատմությանը, ո՛չ հրաշքներին, ո՛չ գործերին, ո՛չ խոսքերին. տեսան միայն մի մարդու՝ նավաբեկությունից փրկված, ով չէր ապրել իրենց մեջ, ում տեսնում էին առաջին անգամ, ով մտել և ասում էր իրենց. «Եվս երեք օր, և Նինվեն պիտի կործանվի» (տե՛ս Հովն. Գ 4): Այդ պարզ խոսքերից այնպես փոխվեցին, ուղղվեցին և իրենց չարիքներից հեռանալով՝ ապաշխարությամբ առաքինության դիմեցին, որ շրջեցին Աստծու վճիռը, կասեցրին քաղաքի կործանումը, Աստծու սաստիկ բարկությունը մարեցին և փրկվեցին բոլոր չարիք-

ներից, քանզի. «Աստված տեսավ, ասում է, որ բոլորը ետ էին կանգնել իրենց չար ճանապարհներից և առ Աստված դարձել» (Հովն. Գ 10):

Ինչպե՞ս դարձան, ասա՛ ինձ. չէ՞ որ մեծ էր նրանց չարությունը, անպատմելի՝ պղծությունները, դժվարբուժելի՝ վերքերը, որոնց մասին հիշատակում է մարգարեն՝ ասելով. «Նրանց չարությունը բարձրացավ մինչև երկինք» (տե՛ս Հովն. Ա 2) ՝ նրանց չարիքների մեծությունը նշեց՝ այդ վայրից հեռու լինելով: Այդքան մեծ պղծությունը, որ այնքան էր աճել ու բարձրացել, որ հասել էր երկնքին, նրանք երեք օրում՝ այդքան կարճ ժամանակում, մի քանի բառի միջոցով, որ լսեցին մի մարդուց՝ անծանոթ, օտար, նավաբեկության ենթարկված, այնպես լուծեցին, այնպես ջնջեցին, այնպես իրենց միջից սրբեցին, մինչև վայելեցին այսպիսի խոսքերը. «Եվ Աստված տեսավ, որ նրանցից յուրաքանչյուրը ետ է կանգնել իր չար ճանապատից, և Աստված զղջաց այն չարիքների համար, որ ասել էր, թե կանի նրանց» (Հովն. Գ 10):

Տեսնո՞ւմ ես, որ նա, ով արթուն է և հսկող, ոչ միայն մարդկանցից ոչ մի վնաս չի կրում, այլ նաև ետ է դարձնում Աստծու սաստիկ բարկությունը. իսկ նա, ով մատնում է իր անձը և վնասում իրեն, թեպետև բյուր երախտիքների բաժնեկից լինի, օգուտ չի ունենա: Ո՛չ Իսրայելի ժողովրդին որևէ օգուտ տվեցին այնքան սքանչելիքները, և ո՛չ Նինվեացիներին վնասեց այդ սքանչելիքներին բաժնեկից չլինելը: Բայց քանի որ նրանք բնությամբ զգոն և ուշիմ էին, այդ կարճ ժամանակում դեպի լավագույնը փոխվեցին, թեև բարբարոս էին, այլազգի, երբևէ չէին լսել աստվածային պատգամներ և շատ հեռու էին Պաղեստինից:

ԺԵ. Իսկ երեք մանուկների առաքինությանը ի՞նչ վնաս հասցրին չարիքները, որ հասան նրանց վրա. ո՞չ այն ժամանակ, երբ նրանք տակավին պատանի էին և շատ երիտասարդ, շատ վաղ հասակում ենթարկվեցին տարագրության դաժան տանջանքների ու գերության, բազմաժամանակյա պանդխտության՝ զրկվելով միաժամանակ հայրենիքից, տնից, տաճարից, զոհասեղանից, զոհաբերություններից, պատարագներից, նվիրատվություններից ու սաղմոսերգությունից, եկան օտար երկիր, ուր ոչ միայն տունն էր օտար, այլև բազմազան աստվածների պաշտամունքները: Նրանք չէի՞ն մատնվել բարբարոսների՝ առավել գայլերի, քան մարդկանց ձեռքը, և որ ամենադժնդակն է, բարբարոսների երկրում՝ ծանրագույն գերության մեջ, չունեին ո՛չ վարդապետ, ո՛չ մարգարե և ո՛չ իշխան, «քանզի, ասում է, չկա իշխան, մարգարե և առաջնորդ և ո՛չ էլ երախայրիք մատուցելու տեղ՝ ողորմություն գտնելու համար» (Դան. Գ 38): Նրանք բերվել էին արքունական ապարանք, իբրև մի քարավեժ, անդունդ և ծով՝ լցված ստորջրյա խութերով ու ժայռերով, և ստիպված էին լողալ այդ ահարկու ծովով առանց ղեկավարի, առանց նավապետի, նավազների և առագաստների, արգելափակվել էին արքունական հարկի տակ, ինչպես բանտում:

Բայց քանի որ նրանք սիրում էին իմաստությունը, վեր էին երկրավոր ամեն բանից, արհամարհում էին մարդկային ամեն տեսակի փառք և թեթևացրել էին իրենց թևերը, ուստիև իրենց՝ այնտեղ մնալը չարիքի հավելում էին համարում: Գտնվելով պալատից դուրս՝ առանձին տան մեջ, նրանք կարող էին օգտվել մեծ ազատությունից. բայց մտնելով այդ բանտը (նրանք այնտեղի ողջ ճոխությունը լավ չէին համարում բանտից, գահավեժներից ու ստորջրյա խութերից)՝ նրանք նույն պահին հանդիպեցին սարսափելի դժվարության. թագավորը նրանց հրամայեց մասնակից լինել իր իսկ սեղանին՝ ճոխ, անմաքուր ու պիղծ, իսկ այդ արգելված էր և մահվանից առավել դժնդակ էր թվում նրանց: Նրանք նմանվում էին մենակ մնացած գառների, որոնք շրջապատված են գայլերի ոհմակներով: Պետք է կա՛մ սովից տանջվեին, կա՛մ մահվան ենթարկվեին, կա՛մ ուտեին արգելված կերակուրներից:

Ի՞նչ են անում պատանիները՝ որբացած, գերի, օտարական, ծառա նրանց, ովքեր հրամայել էին իրենց այդ անել: Նրանք չէին մտածում, որ իրենց անձերի արդարացման համար բա-

վական է քաղաքական իշխանի հարկադրանքն ու բռնությունը, այլ բոլոր հնարները մտածում և ջանքերն անում էին, որ փրկեն իրենց այդ մեղքերից՝ չնայած բոլորովին անպաշտպան էին: Քանզի ո՛չ կարող էին դրամով նրանց համոզել և իրենց կողմը դարձնել, որովհետև գերված էին. ո՛չ ընկերությամբ ու բարեկամությամբ, որովհետև օտարականներ էին. ո՛չ կարող էին իշխանությամբ ստիպել, որովհետև ծառաներ էին. ո՛չ բազմությամբ հաղթել, որովհետև ընդամենը երեքն էին:

Ուստիև մոտեցան և սկսեցին խոսքերով համոզել այն ներքինուն, ում այդտեղ հանձնված էր իշխանությունը: Բայց տեսան, որ նա վախենում ու դողում է իր անձի համար, և մահվան սաստիկ ահը սասանում է նրա հոգին, քանզի. «Վախենում եմ, ասում է, իմ տեր արքայից. թերևս ձեր դեմքը ավելի դալուկ տեսնի, քան ձեր հասակակից ուրիշ մանուկներինը, և դուք ինձ գլխով պարտական կդարձնեք թագավորի առջև» (Դան. Ա 10): Նրան ազատելով այդ վախից՝ համոզում են շնորհ անել:

Եվ երբ նրանք այսպես իրենց կողմից արեցին ամեն բան, դրանից հետո Աստված արեց Իրենը. քանզի միայն Աստծո գործը չէր այն, որի համար նրանք պիտի պարգև ստանային, այլ սկիզբն ու նախաշավիղը նրանց միտքն էր, որը նրանք արի ու զորեղ դարձրին, և այնժամ շահեցին Աստծո օրհնությունն ու վախճանին հասցրեցին այն, ինչ ջանադրաբար փնտրում էին:

ԺԶ. Տեսնո՞ւմ ես, որ եթե մարդ ինքն իրեն չվնասի, նրան ուրիշ ոչ ոք չի կարող վնասել: Քանզի ահա և՛ երիտասարդությունը, և՛ գերությունը, և՛ որբությունը, և՛ օտարության մեջ վտարանդի լինելը, և՛ միայնությունը, և՛ վերակացուների բացակայությունը, և՛ հրամանի խիստ պատվերը, և՛ մահվան մեծ սարսափը, որ պաշարել էր ներքինու միտքը, և՛ աղքատությունը, և՛ իրենց սակավաթիվ լինելը, և՛ բարբարոսների հետ բնակվելը, և՛ իրենց տերերին իրենց թշնամի ունենալը, և՛ արքայի ձեռքը մատնվելը, և՛ ընտանիքից միանգամից բաժանված լինելը, և՛ քահանաներից, մարգարեներից և իրենց խնամակալներից հեռու լինելը, և՛ նվիրատվությունների ու զոհաբերությունների դադարումը, և՛ տաճարից ու սաղմոսներից կտրվելը նրանց ոչ մի վնաս չհասցրին. այսուհանդերձ նրանք այնժամ պատվեցին առավել մեծ պատվով, քան երբ իրենց հայրենի երկրում ունեին այդ ամենը:

Այդպես երբ ավարտեցին առաջին մրցությունը և պճնվեցին պայծառ պսակով, օտար երկրում պահեցին օրենքը, արհամարհեցին բռնակալի հրամանը, հաղթեցին բռնակալի ահին և բնավ չվնասվեցին, այլ այդ գործն ավարտեցին այնպիսի թեթևությամբ, կարծես գտնվում էին տանը և վայելում էին բոլոր բարիքները, կրկին հրավիրվեցին մեկ ուրիշ կռվի ասպարեզ: Եվ դարձյալ նրանք մնացին նույնը: Նրանց սպասում էր առաջինից առավել դժնդակ մրցություն. բորբոքված էր հնոցը, և բարբարոսների զինվորները թագավորի հետ միասին զինված էին նրանց դեմ, պարսկական բոլոր ուժերը շարժման մեջ էին դրվել, և ամեն բան արվել էր նրանց գայթակղելու կամ ստիպելու համար. երաժշտության զանազան տեսակներ ու տանջանքների բազմազան միջոցներ, սպառնալիքներ, սաստ, բոլոր կողմերից սարսափելի տեսարան և տեսարանից առավել սարսափելի խոսքեր. բայց քանի որ նրանք չդավաճանեցին իրենք իրենց, այլ իրենց կողմից արեցին ամեն անհրաժեշտ բան, բնավ չվնասվեցին, այլ հակառակը՝ նախկինից առավել պայծառ պսակներով զարդարվեցին:

Նաբուգոդոնոսորը նրանց կապեց ու նետեց հնոցը, սակայն ոչնչով չվնասեց նրանց, այլ մեծապես օգնեց և առավել փառավոր դարձրեց: Նրանք, ովքեր չունեին ո՛չ տաճար (կրկին նույնն եմ ասում), ո՛չ հայրենիք, ո՛չ քահանաներ, ո՛չ մարգարեներ, օտար և բարբարոսների երկրում, անգամ հենց հնոցում, բոլոր զորքերի մեջ, այս ամենն իրականացնող թագավորի աչքի առջև կանգնեցրին գեղապանծ հաղթանակ և տարան պանծալի հաղթություն՝ երգելով զարմանալի ու նորանշան երգը, որ այն ժամանակներից մինչև այսօր երգում է ամբողջ տիեզերքը, և պիտի երգեն ապագայի ազգերը:

Եվ այսպես ուրեմն, եթե մարդ ինքն իրեն չվնասի, նա ուրիշներից երբեք չի վնասվի: Ես չեմ դադարելու նույն խոսքը մշտապես կրկնելուց: Եթե գերությունը, ծառայությունը, միայնությունը, հայրենիքից ու բոլոր հարազատներից հեռու լինելը, մահը, կրակը, այնքան զորքերը, այդպիսի անագորույն բռնակալը ոչինչ չկարողացան անել այն երեք մանուկներին՝ գերված պատանիներին, ծառաներին, նժդեհներին, օտարության մեջ գտնվողներին, չկարողացան ոչ մի վնաս հասցնել նրանց առաքինությանը, այլ այդ դարանները նրանց համար առիթ եղան գերագույն ազատության, ապա ի՞նչը կարող է վնասել զգոն մարդուն: Ամենևին ոչի՛նչ, եթե անգամ ամբողջ տիեզերքն ունենա իր դեմ:

«Բայց այդ ժամանակ, կասես, Աստված Ինքը նրանց կողքին կանգնեց և ազատեց նրանց այն բոցից»: Ճիշտ այդպես է. բայց եթե դու էլ քեզնից կախված ամեն բան անես, անշուշտ ապա և աստուածայինը կհաջորդի դրան:

ԺԷ. Սակայն ես այդ մանուկներով հիանում, երանի եմ տալիս նրանց և նրանց օրինակելի եմ համարում ոչ այն պատճառով, որ ոտնակոխ արեցին բոցը և հաղթեցին կրակին, այլ որ կապվեցին, հնոց նետվեցին և կրակի մատնվեցին ճշմարիտ դավանության համար: Դրանից սկիզբ առավ նրանց հաղթանակը, իսկ հենց որ հնոց նետվեցին, նրանց գլխին դրվեց պսակ, որն սկսեց բոլորվել մինչև գործերի կատարվելը այն խոսքերից, որ նրանք, բերվելով թագավորի առջև, մեծ վստահությամբ և համարձակությամբ խոսեցին՝ ասելով. «Հարկ չկա քեզ պատասխանել այդ բանի համար, արքա՛, որովհետև մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բորբոքված կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից: Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ որկե արձանին» (Դան. Գ 16):

Այս խոսքերի համար եմ ես բարեհամբավում նրանց: Այդ խոսքերի համար ստանալով հաղթանակի բրաբիոնը՝ նրանք դիմեցին դեպի մարտիրոսության գեղեցիկ պսակը՝ լեզվով խոստովանությանը միացնելով նաև գործերով խոստովանությունը: Եվ որ կրակը պատկառեց իր մեջ նետվածների մարմնից, քանդեց նրանց կապանքները, նրանց հնարավորություն չնորհեց անվախորեն քայլել այնտեղ, մոռացավ իրեն բնորոշ զորությունը, և կրակի հնոցը զովացուցիչ ջրերի աղբյուր դարձավ, այս ամենն արդեն աստվածային չնորհի և վերին սքանչելագործության գործն էին: Այսպիսով այս մարտնչողները, երբ դեռ մինչև այս հրաշքի կատարվելը մտան բոցի մեջ, արդեն իսկ կանգնեցրին հաղթանշանը, տարան հաղթանակը, զարդարվեցին պսակով, մեծապես համբավվեցին երկնքում ու երկրի վրա, և նրանց փառքի համար ոչինչ չպակասեց:

Այս ամենից հետո ի՞նչ կարող ես ասել. աքսորվեցի՞ր և վտարվեցի՞ր հայրենի երկրիցդ. ահա սրանք նույնպես: Գերի՞ ընկար և բարբարոս տերերից նվաճվեցի՞ր. սրանց էլ նույնը պատահեց: Զկա՞ մեկը, որ կողքիդ կանգնի, ուղղի, խրատի և ուսուցանի քեզ, ահա նաև սրանք էին զուրկ այդպիսի խնամքից: Բայց քեզ կապեցի՞ն, քեզ այրեցի՞ն, քեզ սպանո՞ւմ են. դրանցից ավելի դժնդակ բաներ դու չես կարող իմ դեմ բերել, բայց ահա նաև սրանք անցան այդ բոլորի միջով և յուրաքանչյուր չարչարանքից հետո դարձան առավել շքեղ ու փառավոր և երկնքում դանձեցին մեծ հարստություն:

Իսկ հրեաները, ունենալով և՛ տաճարը, և՛ սեղանը, և՛ տապանակը, և՛ քերովբեներին, և՛ քավությունը, և՛ վարագույրը, և՛ քահանաների անթիվ բազմությունը, և՛ աստվածային ամենօրյա պաշտամունքները, և՛ առավոտյան, և՛ երեկոյան զոհաբերությունները, և՛ հաճախ էին լսում մարգարեներին՝ ողջերին ու մեռածներին, որոնք հնչեցնում էին նրանց ականջներին՝ հիշեցնելով սքանչելիքները, որ կատարվեցին Եգիպտոսում, անապատում, և բոլոր այլ բաները՝ դրանք արձանագրված ունենալով իրենց ձեռքերի ու շեմերի վրա, վայելելով այն ժամանակվա բազում հրաշագործություններն ու այլ բարեգործությունները, ոչ միայն ոչ մի օգուտ չստացան,

այլև վնասվեցին՝ կուռքեր կանգնեցնելով հենց տաճարի մեջ և իրենց ուստերին ու դուստրերին գլխատելով ծառերի տակ, այս անօրենություններն ու գարշելի զոհաբերությունները գործելով գրեթե ամբողջ Պաղեստինում և հանդգնելով այլ առավել աղտեղի գործեր անել:

Իսկ սրանք բարբարոսների մեջ՝ հակառակորդ ու թշնամի երկրում, բռնակալի տանը, զրկված ամեն տեսակի խնամքից, տանջանքների ենթարկված, այրված, ոչ միայն փոքր կամ մեծ չափով չվնասվեցին այս ամենից, այլև առավել փայլեցին:

Եվ արդ, իմանալով այս ամենը և այն, ինչ այս ամենի մասին հավաքեցինք Աստվածաշունչ և աստվածային Գրքերից (ուր նման օրինակներ շատ կան), չմտածենք, որ ժամանակների կամ իրադրությունների դժվարությունը, իշխանների հարկադրանքը, բռնությունն ու բռնակալությունը մեզ համար կարող են ծառայել իբրև բավարար արդարացում, երբ մեղանչենք:

Ինչի մասին ասացի սկզբում, նույնով էլ այժմ ես կավարտեմ խոսքս, թե նա, ով վնասներ ու տույժեր է կրում, իր իսկ անձից է կրում և ոչ թե ուրիշներից, եթե անգամ բյուրավոր լինեն այն մարդիկ, ովքեր վնասում ու անիրավում են նրան: Իսկ եթե մարդ իր իսկ անձից չի վնասվում, եթե անգամ նրա վրա հարձակվեն ողջ աշխարհի ու ծովի բոլոր բնակիչները, չնչին չափով անգամ վնասել չեն կարող նրան, ով հսկող ու զգոն է ի Տեր:

Ուրեմն զգո՛ն լինենք, աղաչում եմ, հսկե՛նք հանապազ և քաջաբար համբերե՛նք բոլոր դժվարություններին, որպեսզի արժանանաք հավիտենական և անեղծելի այն բարիքներին մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք և իշխանություն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ՄԱՍԻՆ

ՃԱՌ ԱՌԱՋԻՆ[1]

Երեկվա սատանայական տոնը դուք դարձրեցիք հոգևոր տոն. մեր խոսքերն ընդունեցիք մեծ բարեմտությամբ և օրվա մեծ մասն այստեղ եղաք. արբենալով բաժակով, որ լի է բազում ողջախոհությամբ՝ ցնծացիք Պողոսի հետ:

Ձեզ կրկնակի օգուտ եղավ, քանզի հեռու մնացիք անառակ հարբեցողների խնջույքից և հրճվեցիք ու բերկրեցիք հոգևորով՝ ավելի ու ավելի բարեկարգվելով: Ճաշակեցիք ըմպանակներից, որոնք լցված էին ոչ թե ապականացու (գինով), այլ հոգևոր վարդապետությամբ: Եղաք Հոգու փող և քնար. մինչ մյուսներն հրճվում էին սատանայի ցնծությամբ, դուք, այստեղ գալով, ձեզ հոգևոր նվագարաններ ու անոթներ դարձրեցիք, ընձեռեցիք Հոգուն՝ մերձենալ ձեր հոգիներին և Իր շնորհները լցնել ձեր խորհուրդներում: Ուստիև հնչեցրիք վայելչական երգեր, որոնք հրճվանք պատճառեցին ոչ միայն մարդկանց, այլ նաև երկնային զորություններին:

Արդ, ե՛կ այսօր մեր լեզուն զինենք ընդդեմ արբեցության, պարսավենք անժուժկալ կյանքը, մեղադրենք նրանց, ովքեր ամբողջ օրը դեգերում են դրա մեջ՝ ոչ թե նրանց ամաչեցնելու, այլ ամոթից ազատելու, ոչ թե անարգելու, այլ ուղղելու, ոչ թե խայտառակելու, այլ գարշելի խայտառակությունից և սատանայի ձեռքից ազատելու համար: Քանզի նա, ով ամ-

[1] Աղքատ Ղազարոսի և մեծահարուստի մասին յոթ ճառերը սուրբ Հովհան Ոսկերերանը խոսել է Անտիոքում 387 թվականին որոշ ընդմիջումներով Նոր տարվա քարոզից հետո: Ճառի ամբողջական վերնագիրն է՝ «Կաղանդից հետո. հարբեցողության և ողորմության մասին, նաև Ղազարոսի և մեծահարուստի մասին»:

բողջ օրը զբաղվում է հարբեցողությամբ, իրեն տալիս փափկակեցության ու շատակերության, գտնվում է իր իսկ՝ սատանայի իշխանության տակ:

Միայն թե խոսքերիցս մի օգուտ լինի: Նրանք նույն վիճակում մնան թե ոչ, մենք չենք դադարի նրանց խորհուրդ տալուց: Քանզի աղբյուրներն էլ բխում են, եթե անգամ ոչ ոք ջուր չի վերցնում նրանցից, ջրհորները զեղում են, եթե անգամ ոչ ոք ջուր չի խմում նրանցից, և գետերը, թեպետև ոչ ոք չի ճաշակում նրանցից, հոսում են. հարկ է և արժան է, որ քարոզողն էլ, եթե անգամ ոչ ոք նրան ուշադրություն չի դարձնում, կատարի իր ամբողջ գործը:

Քանզի մարդասեր Աստծուց մեզ վրա դրված օրենք կա՝ անել մեզնից կախված ամեն բան, երբեք չթողնել և չլռել թե՛ այնժամ, երբ մեզ լսում են, և թե՛ այնժամ, երբ փախչում են: Երեմիան, ով միշտ սպառնում էր հրեաներին, ով նախապես ասում էր պատահելիք աղետների մասին, ում ամբողջ օրը հեգնում ու ծաղրում էին լսողները, իբրև մարդ տկարանալով նախատվելուց և չկարողանալով տանել լուտանքները՝ մտածեց հրաժարվել մարգարեությունից՝ ասելով. «Չեմ տա Տիրոջ անունը, այլևս չեմ խոսի նրա անունից: Սակայն իմ սրտում կարծես կրակ վառվեց, բորբոքվեց ոսկորներիս մեջ, ու ես ամեն կողմից լքված մնացի, չկարողացա հանդարտվել» (Երեմ. Ի 9): Այսինքն՝ քանի որ հրեաները չէին լսում, ասում է, կամեցա հրաժարվել մարգարեությունից, բայց հենց որ խորհեցի այդ մասին, Հոգու զորությունն հրի պես ընկավ իմ անդամների մեջ, բոցակիզեց ամբողջ ներսս, այրեց ու բոցակիզեց ոսկորներս այնպես, որ չկարողացա դիմանալ այդ տապին:

Արդ, եթե նա, ով հեգնանքի ու ծաղրի էր ենթարկվում, լռել կամենալով, ընկավ այդպիսի տանջանքի մեջ, ո՞ր թողությանը արժանի կլինենք մենք, որ երբեք այդպիսի բան չկրեցինք, եթե ոմանց անհոգության պատճառով վհատվենք և հրաժարվենք վարդապետելուց, մանավանդ, երբ խոսքերս ուշադրությամբ լսողներն այսքան (շատ) են:

Այս ասում եմ ոչ ինքս ինձ մխիթարելու ու սփոփելու համար, (այլ) որովհետև համոզեցի ինձ, թե որքան ժամանակ ողջ լինեմ և որքան ժամանակ Աստծո կամոք այստեղ կյանք ունենամ, կատարեմ իմ այս ծառայությունը և անեմ ինձ հրամայվածը՝ ինձ լսող լինի, թե չլինի:

Ձկնորսն էլ ամբողջ օրը բազում անգամ ցանցն ունայն գցելով՝ երեկոյան հեռանալ պատրաստվելով՝ որսում է իրենից բազում անգամ փախած ձկներն ու գնում: Եվ եթե ուզում ենք մշտապես պատահող ձախորդության պատճառով անգործ մնալ և ամեն բանից հեռանալ, մեր ամբողջ կյանքը կկորչի, և անդնդասույզ կլինի ոչ միայն հոգևորը, այլ նաև աշխարհիկը: Եթե հողագործը եղանակի հաճախակի փոփոխությունների պատճառով ցանկանար հրաժարվել մշակությունից, բոլորս սովից կմեռնեինք: Եթե նավավարը հաճախակի ալեկոծությունների պատճառով փախչեր ծովից, ծովերը մեզ համար աննավարկելի ու անպիտան կլինեին, և չէր լինի այն ամենը, ինչ այնտեղից է: Այս ամենն իմանալով՝ թե՛ մեկ, թե՛ երկու և թե՛ շատ անգամ վրիպելուց հետո էլ կրկին դառնում են նույն գործին և մեկ տարվա ընթացքում ամբողջ ժամանակ կրած վնասները ետ բերում: Վաճառականը նույնպես, շատ անգամ համբերելով բազում նավաբեկությունների, չի հրաժարվում նավելուց, այլ և՛ նավն է ծով իջեցնում, և՛ նավավարներ է վարձում, և՛ դրամ փոխ վերցնելով՝ նույն գործերն է ձեռնարկում՝ չնայած գալիքն անհայտ է: Եվ նույն կերպ յուրաքանչյուր ոք անում է իր ձեռնարկած գործը:

Արդ, եթե մշակն ու վաճառականը այնքան փութեռանդությամբ անում են աշխարհիկ գործերը, որոնց ապագան անհայտ է, մենք, եթե ասենք, ոչ ոք չլսի, և անմիջապես հեռանանք, ինչպիսի՞ ներում ու թողություն, ի՞նչ պատասխան պիտի ունենանք: Ձախողելու դեպքում նրանց վնասը ոչ ոք չի փոխհատուցում: Բայց մենք, որ ասում ու խրատում ենք, այդպես չենք. եթե սերմ ես գցում լսողի մեջ, և նա չի ընդունում և չի բերում հնազանդության պտուղը, դու Աստծուց

ընդունում ես խորհուրդ տալու վարձը և այնքան հատուցում ստանում նրա չհնազանդվելու համար, որքան կստանայիր, եթե նա հնազանդվեր, քանի որ դու ամբողջությամբ կատարեցիր քո գործը: Պարտական չենք լսողներին համոզելու, այլ խորհուրդ տալու, քանի որ մեր գործը պատվիրելն է, նրանցը՝ հավանելը: Եվ ինչպես որ եթե մենք չպատվիրենք, և նրանք բյուր առաքինություններ ձեռք բերեն, վարձը միայն նրանցը կլինի, իսկ մեզ՝ ոչ մի օգուտ, որովհետև խրատ տվողներ չեղանք, այդպես էլ, եթե մենք խրատենք, իսկ նրանք չլսեն, բոլոր տանջանքները նրանք կընդունեն, իսկ մենք չենք մեղադրվի, այլ Աստծուց մեծ վարձ կստանանք, քանի որ կատարեցինք մեր գործն ամբողջությամբ: Մենք հրաման ունենք «դրամը լումայափոխների մոտ դնել» (Մատթ. ԻԵ 27)՝ ասել և խրատել: Չի լսում: Բայց դու կատարյալ վարձատրություն ունես. մի՛ հրաժարվիր, մինչև հաճեցնելդ, քանի դեռ կենդանի ես: Քեզ համար խրատելդ կավարտվի միայն այնժամ, երբ հնազանդությամբ կընդունի խրատդ:

Սատանան ընթանում է մեր փրկությանը հակառակ. ինքը ոչինչ չի շահում, իր ջանքերից մեծամեծ վնասներ է կրում, բայց այնպիսի մոլուցքով է բռնված, որ հաճախ մինչև իսկ անհնարին բաներ է ձեռնարկում և կամենում է դերել ոչ միայն նրանց, ում վստահ է, որ կընկճի ու կխոտորի, այլև բոլորին: Նա չհեռացավ Հոբից, իր բոլոր հնարները գործի դրեց և կարծեց, թե կկործանի նրան. չար, պիղծ ու ամենագարշելի դևը չհրաժարվեց դրանից այն էլ այն դեպքում, երբ Աստված հայտնեց այն արդարի առաքինության մասին: Զե՞նք ամաչի ու շառագունի, ասա՛ ինձ, եթե մինչ սատանան, որ երբեք չի հրաժարվում մեզ կորստյան մատնելուց, այլ միշտ հուսալով՝ այդքան մարտնչում է, մենք հրաժարվենք եղբայրների փրկությունից:

Հարկ ու արժան էր, որ նա փորձություններից առաջ պատերազմելուց հրաժարվեր, որովհետև արդարի վկան Աստված էր: Բայց չհրաժարվեց, այլ մեզ հակառակ մեծ մոլությունից և Աստծո վկայությունից հետո էլ հուսաց, թե կհաղթի այն առաքինի մարդուն: Բայց մեզ այդպիսի ոչ մի բան անհուսության մեջ չի գցում, իսկ մենք հեռանում ենք: Սատանան, չնայած Աստծո արգելելուն, չի հեռանում մեզ հետ կռվից, իսկ դու փախչում ես, երբ Աստված քեզ հորդորում է՝ օգնել ընկածներին: Սատանան լսեց Աստծուց, որ ասում էր. «Ճշմարտախոս, անարատ, աստվածապաշտ, ամեն չար գործից հեռու մնացող մարդ է նա», և որ. «Նրա նման մարդ երկրի վրա չկա» (Հոբ Բ 3), և այսքան և այսպիսի գովեստներից հետո շարունակում էր՝ ասելով, թե՝ շատ ու մեծամեծ չարիքներով թերևս կարողանամ նրան հաղթել և կործանել այն մեծ աշտարակին:

Ինչպիսի՞ թողություն պիտի լինի մեզ, ի՞նչ պատասխան պիտի տանք, եթե մեր ջանքերը չբերենք մեր երբայրների փրկության համար այն դեպքում, երբ չար դևը այդպիսի մոլուցքով գործում է մեր դեմ, այն էլ, երբ Աստված է մարտակից ու օգնական լինում մեզ: Երբ տեսնում ես խիստ ու ստահակ եղբորը, որ չի լսում քեզ, ասա՛ ինքդ քեզ՝ թերևս ժամանակի ընթացքում կարողանամ համոզել նրան: Այդպես հրամայեց նաև Պողոսը. «Տիրոջ ծառան պետք չէ, որ կռիվ անի, այլ բոլորի հանդեպ լինի հեզահամբույր, ուսուցանող, անոխակալ՝ հանդարտությամբ խրատելու համար հակառակողներին, որ թերևս Աստված նրանց ապաշխարություն տա, որպեսզի ճանաչեն ճշմարտությունը» (Բ Տիմ. Բ 24-25):

Զե՞ք տեսնում, թե ինչպես են հայրերը հաճախ նստում իրենց՝ հույսները կտրած որդիների մոտ ու արտասվում, ողբում, համբուրում և մինչև վերջին շունչը անում իրենցից կախված ամեն բան: Նույնը և դո՛ւ արա եղբայրների համար. թեպետև նրանք լացով ու արտասուքներով չեն կարող ո՛չ հիվանդությունը հեռացնել, և ո՛չ էլ մահը ետ դարձնել, բայց դու հաճախ կարող ես համբերությամբ, համառությամբ ու ողբով բարձրացնել ու կանգնեցնել: Խրատեցիր, և չլսե՞ց, արտասվի՛ր ու հաճա՛խ տես նրան, հառաջիր, որպեսզի քո խնամակալությունից պատկառելով՝ դառնա դեպի փրկություն:

Հարկ կա՞ ասելու նրանց մասին, ովքեր ուղղվում են բազում խրատներից հետո: Անգամ նրանցից, ովքեր անբժշկելիորեն են հիվանդանում, չպետք է հեռու մնալ ու ծուլանալ, թեև կանխապես գիտենք, որ մեր ջանքերից հետո էլ ոչինչ չեն շահելու: Եթե խոսքերս ձեզ անհավատալի թվան, ես հավաստի կդարձնեմ դրանք այն բանով, ինչ արեց և ասաց Քրիստոս: Մենք չգիտենք պատահելիքը, ուստիև չենք կարող լսողների մասին պնդել՝ կհավանե՞ն մեր ասածները, թե՞ ոչ: Բայց Քրիստոս, ամեն բան հայտնապես իմանալով, մինչև վերջ չդադարեց ուղղել նրան, ով չէր լսում Իրեն: Իմանալով, որ Հուդան չի հրաժարվելու Իրեն մատնելուց, Քրիստոս չդադարեց Իր խրատներով, պատվերներով, բարեգործությամբ, սպառնալիքներով, վարդապետության բոլոր միջոցներով խորշեցնել նրան մատնիչ լինելուց և հաճախ զսպում էր՝ իբրև սանձով: Այդ անում էր՝ խրատելով և մեզ, որպեսզի մենք, եթե անգամ նախապես իմանանք, որ եղբայրները չեն համոզվելու, մեզնից կախված ամեն բան անենք, քանզի խրատելու համար վարձ է պատրաստված մեզ:

Եվ տե՛ս, թե ինչպես էր իմաստությամբ հաճախակի զսպում Հուդային. «Ձեզնից մեկը մատնելու է ինձ» (Մատթ. ԻԶ 21): Դարձյալ՝ «Ձեր բոլորի համար չէ, որ ասում եմ. ես գիտեմ նրանց, որոնց ընտրել եմ» (Հովհ. ԺԳ 18), և դարձյալ՝ «Ձեզնից մեկը սատանա է» (Հովհ. Զ 71): Եվ թույլ էր տալիս բոլորին՝ տրտմության մեջ ընկնել, որպեսզի հայտնի կերպով ցույց չտա մատնիչին և հայտնի հանդիմանությամբ առավել անամոթ չդարձնի նրան: Եվ որ այս խոսքերը տրտմեցնում ու վախեցնում էին մյուսներին, որոնք ոչինչ չգիտեին իրենց չարության մասին, լսի՛ր, թե ինչ է ասում նրանցից յուրաքանչյուրը. «Տե՛ր, մի՞թե ես եմ» (Մատթ. ԻԶ 22): Իսկ Քրիստոս ոչ միայն խոսքով, այլ նաև գործերով էր խրատում նրան: Քանի որ հաճախ և ամեն բանում ցույց տվեց Իր մարդասիրությունը՝ սրբելով բորոտներին, հալածելով դևերին, բժշկելով հիւանդներին, ամրապնդելով անդամալույծներին, հարություն տալով մեռելներին. բոլորին բարիք անելով, ոչ ոքի չպատժելով, և հաճախ ասելով. «Ձեկա դատելու աշխարհը» (Հովհ. ԺԲ 47): Եվ որպեսզի Հուդան չկարծեր, թե Քրիստոս միայն բարիք գործել գիտեր և ոչ պատժել, սովորեցնում է նրան և այդ. որ կարող է նաև տանջել ու պատժել մեղանչողներին:

Եվ տե՛ս, թե ինչպես հայտնապես խրատեց այս ամենով. ինչպես Իրեն էր պատշաճ. չպատժեց ու չտանջեց մարդկանցից ոչ ոքի: Իսկ ի՞նչ արեց, որպեսզի աշակերտը իմանար Նրա պատժողական զորության մասին: Եթե պատժեր, կթվար, թե ընդդիմանում է Ինքն Իրեն, որ ասում էր. «Ձեկա դատելու աշխարհը, այլ փրկելու» (Հովհ. ԺԲ 47): Դարձյալ՝ եթե ոչ ոքի չպատժեր, աշակերտը կմնար առանց ուղղվելու՝ չիմանալով Նրա պատժողական զորության մասին: Եվ ի՞նչ էր լինելու. որպեսզի և՛ աշակերտը զարհուրի, և՛ արհամարհանքից ավելի վատը չդառնա, և՛ մարդկանցից ոչ ոք չխոցվի ու տանջանքների ու պատիժների մեջ չընկնի, Քրիստոս Իր զորությունը ցույց է տալիս թզենու միջոցով՝ ասելով. «Այսուհետև քեզնից հավիտյան պտուղ թող չլինի» (Մատթ. ԻԱ 19), և մի պարզ խոսքով չորացնելով այն:

Այսպես բոլոր մարդիկ անվնաս մնացին, իսկ Նա Իր զորությունը ցույց տվեց՝ պատժի ենթարկելով ծառը: Եվ եթե աշակերտը ուշադիր լիներ, այդ պատժից մեծապես օգուտ կքաղեր մարդասիրությունը, սակայն նա դրանից էլ չուղղվեց: Իսկ Աստված, իմանալով այդ, արեց մեկ ուրիշ՝ ավելի մեծ բան. երբ հրեաները սրերով ու բրերով եկան Իր վրա, բոլորին կուրացրեց. քանզի ասելը. «Ո՞ւմ եք փնտրում» (Հովհ. ԺԸ 4), այն բանի հայտնությունն էր, որ հաճախակի ասում էր Հուդան. «Ի՞նչ կկամենաք ինձ տալ, եթե ես նրան մատնեմ ձեզ» (Մատթ. ԻԶ 15): Նա կամենում էր հրեաներին և նրան ցույց տալ, որ Իր կամքով է գալիս չարչարվելու, որ նրա չարագործությունը չի կարող հաղթել Իրեն. մինչ մատնիչը բոլորի հետ գալիս էր, Նա ասում է՝ Ո՞ւմ եք փնտրում: Ձգիտե՞ր՝ Ում է մատնելու: Քանզի կուրացրեց նրա աչքերը. ոչ միայն այս արեց, այլև նույն խոսքով նրանց բոլորին գետնին գամեց (տե՛ս Հովհ. ԺԸ 6):

Եվ քանի որ այդ էլ նրանց չհանդարտեցրեց և այն պիղծին չհրաժարեցրեց մատնելու մտքից, տե՛ս, թե որքան զգուշորեն է մերձենում նրա անամոթ հոգուն՝ ասելով խոսքեր, որոնք կարող էին կակղեցնել և քարեղեն հոգիները: Երբ Հուդան մոտեցավ՝ Նրան համբուրելու, ի՞նչ ասաց Նա. «Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում մարդու Որդուն» (Ղուկ. ԻԲ 48): Դրանից հետո էլ չամաչեց մատնության ձևից: Այդ ասում էր՝ նրան մոտենալու և նախկին ընդունելությունը հիշեցնելու համար: Բայց, չնայած Քրիստոս այդքան արեց և ասաց, Հուդան ավելի լավը չդարձավ ոչ թե խրատողի տկարության, այլ իր չարության պատճառով: Բայց Քրիստոս, կանխավ իմանալով այդ, չդադարեց սկզբից մինչև վերջ անել Իրենից կախված ամեն բան:

Այս ամենն իմանալով, սիրելինե՛ր, մենք պետք է անդադար և մշտապես ուղղենք ու խրատենք մեր հեղգացող եղբայրներին, թեկուզև մեր խրատներից ոչ մի շահ չլինի: Եթե Նա, ով գիտեր, թե ինչ է լինելու վերջում, և Իր խրատը ոչ մի պտուղ չի տալու, այդպիսի հոգացողությամբ շարժվեց, ապա ո՞ր թողությանը արժանի պիտի լինենք մենք, երբ առանց իմանալու, թե ինչպիսին կլինի դեպքերի ավարտը, այդքան անհոգ գտնվենք եղբայրների փրկության գործում, եթե առաջին և երկրորդ խրատից հետո լքենք նրանց: Այս բոլոր ասվածներից հետո դառնանք ինքներս մեզ, որ ամենևին չենք լսում Աստծո՝ մարգարեների ու առաքյալների միջոցով ամեն օր մեզ ասվող խոսքերը, բայց միևնույն է, Նա չի դադարում մշտապես ասել ու աղաչել անհնազանդներիս և ուշադրություն չդարձնողներիս: Նաև Պողոսն է գոչում՝ ասելով. «Ինքը՝ Աստված է մեր միջոցով կոչ ուղղում ձեզ. հանուն Քրիստոսի աղաչում ենք ձեզ, որ հաշտվեք Աստծո հետ» (Բ Կոր. Ե 20):

Եթե հարկ է կրկին ինչ-որ զարմանալի բան ասել, ապա (կասեմ, որ) ոչ այնքան գովության է արժանի նա, ով խրատում է՝ նախապես իմանալով, որ իր խոսքերն անմիջապես կընդունվեն, որքան նա, ով բազում անգամ ասելուց, խրատելուց և հաջողություն չունենալուց հետո չի դադարում այդ անելուց:

Բավականաչափ խոսվեց այն մասին, որ երբեք չպետք է թողնել ընկածներին՝ կանխավ իմանալով հանդերձ, որ նրանք չեն լսելու մեզ: Այսուհետև անցնենք՝ մեղադրելու ուրախությանը տրվողներին. քանզի որքան ժամանակ շարունակվում է այս տոնը, և սատանան հարբեցողության վերքեր է հասցնում խմողների հոգուն, նույնքան ժամանակ էլ հարկ է դեղ դնել դրանց վրա:

Երեկ նրանց դեմ բերեցինք Պողոսին, ով ասում էր. «Ուտեք թե խմեք, կամ ինչ էլ անեք, ամեն ինչ արեք Աստծո փառքի համար» (Ա Կոր. Ժ 31): Իսկ այսօր բերենք Պողոսի Տիրոջը, Ով ոչ միայն պատվիրում ու խրատում է՝ հեռանալ զվարճություններից, այլ նաև պատժի ու պատուհասի է ենթարկում նրանց, ովքեր ապրում են զվարճությունների մեջ: Քանզի մեծահարուստի ու Ղազարոսի առակը և նրանց հետ կատարվածը ցույց են տալիս ոչ այլ ինչ, քան հենց այս: Որպեսզի մակերեսորեն չանենք այդ, ես կկարդամ ձեզ համար այդ առակը ամենասկզբից. «Մի մեծահարուստ մարդ կար, որ ամեն օր բեհեզ և ծիրանի էր հագնում և ամեն օր առատապես ուրախություն էր անում: Եվ Ղազարոս անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դռան առաջ՝ վերքերով ծածկված: Եվ ցանկանում էր լցնել իր որովայնը այն փշրանքներով, որոնք թափվում էին մեծահարուստի սեղանից» (Ղուկ. ԺԶ 19-21):

Ինչո՞ւ էր առակներով խոսում, ինչո՞ւ էր որոշ առակներ մեկնում, ի՞նչ է առակը և նման այլ հարցերի մասին խոսելը թողնենք մեկ այլ ժամանակի, որպեսզի չշեղվենք մեր խոսքից: Բայց առայժմ ասենք միայն, թե ավետարանիչներից ո՞վ է, որ գրել է Քրիստոսի ասած այս առակը: Ո՞վ է նա: Միայն Ղուկասը: Անհրաժեշտ է իմանալ, որ Հիսուսի ասած որոշ առակներ չորսն էլ ասացին, որոշ առակներ էլ՝ յուրաքանչյուրը՝ յուրովի: Ինչո՞ւ: Որպեսզի մեզ համար անհրաժեշտ լինի մյուս ավետարանիչներին ընթերցելը, և երևա նրանց

կատարյալ միաբանությունը: Քանզի եթե նրանք բոլորն էլ ամեն բան ասեին, ապա մենք նրանց բոլորին փութով կընդունեինք, և վարդապետելու համար բավական կլիներ մեկը: իսկ եթե նրանք բոլորը ամեն ինչի մասին տարբեր կերպ ասեին, նրանց միաբանության կատարելությունը չէր երևա: Այդ պատճառով էլ նրանք շատ բանի մասին գրեցին և՛ բոլորը, և՛ յուրաքանչյուրը՝ յուրովի:

Ի՞նչ է ասում Քրիստոս: Մի մեծահարուստ մարդ կար, ապրում էր մեղավոր կյանքով, չէր զգում ոչ մի դժբախտություն, ամեն բան, ինչպես աղբյուրներից, հոսում էր դեպի նա: Եվ որ ոչ մի անսպասելի բան, տրտմության որևէ առիթ և կամ կյանքի որևէ դժվարություն չէր պատահում նրան, Ինքն է հայտնում՝ ասելով, թե՝ «Ամեն օր առատապես ուրախություն էր անում»: Իսկ որ ապրում էր մեղքերով, հայտնի է վախճանից, որ վիճակվեց նրան, և նախքան վախճանը աղքատին անտեսելուց. որ չէր ողորմում ոչ միայն նրան, ով իր դռների մոտ էր, այլև ուրիշ ոչ մեկի, նույն Ինքը ցույց տվեց: Քանզի եթե չողորմեց իր դռան առջև ընկածին, ով իր աչքի առջև էր, և ում հարկադրված տեսնում էր, ապա իրեն հանդիպածներից ո՞ւմ կողորմեր:

Նա ոչ մի կարեկցություն չզգաց և ավելի խիստ ու անողորմ եղավ, քան նա, ով «Աստծուց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում» (Ղուկ. ԺԸ 2-5). վերջինիս, որքան էլ դաժան ու անողորմ էր նա, այրի կնոջ համառությունը հավանեցրեց ողորմել և խոնարհեցրեց՝ լսելու պաղատանքը, բայց սրան (ոչինչ) չկարողացավ խոնարհեցնել՝ աղքատին օգնելու: Թեպետև խնդրանքն էլ նույնը չէր. սա շատ ավելի արդարացի ու դյուրին էր: Քանզի նա թախանձում էր իր թշնամու դեմ (իր դատը տեսնել), իսկ սա պաղատում էր սովից փրկել և անտեսելով՝ կորստյան չմատնել. նա թախանձում էր աղաչելով, սա՝ հանապազօր երևում էր լռությամբ: Արդեն իսկ միայն այդ բավական է՝ ավելի կակղեցնելու: Քանզի երբ մեզ հաճախ են խնդրում, զայրանում ենք, իսկ երբ տեսնում ենք, որ օգնության կարիք ունեցողները լուռ

կանգնած են, չեն բողոքում, այլ միայն լուռ երևում են մեզ, այդժամ մենք, եթե անգամ քարից էլ անզգա լինենք, զգացվում ենք՝ ամաչելով չափազանց համեստությունից:

Մեկ այլ՝ սրանից ոչ նվազ բան էլ կար այստեղ. աղքատի տեսքը ողորմելի էր, սովից ու երկարատև հիվանդությունից մաշված: Բայց սրանցից ոչինչ չկակղեցրեց այն խստասիրտ մարդուն:

Այսպիսով՝ հարուստի առաջին արատը նրա չափազանց դաժան ու անմարդկային լինելն էր: Քանզի աղքատության մեջ ապրողին չօգնելն ու սովամահ եղողներին արհամարհելը միևնույնը չեն: Դարձյալ՝ միևնույն բանը չեն աղքատին մեկ կամ երկու անգամ տեսնելն ու զանց առնելը և ամեն օր նրան տեսնելով՝ չդառնալը դեպի ողորմությունն ու մարդասիրությունը: Բայց մեկը, տմարդի լինելով և մեղքերի մեջ ապրելով, վայելում էր բոլոր բարիքները, իսկ մյուսը, որ արդար էր և ուներ բոլոր առաքինությունները, ծայր թշվառության մեջ էր: Որ Ղազարոսը արդար էր, այդ ցույց տվեց նրա վախճանը և դեռ վախճանից առաջ նրա՝ աղքատությանը համբերելը: Ձեզ չի՞ թվում, որ ձեր առջև տեսնում եք նրանց գործերը: Մեծահարուստի նավը լի էր բեռներով և լողում էր հոսանքի ուղղությամբ: Բայց, մի՛ զահուրիր, շտապում էր նավաբեկվելու, որովհետև չէր կամենում բեռներին երկյուղածությամբ վերաբերվել:

Կամենո՞ւմ ես՝ քեզ կասեմ, թե ո՞րն էր նրա մյուս մեղքը. ամեն օր ուրախանալը: Քանզի դա էլ է մեծ չարություն ոչ միայն այժմ, երբ մեզնից պահանջվում է այդպիսի իմաստություն, այլ նաև սկզբում՝ Հին Ուխտում, երբ այդպիսի իմաստությունը դեռևս բացված չէր: Լսի՛ր, թե այս ամենի մասին ինչ է ասում մարգարեն. «Դուք, որ գալիս եք դեպի չարիքների օրը, մոտենում եք հասնելու ստությունների շաբաթին» (Ամոս, Զ 3): Ի՞նչ է նշանակում «հասնելու ստությունների շաբաթին»: Հրեաները կարծում են, թե շաբաթը իրենց տրվեց հանգստի համար, բայց այդպես չէր, այլ որպեսզի նրանք հեռու մնան աշխարհիկ գործերից և հոգևոր

գործեր անեն: Եվ որ շաբաթը անգործության համար չէ, այլ հոգևոր գործերի, հայտնի է հենց գործերից: Քահանան այդ օրը երկու գործ էր անում. այնժամ, երբ ամեն օր բերվում էր մեկ զոհ, այն օրը հրամայվում էր բերել երկուսը: Եթե շաբաթը հանգստի համար սահմանված լիներ, ապա հարկ կլիներ, որ ուրիշներից առաջ քահանան հանգստանար: Եվ քանի որ հրեաները, աշխարհիկ գործերից հեռու մնալով, չէին նայում նաև հոգևորին՝ ողջախոհությանը, հեզությանը և աստվածային խոսքերի ունկնդրությանը, այլ այդ ամենի հակառակն էին անում՝ գոհացնելով որովայնը, հարբեցողությամբ զեխանալով և ուրախությանը տրվելով. լսի՛ր, թե մարգարեն ինչպես է դատապարտում նրանց՝ ասելով. «Վա՜յ ձեզ, որ գալիս եք դեպի չարիքների օրը» և ավելացնելով. «Մոտենում եք հասնելու ստությունների շաբաթին»՝ այս հավելումով ցույց տալով, թե որքան սուտ էին նրանց շաբաթները: Իսկ ինչպե՞ս էին նրանք սուտ դարձնում դրանք: Անօրինալով, զվարճություններին տրվելով, հարբելով և ամոթալի ու չար գործեր անելով: Եվ որ իսկապես այդ այդպես է, լսի՛ր շարունակությունը. քանզի ասածս հայտնում է նաև մարգարեն՝ անմիջապես հավելելով հետևյալ խոսքերը. «Դուք, որ ննջում եք փղոսկրյա գահավորակներում, մեղկանում ձեր անկողիններում, հոտերից ուլեր եք ուտում և նախիրներից՝ պարարտ հորթեր, դուք, որ խմում եք անխառն գինի և օծվում անուշ յուղերով» (Ամոս, Զ 4-6):

Դու շաբաթն ստացար, որպեսզի անձդ ազատես մեղքերից, իսկ դու առավել ես մեղանչում: Ի՞նչը կարող է վատթար լինել այն զեխությունից, երբ քնում են փղոսկրե մահճակալին: Մյուս մեղքերի մեջ հաճույք կա, ինչպես արբեցության, ավելորդ ունեցվածքի, հեշտասիրության, բայց փղոսկրե մահճակալին քնելու մեջ ի՞նչ հաճույք կա, ի՞նչ մխիթարություն. մի՞թե մահճակալի գեղեցկությունը քունը հաճելի ու քաղցր է դարձնում: Այն ամեն բանից առավել ծանր ու տհաճ է, քանզի եթե մտածես, թե մինչ դու ննջում ես փղոսկրե մահճակալին, մեկ ուրիշը ուտելու հաց չունի, մի՞թե խղճմտանքդ

քեզ չի դատապարտի և մեղադրանքով չի ելնի այդպիսի անկարգության դեմ: Եթե մեղադրելի է փղոսկրե մահճակալին քնելը, ապա ի՞նչ արդարացում պիտի ունենանք, երբ դրանք բոլոր կողմերից պատված լինեն արծաթով: Կամենո՞ւմ ես մահճի գեղեցկություն տեսնել: Ես հիմա քեզ ցույց կտամ ո՛չ թե մի ռամիկի կամ զինվորի, այլ թագավորի մահճակալի վայելչություն: Շատ լավ գիտեմ, թե որքան էլ բոլորից ավելի պատվասեր լինես, չես ախորժի ունենալ թագավորականից վայելուչ գահավորակ, և որ ավելի կարևոր է, ոչ թե մի ինչ-որ թագավորի, այլ բոլոր թագավորներից առաջինի և ամենավեհի, ում մասին մինչև այժմ պատմվում է ողջ տիեզերքում. ես քեզ ցույց կտամ երանելի Դավթի մահիճը: Ինչպիսի՞ն էր այն: Ո՛չ արծաթով և ո՛չ ոսկով, այլ բոլոր կողմերից զարդարված արտասուքով ու խոստովանությամբ. այս մասին ինքն է ասում. «Ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահիճն իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի» (Սաղմ. Զ 7). այնպիսի արցունքները, իբրև մարգարիտ, փայլում էին նրա վրա բոլոր կողմերից :

Եվ տե՛ս՝ ինչպիսի աստվածասեր հոգի ունի նա. քանի որ ցերեկով նրան մտահոգում ու աղոթքներից հեռացնում էին իշխանների, դասապետերի, ժողովրդի, զինվորների, պատերազմողների, խաղաղության, քաղաքական իրադարձությունների, հեռու և մոտ գտնվողների հոգսերը, այն ժամերը, որ մենք նվիրում ենք քնին, նա անցկացնում էր խոստովանությամբ, աղոթքներով ու արտասուքներով: Եվ այն էլ ոչ թե մի գիշեր այդ էր անում, իսկ հաջորդին դադարում արտասվելուց, այլ ամեն գիշեր այդ էր անում, քանզի. «Ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահիճն իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի». արտասուքների հորդությունն ու անընդհատությունն է ցույց տալիս: Երբ բոլորը խաղաղվում ու հանդարտվում էին, այնժամ նա մենակ պաղատում էր Աստծուն, և անքուն Աչքը մերձ էր լինում ողբացողին ու սգացողին, ով խոստովանում էր իր չարիքները: Այսպիսի մահիճ և դո՛ւ պատրաստիր: Քանզի արծաթով պատված մահիճը մարդկանց նախանձն է արթնաց-

նում և ի վերուստ բարկություն բորբոքում, իսկ այնպիսի արտասուքները, ինչպիսին Դավթինն էին, կարող են հանգցնել անգամ դեհենի կրակը:

Կամենո՞ւմ ես՝ ես քեզ ցույց կտամ Հակոբի մահիճը. նրա անկողինը գետինն էր, իսկ բարձը՝ քարը, որի համար էլ տեսավ իմանալի Քարին և այն սանդուղքը, որով բարձրանում և իջնում էին հրեշտակները (տե՛ս Ծն. 28):

Այդպիսի՛ մահիճներ պատրաստենք, որ նույնպիսի երազներ տեսնենք: Իսկ եթե արծաթյա մահիճներում պառկենք, ոչ միայն ոչ մի հաճույք չենք ստանա, այլ նաև տրտմություն կկրենք: Քանզի երբ մտաբերես, որ սաստիկ բքին, գիշերվա կեսին, մինչ դու քնած ես մահճում, աղքատն ընկած է բաղնիքի նախադռանը՝ ծածկված ծղոտով, ցրտից սառած, սովահար, ապա, եթե անգամ բոլորից ավելի քար լինես, քաջ գիտեմ, որ կմեղադրես ինքդ քեզ, որ չափից ավելի ես փափկանում, իսկ նա անհրաժեշտն էլ չունի: «Ոչ ոք, ասում է, զինվոր դառնալով, չի զբաղվի աշխարհիկ գործերով» (Բ Տիմ. Բ 4): Հոգևոր զինվոր ես. հոգևոր զինվորը չի ննջում փղոսկրե մահճակալին, այլ գետնին. չի օծվում յուղերով. այդպիսի բաները հատուկ են անառակացողներին ու ապականվածներին, ովքեր իրենց հոգին սպանում են խաղերի մեջ: Արժան է, որ դու բուրես ոչ թե յուղերով, այլ առաքինությամբ: Ոչ մի բան այնքան անմաքուր չէ, որքան այն հոգին, ում մարմնից այդպիսի անուշահոտություն է բուրում. քանզի մարմնի ու հագուստի անուշահոտությունը ապացույցն է ներքին ապականության ու անմաքրության: Քանզի երբ սատանան, մոտենալով, խորտակում է հոգու զորությունը և լցնում այն բազում վնասներով, այնժամ և նրա մարմնի վրա է տպավորում ապականության աղտը: Ինչպես որ քթից մշտապես հոսող խլինքն ու լորձը աղտոտում են հարբուխ ունեցողների և՛ հագուստները, և՛ ձեռքերը, և՛ դեմքը, այդպես էլ չար հոգին է այն հոսքերով իր մարմնին հաղորդում իր վատթարությունը: Ո՞վ առաքինի ու պիտանի կհամարի նրանց, ովքեր յուղի հոտ են բուրում: Թող քո հոգին բուրի

հոգևոր անուշահոտությամբ, որպեսզի և՛ քեզ, և՛ քո մերձավորներին մեծապես օգուտ լինի:

Զկա՛, չկա՛ փափկակեցությունից վատթար որևէ բան: Լսի՛ր, թե այդ մասին ինչ է ասում Մովսեսը. «Իսրայելը կերավ և հագեցավ, ճարպակալեց և ըմբոստացավ սիրեցյալը» (Բ Օր. ԼԲ 15): Զասաց՝ հեռացավ, այլ՝ ըմբոստացավ սիրեցյալը՝ մեզ ցույց տալով նրա անհնազանդությունը: Եվ դարձյալ՝ մեկ այլ տեղում. «Երբ ուտես ու հագենաս, նայի՛ր ինքդ քեզ» (Հմմտ. Բ Օր. Դ 9): Քանզի փափկակեցությունն այնպես է մոռացության հասցնում: Եվ դու այսուհետև երբ սեղան նստես, հիշի՛ր, որ հարկ է ուտելուց հետո աղոթել. այդպես չափավոր կլցնես որովայնդ, որպեսզի չծանրանաս, կարողանաս ծնրադրել և Աստծուն պաղատել: Զե՞ք տեսնում կենդանիներին, որոնք մսուրում խոտ ուտելուց հետո ճանապարհ են ընկնում՝ ծանր բեռներ կրելով և կատարելով իրենց ծառայությունը: Իսկ դու սեղանից վեր կենալուց հետո անպիտան ու անկարող ես լինում որևէ գործ անելու, մի՞թե էշերից ավելի անարգ չես լինի: Ինչո՞ւ: Որովհետև հենց այդ ժամանակ է պետք հսկել, արթուն և ուրախ լինել. քանզի սեղանից վեր կենալուց հետո աղոթքի ժամն է: Գոհություն հայտնողը չպետք է գինուց հարբի, այլ սթափ և արթուն լինի: Սեղանից չգնա՛նք դեպի մահիճ, այլ աղոթքի, որպեսզի անասուններից անբանական չլինենք:

Գիտեմ, որ շատերը կդատապարտեն ասածներս. իբրև թե նոր ու անհնարին սովորություններ են բերում դրանք: Բայց ես ավելի խիստ կդատապարտեմ չար սովորությունը, որ այժմ իշխում է մեզ: Որ ուտելուց ու խմելուց հետո պետք է և արժան է գնալ ոչ թե քնելու, այլ աղոթքների և աստվածային Գրքերի ընթերցանության, առավել պարզ ցույց տվեց Քրիստոս: Անապատում անթիվ բազմությանը կերակրելուց հետո նրանց չարձակեց դեպի անկողին ու քուն, այլ կոչեց աստվածային խոսքերի ունկնդրության: Նա նրանց որովայնը չլցրեց ուտելիքով և ոչ էլ հասցրեց արբեցության, այլ քաղցը հագեցնելով՝ նրանց բերեց հոգևոր կերակուրի: Այդպես անենք և մենք.

ուտենք այնքան, որքան բավական է կյանքը պահպանելու, այլ ոչ թե կշտանալու և ծանրանալու համար: Քանզի մենք ծնվել ու ապրում ենք ոչ թե այն բանի համար, որ ուտենք ու խմենք, այլ ուտում ենք, որպեսզի ապրենք: Ոչ թե կյանքը՝ կերակուրի, այլ կերակուրը կյանքի համար տրվեց ի սկզբանե: Իսկ մենք կարծես թե դրա համար ենք աշխարհ եկել, այնպես ենք ամբողջ կյանքը ծախսում դրա վրա:

Բայց որպեսզի փափկակեցության դատապարտությունն ավելի սաստիկ լինի և առավելապես վերաբերի նրանց, ովքեր այդպես են ապրում, մեր խոսքը դարձյալ դարձնենք Ղազարոսին: Քանզի մեր խոսքն ու խորհուրդը կլինեն ավելի հավաստի ու իրական, երբ ոչ թե խոսքերից, այլ գործերից տեսնենք, թե ինչպես են խրատվում ու պատժվում շատակերության տրվողները: Այն մեծահարուստը, քանի որ ապրում էր պղծությունների մեջ, ուրախություն էր անում ամեն օր և հագնվում էր փառահեղ, իր համար պատրաստում օր դժնդակագույն պատիժներ, բորբոքում էր մեծ հուրը, անմխիթարելի դատաստանի և աններելի տանջանքների արժանացնելով իրեն: Իսկ աղքատն ընկած էր նրա դարպասների մոտ. չէր դժգոհում, չէր հայհոյում. այդպիսի ոչինչ չասաց և չմտածեց: Որտեղի՞ց է այս հայտնի: Այն բանից, որ հրեշտակները, նրան պաշտպանելով, տարան Աբրահամի գոգը, և նա այնտեղ հանգստանում էր: Եթե նա լուտանքներ թափող լիներ, այդպիսի պատիվներ չէր վայելի:

Որ Ղազարոսի աղքատությունն անցել էր բոլոր աղքատություններից, ցույց տվեց՝ ասելով, թե նա չէր ուտում անգամ այն փշրանքները, որ թափվում էին հարուստի սեղանից: Եվ որ նրա հիվանդությունը հասել էր նրա աղքատության չափին, դարձյալ ցույց տվեց Տերը՝ ասելով, որ շներն էին լիզում նրա վերքերը: Այնքան հիվանդ էր, որ մինչևիսկ շներին չէր կարողանում քշել, այլ ընկած էր իբրև շնչավոր մեռյալ. տեսնում էր, որ նրանք գալիս են, բայց իրեն օգնել չէր կարողանում. այնպես էին թուլացել նրա անդամներն հիվանդությունից, այնպես էին մաշվել փորձություններից:

Տեսնո՞ւմ ես, որ ախտաժետությունը պատանդել էր նրա մարմինը: Կարծես եկած լիներ հատուկ այն բանի համար, որ ուրիշի բարեկեցության վկան լիներ. նա ընկած էր դռների մոտ՝ ունենալով միայն սեփական աղետներն զգալու չափ կյանք: Համբերում էր նավահանգստում նավաբեկվելուն. աղբյուրը մոտ էր, բայց դժնդակ ծարավով տանջվում էր հոգին:

Ասե՞նք այս ամենից վեր մեկ այլ աղետի մասին: Նա չէր կարողանում տեսնել մեկ ուրիշ Ղազարոսի: Մենք, եթե անգամ բյուրավոր չարիքներ կրենք, ունենք բավարար մխիթարություն. նրան նայելով՝ մեծապես կսփոփվենք, քանի որ տառապողների համար մեծ մխիթարություն է, երբ նրանք գտնում են իրենց նման տառապողների: Իսկ նա չէր կարող տեսնել որևէ մեկի, որ իր նման չարչարվեց:

Դրան կարելի է ավելացնել և այն, որ նա չէր կարող իմաստասիրել հարության մասին, այլ կարծում էր, թե այս աշխարհի գործերը ավարտվում են այս կյանքի հետ. քանզի նա ապրում էր շնորհներից առաջ[1]: Եթե այժմ, այսպիսի աստվածճանաչողությունից, [հարության] քաղցր հույսից հետո, երբ գիտենք, որ մեղավորներին այնտեղ սպասող պատիժների և առաքինիների համար պատրաստված բարիքների մասին, ոմանք կարճամտելով, ոմանք տաղտկալով այնպես են ընկնում մնում, որ առաքինության չեն դառնում այնգամ այդպիսի հույսով, ապա որքան կտառապեր նա, ով չուներ այդպիսի խարիսխ: Քանզի նա չէր կարող այդ ամենի մասին իմանալ, քանզի դեռևս այդպիսի ուսմունքների ժամանակը չէր հասել:

Այդ ամենի հետ կար նաև մեկ այլ բան. այն, որ մարդիկ, հատկապես անմիտները, կարող էին մեղադրել իրեն: Քանզի Սովորաբար շատերը սովոր են ասել, թէ եթե սա Աստծո սիրելին լիներ, մի՞թե կտեսներ այսպիսի աղքատություն ու այսքան չարիքներ: Այս պատահեց նաև Հոբին ու Պողոսին: Հոբին ասում էին. «Եթե փորձենք քեզ խոսքեր ասել, քեզ դժվար չի՞ լինի: Եվ ո՞վ կարող է զսպել իրեն, որ չխոսի:

[1] Տիրոջ՝ աշխարհ գալուստից առաջ՝ Հին Ուխտի ժամանակ:

Ահա դու շատերին ես խրատել, տկար ձեռքերը զորացրել, սասանվողին կանգնեցրել են քո խոսքերը, դու կազդուրել ես ծռված ծնկները: Բայց հիմա, որ քեզ է պատահել, դժվա-րանում ես, քեզ դիպավ, և դու վրդովվում ես: Մի՞թե քո երկյուղածությունը չէ քո հույսը, և քո ճանապարհների կա-տարելությունը՝ քո ակնկալությունը» (Հոբ Դ 2-6): Այս խոս-քերի իմաստն այս է. եթե դու որևէ բարի գործ արած լիներիր, ապա չէիր կրի այն, ինչ կրում ես. այլ դու կրում ես քո մեղ-քերի ու անօրենությունների պատիժը: Եվ այս էր, որ առա-վել էր խոցում Հոբին: Պողոսի մասին էլ բարբարոսներն էին նույնն ասում. երբ տեսան նրա ձեռքից կախված քարբին, նրա մասին լավ բան չմտածեցին, այլ նրան համարեցին մեծ անօրեններից մեկը. սա երևում է նրանց խոսքերից. «Սրան, ասում էին նրանք, որ ծովից փրկվեց, Աստծո արդարությու-նը թույլ չի տալիս, որ ապրի» (Գործք, ԻԸ 4): Եվ սովորաբար մեզ այդ էլ քիչ չի խռովեցնում: Բայց միմյանց հաջորդած այդքան մրրիկներից հետո չխորտակվեց նավը, այլ ասես նավահանգստում գտնվելով՝ իմաստասիրեց այնպես, կարծես զովանում էր մշտնջենավոր ցողով:

Ինձ մի՛ ասա, թե այդ մարդը վայելում է ճոխ սեղանից, հագնում է մետաքսե հագուստներ, շրջապատված է սպասա-վորների դասերով, որոնք հրապարակներում նրանից հեռու են քշում մարդկանց, այլ բա՛ց արա նրա խիղճը և ներսում կտես-նես մեղքերի հսկայական խռովքը, մշտական վախը, փոթո-րիկը, շփոթը. կտեսնես, որ միտքը, իբրև ատյանում, ելնելով խղճմտանքի արքայական գահին և դատավորի պես նստելով՝ ցույց է տալիս խորհուրդները, որոնք իբրև դահիճներ, խոշ-տանգում են նրա հոգին, մեղքերի պատճառով ծվատում են նրան և բարձրաձայն բարբառում, երբ այդ մասին չգիտի ոչ ոք, բացի ամենատես Աստծուց: Քանզի շնացողը, թեպետև անսահման հարուստ լինի և չունենա ոչ մի մեղադրող, ներ-քուստ չի դադարում ինքն իրեն ամբաստանելուց. նրա հեշ-տությունը ժամանակավոր է, իսկ տրտմությունը՝ մշտական: Իսկ արդարները, եթե անգամ կրում են անհամար աղետներ, այստեղ սնվում են քաղցր հույսով՝ ուրախություն ունենալով մաքրությունն ու հաստատուն հավատը, իսկ դրանից հետո փոխվում են անհամար բարիքների մեջ, ինչպես Ղազարոսը:

Ինձ մի՛ ասա այն, որ նա վերքերի մեջ էր, այլ նայի՛ր այն բանին, որ նա ուներ ամենայն ոսկուց առավել պատվական հոգի. ավելի ճիշտ՝ ոչ միայն հոգի, այլ նաև մարմին, քանզի մարմնի առաքինությունը նրա պարարտությունն ու քաջա-ռողջությունը չեն, այլ այդպիսի տանջանքներին դիմանալը: Քանզի դարշելի է ոչ թե նա, ով իր մարմնի վրա վերքեր ու-նի, այլ նա, ով իր հոգում բյուր վերքեր ունենալով, դրանցից ոչ մեկի համար չի մտահոգվում, ինչպիսին այն հարուստն էր ներքուստ ամբողջովին վերքապատ: Եվ ինչպես որ շնե-րը լիզում էին Ղազարոսի վերքերը, այդպես էլ դևերը՝ նրա մեղքերը. ինչպես որ Ղազարոսը ապրում էր կերակրի սովով, այդպես էլ վերջինը՝ առաքինության սովով:

Արդ, այս ամենն իմանալով՝ իմաստասիրե՛նք և չասենք, որ եթե Աստված սիրեր այնինչին, թույլ չէր տա, որ նա աղ-քատ լիներ: Քանզի հենց ա՛յդ է Նրա սիրո նշանակը, քան-զի. «Տերը ում սիրում է, խրատում է, պատժում է ամեն մի որդու, որին ընդունում է» (Եբր. ԺԲ 6): Եվ դարձյալ՝ «Որդ-յա՛կ, եթե նվիրվում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փոր-ձություններո՛ւ պատրաստիր: Ուղղի՛ր քո սիրտը, համբերի՛ր և շփոթության մի՛ մատնվիր աղետների ժամանակ» (Սիրաք, Բ 1-2): Հեռացնե՛նք այսպիսի կարծիքը, այս դիվական խոս-քերը, քանզի. «Զազրախոսություն, հիմարաբանություն ու խեղկատակություն, ասում է առաքյալը, թող չելնի ձեր բե-րանից» (տե՛ս Եփես. Դ 29): Ինքներս չասե՛նք և երբ տեսնենք ուրիշների, որոնք այդպիսի բաներ են խոսում, փակե՛նք բե-րանները, սաստկապես ընդդիմանա՛նք նրանց և սանձե՛նք անամոթ լեզուները:

Եթե տեսնեիր, որ մեկը ավազակություն է անում ճանա-պարհներին, դարանակալում անցորդներին, հափշտակում է ագարակներից, քարայրերում թաքցնում ոսկին ու արծաթը, այնտեղ փակում շատ նախիրներ, հագուստներ ու ստրուկ-

ներ ձեռք բերում իր հափշտակություններով, երանի կտայի՞ր նրան հանդերձյալ դատաստանի համար: Սակայն նա դեռևս բռնված ու սատանայի ձեռքը մատնված չէ, դեռ բանտ չի ընկել, չի մեղադրվել ու դատավճռով չի դատապարտվել, այլ փափկանում է, հարբում, վայելում մեծ ճոխությունների մեջ: Սակայն մենք նրան երանելի չենք համարում այս և այլ երևացող բաների համար, այլ թշվառ՝ նրան սպասող ապագայի, այն ահավոր դատաստանի, այն անվերջանալի տանջանքների համար: Ավազակները շատ անգամ փախան մարդկանց ձեռքից, բայց նրանց իմանալով՝ ո՛չ մեզ և ո՛չ էլ մեր թշնամիներին անգամ չենք ցանկանում նրանց կյանքն ու նզովյալ հարստությունը: Բայց Աստծո մասին չենք կարող այս ասել, քանի որ ոչ ոք չի փախչի Նրա հրամանից, այլ բոլոր նրանք, որ ապրում են ավելաստացությամբ ու հափշտակությամբ, այն մեծահարուստի նման դեպի իրենց են հրավիրում Նրա անմահ դատաստանը, որ չունի վախճան:

Այս ամենը լա՛վ իմանալով, երանելի համարենք ո՛չ թե ճոխությամբ, այլ առաքինությամբ ապրողներին, և դժբախտ համարենք ոչ թե աղքատության, այլ մեղքերի մեջ ապրողներին: Զնայենք այս կյանքին, այլ իմանանք հանդերձյալը, չնայենք արտաքինին ու հագուստներին, այլ քննենք յուրաքանչյուրի խիղճն ու փնտրենք առաքինություն և ուրախություն: Նախանձե՛նք Ղազարոսին, հարուստնե՛ր ու աղքատնե՛ր, քանզի նա համբերեց ոչ թե մեկ, երկու կամ երեք, այլ բազում չարչարանքների՝ աղքատության, հիվանդության, միայնության, այդ աղետները կրեց մի տան մեջ, ուր կարող էր վերջ դրվել այդպիսի չարիքներին: Համբերեց այս ամենին, տեսավ արհամարհանք այդպիսի փափկության մեջ վայելողներից և ոչ միայն այդպիսի փափկություն վայելողներից, այլ նաև պղծության մեջ ապրողներից և ոչ մի աղետ չկրողներից, չէր կարող տեսնել մեկ ուրիշ Ղազարոսի և ոչ էլ կարող էր իմաստասիրել հարության մասին: Եվ ասված այս բոլոր տառապանքներից բացի, համբերեց նաև բազմության՝ իր թշվառության պատճառով իր մասին վատ կարծիքին և

ոչ թե երկու կամ երեք օր, այլ իր ամբողջ կյանքում իրեն տեսավ այսպիսի թշվառ, իսկ հարուստին հակառակ վիճակում:

Ի՞նչ պատասխան պիտի ունենանք, եթե այնժամ, երբ նա այդպիսի արիությամբ համբերեց միաժամանակ բոլոր դժնդակություններին, մենք դրա կեսն անգամ չենք տանում: Քանզի դու չես կարող, չես կարող ցույց տալ մեկ ուրիշի, ով այսքան և այսպիսի չարիքներ կրեց: Դրա համար էլ Քրիստոս նրան ի ցույց դրեց, որպեսզի մենք, ինչպիսի դժնդակություն էլ կրենք, նայելով այս թշվառի չափազանց մեծ աղետներին, բավականաչափ մխիթարություն ու սփոփանք ստանանք նրա իմաստասիրությունից ու համբերությունից, քանզի նա համայն տիեզերքում ներկայանում է իբրև ուսուցիչ բոլոր նրանց համար, ովքեր դժնդակ չարչարանքներ են կրում՝ բոլորին ընձեռելով նայել իրեն և հաղթել իր դերազանցող աղետներով: Ուստիև այս ամենի համար մարդասեր Աստծուց գոհանալով՝ շահավետ պտուղներ քաղենք և օգտվենք այս պատմությունից, այն հաճախ հիշենք հավաքներում, տանը, հրապարակում, ամենուր և այս առակից վերցնենք ամբողջ հարստությունը, որպեսզի առանց տրտմության անցնենք այս կյանքի դժվարությունների միջով և հանդիպենք հանդերձյալ բարիքներին, որոնց թող արժանի լինենք մենք ամենքս շնորհներով և մարդասիրությամբ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի, Ում հետ Հորը և Սուրբ Հոգուն փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՍԱԾ ՃԱՌԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԵՎ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏԻ ԵՎ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ՄԱՍԻՆ

Ա. Տեսա՞ք Աստծո զորությունը, տեսա՞ք Աստծո մարդասիրությունը. զորությունը՝ երբ շարժեց, դղրդեցրեց երկիրը, մարդասիրությունը՝ երբ կանգնեցրեց ընկածը. ավելի ճիշտ՝ երկուսի մեջ էլ զորությունն ու մարդասիրությունը. քանզի շարժելը՝ զորության, իսկ կանգնեցնելը մարդասիրության [արտահայտություն] են. Նա շարժեց երկիրն ու կանգնեցրեց՝ հաստատելով այն, ինչ մոտ էր կործանման:

Երկրաշարժն անցավ, բայց թող մնա վախը, չփոթությունն անցավ, դադարեց, բայց թող չանցնի ահը. մենք խնդրվածքներ մատուցեցինք երեք օր, չդադարեցնենք մեր ջանքերն ու հոժարությունը: Երկրաշարժը եղավ հենց այդ պատճառով. մեր հեղգության պատճառով. մենք անփութացանք և կանչեցինք երկրաշարժը, ուղղվենք և ետ դարձնենք բարկությունը: Դարձյալ չծուլանանք, որպեսզի դարձյալ բարկության պատիժներ չբերենք, քանզի. «Աստված չի կամենում մեղավորի մահը, այլ նրա ետ կանգնելն իր չար ճանապարհից և ապրելը» (Եզեկ. ԼԳ 11):

Տեսա՞ք, թե որքան տկար ու վաղանցիկ է մարդկային ազգը: Երբ տեղի էր ունենում երկրաշարժը, մտածում էի, թե որտե՞ղ են հափշտակությունները, որտե՞ղ է ագահությունը, որտե՞ղ են բռնություններն ու ամբարտավանությունը, որտե՞ղ է զորությունը, որտե՞ղ են հարստահարությունները, որտե՞ղ են աղքատների հալածանքները, որտեղ են հարուստների ամբարտավանությունը, իշխանների զորությունը, սպառնալիքներն ու արհավիրքները. ժամանակի մի [կարճ

վայրկյան], և ամեն բան ընկավ ու կործանվեց սարդոստայնից էլ հեշտ, ամեն բան միանգամից քանդվեց, քաղաքը դողաց ու դղրդաց, և բոլորը փախան եկեղեցի: Մտածե՛ք, թե ինչ կլիներ մեզ, եթե Աստված կամենար ամեն բան տապալել: Այս ասում եմ, որպեսզի ձեր մեջ մշտապես կենդանի լինի վախը կատարվածից, և հաստատուն դարձնեմ ձեր միտքը: Քանզի Աստված նախ երկիրը շարժեց, որպեսզի վախով հաստատուն դարձնի մտքերը: Շարժեց, դղրդեցրեց [երկիրը], բայց չկործանեց այն. եթե կամենար կործանել, չէր շարժի, և քանի որ այդ չկամեցավ, երկրաշարժը, իբրև քարոզիչ, առաջ եկավ՝ ՝ բոլորին հայտնելու [Աստծո] բարկությունը, որպեսզի ահից ու երկյուղից լավագույն դառնանք, մեզնից հեռացնենք մեր գործերի համար պատիժը:

Նա այդպես վարվեց բարբարոս ազգերի հետ. «Երեք օր ևս, և Նինվեն պիտի կործանվի» (Հովն. Գ 4): Ինչո՞ւ ես նախապես ասում: Քանի որ, ասում է, չեմ կամենում կործանել: Իսկ ինչու ես ասում: Որպեսզի չանեմ ասածս: Թող խոսքը գուժի, որպեսզի կանխի գործը: «Երեք օր ևս, ասում է, և Նինվեն պիտի կործանվի»: Այն ժամանակ մարգարեն, իսկ այժմ որմերն են բարբառում ու աղաղակում: Այս ասում եմ և չեմ դադարելու ասել աղքատներին ու հարուստներին. մտածեցե՛ք, թե ինչպիսին է Աստծո բարկությունը, և կամ թե ինչպես ամեն բան հնարավոր ու հեշտ է Նրա համար, և ե՛տ կանգնեցեք ձեր չար գործերից: Ժամանակի մեկ վայրկյանում Նա ջախջախեց յուրաքանչյուրի հոգին ու միտքը և սասանեց սրտի հիմքերը:

Իմանանք ու մտաբերենք այն ահագին Օրը, ոչ թե կարճ ժամանակյա ինչ-որ բան, այլ հրեղեն ու հորդառատ գետեր, սպառնալից բարկություն, դատաստանի բռնություն, ահավոր բեմ ու անաչառ դատաստան, ամեն մեկի գործերն իր աչքի առջև կլինեն, ոչ ոք չի լինի, որ օգնի՝ ո՛չ դրացի և ո՛չ մերձավոր, ո՛չ ազգական և ո՛չ եղբայր, ո՛չ հայր և ո՛չ մայր, ո՛չ օտար և ո՛չ ուրիշ որևէ մեկը, ի՞նչ պետք է անենք այնժամ, ասա՛ ինձ: Սաստկացնում եմ վախը, որպեսզի պատրաստեմ փրկությունը. ամենայն երկայրի սրից առավել հատու եմ դարձնում վարդապետությունս, որպեսզի եթե մեր մեջ լինի մեկը, որ թարախակալած վերք ունի, բժշկվի:

Մշտապես չէի՞ ասում, այժմ էլ եմ ասում՝ անձանձրո՛ւյթ եղեք մինչև այն ժամը, բևեռեցե՛ք ձեզ երկյուղին: Բոլորի՛ն եմ ասում, առավելապես հիվանդներին ու հոգնածներին և ձեզ, որ չեք կամենում ունկնդիր լինել վարդապետությանս խոսքերին. մանավանդ, որ խոսքս օգտակար է երկու կողմին էլ. հիվանդին, որպեսզի առողջանա, և առողջին, որ անցավ մնա: Մինչև ե՞րբ ունեցվածք, մինչև ե՞րբ հարստություն, մինչև ե՞րբ հոյակերտ շինությունների ամբարտավանություն, մինչև ե՞րբ հաճույքների հանդեպ անհոգի սիրո մոլուցք: Ահա վրա հասավ երկրաշարժը. ի՞նչ օգուտ բերեցին հարստությունն ու վաստակը: Երկուսն էլ ընկան կործանվեցին, ստացվածքները կորան իրենց տիրոջ հետ, ապարանքն՝ իր կառուցողի հետ, քաղաքը դարձավ համընդհանուր գերեզմանոց՝ հանկարծակի գերեզմանոց՝ ոչ թե վարպետների ձեռքով, այլ դժբախտ պատահարով: Ո՞ւր է հարստությունը, ո՞ւր է հափշտակությունը, ո՞ւր է ագահությունը. տեսնո՞ւմ ես՝ սարդոստայնից էլ տկար ու թույլ եղան:

Բ. Բայց [թերևս] մեկը կասի, թե՝ ի՞նչ ես շահում ասածներիցդ: Կշահե՛մ, եթե որևէ մեկը լսի: Ես իմն եմ անում. սերմնացանը սերմանում է: «Ելավ, ասում է, սերմնացանը սերմերը ցանելու. և սերմերն ընկան մեկը՝ ճանապարհի մոտ, մեկը՝ քարի վրա, մեկը՝ փշերի մեջ, և մեկն էլ՝ պարարտ հողի մեջ» (տե՛ս Մատթ. ԺԳ 3-8), երեք մասը կորավ, մի մասը մնաց: Երեք մասի կորչելու պատճառով [սերմնացանը] հրաժարվե՞ց անդաստանից. որովհետև մի մասը մնաց, չդադրեցրեց մշակությունը: Եվ այժմ անհնարին է, որ սերմերը, որ սերմանվում են այսքան մեծ բազմության մեջ, պտուղներ չբերեն. եթե բոլորը չեն լսում, կեսը լսում է, եթե ոչ՝ կեսը, ապա՝ երրորդ մասը, եթե ոչ երրորդ մասը, ապա՝ տասներորդը, եթե այս բազմությունից գեթ մեկն էլ լսի, միայն թե լսի:

Քիչ կարևոր չէ մեկ ոչխար փրկելը. այն բարի հովիվը, իննսունինը ոչխարը թողած՝ գնում էր մեկի՝ մոլորվածի ետևից (Մատթ. ԺԸ 12):

Մեկ մարդու համար էլ անհոգ չեմ, քանի որ Աստծուն սիրելի կենդանի արարածը, եթե ստրուկ էլ լինի, արհամարհելի չէ. [Աստված] ոչ թե կոչում է փնտրում, այլ առաքինություն, ոչ թե ծառայություն, ոչ թե իշխանություն, այլ մաքուր հոգի: Մի՛ ասա, թե մեկ մարդ է: Թեպետև մեկն է, մարդ է, ում համար ձգվեց երկինքը, և հաստատվեց երկիրը, ծագում է արեգակը և ընթանում է լուսինը, սփռվեց օդը, բխեցին աղբյուրները, ծավալվեց ծովը, ուղարկվեցին մարգարեները, տրվեց օրենքը, և հարկ է նաև այս ասել՝ նրա համար Աստծո Միածին Որդին մարդ եղավ, Տերը սպանվեց և Իր արյունը թափեց մարդու համար, իսկ ես անտեսեմ ու արհամարհե՞մ նրան, ինչպե՞ս թողություն կգտնեմ: Չլսեցի՞ք, թե մի սամարացի կնոջ համար վարդապետության որքան խոսքեր խոսեց Քրիստոս, բյուր բաներ ասաց, ոչ թե սամարացի լինելու պատճառով արհամարհեց, այլ անուշադրության չմատնեց նրան, որովհետև հոգի ուներ. պոռնիկ լինելու պատճառով չանտեսեց նրան, այլ մեծապես հոգաց նրա մասին, որպեսզի նա էլ կարողանա փրկվել և հավատն ընդունել:

Չեմ լռի այս ասելուց, եթե անգամ ոչ մի լսող չլինի. բժիշկ եմ, բուժող դեղ եմ դնում, վարդապետ եմ, ինձ հրամայվեց ուսուցանել, նաև ասաց. «Պահակ կարգեցի քեզ Իսրայելի այդ տանը» (Եզեկ. Գ 17): Ոչ ոք չի՞ ուղղվի, ի՞նչ է: Սակայն ես վարձատրությունից չեմ զրկվի: Ես չափից ավելին ասացի. անհնարին է, որ այսպիսի բազմության մեջ որևէ մեկը չուղղվի:

Անմիտ լսողների պատճառաբանություններն այսպիսին են. եթե մշտապես լսեմ, ասում են, բայց չկատարեմ, ի՞նչ օգուտ է ինձ: Եթե անգամ չկատարես, լսի՛ր. լսի՛ր, որպեսզի դրանից էլ մի օգուտ լինի. եթե անգամ չանես, կփոխես վարքդ, եթե անգամ չանես, կամաչես մեղքերիդ համար, եթե անգամ չանես, կդատապարտես քեզ: Իսկ որտեղի՞ց է ինքնադատապարտությունդ, մի՞թե իմ խոսքերի պտուղը չէ այն: Երբ դու ասես, թե՝ վա՛յ ինձ, եղո՛ւկ ինձ. լսեցի և չեմ կատարում, «վա՛յ ինձ» ասելն իսկ սկիզբն է փրկության, և «եղո՛ւկ ինձ»ը՝ գլուխը առաջադիմության: Մե՞ղք գործեցիր, զղջացիր ու լա՞ց եղար, լուծեցիր մեղքը, քանզի գրված է. «Ասա՛ դու քո անօրենությունները, որ արդարացվես» (Ես. ԽԳ 26): Երբ տրտմես ու սգաս, կգտնես փրկություն, այդ տրտմությունը փրկության է տանում ոչ թե իր էության, այլ Տիրոջ մարդասիրության շնորհիվ. նրա համար, ով մեղքեր ունի, փոքր մխիթարություն չէ զղջալն ու հոգոց հանելը, քանզի. «Տեսա, ասում է Աստված, որ մեղքի պատճառով տրտմեց ու սգաց, և բժշկեցի նրա ճանապարհները» (տե՛ս Ես. ԾԷ 17, 18): Ո՛վ անչափ մարդասիրություն ու բարերարություն, որ ոչ ոք մեկնել չի կարող. տրտմեց, ասում է, և ես բժշկեցի նրա ճանապարհները: Ի՞նչ մեծ բան է զղջալը, մեծ բան չէ, բայց ես դրա մեջ [նրան բժշկելու] պատճառ դառա:

Տեսա՞ք, թե ինչպես մի կարճ ժամանակում բոլորին հավաքեց ու խմբեց այստեղ: Մտաբերեք [երկրաշարժի] այն երեկոն: Բոլորը վախեցան երկրաշարժից, ես՝ դրա պատճառից: Հիշո՞ւմ եք՝ ինչ ասացի. թե ոմանք զարհուրում էին՝ չլինի թե քաղաքը քանդվի, և իրենք մեռնեն, իսկ ես մտածում էի. «Վա՛յ ինձ, ուրեմն Տերը բարկացել է»: Քանզի մեռնելը չարիք չէ, չարիք է Արարչին բարկացնելը: Ես վախեցա ոչ թե երկրաշարժից, այլ երկրաշարժի պատճառից, քանի որ երկրաշարժի պատճառը Աստծո բարկությունն է, իսկ Աստծո բարկության պատճառը՝ մեր մեղքերը: Երբեք մի՛ վախենա պատիժներից, այլ վախեցիր մեղքերի՛ց, որ մայրն են պատիժների: Քաղաքը շարժվում ու սասանվո՞ւմ է, բայց թող չշարժվի քո միտքը. մենք չենք տխրում ու դողում նրանց համար, ովքեր բժշկվում են, այլ նրանց համար, ովքեր տառապում են անբժշկելի հիվանդությամբ: Մեղքերը նույնն են, ինչ հիվանդություններն ու վերքերը, իսկ պատիժը նույնն է, ինչ կտրելն ու բժշկելը:

Գ. Հասկացա՞ք արդյոք, թե ինչ եմ ասում: Ուշադի՛ր եղեք, կամենում եմ ձեզ իմաստուն բաներ ուսուցանել: Ինչո՞ւ ենք մենք սգում ու տխրում պատժվողների, այլ ոչ թե մեղավորների համար: Պատիժն այնքան ծանր չէ, որքան մեղքը, որովհետև պատժի պատճառը մեղքն է: Ինչպես որ եթե մարդու մարմնի վրա տարածված լինի նեխած, փտած, հոտած ու որդնալից թարախով պատված վերք, և նա անտարբեր լինի դրա նկատմամբ, իսկ նրա ընկերը, ով նույնպիսի վերք ունի, բժիշկների հոգաբարձությամբ այրելով, կտրելով և դառը դեղեր դնելով՝ բժշկի այն, նրանցից որի՞ն կսգաս, ասա՛ ինձ. նրան, ով հիվանդ էր և բժշկվե՞ց, թե՞ նրան, ով հիվանդ է և չի մոտենում՝ բժշկվելու: Իհարկե նրան, ով հիվանդ է և չի բժշկվում:

Նույնն էլ թող քեզ համար լինեն երկու մեղավորը. մեկը՝ պատժի տանջանքների մեջ, մյուսը՝ ոչ: Երբեք չասես՝ երանի՛ նրան, որովհետև հարուստ է. կողոպտում է որբերին, բռնադատում է այրիներին, բայց երբեք չի հիվանդանում, այլ իր հափշտակությամբ առաջ է գնում, վայելում է պատվի ու իշխանության մեջ, մարդկային ոչ մի դժբախտություն չի կրում, չի հիվանդանում, որդիներով ու պատկառանքով շրջապատված՝ ապրում է մինչև խորը ծերություն, բայց հենց այդպիսի՛ մարդուն ողբա, որովհետև նա հիվանդ է և չի բժշկվում: Ինչպե՞ս: Կասեմ: Եթե տեսնես ջրդողությամբ հիվանդացած մի մարդու, որի մարմինն ուռել է փայծաղի հիվանդությունից, իսկ նա չի շտապում բժշկի մոտ, այլ ամեն օր իր առջև դնում է սառն ըմպելիքներով ու բազմազան խորտիկներով պատրաստված սեղան, հարբեցողության ու անառակության տալիս իրեն՝ սաստկացնելով իր հիվանդությունը, ապա, ասա՛ ինձ, նրան երանելի՞ կհամարես, թե՞ դժբախտ: Եվ եթե նրա ընկերը նույն հիվանդությամբ հիվանդանա, իրեն հանձնի բժիշկների խնամքին, իրեն նեղի սովով, հրաժարվի շատ բաներից և ընդունի դառը դեղեր, որոնք միառժամանակ կսաստկացնեն ցավերը, բայց դրանից հետո կբերեն առողջություն, դու առավել երանի չե՞ս տա այդ մարդուն, քան մյուսին: Անշուշտ, կտաս, քանի որ նա հիվանդ է և չի բժշկվում, իսկ սա հիվանդ է և բժշկվում է: Բայց, կասի, բժշկվելու համար մեծ չարչարանք է պետք: Բայց դրա վախճանը նրանց օգտակար է:

Այդպես էլ այս աշխարհում. մտքով փոխադրվիր մարմիններից դեպի հոգիները, հիվանդություններից դեպի մեղքերը, չարաչար, դառը դեղերից դեպի պատիժներն ու Աստծո դատաստանը. քանզի Աստծո պատիժը նույնն է, ինչ բժշկող դառը դեղերը, այրելն ու կտրելը: Ինչպես կրակն է մոտենալով՝ այրում վերքը և կանխում նրա տարածումը, իսկ երկաթը, ցավ պատճառելով, պատռում է թարախը և մաքրում, և մի որոշ ժամանակ ցավ զգալուց հետո օգուտ և շահ է լինում, այդպես էլ պատիժներն ու խրատները՝ սովը, հիվանդություններն ու բոլոր մյուս բաները, որ աղետներ են թվում, թափվում են հոգու վրա երկաթի ու կրակի փոխարեն, որպեսզի կասեցնեն նրա հիվանդությունների տարածումը և նրան լավագույն դարձնեն:

Դարձյալ, թող լինի երկու պոռնիկ, իբրև օրինակ ենք այս ասում. մեկը՝ հարուստ, մյուսը՝ աղքատ: Նրանցից ո՞վ ավելի շատ փրկության հույս կունենա. պարզ է՝ աղքատը: Մի՛ ասա, թե հարուստը պոռնկանում և հարստանում է, դրա համար էլ երանի եմ տալիս նրան: Ավելի լավ կլիներ՝ երանի տայիր նրան այն դեպքում, եթե նա պոռնկանալով՝ աղքատանար և սովից տանջվեր, քանի որ նա իր կամքից անկախ աղքատությանն համբերելը իբրև առաքինության ուսուցիչ կունենար: Երբ անբարո ու չար մարդուն բարօրության մեջ տեսնես, լա՛ց եղիր և ողբա՛ նրան. քանի որ այստեղ երկու չարիք կա՝ հիվանդությունը ու չբժշկվելը: Երբ անբարո մարդուն տառապանքների ու տրտմության մեջ տեսնես, մխիթարվի՛ր, ոչ միայն, որ նա լավագույնը կդառնա, այլ նաև, որ այստեղ իսկ կթեթևացնի իր մեղքերի բեռը:

Ուշադրությա՛մբ լսեք խոսքերս: Շատ մարդիկ պատժվում են և՛ այստեղ, և՛ այնտեղ, ոմանք՝ միայն այստեղ, ոմանք էլ՝ միայն այնտեղ: Լսեցե՛ք իմ այս վարդապետությունը և հիշե-

ցե՛ք խոսքերս, որպեսզի ձեր մտքերն ազատեք շատ շփոթություններից: Բայց եթե կամենում ես, նախ խոսենք այն մարդու մասին, ով տանջվելու է այնտեղ, իսկ այստեղ վայելում է շքեղության մեջ: Իմ այս խոսքերը թող լսեն հարուստներն ու աղքատները, քանզի երկուսին էլ օգտակար են դրանք: Որ շատերը պատժվում են և՛ այստեղ, և՛ այնտեղ, լսի՛ր Քրիստոսին, որ ասում է. «Որ քաղաքը կամ գյուղը մտնեք, հարցրեք, թե ով է այնտեղ արժանավորը և այնտեղ մնացեք, մինչև այնտեղից դուրս ելնելը: Եվ երբ այն տունը մտնեք, ողջույն տվեք նրան ու ասացեք՝ խաղաղությո՛ւն այս տանը: Եթե տունն արժանի է, թող ձեր ողջույնն իջնի նրա վրա, իսկ եթե արժանի չէ, ձեր ողջույը թող ձեզ վերադառնա: Եվ եթե մի քաղաք չընդունի ձեզ և չլսի ձեր խոսքերը, այդ քաղաքից դուրս գնալիս ձեր ոտքերից փոշին թոթափեցեք: Ճշմարիտ եմ ասում ձեզ, սոդոմացիների ու գոմորացիների երկրի համար ավելի հեշտ պիտի լինի դատաստանի օրը, քան այդ քաղաքի համար» (Մատթ. Ժ 11-15): Այստեղից հայտնի է, որ սոդոմցիներն ու գոմորցիները և՛ այստեղ պատժվեցին, և՛ այնտեղ պիտի պատժվեն, քանզի երբ Աստված ասում է, թե սոդոմացիների համար ավելի հեշտ պիտի լինի, քան այս մարդկանց համար, ցույց է տալիս, որ նրանք պատժվելու են ոչ այնպես, ինչպես սրանք:

Դ. Դարձյալ՝ կան ոմանք, որ միայն այստեղ են տանջվում, ինչպես այն պոռնկացողը, որի մասին կորնթացիներին ուղղված թղթում այսպես է գրում երանելի Պողոսը. «Ներկայումս լսում ենք, թե պոռնկություն կա ձեր մեջ, և այնպիսի պոռնկություն, որ հեթանոսների մեջ իսկ չկա, որպես թե մեկն ապրի իր հոր կնոջ հետ: Իսկ դուք հպարտանում եք, ավելին՝ չեք էլ սգում, որպեսզի վերանա ձեր միջից նա, ով այդ արարքը կատարեց. ես թեպետև մարմնով հեռու եմ, բայց հոգով՝ մոտ. իսկ ես, որպես թե մոտ լինեի, դատեցի նրան, որ այդպիսի բան գործեց,- հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի, երբ դուք և իմ հոգին միասին կհավաքվեք մեծ Տեր Հիսուս Քրիստոսի զորությամբ հանդերձ, մատնեցե՛ք այդպիսի մեկին սատանային՝ նրա մարմնի կորստյան համար, որպեսզի նրա հոգին ապրի մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրում» (Ա Կոր. Ե 1-5): Ահա սա այստեղ պատժվեց, իսկ այնտեղ չի պատժվում:

Կամենում եմ ցույց տալ և նրան, ով այստեղ հղփանում էր շքեղության մեջ, իսկ այնտեղ տանջանքների մեջ էր: «Մի մեծահարուստ մարդ կար» (Ղուկ. ԺԶ 19): Դուք արդեն տեսնում եք այս պատմության ընթացքը, բայց սպասեցեք սրա մեկնությանը: Ինձ համար պարծանք, իսկ ձեզ համար գովություն է այն, որ սերմերը դեռ նոր սերմանված՝ դուք արդեն հավաքում եք խրձերը: Վարդապետությունն ամեն օր լսելը ձեզ վարդապետ է դարձրել, բայց քանի որ միշտ ձեզ հետ այստեղ են գալիս նաև որոշ օտարներ ու անգետներ, ապա մի՛ շտապեք, այլ հանգիստ սպասեք, որպեսզի նրանք էլ իմանան ու խրատվեն: Քանի որ Եկեղեցին մարմին է. այն ունի աչքեր, գլուխ և գարշապար: Երբ փուշը ծակում է գարշապարը, վերևից ներքև՝ դեպի իր մարմնի (մյուս) անդամն է խոնարհեցնում աչքերը՝ առանց մտածելու, թե՝ (ես) բարձրագույն տեղում եմ, արհամարհեմ իմ (ցածում գտնվող) անդամին, այլ խոնարհվում է՝ թողնելով իր բարձրությունը: [Մարմնի] ո՞ր անդամն է ցած գարշապարից, և կամ ի՞նչն է պատվական աչքերից. բայց անդամների՝ [միմյանց հետ] հաղորդակցությունը պատվականին խոնարհեցրեց դեպի անարգը, և սերը բոլորին միաբանեց: Դո՛ւ էլ այդպես արա. թեպետև ունես սուր միտք և պատրաստված ես լսելու, իսկ քո եղբայրը իմացությամբ քեզ հավասարակից չէ, թող քո աչքը խոնարհվի դեպի քո գարշապարը, թող վշտակից լինի իր տկար անդամին, որպեսզի քո սուր մտքի և իր դանդաղելու պատճառով չմնա առանց ուսուցման: Քո խելամտության պատճառով նրան կորուստ մի՛ նյութիր, այլ գոհացի՛ր Աստծուց քո սուր միտք ունենալու համար: Հարո՞ւստ ես, ուրախ եմ և ցնծում եմ, բայց մյուսը դեռ աղքատ է. թող քո հարստության պատճառով չմնա աղքատության մեջ. տգետ, շփոթված միտք ունի, խոնարհվի՛ր դեպի նա և հանի՛ր անգիտության փուշը:

[Աստված] ի՞նչ է ասում. «Մի մեծահարուստ մարդ կար, որ միշտ ծիրանի էր հագնում, և ամեն օր առատապես ուրախություն անում բարիքներով առատ սեղանով ու անուշահամ գինով: Եւ մի աղքատ մարդ ընկած էր նրա դռան առաջ. նրա անունը Ղազարոս էր» (Ղուկ. ԺԶ 19):

Ո՞ւր է մեծահարուստի անունը. չի երևում ոչ մի տեղ. նա անուն չունի: Ինչպիսի՞ հարստություն է այդ. ծառ էր՝ լի տերևով, բայց անպտուղ, բարձրուղեշ կաղնի էր և պտուղ չուներ: Մարդ էր, բայց գործերը մարդու գործեր չէին: Քանզի ուր հարստություն է և հափշտակություն, գայլ է: Մեծահարուստը գազան էր. այդպիսի մարդուն ոչ թե մարդ եմ տեսնում, այլ առյուծ՝ իր ախտավոր անազնիվ բարքով իր ազնվականությունը կորցրած:

«Մի մեծահարուստ մարդ կար, ասում է, որ միշտ ծիրանի էր հագնում», իսկ ներքուստ հոգին լեցուն էր սարդոստանյով, խունկի հոտ էր շնչում, իսկ ներսից լի էր աղտեղությամբ ու գարշահոտությամբ: Նրա սեղանը լեցուն էր պեսպես խորտիկներով, իսկ սափորները՝ գինիներով՝ ծառային՝ մարմինը պարարտացնելու համար, իսկ հոգին, որ տերն ու ազատն էր, անտեսելով՝ սովամահ էր անում: Փլչելու մոտ էր նրա տունը. սպիտակեցված գերեզման էր, իսկ հոգին՝ անդնդային աղջամուղջի մեջ: Արդ, այն հարուստը շքեղ սեղան ուներ, գինով լեփլեցուն թակույկներ, կերակրում էր պորտաբույծների ու քծնողների՝ սատանայական անկոչ բազմածների, չարիքներով լցված մեծ ամբոխի ու խեղկատակների՝ գայլերի, որոնք գերում են հարուստների տները, իրենց պորտի վաճառականների, որոնք իրենց խեղկատակությամբ, ծաղրելով ու շողոքորթող խոսքերով մեծացնում, ավելացնում են նրանց հպարտությունը և ոչնչացնում ու փչացնում նրանց հարստությունը: Ոչ ոք չի մեղանչի, եթե այդպիսիներին գայլ անվանի, քանզի մեծահարուստին, իբրև ոչխարի, իրենց մեջ առած՝ հպարտացնում ու գոռոզացնում են իրենց գովեստներով և թույլ չեն տալիս ճանաչել իր վերքերը, այլ կուրացնում են նրա միտքը և շատացնում հարվածները: Իսկ

հետո, երբ իրադրությունը փոփոխվում է, այդ բարեկամները փախչում են, և վշտակից ենք դառնում մենք, որ խրատում ենք, իսկ այդ երկերեսանիները փախչում են, որ շատ հաճախ է պատահել:

Ե. Եվ այն մեծահարուստը, որ շրջապատված էր ուրիշի սեղանից կերակրվողներով ու քծնողներով, իր տունը թատրոն ու կատականոց էր դարձրել, բոլորին թուլացնում ու մեռցնում էր գինով. նա մեծ բարեկեցության մեջ էր, իսկ մյուսը՝ Ղազարոսը, բորոտությամբ պատած, մեծահարուստի դռան առջև նստած, ցանկանում էր այն փշրանքները, որ թափվում էին հարուստի սեղանից: Մոտ էր աղբյուրին ու ծարավ էր: Նա մեծ լիության մեջ էր, սա սովից հալչում ու մաշվում էր: Եվ ո՞ւր էր ընկած. ո՛չ հրապարակում, ո՛չ խաչմերուկներին, ո՛չ ճանապարհին և ո՛չ շուկայում, այլ հարուստի դռան առջև, որով հարուստը հարկադրված էր ելնել ու մտնել և նրան ընկած տեսնել, որպեսզի երբեք չկարողանար ասել, թե՝ «Անցա, և իմ աչքերը չտեսան»: Իր անցուդարձի ճանապարհին ընկած էր մարգարիտը տիղմի մեջ, և չէր տեսնում, բժիշկը դռների մոտ էր, և չէր բժշկվում, նավավարը նավահանգստում էր, իսկ նա նավաբեկության էր ենթարկվում, խեղկատակներին բուծում էր, իսկ աղքատներին չէր կերակրում: Սա եղավ այն ժամանակ: Հիմա էլ է լինում: Այդ մասին գրվեց, որպեսզի հետո եկողներս խրատվենք դրանից ու չկրենք այն, ինչ որ նա կրեց:

Եվ ընկած էր նրա դռան մոտ աղքատը. աղքատ էր արտաքուստ, ներքուստ հարուստ էր, ընկած էր՝ մարմինը բորոտության վերքերով պատած, գանձը վրան փուչ ուներ. ներսում մարգարիտներ էին: Ի՞նչ վնաս էր հասցնում նրան մարմնի հիվանդությունը, երբ առողջ էր հոգով:

Թող սա լսեն աղքատները և իրենց աղքատությունը մի բան չհամարեն: Թող այս լսեն հարուստները և փոխեն իրենց չար բարքը: Հենց դրա՛ համար մեզ նկարագրվեց և մեր առջև են այս երկու պատկերը՝ հարստության ու աղքատության,

անողորմության ու ժուժկալության, ագահության ու համբերության: Երբ աղքատին տեսնես հիվանդ ու արհամարհված, նրան խեղճ մի՛ համարիր, իսկ երբ մեծահարուստին տեսնես զարդարված ու պաճուճված, նրան երանի մի՛ տուր, այլ հիշիր և գնա՛ դեպի այս առակը. երբ մոքերդ քեզ խռովեցնեն, շուտափույթ գնա՛, հասի՛ր այս նավահանգիստը և մխիթարությո՛ւն ստացիր այս պատմությունից: Հիշի՛ր արհամարհված ու անտեսված Ղազարոսին, պատկերացրո՛ւ նաև մեծահարուստին՝ բարեկեցության ու շքեղության մեջ վայելողին, և քեզ թող չխռովեցնեն աշխարհիկ կյանք վարողները: Եթե հաստատուն և ուղիղ միտք ունենաս, ալիքները չեն կարող ընկղմել քեզ, քո նավը չի իջնի անդունդները, եթե խելամիտ դատողությամբ զանազանես իրերի բնությունը: Մի՛ ասա, թե՝ մարմինս աղետալի վիճակում է: Թող մի՛տքդ վնասված չլինի: Այնինչը հարուստ է և անօրեն ու չա՞ր: Քեզ ի՞նչ փույթ: Մարդու արտաքինը մի՛ զննիր, այլ ներքինը: Երբ դու ծառ ես տեսնում, տերևների՞ն ես նայում, թե՞ պտուղն ես ճաշակում, իհարկե՝ պտուղը: Այդպես էլ մարդուն. երբ տեսնում ես նրան, ոչ թե արտաքինին, այլ ներքինին [նայիր], պտո՛ւղը ճաշակիր, այլ ոչ թե տերևները շոշափիր. չլինի այնպես, որ վայրի ձիթենուն ընտանի համարես, չլինի թե գայլին մարդ կարծես: Մի՛ զննիր նրա մարմնավոր կերպարանքը, այլ կամքը, ոչ թե տեսքը, այլ բարքը, ոչ միայն բարքը, այլ նաև քննիր գործերը. եթե նա աղքատասեր է, մարդ է. եթե թավալվում է պոռնկության մեջ, լոկ անպտուղ ծառ է. եթե չարաբարո է, գազանամիտ առյուծ է. եթե հափշտակող է, գայլ է. եթե խորամանկ է, իժ է: Բայց կասես՝ ես մարդ եմ փնտրում, ինչո՞ւ ես ինձ մարդուն գազան ցույց տալիս: Իմացի՛ր, թե որոնք են մարդու առաքինությունները, և մի՛ շփոթվիր ու գայթակղվիր:

Արդ, ընկած էր Ղազարոսը դռների մոտ, բորոտությամբ պատած, սովամահ, շներն էին գալիս, լիզում նրա վերքերը: Շները մարդկանցից մարդասեր էին. լիզում էին նրա վերքերը և սրբում էին թարախը: Եվ նա ընկած էր, ինչպես ոսկին՝

հնոցի մեջ՝ զտված ու առավել մաքրված: Եվ չէր ասում, ինչպես աղքատներից շատերը, թե՝ «Սա՞ է Աստծո տեսչությունը՝ անտեսել մարդկանց. ահա ես արդարությամբ եմ ապրում և աղքատ եմ, սա՝ պղծությամբ և հարուստ է»: Այսպիսի բան երբեք չէր էլ մտածում, այլ իր հոգսերը և իրեն ամբողջովին հանձնել էր Աստծու անչափ մարդասիրությանը՝ մաքրելով իր հոգին, համբերելով տառապանքներին և համբերությամբ առաքինանալով: Ընկած էր մարմնով, բայց ընթանում էր մտքով, թռչում և վեր էր բարձրանում կամքով, հափշտակում էր պսակը, չարի և բարու վկան: Եվ չէր մտածում, թե՝ պորտաբույծները առատության մեջ վայելում են, իսկ ես փշրանքներին էլ չեմ արժանանում: Իսկ ի՞նչ էր անում: Գոհանում և փառաբանում էր Աստծուն:

Եղավ, ասում է, որ երկուսն էլ մեռան. մեռավ մեծահարուստը և թաղվեց, մեռավ նաև Ղազարոսը. բայց նրա մասին չեմ ասի, թե մեռավ, քանզի հարուստի մահը մահ էր ու գերեզման, իսկ աղքատի մահը՝ հեռավոր ուղի, լավագույն փոփոխություն, մարտի վայրից դեպի պարգևները ընթացք, անհուն, անդնդալից ծովից դեպի նավահանգիստ, պատերազմից դեպի հաղթություն, չարչարանքներից դեպի պսակ:

Երկուսն էլ գնացին այնտեղ, ուր իրերն իրենց իսկական կերպարանքն ունեն. թատրոնը քակվեց, և դիմակները երևացին:

Քանզի ինչպես թատրոնում կեսօրին վարագույր է ձգվում, շատերն են ներս մտնում, կեղծում դիմակներով, ներկայացնում հին առասպելները և պատմում այն դեպքերի մասին. մեկը լինում է փիլիսոփա՝ չլինելով փիլիսոփա, մյուսը՝ թագավոր՝ չլինելով թագավոր, այլ միայն թագավորի կերպարանք ունենալով՝ ըստ առասպելի բովանդակության, մեկ ուրիշը՝ բժիշկ՝ չկարողանալով փայտից անգամ գլուխ հանել, այլ միայն բժշկի հագուստ հագնելով, մյուսը, ստրուկ լինելով, ազնվական է երևում, նրա ընկերը՝ վարժապետ՝ բնավ դպրություն չիմանալով, երևում են ոչ այն, ինչ են իրականում, և ինչ որ են իրականում, այն չեն երևում. բժիշկ

է երևում նա, ով ամենևին էլ բժիշկ չէ. փիլիսոփա է երևում նա, ով միայն դիմակի վրա ունի փիլիսոփայի սանրվածք. զինվոր է երևում նա, ով ընդամենը զինվորի հագուստ ունի: Բայց որքան էլ խաբուսիկ լինի դիմակի տեսքը, այն չի դավաճանում իր բնությանը, որով աղավաղում է իրականությունը: Դիմակները մնում են, քանի դեռ զվարճացողները նստած են [թատրոնում]. բայց հենց որ հասնում է երեկոն, փակվում է թատրոնը, և բոլորը հեռանում են, դիմակները ցած են նետվում, և ով թատրոնում փիլիսոփա էր ներկայանում, դրանից դուրս պղնձագործ է: Դիմակը հեռացվեց, խաբեությունն անցավ, հայտնվեց ճշմարտությունը, և պարզվեց, որ ով ներսում ազատ էր ներկայանում, դրսում ծառա է. ինչպես ավելի առաջ ասացի, ներսում խաբեություն էր, և երբ երեկոն մոտեցավ, տեսարանն ավարտվեց, և բացվեց ճշմարտությունը: Այդպես էլ այս կյանքում ու նրա վերջում: Իրականությունը թատրոն է, այստեղի ամեն ինչը՝ խաբուսիկ արտաքին՝ և՛ հարստությունը, և՛ աղքատությունը, և՛ իշխանությունը, և՛ իշխանության ներքո գտնվելը, և՛ այլ սրանց նման բաները: Իսկ երբ երևա այն օրը, և գա այն ահագին գիշերը, ավելի ճիշտ՝ ցերեկը, քանզի գիշեր է մեղավորների համար, արդարների համար ցերեկ է. երբ կեղծ կերպարաքները մի կողմ նետվեն, այնժամ կքննվի յուրաքանչյուր ոք իր գործերով, ոչ թե իր հարստությամբ, ոչ թե իր իշխանությամբ, ոչ թե իր պատվով, ոչ թե իր զորությամբ, այլ յուրաքանչյուրն իր գործերով՝ և՛ իշխանը, և՛ թագավորը, և՛ տղամարդը, և՛ կինը. Աստված այնժամ մեզնից կպահանջի մեր վարքի ու բարի գործերի հաշիվը, այլ ոչ թե մեծ պատիվների, ոչ թե աղքատության ու տնանկության, ոչ թե մեր սնած ամբարտավանության:

Ինձ գործերը ցույց տուր, կասի. թեև ծառա լինես, ազատներից լավագույն կդառնաս, թեև կին եղար, ավելի քաջարի եղար, քան այրերը: Երբ կեղծավոր արտաքինները մի կողմ կշպրտվեն, այդժամ հայտնի կդառնան հարուստն ու աղքատը: Եվ ինչպես այստեղ, երբ ավարտվի թատրոնը, և այնտեղ

նստածներից մեկը տեսնի, որ ներսում փիլիսոփան դրսում պղնձագործ ու դարբին է, զարմանա և ասի՝ սա թատրոնում փիլիսոփա չէ՞ր. հիմա նրան պղնձագործ եմ տեսնում. սա այնտեղ թագավոր չէ՞ր. հիմա տեսնում եմ, որ անարգ մարդու է նման. սա ներսում հարուստ չէ՞ր. այստեղ տեսնում եմ, որ աղքատ է: Այդպես պետք է լինի և այնտեղ:

Զ. Խոսքս չեմ երկարեցնում, որպեսզի շատ պատմություններով չցրեմ լսողի միտքը, բայց կամենում եմ ցույց տալ տեսարանի խաբուսիկությունը՝ ձեր առջև դնելով երկու դեմք: Եվ այդ երկուսով առաջնորդում եմ ձեզ դեպի ճանապարհը և առիթ եմ տալիս գիտակ լինելու: Ես ձեր միտքը կընդարձակեմ այս կյանքի պատկերներով, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա ճանաչել լավը:

Եվ արդ, երկու կերպարի դեմքեր էին այստեղ. մեկն ուներ մեծահարուստը, մյուսը՝ աղքատը. Ղազարոսի դեմքն աղքատի է, հարուստի դեմքը՝ մեծահարուստներինը. երևացողները դեմքեր էին, այլ ոչ թե իրերի ճշմարտությունը: Երկուսն էլ գնացին այնտեղ՝ և՛ հարուստը, և՛ աղքատը: Ղազարոսին ընդունեցին հրեշտակները. շներից հետո՝ հրեշտակները, հարուստի դռան մոտից հետո՝ Աբրահամի գոգը, սովից հետո՝ անվախճան առատություն, տառապանքներից հետո անչափ անդորրություն: Իսկ մեծահարուստին՝ հարստությունից հետո աղքատություն, սեղանի լիությունից հետո՝ նեղություն և տանջանք, վայելքներից հետո՝ վշտեր ու ցավեր: Եվ տե՛ս, թե ինչ եղավ. երկուսն էլ գնացին այնտեղ, տեսարանն ավարտվեց. դիմակներն հանվեցին, և երևացին իսկական դեմքերը:

Եվ տեսար երկուսին էլ. մեծահարուստին՝ տապակի տապի մեջ, իսկ Ղազարոսին՝ Աբրահամի գոգում: Բարեկեցիկն ու վայելքների մեջ հղփացածը նախահայր Աբրահամին ասում էր. «Ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր Ղազարոսին, որ թրջի իր մատը ջրով, դիպցնի շրթունքներիս և զովացնի լեզուս, քանզի պապակվում ու այրվում եմ տապի մեջ» : Եվ ի՞նչ պատասխան տվեց նրան Աբրահամը. «Որդեա՛կ, ասում է, հիշի՛ր, որ

դու դու քո բարիքներն ստացար այնտեղ քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ իր չարչարանքները: Եվ այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես: Եվ այդ բոլորից բացի, մեծ վիհ կա ձեր և մեր միջև. եթե կամենան այստեղից ձեզ մոտ անցնել, չեն կարողանա, ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեզ մոտ անցնել» (Ղուկ. ԺԶ 24):

Մեծահարուստը տանջանքների մեջ էր և նայում ու տեսնում էր Ղազարոսին. զարմանալի էր այդ. ամբողջ օրն ընկած էր դռանդ առջև. օրը երկու-երեք անգամ մտնում ու ելնում էիր և նրան չէիր տեսնում, իսկ այժմ, երբ տապակիդ տապի մեջ ես, հեռվի՞ց ես տեսնում: Երբ հարստության մեջ հղփացած էիր, երբ քո կամքն էր տեսնելը, չէիր ուզում տեսնել նրան, իսկ այժմ ինչպե՞ս այդքան սրատես դարձար. դռանդ առջև ընկած չէ՞ր. ինչպե՞ս նրան չէիր տեսնում: Մոտիկից չէիր տեսնում, իսկ այժմ տեսնո՞ւմ ես հեռվից, երբ ձեր միջև այդպիսի անդունդ կա:

Իսկ ի՞նչ է ասում նա. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ»:

Ինչո՞ւ ես հայր անվանում նրան, ում չնմանվեցիր մարդասիրությամբ: Նա նրան հայր է կոչում, իսկ սա նրան՝ որդյակ էր հորջորջում. ազգականների էր հորջորջանքը, բայց ոչ մի օգնություն:

Բայց անունն ասում է այն պատճառով որ դու իմանաս, որ ո՛չ ազգն է օգնում, ո՛չ տոհմը, ո՛չ ազնվականությունը, ո՛չ նահապետների քաջությունը, այլ բարքի առաքինությունը: Ինձ մի՛ ասա, թե՝ հայրս հյուպատոս է: Եթե անգամ Պողոս առաքյալը լիներ քո հայրը, իսկ մարտիրոսները՝ եղբայրներդ, և դու առաքինությամբ չնմանվեիր նրանց, այդպիսի տոհմից դու ոչ մի օգուտ չէիր ունենա, հակառակը՝ առավել կվնասվեիր ու կդատապարտվեիր: Մայրս, ասում ես, ողորմած է: Քեզ՝ անողորմիդ, ի՞նչ օգուտ դրանից: Նրա մարդասիրությունը ավելացնում է քո մեղսալի վարքի դատապարտությունը: Ի՞նչ էր ասում Հովհանես Մկրտիչը հրեա ժողովրդին. «Ապաշխարության արժանի գործեր արեք և մի՛ սկսեք ասել, թե՝ Աբրահամին ունենք իբրև հայր» (Ղուկ. Գ 8): Անվանի նախահա՞յր ունես: Եթե նմանվես նրան, կօգտվես, իսկ եթե ոչ, ապա նրա առաքինությունները կդատապարտեն քեզ, որ քաղցր արմատից դառը պտուղներ ես բերում: Երբեք երանի մի՛ տուր այն մարդուն, ով արդար և սուրբ ազգական ունի, եթե նա չի նմանվում նրան, և երբեք մի՛ թշնամացիր այն մարդու հետ, ով անպիտան ազգական ունի: Եթե սուրբ մայր ունես, ոչ մի օգուտ չունես դրանից, նույնպես էլ, եթե անպիտան մայր ունես, քեզ չի վնասում այդ, քանզի ինչպես որ նրա առաքինություններից դու ոչ մի օգուտ չունես, այդպես էլ չարությունից ու անպիտանությունից՝ ոչ մի վնաս, եթե փոխես չարության գործերդ: Ինչպես որ այնտեղ մեծ է պատիժը, քանզի իրենց համար առակի օրինակն ունենալով՝ չնմանվեցին առաքինությանը, այդպես էլ այստեղ առավելագույն է գոհությունը, որովհետև ունենալով պոռնիկ մայր՝ չնմանվեց նրան, այլ դառն արմատից քաղցր պտուղ երևաց: Մեզնից չի պահանջվում նախահայրերի անվանիություն, այլ առաքինի կենցաղավարություն: Ես վտանգի ու նեղության մեջ գտնվող ստրուկին էլ ազնվական և տեր կանվանեմ, եթե տեսնեմ նրա ուղիղ և բարի գործերը, իսկ պատվի ու փառքի մեջ եղողներն ինձ համար ազնվական չեն, եթե ստրուկի հոգի ունեն: Ո՞վ է ստրուկը, եթե ոչ նա, ով մեղքեր է գործում: Մյուս ստրկությունը կախված է անբարենպաստ հանգամանքներից, իսկ այս ստրկությունը՝ կամքի ընտրությունից. քանզի ստրկությունն հենց սկզբում այստեղից սկսվեց:

Է. Նախկինում ոչ ոք ստրուկ չէր. երբ Աստված մարդուն ստեղծեց, նրան ազատ կամ ծառա չստեղծեց: Նա ստեղծեց Ադամին ու Եվային, և երկուսին ազատ ստեղծեց : Հապա որտեղի՞ց է ծառայությունը: Մարդկային ազգը թույլատրելիի մեջ չափն անցավ, խոտորվեց բնական կարգից, գնաց ցանկության հետևից և անառակության հասավ: Սկսվեց ջրհեղեղը՝ համայն աշխարհի՝ ջրի տակ կործանումը, բացվեցին երկնքի ջրվեժները, ժայթքեցին ստորգետնյա բազում աղբյուրներ (Ծն. Է 10), ամեն բան համատարած ջուր դարձավ, և ինչ որ կար երկրի վրա, փչա-

ցավ ու ապականվեց, երկիրն այլևս չէր երևում, Աստծո ցասումից ու բարկությունից անհուն ծով դարձավ, ամենուր ալիքներ էին ու սահանքներ, ծովը ծածկեց լեռները, բարձունքներն ու բարձրավանդակները, և միայն ծով էր ու երկինք. մարդկությունը ոչնչացավ, և մնաց միայն մեր ազգի կայծը՝ Նոյը. կայծը ծովի մեջ չէր հանգչում՝ իր մեջ պահպանելով մեր ազգի սաղմը ինքը, իր կինն ու որդիները, աղավնին, ագռավը, գազանները, սողունները, թռչունները՝ այն ամենը, ինչ բոլոր տեսակներից մտել էին ներս: Եվ տապանը ջրերի վրա էր, մրրիկների մեջ, և չէր ընկղմվում, որովհետև նավավար ու ճարտարապետ ուներ իր Արարչին ու Ստեղծողին, քանզի ոչ թե տապանն էր պահում նրանց, այլ Աստծո աջը՝ հզոր, սաստիկ և աներևույթ:

Եվ տե՛ս Աստծո սքանչելիքը: Երբ երկիրը լվացվեց, երբ մեռան չարագործները, և հանդարտվեցին մրրիկները, երևացին լեռների գագաթները, իջավ տապանը, Նոյը ուղարկեց աղավնին: Խորհուրդ էր կատարվածը, ապագայում կատարվելիքի օրինակ. տապանը եկեղեցու օրինակն էր, Նոյը՝ Հիսուս Քրիստոսի, աղավնին՝ Սուրբ Հոգու, ճիթենու տերևը՝ Աստծո մարդասիրության: Ընտանի ընդակեր թռչունը արձակվեց և ելավ գնաց տապանից. բայց այն օրինակ էր, սա՝ ճշմարտությունը: Ինչպես որ տապանը խորը ծովերի մեջ փրկեց նրանց, ում ուներ իր մեջ, այդպես էլ եկեղեցին է փրկում բոլոր մոլորվածներին. տապանը փրկեց միայն նրանց, ում ընդունել էր, իսկ եկեղեցին ավելին է անում: Տե՛ս թե ինչ եմ ասում. տապանն ընդունեց անասուններին և փրկեց իբրև անասուններ, եկեղեցին ընդունում է անմիտ մարդկանց և ոչ միայն փրկում և ապրեցնում է, այլ նաև փոխում է դեպի բարի գործերը: Տապանն ընդունեց ագռավ և արձակեց ագռավ, եկեղեցին ընդունում է ագռավ և արձակում է աղավնի, եկեղեցին ընդունում է գայլ և արձակում ոչխար: Քանզի երբ գող կամ ագահ մարդ է գալիս, մտնում այստեղ և լսում աստվածային վարդապետության խոսքերը, փոխում է իր բարքը և գայլից ոչխարի է փոխվում. գայլը ուրիշից է հափշտակում, ոչխարը իր բուրդն էլ է ընծայում...

Իջավ տապանը, և բացվեցին պատուհանները, Նոյը դուրս եկավ՝ փրկված հեղեղող ալիքներից, և տեսավ երկիրը քանդված ու ավերված, տեսավ պատրաստ դերեզմանը, ցեխը, տիղմը, խառնիխուռն կուտակված դիերը՝՝ մարդկանց, ձիերի, անասունների: Նայեց այդ տխուր տեսարանին, նայեց երկրին՝ լի դառնությամբ, տրտմությունից հալումաշ եղավ. բոլորը եղծվել ու կորել էին. ո՛չ մարդ, ո՛չ ձի և ո՛չ այլ կենդանի, այլ երկինքն ու երկիրն էր տեսնում միայն: Տրտմությամբ լցվեց և իրեն պաշարած վշտերից տառապելով՝ գինի խմեց ու քնեց. խմեց, որպեսզի մոռանա տրտմության ցավերը: Մեջքի վրա ընկած՝ իբրև բժշկի՝ քնին էր մատնել իրեն, որպեսզի մոռանա տխուր տեսարանը: Ինչպես այդ պատահում է ծերերին՝ գինուց հարբած և քնով ծանրացած: Հարկ է մեզ արդարի մասին ասել, որ այդ անառակ հարբեցողության չէր և ոչ էլ ցանկության ախտ, այլ այդ երկու բանով՝ [գինով ու քնով], նա բժշկում էր իր ցավը: Այս մասին նաև Սողոմոնն է գրում և ասում. «Գինի՛ տվեք խմելու վշտացածներին ու տառապողներին, թող խմեն» (Առ. ԼԱ 6): Այդ պատճառով էլ հաճախ մարդիկ, երբ հատկապես ծանոթներից ու դրացիներից մեկը կորցնում է իր զավակին կամ կնոջը, քանի որ ծանր է վիշտը, և տրտմությունն հաղթում է, և դրա գիտակցությունը ցույց է տալիս իր ուժը, վերցնելով նրան՝ տանում են իրենց տուն, սփոփում ու մխիթարում և անապական գինի են խմեցնում, որպեսզի կարողանա թեթևացնել իր ցավերը: Այդպես էլ այն ժամանակ այս ծերունին էր տառապում տրտմության ու սգի մեջ, և գինով, իբրև դեղով, թեթևացնում էր իր հիվանդությունը. գինուց տրվեց քնին, և այդ երկուսի պատճառով էլ փոքր-ինչ անզգայացավ:

Այս ամենն ասում են, որ դուք իմանաք, թե որտեղից աշխարհ մտավ ստրկությունը. ով արհամարհանքով տեսավ իր հոր անարգանքը, ով միայն ըստ բնության էր որդի հորջորջվում և ոչ թե ըստ բարքի (կրկին ազնվականություն եմ անվանում ոչ թե նախնիների անվանիությունը, այլ առաքինի բարքը), մտավ և տեսավ իր հոր մերկությունը: Ում վայել էր ծածկել,

ում վայել էր փաթաթել նրա ծերության համար, սգի համար, տրտմության համար, այն բանի համար, որ նա իր հայրն էր, նա, ելնելով, բոլորին հայտարարեց, ծաղրեց ու ծիծաղեց: Իսկ նրա մյուս որդին, ով որդի էր և՛ բնությամբ, և՛ բարքով, հաղուստներն առնելով և ետ-ետ գնալով՝ ծածկեց իր հոր ամոթը: Գինուց ու քնից սթափված և զգաստացած Նոյը իմացավ, թե ինչ է արել իր որդին և սկսեց և սկիզբը դրեց՝ ասելով. «Անիծյալ լինի ստրուկ Քանանը և իր եղբայրների ծառան թող լինի» (Ծն. Թ 25): Նրա խոսքերը նշանակում էին. դու կլինես եղբայրներիդ ծառան, որովհետև բացահայտեցիր քո հոր խայտառակությունը: Տեսնո՞ւմ ես, որ ստրկությունը մեղքից մտավ, որ ստամբակության պատճառով ստրկություն ծնվեց:

Կամենո՞ւմ ես՝ ցույց կտամ քեզ նաև [ստրկությունից] ազատվելու կերպը: Ոնեսիմոս անունով մի ստրուկ կար՝ արհամարհված փախստական. նա եկավ և ապաստանեց Պողոսի մոտ, արժանացավ մկտության, լվաց և մաքրեց իր մեղքերը և մնաց նրա ոտքերի մոտ: Պողոսը գրում է նրա տիրոջը. «Ոնեսիմոսը, որ մի ժամանակ պիտանի չէր քեզ, բայց այժմ պիտանի է թե՛ քեզ, թե՛ ինձ, ընդունի՛ր նրան, ինչպես ինձ» Ի՞նչ կատարվեց: «Որի հոգևոր հայրը եղա իմ կապանքների մեջ» (Փիլիմ. 10-12).

Ը. Տեսնո՞ւմ ես ազնվականությունը: Տեսնո՞ւմ ես, որ վարքը ազատություն է տալիս: Ստրուկ և ազատ՝ լոկ անուններ են: Որքան տերեր են հարբած պառկած հրապարակում, իսկ նրանց ծառաները նրանց մոտ կանգնած են զգաստությամբ: Ո՞ւմ կոչենք ստրուկ. նրա՞ն, ով զգոն ու սթափ է, թէ՞ հարբածին, մարդո՞ւ ծառային, թէ՞ կրքերի գերուն: Նա արտաքուստ է ծառա, սա գերի է ներքուստ: Այս ասում եմ և ասելուց չեմ դադարելու, որպեսզի դուք ճանաչեք իրերն ըստ իրենց բնության, այլ ոչ թե տարվեք բազմության մոլորություններով, այլ իմանաք, թե ինչ է նշանակում ստրուկ, ինչ՝ ազատ, ինչ՝ անազատ, ինչ՝ երանելի, ինչ՝ ախտ: Եթե դուք իմանաք տարբերել այդ ամենը, երբեք չեք ընկնի խռովքների մեջ:

Բայց որպեսզի մեր խոսքը գործից ավելի չլինի և տարածվելով, չչեղվի, վերստին դառնանք մեր նյութին: Արդ, ինքը՝ մեծահարուստը, այսուհետև աղքատ է, ավելի ճիշտ, նա շատ աղքատ էր և այն ժամանակ, երբ հարուստ էր: Ի՞նչ օգուտ մարդուն, եթե ունենա ուրիշի ինչքերը և չունենա իրենը: Ի՞նչ օգուտ ունի նա, ով ունի ինչքեր, բայց չունի առաքինություն: Ինչո՞ւ ես վերցնում ուրիշինը և կորցնում քոնը: Ունեմ, ասում է, շատ գյուղեր: Քեզ ի՞նչ օգուտ դրանից, երբ չունես ուղիղ հոգի: Ունես բազում ծառաներ, բայց չունես առաքինի վարք: Ունես հանդերձներ ու պատմուճաններ, բայց երկյուղ ու բարեպաշտություն չես ստացել. ուրիշինն ունես, իսկ քոնը՝ ոչ: Իսկ երբ մեկը մյուսին ավանդ է տալիս, որ պահի, մի՞թե կարող է մեծահարուստ անվանել նրան: Չի կարող: Ինչո՞ւ: Քանի որ ուրիշինն է, այլ ոչ իրենը. մանավանդ, որ ավանդ է, և երանի թե միայն ավանդ լիներ, այլ ոչ թե տանջանքների հավելում:

Արդ, հարուստը տեսնում էր Ղազարոսին և ասում էր. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ»: Աղքատի խոսքեր են սրանք, տնանկի ու մուրացիկի: «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ» (Ղուկ. ԺԶ 24): Ի՞նչ ես խնդրում: Ասում է. «Ուղարկի՛ր Ղազարոսին»: Ում բազում անգամ ոտնահարեցիր ու անցար, ում տեսնել չէիր կամենում: «Ուղարկի՛ր Ղազարոսին»: Ո՞ւր են քո մատռվակները, ո՞ւր են բազմածները, ո՞ւր են պատառաբույծները, ո՞ւր են քծնողները, ո՞ւր են շողոքորթողները, ո՞ւր է գոռոզությունը, ո՞ւր է հպարտությունը, ո՞ւր է ոսկե թելը, ո՞ւր են ցեցակեր հագուստները, ո՞ւր է ժանգապատ արծաթը, ո՞ւր են փայլն ու վայելքները: Տերևներ էին, եկավ ձմեռը և ամեն բան միանգամից չորացրեց: Գիշերվա երազ էին, լույսը բացվեց, և թռան վերացան: Ստվերներ էին, եկավ ճշմարտությունը, և ստվերներն անհետացան:

«Ուղարկի՛ր, ասում է, Ղազարոսին»: Բայց ինչո՞ւ չէր տեսնում արդարներից մեկ ուրիշի՝ Նոյին, Հակոբին, Ղովտին, Իսահակին, այլ միայն Աբրահամին: Ինչո՞ւ: Քանի որ Աբրահամը հյուրասեր էր և ճանապարհորդներին իր տուն

էր կանչում, տանում. նրա հյուրասիրությունն իր անողորմության ավելի խիստ ամբաստանողն էր լինում: «Ուղարկիր, ասում է, Ղազարոսին»: Այս լսելով՝ երկյուղենք և մենք. աղքատներին տեսնելով՝ անփույթ ու անտարբեր չլինենք, որպեսզի մեկ Ղազարոսի փոխարեն այնժամ շատ մեղադրողներ չունենանք:

«Ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և զովացնի լեզուս, որովհետև պապակում եմ այս տապից». «Ինչ չափով որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար»[1]: Զտվեցիր փշրանքներ, չես ստանա մի կաթիլ: «Ուղարկի՛ր, ասում է, Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և զովացնի լեզուս, որովհետև պապակում եմ այս տապից»: Եվ Աբրահամը նրան ասաց. «Որդյա՛կ, հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքներն այնտեղ քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները: Այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես» (Ղուկ. ԺԶ 25):

Այստեղ նույնպես չասաց, թե՝ «առար», այլ՝ «ստացար»: Մեծ տարբերություն է մտցնում նախդրի հավելումը: Բազում անգամ ասացի ձեզ, սիրելինե՛ր, որ հարկ է ուշադրություն դարձնել նաև հնչյուններին, քանի որ ասված է. «Քննեցե՛ք Գրքերը» (Հովհ. Ե 39). հաճախ մի հովտն էլ է արթնացնում միտքը: Եթե ուզում ես համոզվել, որ մեկ տառի հավելումն էլ է միտք տալիս, տե՛ս, որ մեր հայր Աբրահամը սկզբում Աբրամ էր կոչվում, և Աստված նրան ասաց. «Սրանից հետո քո անունը Աբրամ պիտի չլինի, այլ Աբրահամ պիտի լինի քո անունը» (Ծն. ԺԷ 5). միայն այբը ավելացրեց և բազում ժողովուրդների հայր դարձրեց: Ահա թե ինչպես մի տառի հավելումը որքան շահ ցույց տվեց: Այսպիսով, այսուհետև անուշադրությամբ չանցնենք. չասաց՝ առար քո բարիքները, այլ՝ ստացար. իսկ ով ստանում է, ստանում է իր պարտքը: Ուշադրությամբ լսիր, ինչ որ ասում եմ. այլ բան է առնելը, այլ՝ ստանալը. ստանում են այն, ինչ ունեին, բայց առնում են հաճախ այն, ինչ չունեին: «Դու ստացար քո բարիքները,

[1] Մատթ. Է 2, Մարկ. Դ 24:

իսկ Ղազարոսն էլ՝ իր չարչարանքները»: Ահա մեծահարուստը ստացավ իր բարիքները, իսկ Ղազարոսը՝ իր չարչարանքները: Այս ամենը մեզ ասվեց նրանց մասին, ովքեր տանջվում են այստեղ՝ այս աշխարհում, ոչ թե, նրանց մասին, ովքեր հղփանում ու փափկանում են այստեղ և ոչ այնտեղ:

Լսեցե՛ք, թե ինչ եմ ասելու այսուհետև: «Ընդունեցիր, ասում է, քո բարիքները, իսկ Ղազարոսն էլ՝ իր չարչարանքները»: Զասաց՝ առար, այլ ստացար պարտքը, քեզ հասանելիքը, իսկ Ղազարոսը՝ իր չարիքները: Ուշադրություն դարձրեք այս խնդրին, իսկ ես ավարտին հասցնեմ շինությունը : Բայց մի՛ շփոթվեք առակիս սկզբում, երբ ես նման բան եմ ասում, սպասեցե՛ք մեկնությանը: Կամենում եմ, որ սուր միտք ունենաք և հարևանցի չանցնեք, այլ իջնեք աստվածային գրությունների խորքերը. խորք, ուր չկա խռովություն, խորք, որ առավել ապահով է, քան խաղաղ մակերեսը: Որքան խորը իջնես, ավելի ու ավելի շատ ապահովություն կգտնես, քանի որ այստեղ ոչ թե ջրերի խառնիխուռն ալեկոծություն է, այլ մեղմ իմաստություն:

«Դու ստացար, ասում է, քո բարիքներն այնտեղ քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները: Այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ տանջվում ես» : Մեծ խնդիր է այս: Ես արդեն ասացի, թե ստանում է նա, ով ընդունում է իրեն հատուցված պարտքը, իսկ արդ, որ Ղազարոսը արդար էր, ինչպես որ իսկապես այդպես էր, ցույց տվեցին ժամանակը, Աբրահամի դոդը, պսակը և հաղթության նշանը, հանդիստը, վայելքն ու ժուժկալությունը, իսկ մեծահարուստը մեղավոր էր ու պիղծ, ստամբակ ու խիստ, փափկասեր, հարբեցող, անմարդկային, բազմախորտիկ ճոխ սեղանից ուտող, անառակ ու պոռնկության մեջ ապրող:

Թ. Ուշադրություն դարձրու. նրան պարտապան էին այն բաները. ի՞նչ էին պարտք. նրան պարտք էին տանջանքներ, նրան պարտք էին պատիժներ, նրան պարտք էին ցավեր : Ինչո՞ւ չասաց՝ դու ստացար դրանք, այլ՝ «Դու ստացար քո

բարիքներն այնտեղ քո կյանքի ընթացքում», այսինքն՝ այն կյանքում, «Իսկ Ղազարոսն էլ՝ չարիքները»:

Միտքդ լարի՛ր, քանզի կամենում եմ քեզ իմացնել խոսքիս խորքերը: Գոյություն ունեցող բոլոր մարդկանցից ոմանք մեղավոր են, ոմանք՝ արդար: Արդարների միջև էլ տարբերություն կա. մեկը արդար է, մյուսը՝ ավելի արդար, սա ավելի բարձր է կանգնած, մյուսը նրան էլ է գերազանցում: Եվ ինչպես որ կան շատ աստղեր, արև և լուսին, այդպես էլ տարբերություն կա արդարների միջև. «Այլ է փառքը արեգակի, այլ է փառքը լուսնի, և այլ է փառքը աստղերի. և մի աստղ փառքով առավել է, քան մի ուրիշ աստղ» (Ա Կոր. ԺԵ 41). մեկը առավել է փառքով, մյուսը՝ նվազ: Ինչպես որ երկնային մարմիններն են, այնպես էլ երկրավոր մարմինները: Եվ ինչպես որ այս մարմինների մեջ մեկը եղջերու է, մեկը՝ շուն, մեկը՝ առյուծ, մեկը՝ մեկ այլ գազան, մեկը՝ իժ, մյուսը՝ այլ նման բան, այդպես էլ տարբերություն կա մեղավոր մարդկանց միջև. ոմանք արդար են, ոմանք՝ մեղավոր, բայց նաև արդարների մեջ մեծ տարբերություն կա, իսկ մեղավորների մեջ՝ հսկայական և անսահման: Լսի՛ր:

Եթե անգամ մեկը արդար լինի, եթե անգամ հասած լինի գագաթին և հրաժարված լինի բոլոր մեղքերից, չի կարող սուրբ և խսպառ արդար լինել. բյուր անգամ էլ արդար լինի, մարդ է: «Ո՞վ կարող է պարծենալ, թե ինքը սուրբ սիրտ ունի, կամ ո՞վ կհամարձակվի ասել, թե ինքը զերծ է մեղքերից» (Առ. Ի 9): Այդ պատճառով էլ մեզ հրամայված է աղոթքի ժամանակ ասել. «Թո՛ղ մեզ մեր մեղքերը» (Մատթ. Զ 12), որպեսզի այս աղոթքը մշտապես ասելով՝ հիշենք, որ մենք ենթակա ենք մեղքերի պատժի: Եվ Պողոսը՝ ընտիր անոթը, Աստծո տաճարը, Քրիստոսի բերանը, Հոգու քնարը, տիեզերքի վարդապետը, ով շրջում էր՝ անցնելով ծովով ու ցամաքով, ով արմատախիլ էր անում մեղքերի փուշն ու սերմանում աստվածպաշտության սերմերը, ով ավելի հարուստ էր, քան թագավորները, և ավելի կարող, քան մեծահարուստները, ով ավելի զորեղ էր զինվորականներից և փիլիսոփաներից ավելի իմաստուն, հռետորներից առավել պերճախոս, ով ոչինչ չունենալով՝ ուներ ամեն ինչ, ում ստվերը լուծում էր մահվան շղթաները, ում հագուստի ծվենները փախուստի էին մատնում հիվանդությունները, ով չարչարվեց ծովում և հափշտակվեց դրախտ, ով Քրիստոսին էր քարոզում, նա ասում էր, թե՝ «Որովհետև ինքս իմ մասին բան չգիտեմ. բայց սրանով չեմ արդարանում, որովհետև նա, ով դատում ինձ, Տերն է» (Ա Կոր. Դ 4): Ո՞վ կարող է պարծենալ, թե սուրբ սիրտ ունի, և կամ ո՞վ կհամարձակվի ասել, թե մաքուր է մեղքերից:

Արդ, անհնարին է, որ մարդն անմեղ լինի: Եթե ասեն՝ այսինչն արդար, ողորմած ու աղքատասեր է, նա էլ իր մեջ ունի թարություններ. կամ զուր տեղը վիրավորում է, կամ փառասեր է, կամ էլ նման այլ բան. կարիք չկա թվելու ամեն բան: Մեկ ուրիշը ողորմած է, բայց ողջախոհ չէ, իսկ մեկն էլ թերևս ողջախոհ է, բայց ողորմած չէ, մեկը անվանի է լինում մի առաքինությամբ, մեկ ուրիշը՝ այլ: Թող մեկը արդար լինի, բայց հաճախ նաև արդարը, ով ունի բոլոր առաքինությունները, սկսում է հպարտանալ այդ արդարությամբ, և հպարտությունը վտանգում է նրա արդարությունը: Փարիսեցին, ով շաբաթը երկու օր ծոմ էր պահում, արդար չէ՞ր: Իսկ ի՞նչ էր ասում. «Ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շնացողները, կամ ինչպես այս մաքսավորը» (Ղուկ. ԺԸ 11): Հաճախ մաքուր խղճմտանքով մարդը հպարտության մեջ է ընկնում, և եթե մեղքերը չեն վնասում նրան, վնասում է ամբարտավանությունը: Զկա մեղքերից մաքուր մարդ: Համարձակվում եմ ասել և այս. մարդը չի կարող լինել այնքան չար, որ նրա մեջ գեթ մի փոքր բարի չլինի: Օրինակ՝ մեկը հափշտակում է, ագահ է, զրկող է, բայց երբեմն ողորմություն է տալիս, երբեմն ողջախոհ է լինում, երբեմն բարի խոսքեր է ասում կամ օգնում է մի մարդու, արտասվում է և զղջում: Ո՛չ արդարն է զերծ մեղքերից, և ո՛չ էլ մեղավորն է զուրկ բարուց: Ո՞վ էր Աքաաբից չար. նա և՛ հափշտակում էր, և՛ զրկում, և՛ սպանում, բայց երբ

լսեց Աստծուց [ուղարկված մարգարեին], զղջաց, և Աստված Եղիային ասաց. «Տեսա՞ր, թե ինչպես զղջաց Աքաաբը իմ առջև» (Գ Թագ. ԻԱ 29): Տեսնո՞ւմ ես՝ չարության ինչպիսի անդունդում գտնվեց փոքր-ինչ բարություն: Ո՞վ է մատնիչ Հուդայից առավել չար, որ գերված էր արծաթասիրությամբ, բայց նա էլ հետո որոշ բարիք արեց, թեև փոքր. «Մեղանչեցի, ասում է, որովհետև արդար արյուն մատնեցի» (Մատթ. ԻԷ 4): Ինչպես արդեն ասացի, չկա բնությամբ չար ոչինչ, որի մեջ բարի չլինի. ոչխարը երբեք չի կարող լինել վայրենի, քանի որ բնությամբ ընտանի է, իսկ գայլը երբեք չի կարող ընտանի լինել, քանի որ բնությամբ վայրենի է: Բնության օրենքները երբեք չեն քակտվում ու խախտվում, այլ մնում են անփոփոխ: Բայց մենք այդպիսին չենք, քանի որ բնությամբ կապված չենք, այլ պատվված ենք կամքի ազատությամբ: Ինչպես ասացի՝ չկա բարի և արդար մարդ, որ փոքր-ինչ արատ չունենա, և ոչ էլ այնքան չար, որի մեջ փոքր-ինչ բարի չլինի: Այլ քանի որ ամեն բանի փոխարեն հատուցում է լինում. եթե մեկը սպանում է, պոռնկանում կամ ագահանում և փոքր-ինչ բարիք է գործում, նրան հատուցում է սպասում այդ բարիքի համար. իր պղծությունների պատճառով բարիքն անհատույց չի մնում: Դարձյալ՝ եթե մեկը հազարավոր բարի գործեր է անում և մի ինչ-որ չարիք, այդ չարիքի համար նրան հատուցում է լինում: Այս ընդունի՛ր, պահի՛ր ամուր ու անշարժ. չկա բարի առանց մեղքի, և չկա չար առանց արդարության:

Դարձյալ կրկնում եմ սա, որպեսզի արմատավորեմ և շատ խորը տնկեմ տունկը: Բանսարկուն ձեր հոգու մեջ գցում է բազում հոգսեր՝ կամենալով գերել ձեր միտքն ու նրանից ջնջել իմ խոսքերը. ուստիև ամրապնդում եմ դրանք, որպեսզի եթե այստեղ լինես, դրանք զգուշությամբ պահես, և եթե դուրս գաս, չկարողանաս կորստյան մատնել: Իբրև ոսկով լի մի քսակ՝ ես կապում ու կնքում եմ այն, որպեսզի երբ մոտ չլինեմ, գողը չհամարձակվի մոտենալ: Ես, սիրելինե՛ր, հաճախ եմ այդպես անում և անձանձրույթ վարդապետությամբս կապում, կնքում եմ ու պարսպում եմ ձեր միտքը, որպեսզի կարողանամ ձեզ ազատել անհոգությունից: Թերևս ոմանց շատախոսություն կթվան ասածներս, բայց դրանք վարդապետի հոգացողության և սիրո խոսքեր են, և ցանկություն, որ դրանք չանտեսվեն: Այդ մասին խոսելն «ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար ապահովություն է» (Փիլիպ. Գ 1): Կամենում եմ ուսուցանել և ոչ թե ինձ ցույց տալ: Այսպիսով, չկա արդար մարդ առանց մեղքի, և չկա մեղավոր, որի մեջ բարի բան չլինի, այլ քանի որ հատուցում կա ամեն բանի համար, ուրեմն տե՛ս, թե ինչ է լինում: Մեղավորը հատուցում ստանում է իր գործած բարի գործերի չափով, որքան էլ փոքր լինեն դրանք, իսկ արդարը հատուցում ստանում է իր գործած մեղքի չափով, որքան էլ փոքր լինի այդ մեղքը: Եվ ապա ի՞նչ է լինում, և ի՞նչ է անում Աստված: Նա սահմանեց մեղքի համար հատուցում և՛ այս կյանքում, և՛ հանդերձյալում: Եթե մեկն արդար է, բայց մի որևէ չարիք է գործել և այստեղ տառապելով՝ պատժվում է, մի՛ շփոթվիր, իմացի՛ր և ասա՛, թե սա արդար մարդ էր, ուրեմն մի չարիք գործել է և այստեղ է ընդունում հատուցումը, որպեսզի այնտեղ չպատժվի: Դարձյալ՝ եթե տեսնես գող, ագահ, բոլոր չարիքները գործող մարդուն փառքի և ուրախության մեջ, մի՛ մտածի՛ր, թե սա մեղավոր է, հազարավոր չարիքներ է գործել: Իսկ ի՞նչ. ուրեմն նա մի բարի բան արել է և այստեղ բարիքներ է ստանում, որպեսզի այնտեղ չպահանջի իր վարձը: Այդպես էլ արդարը, եթե այստեղ նրան աղետներ են պատահում, ապա այստեղ է ստանում իր հատուցումը, որպեսզի այստեղ մաքրի իր մեղքերը և մաքուր գնա այնտեղ. և մեղավորը, չարիքներով լեցուն, ունենալով բազում անբժշկելի հիվանդություններ, հափշտակությանն ու ագահությանը տրվելով, այստեղ վայելում է բարեկեցության մեջ այն պատճառով, որպեսզի այնտեղ վարձ չպահանջի:

Դրա համար էր Աբրահամն ասում. «Դու քո բարիքներն ստացար այնտեղ քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ իր չարչարանքները»: Որպեսզի համոզվես, որ ես հենց այն-

պես չեմ ասում այս, և որ իսկապես այդպես է, լսի՛ր. «Ստացար, ասում է, քո բարիքները»: Ո՞ր: Դու բարի՞ք գործեցիր. ստացար քո հարստությունը, առողջությունը, կյանքի փափկությունը, իշխանությունը, պատիվը. դու այլևս հատուցում չունես, «ստացար քո բարիքները»: Ղազարոսը ոչ մի մեղք չգործե՞ց: Ո՛չ: Գործեց և ստացավ իր չարիքները. երբ դու ընդունում էիր քո «բարիքները», այն ժամանակ Ղազարոսն ընդունում էր իր «չարիքները», այդ պատճառով էլ «նա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ տանջվում ես»:

Արդ, երբ տեսնես արդարին տանջանքների մեջ, երանի տուր նրան և ասա՛. «Այս արդարը կա՛մ մեղք է գործել և պատժվում է դրա համար և այնտեղ մաքուր կգնա, կա՛մ պատժվում է իր գործած մեղքերից ավելի, որպեսզի այդ այնտեղ ավելի մեծ արդարություն համարվի նրան»: Քանզի այնտեղ հաշվետվություն է լինում, Աստված ասում է արդարին՝ դու ինձ այսքան պարտք ունես: Ասենք՝ Աստված վստահում է նրան տասը դանգ և նրա հաշվին դնում է տասը դանգ: Եթե նա գործի մեջ օգտագործում է վաթսուն դանգ, Աստված նրան ասում է՝ տասը դանգը քեզ հաշվում եմ մեղքի համար, իսկ հիսունը՝ արդարության: Եվ որպեսզի համոզվես, որ ավելին արդարություն է համարվում, [հիշի՛ր]՝ Հոբը արդար էր, անբիծ, ճշմարիտ, աստվածապաշտ, զատված ու հեռացած բոլոր մեղավոր գործերից, բայց նրա մարմինը այստեղ տանջվեց այն բանի համար, որպեսզի այնտեղ նա կարողանա հատուցման վարձ պահանջել: Ի՞նչ էր ասում նրան Աստված. «Պիտի խափանե՞ս իմ դատաստանը, ինձ հանցավո՞ր անես, որպեսզի դու արդարանաս» (Հոբ Խ 3):

Այդպես և մենք այստեղ համբերենք փորձանքներին, որպեսզի այնտեղ Տիրոջից հատուցում ստանանք շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որի հետ Հորը և Սուրբ Հոգուն փառք հավիտյանս. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌԸ.

Ժողովրդին ուղղված հորդորակ ժուժկալության և համբերության մասին Հորի և երեք մանուկների օրինակով և երդվելուց հրաժարվելու մասին[1]

Օրհնյալ է Աստված, որ մխիթարեց ձեր ցաված հոգին և ամրապնդեց ձեր անհաստատ միտքը: Դուք ձեր մեջ ընդունեցիք գեղեցիկ մխիթարությունը և ցույց եք տալիս այդ ձեր ջանքերով և լսելու հոժարամտությամբ: Քանզի անհնարին է, որ ցաված և տրտմության մեգի մեջ ընկած հոգին կարող լինի հոժարությամբ լսելու ասված խոսքերից մեկը, բայց տեսնում եմ, որ դուք մեծ լրջությամբ և ջերմեռանդ ջանքերով անհամբեր սպասում եք մեզ՝ մի կողմ դնելով բոլոր տրտմեցնող բաները և ունկնդրության փափագով սանձելով մոտալուտ տագնապը:

Ուստիև գոհանում եմ Աստծուց ձեզ համար, քանզի աղետները չսասանեցրին ձեր՝ իմաստության սերը, սարսափը չվերացրեց ձեր կորովը, նեղությունը չհանգցրեց ձեր հոժարությունը, և վտանգը չսպանեց ձեր նախանձախնդրությունը. ո՛չ մարդկային երկյուղը հաղթեց Աստծու սիրուն, և ո՛չ ժամանակի դառնությունը վերացրեց ձեր ճիգը. ո՛չ միայն չվերացրեց, այլ նաև զորացրեց, ո՛չ միայն չքակտեց, այլ նաև ամրացրեց, ո՛չ միայն չհանգցրեց, այլ նաև առավել վառեց: Դատարկվեց հրապարակը, և լցվեց Եկեղե-

[1] Ճառի ժամանակն է 387 թ. քառասնորդաց պահոց սկիզբը: Ինչպես հայտնի կերպով ասում է Ոսկերերանը ճառի վերջում. «Այսօր երեկոյան մեր առջև դնենք սեղան՝ ոչնչով չնմանվող երեկվա սեղանին, այլ գարբեր և առավել պարկեշտ»:

ցին. այն՝ եղերերգության հանդես, սա՝ հոգևոր ուրախության և ցնծության պատճառ: Արդ, դու, սիրելի՛, երբ հրապարակ ելնելով և ամայությունը տեսնելով՝ հեծեծես, փախիր և ապավինի՛ր մորը, և նա շուտափույթ կմխիթարի քեզ ընտանի սիրով սնուցող զավակների բազմությամբ, քեզ ցույց կտա կատարելահասակ եղբայրներին և քեզնից հեռու կվանի ամեն մի տրտմություն:

Քաղաքում ցանկանում ենք տեսնել ոմանց. ասես այն ամայացել է բնակիչներից, իսկ այստեղ Եկեղեցուն ապավինած բազմությունը նեղում է մեզ: Եվ ինչպես երբ ծովն է ծփում ու ալեկոծվում, դրսում գտնվողներին ստիպում է ահով փախչել և ընկնել նավահանգիստ, այդպես էլ այժմ հրապարակի ալիքներն ու քաղաքի մրրիկները բոլոր կողմերից խուճապահար եկեղեցի են շտապեցնում բոլորին և միմյանց հանդեպ սիրո կապանքներով կապում անդամներին:

Ապա ուրեմն և այս ամենի համար գոհանանք Աստծուց, որովհետև մենք այսքան շահ պտղաբերեցինք այս նեղություններից, որովհետև այսքան օգուտ քաղեցինք այս փորձությունից: Եթե չլիներ փորձությունը, չէին լինի և պսակները. եթե չլիներ մաքառումը, չէին լինի և բրաբիոնները. եթե չլիներ նեղությունը, չէր լինի հանգիստը. եթե չլիներ ձմեռը, չէր լինի ամառը: Սա ոչ միայն մարդկանց, այլ նաև սերմերի մեջ կարելի է տեսնել: Քանզի նրանց համար նույնպես պետք է, որ լինեն շատ անձրևներ, ամպերի գոռոց, առատ ձյուն, որպեսզի հասկը առատ բերք տա: Եվ ուր ժամանակ կա սերմանելու, ժամանակ կա նաև անձրևելու: Այժմ էլ, քանի որ ձմեռ փչեց հոգիների, այլ ոչ թե մուճակների վրա, այս ձմեռ ժամանակ սերմանե՛նք նաև մենք, որպեսզի ամռանը հնձենք. վարենք արտասուքներով, որպեսզի հնձենք ցնծությամբ: Իմը չէ այս խոսքը, այլ մարգարեական է այս պատգամը. «Ովքեր ցանում էին արտասուքով, ցնծությամբ պիտի հնձեն» (Սաղմ. ՃԻԵ 5):

Հորդառատ անձրևը երբեք այնպես չի բուսցնում ու աճեցնում սերմերը, ինչպես արտասվածին անձրևն է բուսցնում ու բարեբեր դարձնում բարեպաշտության սերմը. սա ջինջ լվանում է հոգին, ոռոգում է միտքը, շատ կարճ ժամանակում վերընձյուղեցնում է վարդապետության բողբոջը, ուստիև հարկ է ակոսը խորը փորել: Մարգարեն հենց այս է խրատում՝ ասելով այսպես. «Հերկե՛ր հերկեցեք ձեզ համար, փշերի մեջ մի՛ սերմանեք» (Երեմ. Դ 3): Արդ, ինչպես մաճը գցողն է խորը փորում հողը և ապահով պահպանարան պատրաստում սերմերի համար, որպեսզի [դրանք] ընկնելով՝ հողի երեսին չմնան, այլ երկրի ծոցում ծածկվեն և հանգիստ արմատներ ձգեն, այդպես էլ պետք է մենք անենք և նեղությամբ, իբրև մաճով վարելով՝ պատռենք մեր սրտի խորքերը: Քանզի մեկ այլ մարգարէ էլ խրատում է՝ ասելով. «Պատռեցեք ձեռ սրտե՛րը, այլ ոչ թե հանդերձները» (Յովել, Բ 13):

Ուրեմն պատռե՛նք մեր սրտերը, որպեսզի եթե երբևէ որևէ մոլախոտ կամ նենգ խորհուրդ լինի մեր մեջ, արմատախի՛լ անենք այն և մաքուր հերկեր պատրաստենք բարեպաշտության սերմերի համար: Որովհետև եթե հիմա չսերմանենք, եթե հիմա չարտասվենք, երբ մեր առջևում են նեղությունն ու պահքը, ապա ե՞րբ պիտի դառնանք՝ զղջալու. թերևս [այն ժամանակ], երբ հանգստի ու փափկության մե՞ջ ենք: Բայց [այնժամ] անհնարին է այդ անել, որովհետև հանգիստն ու փափկությունը ծույլ են դարձնում, նեղությունն է արթնացնում ջանքերը և դեպի իրեն է դարձնում դրսում թափառող և բազում բաներով զբաղված միտքը:

Ուրեմն ամենևին չցավե՛նք այս տրտմության համար, այլ գոհանա՛նք Աստծուց, քանզի բազմազան է այդ նեղությունից ստացված շահը: Մշակը նույնպես սերմերը ցանելուց հետո (որ մի ժամանակ մեծ չարչարանքով հավաքեց), աղոթում է, որ տեղատարափ լինի, իսկ այն կողմից մի տգետ, տեսնելով այդ ամենը, թերևս կզարմանա և իր մտքում կասի. «Ի՞նչ է անում այդ մարդը. ցրում է, ինչ որ հավաքել է, ոչ միայն ցրում է, այլև մեծ ջանքերով հողին է խառնում, որպեսզի հնարավոր

չլինի հեշտությամբ հավաքել դրանք, ոչ միայն հողին է խառնում, այլ նաև աղոթում է, որ սաստիկ անձրև տեղա, որպեսզի գցված սերմերն ամբողջությամբ փտեն և հող դառնան»: Եվ խռովվում է իր հոգում, երբ տեսնում է, որ շանթեր են ընկնում երկնքից, և կայծակներ են լինում: Իսկ երկրագործն այդպես չի անում, այլ նայելով մրրկին՝ ուրախանում ու ցնծում է, քանզի ոչ թե ներկային է նայում, այլ ապագա [բարիքն] է ակնկալում, ո՛չ թե կայծակներին է նայում, այլ հաշվում է ցորենի խրձերը, ոչ սերմերի փտելուն [է նայում], այլ փնջազարդ հասկն է տեսնում, ոչ անձրևի տարածվելուն [է նայում], այլ բերկրանք պատճառող կալից ելնող փոշուն:

Արդ, մենք նույնպես չնայենք նեղություններին, որ շրջապատում են մեզ, և ոչ էլ ցավերին, այլ օգուտին ու շահին, որ ծնվում են նրանցից, և պտղին, որ քաղվում է դրանցից: Ակնկալենք կալի խրձերը, քանզի եթե երբևէ հսկենք, կկարողանանք բազում պտուղներ հավաքել այս ժամանակում և լցնել մեր խորհուրդների շտեմարանները: Եթե հսկենք, ոչ միայն այս նեղությունից ոչ մի չարիք չենք կրի, այլ նաև բյուր բարի պտուղներ կտանք: Բայց եթե ծուլանանք, հանգիստը կորստյան կմատնի մեզ:

Ով զգույշ չէ, նրան երկուսն էլ վնասակար են, իսկ աչալրջությամբ ապրողին երկուսն էլ օգտակար են: Ինչպես ոսկին, եթե ջրի մեջ ընկնի, մեզ կընծայի իր բնական գեղեցկությունը, եթե հնոցի մեջ ընկնի, ավելի լուսափայլ կդառնա, իսկ եթե երբևէ ջրին խառնվեն կավն ու խոտը, կավը կլուծվի, իսկ խոտը կփտի, եթե հրի մեջ ընկնեն, կավը կփշրվի, իսկ խոտը կայրվի, այդպես էլ արդարն ու մեղավորը. քանզի արդարը, եթե անգամ վայելի հանգստի մեջ, կմնա լուսափայլ, ինչպես ջրի մեջ ընկղմված ոսկին, եթե փորձության մեջ ընկնի, ավելի գեղափայլ կդառնա, ինչպես կրակի մեջ փորձված ոսկին: Իսկ մեղավորը հանգստի վիճակվելիս կլուծվի և կփտի, ինչպես ջրի մեջ գտնվող խոտն ու կավը, փորձության մեջ ընկնելիս կայրվի ու կորստյան կմատնվի, ինչպես խոտն ու կավը՝ կրակից:

Բ. Ուրեմն առաջիկա աղետները թող չթուլացնեն մեզ: Եթե մեղքեր ունես, դրանք դյուրությամբ կանհետանան և կայրվեն այդ նեղություններից, եթե առաքինություններ ես ստացել, դրանք կպայծառանան և առավել փայլուն կդառնան: Իսկ եթե անդադար տքնես և հսկես, շատ բարձր կլինես բոլոր կրքերից, քանզի ոչ թե փորձությունները, այլ փորձվողների ծուլությունն է կործանման տանում: Ուստիև մի՛ փնտրիր հեշտություն և հանգիստ, այլ փնտի՛ր հոգի, որ լցված լինի համբերությամբ և կարող լինի ժուժկալելու, քանզի եթե զուրկ լինես դրանից, ոչ միայն փորձությունը կհաղթի քեզ, այլ նաև հանգիստն ինքը ամբողջովին կորստյան կմատնի քեզ, և կկործանվես:

Եվ արդ, ո՛չ թե չարիքների հարձակումը, այլ մեր խորհուրդների հեղգությունն է հիմն ի վեր [տապալում] մեր փրկությունը: Լսի՛ր, թե ինչ է ասում Քրիստոս. «Ամեն ոք, ով լսում է իմ այս խոսքերը և կատարում է դրանք, կնմանվի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա. անձրևները թափվեցին, և գետերը հորդեցին, հողմերը փչեցին և զարկեցին այդ տանը, բայց այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված» (Մատթ. է 24-25): Եվ դարձյալ՝ «Ով լսում է իմ այս խոսքերը և դրանք չի կատարում, կնմանվի մի հիմար մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա. անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, և նա ընկավ. Եվ նրա կործանումը շատ մեծ եղավ» (Մատթ. է 26-27):

Տեսնո՞ւմ ես, որ ո՛չ թե փորձությունները, այլ շինողների անմտությունը կործանում բերեց. քանզի և՛ այնտեղ էին անձրևներ, և՛ այստեղ, այնտեղ գետեր էին, այստեղ նույնպես գետեր են, այնտեղ հողմեր փչեցին, այստեղ նույնպես նույնը եղավ. նա էլ շինեց, սա էլ. շինությունը նույնն էր, փորձությունները՝ նույնը, բայց նույնը չէր վախճանը, որովհետև նույնը չէր հիմքը: Քանի որ ոչ թե փորձությունները, այլ շինողի անմտությունը կործանում բերեց. եթե այդպես չլիներ, ապա պետք է կործանվեր և այն տունը, որ շինվեց

ժայռի վրա, մինչդեռ այժմ դրան ոչինչ չպատահեց նույն բաներից:

Դու մի՛ կարծիր, թե այս ամենը տան մասին է ասված. այս խոսքը հոգու մասին է, որ գործերով կատարում է աստվածային խոսքերը կամ զանց է առնում դրանք: Մի ժամանակ իր հոգին այս օրինակով չինեց Հոբը. իջան անձրևները՝ երկնքից կրակ ընկավ և ոչնչացրեց նրա բոլոր հոտերը, հորդեցին գետերը՝ կուռ, անդուլ, իրար ետևից [եկած] գուժաբեր հրեշտակները. մեկը գուժեց նրա այծերի հոտերի, մեկը՝ ուղտերի, մյուսը՝ զավակների [կորուստը]: Փչեցին հողմերը՝ կնոջ դառը խոսքերը. «Արդ, ասում է, մի խո՛սք ասա Տիրոջն ու մեռի՛ր» (Հոբ Բ 9), բայց չընկավ տունը՝ չկործանվեց հոգին, չհայհոյեց արդարը, այլ շնորհներ ընդունեց և այսպես ասաց. «Տերը տվեց, Տերն էլ ետ առավ: Ինչպես հաճելի թվաց Տիրոջը, այդպես էլ եղավ» (Ա 21): Տեսնո՞ւմ ես, որ ոչ թե փորձությունները, այլ հեղգացողների ծուլությունն է կործանում բերում:

Եվ այսպես, նեղությունը հզորին առավել զորեղ է դարձնում: Ո՞վ ասում այդ: Նեղությունների մեջ սնվածը՝ երանելի Պողոսն է այս ասում. «Նեղությունը համբերություն է բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս» (Հռոմ. Ե 4): Եվ ինչպես որ հաստարմատ ծառը արմատախիլ անել չեն կարող բոլոր կողմերից փչող սաստիկ հողմերը, այլ [իրենց] հարվածներով առավել հաստատուն, զորեղ ու ամրապինդ կդարձնեն այն, այդպես էլ փորձությունների ու նեղությունների խուժումը ոչ թե կտապալի բարեպաշտությամբ ապրող սուրբ անձին, այլև կմղի առավել համբերելու, ինչպես որ երանելի Հոբին առավել պայծառ ու շքեղ դարձրին:

Եվ արդ, այժմ մեզ վրա բարկանում է մարդը՝ իր կարիքներով ու հոգով մեզ նման մարդը, և վախենում ենք, իսկ այն ժամանակ այն չարն ու վայրենին՝ դևը բարկացավ նրա վրա. ոչ միայն բարկացավ, այլ նաև գործի դրեց իր բոլոր մեքենայությունները, առաջ կոչեց իր ամբողջ խորամանկությունը,

բայց չճնշեց արդարի զորությունը: Իսկ սա, մարդ լինելով, երբեմն բարկանում է, երբեմն հաշտվում, և մենք մեռնում ենք վախից: Այն ժամանակ պատերազմողը սատանան էր՝ նա, ով երբեք չի հաշտվում մարդկային բնության հետ, այլ անպայման որևէ պատերազմ կամ իմաց չտված ճակատամարտ է մղում մեր ազգի դեմ, բայց նրա նետերը ծաղրի ենթարկեց արդարը: Իսկ մենք, որ այսքան իմաստությամբ ճարտարախոսում ենք շնորհի ժամանակներում, ի՞նչ պատասխան պիտի տանք կամ ո՞ր թողությանը պիտի հանդիպենք, եթե չենք համբերում մարդկային փորձությանը, երբ նա նախքան շնորհը՝ Հին Ուխտի մեջ, այնքան քաջությամբ տարավ այն դաժան մարտը:

Այս ամենի մասին մշտապես խոսենք միմյանց հետ, սիրելինե՛ր, և այս խոսքերով մենք մեզ պատրաստենք: Քանզի հենց ձեզ և ձեր գիտակցությունն եմ վկաներ կոչում. որքան օգուտ և շահ քաղեցինք մենք այժմյան այս փորձությունից: Անժուժկալը պարկեշտացավ, վայրագը առավել հեզ դարձավ, ծույլը ժիր դարձավ: Ովքեր երբեք եկեղեցի չէին տեսել, այլ թատրոններում էին ժամանակ անցկացնում, այժմ ամբողջ օրը եկեղեցում են: Արդ, թերևս այն պատճառո՞վ ես ցավում, որ այդ երկյուղով Աստված քեզ ջերմեռանդ դարձրեց, քանզի այդ նեղությամբ անձիդ փրկությանը փափագելուն բերեց քեզ: Քեզ տանջո՞ւմ է խղճմտանքդ, ամբողջ օրը երերո՞ւմ է միտքդ՝ սպասելով մահվանն ու մեծամեծ սպառնալիքներին, սակայն և սրանից մեծ առաջադիմություն թող լինի մեզ դեպի առաքինություն, քանզի նեղությունից աճում է մեր բարեպաշտությունը:

Աստված կարող է հենց այսօր էլ վերացնել դժվարությունները, բայց մինչև չտեսնի մեզ սրբված, մինչև չտեսնի մեր հաստատուն և աներեր դարձն ու ապաշխարությունը, չի վերացնի նեղությունները: Եվ ինչպես ոսկերիչը, մինչև չտեսնի լավ մաքրված ոսկին, չի հանի այն բովի միջից, այդպես էլ Աստված չի ցրի ու հեռացնի այս մեգը, մինչև որ լավ չզգաստացնի մեզ: Նա, ով թույլ տվեց, որ փորձություն լի-

նի, գիտի նաև ժամանակը՝ հեռացնելու այդ փորձությունը: Ինչպես որ քնարահարը շատ չի ձգում լարը, որ այն չկտրվի, և ոչ էլ շատ թուլացնում է, որպեսզի վնասի միաձայնության ներդաշնակությունը, նույնն անում է և Աստված. ո՛չ հանապազօրյա հանգստի [մեջ է թողնում] և ո՛չ էլ բազմաժամանակյա նեղության մեջ է գցում մեզ՝ Իր իմաստությամբ կարգելով երկուսն էլ. թույլ չի տալիս, որ մենք մշտապես հանգիստ վայելենք, որպեսզի չծուլանանք, բայց չի էլ թողնում, որ անդադար նեղության մեջ լինենք, որպեսզի չվհատվենք ու չթուլանանք:

Գ. Ապա ուրեմն Նրա՛ն հանձնենք այս նեղությունների ավարտի ժամանակը, իսկ մենք միայն աղոթե՛նք, մենք միայն բարեպաշտությա՛մբ ապրենք: Քանզի մեր գործն այս է՝ առաքինի դառնալ, իսկ դժվարությունները վերացնելը Աստծու գործն է: Քանզի Ինքը փորձվողից առավել է կամենում հանգցնել հրդեհը, բայց սպասում է քո փրկությանը: Արդ, ինչպես որ հանգստին հաջորդեց նեղությունը, այդպես էլ նեղությունից հետո պետք է հանգիստ ակնկալել: Ինչպես որ ո՛չ ձմեռն է միշտ, ո՛չ ամառը, ո՛չ ալեկոծությունն է անդադար, ո՛չ խաղաղությունը, ո՛չ մշտապես գիշեր է, ո՛չ էլ՝ մշտապես ցերեկ, այդպես էլ նեղությունը միշտ չէ, այլ կլինի և հանգիստ, միայն թե նեղությունների մեջ անդադար գոհանանք Աստծուց:

Երեք մանուկները նետվեցին հնոցի մեջ, բայց ո՛չ մոռացան բարեպաշտությունը, և ո՛չ էլ բոցը զարհուրեցրեց նրանց, այլ առավել ջերմորեն, քան նրանք, ովքեր բազմած էին առագաստին և ոչ մի չարչարանք չէին կրում, հրով շրջապատված՝ վեր էին առաքում սրբազան երգերը: Դրա համար էլ կրակը նրանց համար եղավ պարիսպ, բոցը՝ պատմուճան, հնոցը՝ աղբյուր. այն իր մեջ առավ կապվածներին և հատուցեց արձակներին, առավ մարմիններն՝ իբրև մահացու, բայց իբրև անմահներից՝ խորշեց նրանցից, ճանաչեց բնությունը, սակայն պատկառեց աստվածպաշտությունից: Բռնակալը կապեց նրանց ոտքերը, իսկ ոտքերը կապեցին կրակի բռնությունը: Նոր ու չքնա՛ղ պատահար. բոցը ազատեց կապվածներին և դրանից հետո ինքը կապված մնաց կապվածներից, քանզի պատանիների աստվածպաշտությունը փոխեց իրերի բնությունը, ավելի ճիշտ՝ ոչ թե բնությունը փոխեց, այլ որ շատ ավելի սքանչելի է՝ պահպանելով բնությունը՝ նվաճեց բռնությունը, քանզի ոչ թե հանգցրեց կրակը, այլ անգործ դարձրեց այրելու զորությունը, և որ սքանչելի է ու նորահրաշ, այս պատահեց ո՛չ միայն սուրբերի մարմնին, այլ նաև նրանց հագուստներին ու կոշիկներին, և ինչպես որ առաքյալների ժամանակ Պողոսի հագուստներն էին հալածում ախտերն ու դևերին, իսկ Պետրոսի ստվերը հեռու էր վանում մահը, այդպես էլ այստեղ այս մանուկների կոշիկները հագցրեցին կրակի զորությունը:

Բնավ չգիտեմ, թե ինչպես ասեմ, քանզի այս սքանչելիքները վեր են խոսքերից: Քանզի զորությունը հանգել էր, բայց չէր հանգել. երբ սուրբերի մարմնի շուրջն էր, հանգել էր, իսկ երբ պետք եղավ խզել կապանքները, չէր հանգել. ոտնակապերը քակտեց, բայց կոճերին չմոտեցավ: Տեսնո՞ւմ ես՝ որքան մոտ էր. բայց հուրը ո՛չ սխալվեց և ո՛չ էլ հանդգնեց կապանքներից առաջ անցնել: Բռնակալը կապեց, իսկ բոցը քանդեց, որպեսզի հասկանաս միաժամանակ բարբարոսի անգթությունն ու տարերքի հնազանդությունը:

Իսկ ինչո՞ւ կապեց նրանց, եթե պատրաստվում էր կրակի մեջ նետել: Որպեսզի սքանչելիքն առավել մեծ լինի, հրաշքը՝ առավել նոր ու չքնաղ, որպեսզի աչքի խաբկանք չկարծես տեսածդ: Քանզի եթե այն կրակը կրակ չէր, ինչպե՞ս կվերացներ կապանքները, և որ շատ ավելին է, կլափե՞ր արդյոք զինվորներին, որ հեռվում նստած էին: Իսկ այժմ արտաքինների առջև դրեց իր զորությունը, իսկ ներքիններին իր հնազանդությունը ցույց տվեց:

Բայց դու ամենուրեք ի՛նձ լսիր. ինչո՞ւ սատանան, երբ որևէ տեսակի պատերազմ է պատրաստում Աստծու ծառաների դեմ, նույնով ինքն իր զորությունն է թուլացնում, ոչ թե

իր կամքով, այլ որովհետև ամենահմաստուն և դյուրահնար Տերը նրա զենքերն ու արվեստը դարձնում է նրա իսկ գլուխը ջախջախող [միջոց], որը և այստեղ կատարվեց: Քանզի սատանան այն ժամանակ ներշնչեց բռնակալին և թույլ չտվեց սուրբերին սրով գլխատել, գազաններին մատնել կամ մեկ այլ այդպիսի պատուհասի ենթարկել, այլ կրակի մեջ նետել տվեց, որպեսզի այդ սուրբերից ոչ մի նշխար չմնա. նրանց մարմինն այրվի, իսկ մոխիրը խառնվի փայտերի մոխրին: Բայց Աստված նույն այն առնելով՝ գործածեց՝ եղծելու համար ամբարշտությունը: Ինչո՞ւ: Ասեմ: Պարսիկները կարծում են, թե կրակը աստված է, նույնը մեծ պաշտամունքով պատվում են բարբարոսները, որոնք նաև այսօր են բնակվում այն երկրում: Արդ, Աստված, կամենալով արմատից ջնջել այդ ամբարշտության պատճառները, թույլ տվեց այս տեսակի տանջանքներ, որպեսզի նրա բոլոր պաշտողների աչքերի առջև Իր ծառաներին հաղթություն տա՝ արդյունքով նրանց հասկացնելով, որ հեթանոսների աստվածները ոչ միայն վախենում են Աստծուց, այլ նաև Աստծու ծառաներից:

Դ. Եվ լսի՛ր դու ինձ, թե ինչպես հակառակով բոլորվեց հաղթության պսակը, և հաղթանակի վկաները դարձան նրանք իսկ՝ թշնամիները: Քանզի. «Նաբուգոդոնոսոր արքան, ասում է, հրամայեց հավաքել զորավարներին, զորագլուխներին և կուսակալներին, պետերին, իշխանավորներին և գործակալներին և գավառների բոլոր իշխաններին՝ գալու այն արձանի նավակատիքին, և հավաքվեցին բոլորը» (Դան. Գ 2): Թշնամին ինքն է պատրաստում տեսարանը, ինքն էլ մի վայրում է խմբում հանդիսականներին, ինքը բացում է մրցասպարեզն ու տեսարանը ո՛չ հասարակ մարդկանց կամ ռամիկների, այլ բոլոր իշխանությամբ փառավորվածների [առջև], որպեսզի վկայությունն էլ արժանահավատ լինի շատերի համար: Հրավիրվածները եկան այլ բանի համար, և միանգամայն այլ բան տեսնելով՝ հեռացան: Եկան՝ երկրպագելու արձանին, բայց ծիծաղեցին արձանի վրա և հիացան

Աստծու զորությամբ այն նշանների պատճառով, որ եղան մանուկների հետ, և այդպես հեռացան գնացին:

Եվ լսի՛ր դու ինձ, թե որտե՞ղ բացեց մրցասպարեզը. ո՛չ քաղաքում, ո՛չ էլ մի այլ տեղ, այլ դյուր և ընդարձակ դաշտը դարձրեց տիեզերքի տեսարան, քանզի արձանը կանգնեցրեց Դեերա դաշտում՝ քաղաքից դուրս, և մունետիկը բարձրաձայն կանչում էր՝ ասելով. «Ձեզ եմ ասում, ազգե՛ր, ժողովուրդնե՛ր և լեզունե՛ր, երբ լսեք փողի, սրնգի, թմբուկի, քնարի, տավղի և բոլոր տեսակի նվագարանների ձայնը, գետնի՛ն ընկեք և երկրպագեցե՛ք ոսկե արձանին», քանզի շատ ավելի խիստ անկում էր կուռքերի երկրպագությունը, «Եվ նա, ով գետնին չընկնի և չերկրպագի, նույն ժամին կնետվի բորբոքված կրակի հնոցը» (Դան. Գ, 4, 6): Տեսնո՞ւմ ես՝ որքան ծանր ճակատամարտեր պատրաստվեցին, որքան դարաններ, որքան խորը վիհ, և երկուստեք վախեր: Բայց մի՛ վախենա. որքան մեքենայություններ է հորինում թշնամին, այնքան առավել է ցույց տալիս մանուկների զորությունը:

Դրա համար էին այնքան նվագարանների ներդաշնակ ձայները, դրա համար էր բորբոքված հնոցը, որպեսզի հեշտությունը, միաժամանակ և երկյուղը պաշարի մոտիկ գտնվողների անձերը: Այնտեղ մոտ գտնվողներից մեկը դաժան է և վայրենի՞, նրան կամոքի, ասում է, ներդաշնակ երաժշտության անուշաբար մեղեդին: Անբռնելի՞ է թերևս այստեղի դարաններից, նրան կվախեցնի ու կսարսափեցնի բոցը: Այնտեղ էին հեշտություն և վախ. մեկը՝ ականջի, իսկ մյուսը աչքի մեջ սպրդելով՝ ընկնում են հոգու մեջ: Բայց այն պատանյակների քաջությանը դրանցից ոչինչ չհաղթեց, այլ ինչպես որ հրի մեջ գցվելով՝ հաղթեցին բոցին, այդպես էլ արհամարհեցին ամենայն ցանկություն և ամենայն անձկություն: Քանզի սատանան այս ամբողջ պատրաստությունը նրանց համար տեսավ. իրեն հնազանդվողներին նա ոչ միայն չէր կասկածում, այլև վստահ էր, որ [նրանցից] ոչ ոք արքայի օրենքներին չի ընդդիմանա:

Իսկ ապա, երբ բոլորն առհասարակ ընկան և պարտվեցին, այնժամ մեջտեղ բերվեցին միայն մանուկները, որպես-

զի նաև դրանով առավել շքեղ պատրաստի հաղթությունը, քանզի այդչափ ժողովրդի մեջ միայն նրանք հաղթող եղան և հռչակվեցին, քանի որ այնքան սքանչելի չէր լինի եղածը, եթե բոլորն անկործան մնային, իսկ սրանք, մեջտեղ անցնելով, ավելի առաջ նահատակվեին: Եվ սա մեծ ու նորասքանչ գործ է, քանզի ընկածների բազմությունը նրանց ո՛չ զարհուրեցրեց և ո՛չ թուլացրեց, ոչ իսկ իրենց մտքում ասացին այնպիսի որևէ խոսք, որ շատերը շատ անգամ սովոր էին ասել, թե՝ միայն մե՞զ է հասնում առաջինը երկրպագել արձանին, արդյոք հանցա՞նք էր այդ բանը, իսկ եթե բյուր բյուրավորների հետ մենք նույնպես անենք այդ, ո՞վ կլինի, որ ներում չշնորհի, ո՞վ թողության չի արժանացնի: Բայց այսպիսի բաներից ոչինչ ո՛չ ասացին և ո՛չ էլ մտածեցին՝ տեսնելով այնչափ բռնավորների անկումը:

Բայց դու լսիր ինձ և նրանց նենգ չարախոսներին, թե ինչպես չարությամբ ու դաժանությամբ մատնեցին նրանց. «Արդ, այստեղ կան հրեա մարդիկ, որոնց դու նշանակեցիր Բաբելոնի գործերի վրա» (Գ 12): Քանզի ոչ միայն պարզապես հիշատակեցին նրանց ազգությունը, այլ որպեսզի բորբոքեն թագավորի բարկությունը, հիշատակեցին նաև նրանց պատիվը: Կարծես ասեին. «Գերված անքաղաք ծառաներին մեզ վրա իշխան կարգեցիր, իսկ սրանք արհամարհում են այնքան պատիվը և անարգում պատվադրիդ»: Այդ պատճառով էլ ասում են. «Հրեա մարդիկ, որոնց դու նշանակեցիր Բաբելոնի գործերի վրա, չհնազանդվեցին քո հրամանին և չեն պաշտում քո աստվածներին» (Գ 12): Մեծ գովություն է ամբաստանությունդ, և հանցանքդ գովեստի է արժանի, անտարակուսելի է վկայությունդ, քանզի թշնամիները այդ են մեջ բերում:

Իսկ ի՞նչ արեց թագավորը: Հրամայեց իր առաջ բերել, որպեսզի բոլոր կողմերից զարհուրեցնի նրանց: Բայց նրանց չահաբեկեց ոչինչ. ո՛չ արքայի բարկությունը, ո՛չ այն, որ միայնակ ու լքված մնացին այնքան ամբոխի մեջ, ո՛չ կրակը, որն ակնարկում էին, ո՛չ փողերը, որ փչում էին և ո՛չ էլ բոլոր հավաքվածները, որոնք հրացայտ աչքերով նայում էին իրենց, այլ բոլորին ծաղրի ենթարկեցին. ասես պատրաստվելով զովագին ջրի աղբյուրի մեջ մտնել, այդպես մտան այն հնոցը՝ արձակելով այն երանելի ձայնը. «Քո աստվածներին մենք չենք պաշտում և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկի արձանին» (Գ 18):

Այս պատմությունն առանց խորհուրդի առաջ չբերեցի, այլ որպեսզի հաստատապես իմանաք, որ ո՛չ արքայի բարկությունը, ո՛չ զինվորների որոգայթները, ո՛չ թշնամիների չարախոսությունները, ո՛չ գերությունը, ո՛չ որբությունը, ո՛չ կրակը, ո՛չ հնոցը և ո՛չ էլ բյուրավոր այլ դժնդակ [տանջանքները] չեն կարող պարտության մատնել արդարին և ոչ էլ վախեցնել նրան: Քանզի եթե այն պատանիները չզարհուրեցին բռնակալ թագավորի բարկությունից, ապա որքան վստահ պետք է լինենք մենք, որ այնպիսի հեզ և մարդասեր Թագավոր ունենք, այլ նաև շնորհակալ իսկ պետք է լինենք Աստծուն այս նեղության համար: Որովհետև վերևում գրվածներից հասկացանք, որ նեղությունները և՛ Աստծու, և՛ մարդկանց առջև առավել են շքեղացնում նրանց, ովքեր գիտեն քաջությամբ համբերել դրանց: Քանզի եթե նրանք ծառա եղած չլինեին, մենք չէինք ծանուցի նրանց ազատության մասին, եթե նրանք գերի եղած չլինեին, մենք հասու չէինք լինի նրանց հոգու ազնվությանը, եթե նրանք իրենց հայրենիքից այստեղ ընկած չլինեին, մենք չէին իմանա նրանց երկնային կենցաղավարության առաքինության մասին, եթե երկրավոր թագավորը նրանց վրա չբարկանար, մենք չէինք իմանա այն բարեկամության մասին, որ երկնավոր Արքան հաստատեց նրանց հետ:

Ե. Դու նույնպես, եթե Նրան քեզ մոտեցնես, հնոցի մեջ նետվելու էլ լինես, մի՛ վհատվիր, իսկ եթե Նա բարկացած լինի, դրախտում էլ լինես, մի՛ վստահիր. քանզի Ադամը դրախտում էր, և երբ բարկացրեց Աստծուն, դրախտը նրան որևէ կերպ չօգնեց. հնոցում էին սրանք, և քանի որ բարեզարդ

եղան, հնոցը նրանց ոչնչով չվնասեց: Դրախտում էր Ադամը, և քանի որ թուլացավ, գլորվեց և ընկավ. աղբակույտի վրա էր նստում Հոբը, և քանի որ հսկեց, հաղթող եղավ: Տե՛ս, թե որքան ավելի պատվական է դրախտը աղբակույտից, սակայն վայրի փառավորությունը ոչնչով չօգնեց բնակվողին, ով ինքն իր անձը մատնեց, ըստ որում նաև տեղի անարգությունը ոչնչով չվնասեց նրան, ով բոլոր կողմերից ամրացել էր առաքինությամբ:

Ուրեմն և մենք ամբողջովին խաղաղեցնենք մեր հոգին. քանզի եթե մեզ վրա հասնի դրամի կորուստ կամ մահ, և միայն բարեպաշտությունը ոչ ոք չկողոպտի մեզնից, մենք առավել երջանիկ կլինենք, քան բոլորը: Նույնը նաև Քրիստոս Ինքը հրամայեց՝ ասելով. «Խորագետ՝ եղեք, ինչպես օձերը» (Մատթ. Ժ 16), քանզի ինչպես որ նա իր ամբողջ մարմինն է առաջ մատուցում, որպեսզի պահպանի իր գլուխը, այդպես էլ դու, եթե ինչքերդ, եթե մարմինդ, եթե այս կյանքդ, եթե ամենն, ինչ ունես, հարկ լինի մատնել՝ բարեպաշտությունդ պահպանելու համար, ամենևին մի՛ տրտմիր: Քանզի եթե այդ ունենալով մեկնես այստեղից, ամեն բան միանգամից առավելագույն շքով կհատուցի քեզ Աստված, գերագույն փառքով կրկին կկանգնեցնի մարմինդ և ինչքերիդ փոխարեն կտա բարիքներ, որոնք անհնարին է խոսքերով արտահայտել:

Հոբը մերկ չէ՞ր նստած աղբակույտի վրա՝ բյուր մահերից առավել դժնդակ կյանք վարելով, բայց քանի որ չթողեց բարեպաշտությունը, նրան առավելագույն չափով վերադարձավ նախկինում [ունեցածը]. մարմնի առողջություն, գեղեցկություն, բոլոր զավակները, ստացվածքները և այս ամենից վեհագույնը՝ համբերության համար շքեղազարդ պսակը:

Նույնը կարող եք տեսնել ծառերի վրա. եթե մեկը պոկոտի նրա բոլոր պտուղներն ու սաղարթները, եթե կտրատի բոլոր ճյուղերը, բայց արմատը պահպանի, տունկը կրկին առավել վայելչությամբ կզվարթանա: Նույն օրինակը նաև մեր մեջ է. եթե մեզնից վերցվի մեր հարստությունը, եթե ապականվի (մեռնի) մեր մարմինը, բայց բարապաշտության արմատը մնա, կրկին այդ ամենը մեզ կվերադառնան գերագույն փառքով:

Ապա ուրեմն մի կողմ դնենք հոգու բոլոր տագնապներն ու ավելորդ հոգսերը և դեպի մեզ դառնանք, մեր ամբողջ մարմինն ու հոգին պճնենք առաքինության զարդով, մեր մարմնի անդամները դարձնենք արդարության, այլ ոչ թե մեղքերի զենք և ամեն բանից առաջ մեր լեզվին հրահանգենք՝ լինելու Հոգու շնորհների սպասավոր՝ մեր բերանից հեռացնելով ամենայն թույն ու նենգություն, զազրելի բաների մտածություն: Քանզի մեր յուրաքանչյուր անդամը ամբողջովին չարության կամ արդարության գործիք դարձնելը մեր ձեռքին է: Այժմ լսի՛ր, թե ինչպես իրենց լեզուն ոմանք՝ մեղքերի, իսկ ոմանք՝ արդարության գործիք դարձրին . «Նրանց լեզուները, ինչպես սուր սուսեր են» (Սաղմ. ԾԶ 5): Մեկ ուրիշ տեղում իր լեզվի մասին ասում է. «Լեզուս նման է արագագիր դպրի գրչի» (Սաղմ. ԽԴ 2): Նա սպանություն գործեց, սա աստվածային օրենքները գրեց, այդ պատճառով էլ այն սուսեր էր, սա՝ գրիչ. ո՛չ թե ըստ տնկակից բնության, այլ ըստ շարժողների ընտրության, քանզի և՛ սրա, և՛ նրա լեզվի բնությունը նույնն էր, բայց գործը՝ ոչ:

Դարձյալ՝ հավասարապես նույնը կարելի է ասել բերանի մասին. քանզի ոմանք գարշանքով ու զազրելիությամբ են լցնում իրենց բերանները, որի համար ամբաստանելով՝ ասում էր. «Նրա բերանը լի է անեծքով ու դառնությամբ» (Սաղմ. Թ 29), իսկ իրենն այդպիսին չէ, այլ. «Իմ բերանն իմաստություն պիտի խոսի, և սրտիս խորհուրդը՝ խոհեմություն» (Սաղմ. ԽԸ 4): Դարձյալ՝ ուրիշներ անօրենությամբ լցված ձեռքեր ունեին, և նրանց մասին է ասում. «Նրանց ձեռքերն անօրենության մեջ են, և նրանց աջը լի է կաշառքով» (Սաղմ. ԻԵ 10): Իսկ ինքը ուներ ձեռքեր, որոնց գործն այլ բան չէր, քան երկինք բարձրացվելը, ուստի և դրանց մասին ասում է. «Ձեռքերիս կարկառումն՝ իբրև երեկոյան պատարագ» (Սաղմ. ՃԽ 2):

Նույնը սրտի մասին կարելի է ասել, քանզի մի մասի սիրտը ունայն է, իսկ նրանը՝ ճշմարիտ, ուստիև նրանց մասին

ասում է. «Նրանց սրտերն ունայնացած են» (Սաղմ. Ե 10), իսկ իր մասին՝ «Սրտիցս քո բարի պատգամներն են բխում» (Սաղմ. ԽԴ 1): Նույնը ականջների մասին կարելի է ասել, քանզի ոմանք գաղանային՝ վայրենի ու խիստ լսելիք ունեն. նրանց նախատելով՝ ասում է. «Որպես քարը օձ, որ խցել է իր ականջները», իսկ իր ականջները ասպնջական էին աստվածային խոսքերի. «Առակներին պիտի ականջ դնեմ և օրհներգով պիտի մեկնեմ առակները սկզբից» (Սաղմ. ԽԸ 5):

Զ. Արդ, այս ամենն իմանալով՝ մենք մեզ բոլոր կողմերից առաքինությա՛մբ ամրացնենք և այդպիսով նվազեցնենք Աստծու բարկությունը: Մեր մարմնի անդամները արդարության զենքեր դարձնենք. մեր աչքերը, բերանը, ձեռքերը, ոտքերը, սիրտը, լեզուն և ամբողջ մարմինը դաստիարակենք՝ պիտանի լինելու միայն առաքինության գործերի համար, հիշենք այն երեքին, որոնց մասին խոսեցի ձեր սիրո համար՝ աղաչելով, որ ոչ ոքի ձեզ թշնամի չունենաք, ձեզ տրտմեցնողներից ոչ ոքի մասին վատ չխոսեք, ձեր բերանից հեռու թքեք երդվելու չար սովորությունը: [Վերոհիշյալ] երկու պատվիրանների մասին մեկ ուրիշ անգամ կճառեմ ձեզ, իսկ այս յոթ օրերին, սկսելով ամենադիւրին պատվիրանից, ձեզ հետ կխոսեմ երդվելու մասին: Քանզի երդվելու սովորությանն հաղթելը մեծ ջանք չի պահանջում. եթե կամենանք և փոքր-ինչ ջանք գործադրենք՝ յուրաքանչյուրն իր ընկերոջը ասելով, խրատելով, պահպանելով և վրեժ և հաշիվ պահանջելով նրանցից, ովքեր կմոռանան այդ մասին:

Քանի որ ի՞նչ օգուտ կլինի մեզ կերակուրներից ժուժկալելուց, եթե չհրաժարվենք հոգու չարաչար սովորություններից: Ահա այսօր ամբողջ օրն անկերակուր անցկացրինք, երեկոյան ժամին մեր առջև դնենք սեղան՝ ոչնչով չնմանվող երեկվա սեղանին, այլ տարբեր և առավել պարկեշտ: Թերևս մեզնից մեկը համարձակվի ասել, թե կերակուրի հետ նաև վատթար սովորությունն է փոխել: Ես ընաւ այդ կարծիքը չունեմ: Ուրեմն մենք ի՞նչ օգուտ կունենանք պահքից:

Ուստիև աղաչում եմ և աղաչելուց երբեք չեմ դադարում, որ ձեզ համար մեկ առանձին պատվիրան վերցնեք, երկու կամ երեք օր ծախսեք այդ մեկը կատարելու համար: Ինչպես, օրինակ, կան ոմանք, որ կերակուրներից ժուժկալելու մեջ իրար նախանձելով՝ սքանչելի մրցման մեջ են մտնում՝ մի մասը ամբողջ երկու օր անսվաղ անցկացնելով, իսկ մի մասն էլ ոչ միայն գինին ու ձեթը, այլ նաև բոլոր կերակուրները հեռացնելով իր սեղանից՝ միայն հացով ու ջրով է բավականանում ամբողջ քառասնօրյա պահքի օրերին, այդպես էլ մենք միմյանց հետ մրցության մեջ մտնենք՝ մեր միջից ջնջելու երդումների մրրիկը: Սա առավել կարևոր է, քան բոլոր պահքերը, սա բոլոր ճգնություններից առավել շահավետ է: Եվ ինչպես որ ջանում ենք պարկեշտ կերակուրներ ունենալ, նույն ջանքերը թափենք՝ ժուժկալելու երդումների մեջ, քանզի վերջին անմտությունը գործած կլինենք, մեղքերի պարտապան կլինենք, եթե արհամարհենք արգելվածները, իսկ չարգելվածների համար բոլոր ջանքերը գործադրենք, քանզի ուտելն արգելված չէ, իսկ երդվել արգելում է, իսկ մենք, հրաժարվելով նրանից, ինչ թույլ տրվեց, հանդգնում ենք անել արգելվածը:

Ուստիև աղաչում եմ ձեզ, սիրելինե՛ր, մեկ բան փոխեցեք ձեր մեջ. այժմ իսկ ցույց տվեք սկիզբը: Քանզի եթե իսկապես այդքան ջանադրությամբ [եք ուզում] անցկացնել առաջիկա պահքը, այս յոթնօրյակում ուղղվենք՝ ամենևին չերդվելու, հաջորդ յոթնօրյակին վերացնենք բարկությունը, մյուսում՝ արմատախիլ անենք բամբասանքը, մյուսում բազում այլ բաներ ուղղենք, և ապա այս օրինակով սակավ առ սակավ առաջադիմելով՝ կգանք ու կհասնենք դեպի նույն ինքը՝ առաքինության գագաթը, և կփրկվենք մոտալուտ վտանգից, Աստծուն ամբողջվին կհաշտեցնենք, և բազմությունն ինքը կրկին կվերադառնա մեր քաղաք: Եվ ապա մենք կդաստիարակենք նրանց, ովքեր օտարացել են, երբեք ամուր վայրերի, ապաստանի կամ այլ տեղ գնալու չվստահել մեր փրկության հույսը, այլ հոգու բարեպաշտությանն ու առաքինի վարքին:

Եվ այսպիսով վիճակվենք և՛ այժմյան, և՛ հանդերձյալ բարիքներին, որոնց թող արժանանանք մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհներով և մարդասիրությամբ: Նրան, Հորը, միաժամանակ և Սուրբ Հոգուն փառք այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌԸ[1]

Դարձյալ ժողովրդին ուղղված հորդորակ՝ քաջությամբ դիմանալու մոտալուտ սպառնալիքները՝ ունենալով Հոբի փորձությունների և նիկվեացիների օրինակը, և թե՝ չպետք է վախենալ մահվանից, այլ՝ մեղքերից, և թե ինչ է չարաչար մեռնելը, և երդվելուց բոլոր ջանքերով հրաժարվելու մասին:

Ա. Երեք մանուկների և բաբելոնյան հնոցի պատմությունը, ինչպես կարծում եմ, երեկ քիչ չմխիթարեց ձեր սերը, սիրելինե՛ր, սրա հետ միասին նաև Հոբի օրինակը, արդարի վերքերն ու աղբակույտը՝ արքայական բոլոր գահերից առավել խնկելի: Քանզի արքայական գահի տեսությունից ոչ մի օգուտ չի լինում տեսնողներին, այլ միայն առժամանակյա ուրախություն, որ զուրկ է որևէ օգուտից: Իսկ Հոբի աղբակույտը տեսնելով՝ մարդ մեծ օգուտ է ստանում, բազում իմաստություն և քաջալերություն՝ համբերելու: Հենց դրա համար էլ շատերն հանձն առնելով երկարժամանակյա ծովով ճամփորդությունը՝ երկրի ծագերից շարժվում գնում են Արաբիա, որպեսզի տեսնեն այն աղբակույտը: Եվ տեսնելով՝ այնպես են համբուրում հողը, որ իր մեջ ընդունեց այն պսակավորի մրցանքն ու արյունը, որ առավել պատվական է, քան ամենայն ոսկի: Քանզի ոչ մի ծիրանի այնպես գեղեցիկ չի փայլում, ինչպես այնժամ շողշողում էր այն մարմինը՝ ոչ թե ուրիշի, այլ իր իսկ արյամբ ներկված: Իսկ նրա վերքերն առավել պատվական էին, քան բոլոր ակները: Քանզի մար-

[1] Ճառիս ժամանակը նախընթաց ճառի հաջորդ օրն է, որի մասին սկզբում ասում է Ոսկեբերանը, այն է՝ Քառասնորդաց պահքի առաջին շաբաթվա երկրորդ կամ երրորդ օրը:

գարիտները մեր կյանքի համար ոչ մի օգուտ չունեն, ոչ էլ դրանք ունեցողների անհրաժեշտ պետքերն են լրացնում, իսկ այն վերքերը մխիթարություն են ամենայն տրտմության:

Որպեսզի համոզվես, որ խոսքս ճշմարիտ է, դու բյուրավոր մարգարիտներ ցույց տուր նրան, ով զրկվել է իր հարազատ միամորիկ որդուց. չես կարող մխիթարել նրա վիշտն ու բժշկել նրա ցավը, բայց եթե նրան հիշեցնես Հոբի վերքերը, հեշտությամբ կկարողանաս բժշկել նրան՝ ասելով այսպես. «Ինչո՞ւ ես ողբում, ո՛վ մարդ, դու միայն մեկ որդի կորցրիր, իսկ այն երանելին, կորցնելով իր բոլոր զավակներին, իր իսկ մարմնի վրա վերքեր ընդունեց և մերկ նստում էր աղբակույտին, թարախը թափվում էր բոլոր կողմերից, աստիճանաբար հալչում մաշվում էր նրա մարմինը. արդար, ճշմարտախոս, աստվածապաշտ, ամեն տեսակի չար գործերից հեռու մարդը, և նրա առաքինության վկան Ինքը՝ Աստված էր»: Եթե դու այս խոսքերն ասես սգավորին, ամբողջովին կփարատես նրա տրտմությունը և կվերացնես նրա ցավը: Այսպես արդարի վերքերն առավել օգտակար են լինում, քան մարգարիտները:

Ապա և դուք ինքներդ ձեզ համար գծագրեցեք այն նահատակին և համարեք, թե տեսնում եք այն աղբակույտն ու նրան՝ նստած աղբի մեջ, այն արձանը՝ ոսկյա, ականակուռ, ա... բնավ իսկ չգիտեմ՝ էլ ինչ ասեմ, քանզի կարող եմ և չգտնել այնպիսի պատվական նյութ, որ համարժեք լինի արյան մեջ կորած այն մարմնին: Այսպես բոլոր ցանկալի-ցանկալի նյութերից բաղում անգամ ավելի պատվական էր այն մարմնի բնությունը, իսկ վերքերն արեգակնային ճառագայթներից առավել գեղափայլ էին, քանզի սրանք պայծառացնում են մարմնի աչքերը, իսկ նրանք լուսավորում են մեր մտքի աչքերը. նրանք գլխովին շլացրին սատանային: Դրա համար էլ այդ հարվածից հետո նա հեռու փախավ և այլևս չերևաց:

Իսկ դու, սիրելի՛, նաև սրանից սովորի՛ր, թե որքան մեծ է նեղության շահը: Երբ այդ արդարը հարուստ էր և վայելում էր հանգստի մեջ, սատանան պատճառ գտավ նրա մասին չարախոսելու. թեև ստությամբ, բայց գտավ, թե ինչ ասի. «Մի՞թե Հոբը ձրի է պաշտում քեզ» (Հոբ Ա. 9): Իսկ ապա, երբ վերցրեց նրանից ամեն ինչ և թողեց նրան մերկ ու աղքատ, այնուհետև ծպտուն անգամ հանել չհամարձակվեց: Երբ Հոբը հարուստ էր, սատանան խոստացավ մրցել նրա հետ և սպառնում էր կործանել նրան, իսկ երբ աղքատացրեց նրան, զրկեց ամեն ինչից և անտանելի ցավերի մեջ նետեց, այնժամ հեռու փախավ: Երբ նրա մարմինն առողջ էր, սատանան նրան մոտեցրեց ձեռքը, իսկ երբ չարաչար հարվածեց նրա մարմնին, այնժամ թուլացավ ու փախավ: Տեսնո՞ւմ ես, թե զգաստների համար որքան ավելի լավ ու պիտանի է աղքատությունը, քան հարստությունը, հիվանդությունն ու տկարությունը, քան առողջությունը, փորձությունը, քան հանգիստը. թե դրանք որքան շքեղ ու կորովի են դարձնում նահատակներին:

Ո՞վ տեսավ, ո՞վ լսեց այսպիսի սքանչելի մարտի մասին: Սովորական բռնցքամարտիկները մրցության ժամանակ հենց որ հարվածում են իրենց ախոյանների գլխին և վիրավորում են այն, նույն պահին հաղթում ու պսակներ են ստանում. իսկ սա, երբ չարաչար հարվածներ հասցրեց արդարի մարմնին, բոլոր կողմերից վերքերով ծակոտեց և տկար ու անկարող դարձրեց, այնժամ պարտվեց ու տեղի տվեց, և երբ բոլոր կողմերից փորեց նրա կողերը, ոչ մի օգուտ չունեցավ, քանի որ չկարողացավ պեղել նրա մեջ մթերված գանձը, իսկ մեզ համար առավել երևելի դարձրեց նրան, իր փորելով՝ նա բոլորին հնարավորություն տվեց նայելու նրա ներսը և խելամուտ լինելու նրա ամբողջ հարստությանը, և այն ժամանակ, երբ ակնկալում էր հաղթել, գլխիկոր փախավ և այլևս ոչ մի ձայն չհանեց:

Ո՛վ բանսարկու, ի՞նչ եղավ քեզ, ինչո՞ւ ես փախչում այդտեղից: Մի՞թե չեղավ այն, ինչ կամենում էիր. մի՞թե չսատկեցրիր նրա հոտերը, նախիրները, ձիերի, ջորիների երամակները, մի՞թե մահվան չմատնեցիր նրա զավակներին ու հար-

վածելով՝ ամբողջովին չվիրավորեցիր նրա մարմինը. ինչո՞ւ փախար:

Քանի որ, ասում է, եղավ այն, ինչ կամենում էի, որ լիներ, բայց ինչ որ շատ էի կամենում, որ լիներ, և որի համար արեցի այդ ամենը, չեղավ, որովհետև չհայհոյեց. ասում է՝ հենց դրա համար էի անում այդ ամենը, որպեսզի հաջողվի այդ: Եթե այդ չեղավ, ես ոչ մի օգուտ չունեմ ո՛չ նրա ունեցվածքը վնասելուց, ո՛չ զավակների կորստից և ո՛չ էլ մարմնի հարվածներից, այլ իմ կամքի հակառակը եղավ. առավել երևելի դարձրի թշնամուն և առավել շքեղացրի նրան:

Տեսա՞ր, թե որքան է նեղության շահը, ո՛վ սիրելի: Արդարև, գեղեցիկ էր մարմինն ու քաջառողջ, բայց այն շատ ավելի փառավոր դարձավ, երբ կեղեքվեց վերքերից: Բուրդը նույնպես, որքան էլ գեղեցիկ լինի մինչև ներկվելը, երբ ծիրանի է դառնում, շատ ավելի գեղեցկություն ու մեծ փառք է ունենում: Եվ եթե սատանան կողոպտած չլիներ նրան, մենք չէինք իմանա պսակավորի քաջության մասին. եթե խոցերով ծակոտած չլիներ նրան, ճառագայթներ չէին ցոլա նրա ներսից. եթե աղբակույտի վրա նստեցրած չլիներ նրան, մենք չէինք իմանա նրա հարստության մասին: Քանզի գահին բազմած ոչ մի շքեղ թագավոր այնպես նշանավոր ու ականավոր չէր, ինչպես նա այն ժամանակ, երբ բազմած էր աղբակույտին, քանզի արքայական գահից հետո մահ է, իսկ այն աղբակույտից հետո՝ երկնային արքայություն:

Բ. Այս ամենի մասին խորհելով՝ մենք մեզ վեր բարձրացնենք մեզ պաշարած տրտմությունից: Այս պատմությունները ձեր առջև դնում եմ ոչ թե, որպեսզի գովեք ասածներս, այլ որպեսզի նմանվող լինեք այն քաջ այրերի առաքինությանն ու համբերությանը, որպեսզի հենց գործերից հասկանաք, որ մարդկային բոլոր չարիքներից միայն մեղքն է իսկապես չարիք և ոչ թե աղքատությունը, հիվանդությունը, թշնամանքը, զրպարտությունը, անարգանքը, նույնիսկ մահը, որ ամենավերջին չարիքն է կարծվում: Իմաստությունը սիրողների համար այս աղետները աղետներ են միայն անունով, այլ ոչ գործով: Իրական աղետն այս է՝ Աստծու դեմ մեղանչել և Նրան ոչ հաճելի որևէ բան անել:

Ինչո՞վ է սարսափելի մահը, ասա՛ ինձ. թերևս նրանո՞վ, որ քեզ ավելի շուտ է առաքում դեպի խաղաղ նավահանգիստ և անխռով կյանք: Եթե մարդը չսպանի քեզ, նույն ինքը՝ բնության օրենքը, վրա հասնելով, չի՞ բաժանի մարմինդ հոգուցդ, թեպետև այժմ չլինի, սակավ ժամանակից անպայման լինելու է այն, ինչից այժմ սարսափում ենք: Այս ասում եմ ոչ թե տրտմության սպասման վախից, քա՛վ լիցի, այլ որովհետև ամաչում եմ նրանց համար, ովքեր վախենում են մահից:

Դու, որ այնքան բարիքներ ես ակնկալում ու սպասում դրանց, որոնք «աչքը չտեսավ, ականջը չլսեց և մարդու սրտի մեջ չընկան» (Ա Կոր. Բ 9), և չե՞ս շտապում վայելել, խորշում ու դանդաղո՞ւմ ես, ոչ միայն դանդաղում, այլև սարսափում ու զարհուրո՞ւմ ես: Մի՞թե ամոթ չի լինի, եթե դու ցավես մահվան համար, երբ Պողոսը այս կյանքի համար էր հեծում և հռոմեացիներին գրում էր՝ ասելով, թե՝ «Ստեղծվածները հեծեծում են, այլև մենք իսկ, որ Հոգու առաջին պտուղն ունենք, մենք ևս մեր մեջ հեծեծում ենք» (Հռոմ. Ը 22): Նա այս ասում էր՝ ոչ թե դատապարտելով այս կյանքը, այլ որովհետև խիստ ցանկանում էր հանդերձյալը: Ճաշակեցի, ասում է, շնորհները, և ուշանալ չեմ կամենում, ունեմ Հոգու պտուղը, շտապում եմ ամբողջությամբ տիրանալ, ելա երրորդ երկինք, տեսա այն անճառելի փառքը, տեսա պայծառ արքունիքները, իմացա, թե այստեղ մնալով, որքա՛ն բանից եմ զրկվում, և դրա համար եմ հեծեծում: Ասա՛ դու ինձ՝ եթե մեկը քեզ տաներ արքայական ապարանք, այնտեղ ցույց տար բոլոր պատերի վրա փայլող ոսկին և ամբողջ վայելչությունը ցույց տալուց հետո տաներ աղքատի տաղավար՝ քեզ խոստանալով, որ կարճ ժամանակ հետո քեզ կրկին կտանի այն արքունիք և այնտեղ քեզ մշտնջենավոր օթևան կտա, չէի՞ր տխրի և դժկամությամբ դիմանա անգամ այդ սակավ օրերին: Այդպես մտածիր երկրի և երկնքի մասին և Պողոսի հետ հեծեծի՛ր ո՛չ թե մահվան, այլ այս կյանքի համար:

Ուրեմն տո՛ւր ինձ, ասում ես դու, լինել Պողոսի նման, և ես երբեք չեմ վախենա մահից: Իսկ ի՞նչն է քեզ արգելում, մա՛րդ դու, լինելու Պողոսի նման. նա աղքատ չէ՞ր, նա վրանակար չէ՞ր, հասարակ մարդ չէ՞ր նա: Եթե նա լիներ հարուստներից ու ազնվականներից մեկը, աղքատները, ովքեր նույն նախանձախնդրությունն ունենալու հրավիրվեցին, անշուշտ պատճառ բերելու բան կունենային իրենց աղքատությունը, իսկ այժմ այդպիսի ոչ մի բան ասել չես կարող. քանի որ նա արհեստավոր մարդ էր և իր ամենօրյա վաստակով էր կերակրվում: Դու սկզբից իսկ քո հայրերից աստվածպաշտությունը ժառանգեցիր և առաջին իսկ օրերից աստվածային Գրքերով սնվեցիր, մինչդեռ նա և՛ հայհոյիչ եղավ, և՛ հալածիչ, և՛ անարգող, և՛ քանդում էր Եկեղեցին, բայցևայնպես այնքան հանկարծակի փոխվեց, որ իր եռանդի սաստկությամբ գերազանցեց բոլորին և գոչում էր՝ ասելով. «Նմանվո՛ղ եղեք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին» (Ա Կոր. ԺԱ 1): Նա նմանվեց Տիրոջը, դու չե՞ս նմանվում քեզ նման ծառային, դու, որ մանկությունից սկսած՝ դաստիարակվել ես աստվածպաշտությամբ, նրան, ով հետո փոխվեց և ընդունեց հավատը:

Մի՞թե չգիտես, որ մեղավորները, թեպետև ապրում են, մեռած են, իսկ արդարները, թեև մեռնում են, կենդանի են: Իմը չէ այս խոսքը, այլ վճիռն է Քրիստոսի, ով ասաց Մարթային. «Ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի» (Հովհ. ԺԱ 25): Արդ, մի՞թե առասպելներ են մեր ուսուցումները: Եթե քրիստոնյա ես, հավատա՛ Քրիստոսին. եթե հավատում ես Քրիստոսին, հավատդ գործերո՛վ ցույց տուր ինձ: Իսկ ինչպե՞ս հավատդ ցույց տաս գործերով: Եթե արհամարհես մահը. քանզի նաև դրանով ենք մենք տարբերվում ենք անհավատներից: Նրանք արդարացիորեն են վախենում մահվանից, որովհետև չունեն հարության հույսը, իսկ դու, որ հետևում ես լավագույն ուղուն և կարող ես իմաստությամբ խոսել այն հույսի մասին, ինչպիսի՞ արդարացում կունենաս, երբ վստահ ես, որ հարություն է լինելու, բայց հարությանը չհավատացողների նման վախենում ես մահվանից:

Բայց մահվանից չէ, որ վախենում եմ. ոչ թե մեռնելուց եմ վախենում, այլ չարաչար մեռնելուց՝ գլխատվելուց: Ուրեմն չարաչա՞ր մեռավ Հովհաննեսը, որովհետև գլխատվեց. ուրեմն չարաչա՞ր մեռավ Ստեփանոսը, որովհետև քարկոծվեց. և բոլոր մարտիրոսները, ըստ ձեզ, թշվառությա՞մբ ելան այս աշխարհից, քանզի ոմանք՝ հրով, ոմանք՝ սրով ավարտեցին իրենց կյանքը, ոմանք՝ անդունդներում, ոմանք՝ դարավանդներում մեռան, ոմանք նետվելով գազանների առջև՝ նրանց ժանիքներով: Չարաչար մեռնելը բռնի մահվամբ մեռնելը չէ, ո՛վ մարդ, այլ մեղքերի մեջ մեռնելը: Եվ արդ, լսի՛ր մարգարեին, որ իմաստությամբ խոսում է այս մասին և ասում է. «Մեղավորների մահը չար է» (Սաղմ. ԼԳ 22):

Զասաց, թե բռնի մահն է չար: Այլ ի՞նչ: «Մեղավորների մահը չար է»: Իսկապես. որովհետև այստեղից մեկնելուց հետո անտանելի պատիժ է, անվերջ տանջանք, թունալից որդեր, անշեջ հուր, արտաքին խավար, անքակտելի կապանք, ատամների կրճտոց, նեղություն, անձկություն ու հավիտենական դատապարտություն:

Գ. Արդ, եթե այսպիսի չարիքներ են սպասում մեղավորներին, երբևէ ի՞նչ շահ և օգուտ կունենան նրանք, եթե տանը՝ իրենց անկողնում վախճանվեն. ըստ որում արդարներին էլ ոչ մի վնաս չի լինի, եթե իրենց այս կյանքը ավարտեն սրով, երկաթով կամ էլ հրով, երբ սպասում են՝ գնալու դեպի հավիտենական բարիքը: Արդարև, չար է մեղավորների մահը: Այդպիսին էր մահը այն հարուստի՝ նրա, ով անտեսում էր Ղազարոսին, ով չնայած իր բնական մահվամբ ավարտեց իր կյանքը իր տանը՝ մահճի մեջ, անհրաժեշտ ամեն բանով սպասավորվելով, և գնալով այնտեղ՝ տապակվում էր և այստեղ ապրած բարեկեցիկ կյանքից ոչինչ չէր կարողանում գտնել այնտեղ մխիթարվելու համար:

Բայց Ղազարոսը՝ ոչ այդպես, այլ գետնախշտի, իր վերքերը լիզող շներով շրջապատված ընդունեց բռնի մահը (քանզի սովից առավել դաժան ի՞նչ կա), և գնալով այնտեղ՝ վայելում էր անեզրական բարիքների մեջ՝ բերկրելով Աբրահամի

գոգում: Արդ, ի՞նչ վնաս տվեց նրան բռնի մահվամբ մեռնելը, և ի՞նչ օգուտ տվեց մեծատունին ոչ բռնի մեռնելը:

Բայց, ասում ես, մենք վախենում ենք ոչ թե բռնի, այլ հանիրավի մեռնելուց, որ, չհանդգնելով անել այն ամենը, ինչում կասկածում են մեզ, անհնազանդների հետ հավասարապես տանջվենք: Ի՞նչ ես ասում, ասա՛ ինձ: Վախենում ես հանիրավի մեռնելո՞ւց, իրավա՞մբ էիր կամենում[1]: Ո՞վ է այն ողորմելին ու թշվառականը, որի առջև լինի հանիրավի մահը, իսկ նա իրավամբն առավել ընտրի: Եթե պետք լինի վախենալ մահվանից, ապա պետք է վախենալ նրանից, որ իրավամբ է պատահում մեզ. քանի որ հանիրավի մեռնողը հենց դրա շնորհիվ հաղորդակցվում է բոլոր սուրբերի հետ: Աստծուն հաճոյացածների և պայծառացածների մեծ մասը հանիրավի մեռավ. և նրանցից առաջինը՝ Աբելը. նա խողխողվեց ոչ թե այն բանի համար, որ մեղանչեց եղբոր դեմ կամ տրտմեցրեց Կայենին, այլ այն պատճառով, որ պատվում էր Աստծուն: Իսկ Աստված թույլ տվեց: Ինչո՞ւ. նրան սիրելո՞ւ, թե՞ ատելու պատճառով. ակնհայտ է, որ նրան սիրելով և կամենալով նրա իգուր և հանիրավի սպանության համար տալ նրան առավել պայծառ պսակ:

Տեսնո՞ւմ ես, որ չպետք է վախենալ ո՛չ բռնի մահվանից և ո՛չ էլ հանիրավի մահվանից, այլ՝ մեղքերի մեջ մեռնելուց: Հանիրավի մեռավ Աբելը, «ահուդողի ու երերման մեջ» ապրեց Կայենը (Ծն. Դ 12): Եվ արդ, ո՞վ էր, ասա՛ ինձ, առավել երանելի. արդարությամբ մեռա՞ծը, թե՞ մեղքերի մեջ ապրողը, հանիրավի մեռա՞ծը, թե՞ իրավամբ պատժվողը:

Կամենո՞ւմ եք, կասեմ ձեզ, սիրելինե՛ր, թե ինչու ենք մենք վախենում մահից: Մեզ չի խոցում արքայության տենչանքը, մեզ չի այրում հանդերձյալ [բարիքների] ցանկությունը, հակառակ դեպքում երանելի Պողոսի նման կարհամարհեինք այս աշխարհին պատկանող ամեն բան: Դարձյալ՝ չենք վախենում գեհենից, այդ պատճառով էլ վախենում ենք մահվանից. չգիտենք անտանելիությունը այնտեղի տանջանքների, դրա համար էլ մեղքերից վախենալու փոխարեն մահվանից ենք վախենում: Եթե այն երկյուղը գրված լիներ մեր հոգին, ներս չէր սպրդի այս երկյուղը:

Կջանամ ցույց տալ ձեզ նաև այս ոչ թե հեռավոր ժամանակներում, այլ այս օրերին մեզ պատահածից: Երբ եկավ հասավ կայսերական հրովարտակը հարկը հավաքելու մասին, որ անտանելի էր թվում, մեծ խռովություն եղավ. բոլորը վիճում էին, դժկամում, գայրանում, իրար մոտ գալով՝ խուճապահար ասում էին՝ մեր այս կյանքը կյանք չէ, քաղաքը հիմն ի վեր եղավ, ոչ ոք չի կարող դիմանալ այս հարկի ծանրությանը:

Եվ նեղությունը պաշարել էր բոլորին, կարծես ենթարկվել էին ծայրագույն վտանգների: Իսկ ապա դրանից հետո երբ կատարվեց հանդուգն գործը, և որոշ ժանտ և առավել անօրեն մարդիկ, ահամարհելով օրենքները, կործանեցին արձանները և բոլորին կանգնեցրին ծայրագույն վտանգի առջև՝ բարկացնելով կայսերը, մենք այժմ սկսեցինք վախենալ մեր կյանքի համար. այսուհետև մեզ չի վախեցնում ունեցվածքի կորուստը, այլ այդպիսի խոսակցությունների փոխարեն բոլորից այլ բան եմ լսում. «Թող կայսրը վերցնի մեր գույքերը. մենք կամովին թողնում ենք և՛ մեր հանդերը, և՛ մեր տները, միայն թե մեկը խոստանա ողջ պահել մեր մերկ մարմինները»:

Ուրեմն, քանի դեռ մեզ չէր պատել մահվան երկյուղը, մենք տանջվում էինք ունեցվածքի կորստի համար, իսկ երբ տեղի ունեցավ այդ անօրեն հանդգնությունը, վրա հասած մահվան երկյուղը հեռու վանեց կորուստների համար ցավը: Ճիշտ այդպես եթե գեհենի երկյուղը գրված լիներ մեր հոգին, մեզ չէր գրավի մահվան երկյուղը. այլ ինչպես երբ մարմնի մեջ երկու ցավ ենք ունենում, և ավելի ուժեղը ծածկում է թույլին, այդպես էլ այստեղ կլիներ. եթե մեր հոգում լիներ ապագա պատիժների երկյուղը, այն կստվերացներ

[1] Ոսկերերանն հիշատակում է մեծ Սոկրատեսի պատասխանն իր կնոջը, կամ էլ թերևս իր իսկ խոսքն է: Երբ Աթենքի բռնակալները դատապարտում էին Սոկրատեսին, նրա կինը գուժում և աղաղակում էր, թե՝ «Հանիրավի դատապարտվեց»: Սոկրատեսը պատասխանում և ասում է՝ «Եվ ի՞նչ, կամենում էիր, որ իրավա՞մբ դատապարտվեի»:

ամենայն մարդկային վախ: Այնպես որ եթե մեկը ճգնի հանապազ հիշել գեհենի մասին, նա ժպիտով կնայի ամեն տեսակի մահվան վրա, և այս ոչ միայն այժմյան տրտմությունից կփրկի նրան, այլ նաև կազատի այն բոցից:

Ով մշտապես վախենում է գեհենից, նա երբեք չի ընկնի գեհենի կրակի մեջ, որովհետև այդ մշտական վախը զգոն է դարձնում նրան:

Թույլ տվեք այժմ՝ հարմար ժամանակ, ասել ձեզ, եղբայրնե՛ր. «Մտքով մանուկ մի՛ եղեք, այլ մանուկ եղե՛ք չարության գործելու մեջ» (Ա Կոր. ԺԴ 20): Մենք, իսկապես, մանկական սարսափով ենք բռնվում, երբ վախենում ենք մահվանից, ոչ թե մեղքերից: Քանզի փոքր երեխաները վախենում են դիմակներից, իսկ կրակից՝ ոչ. և եթե պատահում է, որ նրանց մոտեցնում են ճրագարանը, որի վրա վառվող ճրագ կա, նրանք առանց հասկանալու իրենց ձեռքը տանում են դեպի ճրագարանն ու բոցը. նրանք, որ զարհուրում են դիմակից, որ ոչինչ է, իսկ կրակից, որ իսկապես սարսափելի է, չեն վախենում, ճիշտ այդպես էլ մենք. վախենում ենք մահից, որ անարգ դիմակ է, և չենք վախենում մեղքից, որ իսկապես սարսափելի է և կրակի պես լափում է խղճմտանքը: Եվ այս ամենը ոչ թե երևույթի բնույթից է, այլ մեր չհասկանալուց: Այնպես որ եթե մտածենք, թե ինչ է մահը, մենք երբեք չենք վախենա նրանից: Իսկ ի՞նչ է մահը: Այն նույն է, ինչ հագուստից մերկանալը: Մարմինը հագուստի նման շրջապատում է հոգուն, և մենք մահվան միջնորդությամբ այն կարճ ժամանակով հանում ենք մեզնից, որպեսզի վերստին ստանանք այն պայծառ տեսքով: Ի՞նչ է մահը. ժամանակավոր պանդխտություն, քուն՝ սովորականից առավել երկարատև: Արդ, եթե դու վախենում ես մահվանից, վախեցի՛ր նաև քնից. եթե սգում ես վախճանվածների համար, ապա սգա՛ ուտողների ու խմողների համար, քանզի ինչպես որ սա է բնական, այդպես էլ այն: Թող քեզ չտրտմեցնեն այն բաները, որ կատարվում են բնության օրենքներով, այլ թող առավել տրտմեցնեն այն բաները, որոնք կատարվում են չար

կամքով. դու մի՛ ողբա վախճանվածին, այլ լաց եղիր մեղքերի մեջ ապրողների՛ համար:

Դ. Կամենո՞ւմ ես, որ ասեմ մեր՝ մահից վախենալու մեկ այլ պատճառ. չենք ապրում անարատությամբ, չունենք մաքուր խղճմտանք: Եթե սրանք լինեին, մեզ չէր զարհուրեցնի ոչինչ՝ ո՛չ մահը, ո՛չ սովը, ո՛չ դրամի կորուստը և ո՛չ էլ մեկ այլ բան: Առաքինությամբ ապրողին այդպիսի բաներից ոչինչ չի կարող վնասել և ոչ էլ զրկել ներքին բերկրությունից, որովհետև չկա մի բան, որ կարողանա տրտմության մեջ գցել նրան, ով սնվում է բարի հույսով: Քանզի ի՞նչ պիտի անի մեկը, որով կարողանա տրտմեցնել քաջ մարդուն. կհափշտակի նրա ունեցվա՞ծքը. բայց նա երկնավոր հարստություն ունի: Թերևս հայրենիքի՞ց կվտարի. բայց այդպիսով նրան կառաքի վերին քաղաք: Կապանքներով կկապի՞. բայց նա ազատ խղճմտանք ունի և չի զգում արտաքին շղթաները: Մարմի՞նը կսպանի. բայց այն կրկին հարություն կառնի: Ինչպես ստվերի հետ կռվողն ու օդը ծեծողը չի կարող ոչ ոքի վնասել, այդպես էլ արդարի հետ մարտնչողը միայն ստվերի հետ է կռվում, իր ուժն է վատնում, իսկ նրան ոչ մի վերք հասցնել չի կարող: Այդ դեպքում տո՛ւր ինձ՝ վստահ լինելու երկնքի արքայության [գոյությեանը] և եթե կամենում ես, այսօր իսկ կտրի՛ր գլուխս. ես քեզնից շնորհակալ կլինեմ սպանության համար, քանի որ ավելի շուտ ես ինձ ուղարկում դեպի այն բարիքները:

Հենց այս է, ասում է, որից մենք առավել ենք վախենում. գուցե մեր մեղքերի բազմության պատճառով չմտնենք երկնքի արքայություն: Ուրեմն թո՛ղ մահվան համար ողբդ, ողբա քո մեղքերի՛ համար, որպեսզի ջնջես դրանք: Քանզի տրտմությունը ծնվեց ոչ թե այն բանի համար, որ մենք սգանք մեր ինչքերի կորուստը, մահը կամ սրանց նման այլ բաները, այլ որ նրանով ջնջենք մեր մեղքերը: Որ իսկապես այդպես է, օրինակով ցույց կտամ ձեզ: Բուժիչ դեղերը ստեղծվեցին միայն այն հիվանդությունների համար, որոնք դրանք կարող են վերացնել, այլ ոչ թե նրանց համար, որոնց դրանցից ոչ մի օգուտ չկա:

Օրինակով ասեմ, որպեսզի խոսքս առավել պարզ դառնա. դեղը, որ կարող է դարմանել միայն հիվանդ աչքերը և ոչ այլ հիվանդություններ, իրավացիորեն նշանակված կհամարեն միայն աչքերի, այլ ոչ թե ստամոքսի, ձեռքերի կամ ուրիշ անդամների հիվանդության համար: Այժմ մեր խոսքն ուղղենք տրտմությանը և տեսնենք, որ այն մեզ պատահող ոչ մի բանում չի օգնում մեզ, այլ միայն սրբում է մեղքերը, ուրեմն ակնհայտ է, որ այն ծնվել է միայն դրանք ջնջելու համար:

Արդ, դառնանք այն դժնդակ աղետներին, որ պատահում են մեզ, և դրանց մոտ դնելով տրտմությունը՝ տեսնենք, թե ինչ շահ կամ օգուտ է լինում դրանից: Մեկը կորցրեց ունեցվա՞ծքը. տրտմեց. չվերացրեց վնասը: Զավակի՞ց զրկվեց մեկը. ցավեց. ո՛չ մեռածին հարություն տվեց և ո՛չ էլ որևէ օգուտ տվեց նրան: Մեկը դանակոծվե՞ց, ապտակնե՞ր ստացավ, անարգվե՞ց. տրտմեց. անարգանքները ետ չդարձրեց իրենից: Ծանր հիվանդացա՞վ մեկը. տխրեց. չփարատեց հիվանդությունը, այլ ավելի ծանրացրեց: Տեսնո՞ւմ ես, որ այս աղետներից ոչ մեկին ոչնչով չօգնեց տրտմությունը: Մեղանչե՞ց մեկը. տրտմեց, ջնջեց մեղքերը, վերացրեց իր հանցանքները: Որտեղի՞ց է այս հայտնի: Տերունական խոսքից. մի մեղավոր մարդու մասին խոսելով՝ Նա ասում է. «Մեղքի պատճառով սակավ ժամանակ տրտմեցրի նրան, և տեսա, որ տրտմեց և անցավ թախծելով, և ես բժշկեցի նրան» (տե՛ս Ես. ԾԷ 17): Այդ մասին նաև Պողոսն է ասում. «Որովհետև ըստ Աստծու ուզածի տրտմությունը ապաշխարություն է առաջ բերում առանց զղջումի» (Բ Կոր. Է 10):

Ուրեմն, քանի որ խոսքս պարզ ցույց տվեց, որ ո՛չ ինչքերի կորուստը, ո՛չ անարգանքը, ո՛չ զրպարտությունը, ո՛չ ծեծը, ո՛չ հիվանդությունը, ո՛չ մահը և ո՛չ այդպիսի մեկ այլ բան չի կարող բուժել վրա հասած տրտմությունը, այլ այն միայն ջնջում է մեղքերը և վերացնում է դրանք, ապա ակնհայտ է, որ միայն դրա համար էլ ծնվեց: Ուրեմն այսուհետ մեզ համար թող ցավալի չլինի դրամի կորուստը, այլ ցավենք միայն այն ժամանակ, երբ մեղանչում ենք. քանզի այդժամ

շատ մեծ է տրտմությունից եկած օգուտը: Զրկվեցի՞ր, մի՛ տխրիր, քանի որ ոչ մի օգուտ չես ունենա: Մե՞ղք գործեցիր, տրտմի՛ր. այն օգտակար է: Տե՛ս դու Աստծու հանճարն ու իմաստությունը. մեղքը մեզ նվիրեց երկու բան՝ տրտմություն և մահ. «Որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահով կմեռնեք» (Ծն. Բ 17): Իսկ կնոջն ասաց. «Ցավերով երեխաներ պիտի ծնես» (Գ 16): Այս երկուսի միջոցով էլ վերացրեց մեղքը և այնպես արեց, որ մոր մահը լինի զավակների միջոցով: Իսկ այն, որ ինչպես տրտմությունը, այդպես և մահն է ամբողջովին վերացնում մեղքը, հայտնի է մարտիրոսների օրինակից, նաև Պողոսի՝ մեղանչողներին ուղղած հետևեալ խոսքերից. «Դրա համար իսկ ձեր մեջ կան բազում հիվանդներ ու ցավագարներ, և շատերն էլ մեռած են» (Ա Կոր. ԺԱ 30): Որովհետև դուք մեղանչում եք, մեռե՛ք, որպեսզի մահվամբ լուծեք մեղքերը: Ապա շարունակում է՝ ասելով. «Որովհետև եթե մենք ձեզ քննեինք, ապա չէինք դատապարտվի: Իսկ եթե դատվում ենք, Տիրոջից խրատվում ենք, որպեսզի աշխարհի հետ չդատապարտվենք» (Ա Կոր. ԺԱ 31-32): Եվ ինչպես որ որդն է ծնվում փայտից և ուտում է փայտը, իսկ ցեցն ուտում է բուրդը՝ նրանից սկիզբ առած լինելով, այդպես էլ տրտմությունն ու մահը ծնվեցին մեղքերից և վերացնում են մեղքերը:

Այսուհետ մի՛ վախեցեք մահից, այլ վախեցեք միայն մեղքերի՛ց և միայն դրա՛նց համար սգացեք: Այս ամենն ասում եմ ոչ թե, որպեսզի ունենամ դժնդակ բաների ակնկալիքն ու սպասումը. քա՛վ լիցի, այլ որպեսզի խնդրեմ ձեզ, որ վախենում եք, միշտ այս օրինակով առաքինանալ և Քրիստոսի օրենքները գործերով կատարել, քանզի. «Ով չի վերցնում իր խաչը, ասում է, և իմ ետևից չի գալիս, ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 38): Նա այս ասում էր ոչ թե, որպեսզի մեր ուսերի վրա փայտ կրենք, այլ որպեսզի հանապազ մեր աչքերի առջև ունենանք մահը, ինչպես որ Պողոսն էր ամեն օր մեռնում (Ա Կոր. ԺԵ 31). ծիծաղում էր մահվան վրա և արհամարհում էր այս կյանքը:

Դու զինվոր ես և անդադար ճակատամարտի մեջ ես. իսկ այն զինվորը, ով վախենում է մահից, երբեք քաջաբար չի նահատակվի, այդպես էլ այն քրիստոնյան, ով վախենում է վտանգներից, երբեք մեծագործություններ ու հրաշքներ չի գործի, ոչ միայն այդ, այլ նաև հեշտությամբ կբռնվի: Բայց արին ու հաղթամարմինը միշտ անընկճելի ու անպարտելի է մնում:

Արդ, ինչպես որ երեք մանուկները, չվախենալով կրակից, փրկվեցին կրակից, այդպես էլ մենք, եթե չվախենանք մահից, կփրկվենք մահից: Նրանք կրակից չվախեցան, որովհետև այրվելը հանցանք չէ, այլ վախեցան մեղքերից, որովհետև ամբարշտանալը հանցանք է: Մենք նույնպես նմանվողներ լինենք նրանց, նաև նրանց, ովքեր նմանվեցին նրանց, չվախենա՛նք վտանգներից և կփրկվե՛նք վտանգներից:

Ե. Ո՛չ մարգարե եմ ես և ո՛չ էլ մարգարեի որդի (Ամովս, Է 14), բայց հաստատապես գիտեմ, թե ինչ է լինելու, և բարձր ու ազդու ձայնով գոչում եմ, որ եթե մենք փոխվենք, հոգ տանենք մեր հոգու մասին և մեղքերից հեռանանք, մեզ ոչ մի դառն ու տրտմեցնող բան չի պատահի: Ես սա լավ գիտեմ, որովհետև գիտեմ Աստծո մարդասիրությունը և այն ամենը, ինչ որ Նա արեց և՛ մարդկանց, և՛ քաղաքների, և՛ ազգերի ու ժողովուրդների հետ: Նա սպառնաց Նինվեին և ասաց. «Երեք օր ևս, և Նինվեն կկործանվի» (Հովնան, Գ 4): Ի՞նչ եղավ հետո, ասա՛ ինձ. կործանվե՞ց Նինվեն, հիմնիվեր քանդվե՞ց քաղաքը:

Ո՛չ, այլ միանգամայն հակառակը եղավ. այն կանգուն մնաց և առավել շքեղացավ, և անցած երկարուձիգ ժամանակները չեղծեցին նրա փառքը, այլ բոլորս հիմա էլ բարեհռչակում ենք այն և սքանչանում նրանով, քանզի այն ժամանակներից մինչ այժմ նա մեղավորների համար գեղեցիկ նավահանգիստ պատրաստվեց. այն չի թողնում հուսահատվել, այլ բոլորին կոչում է ապաշխարելու, և այն ամենով, ինչ որ ինքն արեց և ինչով որ արժանացավ Աստծո ողորմությանը, սովորեցնում է երբեք չկտրել փրկության հույսը, այլ

առաքինի կյանք վարել, աչքերի առջև ունենալ բարի հույսը և այդպիսով վստահ լինել, որ ամեն բան բարի ավարտ կունենա: Ո՞վ երբևէ չի ուրախանա՝ լսելով նինվեացիների օրինակը, անգամ եթե բոլորից անպիտան լինի: Ահա Աստված ընտրեց, որ ավելի լավ է՝ չկատարվի Իր մարգարեությունը, քան թե քաղաքը հիմնովին կործանվի, մանավանդ որ մարգարեությունն անկատար չմնաց: Քանզի եթե մարդիկ մնային նույն պղծության մեջ, և վճիռը գործ չդառնար, թերևս մեկը կկարողանար չարախոսել պատգամները, բայց եթե Աստված դադարեց բարկությունից, երբ նրանք փոփոխվեցին և դադարեցին մեղանչելուց, դրանից հետո ո՞վ կարող է մեղադրել մարգարեությունը և իբրև սուտ՝ դատապարտել պատգամները: Աստված ահա այն ժամանակ էլ պահեց այն օրենքը, որ սկզբից տվեց մարգարեի միջոցով: Ո՞ր օրենքը:

«Եթե վճիռ կարդամ մի ազգի կամ թագավորության վախճանի մասին՝ նրանց վերացնելու, քանդելու և կործանելու համար, և եթե այն ազգը դարձի գա իր չարություններից, որոնց մասին խոսեցի, ես ևս կզղջամ այն չարիքների համար, որ մտածեցի անել նրանց նկատմամբ» (Երեմ. ԺԸ 7): Արդ, այս օրենքը պահելով՝ փրկեց ուղղվողներին և իրենց չարիքը դադարեցնողներին փրկեց բարկությունից:

Գիտեր բարբարոսների առաքինությունը, ուստիև ստիպում, չտապեցնում էր մարգարեին: Եվ ահա տագնապեց քաղաքը՝ լսելով մարգարեական ձայնը, բայց այդ տագնապից ոչ մի վնաս չկրեց, այլ մանավանդ օգուտ ստացավ: Այդ սարսափը փրկություն ծնեց, սպառնալիքը վերացրեց վտանգը, կործանման վճիռը կասեցրեց կործանումը (Հովն. Գ 4): Ո՛վ նոր և սքանչելահրաշ դիպվածին. մահ գուժող վճիռը ծնեց կյանք: Վճիռը, երբ ասվեց, այնժամ անվավեր դարձավ՝ հակառակ աշխարհիկ դատավորների. սրանց մոտ վճիռը հայտնել, նշանակում է ի կատար ածել այն, իսկ Աստծու մոտ՝ հակառակը. վճիռը հայտնել, նշանակում է այն անվավեր դարձնել: Եթե վճիռը հայտնված չլիներ, մեղավորները լսած չէին լինի այն, իսկ եթե լսած չլիներին, կապաշխարեի՞ն

արդյոք, արդյոք կճողոպրեի՞ն պատուհասից, կվայելեի՞ն այն սքանչելի փրկությունը:

Մի՞թե սքանչելի չէ, երբ դատավորը հայտնում է վճիռը, իսկ դատապարտվողները ապաշխարությամբ լուծում են այն: Նրանք ոչ թե տեղի տալով փախան իրենց քաղաքից, ինչպես մենք՝ այժմ, այլ մնացին այնտեղ և դրանով ավելի ամուր դարձրին այն: Որոգայթ էր, իսկ նրանք ամուր ապաստան դարձրին այն, վիհ ու դարավանդ էր, և ապավենի աշտարակ դարձրին այն: Նրանք լսեցին, որ կործանվելու են իրենց շինությունները, և չփախան իրենց տներից, այլ փախան իրենց մեղքերից. ոչ ոք չհեռացավ իր տնից, ինչպես մենք՝ այժմ, այլ յուրաքանչյուրն հեռացավ իր չար ճանապարհից: Մի՞թե պատերը ծնեցին բարկությունը, ասում էին նրանք. մե՛նք ենք վերքի մեղավորները, մե՛նք էլ պատրաստենք սպեղանիները: Ուստիև հավատացին, որ իրենց փրկությունը ոչ թե իրենց տեղի, այլ վարքի փոխոխության մեջ է:

Զ. Այսպես արեցին հեթանոսները: Իսկ մենք չե՛նք պատկառում. և ինչպե՞ս ամոթը չի ծածկում մեզ, որ երբ նրանք փոխեցին իրենց վարքը, մենք փոխում ենք մեր վայրը[1]. անմիտների գործերն ենք գործում և մեր գույքերն առած՝ տեղափոխվում ենք: Տերը բարկանում է մեզ վրա, իսկ մենք, զանց առնելով այն, որ հարկ է լուծել բարկությունը, մեր ինչքերն առած՝ շրջում ենք՝ դրանք դնելու տեղեր փնտրելով, երբ հարկ էր փնտրել այնպիսի տեղ, ուր ի պահ դնեինք մեր հոգիները, մանավանդ հարկ չկար փնտրելու այդ, այլ մեր առաքինություններով ու մաքուր վարքով պահպանելու այն: Եթե մենք բարկանայինք մեր ծառայի վրա, և նա, փոխանակ իրեն արդարացնելու, այդ բարկության պատճառով իջնելով իր խուղը և հավաքելով ու ծրարելով իր բոլոր հագուստներն ու ունեցվածքը, մտածեր փախչել, մենք անշուշտ հեշտ չէինք տանի այս արհամարհանքը:

[1] Ոսկերերանը վերցրել է հունարեն նմանաձայնությունը:

Ուրեմն դադարեցնե՛նք այս անհարկի ջանքերը և յուրաքանչյուրս ասենք առ Աստված. «Ո՞ւր գնամ ես քո Հոգուց, կամ քո դեմքից ո՞ւր փախչեմ» (Սաղմ. ՃԼԸ 8): Նինվեացիների իմաստությանն հետևենք. նրանք ապաշխարեցին, երբ չգիտեին՝ ներվելո՞ւ են, թե՞ ոչ, քանզի վճռի մեջ պայման չկար, որ եթե դառնաք և ապաշխարեք, հաստատուն կպահեմ քաղաքը, այլ պարզապես. «Երեք օր ևս, և Նինվեն կկործանվի»: Իսկ ի՞նչ արեցին նրանք. «Ո՛վ գիտե, թերևս Աստված միտքը փոխի և ետ կանգնի իր խիստ բարկությունից, և կորստյան չմատնվենք» (Հովնան, Գ 9): «Ո՛վ գիտե». չգիտեն՝ ինչպիսի վախճան կունենա իրենց գործը, և չեն անտեսում ապաշխարությունը, Աստծու մարդասիրության ոչ մի օրինակի ծանոթ չեն, այդուհանդերձ փոխվում են, [իբրև օրինակ]՝ նինվեացիների մեջ չունեին ապաշխարությամբ փրկված մարդկանց, մարգարեներին չէին ընթերցել, նահապետներին չէին լսել, ո՛չ խորհուրդ էին ստացել և ո՛չ էլ խրատի բաժնեկից եղել և իրենց մտքում համոզված չէին, թե կարող են ապաշխարությամբ ամբողջովին հաշտեցնել Աստծուն. սպառնալիքը նրանց այդ հույսը չէր տալիս, այլ տարակուսել ու երկմտում էին, սակայն ամենայն խնամով ապաշխարել սկսեցին:

Ուրեմն մենք ինչպե՞ս ենք արդարանալու. երբ նրանք, չիմանալով վախճանը, հանձն առան այդպես փոխվել, դու, որ վստահ ես Աստծու մարդասիրությանը, որ բազում-բազում անգամ ստացել ես Նրա խնամածության առհավատչյան, լսել ես և՛ մարգարեներից, և՛ առաքյալներից, գործերից իսկ սովորել, չես ջանում նրանց առաքինությանն հասնել:

Մեծ էր այդ մարդկանց առաքինությունը, բայց ավելի մեծ է Աստծու մարդասիրությունը. և այս կարելի է տեսնել դրանցից իսկ՝ սպառնալիքների սաստկությունից: Աստված վճռին չավելացրեց. «Եթե ապաշխարեք, կխնայեմ», այն պատճառով, որ նրանց առջև դնելով անորոշ դատավճիռը՝ մեծացնի երկյուղը, իսկ երկյուղը մեծացնելով՝ դրդի ավելի շուտ ապաշխարելու:

Եվ այնտեղ ապա մարգարեն, նախապես տեսնելով, որ իր կանխասացություններն անկատար են մնալու, ամաչում է, իսկ Աստված չի ամաչում, այլ միայն մի բան է փնտրում՝ մարդկանց փրկությունը, և ուղղորդում է Իր ծառային: Քանզի երբ նա նավ մտավ, ծովը մրրկեց. որպեսզի իմանաս, թե ուր որ մեղքն է, այնտեղ մրրիկ է, ուր անհնազանդություն է, այնտեղ ալեկոծություն է. շարժվում, տատանվում էր քաղաքը նինվեացիների մեղքերից, և շարժվում, տատանվում էր նավը մարգարեի անհնազանդությունից:

Արդ, նրանք Հովհանին ծովը գցեցին, և հանդարտվեց նավը, իսկ մենք անդնդասույզ անենք մեր մեղքերը, և կանգուն կմնա մեր քաղաքը. փախուստից ոչ մի օգուտ չի լինի մեզ, քանզի նրան էլ ոչնչով չօգնեց փախուստը, այլ հակառակը՝ վնասեց:

Նա փախչում էր երկրից, բայց չկարողացավ փախչել Աստծու բարկությունից. փախչում էր ցամաքից, բայց մրրիկ բարձրացրեց ծովում, և փախչելով՝ ոչ միայն ինքը ոչ մի բարիքի չհանդպեց, այլև իրեն հյուրընկալողներին սարսափելի վտանգների մեջ գցեց: Երբ նավարկում էր նավով, և նավաստիներն ու ղեկը վարողները մերձ էին, իսկ նավն անվնաս էր, նա վտանգի ենթարկեց նրանց, իսկ երբ նետվեց ծովը, այդ պատուհասով քավեց մեղքերը և իջավ մտավ խառնախորթ նավի՝ կետի փորի մեջ, այդժամ մեծ խաղաղություն վայելեց, որպեսզի դու սովորես, որ ինչպես որ մեղքերի մեջ ապրողին նավն էլ ոչնչով չի օգնի, այդպես էլ մեղքերից քավվածին ո՛չ ծովը կորստյան կմատնի, ո՛չ էլ գազանները կհոշոտեն:

Արդ, նրան առան ալիքները և չխեղդեցին. վերցրեց կետը և չսպանեց, հակառակը՝ և՛ կենդանին, և՛ տարերքը ավանդը ողջ վերադարձրին Աստծուն: Եվ այս ամենի միջոցով մարգարեն խրատվեց ու սովորեց՝ լինել մարդասեր ու հեզ և չլինել դաժան, ինչպես անմիտ նավաստիները, վայրենի ալիքներն ու գազանները:

Նավաստիները նրան նետեցին ոչ թե սկզբում՝ առաջին վտանգի ժամանակ, այլ երբ խիստ հարկադրված եղան, իսկ

ծովն ու գազանները մեծ հյուրամեծարությամբ պահեցին նրան. այսպէս այս ամենը տնօրինվում էր Աստծու կողմից:

Եվ ահա նա վերադարձավ, քարոզեց, սպառնաց, համոզեց, փրկեց, զահուրեցրեց, ուղղեց, հաստատեց միայն մեկ և առաջին քարոզությամբ: Նրան բազում օրեր և անդադար խորհուրդներ պետք չեղան, այլ լոկ մի քանի պարզ խոսք ասելով՝ բոլորին ապաշխարության բերեց: Աստված նրան շտապ չհասցրեց նավից մինչև քաղաք, այլ նավաստիները տվեցին ծովին, ծովը՝ կետին, կետը՝ Աստծուն, Աստված՝ նինվեացիներին. Նա փախստականին այդպիսի երկար ճանապարհով ետ դարձրեց այն պատճառով, որպեսզի բոլորին ուսուցանի, որ անհնարին է փախչել Աստծու ձեռքից, որ մարդ ուր էլ որ գնա՝ իր հետ տանելով մեղքերը, բյուրավոր դժնդակ աղետների ենթակա կլինի, և եթե անգամ ոչ մի մարդ մոտ չլինի, բնությունն ինքը բոլոր կողմերից սաստիկ բռնությամբ նրա դեմ կելնի:

Ուրեմն վստահենք, որ կփրկվենք ոչ թե փախուստի դիմելով, այլ վարքի փոփոխությամբ: Մի՞թե Աստված քեզ վրա բարկանում է այն պատճառով , որ դու մնում ես քաղաքում և չես փախչում: Բարկանում է, որովհետև դու մեղք ես գործում: Ուրեմն հեռո՛ւ մնա մեղքերից և խցի՛ր չարիքի աղբյուրն այնտեղ, ուր վերքի պատճառն է. բժիշկները նույնպես խորհուրդ են տալիս հակառակով բուժել: Շվայտությունից ջե՞րմ առաջացավ, ժուժկալությամբ են դարմանում հիվանդությունը. տրտմությունից հիվանդացա՞վ մեկը, ուրախությունն իբրև լավագույն դեղ են սահմանում նրան: Նույնը պետք է անել նաև հոգու ախտերի համար. մեր հեղգությո՞ւնը արթնացրեց Աստծո բարկությունը, ջանքեր թափելով վանենք այն և մեծ փոփոխություն կտեսնենք: Մենք ունենք հզոր զորավիգ և նիզակակից՝ պահքը[1], պահքի հետ միասին՝ մոտալուտ աղետներն ու սպառնացող վտանգի ահը: Այժմ ժամանակին հարկադրելով մեր հոգուն՝ մենք կարող ենք հեռացնել նրան այն ամենից, ինչ որ ցանկալի չէ մեզ:

[1] Քանի որ սա քառասնորդաց պահոց ճառերից է:

Ով երկյուղած է, ահուդողի մեջ, ով իրեն հեռու է պահում բոլոր վայելքներից և երկյուղով է ապրում, նա հեշտությամբ կարող է հակվել իմաստությանը և մեծ պատրաստակամությամբ ընդունել առաքինության սերմերը:

Է. Արդ, մեր հոգու շտկումը սկսենք երդումից փախչելով. թեպետև և՛ երեկ, և՛ նախորդ օրը այդ մասին խոսեցի ձեզ հետ, սակայն երբեք՝ ո՛չ այսօր, ո՛չ վաղը և ո՛չ էլ մյուս օրը, չեմ դադարի նույն խորհուրդը տալ ձեզ: Ինչո՞ւ եմ ասում վաղը և մյուս օրը. մինչև ձեզ ուղղված չտեսնեմ, չեմ դադարի: Եթե օրենքը զանց առնողները չեն ամաչում, ապա որքան առավել՝ մենք, որ պատվիրում ենք՝ չլինել օրինազանց, չպետք է ամաչենք անդադար խրատելու համար: Անընդհատ նույն բաներն հիշեցնելը ոչ թե քարոզողից է, այլ լսողներից, որոնք կարիք ունեն պարզ ու հեշտ կատարելի գործերի հանապազօրյա ուսուցման: Զերդվելուց ավելի դյուրին ի՞նչ կա. դա միմիայն սովորության հարց է, չի պահանջում ո՛չ մարմնի չարչարանք և ո՛չ էլ գումարի ծախս:

Կամենո՞ւմ ես ուսանել, թե ինչպես կարելի է հաղթել այդ ախտին, ինչպես կարելի է հեռու մնալ այդ չար սովորությունից. ես մի միջոց ցույց կտամ քեզ, որ եթե անես, կհաղթես: Երբ տեսնես ինքդ քեզ, կամ մեկ ուրիշի՝ քո ծառային, զավակին կամ կնոջը, որ ըմբռնված են այս չարից և անդադար խրատվելով՝ չեն ուղղվում, հրամայի՛ր, որ քնելու գնան առանց ընթրելու, նույն պատժին ինքդ քեզ ենթարկիր. այն օգուտ է բերում և ոչ վնաս: Այդպիսին են հոգևոր պատիժները. նրանք բերում են և՛ շահ, և՛ ուղղում են արագորեն: Լեզուն, մշտապես տանջանքի մեջ լինելով, եթե անգամ խրատ տվող չկա, ինքը բավականապես խրատ ստանում է՝ սանձվելով ծարավից և նեղվելով քաղցից: Եվ մենք, եթե անգգա էլ լինենք, ամբողջ օրը խրատվելով այս սաստիկ տանջանքներով, այլ խորհուրդների ու խրատի կարիք չենք ունենա:

Գովեցե՛ք ասածներս, բայց ձեր գովքը ցույց տվեք գործերո՛վ: Հակառակ դեպքում մեզ ի՞նչ օգուտ կլինի այս հավաքից: Եթե երեխան ամեն օր գնում է վարժարան, բայց ոչինչ

չի սովորում, արդյո՞ք մեր աչքում նրա համար բավարար արդարացում կլինի նրա՝ ամեն օր այնտեղ գնալը: Արդյո՞ք նրա համար մեծ հանցանք չենք համարի հենց այն, որ նա ամեն օր իզուր է գնում այնտեղ:

Այսպես խորհենք նաև ինքներս մեր մասին և մեզ ասենք. այսքան ժամանակ է՝ գալիս ենք եկեղեցի և վայելում ահավոր և փրկական Խորհուրդից, որ բազում շահ ունի իր մեջ, բայց եթե այստեղից ելնում ենք այնպես, ինչպես մտնում ենք, և մեր թերություններից ոչինչ չենք ուղղում, ուրեմն ի՞նչ օգուտ ունի մեր՝ այստեղ գալը:

Շատ գործեր կատարվում են արդյունքի համար, այլ ոչ թե ինքնանպատակ: Մի օրինակ՝ սերմնացանը սերմ է գցում ոչ միայն սերմանած լինելու, այլ նաև հնձելու համար. եթե այդ չլինի, նա կտուժի. սերմերը զուր նետված կլինեն և կփչանան: Վաճառականը չի նավարկում միայն նավարկած լինելու համար, այլ որպեսզի ծովով նավարկությամբ առավել մեծացնի իր ունեցվածքը. այնպես որ եթե սա չլինի, կհետևեն մեծ կորուստները, և վաճառականների համար նավարկությունը վնասաբեր կլինի: Այսպես խորհենք նաև մեր մասին, քանի որ մենք եկեղեցի գալիս ենք ո՛չ այն բանի համար միայն, որ այստեղ լինենք, այլ որպեսզի այստեղից մեծ և հոգևոր օգուտ տանենք: Եթե այստեղից դուրս գանք ձեռնունայն՝ մեզ հետ ոչ մի օգուտ չառած, ապա այդ ջանքերը դատապարտության համար կլինեն: Ուրեմն, որպեսզի այդ չպատահի, և մեծ վնասներ չկրենք, այստեղից հեռանալուց հետո խորհեցեք բարեկամներդ միմյանց հետ, հայրերդ՝ ձեր որդիների, տերերդ՝ ձեր ծառաների հետ, թե ինչպես կատարեք այդ պատվիրանը, որպեսզի երբ մյուս անգամ գաք այստեղ և լսեք մեր խրատները նույնի մասին, չամաչեք՝ մեղադրվելով ձեր իսկ խղճմտանքից, այլ ցնծաք և ուրախանաք, երբ տեսնեք, որ մեր խրատը կատարել եք առավելագույն չափով: Այս ամենի մասին միայն այստեղ չխոսենք, քանի որ այս առժամանակյա խրատս չի կարող ամեն բան միանգամից արմատախիլ անել, տներում էլ այս մասին թող ամուսինը լսի իր կնոջից, իսկ կինը՝ ամուս-

նուց, և թող բոլորը մրցեն ու ջանան միմյանցից առաջ ընկնել՝ կատարելու այս օրենքը:

Եվ առաջ ընկնողը թող հանդիմանի ծուլացողին, որպեսզի հեգնությամբ նրան առավել արթնացնի, իսկ նա, ով վերջինը եղավ և չուղղվեց, թող նայի առաջադիմողին և թող փութա անցնել նրան: Եթե այս ամենի մասին խորհենք, եթե այս ամենի համար ջանանք, ապա մեր մյուս գործերը շուտով նույնպես հաջող կընթանան:

Բայց դու մի՛ ընդդիմանա ինձ՝ ասելով, թե. «Իսկ ի՞նչ անենք, եթե մեկը մեզ երդվել հարկադրի, ի՞նչ անենք, եթե մեզ չհավատա»: Շատ ավելի լավ. ուր զանց է առնվում օրենքը, այնտեղ չկա հիշատակության անհրաժեշտություն: Քանզի միայն մեկ անհրաժեշտություն կա՝ չմեղանչել Աստծո դեմ: Բայց ես այս եմ ասում. դու առայժմ հատի՛ր, կտրի՛ր ավելորդ երդումները, որ տրվում են իզուր և անհարկի տանը, բարեկամներին, ծառաներին: Եթե մի անգամ հրաժարվես երդվելուց, ապա մյուսներից խուսափելու համար այլևս իմ կարիքը չես ունենա: Քանզի նույնիսկ բերանը, որ հրահանգված է վախենալ և փախչել երդումներից, երբեք հանձն չի առնի ենթարկվել նույն սովորությանը, եթե նույնիսկ հազար անգամ ստիպեն նրան: Ինչպես որ այժմ մենք, որ մեծ աշխատությամբ և բյուր աղաղակով վախեցնելով, սպառնալով, խրատելով, խորհուրդ տալով՝ հազիվ կարողացանք փոխել նրան այլ սովորության, այդպես էլ այն ժամանակ, եթե անգամ բյուրապատիկ պարտադրանք դնի մեկը, երբեք չի կարողանա համոզել նրան օրինազանց լինել: Այլ ինչպես ոչ ոք երբեք հանձն չի առնի թույն խմել, որքան էլ ստիպեն նրան, այդպես էլ մենք այդժամ հանձն չենք առնի երդվել:

Եվ երբ սա ուղղեք, կհուսադրվեք ու կքաջալերվեք՝ սկսելու առաքինության նաև մյուս մասերի կատարումը: Քանզի նա, ով մի անգամ բնավ ոչինչ չուղղեց, ծուլանում է և արագ վհատվում, իսկ նա, ով գիտի, որ կատարել է պատվիրաններից թեկուզ մեկը, դրանից քաջալերվելով՝ առավելագույն ջանքով մյուսներին կձգտի, ապա այս մեկը կատարելով՝

արագապես կընթանա դեպի մյուսը և մինչև չհասնի գագաթին, կանգ չի առնի: Եթե մարդ, որքան շատ գանձ է դիզում, այնքան ավելին է փափագում, ապա շատ ավելին կարող է լինել հոգևոր առաքինությունների մեջ:

Ահա թե ինչու եմ ես շտապում և խնդրում, որպեսզի սկսվի գործը, և ձեր հոգիներում դրվի առաքինության հիմքը, և խնդրում ու աղաչում եմ ձեզ՝ խոսքերս հիշել ոչ միայն այս ժամին, այլ նաև տանը, հրապարակում և ուր որ գտնվելիս լինեք:

Երանի՜ մշտապես կենցաղակից լինեի ձեզ: Այդժամ ինձ պետք չէր լինի այս երկար քարոզխոսությունը: Բայց քանի որ այժմ այդ հնարավոր չէ, դուք իմ փոխարեն հիշատակող եղեք իմ խոսքերը: Երբ սեղան նստեք, մտածեք, որ ես ներս եմ մտել, կանգնած եմ ձեզ մոտ և ասում եմ այն ամենը, ինչ այստեղ այժմ ասում եմ ձեզ: Եվ ուր որ խոսք լինի իմ մասին, ամեն բանից առավել ա՛յս պատվիրանը հիշեք և այդ պարգևը հատուցեք ինձ իմ՝ ձեր հանդեպ սիրո փոխարեն: Երբ տեսնեմ, որ դուք կատարել եք այդ պատվիրանը, ուրեմն ես արած կլինեմ ամեն բան, լիապես ստացած կլինեմ իմ չարչարանքի վարձը:

Եվ արդ, որպեսզի դուք և մեզ դարձնեք ավելի նախանձախնդիր, միաժամանակ և դուք վստահ լինեք և մեծ հոժարությամբ պատրաստվեք՝ ուղղվելու դեպի մյուս պատվիրանները, այս օրենքը մեծ ջանքերով պահեցեք ձեր հոգում և այնժամ կհասկանաք իմ այս խրատի օգուտը: Ոսկեհուռ հանդերձը գեղեցիկ է, երբ նայում ենք նրան, բայց այն շատ ավելի գեղեցիկ է երևում մեզ, երբ այն կրում ենք մեր մարմնի վրա: Այդպես էլ Աստծու պատվիրանները գեղեցիկ են, երբ միայն գովում ենք դրանք, բայց շատ ավելի գեղեցիկ կերևան, երբ կատարենք դրանք: Արդ, այժմ դուք մի կարճ ժամանակ գովում եք ասածներս, իսկ հետո, երբ գործով կկատարեք դրանք, ամեն օր և ամեն ժամանակ գոված կլինեք և՛ մեզ, և՛ ինքներդ ձեզ: Բայց դեռ մեծ գործ չէ, որ մենք գովենք միմյանց, այլ որ Աստված Ինքը ընդունի մեզ. և ոչ միայն

ընդունի, այլ նաև փոխարենը այն մեծ ու անճառելի պարգևները տա մեզ: Որոնց թող մենք բոլորս արժանի լինենք շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Որով և Որի հետ Հորը, միաժամանակ և Սուրբ Հոգուն փառք այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌԸ.

Թվ. տրտմությունը միայն մեղքերը ջնջելու համար է պիտանի, և «Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» [խոսքը] մեծ մխիթարության պատճառ է արարածներիս համար, որի հետ և այն խոսքի մասին, թե՝ «Ադամ, ո՞ւր ես», նաև չերդվելու մասին[1]:

Ա. Շատ բաների մասին և շատ բան երեկ խոսեցի ձեր սիրո համար: Եթե հնարավոր չլինի այդ ամենը մտքում պահել, աղաչում եմ ձեզ, որ ամեն բանից առավել հիշեք, որ Աստված մեր մեջ տրտմությունը դրեց ոչ այլ պատճառով, քան մեղքերի, և հայտնի դարձրեց այս ապացույցով: Քանզի երբ մեզ պատահում են ունեցվածքի կորուստ, հիվանդություն, մահ և այլ դժնդակ բաներ, և մենք ցավում ու տրտմում ենք, այդ տրտմությունից ոչ միայն չենք քաղում որևէ մխիթարություն, այլև ավելի ենք բորբոքում չարին, իսկ երբ ցավում ու տրտմում ենք մեր մեղքերի համար, թեթևացնում ենք մեր մեղքերի բեռը, փոքրացնում ենք մեծը՝ հաճախ իսպառ ջնջելով այն:

Արդ, մշտապես հիշեք, որ պետք է ցավել միայն մեղքերի համար, ուրիշ բանի համար՝ երբե՛ք: Սրա հետ միասին՝ և այն, որ ինքը՝ մեղքը, մեր կյանքի մեջ ներմուծեց մահն ու տրտմությունը, և ինքը ջնջվում է այդ երկուսի միջոցով. այդ մասին ձեզ հետ ավելի առաջ խոսեցինք:

Ուրեմն մենք ոչ մի բանից չզարհուրենք այնպես, ինչպես մեղքերից ու հանցանքներից: Զվախենանք տանջանքներից

---

[1] Ճառիս ժամանակը Քառասնորդաց պահքի առաջին շաբաթվա հինգերորդ օրն է, ինչպես ինքը՝ Ոսկեբերանն է այստեղ ասում, թե՝ «Հինգերորդ օրն է, որ մխիթարում ենք ձեզ, սիրելինե՛ր»՝ հաշիվը սկսելով մեծ պահքի առաջին կիրակիից:

և կփրկվենք տանջանքներից. ինչպես որ երեք մանուկները չվախեցան հնոցից և փրկվեցին հնոցից: Այդպիսին պետք է լինեն Աստծու ծառաները: Եթե մահվան դեմ այդպիսի քաջությամբ ելան նրանք, ովքեր դաստիարակվել էին Հնում, երբ դեռ չէր մեռել մահը, երբ դեռ չէին խորտակվել պղնձե դռները, և չէին փշրվել երկաթյա նիգերը, ի՞նչ պատասխան կամ ինչպիսի՞ ներում պիտի ունենանք մենք, որ վայելեցինք այնքան շնորհներ և չենք հասնում նրանց առաքինությանն այժմ, երբ մահը լոկ անուն է՝ զրկված գործերից: Քանզի մահը այլ բան չէ, քան քուն և չու, փոխադրություն, հանգիստ, անդորր նավահանգիստ, խռովքների վերացում և այս կյանքի հոգսերից ազատություն:

Բայց այստեղ ավարտենք մեր մխիթարության խոսքերը, քանզի հինգերորդ օրն է, որ մխիթարում ենք ձեզ, սիրելինե՛ր, այսուհետև թերևս կձանձրացնենք ձեզ: Որովհետև զգաստների համար ասվածները բավական են, իսկ թեթևամիտները ոչինչ չեն շահի, եթե անգամ շատ ուրիշ բաներ էլ ավելացնենք մեր խոսքերին: Ժամանակն է, որ մեր վարդապետությունը դարձնենք Գրքերի բացատրությանը, քանզի եթե մենք ոչինչ չխոսեինք այս աղետի մասին, մեզ կմեղադրեին, իբրև անգութ ու տմարդի, ճիշտ այնպես, ինչպես եթե մշտապես խոսեինք դրա մասին, մեզ իրավացիորեն կմեղադրեին փոքրոգության մեջ:

Այսպիսով, ձեր սրտերը հանձնելով Աստծուն, Ով կարող է խոսել ձեր մտքերում և ներքուստ փարատել ամեն մի տրտմություն, այժմ սկսենք սովորական վարդապետությունը, մանավանդ որ Գրքերի ամեն մի բացատրություն մխիթարություն է և քաջալերանք: Արդ, թեև կթվա, թե մենք հեռանում ենք մխիթարելուց, բայց Գրքերի բացատությամբ կրկին կդառնանք նույնին:

Այն, որ բոլոր Գրքերը մխիթարություն են պարգևում զգաստներին, ես ձեզ հայտնի կդարձնեմ հենց հիմա. նույնիսկ չեմ ջանա Գրքերի պատմությունների մեջ դեգերելով՝ փնտրել, քաղել քաջալերիչ խոսքեր, այլ որպես իմ խոստման ապացույց՝ կվերցնեմ այսօր իսկ ձեզ համար ընթերցված տողերը, և եթե հաճո լինի, նրա սկիզբն ու առաջաբանը, որ թվում է, թե ոչ միայն քաջալերության հետք անգամ չունի, այլև՝ որ շատ հեռու է մխիթարական լինելուց:

Իսկ ո՞րն է այդ առաջաբանը: «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անձև ու անկազմ էր, խավար էր տիրում անհունի վրա» (Ծն. Ա 1-2): Մի՞թե ձեզնից ոմանք կկարծեն, թե այս խոսքերը չեն կարող մխիթարել տրտմությունը. չէ՞ որ պատմության շարադրություն է և արարչագործության մասին ուսուցում:

Բ. Արդ, կամենո՞ւմ եք՝ ձեզ համար բացահայտեմ մխիթարությունը, որ ծածկված է այս խոսքի մեջ: Ուրեմն սթափվեցե՛ք, արթնացե՛ք, ուշադրությամբ լսե՛ք, ինչ որ ասելու եմ:

Երբ լսում ես, թե Աստված քեզ համար, քո փրկության ու պատվի համար արարեց երկինքն ու երկիրը, ծովը, օդը, ջուրը, բազում աստղերն ու երկու մեծամեծ լուսատուները, բույսերն ու չորքոտանիներին, լողացող ու թևաւոր կենդանիներին, պարզ ասած՝ այն ամենն, ինչ երևում է, չե՞ս մխիթարվում, Աստծու սիրո ճշգրիտ արտահայտություն չե՞ս ընդունում, երբ մտածում ես, թե այսչափ ու այսպիսի աշխարհը՝ այսքան գեղեցիկ, մեծ ու սքանչելի, երևացրեց փոքրիկ անձիդ համար:

Արդ, երբ լսես, թե՝ «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը», անուշադրությամբ մի՛ անցիր այս խոսքերի կողքով, այլ մտաբերիր երկրի լայնությունը և խորհի՛ր՝ ինչպես մեծ ու ճոխ սեղան բացեց Նա մեր առջև և բոլոր կողմերից այնքան մեծ վայելք պատրաստեց: Եվ որ ամենամեծն է, այսչափ մեծ ու այսքան գեղեցիկ աշխարհը մեզ ո՛չ իբրև որևէ վաստակի վարձատրություն տվեց և ո՛չ էլ ի տրիտուր որևէ բարի գործի, այլ միաժամանակ և՛ մեզ արարեց, և՛ թագավորությամբ պատվեց մեր ազգը, քանզի. «Ստեղծենք, ասում է, մարդ մեր պատկերով և նմանությամբ» (Ծն. Ա 26):

Ի՞նչ է նշանակում՝ «մեր պատկերով և նմանությամբ»: Պատկեր իշխանությանն է ասում. ինչպես որ, ասում է, երկնքում ոչ ոք բարձր չէ Աստծուց, այդպես էլ երկրի վրա ոչ ոք բարձր չի լինելու մարդուց: Այսպիսով, Աստված մարդուն պատվեց. առաջին՝ այն բանով, որ նրան ստեղծեց Իր պատկերով, երկրորդ՝ այն բանով, որ մեզ իշխանություն պարգևեց ոչ իբրև մեր որևէ վաստակի վարձատրություն, այլ իբրև սոսկ Իր մարդասիրության պարգև, երրորդ՝ որ այն մեզ շնորհեց ի բնե:

Որոշ իշխանություններ ի բնե են, մյուսները՝ ընտրողական: Ի բնե են, ասենք, առյուծի (իշխանությունը) չորքոտանիների վրա, կամ արծվինը՝ թռչունների վրա. ընտրողական է թագավորի՝ մեզ վրա (իշխանությունը): Քանի որ նա իր բնությամբ չէ, որ իշխում է ծառայակիցներիս վրա, որի պատճառով էլ հաճախ կորցնում է իշխանությունը: Այդպիսին են այն ամենը, ինչ տրված չեն բնությամբ. դրանք դյուրությամբ են փոփոխվում և փոխադրվում: Բայց առյուծն այսպես չէ, այլ բնությամբ է տիրում չորքոտաններին, ինչպես և արծիվը՝ թռչուններին:

Այդ պատճառով էլ այդ տեսակի կենդանիներին մշտապես կցորդ է և թագավորական պատիվը. առյուծին ոչ ոք երբեք չի տեսնի թագավորությունից զրկված: Աստված ի սկզբանե մեզ շնորհեց այդպիսի թագավորություն և մեզ (իշխան) կարգեց ամեն բանի վրա. Նա մեր բնությունը պատվեց ոչ միայն դրանով, այլ նաև վայելուչ վայրով՝ մեր բնակության համար բարձրագահ տուն դարձնելով դրախտը, մեզ տալով միտք և շնորհելով անմահ հոգի:

Սակայն ես չեմ խոսելու այդ ամենի մասին. ես ասում եմ, որ Աստծու խնամատարության զեղումն այնքան մեծ էր, որ Նրա բարությունն ու մարդասիրությունը նույն հավասարությամբ կարող ենք ցույց տալ ոչ միայն այն ամենով, ինչով մեզ պատվեց, այլ նաև այն ամենով, ինչով մեզ պատժեց: Եվ հորդորում եմ ձեզ հաստատապես իմանալ, որ Աստված նույնքան բարի է ոչ միայն պատվելիս և բարեգործելիս, այլ

նաև տանջելիս ու պատժելիս: Ուստիև, երբ մեր և հեթանոսների կամ հերետիկոսների հետ վիճաբանություններ ու քննարկումներ լինեն Աստծո մարդասիրության ու բարության մասին, մենք ապացուցենք Նրա բարությունը ոչ միայն այն ամենով, ինչով Նա մեզ պատվեց, այլ նաև այն ամենով, ինչով պատժեց: Քանզի եթե պատվելիս բարի է, իսկ տանջելիս՝ ոչ, ուրեմն կիսով չափ է բարի, բայց այդպես չէ: Քա՛վ լիցի: Մարդիկ են այդպիսին, որ պատուհասի են ենթարկում սրտմտությամբ ու կրքով, իսկ Աստված, քանի որ անախտ է, բարեգործելիս թե տանջելիս նույնօրինակ բարի է, և գեհենի սպառնալիքները արքայությունից ոչնչով պակաս չեն հայտնում Նրա բարության մասին: Իսկ թե ինչպե՞ս, կասեմ:

Եթե Նա գեհենով սպառնացած չլիներ, եթե տանջանքներ պատրաստած չլիներ, արդյո՞ք շատերը կգտնեին արքայությունը: Ոչինչ այնպես չի հրավիրում առաքինության, ինչպես չարիքի սպառնալիքը, որ վախեցնում է և արթնացնում հոգու ջանքը: Թեպետև գեհենը հակառակ է երկնքի արքայությանը, սակայն երկուսն էլ նույն վախճանին են տանում՝ մարդկանց փրկությանը. այն՝ իր մեջ հանգիստ տալով, սա՝ նույնին մղելով և սարսափով ժրացնելով ծուլացողներին:

Գ. Բայց ես առանց խորհուրդի չէ, որ երկարաձգում եմ խոսքերս, այլ որովհետև հաճախ սովի, երաշտի, պատերազմի, թագավորի բարկության և սրանց նման այլ անսպասելի բաների ժամանակ շատ պարզամիտներ խաբվում են՝ ասելով, թե Աստծու նախախնամությանը չեն պատշաճում դրանք: Այդ պատճառով էլ, որպեսզի մենք չխաբվենք, այլ հավատի կերպով իմանանք, որ Աստված, եթե անգամ ուղարկում է սով, պատերազմ կամ մեկ այլ արհավիրք, այդ ամենն անում է, որովհետև մարդասեր է և զանազան կերպերով է նախախնամում մեզ: Եվ ես հարկ եմ համարում երկար խոսել այս մասին:

Հայրերն էլ են ամեն բանից առավել սիրում իրենց զավակներին, բայց պատահում է, որ միաժամանակ և՛ զրկում

են սեղանից, և՛ ծեծում են, և՛ անարգանքով պատժում, և՛ բյուրավոր այլ այդպիսի բաներով ուղղում են իրենց ցոփագնաց զավակներին, այդուհանդերձ նրանք հայրեր են ոչ միայն իրենց զավակներին պատվելիս, այլ նաև երբ անում են այս ամենը, առավելապես այդպես վարվելիս են հայրեր:

Արդ, եթե սրտմտությամբ ու բարկությամբ հաճախ օգտակարից խոտորվող մարդկանց մասին ասում ենք, թե անգթությունից ու անմարդկայնությունից չէ, որ պատժում են իրենց սիրելիներին, այլ հոգացողությունից ու գորովից դրդված, ապա որքան առավել պետք է իմանանք Աստծու մասին, Ով Իր մեծ բարությամբ գերազանցում է ամենայն հայրական գորով:

Եվ որպեսզի ասածներս ենթադրություն չհամարես, դառնանք Գրքին: Երբ մարդը խաբվեց ու գայթակղվեց չար դևի կողմից. տեսնենք, թե Աստված ինչպես վարվեց նրա հետ, ով գործեց այդ մեղքը: Թերևս իսպառ վերացրե՞ց նրան. մանավանդ որ արդարությունն էլ պահանջում էր իսպառ վերացնել ու ջնջել նրան, ով ոչ մի բարի գործ չանելով՝ այդքան պարգևներ վայելեց և նույն պահին նախադռներից հեռու թռավ: Սակայն Աստված չարեց այդ, չգարշեց նրանից ու չմերժեց նրան, ով այդպես անշնորհակալ եղավ Բարերարի հանդեպ, այլ եկավ նրա մոտ, ինչպես բժիշկը՝ հիվանդի մոտ:

Դու անուշադիր մի՛ եղիր խոսքերիս հանդեպ, ո՛վ սիրելի, այլ մտածի՛ր՝ որքան ավելի է. չուղարկեց ո՛չ հրեշտակ, ո՛չ հրեշտակապետ և ո՛չ էլ նրանց նման ծառաներից որևէ ուրիշի, այլ Ինքը՝ Տերն իջավ կործանվածի մոտ, կանգնեցրեց ընկածին. եկավ մենակ, մոտեցավ, իբրև բարեկամը՝ բարեկամին, որն ընկել է չարիքների և բազում ձախողությունների մեջ: Իսկ որ մեծ սիրուց դրդված արեց այս, ցույց են տալիս Նրա այն խոսքերը, որ ասաց նրան. դրանք ցույց են տալիս Նրա անճառելի գորովը:

Եվ ինչո՞ւ բոլոր խոսքերի մասին ասեմ. նրա առաջին իսկ խոսքն անմիջապես հայտնի դարձրեց Նրա գութը: Քանզի չասաց, ինչ որ արժան էր ասել անարգողին. «Ո՛վ դու, պիղծ և ամենապի՛ղծ, վայելեցիր Իմ կողմից տրված առատ պարգևները, առանց փոքր-ինչ արդարության պատվեցիր այդպիսի թագավորությամբ, երկրի վրա ունեցար ամենամեծ պատիվը, Իմ գործերից տեսար Իմ խնամքի առհավատչյան ու Իմ նախախնամության անսուտ օրինակը և չար ու մահաբեր դևին՝ քո փրկության թշնամուն, առավել հավատի արժանի համարեցիր, քան քո Տիրոջն ու Խնամակալին: Նա քեզ ի՞նչ ցույց տվեց այնպիսի բաներից, որոնք Ես ցույց տվեցի. չէ՞ որ քեզ համար ստեղծեցի երկինքը, երկիրը, ծովը, արեգակը, լուսինը, բոլոր աստղերը (քանի որ հրեշտակներից ոչ ոք այդ արարչագործության կարիքը չուներ), քեզ և քո հանգստի համար արարեցի այսչափ ու այսպիսի աշխարհը, իսկ դու սոսկ խոսքերը, սուտ ուխտն ու խաբեությամբ լի խոստումը ավելի արժանահավատ համարեցիր, քան բարերարությունն ու խնամքը, որոնք վկայվեցին գործերով, քեզ մատնեցիր նրան և արհամարհեցիր իմ օրենքները»:

Այս և սրանից ավելին էր արժան ասել թշնամացած անձին, բայց Աստված այդպես չարեց, այլ միանգամայն հակառակը: Առաջին իսկ խոսքով կանգնեցրեց ընկածին, քաջալերեց նրան, ով դողում էր վախից՝ առաջինն Ինքը նրան կանչելով. ոչ միայն առաջինն Ինքը կանչելով, այլ նաև այն բանով, որ նրան անունով կանչեց. ասաց. «Ադա՛մ, ո՞ւր ես»՝ ցույց տալով Իր սիրո ջերմությունն ու նրա հանդեպ մեծ խնամքը: Դուք բոլորդ էլ գիտեք, որ սա մտերիմ բարեկամության վկայություն է. այդպես նաև նրանք, ովքեր վախճանվածներին են ձայն տալիս՝ հաճախ կրկնելով նրանց անունը, մինչ նրանք, ովքեր թշնամություն ունեն որևէ մեկի հետ և ատում են նրան, երբեք չեն ուզում հիշատակել նրա անունը: Սավուղը ոչ մի անիրավություն չկրեց Դավթից, այլ ինքը բազում և մեծ անօրինություններ հասցրեց նրան, բայց քանի որ մերժում ու ատում էր նրան, նրա անունն անգամ տալ չէր ուզում: Երբ բոլորը սեղան էին բազմել, և տեսավ, որ նա չի եկել, ի՞նչ ասաց: Չասաց՝ ո՞ւր է Դավիթը, այլ՝ Ո՞ւր է Հեսսեի որդին (տե՛ս Ա Թագ. Ի 27)՝ հոր անունով կոչելով նրան:

Դարձյալ՝ հրեաները Քրիստոսի հետ նույն կերպ վարվեցին. որովհետև մերժում ու ատում էին Նրան, չասացին՝ ո՞ւր է Քրիստոսը, այլ թե՝ ո՞ւր է Նա (Հովհ. Է 11):

Դ. Բայց Աստված, նաև այս խոսքով կամենալով ցույց տալ, որ նրա մեղքը չհանգցրեց Իր սերը, և ոչ էլ նրա անհնազանդությունը վերացրեց նրա հանդեպ Իր խնամատարությունը, այլ որ տակավին նախախնամում ու դարմանում է ընկածին, ասում է. «Ադա՛մ, ո՞ւր ես»: Ոչ թե չգիտեր, թե ուր է թաքնվել, այլ որովհետև մեղավորի բերանը կարված է, քանզի մեղքը կապում է լեզուն, իսկ խղճմտանքը սանձում է այն, և նրանք կարկամում են՝ լռությամբ, իբրև կապանքներով կապվելով: Ուստիև Աստված կամեցավ համարձակաձայն բարբառով կանչել նրան, քաջալերել և դրդել նրան պատասխանելու՝ ասելու իր մեղանչած լինելու մասին, որպեսզի թողություն վայելի: Առաջինն Ինքը կանչեց նրան, Իր կանչով կտրեց, վերացրեց նրա տառապանքը, փարատեց նրա երկյուղը և այդ կանչով բացեց նրա բերանը: Դրա համար է ասում. «Ադամ, ո՞ւր ես»: Ուրիշ վիճակում թողեցի քեզ, ասում է, բայց գտնում եմ մեկ ուրիշ վիճակում. թողեցի համարձակության ու փառքի մեջ, իսկ հիմա գտնում եմ անպատվության ու լռության մեջ:

Բայց դու տե՛ս Աստծու խնամքը. չկանչեց Եվային, չկանչեց օձին, այլ դեպի դատաստան է ձգում նրանցից ավելի քիչ մեղանչածին, որպեսզի, սկսելով նրանից, ում արժան էր թողություն վայելել, բարի վճիռ կայացներ նաև նրա համար, ով շատ մեղանչեց: Այժմ դատավորներն իրենց ծառայակիցներին անձամբ դատել հանձն չեն առնում, այլ իրենց պաշտոնյաներից մեկին միջնորդ են կարգում և նրա միջոցով են ասում, լսում ու քննում, իսկ Աստծուն մարդու հետ [հաբաբերվելու համար] ոչ մի միջնորդ պետք չէ. Նա անձամբ Ինքն է դատում ու մխիթարում: Եվ սքանչելիքը միայն այս չէ, այլ նաև այն, որ ուղղում է հանցանքները: Դատավորները, երբ բռնում են ավազակներին և գերեզման թալանողներին, երբեք չեն մտածում նրանց դեպի լավը փոխելու մասին, այլ թե ինչպես նրանց մեղքերի վրեժը լուծեն: Իսկ Աստված միանգամայն հակառակն է անում. երբ բռնում է մի մեղավորի, չի մտածում՝ ինչպես վրեժխնդիր լինի, այլ թե ինչպես ուղղի նրան և լավագույն և մեղքից անհաղթելի դարձնի: Եվ այսպես ահա Աստված միաժամանակ և՛ դատավոր է, և՛ բժիշկ, և՛ վարդապետ, քանզի իբրև դատավոր՝ քննում է, իբրև բժիշկ՝ բժշկում է, և իբրև վարդապետ՝ դաստիարակում է՝ մեղավորներին առաքինության բերելով:

Իսկ արդ, եթե այս փոքրիկ ու չնչին խոսքը ցույց տվեց Աստծու այսքան խնամքը, ի՞նչ ցույց կտար, եթե մենք ձեր առջև վերծանեինք բովանդակ այդ դատը և մեկնեինք բոլոր գրվածքները: Տեսնո՞ւմ ես՝ ինչպես են բոլոր Գրքերը մխիթարություն ու քաջալերանք: Բայց դրանց մասին մենք կխոսենք պատշաճ ժամանակին, իսկ դրանից առաջ հարկ է ասել, թե ե՞րբ տրվեցին այդ Գրքերը, քանզի դրանք չգրվեցին ո՛չ սկզբում և ո՛չ էլ Ադամի ստեղծումից հետո, այլ բազում ազգերից հետո: Բայց դարձյալ արժան է քննության առնել, թե ինչո՞ւ բազում ազգերից հետո և ինչո՞ւ հրեաներին միայն և ոչ բոլոր մարդկանց, ինչո՞ւ եբրայական լեզվով, ինչո՞ւ Սինայի անապատում, քանզի և առաքյալը տեղը զանց չի առնում, այլ նաև այստեղ է մեր առջև դնում մեծ տեսություն՝ ասելով. «Սրանք երկու Կտակարաններն են. մեկը՝ Սինա լեռից՝ ծառայության համար ծնված» (Գաղ. Դ 24):

Ե. Հարկ է քննել դրանից առավելը, բայց տեսնում եմ, որ ժամանակը չի ներում՝ մեր խոսքը տանելու այդքան խորքերը, ուստիև ավելի հարմար ժամանակի համար ամբարելով այդ ամենը՝ կրկին ձեզ հետ խոսենք երդվելուց հրաժարվելու մասին՝ աղաչելով ձեզ, որ մեծ ջանքեր գործադրեք դրա համար: Մի՞թե անտեղի չէ, որ ծառան զուր տեղը կամ հենց այնպես կանչի իր տիրոջ անունը, իսկ դու հրեշտակների Տիրոջ անունն ես հաճախ կրկնում ամենուր զուր տեղը և մեծ արհամարհանքով: Եվ երբ քեզ պետք է լինում ձեռքդ առնել Ավետարանը, դու լվանում ես ձեռքերդ և մեծ հարգանքով

ու բարեպաշտությամբ, դողությամբ ու երկյուղով ես վերցնում այն, իսկ Ավետարանի Տիրոջը ամենուր հենց այնպես բերա՞նդ ես առնում: Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչպես են Նրան կոչում վերին զորությունները, ինչպիսի դողությամբ, ինչպիսի սարսափով, ինչպիսի հիացմամբ. «Տեսա, ասում է, Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին: Նրա շուրջը սերովբեներ կային, և ձայնակցում էին միմյանց և ասում էին. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զորությունների Տերը, և ամբողջ երկիրը լի է Նրա փառքով» (Ես. Զ 1-3): Տեսնո՞ւմ ես՝ նրանք փառավորելիս և օրհնելիս ինչպիսի ահով, ինչպիսի դողությամբ են կոչում Նրան: Մինչդեռ դու աղօթելիս և պաղատելիս, երբ հարկ է զարհուրել, հսկել և զգոն լինել, մեծ անփութությամբ ես կոչում Նրան, իսկ երդվելիս, երբ ամենևին, ընավ չպե՛տք է մեջ բերել այն հրաշալի անունը, դու իրար ետևից երդումներ ես թափում, ինչպիսի՞ ներում և ի՞նչ պատասխան պիտի գտնենք, եթե անգամ բյուր անգամ սովորությունը մեզ համար պատրվակ դարձնենք:

Ասում են, թե արտաքին (հեթանոս) հռետորներից մեկը մի հիմար սովորություն ուներ. քայլելիս անդադար շարժում էր աջ ուսը, բայց նա հաղթեց այդ սովորությանը՝ իր ուսերին երկու սուր սուսեր դնելով, որպեսզի կտրելու վախից զգաստացնի մարմնի այն անդամը, որ շարժվում էր անհարկի: Նույնը դու արա քո լեզվի հետ, սրի փոխարեն Աստծու պատուհասի երկյուղը հաստատիր նրա վրա, և կհաղթես նրան: Քանզի անհնարին է, անհնարին է, որ հաղթվեն նրանք, ովքեր հանձն առնեն այդ անել հոգատարությամբ ու ջանադրաբար:

Այժմ դուք գովում եք իմ խոսքերը, բայց երբ ուղղվեք, ավելի պիտի գովեք ոչ միայն մեզ, այլ նաև ինքներդ ձեզ, առավել հաճույքով պիտի լսեք այն խոսքերը, որոնք պիտի ասվեն, և խղճի մաքրությամբ պիտի տաք Աստծո անունը՝ Նրա, Ով այնքան խնայեց քեզ, որ ասաց. «Քո գլխով էլ չերդվես» (Մատթ. Ե 36): Իսկ դու այնպես ես անտեսում այդ խոսքերը, որ մինչևիսկ Նրա փառքով ես երդվում:

Հապա ի՞նչ անեմ նրանց դեմ, ովքեր հարկադրում են այդ

անել: Ինչպե՞ս են հարկադրում, ո՛վ մարդ: Թող բոլորն իմանան, որ դու պատրաստ ես կրել ամեն բան, բայց Աստծո օրենքները զանց չառնել, և ապա նրանք հեռու կմնան քեզ հարկադրելուց: Քանզի ոչ թե երդումն է վստահության արժանի դարձնում մարդուն, այլ վարքի վկայությունը, կենցաղավարության անարատությունը և նրա մասին բարի կարծիքը: Շատերը շատ անգամ պայթեցին երդվելով, բայց ոչ ոք նրանց չհավատաց, իսկ ուրիշներ միայն ակնարկեցին և առավել արժանահավատ երևացին, քան նրանք, ովքեր այդքան երդվեցին: Այս ամենն իմանալով և աչքի առաջ ունենալով պատուհասը, որ պահված է երդվողների ու երդմնազանցների համար, հրաժարվե՛նք այս չարաչար սովորությունից, որպեսզի առաջադիմենք նաև այլ առաքինությունների մեջ և հասնենք հանդերձյալ բարիքներին, որոնց թող արժանանանք բոլորս շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Որով և Որի հետ Հորը, միաժամանակ նաև Սուրբ Հոգուն փառք, իշխանություն, պատիվ այժմ, միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տեսա՞ք անցյալ կիրակի օրը պատերազմն ու հաղթությունը. սատանայի պատերազմն ու Քրիստոսի հաղթությունը, տեսա՞ք՝ ինչպես գովվեց ապաշխարությունը, և բանսարկուն չդիմացավ հարվածներին, այլ սարսափեց ու զարհուրեց: Ինչո՞ւ ես վախենում, ո՛վ բանսարկու, և ինչո՞ւ ես հեծում, ինչո՞ւ ես տագնապում, երբ գովվում է ապաշխարությունը: Այո՛, ասում է, հիրավի տանգնապում եմ, նեղվում ու խռովվում: Ինչո՞ւ, ասա՛ ինձ, ո՛վ բանսարկու: Որովհետև ապաշխարությունը հափշտակեց ու հանեց ինձնից իմ մեծ զենքը: Ո՞ր զենքը: Պոռնիկին, մաքսավորին, հայհոյողին, ավազակին:

Արդար և ճշմարիտ. ապաշխարությունը հափշտակեց սատանայի մեծ զենքը, կործանեց նրա բարձրաբերձ քաղաքը. նա անբժշկելի վերքեր է կրում ապաշխարությունից, քանզի ոչինչ չկա, որ նման լինի ապաշխարությանը, սիրելի՛, որը փորձով կանխավ ցույց տվեց:

Իսկ արդ, ինչո՞ւ և ինչի՞ համար այսպիսի խոսքեր չենք վայելում և ամեն օր եկեղեցի մտնում՝ ապաշխարելով: Մեղավոր ես թե արդար, մտի՛ր եկեղեցի. եթե մեղավոր ես, մտի՛ր, որպեսզի խոստովանես մեղքերդ, իսկ եթե արդար ես, մտի՛ր, որ չվրիպես արդարությունից, քանի որ եկեղեցին երկուսի համար էլ նավահանգիստ է: Մեղավոր ու հանցավո՞ր ես. մտի՛ր ապաշխարությամբ: Հանցա՞նք գործեցիր: Աստծուն ասա՝ մեղանչե՛լ եմ: Ի՞նչ չարչարանք է այս կամ ի՞նչ ծախս, ինչպիսի՞ նեղություն կամ ինչպիսի՞ վիշտ՝ խոսքով ասելը, թէ՝ մեղք գործեցի: Քանզի եթե դու ինքդ խոստովանես մեղքերդ, բանսարկուին դատախազ չես ունենա. շտապի՛ր և հափշտակի՛ր նրա պատիվը, քանզի նրա պատիվը բանսար-

կություն է: Եթե ինքդ առաջ ընկնես և ասես մեղքերդ, կջնջես հանցանքներդ՝ իմանալով, որ ունես այնպիսի ոսոխ, որը լռել չի կարողանում: Մե՞ղք գործեցիր. մտի՛ր, ասա՛ Աստծուն՝ մեղանչե՛լ եմ. քեզնից այլ բան չեմ պահանջում, այլ միայն այս: Աստվածային Գիրքն ասում է. «Նախ դու խոստովանի՛ր քո անօրենությունները, որ արդարացվես (Ես. ԽԳ 26). պատմի՛ր հանցանքներդ, որպեսզի լուծես պարտքերդ: Ո՛չ աշխատանք է պետք սրա համար, ո՛չ շատ խոսքեր, ո՛չ ինչքի ծախս և ո՛չ էլ մեկ այլ այսպիսի բան. խոսքով ասա՛, խոստովանի՛ր հանցանքներդ և ասա՝ մեղավո՛ր եմ:

Բայց, կհարցնես, որտեղի՞ց է հայտնի այս, որ եթե նախ խոստովանեմ մեղքերս, կքավեմ հանցանքներս: Գրքերից ունես օրինակը և՛ նրա, ով ասաց և քավեց, և՛ նրա, ով չխոստովանեց և դատվեց: Քանզի Կայենը նախանձից սպանեց իր եղբորը՝ Աբելին. նախանձին հետևեց սպանությունը. և տանելով՝ սպանեց նրան դաշտում: Իսկ ապա ի՞նչ էր ասում նրան Աստված. «Ո՞ւր է, ասում է, Աբելը՝ քո եղբայրը» (Ծն. Դ 9): Ով ամենագետն էր և ամեն բան գիտեր, հարցնում էր ոչ թե այն պատճառով, որ չգիտեր, այլ որպեսզի ապաշխարության ձգեր սպանողին: Եվ որ չիմանալու պատճառով չէ, որ հարցնում էր, հայտնի դարձրեց դրանից հետո. «Ո՞ւր է, ասում է, քո եղբայր Աբելը»: Նա պատասխան տվեց, թե՝ «Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ» (Դ 9): Համարի՛ր, թե պահակը չես, իսկ ինչո՞ւ ես սպանողը: Չէիր պահպանում, ինչո՞ւ էիր սպանում: Սակայն խոստովանում ես, որ պարտավոր ես պահպանել: Ի՞նչ է ասում նրան Աստված. «Քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ» (Դ 10): Երբ հանդիմանեց, նույն պահին պատուհասի ենթարկեց ոչ այնքան սպանելու, որքան լրբության համար, քանի որ Աստուած հանցավորին այնքան չի ատում, որքան անամոթին:

Ահա դրանից հետո Կայենը ապաշխարության եկավ, բայց Աստված չընդունեց նրան, քանզի կանխավ չխոստովանեց մեղքը: Եվ տե՛ս, թե ինչ է ասում. «Գործած մեղքս մեծ է՝ թողության արժանի լինելու համար» (Դ 13). կարծես ասի՝ այնքան մեծ հանցանք գործեցի, որ արժանի չեմ ապրելու: Ի՞նչ է ասում նրան Աստված. «Ահ ու դողի և երերման մեջ պիտի լինես երկրի վրա» (Դ 12), և նրա համար սահմանեց ահավոր պատիժը: Չեմ ջնջում քեզ, ասում է, որպեսզի չմոռացվի ճշմարտությունը, այլ քեզ դնում եմ իբրև օրենք, որ բոլորը կարդան, որպեսզի քո տառապանքները դառնան իմաստության մայրը: Եվ ապա շրջում էր Կայենը, իբրև շնչավոր օրենք, իբրև քայլող արձան, լուռ ու անշշուկ, բայց փողից ավելի բարձր ձայնելով՝ թող ոչ ոք չանի այն, ինչ ես արեցի, որպեսզի չկրի այն, ինչ ես եմ կրում: Նա պատուհասներ ու պատիժներ կրեց իր անամոթության պատճառով, որ չխոստովանեց, հանդիմանվեց ու կշտամբվեց մեղքի պատճառով. բայց եթե կանխավ կամովին խոստովաներ, կջնջեր իր մեղքը:

Եվ որպեսզի իմանաս, որ այդպես է, տե՛ս, թե ինչպես մեկ այլ ոք մեկ այլ տեղում քավեց իր մեղքը: Դառնանք Դավթին՝ մարգարեին ու թագավորին, աղքատին ու հարուստին. ես առավել հոժարությամբ նրան անվանում եմ մարգարե, քանի որ նրա թագավորությունը տարածվում էր միայն Պաղեստինում, իսկ մարգարեությունը՝ ողջ տիեզերքում, քանի որ թագավորությունը կարճ ժամանակով էր և քակտվեց, իսկ մարգարեությունը պատգամում է հավերժ: Ավելի հեշտ արեգակը կհանգչի, քան Դավթի խոսքերը կեղծվեն: «Երկինքն ու երկիրը պիտի անցնեն, ասում է, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. ԻԳ 35):

Նա շնացավ ու սպանեց: «Նա տեսավ, ասում է, մի գեղեցիկ կնոջ, որ լողանում էր» (Բ Թագ. ԺԱ 2) և ցանկացավ նրան. հետո կատարեց իր կամքը: Մարգարեն շնության մեջ էր, մարգարիտը՝ աղբի մեջ: Բայց դեռ չգիտեր, որ մեղք է գործում, այնպես էր արբել ցանկությամբ: Երբ կառք վարողը գինով է, կառքը գնում է, ուր կամենում է: Իսկ կառքն ու կառավարը այն են, ինչ մեր մարմինն ու հոգին: Եթե հոգին թմրի, մարմինը կթավալվի տիղմի մեջ: Քանի դեռ կառք վարողը հաստատուն կանգնած է, կառքը դյուրությամբ է ընթանում, բայց երբ նա թուլանա և չկարողանա ամուր բռնել

երասանակը, այնժամ կառքն էլ վտանգի մեջ կլինի: Այդպես էլ մարդը. քանի դեռ հոգին արթուն ու ամուր է, մարմինը զգաստ է, իսկ երբ հիմարանում է, մարմինն աղտով ու հեշտասիրությամբ է լցվում: Իսկ ապա ի՞նչ եղավ: Դավիթը չնացավ, բայց չգիտակցեց. ոչ մեկից չհանդիմանվեց: Այն էլ՝ խոր ծերության ժամանակ: Որպեսզի դու իմանաս, որ եթե ծույլ լինես, քեզ ծերությունն էլ չի օգնի, իսկ եթե ջանաս, մանկությունն էլ քեզ չի կարող վնասել: Կատարվածը կապ չունի տարիքի հետ, այլ կամքի: Դանիելը տասներկու տարեկան էր և հանդիմանեց ծերերին, իսկ զառամյալ ծերերը պոռնկություն էին գործում (Դան. ԺԳ 45-64), և ծերությունը ոչնչով չէր օգնում նրանց, և ոչ էլ մանկությունը վնասում էր Դանիելին: Որպեսզի իմանաս, որ զգաստությունը տարիքից չէ, այլ կամքից, ահա Դավիթը ծերության տարիքում էր և ընկավ շնության մեջ, նաև սպանություն գործեց, որովհետև կառքը վարողը արբած էր անժուժկալությամբ:

Եվ ապա ի՞նչ արեց Աստված: «Նաթան մարգարեին ուղարկեց նրա մոտ» (Բ Թագ. ԺԲ 1): Մարգարեն եկավ մարգարեի մոտ: Ճիշտ այսպես է լինում բժիշկների հետ. երբ բժիշկը հիվանդանում է, նրան ուրիշ բժիշկ է պետք լինում: Այդպես էլ այստեղ: Մարգարե էր մեղանչողը, և մարգարեն էր, որ բժշկող դեղն էր դնում: Եկավ նրա մոտ Նաթան մարգարեն. և ոչ թե անմիջապես դռան շեմից հանդիմանեց նրան և ասաց. «Անօրե՛ն, պի՛ղծ, շո՛ւն և մարդասպա՛ն, որ այսքան պատիվներ ստացար Աստծուց և ոտնակոխ արեցիր Նրա պատվիրանները»: Ո՛չ մի այդպիսի բան չասաց նրան Նաթանը, որպեսզի նրան չդարձնի անամոթ լիրբ, քանի որ մեղքերի հրապարակային հանդիմանությունը մեղավորին անամոթության է մղում: Արդ, եկավ նրա մոտ և մի դատավեճի մասին մի պատմություն հորինեց և ասաց. «Արքա՛, քեզ հետ խոսելու բան ունեմ: Մի քաղաքում երկու մարդ կար. մեկը հարուստ էր, մյուսը՝ աղքատ: Հարուստն ուներ շատ ու շատ հոտեր ու նախիրներ, իսկ աղքատը ոչինչ չուներ, բացի մի փոքրիկ էգ գառնուկից, որ ուտում էր նրա հացից, խմում էր նրա բաժակից և քնում էր նրա ծոցում»: Այստեղ (մարգարեն) ամուսնու՝ կնոջ հանդեպ սերն է ակնարկում: «Հարուստ մարդու տուն հյուր եկավ: Նա խնայեց իրենը և վերցրեց ու մորթեց աղքատի ուլը» (տե՛ս Բ Թագ. ԺԲ 1-4): Տեսնո՞ւմ ես՝ ինչպես է Նաթանը հյուսում պատմությունը՝ երկաթը սպունգով ծածկելով:

Եվ ապա ի՞նչ է պատասխանում թագավորը. կարծելով, թէ դատապարտում է ուրիշին, վճռում է պատիժը: Այսպիսին են մարդիկ: Նրանք ավելի հոժարությամբ խստագույն սաստով պատրաստ են ուրիշների պատժի հրամանն արձակել: Եվ թագավորն ասում է. «Կենդանի է Տերը: Այդ բանն անող մարդը արժանի է մահվան: Նա այդ գառնուկի համար յոթնապատիկ անգամ պիտի հատուցի» (տե՛ս Բ Թագ. ԺԲ 5, 6): Եվ ապա Նաթանը ի՞նչ է պատասխանում նրան. երկար ժամեր չի ճմլում վերքը, այլ շտապում է արագորեն կտրել այն, որպեսզի արագ հատմամբ մեղմացնի ախտի ցավը: «Դո՛ւ ես, արքա՛»: Ի՞նչ է ասում արքան: «Մեղանչե՛լ եմ Տիրոջ դեմ»: Զասաց, թէ՝ «Դու ո՞վ ես, որ հանդիմանում ես ինձ», կամ. «Ո՞վ ուղարկեց քեզ՝ իմ դեմ համարձակվելու», և կամ. «Ինչպե՞ս իշխեցիր այդ անել»: Այսպիսի ոչինչ չասաց և չմտածեց անգամ, այլ ճանաչեց իր մեղքն ու ասաց. «Մեղանչե՛լ եմ Տիրոջ դեմ»: Նաթանն ի՞նչ ասաց. «Տերը ներեց քո մեղքը»: Դու ինքդ դատեցիր քեզ: Ես ազատում եմ քեզ պատժից: Քո կամքով խոստովանեցիր մեղքդ, և ես թողնում եմ հանցանքդ, ինքդ քեզ պատժի ենթարկեցիր, և ես թողնում եմ պատիժը: Տեսա՞ր՝ ինչպես կատարվեց գրվածը, թէ՝ «Ասա՛ դու նախ քո անօրենությունները, որ արդարացվես»: Արդ, ի՞նչ ջանք է առաջինը մեղքն ասելը:

Կա նաև ապաշխարության այլ ճանապարհ: Ո՞րն է այն: Մեղքերի համար տրտմելն ու ողբալը և այդպիսով դրանք քավելը: Ավելի ոչինչ չեմ պահանջում քեզնից, այլ միայն այն, որ սգաս մեղքերիդ համար: Քեզ չեմ ասում ո՛չ կտրել անցնել անդունդներ և ոչ իջնել նավահանգիստներ, ո՛չ դաշտերն անցնել, ո՛չ ճանապարհ գնալ, ո՛չ ունեցվածքը ծախել

և ո՛չ ալեկոծ ծովով ճանապարհորդել, այլ՝ սգալ մեղքերի համար:

Բայց դարձյալ կհարցնես՝ եթե տրտմեմ մեղքերիս համար, կլվանա՞մ մեղքերս: Գրքից նաև այս օրինակն ունես: Աքաաբ անունով մի թագավոր կար: Նա ինքն արդար էր, բայց իր կնոջ՝ Եզաբելի չարության պատճառով դարձավ, ագահացավ և սպանություն գործեց: Ցանկացավ ունենալ մի եզրայելացու՝ Նաբոթի այգին և մարդ ուղարկեց նրա մոտ՝ ասելով. «Տո՛ւր ինձ քո այգին, որ ցանկացա, և դրա փոխարեն քեզ այգու արժեքը կտամ կամ էլ ուրիշ այգի»: Նա պատասխանեց. «Թող իմ Աստվածն այնպես չանի, որ իմ հայրերի ժառանգությունը վաճառեմ»: Աքաաբը, չնայած ցանկանում էր այգին, սակայն չէր ուզում բռնությամբ վերցնել այն, ուստիև այդ պատճառով հիվանդացավ: Նրա կինը՝ անամոթ ու բարուց հեռացած, պիղծ ու աղտեղի Եզաբելը, մտավ իր ամուսնու մոտ և ասաց նրան. «Ինչո՞ւ ես տրտմել ու հաց չես ուտում: Վե՛ր կաց, կե՛ր, խմի՛ր, ես այնպես կանեմ, որ դու կժառանգես եզրայելացի Նաբոթի այգին»: Եվ ահա թագավորի անունից ծերերին ու իշխաններին գրում է՝ ասելով. «Ծոմ պահեցեք և Նաբոթին ժողովրդի մեջ գլխավոր տեղում նստեցրեք, իսկ նրա դիմաց թող նստեն երկու անօրեն մարդիկ, որ վկայեն նրա մասին ու ասեն, թե չօրհնեց (այսինքն՝ հայհոյեց) Աստծուն ու արքային»:

Ո՛վ անօրենությամբ լի պահք. պահք քարոզեցին, որպեսզի սպանություն գործեն: Ի՞նչ հետևեց դրան: Նաբոթը քարկոծվեց ու սպանվեց: Երբ Յեզաբելը լսեց, ասաց իր ամուսնուն՝ Աքաաբին. «Վե՛ր կաց, ժառանգի՛ր այգին, քանի որ Նաբոթը մեռավ»: Աքաաբը, չնայած մի որոշ ժամանակ տրտմեց, բայց հետո մտավ և տիրացավ այգուն: Եվ այնժամ Աստված նրա մոտ առաքեց Եղիա մարգարեին. «Գնա՛ Աքաաբ արքայի մոտ և ասա՛ նրան՝ քանի որ սպանեցիր, արդարի արյուն թափեցիր ու ժառանգեցիր նրա ունեցվածքը, քո արյունն է թափվելու, և շներն են լիզելու քո արյունը, և բոզերը լողանալու են քո արյան մեջ»: Աստվածային էր բարկությունը՝ լի խիստ հրամանով, լի պատիժներով: Եվ տե՛ս, թե ուր է ուղարկում նրան. այգի. որտեղ տեղի ունեցավ մեղքը, այնտեղ էլ՝ պատիժները, որտեղ անօրենությունը, այնտեղ էլ՝ պատուհասը: Աքաաբը, երբ տեսավ Եղիային, ասաց. «Ո՛վ իմ թշնամի, գտա՞ր ինձ» (Գ Թագ. ԻԱ 2-20). այսինքն թե՝ հանցավոր ու մեղավոր գտար ինձ, այժմ առիթ ունես ինձ պատժելու: «Ո՛վ իմ թշնամի, գտա՞ր ինձ»: Եղիան միշտ հանդիմանում էր Աքաաբին: Գիտեր, որ մեղք է գործել: «Դու մշտապես հանդիմանում էիր ինձ, ասում է, բայց այժմ տեղին է ինձ պատուհասելդ»: Ի պատասխան Եղիան նրան հայտնեց պատիժը. «Այսպես է ասում Տերը. քանի որ սպանեցիր և ժառանգեցիր. թափեցիր արդար մարդու արյունը, այդպես էլ թող քո արյունը թափվի. թող շները լափեն քո արյունը, և պոռնիկները լողանան քո արյան մեջ» (Գ Թագ. ԻԱ 19): Ասաց, որ աստվածային հրաման էր այդ: Երբ Աքաաբը լսեց այս, մեծապես սգաց ու տրտմեց իր մեղքերի համար, ճանաչեց իր հանցանքը, և Աստված ազատեց նրան պատժից: Բայց Աստված նախ Իրեն արդարացրեց Եղիայի առջև, որպեսզի նա սուտ չթվա և նրան չպատահի այն, ինչ պատահեց Հովնանին:

Ահա թե ինչ եղավ Հովնանին. Աստված նրան ասաց. «Գնա՛ Նինվե մեծ քաղաք, ուր, չհաշված կանանց ու երեխաներին, բնակվում է հարյուր քսան հազար մարդ, և քարոզի՛ր՝ երեք օր ևս, և Նինվեն պիտի կործանվի» (Հովն. Գ 4): Իմանալով Աստծո մարդասիրությունը՝ Հովնանը չկամեցավ գնալ, այլ փախուստի դիմեց: Ասում էր՝ եթե գնամ, քարոզեմ, իսկ Դու, իբրև մարդասեր, գթաս, ես, իբրև սուտ մարգարե, մահվան կմատնվեմ: Բայց ծովը, վերցնելով նրան, չթաքցրեց, այլ փրկեց Նինվեի համար, ինչպես բարի սպասուհին է պահպանում իր ծառայակցուհուն:

«Եվ Յովնանը, ասում է Գիրքը, իջավ՝ Տիրոջ ներկայությունից փախչելու: Գտավ մի նավ, որ գնում էր Թարսիս, վճարեց գինը և մտավ նավ» (Հովն. Ա 3): Ո՞ւր ես փախչում, Հովնա՛ն, ուրիշ երկի՞ր ես փախչում, բայց. «Տիրոջն է երկի-

ը իր ամբողջությամբ» (Սաղմ. ՂԴ 5), դեպի ծո՞վ ես գնում. «Նրանն է ծովը, և Նա է արարել այն», երկի՞նք. չե՞ս լսել Դավթին, որ ասում է. «Տեսա երկինքը՝ քո մատների գործը» (Սաղմ. Ը 4): Բայց չնայած այս ամենին, նա փախչում էր վախից՝ կարծելով, թէ կարող է փախչել: Մինչդեռ իրականում անհնարին է փախչել Աստծուց: Երբ ծովը նրան ցամաք հանեց, նա եկավ Նինվե, քարոզեց և ասաց. «Երեք օր ևս, և Նինվեն պիտի կործանվի» (Հովն. Գ 4): Եվ որպեսզի իմանաս, թե նա իսկապես փախչում էր՝ մտքում ունենալով այն, որ Աստված մարդասեր է և կզղջա այն չարիքների համար, որ ասաց, թե կպատճառի նինվեացիներին, և ինքը սուտ մարգարե կերևա, ապացուցում է հենց ինքը: Նինվեում քարոզելուց հետո քաղաքից դուրս ելավ և սպասեց, թե ինչ է լինելու: Երբ տեսավ, որ երեք օրն անցնում է, իսկ պատիժը տեղի չի ունենում, վերադարձավ իր նախկին մտքին և ասաց. «Մի՞թե այդ նույն բանը չէի խորհում, երբ իմ երկրում էի, թե Աստված գթասիրտ է, ողորմած և համբերող և զղջում է չարիքների համար» (Հովն. Դ 2):

Եվ արդ, որպեսզի Եղիային չպատահի այն, ինչ պատահեց Հովնանին, Աստված նրան հայտնեց պատճառը, թե ինչու է Աքաաբին ներում: Եվ ի՞նչ ասաց Աստված Եղիային: «Տեսա՞ր, ասում է, թե ինչպես զղջաց իմ առջև: Եվ քանի որ ընդունեց իր մեղքերը, նրան չարիք չեմ պատճառի» (Գ Թագ. ԻԱ 29): Զարմանալի բան. տերը ծառայի պաշտպանն է դառնում, և Աստված մարդուն աղերսում է մարդու համար: Մի՛ կարծիր, ասում է, թե ես առանց պատճառի ներեցի նրան, այլ որովհետև փոխեց իր վարքը, ես էլ փոխեցի և ջնջեցի իմ բարկությունը: Բայց դու սուտ մարգարե չես համարվի, քանզի ճշմարտությունն ասացիր: Եթե նա չփոխեր իր վարքը, արդարև, կկրեր պատուհասի պատիժը, բայց նա փոխեց իր վարքը, և ես վերացրի իմ բարկությունը: Եվ ասում է. «Տեսա՞ր, թե ինչպես զղջաց իմ առջև: Եվ քանի որ ընդունեց իր մեղքերը, նրան չարիք չեմ պատճառի»: Տեսա՞ր, թե ինչպես են տրտմությամբ քավվում մեղքերը:

Կա նաև ապաշխարության երրորդ ճանապարհ: Ես քեզ ներկայացնում եմ ապաշխարության բազում ճանապարհներ, որպեսզի ճանապարհների բազմազանությամբ քեզ համար ավելի հեշտ լինի փրկություն գտնելը: Տե՛ս, թե ինչպիսի զենք են հեզությունն ու խոնարհությունը: Նրանցով կլուծես մեղքերի կնճիռը: Սրանց վկայությունը նույնպես ունես Սուրբ Գրքերից փարիսեցու և մաքսավորի պատմության մեջ: «Փարիսեցին ու մաքսավորը, ասում է, ելան տաճար՝ աղոթելու» (Ղուկ. ԺԸ 10): Եվ փարիսեցին սկսեց թվել իր առաքինությունները. «Ես, ասում է, մեղավոր չեմ, ինչպես ամբողջ աշխարհը և ինչպես այս մաքսավորը»: Թշվառական ու անհա՛գ հոգի, ամբողջ աշխարհին դատեցիր, ինչո՞ւ նեղացրիր քո մերձավորին. քեզ բավական չէ՞ր ամբողջ աշխարհը, որ մաքսավորին էլ դատապարտեցիր, չմեղադրեցի՞ր բոլորին և գեթ մի մարդու չխնայեցիր: «Ես այնպիսին չեմ, ինչպես բոլոր մարդիկ և ինչպես այս մաքսավորը. այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից աղքատներին»: Ամբարտավան խոսքեր էր ասում: Ո՛վ թշվառականդ, չհագեցար աշխարհով և քեզ մոտ կանգնածի՞ն մեղադրեցիր:

Երբ մաքսավորը լսեց այս, չասաց, թէ՝ դու ո՞վ ես, որ այդ ես ասում ինձ, կամ՝ որտեղի՞ց գիտես իմ վարքը, ինձ հետ երբեք չես ապրել, ինչո՞ւ ես այդպես սնապարծում: Կամ ո՞վ է քո բարեգործության վկան, ինչո՞ւ ես գովում ու պատվում ինքդ քեզ: Ոչ մի պատասխան չտվեց մաքսավորին, այլ խոնարհվելով՝ երկրպագեց և ասաց Աստծուն. «Աստվա՛ծ, ների՛ր ինձ, մեղավորիս» (Ղուկ. ԺԸ 14): Եվ երբ մաքսավորը խոնարհվեց ու հնազանդվեց, արդարացավ. փարիսեցին տաճարից իջավ՝ կորցրած արդարությունը, որ ուներ, իսկ մաքսավորը իջավ արդարություն զգեցած: Խոսքերը հաղթեցին գործերին: Մեկը գործերով վրիպեց արդարությունից, մյուսը խոնարհ խոսքով ստացավ արդարություն: Եվ խոնարհություն էլ չէր այդ. քանզի խոնարհությունն այն է, երբ մեկը, մեծ լինելով, նվաստացնում է իրեն, իսկ մաքսավորի խոստո-

վանությունը խոնարհություն չէր, այլ զուտ ճշմարտություն. նրա խոսքերն արդարացի էին. նա մեղավոր էր:

Ասա՛ ինձ՝ ի՞նչն է վատ մաքսավորությունից: Ուրիշի վաստակի վաճառական է, ուրիշների աշխատանքի պտուղների բաժնեկից, երբ մեկին գործի մեջ է տեսնում, նրա շահից իրեն բաժին է վերցնում: Մի՞թե դառը մեղք չէ մաքսավորությունը: Քանզի այն այլ բան չէ, քան անամոթ բռնություն, օրինավորացած մեղք, բարեկերպ կողոպուտ: Ի՞նչն է վատ մաքսավորությունից, ասա՛ ինձ, որ նստում է ճանապարհների խաչմերուկներին և ուրիշների աշխատանքի ու չարչարանքի պտուղները հավաքում, աշխատելու մասին չի էլ հոգում, իսկ երբ շահ կա, որի համար չի աշխատել, անիրավությամբ բաժին է վերցնում: Արդ, եթե մաքսավորը, ով ապաշխարեց, արդարության հասավ, ապա որքան առավել՝ խոնարհ ու հեզ մարդը. քանզի ահա արդարացավ նա, ով ճշմարտությամբ խոստովանեց իր մեղքը:

Կամենո՞ւմ ես ուսանել, թե ով է խոնարհ և հեզ, նայի՛ր Պողոսի խոնարհությանը. Պողոսին՝ տիեզերքի վարդապետին, իմաստունին, հոգևորին, ընտրյալ անոթին, խաղաղության նավահանգստին, հաստատուն աշտարակին, ով փոքր մարմնով անցավ ամբողջ աշխարհը: Տեսե՛ք նրան, նայեցե՛ք նրան խաղաղությամբ. տգետին ու իմաստունին, աղքատին ու մեծատունին: Ճշմարիտ խոնարհ ու հեզ եմ անվանում նրան, ով բյուրավոր դժվարություններ կրեց, ով բյուր անգամ պատերազմեց ընդդեմ սատանայի, ով քարոզում և ասում էր. «Նրա շնորհները, որ իմ մեջ են, իզուր չեղան, այլ բոլորից առավել աշխատեցի» (Ա Կոր. ԺԵ 10): Ով համբերեց բանտին, տանջանքներին ու հարվածներին, ով իր թղթերով որսաց ամբողջ աշխարհը, ով կանչվեց երկնային ձայնով, ով հեզությամբ ասում էր. «Ես իսկ եմ առաքյալների տրուպը, ես, որ առաքյալ կոչվելու արժանի չեմ» (Ա Կոր. ԺԵ 9): Տեսնո՞ւմ ես մեծ խոնարհությունը, տեսնո՞ւմ ես Պողոսի հեզությունը, տեսնո՞ւմ ես, որ տրուպ[1] է անվանում իրեն և ասում,

[1] հեպին

թե՝ «Արժանի չեմ առաքյալ կոչվելու»: Այն էր իսկական խոնարհությունը. աշխարհից հրաժարվելով՝ իրեն տրուպ անվանեց: Հիշի՛ր, թե ով էր այս խոսքերն ասողը. Պողոսը՝ երկնքի քաղաքապետը, ով լոկ մարմինն ուներ իր վրա, եկեղեցու հաստատության սյունը, երկրավոր հրեշտակն ու երկնավոր մարդը: Ինձ սիրելի է նայել նրա ընթացքին և պատմել նրա առաքինությունների գեղեցկության մասին: Ծագող արեգակը իր պայծառ ճառագայթներով այնպես չի լուսավորում և ուրախացնում իմ աչքերը, ինչպես Պողոսը, ով լուսավորում է իմ միտքը. քանզի արեգակը միայն երեսներն է լուսավորում, իսկ Պողոսը, վեր բարձրացնելով մեզ, թռցնում է դեպի երկնային կամարը, արեգակից ու լուսնից առավել բարձրացնում: Այդպիսին է առաքինության զորությունը. այն մարդուն հրեշտակ է դարձնում, հոգին երկինք է բարձրացնում: Այսպիսի առաքինություն է մեզ ուսուցանում Պողոսը:

Սակայն չշեղվենք մեր նյութից: Կամենում եմ ցույց տալ հեզության երրորդ ճանապարհը, որ մաքսավորը չխոնարհվեց, այլ ստուգությամբ ասաց ու բացեց իր մեղքերը և արդարացավ. ո՛չ իր ինչքերը ծախելով, ո՛չ ծովերով անցնելով, ո՛չ մեծ ճանապարհներին չարչարվելով, ո՛չ սիրելիներին աղերսելով և ո՛չ ժամանակ ծախսելով, այլ հեզությամբ ու խոնարհությամբ արդարություն ստացավ: Որին Աստված թող արժանի դարձնի մեզ բոլորիս մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով և մարդասիրությամբ, որին փառք հավիտյանս. ամեն:

ՍԱՏԱՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Ուղղվում է նրանց, ովքեր հարցնում են, թե ինչու սատանան չոչնչացվեց, և թէ՝ նրա չարությունը ոչնչով չի վնասի մեզ, եթե մենք զգուշանանք, նաև ապաշխարության մասին

Ա. Իսահակը մի ժամանակ կամեցավ ճաշ ուտել իր որդու ձեռքից և որդուն տնից որսի ուղարկեց, բայց այս Իսահակը[1], փափագելով մեր ձեռքից ճաշ ընդունել, ոչ թե մեզ տնից դուրս ուղարկեց, այլ ինքը եկավ մեր սեղանի մոտ : Ո՞վ կարող է լինել ավելի բարեգութ, ո՞վ՝ ավելի խոնարհ, ո՞վ արժանի կդարձնի այսքան ջերմ սիրո և կկարողանա այսքան խոնարհվել: Այդ պատճառով էլ մենք հանդես կբերենք մեր առավոտյան խոսքի ուժգնությունն ու ջանադրությունը. տեսնելով հայրենի դեմքը՝ անմիջապես մոռացանք մեր թուլությունը, թևավորվեցինք ուրախությամբ, տեսանք պայծառ ալիքները, և լույսով լցվեցին մեր հոգիները: Ուստիև հոժարությամբ մոտեցնում ենք սեղանը, որպեսզի ուտելով՝ օրհնի մեզ: Այստեղ չկա գողություն և նենգություն, ինչպես այնժամ, այլ մեկին հրամայվեց ներս բերել, և ես բերեցի: Արդ, օրհնի՛ր մեզ, ո՛վ հայր, հոգևոր օրհնությամբ, որ բոլորս աղաչում ենք ստանալ միշտ, որն օգտակար է ոչ միայն քեզ, այլ նաև սրանց բոլորին[2]. աղաչի՛ր մեր բոլորի Տիրոջը, որ Իսահակի խորը ծերությանն հասցնի քո կյանքը, քանզի այն ինձ և սրանց համար պատվական ու անհրաժեշտ է երկնային ցողից ավելի:

Բայց այժմ սեղանը դնելու ժամանակն է: Ի՞նչ են սրանք: Նշխարները այն բանի, որ նախապես արդեն ասացի ձեր սի-

1 Փլարիանոս եպիսկոպոսը:

2 Այսինքն՝ եկեղեցում գտնվողներին:

բուն: Մենք տակավին խոսում ենք սատանայի մասին, որ սկսեցինք երկու օր առաջ, որի մասին նաև այս առավոտ[1] ասացինք մկրտության պատրաստվողներին, երբ նրանց հետ խոսում էինք (սատանայից) հրաժարվելու և հեռանալու մասին: Այդ անում ենք ոչ թե, որովհետև մեզ համար հաճելի է սատանայի մասին խոսելը, այլ որպեսզի նրա մասին ուսուցումը մեզ զգույշ դարձնի: Քանզի թշնամի է և պատերազմող, իսկ թշնամիների մասին հայտնապես իմանալը մեծ ապահովություն է: Արդեն ասացինք, որ նա տիրում է ո՛չ բռնությամբ և ո՛չ դաժանությամբ, ո՛չ ստիպում է և ո՛չ բռնադատում որևէ մեկին, քանզի եթե այդ լիներ, նա կորստյան կմատներ բոլորին: Եվ իբրև վկայություն բերեցինք այն խոզերին, որոնց չհանդգնեց վնասել, նախքան Տիրոջ հրամանը (տե՛ս Մատթ. Ը 31), Հոբի նախիրներին ու հոտերին, քանզի սատանան նրանց նույնպես չհանդգնեց վնասել, մինչև ի վերուստ հրաման չստացավ: Արդ, մենք նախ սովորեցինք այն, որ նա մեզ չի տիրում ո՛չ բռնությամբ և ո՛չ էլ հարկադրանքով: Երկրորդ՝ դրանից հետո ավելացրի, որ չնայած նա խաբեությամբ հաղթում է, բայց ոչ մշտապես, և դարձյալ (օրինակ բերեցինք) նույն իրեն՝ ըմբիշին՝ Հոբին, որի դեմ բյուրավոր մեքենայություններ շարժեց և չհաղթեց, այլ պարտվելով՝ հեռացավ:

Մնում է ևս մեկ հարց: Ո՞րն է այդ: Քանի որ, ասում են, եթե սատանան չի հաղթում զորությամբ, ապա հաղթում է խորամանկությամբ, ուրեմն ավելի լավ կլիներ նրան ոչնչացնելը: Թեպետև Հոբը հաղթեց, բայց Ադամը խաբվեց և մոլորվեց. եթե սատանան մեկ անգամ և ընդմիշտ վերացված լիներ, Ադամ երբեք չէր ընկնի. այժմ, մնալով, հաղթվում է մեկից, բայց հաղթում է շատերին. տասը հաղթում են նրան, բայց նա հաղթում ու խաբում է հազարներին. եթե նա վերացված լիներ, հազարներ չէին կորչի:

Եվ արդ, ի՞նչ ասենք այս մասին, եթե հաղթողները պարտվողներից առավել են պատվի արժանի, թեպետև վերջիններն ավելի շատ են, իսկ առաջինները՝ սակավ: «Լավ է, ասում է, Աստծո կամքը կատարող մեկ արդարը, քան հազար մեղավորները» (տե՛ս Սիր. ԺԶ 3): Երկրորդ՝ այն, եթե հակառակորդը վերացվեր, նա, ով հաղթելու էր, մեծ վնաս կկրեր. քանզի եթե թողնես, որ հակառակորդը մնա, ծուլացողները կվնասվեն ոչ թե առաքինիների, այլ իրենց ծուլության պատճառով, իսկ եթե ոչնչացնես հակառակորդին, առաքինիները կվնասվեն ծուլացողների պատճառով, չեն ցույց տա իրենց զորությունը և պսակներ չեն ստանա:

Բ. Հավանաբար չհասկացաք ասածներս. հարկ է դրա մասին դարձյալ ասել ավելի պարզ: Թող լինի մեկ հակառակորդ, և թող լինեն երկու ըմբիշներ, որոնք պետք է մրցեն նրա հետ, և այդ երկու ըմբիշներից մեկը որովայնամոլության պատճառով լինի թուլացած, անհոգության մատնված, տկարացած ու ուժասպառ, մյուսը՝ փութաջան, քաջառողջ, մշտապես զանազան վարժություններով մարզված, ըմբշամարտության արվեստը բոլոր ձևերով ուսանած: Արդ, եթե դու ոչնչացնես հակառակորդին, նրանցից ո՞ւմ կվնասես. անհոգին ու անփույթի՞ն, թէ՞ փութաջանին, որ այնքան ջանք թափեց: Պարզ է, որ փութաջանին. նա, հակառակորդին ոչնչացնելով, կվնասվեր անփույթի պատճառով, իսկ անփույթը ոչ թե առաքինիի պատճառով վնաս կիրի, այլ իր ծուլության պատճառով կընկնի:

Ասեմ նաև այս խնդրի մյուս լուծումը, որ իմանաս, որ ոչ թե սատանան է վնասում մարդկանց, այլ սեփական անփութությունն է ամենուր ընկճում չզգուշացողներին:

Թողնենք սատանային. նա միանգամայն չար է, չար է ոչ թե բնությամբ, այլ հոժարությամբ և բարքով. և որ սատանան բնությամբ չար չէ, կարող ենք իմանալ նրա անուններից: Նա անվանվում է բանսարկու, քանի որ մարդուն չարախոսեց Աստծո մոտ՝ ասելով. «Մի՞թե Հոբը ձրի է պաշտում Տիրոջը: Փորձի՛ր մեկնել ու դցել քո ձեռքը նրա ամբողջ ունեցվածքին, ու կտեսնես, որ նա դեմառդեմ կանիծի քեզ» (Հոբ Ա

[1] Հիշատակված առավոտյան ճառը մեզ չի հասել:

9, 11): Զարախոսեց նաև Աստծուն մարդու մոտ. «Երկնքից կրակ թափվեց և այրեց հոտերը» (Հոբ Ա 16). Նա շտապեց Հոբին համոզել, թե այն պատերազմը ի վերուստ թափվեց ցած, և ծառային հանեց Տիրոջ, իսկ Տիրոջը՝ ծառայի դեմ, ավելի ճիշտ կլինի ասել՝ ոչ թե (նրանց իրար) դեմ հանեց, այլ միայն հանդգնեց, բայց չկարողացավ, քանզի երբ տեսնես մեկ այլ ծառայի՝ Ադամին, Աստծուն ընդդիմացած և հավատացած նրա բանսարկությանը, իմացի՛ր, որ (սատանան) զորություն առավ ոչ թե իր զորությունից, այլ նրա իսկ անհոգությունից ու անփութությունից: Արդ, նա բանսարկու է անվանվում հենց դրա համար, իսկ չարախոսելն ու չչարախոսելը բնությունից չեն, այլ եղած և չեղած բաներ, իսկ դրանք ո՛չ բնության կարգն ունեն և ո՛չ գոյության: Գիտեմ, որ շատերին դժվարհասկանալի են այս խոսքերը էության ու դիպվածի մասին, բայց կան ոմանք, որ կարող են լսել նաև նուրբը (դատողություններ), այդ պատճառով էլ մենք ասացինք այս ամենը:

Կամենո՞ւմ եք՝ կանցնեմ մյուս անվանը, և կտեսնեք, որ այն նույնպես ո՛չ էության անվանում է և ո՛չ էլ բնության, այլ հոժարության: Նա կոչվում է չար. իսկ չարությունը բնությունից չէ, այլ կամքից, քանի որ այն նույնպես երբեմն լինում է և երբեմն չի լինում: Ինձ մի՛ ասա, թե չարությունը մշտապես նրա մեջ է. ի սկզբանե նրա մեջ այն չկար, այլ հետո եղավ, որի համար էլ ապստամբ անվանվեց. և չնայած որ չար մարդիկ շատ կան, բայց միայն նա է ըստ գերազանցության չար անվանվում: Իսկ ինչո՞ւ է այդպես անվանվում: Որովհետև նա, ոչ մի չարիք չկրելով մեզնից, չունենալով ո՛չ փոքր և ո՛չ մեծ պատճառ մեզ մեղադրելու, պատվի մեջ տեսնելով նրան, նույն պահին նախանձեց նրա երանությանը: Արդ, ի՞նչը կարող է լինել դրանից ավելի մեծ չարություն, երբ թշնամություն ու պատերազմ է ծագում առանց որևէ իրավացի պատճառի:

Այսուհետև թողնենք բանսարկուին և մեջ բերենք արարածին, որպեսզի իմանաս, որ սատանան մեր չարիքի պատճառը չի դառնում, երբ մենք կամենում ենք զգուշանալ, որպեսզի դու իմանաս, որ տկարակամ, ծույլ ու անփույթ մարդը առանց սատանայի էլ է կործանվում և բազում անգամ իրեն գցում մեղքերի անդունդները: Բանսարկուն չար է, գիտեմ ես, և խոստովանում են այս բոլորը, բայց ուշադի՛ր լսեցեք, թե ինչ եմ ասելու այժմ: Այն քիչ կարևոր չէ, նրա մասին խոսում են բոլորը, նրա համար մշտապես կռվում ու պատերազմում են ոչ միայն անհավատներն հավատացյալների, այլ նաև հավատացյալները հավատացյալների հետ, և սա ցավալի է:

Գ. Արդ, ինչպես ես ասացի, բոլորն են խոստովանում, որ բանսարկուն չար է: Ի՞նչ ասենք այս չքնաղ ու սքանչելի ստեղծվածքի (բնության) մասին: Մի՞թե արարվածը չար է: Բայց ո՞վ է այնքան պիղծ, ո՞վ է այնքան անզգա ու խելագար, որ ամբաստանի արարվածին: Ի՞նչ ասենք այս մասին, քանզի այն չար չէ, այլ բարի, Աստծո իմաստության, զորության ու մարդասիրության գործը: Լսի՛ր, թե ինչպես է նրանով սքանչանում մարգարեն՝ ասելով. «Որքա՜ն մեծ են քո գործերը, Տե՛ր, ամեն ինչ իմաստությամբ ստեղծեցիր դու» (Սաղմ. ՃԳ 24): Նա չքննեց (Աստծո) յուրաքանչյուր գործը, այլ խոնարհվեց Աստծո անհասանելի իմաստության առջև: Եվ որ (Աստված) արարեց այն պիտանի, այդքան չքնաղ ու մեծ, լսի՛ր մեկ ուրիշի, ով ասում է. «Արարվածների մեծությունից ու գեղեցկությունից նույն համեմատությամբ էլ երևում է դրանք Արարչագործողը» (Իմաստ. ԺԳ 5): Լսի՛ր և Պողոսին, որ ասում է. «Աստծո աներևույթ հատկությունները, այն է՝ նրա մշտնջենավորությունը, զորությունն ու Աստվածությունը, իմանալի կերպով տեսանելի են նրա ստեղծածների մեջ. այնպես որ նրանք արդարանալ չեն կարող» (Հռ. Ա 20): Երկուսն էլ իրենց խոսքերով ցույց են տալիս, թե այն մեզ աստվածճանաչողության է առաջնորդում, քանզի հենց այն է մեզ օգնում՝ ճանաչելու Տիրոջը: Եվ արդ, ի՞նչ: Եթե տեսնենք, որ սա՝ ամենագեղեցիկն ու հրաշալին, շատերի հա-

մար ամբարշտության պատճառ է դառնում, մի՞թե կմեղադրենք սրան:

Ո՛չ: Երբե՛ք: Այլ կմեղադրենք նրանց, ովքեր ինչպես հարկն է, չեն գործածում դեղը: Ինչպե՞ս ամբարշտության պատճառ դարձավ սա, որ մեզ առաջնորդում է աստվածճանաչողության: «Խավարեցին, ասում է, նրանց սրտերն անմտությամբ: Իրենք իրենց իմաստունների տեղ էին դնում և հիմարացան ու պաշտեցին արարածներին և ոչ Արարչին» (Հռ. Ա 21, 25): Այնտեղ ո՛չ սատանան, այլ միայն արարածն է Աստվածության ուսուցիչը: Եվ ինչպե՞ս նա ամբարշտության պատճառ դարձավ: Ոչ իր բնության, այլ (նրանց) անհոգության պատճառով, որովհետև անփույթ եղան: Եվ արդ, ի՞նչ, ոչնչացնե՞նք արարածին, ասա՛ ինձ:

Եվ ի՞նչ ասենք արարածների մասին: Դանք մեր անդամներին. կտեսնենք, որ դրանք էլ են դառնում կորստյան պատճառ, եթե մենք զգոն չենք, ոչ թե իրենց բնության, այլ մեր անհոգության պատճառով: Նայի՛ր. աչքերը հաստատվեցին, որ դու, տեսնելով՝ փառաբանես Տիրոջը, բայց եթե դու ճիշտ չօգտագործես աչքերը, քեզ համար շնության պատճառ կդառնան: Լեզուն տրվեց, որպեսզի բարեբանես, որպեսզի օրհնես Տիրոջը, և եթե ճիշտ չօգտագործես այն, քեզ համար կդառնա հայհոյության պատճառ: Ձեռքերը քեզ տրվեցին, որպեսզի դու դրանք մեկնես աղքատներին, բայց եթե արթուն չլինես, դրանք ավելաստացության կպարգես: Ոտքերը տրվեցին, որպեսզի ընթանաս դեպի բարի գործերը, իսկ եթե ծուլանաս, ապա դրանցով կգնաս դեպի չար գործերը, քանզի տկարին ամեն բան վնասում է:

Տեսնո՞ւմ ես, որ տկարին փրկող դեղերն էլ են մահվան տանում ոչ թե իրենց բնության, այլ նրա անփութության պատճառով: Աստված ստեղծեց երկինքը, որպեսզի սքանչանալով գործով՝ երկրպագես Ստեղծողին, իսկ ոմանք, Արարչին թողնելով, երկնքին են երկրպագում, և այդ՝ իրենց իսկ անփութությունից ու անմտությունից: Բայց ի՞նչ եմ ասում արարածի ու անդամների մասին: Ի՞նչը կարող է փրկավետ

լինել խաչից առավել: Բայց և այս խաչը տկարների համար գայթակղություն եղավ: Քանզի. «Կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծո զորություն» (Ա Կոր. Ա 18), և դարձյալ՝ «Մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին՝ ի գայթակղություն հրեաների և ի հիմարություն հեթանոսների» (Ա Կոր. Ա 23): Ո՞վ Պողոսից ու առաքյալներից առավել լավ ուսուցիչ ունի, բայց նույն առաքյալները շատերի համար մահվան հոտ եղան. «Ոմանց՝ մահվան հոտ, որ տանում է դեպի մահ, և ոմանց՝ կենդանության բույր, որ տանում է դեպի կյանք» (Բ Կոր. Բ 16): Տեսնո՞ւմ ես, որ տկարը Պողոսից էլ է վնասվում, իսկ զորեղը սատանայից էլ չարիք չի կրում:

Դ. Կամենո՞ւմ ես, խոսենք Քրիստոսի մասին: Ի՞նչը կհավասարվի այն փրկությանը, ի՞նչն է օգտակար Նրա գալուստից: Բայց այս փրկական, բարերար գալուստը շատերի համար տանջանքների ավելացում եղավ: «Դատաստանի համար եկա այս աշխարհը, որպեսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն, և ովքեր տեսնում են, կուրանան» (Հովհ. Թ 39): Ի՞նչ ես ասում. լույսը կուրության պատճա՞ռ եղավ: Ոչ: Տկար աչքերը չկարողացան ընդունել հոգու լույսը: Տեսնո՞ւմ ես, որ տկարը ամեն բանից վնասվում է, իսկ զորեղը ամեն բանից օգուտ է ստանում, քանի որ ամենուր պատճառը հոժարությունն է, ամենուր իշխում է կամքը:

Իսկ սատանան, եթե ուզում ես իմանալ, նույնիսկ օգտակար է մեզ, միայն թե մենք կարողանանք ճիշտ վարվել նրա հետ: Այդժամ նա մեզ մեծապես կօգնի, և մենք քիչ բան չենք շահի: Այդ մենք բազում անգամ ցույց տվեցինք Հոբի օրինակով, բայց այդ կարող ենք իմանալ նաև Պողոսից: Քանզի նա, գրելով արյունապղծի մասին, այսպես է ասում. «Մատնեցե՛ք այդպիսի մեկին սատանային՝ նրա մարմնի կորստյան համար, որպեսզի նրա հոգին փրկվի» (Ա Կոր. Ե 5): Ահա սատանան եղավ փրկության պատճառ, բայց ոչ իր բարքով, այլ առաքյալի արվեստով: Ինչպես որ բժիշկները, իժերին բռնելով և

նրանցից կտրելով վտանգավոր անդամը, այդ թունավոր կենդանիներից դեղ են պատրաստում, այդպես արեց նաև Պողոսը. սատանայի պատճառած տառապանքները նա վերցրեց, իսկ մնացածը թողեց: Եվ որպեսզի դու իմանաս, որ (այստեղ) սատանան չէր փրկության պատճառը, որ նա ջանում էր կորստյան մատնել և կուլ տալ մարդուն, իսկ առաքյալը իր իմաստությամբ կտրեց նրա ծնոտը, լսի՛ր, թե կորնթացիների երկրորդ թղթում ինչ է ասում նույն պոռնկացողի մասին. «Դուք պետք է ներեք նրան և մխիթարեք, որպեսզի չափազանց տրտմությունից չխորտակվի նա: Ուստի աղաչում եմ ձեզ՝ նրա հանդեպ վերստին սեր ցույց տալ... որպեսզի չլինի թե սատանան առավելություն ունենա մեզ վրա» (Բ Կոր. Բ 7-8, 11), այսինքն՝ շտապե՛ք գազանի կոկորդից հափշտակել մարդուն: Առաքյալը բազում անգամ օգտվեց սատանայից՝ իբրև դահճից, իսկ դահիճները հանցավորներին տանջում են ոչ ինչպես իրենք են կամենում, այլ ինչպես դատավորներն են հրամայում, քանզի դահիճների համար օրենք է պատժել ըստ դատավորների հրամանի:

Տեսնո՞ւմ ես՝ ինչպիսի արժանավորության բարձրացավ Պողոսը. մարմին հագած ունենալով՝ տնօրինեց անմարմնին՝ իբրև դահճի. թեպետև բոլորի Տերը սատանային Հոբի մասին ասում է. «Դիպիր նրա մարմնին, բայց հոգուն ձեռք չտաս» (տե՛ս Հոբ Բ 6)՝ նրան չարչարելու չափ ու սահման տալով, որպեսզի հանդուգն գազանը չափազանց անամոթաբար չհարձակվի նրա վրա, նույնն էլ առաքյալն է անում՝ պոռնկացողին սատանայի ձեռքը մատնելով, «որպեսզի նրա հոգին ապրի» (Ա Կոր. Ե 5), այսինքն՝ հոգուն մի՛ մոտենա: Տեսնո՞ւմ ես ծառայի իշխանությունը:

Արդ, այսուհետ մի՛ վախենա սատանայից, թեպետև անմարմին է, բայց ընկավ, իսկ ընկածներից տկար ոչինչ չկա, ինչպես որ չկա ավելի զորավոր նրանից, ով Աստծո առջև համարձակություն ունի, թեպետև նա մահկանացու մարմին հագած լինի:

Ե. Այս ամենն ասվեց իմ կողմից ոչ թե, որպեսզի սատանային ազատեմ մեղադրանքից, այլ որպեսզի ձեզ ազատեմ անհոգությունից: Նա հույժ կամենում է, որ մեր մեղքերի պատճառը իրեն համարենք, որպեսզի սնվելով այդ հույսերով և ամեն տեսակի մեղքեր գործելով՝ մենք մեծացնենք մեր պատիժները և թողություն չգտնենք՝ պատճառը նրան համարելով, ինչպես պատահեց Եվային: Բայց մենք այդ չանե՛նք, այլ ճանաչենք ինքներս մեզ, ճանաչենք մեր վերքը, որպեսզի կարողանանք դրա վրա դեղ դնել, քանզի հիվանդությունը չիմացողը չի հոգում այն բժշկելու մասին:

Մեղանչեցինք բազում անգամ, գիտեմ և ես, բոլորս էլ սպառնալիքների տակ ենք, բայց թողությունից զրկված չենք, ապաշխարությունից զրկված չենք, քանի որ դեռևս կռվի դաշտում ենք և ապաշխարության սխրանքների մեջ: Ծե՞ր ես, հասել ես վերջին ճանապարհդ գնալո՞ւն, մի՛ կարծիր, թե զղջումը վերցված է քեզնից, հիշի՛ր ավազակին, ով փրկվեց խաչի վրա: Ի՞նչն էր կարճ այն պահից, որում նա պսակ ստացավ, և սակայն այդ բավական եղավ նրա փրկության համար: Երիտասա՞րդ ես, մի՛ վստահիր երիտասարդությանդ, մի՛ կարծիր, թե քո առջև բավական ժամանակ կա ապրելու, քանզի «Տիրոջ օրը գողի պես է գալու» (Ա Թեսաղ. Ե 2):

(Աստված) մեր վախճանի (օրը) անհայտ դարձրեց, որպեսզի մենք հայտնի փութաջանություն ու զգուշավորություն ցուցաբերենք: Ամեն օր չե՞ս տեսնում անժամանակ հափշտակվածներ: Դրա համար է պատվիրում՝ ասելով. «Մի՛ հապաղիր քո մեղքերից դառնալ դեպի Տերը, որպեսզի մեղքերիդ մեջ չմեռնես» (Սիրաք Ե 8): Ծերը թող այն պատվերին հետևի, երիտասարդը՝ այս խրատին: Բայց դու ապահովության մե՞ջ ես, դու հարուստ ես և զվարճանո՞ւմ ես հարստությամբ, քեզ չի՞ պատահում ոչ մի դժնդակ բան: Լսի՛ր, թե ինչ է ասում Պողոսը. «Երբ ասեն, թե խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ հանկարծակի վրա կհասնի նրանց կործանումը» (Ա Թեսաղ. Ե 3): Մեր գործերը փոփոխական են, մենք մեր վախճանի տերը չենք, լինե՛նք տերերը առաքինության. մեր Տերը մարդասեր է:

Զ. Կամենո՞ւմ եք, կասեմ ապաշխարության ճանապարհները: Դրանք շատ են, տեսակ-տեսակ և բազմազան, և բոլորն էլ դեպի երկինք են տանում: Ապաշխարության առաջին ճանապարհը մեղքերի դատապարտությունն է, քանզի. «Նախ դու խոստովանի՛ր քո անօրենությունները, որ արդարացվես» (Ես. ԽԳ 26): Այդ մասին և մարգարեն է ասում. «Ասացի, թե կխոստովանեմ մեղքերն իմ, և դու թողություն կտաս իմ մեղքերի ամբողջ ամբարշտությանը» (Սաղմ. ԼԱ 5): Դու նույնպես դատապարտիր քո մեղքերը. այդ բավական է Տիրոջը՝ քեզ արդարացնելու, քանի որ իր մեղքերը դատապարտողը չի շտապում կրկին ընկնել դրանց մեջ: Արթնացրո՛ւ քո մեջ քո խղճմտանքը դատապարտողին, որպեսզի այնտեղ քեզ դատապարտող չունենաս: Ապաշխարության մի բարի ճանապարհը սա է: Կա նաև մեկ ուրիշը՝ ոչ պակաս սրանից. վրեժ չլուծել թշնամիներից, զսպել բարկությունը, ներել ծառայակիցների մեղքերը. այդժամ կներվեն նաև Տիրոջ դեմ գործված մեր մեղքերը: Ահա և մեղքերից մաքրվելու երկրորդ ճանապարհը: Քանզի. «Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների» (Մատթ. Զ 14):

Կամենո՞ւմ ես ուսանել ապաշխարության երրորդ ճանապարհը. այն սրտի խորքից բխող ջերմ ու սրտալի աղոթքն է: Զտեսա՞ր այն այրիին, որ անամոթ դատավորին դեպի իրեն դարձրեց (տե՛ս Ղուկ. ԺԸ 3-5), իսկ դու ընդունող Տեր ունես՝ հանդարտ ու մարդասեր: Նա իր թշնամու դեմ (իր դատը տեսնել) էր խնդրում, դու ոչ թե թշնամուդ դեմ (դատդ տեսնել) ես խնդրում, այլ քո փրկության համար:

Եվ եթե ուզում ես չորրորդն էլ ուսանել, կասեմ, որ ողորմությունն է, քանզի այն ունի մեծ ու անպատմելի զորություն: Նաբուգոդոնոսորին, ով գործեց բոլոր տեսակի մեղքերն ու պղծությունները, Դանիելն ասաց. «Արքա՛, թող իմ խորհուրդը հաճելի թվա քեզ, քո մեղքերը քավի՛ր ողորմությամբ, և քո անօրենությունները՝ աղքատներին գթալով» (Դան. Դ 24): Ի՞նչը կկարողանա համեմատվել այդ մարդասիրության հետ. անհամար մեղքերից, այնքան անօրենություններից հետո մեղավորին թողություն է խոստանում, եթե նա մարդասեր լինի իր ծառայակիցների նկատմամբ:

Նվաստանալն ու խոնարհամտությունը նույնպես ոչ պակաս, քան բոլոր ասվածները, ջնջում են մեղքերը: Վկա՝ մաքսավորը, ով ոչ մի բարի գործ չուներ ասելու, այդ ամենի փոխարեն խոնարհությունն ընծայեց և հեռացրեց իր մեղքերի ծանր բեռը (տե՛ս Ղուկ. ԺԸ 13):

Ահա ցույց տվեցինք ապաշխարության հինգ ճանապարհ. առաջին՝ մեղքերի դատապարտություն, երկրորդ՝ ներել բոլորի մեղքերը, երրորդ՝ աղոթքներ, չորրորդ՝ ողորմություն, հինգերորդ՝ խոնարհություն: Արդ, անզբաղ մի՛ մնա, այլ ամեն օր անցի՛ր այս բոլոր ճանապարհներով, քանի որ և՛ ճանապարհներն են դյուրին, և՛ դու պատճառ չես կարող բերել աղքատությունը. եթե անգամ բոլորից աղքատ լինես, կարող ես և՛ բարկությունը թողնել, և՛ խոնարհվել, և՛ հաբաժամ աղոթել, և՛ մեղքերդ դատապարտել. աղքատությունը չի խանգարի այս ամենն անելուն : Ի՞նչ եմ ասում այս մասին, երբ ապաշխարության այն ճանապարհին էլ, որում ծախում ենք ինչքերը (ողորմության ճանապարհի մասին է խոսքս), աղքատությունը ոչնչով չի խանգարում՝ մեզ ողորմություն տալու: Այս է ցույց տալիս (գանձանակ) գցված երկու խերևեչը (տե՛ս Մարկ. ԺԲ 42):

Այսուհետ, իմանալով մեր վերքերի բժշկությունը, հաճա՛խ գործածենք այս դեղերը, որպեսզի վերստին ճշմարտապես առողջանանք և համարձակությամբ վայելենք քահանայական սեղանից, փառքով հանդիպենք փառքի Թագավորին՝ Քրիստոսին, Որի հետ Հորը, միաժամանակ և Սուրբ Հոգուն փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

ԸՆԴԴԵՄ ԱՐԲԵՑՈՒԹՅԱՆ

ՔԱՐՈԶ ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ԱՌԱՋԻՆ ՕՐՎԱ

Մի կողմ դրեցինք պահքի բեռը, բայց չհեռացնենք պահքի օգուտը. հնարավոր է և՛ բեռը վայր դնել, և՛ պտուղներ քաղել: Զարչարանքն անցավ, բայց ուղղվելու համար փութաջանությունը թող չանցնի, հեռացան գնացին պահքի օրերը, բայց թող մնա երկյուղածությունը. ավելի ճիշտ՝ պահքը չանցավ: Բայց մի՛ վախեցեք, այս ամենն ասելով՝ մեկ ուրիշ քառասնօրյակ չեմ քարոզում ձեզ, այլ ձեզ պատվիրում եմ նույն առաքինությունը. մարմնավոր պահքն անցավ, բայց չանցավ հոգևոր պահքը. սա ավելի լավ է, քան այն, և այն սրա համար եղավ: Ինչպես երբ պահք էիք պահում, ձեզ ասացինք, որ կարելի է պահելով չպահել, այդպես էլ հիմա, երբ չեք պահում, ձեզ ասում եմ, որ կարելի է պահք չպահելով՝ պահել: Թերևս առակ թվա ասածս. մեկնեմ խոսքս:

Ինչպե՞ս կարելի է պահելով չպահել. երբ մեկը հեռու է մնում կերակուրներից, բայց չի հեռանում մեղքերից: Ինչպե՞ս կլինի չպահելով պահել. երբ մեկը վայելի կերակուրները, բայց մեղքերին չմոտենա: Սա շատ ավելի լավ է, քան այն պահքը. ոչ միայն ավելի լավ է, այլև ավելի թեթև. նրա համար շատերը մարմնական հիվանդություններն են պատճառ բերում, մարմնի դժնդակ ցանը: «Քոսով պատվածս, ասում է, առանց լողանալու չեմ դիմանում», «Պարզ ջուր խմելն ապականում է ինձ», «Բանջար ուտել չեմ կարող»: Շատերից էի բազում այսպիսի խոսքեր լսում: Բայց այս պահքի ժամանակ այսպիսի բաներ ասել հնարավոր չէ: Վայելի՛ր բաղնիքը, հաղորդակի՛ց եղիր սեղանին, չափավոր գինի խմի՛ր, եթե կա-

մենում ես միս ուտել, ոչ ոք չի արգելում, մարմնական բոլոր կերակուրները վայելի՛ր, միայն մեղքերից հեռո՛ւ մնա:

Տեսա՞ր, որ այս պահքը դյուրին է բոլոր պահքերից. ոչ էլ մարմնի տկարությունները պատճառ բերելու [առիթ կա]. հոգու մաքրությունն է էականը: Հնարավոր է գինի չխմելով հարբել և գինի խմելով՝ ողջախոհ լինել: Իսկ թե ինչ է առանց գինու հարբելը, լսի՛ր մարգարեին, որ ասում է. «Վա՜յ ձեզ, որ հարբել եք, բայց ոչ գինով» (տե՛ս Ես. ԻԸ 1): Իսկ ինչպե՞ս կարելի է հարբել առանց գինու. երբ ախտին խառնում են առաքինի դիտավորություններ: Հնարավոր է նաև գինի խմելով՝ չհարբել. եթե այդպես չլիներ, մի՞թե Պողոսը կհրամայեր անել այդ՝ Տիմոթեոսին այսպես գրելով. «Մի քիչ էլ գինի խմիր ստամոքսիդ հիվանդության պատճառով» (տե՛ս Ա Տիմ. Ե 23): Քանզի հարբելն այլ բան չէ, քան բնական մտքից հեռացում, խորհուրդների շեղում, մտքի ամայություն, իմաստության պակասություն: Այդ ամենին հասցնում է ոչ միայն գինով, այլ նաև բարկությամբ և անարժան ցանկություններով հարբելը: Ինչպես, օրինակ, ջերմ առաջացնում է տքնությունը, ջերմ առաջացնում են նաև չարչարանքը, տրտմությունը, ապականված մաղձը. պատճառները տարբեր են, բայց հիվանդությունը մեկն է. այդպես էլ գինով հարբելն է անում, անում են նաև ցանկությունը, տրտմությունը, սնափառությունը. զանազան են պատճառները, բայց հիվանդությունը և ախտը նույնն են:

Հեռո՛ւ մնացեք հարբեցողությունից. չեմ ասում՝ հեռո՛ւ մնացեք գինուց, այլ հեռացե՛ք հարբեցողությունից, որովհետև գինին չէ, որ հարբեցողության է տանում, այլ չափն անցնելը. [գինին] Աստծու արարածն է, իսկ Աստծու արարածը չարիք չի պատճառում, հարբեցողության տանում է չար կամքը: Եվ որ կարելի է նաև այլ կերպ հարբել և ոչ գինով միայն, լսի՛ր, թե ինչ է ասում Պողոսը. «Մի՛ հարբեք գինով» (Եփես. Ե 18)՝ ցույց տալով, թե կա այլ տեսակի հարբեցողություն: «Մի՛ հարբեք գինով. դրա մեջ պագշոտություն կա» (Եփես. Ե 18). սքանչելի կերպով մեկ խոսքով ամեն տեսակի հարբեցողության ամբաստանությունն արեց:

Ի՞նչ են նշանակում. «Մի՛ հարբեք գինով. դրա մեջ պագշոտություն կա» խոսքերը: Պագշոտած մանուկներ անվանում ենք նրանց, ովքեր, ստանալով հայրական ժառանգությունը, հանկարծ ամեն բան դուրս են մղում և չխորհելով, թե երբ և ում է հարկ և արժան տալ, անմտաբար անառակներին ու իգացողներին են բաժանում իրենց հագուստները, ոսկին, արծաթը և ամբողջ հայրենի հարստությունը: Այսպիսին է հարբեցողությունը. իբրև պագշոտ մի բան՝ ըմբռնում է հարբեցողների միտքը, գերում է նրանց բոլոր խորհուրդները և նրանց ամբողջ իմաստությունը բռնադատում՝ առանց [թողնելու] խորհել և առանց արդարության: Նա, ով հարբում է, չգիտի, թե որն է պատշաճ ասել, և որի մասին լռել, այլ հարաժամ անդուռ է նրա բերանը. նրա վրա չկա փականք, և ոչ էլ պահապան [կա] նրա շրթունքներին: Հարբածը չգիտի տնօրինել խոսքերը, չգիտի հավաքել իր առատ մտքերը, չգիտի՝ որն ամբարել և որը ծախսել, այլ այդ ամենը ծախսում ու վատնում է: Հարբեցողությունը կամավոր [ինքնա]սպանություն է, խորհուրդների մատնություն, հարբեցողությունը ծիծաղելի թշվառություն է, այպանելի հիվանդություն, անբժշկելի դիվահարություն, դժնդակագույն խելագարություն:

Ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչու է հարբածը դիվահարից չար: Դիվահարին խղճում ենք, իսկ նրան ատում, դիվահարին ցավակցում ենք, սրա վրա բարկանում ու զայրանում: Ինչո՞ւ: Որովհետև այն անիրավություն, իսկ այս ախտը թուլամորթություն է, այն թշնամու դավաճանություն է, իսկ սա՝ խորհուրդների դավաճանություն. հարբածը չարչարվում է նույն դիվահարի նման. նրա նման ծանրաշարժ է դառնում, նրա նման թմրում է, նրա նման շրջում է բիբերը, նրա նման ընկնում, մնում է գետնին, նա իր բերանից փրփուր է արձակում, սա՝ անտանելի գարշահոտությամբ լցված նեխած լորձ, այդպիսին իր բարեկամների համար սրտի կսկիծ է, թշնամիների համար՝ ծաղրանք, ծառաների համար՝ արհամարհելի, կնոջ համար՝ անվայելուչ, բոլորի համար՝ բեռ, անասունից առավել անասուն. անասունները խմում են այնքան, որքան

ծարավ են, և անհրաժեշտով դադարեցնում են փափագը, բայց նա անարգել անցնում է ցանկություններից և անբանականներից անբանական է դառնում: Եվ առավել դժնդակն այն է, որ այնքան չար ախտով և այնպիսի թշվառությամբ լցված՝ չեն կարծում, թե բամբասվում են: Հարուստների սեղանի մոտ հակառակություն է, բայց նրանց անամոթության պատճառով հանդիսություն է նրանց համար. վիճաբանում են իրար հետ, թե ով առավել ծաղրուծանակի կենթարկի ինքնիրեն, ով առավել ուժից կընկնի, ավելի ճիշտ՝ ով կկործանի իր զորությունը, ով ավելի հաճախակի կբարկացնի բոլորի Տիրոջը: Պետք է տեսնել սատանայական տեսարանն ու հակառակությունը: Հարբածը առավել թշվառ է, քան մեռածը. մեռածն ընկած է անզգա, ո՛չ բարիք է գործում և ո՛չ չարիք, իսկ սա արբեցության շղթաներով կապված է բարի գործերի համար և միայն չար գործերի է ընդունակ և իր հոգին մարմնի մեջ թաղելով, ինչպես գերեզմանում, կրում է իր մեռած մարմինը: Տեսա՞ր, թե ինչու է նա դիվահարից թշվառ:

Ուզո՞ւմ ես, որ ասեմ ամենամեծն ու թշվառագույնը. հարբեցող մարդը երկնքի արքայություն մտնել չի կարող: Ո՞վ է այս ասում: Պողոսը. «Մի՛ խաբվեք, ո՛չ պոռնիկները, ո՛չ շնացողները, ո՛չ ագահները, ո՛չ հարբեցողները, ո՛չ իգացողները, ո՛չ արվամոլները, ո՛չ բամբասողները, ո՛չ հափշտակողները Աստծու արքայությունը չեն ժառանգելու» (Ա Կոր. Զ 9-10): Լսեցի՞ր, թե որ դասում կարգեց նրան՝ պոռնկացողների և կռապաշտների, շնացողների և հայհոյողների, ագահների և հափշտակողների: Եվ ի՞նչ է ասում՝ հարբեցողն ու կռապաշտը նո՞ւյնն են: Ո՛վ մարդ, ինձ մի՛ ասա այդ. աստվածային օրենքի մեջ կարդացի, ինձնից հաշիվ մի՛ պահանջիր: Հարցրո՛ւ Պողոսին, և նա քեզ կպատասխանի, թե նույնն են: Իսկ թե նույն տանջանքնե՞րն են կրելու, չեմ կարող ասել, բայց որ կռապաշտների նման երկնքի արքայությունից դուրս են ընկնելու, համարձակվում եմ ասել: Եվ արդ, այս ասածներից [զատ] ուրիշ ի՞նչ հաշիվ կպահանջես ինձնից մեղքերի չափով, երբ արքայությունից դուրս մնա, երբ զուրկ լինի

փրկությունից, երբ դեպի տանջանքներն առաքվի, ինչո՞ւ ես իմ առջև դնում մեղքերի չափը, լծակն ու կշիռը:

Դժնդակ է հարբեցողությունը: Ձե՛զ չեմ ասում, քա՛վ լիցի: Քանզի ամեն բանով համոզված եմ, որ ձեր մտքերը մաքուր են այդ ցավից ու ախտից. [ձեր] առողջության նշանակն է այստեղ փութով ժողովվելը, արթուն լսելությունը. ոչ մի հարբած չի կարող փափագել աստվածային խոսքերը: «Մի՛ հարբեք գինով. դրա մեջ զեխություն կա, այլ լցվեցե՛ք Հոգով» (Եփես. Ե 18). այս արբեցությունը բարի է: Լցրո՛ւ քո անձը Հոգով, որպեսզի հարբեցությամբ չխելագարվես, նախապես ըմբռնի՛ր մտքերդ ու խորհուրդներդ, որպեսզի այդ չար ու անամոթ ախտը տեղ չգտնի: Այդ պատճառով էլ չասաց՝ ընդունեցե՛ք Հոգին, այլ՝ լցվեցե՛ք Հոգով. միտքդ բաժակի պես ծայրեիծայր պիտի լցնես Հոգով, որպեսզի դրանից հետո բանսարկուն դրա վրա ոչինչ լցնել չկարողանա: Հոգին չպետք է ընդունել հենց այնպես, այլ Հոգով լցվել սաղմոսներով և օրհնություններով, հոգևոր երգերով, որոնցով լցվեցիք այսօր: Ուստիև համարձակվում եմ ձեր ողջախոհության պատճառով:

Մեզ խմելու տվեց բարի բաժակը, և այդ բաժակը ողջախոհ է դարձնում, այլ ոչ թե վատ. հոգևոր բաժակը, փրկական բաժակը, տերունական արյան բաժակը. այն չի հարբեցնում, այն ուժից չի գցում, այն արթնացնում է զորությունը, այն չի թուլացնում ջղերը, այլ ամրացնում է դրանք. այն արթնացնում է, այն պատկառելի է հրեշտակների, սարսափելի է դևերի, պատվական է մարդկանց համար և փափագելի Տիրոջը [փափագողներին]: Տե՛ս, թե ինչպես է խոսում Դավիթը այն հոգևոր բաժակի մասին, որ այս սեղանին է. «Իմ առջև սեղան պատրաստեցիր հալածիչներիս աչքերի դիմաց: Գլուխս յուղով օծեցիր, և քո բաժակն ինձ արբեցրեց անխառն գինու պես» (Սաղմ. ԻԲ 6): Տեսա՞ր բոլոր խորհուրդների կարգավորությունը՝ սեղան, յուղ և բաժակ. «Քո բաժակն ինձ արբեցրեց անխառն գինու պես»: Եվ որպեսզի արբեցության անունը լսելով՝ անմիջապես չվախենաս և

չհամարես, թե տկարության արարող եղավ, ավելացնում է, թե զորավոր է այն և հզոր: Նորօրինակ է այս արբեցության ուժը. ամբարում է, հզոր ու զորավոր դարձնում, որովհետև հոսեց հոգևոր Վեմից, չեղում չէ խորհուրդներից, այլ հավելումն հոգևոր խորհուրդների:

Ա՛յս գինով արբենք, [իսկ] նրանից հեռո՛ւ մնանք, որպեսզի չամաչեցնենք մոտակա տոնը, քանզի այս տոնը ոչ միայն երկրի վրայ է, այլ նաև երկնքում: Այսօր ուրախություն է երկրում, այսօր ուրախություն է երկնքում. քանզի եթե մեկ մեղավորի դարձով ուրախություն է լինում երկրի վրա ու երկնքում, ապա առավել մեծ ցնծություն է լինում երկնքում, [երբ] ամբողջ աշխարհն է հափշտակվում սատանայի ձեռքերից: Այժմ հրճվում են հրեշտակները, այժմ բերկրում են հրեշտակապետերը, այժմ սերովբեներն ու քերովբեները մեզ հետ միասին տոնում են այս տոնը, չեն ամաչում [տոնել] ծառայակիցների հետ, այլ ուրախակից են մեր բարիքներին: Քանզի թեպետև մերն է շնորհը, որ Տիրոջից է, բայց [դրան] հաւասար է նաև նրանց բերկրությունը: Ինչո՞ւ եմ ասում մեզ նման ծառաների[1] մասին, երբ Ինքը՝ մեր Տերը, չի ամաչում մեզ տոնակից լինել. ի՞նչ հարկ կա ասելու, թե՝ չի ամաչում, [երբ] բաղձում է մեզ հետ տոնել: Որտեղի՞ց է այս հայտնի: Ինքն ասաց. «Փափագելով ցանկացա այս տոնը ուտել ձեզ հետ» (տե՛ս Ղուկ. ԻԲ 15): Եվ եթե ցանկացավ մեզ հետ տոնել տոնը, [ուրեմն] քաջահայտ է, որ նաև՝ հարությունը:

Եվ արդ, երբ բերկրում են հրեշտակները, հրեշտակապետերը և երկնային բոլոր զորքերը, և մեզ տոնակից է լինում Ինքը՝ հրեշտակների Տերը, այդուհետև ինչպե՞ս կնվազի բերկրության խոսքը. ոչ մի աղքատ թող չտխրի աղքատության պատճառով, քանի որ հոգևոր է այս տոնը, ոչ մի հարուստ թող չամբարտավանանա հարստության պատճառով, որովհետև իր ունեցվածքից ոչինչ չի կարող ընծայել այս բերկրալի տոնին: Արտաքին և աշխարհիկ տոներին, ուր առատ է գինին, և լեցուն է սեղանը, ուր հարբեցողություն է ու շատակերություն, արբեցություն ու ծաղր, ուր ամեն տեսակի սատանայական խաղեր են, հիրավի, աղքատը տխուր է, իսկ հարուստը՝ ուրախ: Ինչո՞ւ: Որովհետև մեկը ճոխ սեղան է դնում և մշտապես վայելում շքեղության մեջ, իսկ աղքատը աղքատության պատճառով զրկվում է [այդ ամենից]: Բայց այստեղ այդպես չէ. մեկ սեղան է դրվում հարուստին ու աղքատին. եթե հարուստ ես, ոչինչ չի ավելանում, եթե աղքատ ես, ոչինչ քիչ չէ քո առջև, քանզի աստվածային է շնորհը: Նույնիսկ թագավորը, ով թագ է կրում և ծիրանիներ է հագնում, ում տրված է ամբողջ երկրի իշխանությունը, այն թագավորի ու աղքատի առջև, ով նստում է՝ ողորմություն ստանալու համար, մի սեղան է: Սրանք տերունական պարգևներն են. ոչ թե պատվավորներին է բաշխում հավասարությունը, այլ հոժարությանն ու մտքերին:

Ե՛ւ թագավորը, և՛ աղքատը նույն համարձակությամբ են գալիս դեպի այս սեղանը. դեպի այս սեղանն են գալիս նույն պատվով, աղքատը թերևս բազում անգամ ավելի մեծ պատվով: Ինչո՞ւ: Որովհետև թագավորը շատ բաներով է կաշկանդուած, բազում կողմերով մխրճված բյուր ալեկոծությունների մեջ, շատ է ընկնում մեղքերի մեջ, իսկ աղքատը հոգում է միայն անհրաժեշտ կերակուրների մասին. և ով առանց ինչքերի և խաղաղ կյանքն է ընտրում, իբրև նավահանգստում նստելով, մեծ համարձակությամբ է մոտենում այս սեղանին: Դարձյալ՝ աշխարհիկ տոների ժամանակ աղքատը տրտմում է, հարուստն ուրախանում ոչ միայն սեղանի, այլ նաև հանդերձների համար, քանի որ նրանք, որ նեղվում են սեղանի պատճառով, նույնին համբերում են նաև հանդերձների պատճառով: Երբ տեսնում է թանկարժեք պատմուճան հագած հարուստին, հիանում է և իրեն ամեն բանում թշվառ անվանում, իսկ այստեղ վերացվում են նաև այդ դժվարությունները, քանի որ փրկական Ավազանը բոլորի հագուստն է, քանի որ. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսին հագաք» (Գաղ. Գ 27):

[1] Հրեշտակների:

Մի՛ ամաչեցրեք այս տոնն արբեցությամբ. հարուստներին ու աղքատներին, ծառաներին ու տերերին նույն կերպ պատվեց, երախտահատույց լինենք Բարեգործին՝ Նրա՝ մեր հանդեպ բարերարության համար. բարի հատուցումը առաքինությունն ու արթուն հոգին են: Այս տոնն ու տոնախմբությունը կարիք չունեն ինչքերի ծախսի, այլ հոժարության ու բարի մտքերի. սրանք են ինչքերը, այստեղ մարմնավոր ոչինչ չի վաճառվում, այլ աստվածային խոսքերի ունկնդրություն է, հայրերի աղոթքներ, քահանաների օրհնաբանություն, միակամություն, խաղաղություն և ճայնակցություն. հոգևոր է պարգևը, հոգևոր է և վարձքը:

Տոնե՛նք այս տոնը, որում հարություն առավ Քրիստոս, քանի որ Հիսուս հարություն առավ և աշխարհին Իր հետ հարություն տվեց: Ինքը հարություն առավ՝ քակտելով մահվան կապանքները, և մեզ հարություն տվեց՝ լուծելով մեղքերի շղթաները: Ադամը մեղանչեց և մեռավ: Նոր ու հրաշափառագույն է այս. նա մեղանչեց ու մեռավ, Սա չմեղանչեց ու մեռավ: Ինչո՞ւ: Որպեսզի, նա, ով մեղանչեց ու մեռավ, անմեղ Մեռածի շնորհիվ կարողանա ազատվել մահվան բռնությունից: Ինչպես որ եթե մեկը պարտք ունենա և հատուցելու ոչինչ չունենալով՝ բռնվի, պարտք չունեցող մեկ ուրիշը հատուցի և ազատի պարտականին: Այդպես եղավ Ադամի հետ. պարտական էր Ադամ և բռնված սատանայի կողմից, բայց հատուցել չէր կարող: Քրիստոս ոչինչ պարտք չէր և չէր բռնվել սատանայի կողմից, բայց որովհետև կարող էր հատուցել [նրա] պարտքերը, եկավ և սատանայի կողմից բռնվածի համար հատուցեց մահվամբ, որպեսզի ազատի նրան:

Տեսա՞ր հարության բարությունը. մենք մեռանք կրկնակի մահվամբ, ապա ուրեմն կրկնակի՛ հարության հուսանք. Նա մեկնակի մեռավ, ուստիև մեկ հարությամբ հարություն առավ: Ինչո՞ւ: Ես ասում եմ՝ Ադամ մեռավ հոգով և մարմնով, մեռավ մեղքով և բնությամբ. «Այն օրը, երբ ուտեք այդ ծառի պտղից, կմեռնեք» (տե՛ս Ծննդ. Բ 17): Սակայն նա այդ

օրը բնությամբ չէ, որ մեռավ, այլ մեղքով, իսկ բնությամբ [մեռավ] հետո: Մեղքով մեռնելն առավել դժնդակ է. այն հոգու մահ է, սա՝ մարմնի: Բայց երբ լսում ես հոգու մահվան մասին, մի՛ կարծիր, թե հոգին մեռնում է, որովհետև այն անմահ է: Հոգու մահը հոգու մեղքերն ու պատիժներն են: Այս մասին Քրիստոս ասում է. «Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր սպանում են մարմինը, իսկ հոգին սպանել չեն կարող, այլ առավել վախեցեք նրանից, ով կարող է հոգին և մարմինը կորստյան մատնել գեհենի մեջ» [Մատթ. Ժ 28]: Կորստյան մատնվածը կա ուրեմն, բայց կորուսանողից դուրս է:

Բայց ինչպես ասում էի՝ մեր մահը կրկնակի է, ուրեմն պետք է և արժան է, որ նաև հարությունը կրկնակի լինի, իսկ Քրիստոսի մահը մեկն է, քանի որ Քրիստոս չմեղանչեց, բայց այդ մեկ մահն էլ մեզ համար էր. Նա մահվան պարտական չէր, քանզի մեղավոր չէր, այն պատճառով Նա հարություն առավ մեկ մահվանից, իսկ մենք՝ կրկնակի մահվամբ կրկնակի մեռածներս, երկու անգամ էլ հարություն ենք առնում. մեկը՝ այժմ՝ մեղքերից, քանզի մկրտությամբ Նրա հետ թաղվեցինք և մկրտության միջոցով Նրա հետ հարություն առանք. մեկ հարությունը սա է՝ մեղքերից հեռանալը, երկրորդ հարությունն այլ է՝ մարմնի հարությունը: Վստա՛հ եղիր, փոքրի համար տվեց մեծը. սա ավելի մեծ է, քան այն, քանզի ավելի մեծ է մեղքերից ազատ լինելը, քան մարմինն հարություն առած տեսնելը: Մարմինն ընկավ, որովհետև մեղանչեց. անկման սկիզբը մեղքերն էին, հարության սկիզբը՝ մեղքերից հեռանալը: Հարությո՛ւն առնենք մեծ հարությամբ՝ հեռու վանելով մեղքերով չար մահը, հանելով հին պատմուճանը. այսուհետ անհույս չդառնա՛նք նվազի պատճառով: Այս հարությամբ մենք արդեն հարություն առանք, երբ մկրտվեցինք. մկրտության երեկոյան արժանի եղանք այս գեղեցիկ տունկին: Նախքան երեկվա օրը Քրիստոս խաչվեց, բայց հարություն առավ անցյալ գիշերը: Նույնպես և սրանք երեկվա օրից առաջ բռնված էին մեղքերով, բայց այժմ հարություն առան. Նա մարմնով մեռավ և մարմնով հարություն առավ,

սրանք մեղքով էին մեռած և մեղքերից ազատվելով՝ հարություն առան:

Գարնանը երկիրը մեզ վարդեր, շուշաններ ու բոլոր մյուս ծաղիկներն է տալիս, իսկ ջրերը մեզ ցույց տվեցին պարգևներ, որոնք շատ ավելի վայելուչ գույներ ունեին: Մի՛ զարմանա [այն խոսքից], թե ջրից բուսեցին այս ծաղիկները, քանզի երկիրը նույնպես ոչ թե իր բնությունից, այլ Տիրոջ հրամանով է բույսեր բուսցնում: Ի սկզբանե ջրերին ընձեռեց կենդանի, շարժուն էակներ, քանզի. «Թող ջրերն արտադրեն կենդանության շունչ ունեցող զեռուններ» (Ծնն. Ա 20), և հրամանը գործ եղավ, և անշունչ բնությունը շնչավոր կենդանիներ դուրս հանեց: Այդպես նաև այժմ ջրերն հանում են ոչ թե կենդանության շունչ ունեցող զեռուններ, այլ հոգևոր շնորհներ: Այնժամ հանեցին անբան ու անխոս ձկներ, այժմ հանում են հոգևոր ու բանական ձկներ, առաքյալների կողմից որսված ձկներ, քանզի. «Եկե՛ք, ասում է, և ես ձեզ մարդկանց որսորդներ կդարձնեմ» (Մատթ. Դ 19, Մարկ. Ա 17), այս որսի մասին էր ասում: Նորօրինակ է, արդարև, այս որսը, քանի որ ձկնորսները ջրից են հանում, իսկ մենք ջուրն ենք նետում և այդպես որսում:

Մի ժամանակ հրեաներն ավազան ունեին: Սովորի՛ր, թե ինչ էր կարողանում [անել] այդ ավազանը, որպեսզի իմանաս հրեական աղքատությունն ու Եկեղեցու հարստությունը: Ջրի ավազան էր, [որի մեջ] հրեշտակն իջնելով՝ շարժում և ալեկոծում էր ջրերը, ապա՝ ջրերի ալեկոծվելուց հետո, մտնում էր հիվանդներից մեկը, բժշկվում էր, և անմիջապես սպառվում էր շնորհը ո՛չ թե Տվողի աղքատության, այլ ընդունողների տկարության պատճառով: Հրեշտակն իջնում էր ավազան և ալեկոծում էր ջրերը, և մի հոգի էր բժշկվում: Հրեշտակների Տերն իջավ Հորդանես, ալեկոծեց և բժշկեց ամբողջ աշխարհը: Այդ պատճառով էլ այնտեղ երկրորդը, իջնելով առաջինից հետո, չէր բժշկվում, քանզի հրեաների շնորհը տրվում էր տկարներին, աղքատներին, իսկ այստեղ առաջինից հետո՝ երկրորդին, երկրորդից հետո՝ երրորդին, երրորդից հետո՝ չորրորդին. եթե տասներորդին ու քսաներորդին, և եթե հարյուրերորդին ու բյուրերին, և եթե ամբողջ աշխարհը դցես Ավազանի մեջ, շնորհը չի վերջանա, պարգևը չի սպառվի, ջուրը չի կեղտոտվի. նորօրինակ է այս մաքրությունը, քանի որ մարմնավոր չէ: Մարմնավոր [լվացման] ժամանակ երբ ջրերը շատ-շատերին են լվանում, ավելի են ընդունում աղտը, իսկ այստեղ, որքան շատերին է լվանում, այնքան ավելի է մաքրվում:

Տեսա՞ր այս պարգևի մեծությունը: Պահի՛ր այս պարգևի մեծությունը, ո՛վ մարդ: Իշխանություն չունե՛ս առանց փոխվելու փրկվել. հաստատուն օրենք սահմանիր քեզ համար ամեն բանում. մրցասպարեզ և ճակատամարտ է այս կյանքը, և ով առաքինանում է, ժուժկալում է ամեն բանում:

Ասե՞մ քեզ օրինակ առաքինի և ապահով ուղղությունների. այն, ինչ կարծվում է, թե մեղք չէ, մեղք է ծնում. դրանցից ոմանք մեղքեր են, իսկ ոմանք՝ ոչ թե մեղքեր, այլ մեղքերի պատճառ և սկիզբ, ինչպես ծիծաղը բնությամբ մեղք չէ, բայց [նրանից] հաճախակի մեղքեր են ծնվում, քանզի ծիծաղից՝ ծաղրանք, ծաղրանքից՝ զազրաբանություններ, զազրաբանություններից՝ գարշելի [խոսքեր], իսկ գարշելի [խոսքերից]՝ պատիժներ ու տանջանքներ: Կանխավ արմատախի՛լ արա, որպեսզի վերացնես բովանդակ ախտը: Քանզի եթե պահենք փոքրը, երբեք չենք ընկնի արգելվածների մեջ: Այդպես նաև շատերին է թվում, թե կանանց տեսնելը անվնաս է, բայց դրանից անարգել ցանկություն է ծնվում, ցանկությունից՝ պոռնկություն, պոռնկությունից՝ պատիժներ ու տանջանքներ: Նույնպես և փափկանալը դժնդակ բան չի համարվում, բայց դրանից՝ հարբեցողություն, իսկ հարբեցողությունից՝ բյուր չարիքներ: Բոլոր կողմերից հեռացրե՛ք մեղքերի արմատը:

Դրա համար հանապազօր հաճախակի վայելեցեք ուսուցումս. դրա համար յոթ օր ըստ կարգի հավաքվում ենք՝ ձեզ մերձ դնելով հոգևոր այս սեղանը, որպեսզի դուք վայելեք աստվածային խոսքերը, ձեզ ամեն օր մարզելով՝ զինում ենք

ընդդեմ սատանայի, քանզի այժմ առավել զայրացած է, քան-
զի որքան մեծ է պարգևը, այնքան մեծ է և պատերազմը:
Քանզի եթե դրախտում տեսնելով՝ չհանդարտվեց, երկնքում
տեսնելով՝ ինչպե՞ս կհանդարտվի, ասա՛ ինձ: Զայրացրե-
ցիր գազանին, բայց մի՛ վախենա. առել ես մեծ զորություն՝
սրված սուսերը, նրանով խոցի՛ր օձին: Աստված թույլ տվեց,
որ նա քո դեմ զայրանա այն պատճառով, որ նրա փորձութ-
յամբ ճանաչես քո զորության ուժը: Եվ ինչպես որ լավ մար-
զիչը աղտեղված, ջղատված ու անխնամ մնացած ըմբիշին
մարզելով ու վարժեցնելով՝ առողջացնում է, այնուհետև չի
թողնում հանգստանալ, այլ հրամայում է մրցարան իջնել,
որպեսզի փորձով սովորեցնի նրան, թե որքան բան ամբարեց
նրա զորության մեջ, այդպես էլ Քրիստոս արեց. [եթե] Նա
կամենար, կվերացներ թշնամուն, բայց որպեսզի դու իմանաս
շնորհի գերազանցությունը՝ հոգևոր զորության մեծությունը,
որ ստացար մկրտության ժամանակ, թողնում է, որ նա պա-
տերազմի քեզ հետ, որպեսզի քեզ համար բազում պսակների
պատճառ պատրաստի և ընձեռի: Ուստիև յոթ օր ըստ կար-
գի վայելեցեք վարդապետությունս, որպեսզի ճշմարտապես
սովորեք կռիվը: Նաև հոգևոր հարսանիք է սա. հարսանիքի
առագաստները մնում են յոթ օր, մենք նույնպես խրատե-
ցինք ձեզ՝ յոթ օր մնալ այստեղ՝ աստվածային առագաստում:
Այնտեղ յոթ օր հետո (առագաստը) լուծվում է, իսկ այստեղ,
եթե ախորժես, մշտապես կմնաս աստվածային առագաս-
տում: Աշխարհիկ հարսանիքներում առաջին և երկրորդ ամ-
սից հետո հարսը այնքան ցանկալի չէ փեսայի համար, բայց
այստեղ այդպես չէ, այլ որքան ժամանակն առաջ է գնում,
այնքան ավելի ջերմ է դառնում Փեսայի սերը, այնքան ավե-
լի մտերիմ՝ կապը, այնքան ավելի հոգևոր՝ միաբանությու-
նը, եթե լինենք արթուն: Դարձյալ՝ մարմնական [կյանքում]
մանկությունից հետո ծերություն է, իսկ այստեղ՝ ծերության
մանկություն և մանկություն, որ երբեք ավարտ չունի, եթե
կամենանք: Մեծ է շնորհը, բայց առավել մեծ կլինի այն, եթե
կամենանք: Պողոսը նույնպես մեծ էր, երբ մկրտվեց, բայց

դրանից հետո առավել մեծ դարձավ. երբ նա քարոզում էր,
վախեցնում էր հրեաներին, ապա դեպի դրախտ հափշտակ-
վեց, երրորդ երկինք ելավ: Նույնպիսի իշխանություն ունենք
և մենք, եթե ախորժենք աճեցնել մկրտությամբ մեզ տրված
շնորհները, որոնք աճում ու փայլում են բարի գործերով և
մեզ ընծայում պայծառագույն լույսը: Եվ եթե այսպես լինի,
Փեսայի հետ մեծ համարձակությամբ կմտնենք առագաստ-
ները և կվայելենք Նրան սիրողներին սպասող բարիքները:
Թող մենք բոլորս հասնենք այդ ամենին մեր Տեր Հիսուս
Քրիստոսի շնորհներով և մարդասիրությամբ, Որին Հոր և
Սուրբ Հոգու հետ փառք հավիտյանս. ամեն:

ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉՈ՞Ւ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՆԴՅԱՆ ԱՎԱԶԱՆԸ ԹՈՂՈՒԹՅԱՆ [ԱՎԱԶԱՆ] ՉԻ ԱՍՎՈՒՄ, ԵՎ ՈՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ՈՉ ՄԻԱՅՆ ՍՈՒՏ ԵՐԴՎԵԼԸ, ԱՅԼԵՎ ԵՐԴՎԵԼՆ [ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ], ԱՆԳԱՄ ԵԹԵ ԱՐԴԱՐ ԵՆՔ ԵՐԴՎՈՒՄ

Որքան ցանկալի ու փափագելի է մեզ մեր նոր եղբայրների սերը: Եղբայրասերներ ձեզ նախքան երկունքն եմ կոչում և առաջ քան ծնունդը ձեր՝ մեզ հետ ազգակցությունն եմ ողջունում: Քանի որ հաստատապես գիտեմ, թե որքան պատվով պիտի գաք և ինչպիսի իշխանություն պիտի ստանաք. իշխանություն ստանալ պատրաստվողներին սովորաբար բոլորը հարգում են դեռ այդ իշխանությունը չստացած, որպեսզի ծառայությամբ նրանց մեջ ապագայում իրենց նկատմամբ բարեմտություն ամբարեն: Նույնը նաև ես եմ անում այժմ. որովհետև սոսկ ինչ-որ մի իշխանության չեք գալու, այլ դեպի նույն ինքը՝ արքայությունը, մանավանդ ոչ թե դեպի ունայն արքայությունը, այլ դեպի երկնային արքայությունը:

Ուստիև աղաչում ու պաղատում եմ ձեզ՝ հիշել ինձ, երբ կլինեք արքայության մեջ, և այն, ինչ Հովսեփն էր ասում տակառապետին. «Հիշի՛ր ինձ, երբ բարի լինի քեզ» (տե՛ս Ծննդ. խ 14), նույնը և ես եմ ասում ձեզ այժմ. «Հիշեցե՛ք ինձ, երբ բարի լինի ձեզ»: Երազների [մեկնության] համար հատուցում չեմ խնդրում, ինչպես նա, քանի որ երազներ մեկնելու չեկա ձեզ մոտ, այլ պատմելու երկնային բաները և բերելու ավետիսը այնպիսի բարիքների, «որոնք աչքը չտեսավ, ականջը չլսեց և մարդու սրտի մեջ չընկան» (Ա Կոր. Բ

9). դրանք են, որ Աստված պատրաստեց Իր սիրելիների համար: Հովսեփն այն տակառապետին ասում էր. «Երեք օր ևս, և փարավոնը քեզ կկարգի նույն տակառապետի պաշտոնին» (տե՛ս Ծնն. խ 13): Բայց ես ձեզ չեմ ասում. «Երեք օր ևս, և դուք թագավորի տակառապետը կդառնաք», այլ. «Երեսուն օր ևս, և ոչ թե փարավոնը, այլ երկնային Թագավորը ձեզ կկարգի վերին դավառում՝ ազատ Երուսաղեմում՝ այլ քաղաքում, որ երկնքում է»: Նա ասում էր, թե՝ «Դու բաժակը կտաս փարավոնի ձեռքը» (տե՛ս Ծն. խ 13), ես չեմ ասում, թե դուք բաժակը կտաք թագավորի ձեռքը, այլ թե՝ Ինքը՝ Թագավորը, ձեր ձեռքը կտա մեծ զորությամբ լցված ահավոր բաժակը, որ առավել պատվական է, քան բոլոր արարածները: Նվիրվածներից յուրաքանչյուրը լավ գիտի այդ բաժակի զորությունը, քիչ հետո կիմանաք նաև դուք:

Արդ, հիշեցե՛ք ինձ, երբ գաք այն արքայության մեջ, երբ ստանաք թագավորական պատմուճանը, երբ հագնեք ծիրանին, որ տերունական արյամբ է ներկված, երբ ձեր գլխին ընդունեք թագը, որ արեգակի ճառագայթներից առավել պայծառություն ունենալով՝ լույս է ճառագում դեպի բոլոր կողմերը: Սրանք են Փեսայի պարգևները. շատ ավելի մեծ, քան մենք արժանի ենք, արժանի Իր մարդասիրությանը:

Այդ պատճառով էլ այստեղից արդեն՝ մինչև այն աստվածայինին [հասնելը], երանի եմ տալիս ձեզ. ոչ միայն երանի եմ տալիս, այլ նաև գովում եմ ձեր բարեմտությունը, որ ոչ թե ծույլ մարդկանց նման վերջին շնչում լուսավորվեցիք, այլ արդեն իսկ այժմ բարեմիտ ծառաների նման ամենայն սիրով պատրաստվեցիք՝ հնազանդվելու Տիրոջը, ձեր հոգու պարանոցը մեծ հեզությամբ ու հոժարամտությամբ Աստծու լծի տակ դրեցիք, ընդունեցիք քաղցր լուծը և առաք թեթև բեռը:

Քանզի թեպետև նույնն է շնորհը ձեր և նրանց, ովքեր վերջում են մկրտության խորհուրդը ընդունում, բայց հոժարամտությունն ու պատրաստությունը նույնը չեն: Նրանք ստանում են խորհուրդը մահճում, իսկ դուք՝ Եկեղեցու դոգում, որ մեր բոլորի մայրն է: Նրանք՝ ողբալով ու արտասվելով,

դուք՝ ուրախանալով ու բերկրելով, նրանք՝ հառաչելով, դուք՝ գոհանալով, նրանք՝ ջերմից ծանրացած գլուխներով, դուք՝ մշտապես լցված հոգևոր վայելքով: Ուստիև այստեղ ամեն բան ձայնակից է պարգևին, այնտեղ՝ ամբողջովին հակառակ շնորհին. քանզի այնտեղ խորհուրդն ընդունողները մատնվում են ողբի ու սգի. նրանց շրջապատում են արտասվող մանուկները, տխուր բարեկամները, սգով լցված ծառաները, իսկ տունն այնպիսին է, ասես ձմեռային մութ օրեր են:

Եվ եթե բաց անես նրա իսկ՝ ընկածի միտքը, կտեսնես, որ ավելի տրտում է, քան նրանցը: Քանզի ինչպես ուժեղ քամիները, իրար դեմ փչելով, ծովը բաժանում են բազում մասերի, այդպես էլ իրեն պաշարած աղետների մասին մտքերը, մտնելով հիվանդի հոգու մեջ, բազում հոգսերի են բաժանում նրա սիրտը: Երբ տեսնում է իր երեխաներին, մտածում է նրանց որբության մասին, երբ նայում է կնոջը, նրա այրիությունն է հիշում, երբ նայում է ծառաներին, տեսնում է սպասավորությունից ամայի տունը, երբ դեպի իրեն է դառնում և իր ներկա կյանքն է հիշում, կսկծում է, տրտմության մեծ ամպով պատվում: Այսպիսին է հոգին նրանց, ովքեր պատրաստվում են մկրտվել իրենց վախճանի ժամանակ: Եվ ապա այս չփոթության ու խռովքի մեջ ներս է մտնում քահանան՝ հիվանդի համար ավելի ահավոր, քան նույն ինքը՝ տապը, իսկ նրա մոտ գտնվողների համար՝ ավելի ահավոր, քան մահը, քանի որ քահանայի ներկայությունը մեծ անհուսության նշան է համարվում, ոչ պակաս բժշկի ձայնից, որ նրան հեռացնում է կյանքից. և քահանայի մտնելը, որ հավիտենական կյանքի պատճառ է, մահվան նշանակ է երևում:

Բայց ամենամեծ չարիքի մասին ես դեռ չասացի. քանզի շատ անգամ հարազատների խռովքի և պատրաստության միջոցին հոգին, լքելով մարմինը, հեռանում է, իսկ շատերին նրա ներկայությունն էլ ոչ մի օգուտ չի բերում, որովհետև եթե խորհուրդն ընդունել պատրաստվողը չի ճանաչում իր մոտ գտնվողներին, չի լսում նրանց ձայները, չի կարողանում պատասխանել այն խոսքերով, որով վայել է դավանել

բոլորի Տիրոջը, այլ պառկած է իբրև անձայն փայտ կամ քար՝ ոչնչով չզանազանվելով մեռելներից, ի՞նչ օգուտ ունի այդ-պիսի անզգայության մեջ մկրտվելը:

Աստվածային ու ահավոր խորհուրդին մերձենալ պատ-րաստվողները պետք է լինեն արթուն ու սթափ, մաքուր աշ-խարհիկ բոլոր հոգսերից, պետք է լցված լինեն մեծ ողջախո-հությամբ և հոժարամտությամբ, մտքից դուրս հանած լի-նեն խորհուրդին օտար բոլոր օրենքները և բոլոր կողմերով պատրաստած տունը, որպեսզի պատրաստ լինի ընդունելու նույն Իրեն՝ Թագավորին:

Այսպիսին է ձեր մտքի պատրաստությունը, այսպիսին են ձեր խորհուրդները, ձեր հոգու հոժարությունը: Այսպիսի արժանա-վոր բարքի համար Աստծուն հնազանդություն ցույց տվողներդ Նրանից հատուցում սպասեցեք, որ վեր է ձեր ընծաներից:

Բայց քանի որ մեզ՝ ծառայակիցներիս, նույնպես վայել է մի ընծա բերել ձեզ՝ ծառայակիցներիդ, մատուցենք սա. ավե-լի ճիշտ՝ մերը չէ այն, այլ այն էլ է տերունական. «Որովհետև ի՞նչ ունես, որը չես ստացել. Եվ եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես» (Ա Կոր. Դ 7):

Արդ, կամենում էի ամեն բանից առաջ ասել՝ ինչո՞ւ արդ-յոք , զանց առնելով ողջ տարին, օրինադրեցին, որ հենց այս ժամանակ լինի Եկեղեցու մանուկների՝ խորհուրդի ընդու-նումը, և ինչո՞ւ սահմանեցին մեր վարդապետելուց հետո բոբիկացնելով և մերկացնելով՝ առանց հագուստների ու կո-շիկների՝ միայն մերկ ձայնակից լինել երդմնեցուցիչներին:

Այս ձևն ու ժամը մեր մեջ հաստատեցին ո՛չ իզուր և ո՛չ հենց այնպես, այլ այս երկուսն էլ խորհուրդ ունեն, և ես այս էի ուզում ձեզ ասել այժմ: Բայց տեսնում եմ, որ մեր զրույցը մեզ մեկ ուրիշ կարևորագույն բան ասելու է տանում. կարևոր է ասել, թե ինչ է մկրտությունը, ինչպես մտավ մեր կյանքի մեջ և որքան բարիքներ է մեզ ընծայում: Եվ եթե ախորժում եք, նախ խոսենք այս խորհրդավոր մաքրութեան անունների մասին: Այն մեկ անունով չէ, որ անվանվում է, այլ շատ և տարբեր:

Սա կոչվում է մաքրություն, վերստին ծննդյան ավազան,

«քանզի փրկեց մեզ, ասում է, վերստին ծննդյան աւազանով և Իր Հոգու թափմամբ» (Տիտ. Գ 5): Կոչվում է նաև լուսա-վորություն, և այս նույնպես ինքը՝ Պողոսը կոչեց. «Հիշեցե՛ք առաջին օրերը, երբ դեռ հազիվ լուսավորված՝ բազում տքնութ-յունների ու չարչարանքների համբերեցիք» (Եբր. Ժ 32): Եվ դարձյալ. «Մեկ անգամ մկրտվածների համար, որ ճաշակեցին երկնավոր պարգևներից, հաղորդակից եղան Սուրբ Հոգուն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարությամբ նորոգվել» (Եբր. Զ 4,6): Կոչվում է և մկրտութիւն. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղ. Գ 27): Կոչվում է և թաղում. «Մկրտությամբ թաղվեցինք նրա հետ մահվան մեջ» (Հռոմ. Զ 4): Կոչվում է թլպատութիւն. «Նրանով դուք անձեռագործ թլպատությամբ թլպատվեցիք հավատով՝ մերկանալով մեղանչական մարմնից» (Կողոս. Բ 11): Կոչվում է խաչ. «Մեր միջի հին մարդը խաչվեց նրա հետ, որպեսզի քայքայվի մեղքի մարմիը» (Հռոմ. Զ 6):

Սրանցից բացի, կան նաև բազում այլ անուններ, բայց որ-պեսզի մեր ամբողջ ժամանակը չծախսենք շնորհի անունները թվելու վրա, դառնանք առաջին անվանն ու խոսելով նրա նշանակության մասին՝ ավարտենք մեր խոսքը:

Այժմ սկսենք մեր վարդապետությունը փոքր-ինչ հեռ-վից:

Բոլոր մարդկանց համար կա ավազան, որ բաղնիքում է, որ լվանում է մարմնի աղտը: Կար նաև հրեական ավազան՝ առավել կարևոր, քան սա, բայց շատ ավելի ցածր, քան շնոր-հինը, քանզի այն նույնպես մաքրում էր մարմնական աղտը, բայց ոչ միայն մարմնականը, այլ նաև մոտենում էր տկա-րացած խղճմտանքին: Քանի որ կան շատ բաներ, որ բնութ-յամբ անմաքուր չեն, բայց տկար խղճմտանքի պատճառով անմաքուր են համարվում: Ինչպես որ մանուկներին նրանց տկար բնության պատճառով սարսափելի են թվում դիմակ-ները և ամեն տեսակի խամաճիկները[1], որոնք բնությամբ

[1] Գրաբար թարգմանության մեջ՝ խուճք, որի բացատրությունը չգտանք Հայ-կազեան բառգրքում:

ահավոր չեն, այդպես էլ այն, որի մասին ասացինք, ինչպես մեռած մարմնին կպչելը բնությամբ անմաքուր չէ, բայց երբ այդ պատահում է տկար խղճմտանք ունեցողին, անմաքուր է դարձնում մերձեցողին: Եվ որ բնությամբ անմաքուր չէ այդ, հայտնի դարձրեց նա, ով հրամայեց այդ՝ Մովսեսը՝ իր հետ բերելով մեռած Հովսեփին և մնալով մաքուր:

Ոչ բնությամբ, այլ խղճի տկարության պատճառով անմաքրության մասին մեզ ասում է նաև Պողոսը. «Ինքն իրենից չկա պիղծ բան, այլ ով կարծում է, թե մի բան պիղծ է, այդ իր համար է պիղծ» (Հռոմ. ԺԴ 14): Տեսնո՞ւմ ես, որ անմաքրությունը ոչ թե իրերի բնությունից է, այլ խորհուրդների տկարությունից: Դարձյալ. «Ամենայն ինչ մաքուր է, բայց անմաքուր է այն մարդու համար, ով ուտում է կասկածամտությամբ» (Հռոմ. ԺԴ 20). այդ է անմաքրության պատճառը:

Արդ, հրեական ավազանը մաքրում էր այդպիսի աղտը, իսկ չնորհի այս ավազանը մաքրում է ոչ այդպիսի, այլ իսկական անմաքրությունը, որն աղտեղություն է ամբարում մարմնի հետ միասին նաև հոգու մեջ. քանզի մաքուր է դարձնում ոչ թե նրանց, ովքեր դիպչում են մեռած մարմնին, այլ նրանց, ովքեր հպվում են մեռած գործերին:

Իգացողն ու պոռնիկը, կռապաշտը, բոլոր տեսակի վատթար գործերը գործողը, մարդկային բոլոր չարիքներն իր մեջ ունեցողը, մտնելով ջրի այս ավազանը, աստվածային ջրից կելնի առավել մաքուր, քան արեգակի ճառագայթները: Եվ որպեսզի ասածներս սուտ գովություն չհամարես, լսի՛ր Պողոսին, ով այս ավազանի զորության մասին ասում է. «Մի՛ խաբվեք, ո՛չ կռապաշտները, ո՛չ պոռնիկները, ո՛չ շնացողները, ո՛չ իգացողները, ո՛չ արվամոլները, ո՛չ կաշառակերները, ո՛չ գողերը, ո՛չ հարբեցողները, ո՛չ թշնամացողները, ո՛չ հափշտակողները Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (Ա Կոր. Զ 9-10): Իսկ ի՞նչ կապ ունի սա, կասես, վերևում ասվածների հետ: Կամենում է ցույց տալ, որ ավազանի զորությունը մաքրում է այդպիսիներին: Արդ, լսի՛ր. «Եվ դուք այդպիսին էիք. բայց լվացվեցիք, սրբվեցիք, արդարացվեցիք մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ և մեր Աստծո Հոգով» (Ա Կոր. Զ 11):

Մենք խոստացանք ձեզ ցույց տալ, որ դուք, ավազանին մերձենալով, կմաքրվեք բոլոր չարիքներից, իսկ այս խոսքը ավելին ցույց տվեց. ոչ միայն մաքուր, այլ նաև արդար և սուրբ կլինեք, քանի որ չասաց միայն, թե՝ լվացվեցիք, այլ նաև՝ սրբվեցիք: Ի՞նչը կարող է լինել սրանից ավելի հրաշափառ, երբ առանց չարչարանքի, քրտինքի և բարի գործերի մարդ տեսնի արդարությունը եղած: Այսպիսին են մարդասեր Աստծո պարգևները. Նա արդարացնում է առանց քո ջանքերի: Եթե թագավորի նամակը՝ գրված մի քանի բառով, ազատ է արձակում բյուր մեղքերի պարտապանին, իսկ մյուսներին մեծ պատվի է բարձրացնում, ապա առավել ևս աստվածային ամենազոր Սուրբ Հոգին բոլոր չարիքներից կազատի, մեծապես կարդարացնի և մեծ համարձակությամբ կլցնի մեզ: Ինչպես որ կայծակը, ընկնելով ծովի անբավ խորության մեջ, անմիջապես հանգչում է և ծածկվելով առատ ջրերով՝ անհետանալ լինում, այդպես էլ մարդկային բոլոր չարիքները, երբ ընկնում են աստվածային աղբյուրների ավազանը, այն կայծակից ավելի արագ են ընկղմվում և անհետանում:

Եվ եթե այս ավազանը թողնում է մեր բոլոր մեղքերը, ապա ինչո՞ւ, կհարցնես, չի ասվում մեղքերի թողության կամ մաքրության ավազան, այլ՝ վերստին ծննդյան: Քանի որ ոչ միայն մաքրում է մեզ հանցանքներից, այլ այդ անում է այնպես, որպես թե մենք վերստին ենք ծնվում, քանզի մեզ վերստին առնում և ստեղծում է՝ ոչ կրկին հողից արարելով, այլ մեկ ուրիշ տարերքից՝ գործելով ջրի բնության մեջ:

Այն ոչ միայն լվանում է անոթը, այլ նրան ամբողջովին վերստին է ձուլում, քանզի թեպետև լվացվածը իսկապես մաքրվում է, բայց պահպանում հնի հետքերը և աղտեղության մնացորդներ, իսկ նա, ով ընկնում է ձուլարան և բոցով նորանում, բոլոր աղտեղություններն հեռացնում է և նոր արարվածի նման փայլ է արձակում՝ հնոցից դուրս բերվե-

լով: Արդ, ինչպես մեկը վերցնելով երկար ժամանակ ծխից, փոշուց ու ժանգից կեղտոտված ոսկե արձանը, վերստին ձուլի և մաքուր և փայլուն վերադարձնի մեզ, այդպես էլ Աստված, առնելով մեր բնությունը, որ ժանգոտվել էր մեղքերի ժանգով, մեր սխալների ծխով պատվել և կորցրել այն գեղեցկությունը, որ ի սկզբանե դրել էր նրա մեջ, վերստին ձուլում է այն՝ ընկղմելով ջրի՝ իբրև ձուլարանի մեջ, և արձակելով Հոգու շնորհները՝ մեզ այնտեղից հանում է նոր արարված, մինչև իսկ արեգակի ճառագայթներին հակառակվել կարողանալու և ավելի պայծառ երևալու չափ, խորտակում է հին մարդուն և նորագործում առավել պայծառ, քան առաջինն էր:

Այս խորտակման ու խորհրդավոր մաքրության մասին մեզ հայտնելով՝ մարգարեն կանխավ ասում էր. «Բրուտի անոթի պես կփշրես նրանց» (Սաղմ. Բ 9): Եվ որ խոսքն այստեղ հենց այս մասին է, մեզ պարզ ցույց են տալիս հետևեալ խոսքերը. «Իմ որդին ես դու, ես այսօր ծնեցի քեզ: Խնդրի՛ր ինձնից, և ես քեզ հեթանոսներին ժառանգություն կտամ և իշխանություն՝ երկրի բոլոր ծագերում» (Սաղմ. Բ 7-8): Տեսա՞ր, թե ինչպես հիշեց հեթանոսների Եկեղեցին և ասաց ամենուր Քրիստոսի թագավորությունը կարգելու մասին: Ապա ասում է. «Երկաթե գավազանով կհովվես նրանց»՝ ոչ թե ծանր, այլ զորեղ: «Բրուտի անոթի պես կփշրես»: Ահա խորհրդավոր իմաստով ներկայացվում է և ավազանը, քանզի չասաց՝ խեցեղեն անոթ, այլ՝ բրուտի անոթ: Տեսե՛ք՝ փշրուած խեցեղեն անոթները չեն կարող վերականգնվել, քանի որ մեկ անգամ են կրակի մեջ թրծվում, իսկ բրուտի անոթները խեցե չեն, այլ կավե, ուստիև արվեստագետի իմաստությամբ կարող են վերստին ստանալ իրենց կորցրած ձևը:

Այդ պատճառով էլ, երբ խոսում է անուղղելի աղետի մասին, օրինակ է բերում ոչ թե բրուտի, այլ խեցեղեն անոթը. այսպես՝ երբ կամեցավ մարգարեին և հրեաներին ուսուցանել, թե անուղղելի աղետների պիտի մատնի քաղաքը, հրամայեց խեցեղեն կուժ վերցնել և կոտրել ամբողջ բազմության առջև՝ ասելով. «Նույն կերպ էլ պիտի կորչի այս քաղաքը և պիտի խորտակվի» (տե՛ս Երեմ. ԺԹ 10-11): Իսկ երբ կամեցավ նրանց բարի հույսեր տալ, մարգարեին իջեցրեց բրուտի արհեստանոց և նրան ցույց տվեց ոչ թե խեցեղեն, այլ բրուտի ձեռքից վայր ընկնող կավեղեն անոթ, և ասաց. «Եթե այդ բրուտը վերցնում է փշրված անոթը և վերականգնում, մի՞թե ես առավել չեմ կարող ձեզ՝ վայր ընկածներիդ, վերականգնել» (տե՛ս Երեմ. ԺԸ 2-6), ոչ միայն կավեղեն եղածներին ուղղել վերստին ծննդյան ավազանով, այլ նաև Հոգու զորությունը ընդունած և ապա կործանվածներին ճշմարիտ ապաշխարության միջոցով հանել նախկին վիճակին:

Բայց այժմ ձեր՝ ապաշխարության մասին լսելու ժամանակը չէ, ավելի շուտ՝ թող երբեք ժամանակը չլինի այդպիսի դեղերի, այլ մշտապես եղեք, մնացեք և անարատ պահեք այն գեղեցկությունն ու պայծառությունը, որ պիտի ստանաք այժմ: Եկե՛ք փոքր-ինչ խոսենք նաև առաքինության մասին, քանզի ըմբիշների՝ կրթարանում ցած ընկնելը վտանգավոր չէ նրանց համար, որովհետև ընկերների միջև է մրցությունը, և նրանց ուսուցիչներն ամեն բան անում են նրանց համար:

Բայց երբ մրցության ժամանակը հասնի, երբ բացվի ասպարեզը, երբ հանդիսատեսները նստեն վերևում, երբ մոտենա հաղթողներին պարգևատրողը, այդժամ հարկավոր կլինի կա՛մ թուլանալով ընկնել և մեծ ամոթով հեռանալ, և կա՛մ ջանալ և հասնել պսակներին ու հաղթանակներին:

Այդպես էլ ձեզ համար թող այս օրերը նմանվեն կրթարանի, վարժանքների և ուսումնառության, և այս օրերին սովորենք հաղթել չար դևին, որովհետև մկրտվելուց հետո նրա հետ ենք մարտնչելու, սովորենք, թե որտեղ է նա ուժեղ, ինչպես կարող է մեզ հեշտությամբ վնասել, որպեսզի երբ մրցության ժամանակը հասնի, չզարմանանք ու չխռովվենք՝ տեսնելով նրա՝ մեզ համար նոր չարիքները: Այլ այժմվանից իսկ վարժվելով և սովորելով նրա խարդախությունը՝ համարձակությամբ սկսենք կռիվը նրա հետ:

Նա սովոր է մեզ խարդախել ամեն կերպ, մանավանդ լեզվով և բերանով, քանի որ մեզ խաբելու և կորստյան մատնելու ուրիշ ավելի հարմար գործիք չունի, ինչպես արգելք

չունեցող լեզուն և անդուռ բերանն են: Առավել հաճախ դրանցով ենք կործանվում, դրանցով չարիքի մատնվում: Եվ որ առավել դյուրությամբ լեզվի պատճառով ենք ընկնում, հայտնում է մեկը՝ ասելով. «Շատերն են ընկել սուսերի սայրից, բայց ոչ նրանց չափ, ովքեր ընկել են լեզվի երեսից» (Սիրաք ԻԸ 22): Եվ այս անկման դժնդակությունը ցույց տալով՝ նա ավելացնում է. «Լավ է ոտքից սայթաքել, քան լեզվից» (Սիրաք Ի 18): Այսինքն՝ ավելի լավ է ընկնել և խորտակվել մարմնով, քան ասել այնպիսի խոսք, որ կորստյան կմատնի մեր հոգին: Եվ ոչ միայն անկման մասին է խոսում, այլև պատվիրում է մեծպես ջանալ, որպեսզի չընկնես՝ ասելով. «Քո բերանին դուռ և նիգ դիր» (Սիրաք Ի 29), ոչ թե պատրաստենք դռներ ու կողպեքներ, այլ մեծ զգուշությամբ փակենք մեր լեզուն անվայել խոսքերի համար: Մեկ այլ տեղում դարձյալ ցույց է տալիս, թե մեր ջանքերի հետ միասին և մեր ջանքերից առաջ մենք կարիք ունենք նաև ի վերուստ օգնականության, որպեսզի կարողանանք մեր ներսում փակել այդ գազանին: Եվ մարգարէն, ձեռքերն առ Աստված բարձրացնելով, ասում է. «Իմ ձեռքերի կարկառումը՝ իբրև երեկոյան պատարագ: Պահապա՛ն դիր, Տեր, իմ բերանին և ամուր դուռ՝ իմ շրթներին» (Սաղմ. ՃԽ 2-3): Նա, ում խոսքերը ավելի առաջ մեջբերեցինք, դարձյալ ասում է. «Ո՞վ ինձ կտար պահապան իմ բերանի վրա և խորագիտության կնիք՝ իմ շուրթերին» (Սիրաք ԻԲ 33): Տեսնո՞ւմ ես, թե ինչպես էր նրանցից յուրաքանչյուրը վախենում այդպիսի անկումից, ողբում, խորհուրդներ տալիս և շատ աղոթում, որպեսզի լեզուն պահպանված լինի:

Հապա ինչո՞ւ, ասում են, Աստված մեր մեջ ի սկզբանե դրեց մեզ մահ բերող այդ գործիքը: Որովհետև այն նաև շատ մեծ օգտակարություն ունի, և եթե զգուշանանք, միայն օգտակար կլինի և ոչ երբեք՝ մահ: Լսի՛ր, թե ինչ է ասում նա, ով առաջինն ասաց այդ. «Մահն ու կյանքը լեզվի ձեռքին են» (Առ. ԺԸ 21): Քրիստոս նույնպես հենց այս է հայտնում՝ ասելով. «Քո խոսքերով պիտի արդարացվես և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. ԺԲ 37), քանզի լեզուն գտնվում է երկու վարքի մեջտեղում. և նրա տերը դու ես: Այդպես նաև սուրն է գտնվում մեջտեղում. եթե այն օգտագործես թշնամիների դեմ, քեզ համար փրկական խաչի գործիք կդառնա, իսկ եթե ինքդ քեզ հարվածես, ոչ թե երկաթի բնությունը, այլ քո անօրենությունը կլինի սպանության պատճառը: Իմացեք, որ լեզուն էլ է այդպես. մեր մեջ դրված սուր է այն, սրի՛ր այն՝ ամբաստանելու քո՛ մեղքերը և եղբորդ դեմ մի՛ ուղղիր և մի՛ վիրավորիր նրան: Այդ պատճառով էլ Աստված շրջապատեց այն կրկնակի պարսպով՝ ատամների պատով և շրթունքների պարսպով, որպեսզի հեշտությամբ և առանց հարցի դուրս չփսխեն մեր անպատշաճ խոսքերը: Արդ, սանձի՛ր այն դրանց ետևում: Եթե այն չի սանձվում, զգաստացրո՛ւ այն՝ նրա մարմինը մատնելով ատամներին՝ իբրև դահիճների, և հրամայի՛ր կծոտել այն. քանզի շատ ավելի լավ է, որ նա մեղանչելու պատճառով այժմ կծոտվի ատամներով, քան թե այն ժամանակ մի կաթիլ ջուր հայցի և տապակվի կրակի մեջ՝ չգտնելով մխիթարություն: Բայց նա սովորաբար բազում ուրիշ մեղքեր էլ է գործում՝ չարախոսելով, հայհոյելով, գարշելի խոսքեր արտաբերելով, զրպարտելով, երդվելով և սուտ երդվելով:

Բայց որպեսզի ամեն բան միանգամից ձեզ ասելով՝ չկաշկանդեմ ձեր միտքը, նախ առաջարկում ենք ձեզ մեկ օրենք՝ հեռու մնալ երդումից՝ առաջինն ասելով այս և զգուշացնելով, որ եթե երդումից (չեմ ասում՝ միայն սուտ երդումից, այլ նաև այն երդումներից, որ արդար գործերի համար են լինում) չփախչեք, եթե չփախչեք, ապա մենք ձեզ հետ այլևս չենք խոսի ոչ մի ուրիշ բանի մասին: Քանզի անմտություն կլինի, եթե գրագիտություն սովորեցնող ուսուցիչները երեխաներին ուրիշ դաս տան, մինչև չտեսնեն, որ առաջինը լավ տպավորվել է նրանց հիշողության մեջ, իսկ մենք սկսեցինք հաջորդները ուսուցանել նրանց, ովքեր չեն կարող ճշտորեն ասել առաջին դասը. սա այլ բան չէ, քան ծակ կարասի մեջ ջուր լցնել: Արդ, որպեսզի չփակեք մեր բերանը, մեծ նախանձախնդրություն ցուցաբերեք այս բանի նկատմամբ: Քանզի

խիստ դժնդակ մեղք և հույժ չար է այն, և առավել դժնդակ է այն պատճառով, որ դժնդակ չի թվում. ես վախենում եմ դրանից, քանի որ ոչ ոք դրանից չվախեցավ. անբժշկելի հիվանդություն է այն, քանի որ չթվաց, թե հիվանդություն է: Ինչպես պարզ զրույցը, որի մեջ բամբասանք չկա, այդպես էլ սա մեղք չի թվում. այս անօրենությունը կատարվում է մեծ համարձակությամբ, և եթե մեկը մեղադրում է այն, անմիջապես հետևում է ծիծաղ ու բազում ծաղրանք՝ ուղղված ոչ թե նրանց, ովքեր մեղադրվում են երդվելու համար, այլ նրանց, ովքեր ջանում են ուղղել այդ չարիքը: Այն բանի համար եմ ես շարունակական զրույց վարում այս մասին, որովհետև կամենում եմ վեր հանել արմատը, որ խորքում է, և վերացնել բազմաժամանակյա չարիքը. նկատի ունեմ ոչ միայն երդմնազանցությունը, այլև ամենաբարի երդումները:

Բայց, ասում են, այսինչ մարդը՝ հեզ և քահանայության մեջ կատարյալ, մեծ ողջախոհությամբ ու երկյուղով ապրող, երդվում է: Նրան մի՛ ասա հեզ, ողջախոհ, քահանայության մեջ կատարյալ. եթե կամենում ես, թող լինի Պողոսը, Պետրոսը կամ երկնքից իջած հրեշտակ, այդ ժամանակ էլ ես չեմ նայի նրա դեմքի արժանավորությանը: Քանի որ ես ոչ թե ծառայական, այլ իբրև թագավորական եմ կարդում երդման մասին օրենքը. երբ կարդացվում է թագավորի հրամանը, այդժամ դադարում է ծառաների ամեն տեսակի արժանիք: Եթե կարող ես ապացուցել, թե Քրիստոս հրամայեց երդվել, թե Քրիստոս չի պատժում դրա համար, ցո՛ւյց տուր այդ, և ես կհավանեմ: Բայց եթե Նա այնքան փութով արգելում է այդ և այնպիսի աչալուրջ զգուշություն է ցուցաբերում դրա նկատմամբ, որ երդվողներին դասում է չարի հետ. «Քանի որ, ասում է Նա, դրանից ավելին չարից է» (Մատթ. Ե 37), ապա ինչո՞ւ ես ինձ ցույց տալիս սրան կամ նրան: Աստված այս վճիռը քեզ բերում է ոչ թե քեզ նման ծառաների անփութությամբ, այլ Իր օրենքների հրամանով: «Ես հրամայեցի, կասի, հարկ էր և արժան էր հավանել, այլ ոչ թե առաջ բերել այսինչ մարդուն և ուրիշների մեղքերը քննել»:

Եթե մեծ Դավիթը մեծ մեղքեր գործեց, ապա, ասա՛ ինձ՝ մի՞թե այդ պատճառով մեզ համար անվտանգ են մեղքերը: Այլ հարկ է և արժան է զգուշանալ և նախանձախնդիր լինել սուրբերի առաքինությանը, իսկ ուր ծուլություն է և օրինազանցություն, այնտեղից պետք է փախչել մեծ փութով, քանզի գործ ունենք ոչ թե մեզ նման ծառաների, այլ Տիրոջ հետ, և Նրան հաշիվ պիտի տանք այն ամենի համար, ինչ արեցինք մեր կյանքի ընթացքում: Ուրեմն պատրաստվե՛նք այն դատաստանին. քանզի որքան էլ սքանչելի ու մեծ լինի նա, ով զանց է առնում այդ օրենքը, միևնույն է, Աստված պատժելու է նրան այդ հանցանքի համար հաստատված պատուհասով: Ոչ միայն հարկ և արժան է ցույց տալ, թե որքան մեծ մեղք է այդ, այլ նաև խորհուրդ տալ, թե ինչպես ազատվել դրանից: Դու ունես կին, ունես ծառաներ ու զավակներ, ընկերներ, ազգականներ ու հարևաններ, պատվիրի՛ր նրանց բոլորին պահպանել քեզ դրանից: Չար է սովորությունը, դժնդակ դայթակղություն, և դժվար է դրանից հեռու մնալը, այն հաճախ մեզ ակամայից և անգիտակցաբար նետում է ախտի մեջ: Այսպիսով, որքան ավելի գիտես սովորության զորությունը, այնքան շտապի՛ր ազատվել չար սովորությունից և փոխվի՛ր դեպի մյուսը՝ օգտակարը: Ինչպես որ այժմ վատ սովորությունը կարող է հաճախ ընկճել քեզ, չնայած այն բանին, որ դու ջանքեր ես թափում, պահում ես քեզ, զգուշանում ու հոգում ես, ապա այն ժամանակ, երբ փոխես քեզ բարի սովորության՝ չերդվելու, երբեք քեզ թույլ չես տա երդման մեղքի մեջ ընկնել նույնիսկ ակամայից: Արդարև, մեծ բան է սովորությունը և բնության զորությունն ունի: Այդ պատճառով էլ, որպեսզի զուր չչարչարվենք, հաստատենք մեր մեջ մեկ այլ սովորություն. խնդրենք մեր մերձավորներին, որ նրանք խորհուրդ տան և պատվիրեն չերդվել, և եթե գործես այդ մեղքը, հանդիմանեն քեզ, քանզի նրանց կողմից եղած քո պահպանությունը նաև նրանց համար կլինի խորհուրդ և ուղղվելու պատվիրան: Քանի որ ով երդվելու համար հանդիմանում է ուրիշին, ինքը հեշտությամբ չի

ընկնի նույն անդունդը. իսկ հաճախակի երդումները փոքր անդունդ չեն ոչ միայն այն ժամանակ, երբ դրանք վերաբերում են քիչ կարևոր բաների, այլ նաև այն ժամանակ, երբ վերաբերում են մեծ կարևորություն ունեցող բաների: Իսկ մենք երդվում ենք և՛ բանջարեղեն գնելիս, և՛ երկու դանգի համար վիճելիս, և՛ ծառայի վրա բարկանալիս, և՛ նրան սպառնալիս: Եվ ամեն անգամ Աստծուն ենք վկա բերում: Այդպիսի բաների համար չէիր համարձակվի վկա բերել որևէ ազատ մարդու, որ սոսկ աստիճան ունի, եթե հանդգնեիր, նրան անարգելու համար պատժի կենթարկվեիր: Իսկ երկնքի Թագավորին, հրեշտակների Տիրոջը վկայ ես բերում կերակուրի, փողի և դատարկ բաների մասին խոսելիս. հնարավո՞ր է տանել այդ:

Ինչպե՞ս կարող ենք ազատվել այդ չար սովորությունից. մեր շուրջը կանգնեցնելով այն պահապաններին, որոնց մասին ասացի, մեզ համար ուղղվելու ժամանակ սահմանենք, պատիժ սահմանենք, եթե այդ ժամանակի ընթացքում չուղղենք այն:

Իսկ որքա՞ն ժամանակ բավական կլինի ձեզ դրա համար: Ձեմ կարծում, թե հույժ արթուն, սթափ և իրենց փրկության համար տքնող անձանց անհրաժեշտ կլինի տասն օրից ավելի՝ ամբողջովին ազատվելու երդման չար սովորությունից: Եթե մենք այդ տասնօրյակից հետո էլ երդվենք, մեզ վրա մեծ պատիժներ ու տուգանքներ սահմանենք մեր հանցանքի համար:

Ինչպիսի՞ պատիժ: Ես չեմ սահմանում այն, այլ ձեզ եմ դարձնում ձեր կամքի տերը: Եթե մենք մեզ այսպես վերաբերվենք ոչ միայն երդվելու, այլ նաև բոլոր մյուս հանցանքների համար. մեզ համար ժամանակ սահմանենք և եթե երբևէ ընկնենք այդպիսի բաների մեջ, դատապարտենք մեզ դաժան պատիժներով, որպեսզի մաքուր գնանք մեր Տիրոջ մոտ, ազատվենք գեհենի կրակից և համարձակությամբ կանգնենք Քրիստոսի ատյանի առջև, Որին թող մենք բոլորս հասնենք շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որի հետ Հորը և Սուրբ Հոգուն փառք հաւիտյանս հավիտենից. ամեն:

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՍԱԾ ՃԱՌԸ՝ ՄԱՔՍԱՎՈՐԻ ԵՎ ՓԱՐԻՍԵՑՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԱՂՈԹԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՈՒՄ

Կա ապաշխարության երրորդ ճանապարհ, որպեսզի բազում ճանապարհների մեջ դյուրությամբ փրկություն գտնեն: Եվ ո՞րն է երրորդ ճանապարհը, որով մարդը փրկություն է գտնում:

Առաջին ճանապարհը հավատն է, երրորդը՝ աստվածպաշտության կրոնը, իսկ երրորդը խոնարհությունն է: Այս մասին վկայում է Քրիստոս՝ ասելով. «Երկու մարդ ելան տաճար՝ աղոթելու. մեկը՝ փարիսեցի, և մյուսը՝ մաքսավոր» (Ղուկ. ԺԸ 10): Փարիսեցին իր գործած արդարությունների մասին ասաց պարծանքով և հպարտացավ: Իսկ մաքսավորը իր գործած մեղքերն ասաց խոստովանողաբար և խոնարհությամբ, ուստիև քավվեց ու արդարացավ:

Պետք է իմանալ, որ փարիսեցին, սուտ չասաց, այլ ճշմարտությունն ասաց, քանի որ օրինապահ էր, մեղքերից մաքուր, առաքինասեր կենցաղավարությամբ, շաբաթը երկու անգամ ծոմ էր պահում և իր բոլոր ստացվածքներից տասանորդ տալիս: Բայց երբ հպարտացավ ու պարծեցավ, մեղադրվեց. մտավ գառ ու աղավնի և ելավ շուն և ագռավ:

Իսկ մաքսավորը, որ խոնարհությամբ խոստովանեց իր մեղքերը, քավվեց ու արդարացվեց. մտավ շուն և ագռավ և ելավ գառ և աղավնի, քանզի. «Ով բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա» (Մատթ. ԻԳ 12): Տե՛ս փարիսեցու հպարտությունը, թե որքան բարձրությունից այն խոնարհեցրեց նրան, բարիքից զրկեց ու կողոպտեց: Եվ դարձյալ՝ տե՛ս մաքսավորի խոնարհութ-

յունը, թե այն որքան նվաստությունից բարձրացրեց նրան, արդարացրեց մեղքերից, ազատեց պարտքերից, քավեց ու սրբեց: Ո՞վ է այս ամենի վկան. ինքնատեսակ, ամենագետ, սրտագետ ու ծածկատես Աստված, «որ քննում է սրտերն ու երիկամները» (տե՛ս Սաղմ. Է 10): Արդարություն ունեցողը կորցրեց արդարությունը, իսկ նա, ով մեղքեր ուներ, խոնարհությամբ կորցրեց մեղքերը: Նա, ով արդարություն չուներ, խոնարհությամբ արդարացավ, և նա, ով մեղքեր չուներ, հպարտությամբ մեղապարտ դարձավ:

Կա ապաշխարության չորրորդ ճանապարհ՝ աղոթքը. Տերն ասում է. «Մի քաղաքում մի դատավոր կար. Աստծուց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում: Եվ նույն քաղաքում մի այրի կար, որ գալիս էր նրա մոտ և ասում. «Իմ ոսոխի դեմ իմ դատը տե՛ս»: Եվ դատավորը երկար ժամանակ չէր ուզում» (Ղուկ. ԺԸ 2-4): Տերն այս բանն առակով ասաց՝ մարդկանց աղոթքի մղելու համար: Դատավորը միտքն է, քաղաքը՝ բնությունը, այրին՝ հոգին, ոսոխը՝ մարմինը: Քանզի բնությունը քաղաքի նման է, որի բնակիչներն են հոգին ու մարմինը, որոնք հակառակ են միմյանց, քանզի ինչպես առաքյալն է ասում. «Հոգին ցանկանում է մարմնի հակառակը, իսկ մարմինը՝ հոգու հակառակը» (տե՛ս Գաղ. Ե 17): Քանզի ոսոխ մարմինը այս աշխարհի սիրով, մեղքերի ցանկությամբ ու մարմնի հեշտ[ասիր]ությամբ հարստահարում է հոգին, զրկում առաքինի վարքից և այրիացնում նրան անմահ Փեսայի սիրուց: Իսկ միտքը, որ անահ ու անամոթ դատավոր է, «Աստծուց չի երկնչում», որովհետև անհաստատ է, այս ու այն կողմ թափառող. և «մարդկանցից չի ամաչում», որովհետև ոչ ոք չի տեսնում մտքի շարժումը, այլ միայն՝ Աստված: Իսկ հոգու գանգատը, որ բողոք էր բարձրացնում և թախանձում մտքին՝ անիրավ դատավորին, այն է, որ մարդ, իր խղճմտանքից դրդված, հանապազ մղում է հոգուն, և նրանով զղջման գալով՝ դառնում է մեղքերից, խոստովանում, ապաշխարում, հանգստանում է խղճմտանքից և ուրախանում տրտմությունից:

Սրանով ցույց է տալիս աղոթքի ձևը. քանզի հոգու անիրավ դատավոր միտքը հաճախակի թախանձանքից հավանության եկավ, զղջմամբ դատ արեց ոսոխ մարմնից զրկված հոգու համար: Ինչպես որ մեկ այլ տեղում մարդու հաճախակի աղոթելը մեր Տերը ցույց տվեց երեք նկանակներ փոխ [խնդրելու] առակում՝ ասելով, թե՝ «Եթե բարեկամության համար վեր չկենա և հաց չտա նրան, նրա թախանձանքի՛ պատճառով վեր կենալով՝ կտա նրան, ինչ որ պետք է» (Ղուկ. ԺԱ 8), ըստ որում և սաղմոսն ասում է. «Խնդրի՛ր Տիրոջը, և նա քեզ կտա սրտիդ ուզածները» (Սաղմ. ԼԶ 4): Տե՛ս, որ Աստված սիրում է շատ աղոթքները: Տերունական առակի միտքն այդ է ցույց տալիս: «Ճանապարհից եկած բարեկամը». ճանապարհից [եկածը] Գաբրիելն է, քանի որ մեր մարդկային բնության ճշմարիտ բարեկամները հրեշտակներն են, և «ճանապարհից եկած», այսինքն՝ քանի որ «սպասարկող հոգիներ են, որոնք ուղարկվում են ի սպասավորություն նրանց, ովքեր ժառանգելու են փրկությունը» (Եբր. Ա 14), սպասավորում են բոլորին կյանքում և մահվան ժամանակ: Այս գալն այն է, երբ հրեշտակը գալիս է՝ խնդրելու մարդու հոգին: Եվ նա, ով պատրաստ է բարի գործերով, պարզերես է լինում բարեկամ հրեշտակի [առջև], իսկ նա, ով անպատրաստ է՝ առանց պահքի ու աղոթքի, անգութ ու անողորմ, իր տանը հաց չունի՝ (այսինքն՝) դատարկ ու զուրկ է բոլոր բարի գործերից, այն դատաստանի ժամանակ ուրիշ ճար ու ապավեն չունի, բացի հավատից, որ ունի առ Աստված, Սուրբ Երրորդության դավանությունից, որ երեք նկանակն է ցույց տալիս: Հոգեվարքի մեջ գտնվողը մտքով դիմում է Աստծուն և երեք նկանակ է հայցում Նրանից, Ով մարդու առավել ճշմարիտ բարեկամն է, քան հրեշտակը, և ասում է. «Բարեկա՛մ, ինձ փոխ տուր երեք նկանակ, որովհետև իմ բարեկամը ճանապարհից եկավ ինձ մոտ, և ես նրա առաջ դնելու ոչինչ չունեմ»: Իսկ նա ներսից պատասխանի և ասի. «Դռները փակված են, և երեխաներս ինձ հետ անկողնում են, չեմ կարող վեր կենալ և քեզ հաց տալ»: Արդ, թեպետև

բարեկամության համար էլ վեր չկենա ու հաց չտա նրան, նրա թախանձանքի՛ պատճառով վեր կենալով՝ կտա նրան, ինչ որ պետք է» (Ղուկ. ԺԱ 5-8): Տե՛ս խնդրելը, որի համար տալիս է ու կատարում մարդու խնդրանքը: Փակված դռները նշում են անպատեհ ժամանակը, անկողնում գտնվող բարեկամը՝ Աստծուն՝ հարազվարճ անհասանելի փառքերի մեջ, անկողնում գտնվող մանուկները՝ արդարների փառքն ու մշտնջենավոր հանգիստը, երեք նկանակը՝ Ամենասուրբ Երրորդության խոստովանությունը՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հավատը, որ դավանում է մարդը մահվան ժամին և հավատով պարզերես լինում հրեշտակի առջև, թեև զուրկ է բարի գործերից և ամոթով, բայց հավատի դավանությամբ լինում է առանց ամոթի:

Այս բանը մեր Տերն իբրև առակ ասաց մարդկանց, [որպեսզի] աղոթելով Որդուն և աղաչելով՝ Տեր Աստծուց ստանան իրենց աղոթքների խնդրածը: Ինչպես որ մեր Տերն Ինքը արեց՝ «ամբողջ գիշերն անցկացնելով Աստծուն աղոթելով» (տե՛ս Ղուկ. Զ 12): Եվ խոսքով ուսուցանեց բազում տեղերում՝ ասելով. «Արթո՛ւն մնացեք և աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք» (Մատթ. ԻԶ 41), և այլ [տեղում], թե՝ «Մարդ պետք է ամեն ժամ աղոթի և չձանձրանա» (տե՛ս Ղուկ. ԺԸ 1): Իսկ Պողոս առաքյալն ասում է. «Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ» (Ա Տիմ. Բ 8), և մեկ այլ տեղում. «Հաճախակի՛ աղոթեցեք» (Հռ. ԺԲ 12, Կողոս. Դ 2): Եվ Դավիթ մարգարեն ասում է. «Տե՛ր, լսի՛ր իմ աղոթքը, ակա՛նջ դիր խնդրանքներիս» (Սաղմ. ԼԸ 13): Քանզի աղոթքը խոսակցություն է Աստծո հետ և երբ սուրբը սրտից է ելնում, պատարագի փրկություն է գործում ի փառս Քրիստոսի՝ մեր Աստծու:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՅՍ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ. «ԹԵ՛ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԵՎ ԹԵ՛ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՄԲ ՔՐԻՍՏՈՍՆ Է ՔԱՐՈԶՎՈՒՄ» *(Փիլիպ. Ա 18)*

Փարիսեցուն և մաքսավորին հիշեցինք ավելի առաջ և խոսքով առաքինությամբ և չարությամբ լծված երկու կառք ցույց տվեցինք յուրաքանչյուրին, թե որքան շահ ունի խոնարհությունը, և որքան վնաս՝ ամբարտավանությունը: Մեկն արդարություն էր հագել և չպակասեցրեց պահքն ու տասանորդները, իսկ մյուսը, անիրավությանը լծակցած, ավելի առաջ հասավ, քան [արդարության] լծակից փարիսեցին, թեպետև բռնել էր վատթարագույն երասանակալը: Ո՞վ է մաքսաւորից առավել վատթար, բայց քանի որ նա խորտակեց իր անձը և իրեն մեղավոր կոչեց, գերազանցեց փարիսեցուն, ով ասում էր, թե պահք է պահում, տասանորդ է տալիս և հեռու է մնում բոլոր չարիքներից: Ինչո՞ւ: Որովհետև թեև նա զերծ էր ագահությունից ու հափշտակությունից, բայց նրա հոգում արմատացած էր բոլոր չարիքների մայրը՝ ամբարտավանությունն ու հպարտությունը: Այդ պատճառով է Պողոսն աղաղակում և ասում. «Թող յուրաքանչյուր ոք կշռադատի իր գործը և ապա ինքն ի՛ր վրա միայն թող պարծենա և ոչ թե ընկերոջ հետ համեմատվելով» (Գաղ. Զ 4): Նա, ամբողջ երկիրն անցնելով, կանգնեց [տաճարի] մեջտեղում և իրեն բոլոր մարդկանցից լավագույն ասաց (եթե նա տասը, հինգ, երկու կամ մեկ հոգուց էլ բարձր համարեր իրեն, այդ էլ ներելի չէր), իրեն ոչ միայն ավելի բարձր համարեց, քան [ամբողջ] աշխարհը, այլ նաև ամբաստանեց բոլորին, ուստիև դադարեց ընթացքից: Եվ ինչպես այն նավը, որ

ամեռային բյուր մրրիկներից ազատվելով՝ նավահանգստին շատ մոտ գտնվող մի անձավում խորտակվում ու կորստյան է մատնում իր մեջ եղած բոլոր գանձերը, այդպես էլ փարիսեցին համբերեց պահքի և բոլոր մյուս առաքինությունների բոլոր նեղություններին, բայց որովհետև չսանձեց իր լեզուն, այդ պատճառով նավաբեկության ենթարկվեց նավահանգստում: Քանի որ աղոթքներից, որոնցից հարկ և արժան էր շահել, այդքան վնասվելն ու հեռանալն այլ բան չէր, քան նավաբեկության ենթարկվել:

Այս ամենն իմանալով, սիրելինե՛ր, եթե անգամ ելնենք առաքինության գագաթը, մեր անձը բոլորից հետինն համարենք՝ իմանալով, որ ամբարտավանությունը երկնքից անգամ կարող է ցած նետել չգգուշացողներին, իսկ խոնարհությունը զորություն ունի մեղքերի խորքերից դեպի բարձունքները բարձրացնել նրան, ով ինքն իրեն նվաստացնել գիտի: Այն մաքսավորին փարիսեցուց առաջ դրեց, հաղթեց բանսարկուի անմարմին զորություններին՝ հպարտությանն ու ամբարտավանությանը: Խոնարհությունն ու իր մեղքերի ճանաչողությունը ավազակին առաքյալներից առաջ դրախտ տարան: Եվ իրենց մեղքերը խոստովանողներն այնքա՛ն համարձակություն են ամբարում, շատերը, որ գիտեն բարին և նվաստացնում են իրենց անձերը, որքա՛ն պսակների պիտի արժանանան: Երբ մեղքերը խոնարհություն են հագնում, այնքան դյուրությամբ են ընթանում, որ անցնում ու գերազանցնում են արդարությանը, որ ամբարտավանություն ունի: Իսկ եթե այն միացնես արդարությանը, ապա ո՞ւր չի հասնի, ո՞ր երկինք չի բարձրանա. այն մեծ համարձակությամբ կկանգնի Աստծու աթոռի մոտ՝ հրեշտակների մեջ: Դարձյալ՝ եթե արդարությանը լծակցի ամբարտավանությունը, իր սաստիկ ծանրությամբ կարող է ցած ձգել նրա համարձակությունը, և եթե այն շաղախված լինի մեղքերի հետ, ապա իրենց ունեցողներին որքա՛ն ցած կարող է նետել՝ գեհենի մեջ:

Այս ամենն ասում եմ, որպեսզի անփույթ չլինենք արդարության նկատմամբ, որպեսզի փախչենք հպարտությունից,

որպեսզի չմեղանչենք և որպեսզի չափավորենք մեր անձերը: Քանի որ մեր՝ իմաստությունը սիրելու հիմքը խոնարհությունն է: Եթե անգամ ունենաս թե՛ ողորմություն, թե՛ աղոթք, թե՛ պահք և թե՛ բոլոր առաքինությունները, և այդ ամենի ներքո ընկած չլինի խոնարհությունը, դրանք զուր և ունայն կդառնան և դյուրությամբ կկործանվեն, նման այն շինությանը, որի հիմքը դրված էր ավազի վրա: Քանզի մեր ուղիղ ու բարի ընթացքի մեջ չկա որևէ բան, որ դրա կարիքը չունենա, և չկա որևէ բան, որ առանց դրա կարողանա գոյություն ունենալ. թե՛ պարկեշտությունն ասես, թե՛ կուսությունը, թե՛ ինչքերն արհամարհելը և թե՛ ինչ էլ որ լինի, ամեն բան անմաքուր, պիղծ ու գարշելի է առանց խոնարհության: Արդ, ամեն բանով՝ և՛ խոսքով, և՛ գործերով, և՛ խորհուրդներով, նրա՛ն մոտենանք և նրանո՛վ ամեն բան կառուցենք:

Խոնարհամտության մասին բավականաչափ խոսվեց, թեև ոչ նրա արդարությանն արժանի կերպով, քանի որ ոչ ոք այն ըստ արժանվույն գովել չի կարող, բայց ասացի ձեր սիրոյ համար, որ իմաստնանաք: Քանի որ լավ գիտեմ, որ քիչ ասվածներից էլ մեծ փութով կձգեք դրան: Բայց քանի որ հարկ է առաքելական այն խոսքը, որ ընթերցվեց այսօր, որ շատերին է թվում, թե անփութության պատճառ է ընձեռում, պարզ և հայտնի դարձնել, մեջբերենք այդ խոսքը. «Թե՛ միտումնավոր և թե՛ ճշմարտությամբ Քրիստոսն է քարոզվում» (Փիլիպ. Ա. 18): Շատերն այն կրկնեցին հենց այնպես և ինչպես հարկն է չընթերցելով ո՛չ սկիզբը և ո՛չ շարունակությունը, և մյուս մասերի հետ կապից կտրեցին՝ իրենց ծուլացած անձանց համար մահ պատրաստելով: Քանի որ հանդգնում են նրանց հեռացնել առողջ հավատից և ապա տեսնել վախեցած ու ահուդողի մեջ, նրանք մեջբերում են առաքելական այս խոսքը՝ ասելով. «Թե՛ միտումնավոր և թե՛ ճշմարտությամբ միայն Քրիստոսը պիտի քարոզվի»: Բայց քարոզվում է և միշտ: «Պիտի քարոզվի» ասելն օրինադրի [խոսք] է, իսկ «քարոզվում է» ասելը՝ պատահածի մասին է պատմում: Եվ քանի որ Պողոսը չի սահմանում ինչ-որ հերձված, այլ հե-

ռու է տանում այսպիսի բաների նայողներին, լսի՛ր, թե ինչ է ասում. «Եթե նույնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելին, քան ինչ որ դուք ընդունեցիք, նզովյա՛լ լինի» (Գաղ. Ա 8), չի՞ նզովում իրեն և հրեշտակին, եթե գիտի, որ անվտանգ չէ այդ անելը: Դարձյալ՝ «Ձեզ համար նախանձախնդիր եմ Աստծու նախանձախնդրությամբ, որովհետև ձեզ նշանեցի մի մարդու՝ որպես մի անբիծ կույս Քրիստոսին ներկայացնելու համար, բայց երկյուղ եմ կրում, թե մի գուցե ինչպես օձը խաբեց Եվային, ձեր միտքն ապականվի ու շեղվի Քրիստոսի հանդեպ ձեր ունեցած պարզամտությունից» (Բ Կոր. ԺԱ 2-3): Ահա պարզամտությունը դնում է, բայց թողություն չի տալիս. եթե թողություն լիներ, ոչ մի վտանգ չէր լինի, և եթե վտանգ չլիներ, արդյոք երկյուղ կունենա՞ր Պողոսը, իսկ Քրիստոս չէր հրամայի որոմն այրել, եթե այս ու այն խոսքերը նույնն էին:

Ի՞նչ է արդյոք ասվածը: Կամենում եմ քիչ հետո պատմել ձեզ, թե ինչ վիճակում էր Պողոսը, երբ ուղարկում էր այս [նամակը]: Ի՞նչ վիճակում էր նա այդ ժամանակ: Բանտում էր, շղթաների և անտանելի տանջանքների մեջ: Որտեղի՞ց է այդ հայտնի: Նրա իսկ նամակից, քանի որ այս խոսքերից առաջ ասում է. «Ուզում եմ, որ գիտենաք, եղբայրնե՛ր, թե ինչ որ ինձ պատահեց, ավելի շուտ Ավետարանի առաջընթացին ծառայեց. նույնիսկ իմ կապանքները, որ Քրիստոսի համար են, հայտնի եղան ամբողջ արքունիքին և մյուս բոլոր տեղերում, նաև Տիրոջը միացած շատ եղբայրների, որոնք, քաջալերված իմ կապանքներից, առավել աներկյուղաբար են քարոզում Աստծու խոսքը» (Փիլիպ. Ա 12-14):

Ներոնն էր բանտ նետել նրան: Ինչպես որ ավազակն է բոլորի քնած ժամանակ տուն մտնում և կողոպտում այն, և երբ որևէ մեկը վառում է ճրագը, նա հանգցնում է այն, որպեսզի կարողանա համարձակորեն վերցնել ու փախչել, այդպես էլ Ներոնը, իբրև մի ավազակ և գող, երբ բոլորը խորը և անդգա քնի մեջ էին, հափշտակում էր բոլորին, խարխլում էր ընտանիքները, կործանում էր տները՝ գործադրելով չարության բոլոր տեսակները, իսկ երբ Պողոսը վառեց ճրագը՝ վարդապետության խոսքը ամբողջ աշխարհում, և հանդիմանեց նրա չար գործերը, նա փութաց հանգցնել քարոզությունն ու ջնջել վարդապետությունը. կապեց սուրբին և բանտ նետեց նրան: Երանելի Պողոսը հենց այդ ժամանակ էլ գրեց այս թուղթը:

Ո՞վ չի սքանչանա, ո՞վ չի հիանա այն առաքինի և երկնաբերձ անձով. կապկպված և բանտարկված՝ այդքան հեռվից [նամակ] էր առաքում փիլիպեցիներին: Գիտեք, թե Մակեդոնիան որքան հեռու է Հռոմից:: Բայց ո՛չ ճանապարհի հեռավորությունը, ո՛չ ժամանակի երկարությունը, ո՛չ նեղությունները, ո՛չ վտանգն ու այդպիսի բաների համար դաժան պատիժները և ո՛չ էլ մեկ այլ բան չջնջեցին իր աշակերտների հանդեպ նրա ունեցած սերն ու հիշատակը, այլ նա մտածում էր նրանց բոլորի մասին. նրա ձեռքերն այնպես կապված չէին շղթաներով, ինչպէս նրա հոգին՝ իր աշակերտների գթով: Իր թղթի առաջաբանում ասես այս մասին հայտնելով՝ ասում էր. «Քանի որ ես ձեզ ունեմ իմ սրտում, ձեզ, որ իմ կապանքների և Ավետարանի պաշտպանության և հաստատման մեջ բաժնեկից եղաք ինձ» (տե՛ս Փիլիպ. Ա 7): Եվ ինչպես թագավորական ապարանքում թագավորը, առավոտյան գահին նստելով, բոլոր կողմերից բյուրավոր նամակներ է ընդունում, այդպես էլ նա բանտում, իբրև թագավորական ապարանքում նստած, մշտապես նամակներ էր ընդունում և ուղարկում ամեն կողմ, ուր ազգերն իրենց մասին էին զեկուցում նրա իմաստությանը, և շատ ավելի հոգիների էր տնօրինում, քան թագավորը. այնքան մեծ իշխանություն էր վստահված նրան:

Քանզի տնօրինում էր ոչ միայն հռոմեացիների գավառը, այլ նաև բոլոր բարբարոսներին. Աստված երկիրն ու ծովը բերելով՝ տվել էր նրա ձեռքը: Եվ հռոմեացիներին այս հայտնելով՝ ասում էր. «Ձեմ կամենում, եղբայրնե՛ր, որ դուք անտեղյաք լինեք, թե շատ անգամ կամեցա գալ ձեզ մոտ, որպեսզի ձեր մեջ էլ որևէ պտուղ գտնեմ, ինչպես այլ հե-

թանոսների մեջ, բայց այդ արգելվեց ինձ մինչև այժմ, քանզի ես պարտական եմ և՛ հույներին, և՛ բարբարոսներին, և՛ իմաստուններին, և՛ անգետներին» (տե՛ս Հռոմ. Ա 13): Արդ, մշտապես հոգում էր, թե ի՞նչ [ընթացք ունեն] կորնթացիները, մակեդոնացիները, փիլիպեցիները, կապադովկացիները, գաղատացիները, ասիացիները, Պոնտոսում բնակվողները, բոլոր մարդիկ: Բայց որովհետև ամբողջ երկիրն էր առել իր ձեռքը, հոգում էր ոչ միայն բոլոր հեթանոսների, այլ նաև ամեն մի մարդու մասին: Երբեմն Ոնիսիմեոսի համար էր նամակ ուղարկում, երբեմն՝ պոռնկության մեջ ընկած մի կորնթացու, որպեսզի սա չվախենար, որ ինքը միակն է, որ մեղանչել է և կարոտ է վերակացության, այլ որ մարդ է, մարդ՝ Աստծու [ստեղծած] պատվականագույն կենդանի, որի համար Հայրը չխնայեց Իր Միածնին:

Որպեսզի ինձ չասես, թե այսինչը ծառա էր, ավազակ, գող, բյուր չարիքներով լցված կամ դուրս նետված աղքատ, անարգ և ոչ մի բանի արժանի չէր, մտաբերի՛ր, որ Քրիստոս նրա համար մեռավ, և բավական է քեզ՝ հասկանալու այս ամբողջ հոգատարության պատճառը: Մտածի՛ր, թե ինչպես է հարկ և արժան, որ լինի նա, ում Քրիստոս այնքան պատվեց, որ մինչևիսկ Իր արյունը չխնայեց: Եթե որևէ թագավոր հոժարեր մեկի համար իրեն սպանել, արդյոք կփնտրեի՞նք նրա՝ թագավորությանն արժանավոր լինելու դրանից մեծ մեկ այլ նշան: Ես չե՛մ կարծում: Որովհետև բավական է ցույց տալ վախճանվածի վախճանը նրա համար, սերը: Իսկ այժմ ո՛չ թե մարդ, ո՛չ թե հրեշտակ, ո՛չ թե հրեշտակապետ, այլ Ինքը՝ երկինքների Տերը, Ինքը՝ Աստծու Միածին Որդին, մարմին հագնելով, Իրեն տվեց մեզ համար: Եվ մի՞թե ամեն բան չենք անի և բոլոր հնարները չենք մտածի՝ բոլոր մարդկանց մեր գլխավորությամբ այսքան պատիվներ վայելել տալու համար: Եվ ինչպիսի՞ արդարացում պիտի ընդունենք, ինչպիսի՞ թողություն: Այս նաև Պողոսն էր ցույց տալիս՝ ասելով. «Քո կերակրով կորստյան մի՛ մատնիր նրան, որի համար մեռավ Քրիստոս» (Հռոմ. ԺԴ 15): Քանզի ովքեր արհամարհում էին

եղբայրներին և կամենում էին անտեսել՝ իբրև տկարների, պատկառեցնում էր, ջանալ էր տալիս, համոզում էր խնամք տածել ընկերոջ նկատմամբ, և այդ ամենի փոխարեն Տիրոջ մահն էր դնում նրանց առջև:

Արդ, բանտում նստած՝ այդքան հեռվից նամակ էր ուղարկում փիլիպեցիներին: Քանզի այդպիսին է Աստծու սերը. իր արմատն ունենալով ի վերուստ՝ երկնքից, մարդկային ոչ մի բանով չի խզվում: Իսկ ի՞նչ էր ասում. «Կամենում եմ, որ իմանաք, եղբայրնե՛ր»: Տեսա՞ր վարդապետի հոգացողությունը իր աշակերտների հանդեպ. լսի՛ր նաև վարդապետի հանդեպ աշակերտների հոգատարության մասին, որպեսզի տեսնես, թե այն էր, որ նրանց զորավոր ու անդիպչելի էր դարձնում՝ կապելով միմյանց հետ: Քանզի եթե «եղբորից օգնություն ստացած եղբայրը նման է ամուր քաղաքի» (Առ. ԺԸ 19), առավել ևս սիրո կապանքներով այդքան կապվածները ետ կդարձնեին չար դևի բոլոր նենգությունները: Եվ որ Պողոսը կապված էր աշակերտներին, մեզ հարկ չկա ցույց տալու, քանզի կապված էլ նրանց մասին էր հոգում և հանապազօր նրանց համար մեռնում:

Այլ որ աշակերտներն էլ՝ ոչ միայն տղամարդիկ, այլ նաև կանայք, հավատի կերպով կապված էին Պողոսին, լսի՛ր, թե ինչ է ասում Փիբեի՝ կենքրացիների եկեղեցու սպասավորի քրոջ մասին. «Որպեսզի Տիրոջ անունով ընդունեք նրան, ինչպես վայել է սուրբերին, և հոգ տանեք նրան, ինչ կարիքների համար էլ դիմի ձեզ, քանզի ինքը ևս հոգատար եղավ շատերին և ինձ նույնպես» (Հռոմ. ԺԶ 1-2): Բայց այստեղ վկայում է նրա՝ նաև իր հանդեպ հոգատարության մասին, իսկ Պրիսկիղան և Ակյուղասը Պողոսի համար մահվան դիմեցին, և նրանց մասին գրում է՝ ասելով. «Ձեզ ողջունում են Ակյուղասը և Պրիսկիղան, որոնք ինձ համար իրենց պարանոցը դրեցին» (տե՛ս Ա Կոր. ԺԶ 19): Իսկ մեկ ուրիշի մասին դարձյալ նրանց գրում է՝ ասելով. «Մինչև մահվան դուռը հասավ՝ հոգով նահատակվելով, որպեսզի ինձ ծառայելու հարցում ձեր պակասը լրացնի» (Փիլիպ. Բ 30): Տեսնո՞ւմ ես՝

ինչպես էին սիրում իրենց վարդապետին, ինչպես էին իրենցից առաջ նրա հանգստի մասին հոգում, որի համար էլ այն ժամանակ ոչ ոք նրանց չհաղթեց:

Այս ասում եմ ոչ միայն, որ լսեք, այլ որ նաև նմանվե՛ք, և խոսքս ուղղում եմ ոչ միայն նրանց, ովքեր իշխանության ներքո են, այլ նաև իշխաններին, որպեսզի աշակերտները վարդապետների համար շատերին խնամակալություն ցույց տան, իսկ վարդապետները՝ նույն Պողոսի սերն ունենան ոչ միայն մերձ գտնվողների, այլ նաև հեռվում գտնվողների հանդեպ: Քանի որ Պողոսը աշխարհում, իբրև մի տան մեջ ապրելով, այնպես էր հոգում բոլորի փրկության համար, որ անտեսելով իր կապանքները, վերքերը, նեղությունները, վտանգները, ամեն օր նայում ու հարցնում էր, թե ինչպես են իր աշակերտները, և հաճախ այդ նպատակով ուղարկում էր երբեմն՝ Տիմոթեոսին, երբեմն՝ Տյուքիկոսին, որի մասին ասում էր. «Նրան ձեզ մոտ ուղարկեցի այն բանի համար, որպեսզի իմանամ ձեր մասին, և նա մխիթարի ձեր սրտերը» (Կողոս. Դ 8), իսկ Տիմոթեոսի մասին՝ «Նրան ուղարկեցի ձեզ մոտ՝ այլևս չկարողանալով համբերել իմանալու այն մտավախությամբ, որ չլինի թե փորձիչը ձեզ էլ փորձած լինի» (Ա Թեսաղ. Գ 5): Մեկ այլ տեղում դարձյալ գրում է Տիտոսի մասին, մեկ այլ տեղում՝ մյուսի մասին: Իր կապանքների պատճառով հաճախ մի տեղում մնալով՝ նրանց մոտ գնալ չէր կարողանում և իր աշակերտների միջոցով էր մերձ լինում նրանց:

Արդ, այն ժամանակ էլ էր կապանքների մեջ և գրում էր փիլիպեցիներին. «Ուզում եմ, որ գիտենաք, եղբայրնե՛ր» (Փիլիպ. Ա 12): Աշակերտներին եղբայրներ է կոչում, քանի որ այդպիսի սերը ջնջում է ամեն մի անհավասարություն և չգիտի գերազանցություն ու պատիվ, այլ թեպետև բարձր է բոլորից, նվաստանալով՝ խոնարհվում է բոլորին, ինչպես Պողոսը: Բայց լսեցեք, թե ինչ է կամենում ծանուցել նրանց. «Թե ինչ որ ինձ պատահեց, ավելի շուտ Ավետարանի առաջընթացին ծառայեց» (Փիլիպ. Ա 12): Ինչպե՞ս, ասա՛ ինձ, ի՞նչ կերպ. կապանքերի՞ցդ արձակվեցիր արդյոք, շղթանե՞րդ քակտեցիր և համարձակորեն քարոզո՞ւմ ես քաղաքում, մտար եկեղեցի և բազում երկարաշունչ քարոզնե՞ր խոսեցիր հավատի մասին, շատերի՞ն աշակերտ դարձրիր ու անցար գնացիր: Թերևս մեռելների հարություն տվեցիր, և սքանչացա՞ն քեզ վրա: Թերևս բորոտների սրբեցիր, և բոլորն հիացա՞ն, դևերի՞ հալածեցիր արդյոք: Ոչի՛նչ դրանցից, ասում է: Բայց ինչպե՞ս եղավ Ավետարանի առաջադիմությունը: «Նույնիսկ իմ կապանքները, որ Քրիստոսի համար են, հայտնի եղան ամբողջ արքունիքին և բոլոր մյուս տեղերում» (Փիլիպ. Ա 13): Ի՞նչ ես խոսում. ա՞յդ է առաջադիմությունը, ա՞յդ է աճումը, ա՞յդ է քարոզության բարձրացումը, որ բոլորն իմացան, որ կապված ես: Այո՛, ասում է: Լսի՛ր շարունակությունը, որպեսզի իմանաս, որ կապանքները ոչ միայն չխանգարեցին, այլև առավել համարձակության պատճառ եղան: «Քանզի Տիրոջը միացած շատ եղբայրներ, քաջալերված իմ կապանքներով, առավել ևս համարձակ գտնվեցին՝ առանց երկյուղի քարոզելու Աստծու խոսքը» (Փիլիպ. Ա 14):

Ի՞նչ ես ասում, ո՛վ Պողոս. կապանքներդ ոչ թե արհավիրքների մեջ գցեցին, այլ համարձա՞կ դարձրեցին, ոչ թե վախեցրին, այլ փափագեցրի՞ն. ասածներս կարգ չունեն: Եվ ես գիտեմ, որ այս ամենը չեղան մարդկային կարգավորությամբ, ասում է, կատարվածները [մարդկային] ընությունից դերիվեր են և աստվածային շնորհների գործ: Այդ պատճառով էլ այն, ինչ վախեցնում էր ուրիշներին, քաջալերում էր նրան:

Եթե մեկը զորավարին բանտարկի, պարզ է, որ բոլոր զինվորներին փախուստի կմատնի, և եթե հովվին հոտից հեռացնի, մեծ իշխանությամբ կքշի ոչխարներին: Բայց Պողոսի հետ այդպես չեղավ, այլ՝ հակառակը: Զորավարը կապված էր, բայց բոլոր զորականները հոժարամիտ էին և մեծ համարձակությամբ ընդդեմ էին վազում [թշնամուն], բանտարկել էին հովվին, և ոչխարները ո՛չ քշվում էին և ո՛չ ցրվում:

Ո՞վ տեսավ, ո՞վ լսեց, որ վարդապետների չարիքներն աշակերտներին առավել մխիթարություն պատճառեն: Ինչպե՞ս չվախեցան, ինչպե՞ս չզարհուրեցին, ինչպե՞ս Պողոսին չասացին. «Բժի՛շկ, բժշկի՛ր ինքդ քեզ» (Ղուկ. Դ 23), ինքդ քե՛զ ազատիր վտանգներից և այնժամ մեզ բյուր բարիքներ ավանդիր»: Ինչո՞ւ չասացին այս, ինչո՞ւ ոչ: Որովհետև Հոգու շնորհներով խրատվել էին, որ այդ ամենը ոչ թե տկարությունից է լինում, այլ Քրիստոսի թույլտվությամբ, որպեսզի կապանքներից ու բանտերից ճշմարտությունն առավել մեծ չափով պայծառանա՝ նեղությամբ ու վտանգներով աճելով և մեծ բարձրության հասնելով: Քանզի եթե կապանքները խանգարեին Պողոսին և վախեցնեին, և կամ նրան պատշաճեին պատահածները, արժան կլիներ տարակուսել, իսկ եթե քաջալերեին և առավել փառք բերեին, հիանալ և սքանչանալ էր արժան. այն ամենն, ինչով ուրիշներն անպատվվում էին, աշակերտների համար փառք էր, և ինչից [ուրիշները] սարսափում էին, նրանց բոլորի համար քաջալերություն ու մխիթարություն էր: Քանզի ո՞վ չի զարմանա այնժամ նրանով՝ տեսնելով նրան շղթաների մեջ և դևերին առավել հալածելիս. քանզի երբ դևերը տեսնում էին նրան բանտում, առավել էին փախչում: Թագավորական գլուխն այնպես չի առնում պայծառ թագը, ինչպես նրա ձեռքերը՝ շղթաները. ո՛չ իր բնությամբ, այլ ծածկված շնորհով, որ նրա մեջ էր:

Այդ պատճառով էլ մեծ մխիթարություն էր լինում աշակերտների համար: Քանզի տեսնում էին մարմինը կապված, իսկ լեզուն՝ չկապված, ձեռքերը պնդված, իսկ խոսքն արձակված և արեգակի ճառագայթներից ավելի արագորեն ամբողջ աշխարհով ընթացած: Սա մխիթարություն էր լինում նրանց. այդ գործերով սովորում էին, որ իրենց պատահած ոչ մի բան դժվար ու անտանելի չէ: Երբ հոգին իսկապես լցված է լինում աստվածային ցանկությամբ ու փափագով, չի դառնում այն ամենին, ինչ իր շուրջն է, այլ ինչպես որ խելագարներն են համարձակորեն մտնում հրի, սրի, գազանների ու խորխորատների մեջ, այդպես էլ նրանք, մի գեղեցիկ ու հոգևոր

մոլությամբ մոլեգնած. մոլություն, որ ողջախոհությունից է բխում, արհամարհում են երևացող ամեն բան: Ուստիև, վարդապետին կապված տեսնելով, մշտապես ուրախանում ու ցնծում էին՝ իրենց գործերով հակառակորդներին ցույց տալով, որ ամեն կողմից են անըմբռնելի և անբռնելի:

Արդ, այն ժամանակ, մինչ Պողոսն այդպիսի վիճակում էր, նրա թշնամիներից ոմանք, կամենալով բորբոքել դժնդակ ու մեծ պատերազմ, բռնակալի՝ նրա հետ թշնամանալու պատճառներ փնտրեցին և վարդապետությունը մեծապես տարածելու նպատակով [սկսեցին] քարոզել ուղիղ և առողջ հավատը: Եվ այդ անում էին ոչ թե, որովհետև ախորժում էին սերմանել հավատը, այլ որպեսզի Ներոնը տեսնի, որ քարոզությունն աճում է, ավանդությունը վեր է բարձրանում, և Պողոսին չուտափույթ անդունդ նետի:

Այն ժամանակ երկու քարոզություն կար՝ Պողոսի աշակերտներինն ու նրա թշնամիներինը. մի մասը ճշմարտությունը քարոզողներինը, իսկ մի մասը՝ Պողոսին ատելու պատճառով՝ հակառակությամբ [քարոզողներինը]: Այս մասին հայտնելով՝ ասում էր. «Ոմանք Քրիստոսին քարոզում են նախանձից ու հակառակությունից դրդված» (Փիլիպ. Ա 15) ՝ ցույց տալով թշնամիներին, իսկ ոմանք՝ «բարի մտադրությամբ». իր աշակերտների մասին էր ասում: Դարձյալ՝ նրանց մասին ասում էր. «Ոմանք՝ հակառակության համար». թշնամիները՝ ո՛չ սրբությամբ և ո՛չ ողջախոհությամբ՝ «կարծելով, թե նեղություններ են ավելացնում իմ կապանքների վրա» (Փիլիմ. Ա 17): «Ոմանք էլ՝ սիրուց մղված» (Ա 16). դարձյալ՝ իր եղբայրների մասին. «Քանզի գիտեն, որ կանգնած եմ Ավետարանի պաշտպանության համար» (Ա 16): «Բայց ի՞նչ փույթ. Ինչ ձևով էլ լինի, թե՛ միտումնավոր, թե՛ ճշմարտությամբ Քրիստոս է քարոզվում» (Ա 18): Որպեսզի սնոտի և ունայն հերձվածների փոխարեն այս բանն առնեք:

Նրանք, ովքեր այն ժամանակ Քրիստոսին էին քարոզում, ոչ թե ապականված աղանդ էին քարոզում, այլ առողջ և ուղիղ հավատը. եթե քարոզեին ապականված աղանդ՝ այլ բան,

քան Պողոսի քարոզածը, նրանց չէր լինի այն, ինչ իրենք էին կամենում: Իսկ ի՞նչ էին կամենում. որ հավատն աճի, Պողոսի աշակերտները շատանան, և Ներոնը մեծ պատերազմ սկսի [նրանց դեմ]: Եթե այլ բան՝ աղանդ քարոզեին, մի՞թե շատերին Պողոսի աշակերտները կդարձնեին և մի՞թե կգայրացնեին բռնակալին:

Արդ, չի ասում այն, թե ապականված աղանդ էին բերում, այլ թե՝ պատճառը, որի համար քարոզում էին, ապականված էր: Եվ այլ էր քարոզության պատճառը, և այլ՝ նույն ինքը՝ քարոզությունը՝ ամբողջ չլինելով: Քանզի քարոզությունն ամբողջական չի լինի, երբ վարդապետությունը լի լինի մոլորությամբ: Իսկ պատճառն ամբողջ չի լինի, երբ քարոզությունն ամբողջական լինի, իսկ քարոզողները ոչ թե Աստծու համար են քարոզում, այլ թշնամության և ոմանց շնորհի համար:

Արդ, ասում է, թե հերձվածներ ներս չէին բերում, այլ՝ որ քարոզում էին ոչ ուղիղ պատճառով և ոչ երկյուղածության համար, որպեսզի ոչ թե Ավետարանը տարածեն, այլ որպեսզի նրան մեծագույն վտանգի մեջ դցեն. ուստիև մեղադրում է նրանց: Եվ տե՛ս, թե որքան հավաստի կերպով է ավելացնում, թե՝ «Կարծելով, թե նեղություններ են ավելացնում իմ կապանքների վրա»: Չի ասում, թե՝ նեղություններ ավելացրին իմ կապանքների վրա, այլ՝ կարծելով, թե նեղություններ են ավելացնում, ասում է, մտածում էին: Ցույց է տալիս, որ թեև նրանք այդպես էին մտածում, բայց իր համար ադպես չէր, այլ ուրախանում էր քարոզության տարածմամբ, որի համար «ուրախ եմ ես և պիտի շարունակեմ ուրախանալ» (Ա 18): Արդ, եթե քարոզության մեջ մոլություն կար, և նրանք հերձվածներ էին բերում, Պողոսը չէր կարող ուրախանալ, բայց քանի որ վարդապետությունն առողջ էր և օտարոտի չէր, ասում էր. «Ուրախ եմ և պիտի շարունակեմ ուրախանալ»: Քանզի թեպետև նրանք իրենք իրենց կորստյան էին մատնում՝ այդ անելով թշնամությամբ, սակայն ակամա մեծացնում էին իմ գործերը:

Տեսա՞ր՝ որքան էր Պողոսի զորությունը, ինչո՞ւ սատանայի մեքենայություններից չէր ըմբռնվում. և ոչ միայն չէին բռնում նրան, այլ նույնով իրենք էին բռնվում: Բազում էին բանսարկուի չարագործություններն ու նրա սպասավորների խորամանկությունը, որովհետև ձևով խորհում էին նույնը՝ մտածելով դադարեցնել քարոզությունը: Բայց «Նա, ով բռնում է իմաստուններին իրենց խորագիտության մեջ» (Ա Կոր. Գ 19), այն ժամանակ թույլ չտվեց, որ այդ լինի: Եվ այս ցույց տալով էր Պողոսն ասում. «Իսկ մնալ այս մարմնի մեջ առավել կարևոր է ձեզ համար: Եվ համոզված եմ ու գիտեմ, որ կմնամ ու կապրեմ ձեզ բոլորիդ հետ» (Ա 24-25), քանզի փափագում են հանել մարմնավոր կյանքից, բայց Աստված թույլ չի տալիս ձեզ համար:

Այս ամենը լա՛վ հիշեցեք. որպեսզի կարողանանք ուղղել նրանց, ովքեր իզուր կամ դեպքերի բերումով կգրեն՝ իրենց ընկերների մահվան մատնվելու համար: Կարողանանք հիշել նաև ասվածները և ուրիշներին ուղղելով՝ միշտ ապավինենք աղոթքներին՝ Աստծուն աղաչելով, որ տա իմաստության խոսք, տա և հանճար՝ լսելու և զգուշորեն պահպանելու այս հոգևոր ու անձեռնամխելի ավանդությունը: Ում որ չենք կարող ուղղել մեր ջանքերով, կարող ենք շտկել աղոթքներով, ամենօրյա պաղատանքներով: Պետք է միշտ և անընդհատ աղոթել. թե՛ նեղության, թե՛ խաղաղության, թե՛ վտանգների, թե՛ անդորրի և բազում բարիքների մեջ գտնվելիս. որպեսզի նրա բարիքներն անշարժ մնան և չփոխվեն ու չանցնեն, իսկ նեղության ու բազում վտանգների մեջ եղողը, որպեսզի քաղցր տեսնի այն և փոխվի: Խաղաղության մեջ Աստծուն աղաչիր, որպեսզի հաստատուն մնա խաղաղությունը, և եթե տեսնես, որ ամեռային մրրիկն է շրջապատում քեզ, դարձյալ Աստծուն աղոթիր, որպեսզի անցկացնի ալեկոծությունը և մրրիկները խաղաղության փոխի: Աղոթքները լսելի՞ եղան, գոհացիր, որ քեզ լսեց, լսելի չեղա՞ն, հարատևիր աղոթքի մեջ, որպեսզի լսելի լինեն:

Քանզի թեպետև երբեմն Աստված ուշացնում է տալ [խնդրանքներդ], [բայց] չի ստում և ետ չի դարձնում, տուրքերն ուշացնելով՝ ախորժում է, որ դու մշտապես դեպի Իրեն դարձած լինես: Ինչպես որ բարեգութ հայրերն են անում. իրենց ծույլ զավակներին մշտապես իրենց շուրջը դեգերեցնելու համար նրանք նույնպես հնար են մտածում ուշացնել իրենց պարգևները: Աստծու մոտ միջնորդների և կամ ուրիշներին խնդրելու ի՞նչ պետք ունես. մենակ և առանց վերակացուի էլ լինես, ինքդ աղաչի՛ր Աստծուն, և կտանաս ամեն բան: Ուրիշների՝ մեզ համար աղաչանքները մի՛ հավանիր և մի՛ սովորիր [դրանց] այնպես, ինչպես մեր աղաչանքներին, թեպետև լի լինենք չարիքներով: Քանզի եթե մարդկանց բազում անգամ ընդդիմացած լինենք, երբ առավոտյան, միջօրեին և երեկոյան ուրախ դեմքով հանդիպենք նրանց, ում տրտմեցրել ենք, կվերացնենք նրանց թշնամությունը, ապա որքան առ Աստուած է կլինի այս:

Անարժան ես, եղի՛ր արժանավոր երկար աղոթքներով: Քանի որ անարժանը նույնպես կարող է արժանավոր լինել՝ երկար աղոթելով, և մենք ինքներս առավել մեր, քան թե այլոց աղաչանքներով կհավանեցնենք Աստծուն. թեպետ և հաճախ ուշացնում է տուրքերը՝ ոչ թե կամենալով մեզ տարակուսեցնել կամ էլ ունայն ձեռքերով ուղարկել, այլ որպեսզի ավելի մեծ բարիքների պատճառ լինի մեզ համար: Կամենում եմ սա ցույց տալ այն երեք առակների միջոցով, որոնք այսօր ընթերցեցինք:

Քանանացին մոտեցավ Տիրոջը՝ աղաչելով իր դիվահար դստեր համար և մեծ ուժով գոչելով՝ ասում է. «Ողորմի՛ր ինձ, Տե՛ր, դուստրս չարաչար դիվահարվում է» (Մատթ. ԺԵ 22): Այլազգի կին՝ բարբարոս և հեռու իսրայելացիների կրոնից. ուրիշ ի՞նչ. շուն և հայցածներն առնելու անարժան, քանզի. «Բարի չէ մանուկների հացն առնել ու շներին գցել» (ԺԵ 26): Սակայն համառելով՝ արժանավոր եղավ: Քանզի ոչ միայն մանուկների բարետոհմությանը բերեց նրան՝ շանը, այլ նաև մեծ գովությամբ ուղարկեց՝ ասելով. «Ո՛վ կին, մեծ է քո հավատը» (ԺԵ 28): Այդ կնոջ ազնվության մեկ ուրիշ նշան մի՛ փնտրիր: Տեսա՞ր, թե ինչպես անարժան կինը, [խնդրանքը] չդադարեցնելով, արժանավոր դարձավ:

Կամենո՞ւմ ես իմանալ, որ առավել մեր, քան թե ուրիշների աղաչելով՝ [կարող ենք] հավանեցնել Նրան: Քանանացին աղաղակում էր, և աշակերտները մոտենալով՝ ասում էին. «Արձակի՛ր նրան, որովհետև մեր ետևից աղաղակում է» (ԺԵ 23): Իսկ Նա նրանց ասում էր. «Այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Իսրայելի տան կորուսյալ ոչխարների մոտ» (ԺԵ 24): Իսկ երբ մոտեցավ ինքը՝ կինը, և կանգնած մնաց՝ աղաղակելով. «Այո՛, Տե՛ր, շներն էլ կերակրվում են իրենց կնոջ սեղանից ընկած փշրանքներով» (ԺԵ 27), այն ժամանակ տվեց շնորհը և ասաց. «Թող քեզ լինի, ինչպես որ կամենում ես» (ԺԵ 28): Տեսա՞ր, թե ինչպես ընդդիմացավ, երբ աղաչում էին աշակերտները, բայց երբ գոչեց պարգևի կարիք ունեցողը, հավանեց: Աշակերտներին ասաց. «Այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Իսրայելի տան կորուսյալ ոչխարների մոտ», իսկ կնոջը. «Մեծ է քո հավատը, թող քեզ լինի, ինչպես որ կամենում ես», և արձակեց նրան: Երբ կինը խոսեց, սկզբում պատասխան չտվեց նրան, իսկ երբ թախանձեց մեկ, երկու և երեք անգամ, այնժամ տվեց շնորհը՝ ավարտով ուսուցանելով քեզ, որ հապաղեցնում էր պարգևը ոչ թե նրան մերժելու համար, այլ որպեսզի մեզ բոլորիս ցույց տա այդ կնոջ համբերությունը: Քանզի եթե կամենար մերժել նրան, և կամ ոչ թե վերջում տար, այլ սկզբում, կիմանայի՞նք արդյոք կնոջ զորությունը: «Արձակի՛ր նրան, ասում են, որովհետև մեր ետևից աղաղակում է»: Դուք, ասում է, լսում եք ձայնը, բայց Ես տեսնում եմ միտքը, գիտեմ, ինչ որ լինելու է. չեմ կամենում գաղտնի թողնել նրա մտքի ծածկված գանձը, այլ լսում ու լռում եմ, որպեսզի նրան հայտնի դարձնեմ, մեջտեղ բերեմ և բոլորին տեսանելի դարձնեմ:

Արդ, այս ամենն իմանալով՝ թեև լինենք մեղքերի մեջ, առանց վերակացուների և մենակ, չհրաժարվե՛նք՝ իմանալով, որ մեծ վերակացություն է ինքնուրույն և մեծ հոժարությամբ Աստծուն մերձենալը: Եթե ուշացնի և եթե հապա-

ղի, չվհատվե՛նք՝ իմանալով, որ լռությունն ու հապաղումը Նրա խնամակալության ու մարդասիրության [նշանակն] են: Եթե այդպես համարենք և վշտացած հոգով, ջերմ և արթուն մտքով և այն քանանացի կնոջ նման աղաչենք Նրան, թախանձենք, եթե շուն եղած կամ ինչ-ինչ դժնդակ գործեր արած էլ լինենք, կհեռացնենք մեր չարիքները և այնքան համարձակություն կստանանք, որ մինչևիսկ ուրիշներին վերակացու կլինենք, ինչպես այն քանանացին, որ ոչ միայն ինքը վայելեց համարձակությունն ու գովասանքները, այլ նաև կարողացավ իր դստերն հափշտակել անտանելի չարիքներից: Զկա՛ աղոթքներից առավել ջերմ և զորեղ ոչինչ: Նրանք և՛ մոտակա չարիքներն են լուծում, և՛ այն ժամանակ ազատում են տանջանքներից: Արդ, որպեսզի և մեր այժմյան կյանքը դյուրին դարձնենք, իսկ այնտեղ համարձակությամբ գնանք, մեծ ջանք և հոժարություն ցույց տանք աղոթքների մեջ, որովհետև [միայն] այդպես կարող ենք հանդիպել առաջիկա բարիքներին: Որոնց թող բոլորս հասնենք մեր Աստծու՝ Քրիստոսի շնորհներով: Նրան փառք հավիտյանս. ամեն:

ԱՐԱՐԱԾՈՅ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

ՃԱՌ Ա

Ասված քառասնօրյա պահքից առաջ՝ Աղուհացամուտին, և թե ինչո՞ւ է: Մովսեսը պատմությունն սկսում երկնքի ու երկրի (արարումից)

Ա. Հաճելի է գարունը նավավարներին, ախորժելի է նաև երկրագործներին, բայց ո՛չ նավավարներին և ո՛չ էլ երկրագործներին գարունը այնպես հաճելի չէ, ինչպես պահքի ժամանակը՝ նրանց, ովքեր կամենում են իմաստասիրել[1]: Պահքի ժամանակը հոգևոր գարուն է հոգու համար, խորհուրդների ճշմարիտ խաղաղություն: Երկրագործներին գարունը հաճելի է, քանի որ նրանք տեսնում են, որ երկիրը զարդարվում ծաղիկներով, և որ բազմազան բույսերը ծաղկազարդ պատմուճանի նման ծածկում են այն: Նավավարներին գարունը հաճելի է, քանի որ նրանք ապահովաբար են նավարկում տարածուն ալիքների վրայով, իսկ մեծ խաղաղության մեջ խաղում են դելֆինները՝ հաճախ վեր թռչելով հենց նավի կողքին: Բայց մեզ հաճելի է պահքի գարունը, քանի որ այն մեր մեջ խաղաղեցնում է սովորական ալիքները ոչ թե ջրերի, այլ անբան ցանկությունների, և մեզ համար պատրաստում պսակ ոչ թե ծաղիկներով, այլ հոգևոր շնորհների պարգևներով. «Որպեսզի, ասվում է, շնորհի պսակ կրես քո գլխին» (Առ. Ա 9): Ծիծեռնակի հայտնվելն այնպես չի հալածում ձմեռը, ինչպես որ պահքի գալուստն է մեր մտքից հեռացնում կրքերի ձմեռը: Այլևս հոգին չի կռվում մարմնի հետ. աղախինը չի ընդդիմանում տիկնոջը, այլ ավարտվեցին մարմնի բոլոր պատերազմները:

[1] Առաքինի վարք ունենալ

Եվ արդ, երբ մեր մեջ մեծ խաղաղություն է և խորը հանդարտություն, եկ և մենք մեր վարդապետության մակույկը ձգենք նավահանգստից նավահանգիստ՝ առաքելով դեպի ձեր լսելիքը: Ահա համարձակվում ենք իմաստասիրել վսեմ բաների՝ երկնքի, երկրի, ծովի և արարչության այլ մարմինների մասին, քանզի այսօր մեր ընթերցվածքն այդ էր:

«Բայց, կասի որևէ մեկը, մեր ինչի՞ն է պետք արարչագործության մասին խոսքը»: Այն մեզ [օգտակար է], սիրելինե՛ր: Եթե արարածների մեծության ու գեղեցկության համեմատ ճանաչվում է Արարիչը, ապա մենք որքան քննենք արարչության վսեմությունն ու գեղեցկությունը, այնքան ավելի կմոտենանք Արարչին:

Մեծ բարիք է ճանաչելը, թե ինչ բան է արարածը, և ով է Արարիչը, ինչ է արարչությունը, և ով է Արարողը: Եթե ճշմարտության թշնամիները կարողանային իսկապես տարբերել սա, ապա ամեն բան չէին խառնի՝ բարձրագույնը ցածում դնելով: Այդ նշանակում է ոչ թե այն, որ նրանք աստղերն ու երկինքը ներքև իջեցրին և երկիրը վերև հանեցին, այլ որ երկնավոր Թագավորին իջեցրին թագավորական գահից և արարածների կարգում դասեցին, իսկ արարածներին պատվեցին աստվածային գերազանցությամբ: Եթե մանիքեականները կարողանային լավ դատել արարածների մասին, ապա ոչնչից ստեղծվածը՝ նյութը, անցողիկը, փոփոխության ենթական, չէին պատվի, իբրև անեղի: Եթե կարողանային լավ դատել արարածների մասին, ճշմարտությունից չէին շեղվի և Արարչի փոխարեն չէին պաշտի ու ծառայի արարածներին: Գեղեցիկ է երկինքը, բայց արարված է, որպեսզի դու երկրպագես Արարողին: Պայծառ է արեգակը, բայց որպեսզի պատվես այն Ստեղծողին: Իսկ եթե դու մնում ես (միայն) արարչությամբ հիացող, նայում ես միայն ստեղծագործության գեղեցկությանը, ապա լույսը քեզ համար խավար է, ավելի ճիշտ՝ դու խավար դարձրեցիր լույսը :

Տեսնո՞ւմ ես՝ որքան բարի է իմանալ արարչության վարդապետությունը: Մի՛ արհամարհիր այդ բարիքը, այլ լսի՛ր ուշադիր մեր խոսքերը. մենք խոսելու ենք ոչ միայն երկնքի, երկրի և ծովի մասին, այլ նաև մեր լինելության, նաև այն մասին, թե որտեղից է մահը, ինչու կյանքը դարձավ տաժանելի, որտեղից են տրտմություններն ու հոգսերը: Այդ ամենի և ուրիշ շատ բաների մասին բացատրությունները Աստված մեզ պարգևեց այդ գրքի մեջ[1]: Աստված չի հրաժարվում պաշտպանվել մարդկանց առջև և մարգարեի միջոցով գոչում է՝ ասելով. «Եկե՛ք խոսենք» (Ես. Ա 18): Եվ ոչ միայն պաշտպանվում է և դատվում, այլ դեռ սովորեցնում էլ է, թե մենք ինչպես ազատվենք դատապարտությունից: Քանզի պարզապես չի ասում՝ եկե՛ք խոսենք, այլ նախապես ցույց է տալիս, թե ինչ պետք է ասել և ինչ անել և հետո ուղղում դեպի ատյանը: Լսի՛ր, թե վերևում ինչ է ասում մարգարեն. «Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք, իմ աչքի առաջ ձեր չար արարքները թոթափեցե՛ք ձեզնից, վե՛րջ տվեք ձեր չարագործություններին: Սովորեցեք բարի՛ք գործել, արդարությո՛ւն փնտրեցեք, արդարաղա՛տ եղեք որբի հանդեպ, իրավո՛ւնք տվեք այրուն» (Ես. Ա 16, 17): Եվ ապա ասում է. «Եկե՛ք խոսենք իրար հետ, ասում է Տերը»: Ես չեմ կամենում, ասում է, ձեզ դատի վերցնել անպաշտպան, այլ մատակարարելով ձեզ արդարանալու միջոցներ: Ես ձեզ կոչում եմ պատասխանատվության և կամենում եմ ձեզ հետ դատի մտնել ոչ թե, որպեսզի դատապարտեմ ձեզ, այլ խնայեմ: Այդպես է ասում նաև մեկ այլ տեղում. «Նախ ասա՛ դու քո անօրենությունները, որ արդարացվես» (Ես. ԽԳ 26): Դաժան ու անխիղճ մեղադրող ունես, ավելի շուտ հասնելով՝ գրավի՛ր նրա տեղը և փակի՛ր անամոթ բերանը:

Բ. Արդ, ի սկզբանէ Աստված խոսում էր մարդկանց հետ, որքան մարդկանց կարողությունն է Աստծուն լսելու: Այդպես Նա եկավ Ադամի մոտ, այդպես սաստեց Կայենին, այդպես խոսեց Նոյի հետ, այդպես իբրև հյուր Աբրահամի մոտ եկավ: Բայց երբ մեր բնությունը խոտորվեց դեպի չարութ-

[1] Այսինքն՝ Ծննդոց գրքում:

յունը և կարծես հեռացավ դեպի հեռու, օտար երկիր, այն-ժամ արդեն իբրև հեռու օտար երկրում գտնվողի՝ Աստված մեզ Գիր է ուղարկում, որպեսզի այդ Գրի միջոցով մեր մեջ նորոգի նախկին սերը: Այդ Գիրը ուղարկեց Աստված, և բերեց Մովսեսը: Իսկ ի՞նչ է ասում այդ Գիրը: «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծն. Ա 1): Ինչո՞ւ չի ասում հրեշտակների մասին, հրեշտակապետերի մասին: Քանզի եթե Արարիչը ճանաչվում է արարածներով, ապա առավել ևս հայտնվում է նրանցով: Գեղեցիկ է երկինքը, բայց ոչ այնպես գեղեցիկ, ինչպես հրեշտակները, լուսավոր է արեգակը, բայց ոչ այնպես, ինչպես հրեշտակապետերը:

Ինչո՞ւ թողեց բարձրագույն ճանապարհը և մեզ առաջնորդում է ցածրագույններով: Քանի որ նա խոսում է հրեաների հետ, որոնք այնքան անմիտ էին, զգայականին կապված և հենց նոր էին դուրս եկել Եգիպտոսից, ուր մարդիկ պաշտում էին կոկորդիլոսներին, շներին ու կապիկներին, ուստիև անհնարին էր նրանց բարձրագույն ճանապարհով առաջնորդելով բերել դեպի Արարիչը: Այն ճանապարհը բարձր էր, բայց տկարների համար խիստ դժվար, ծանր և զառիվեր: Այդ պատճառով էլ նրանց հեշտ ճանապարհով էր տանում՝ երկնքի, երկրի, ծովի և բոլոր երևացող բաների մասին վարդապետելով: Եվ որ իսկապես այս էր պատճառը, լսի՛ր, թե ինչպես է մարգարեն նրանց ասում վերին զորությունների մասին, երբ նրանք փոքր-ինչ աճեցին. «Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքից, օրհնեցե՛ք նրան բարձունքներից: Օրհնեցե՛ք նրան, նրա բոլո՛ր հրեշտակներ, օրհնեցե՛ք նրան, նրա բոլո՛ր զորություններ, քանզի նա ասաց, և դրանք եղան, հրամայեց, և դրանք հաստատվեցին» (Սաղմ. ՃԽԸ 1, 2, 5):

Իսկ ի՞նչ զարմանալի բան կա, եթե Հին Ուխտում այսպիսին էր ուսուցման եղանակը, եթե նաև Նորում, երբ հասել էր ժամանակը բարձրագույն վարդապետությունների, Պողոսը, խոսելով աթենացիների հետ, գնաց այն նույն ճանապարհով, ինչ Մովսեսը՝ հրեաներին ուսուցանելիս: Նա նույնպես հրեշտակների ու հրեշտակապետերի մասին չասաց նրանց,

այլ երկնքի, երկրի ու ծովի. ահա թե ինչպես էր քարոզում. «Աստված, որ ստեղծեց այս աշխարհը և այն ամենը, ինչ նրա մեջ կա, նա՛ է Տերը երկնքի ու երկրի. նա ձեռակերտ տաճարներում չի բնակվում» (Գործք, ԺԷ 24): Բայց երբ նա խոսում էր փիլիպեցիների հետ, նրանց արդեն այս ճանապարհով չէր բերում, այլ նրանց առջև էր դնում բարձրագույն քարոզը՝ ասելով. «Նրանով ստեղծվեց ամեն բան, որ երկնքում է և երկրի վրա. թե՛ աթոռները, թե՛ տերությունները, թե՛ իշխանությունները, թե՛ պետությունները, ամեն բան Նրանո՛վ և Նրա՛ համար ստեղծվեց» (Կողոս. Ա 16): Այդպես նաև Հովհաննեսը, խոսելով ավելի կատարյալների՝ իր աշակերտների հետ, հիշեցրեց միաժամանակ բոլոր արարածների մասին: Զասաց՝ երկինքը, երկիրն ու ծովը, այլ. «Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրա չեղավ ոչինչ, որ եղել է» (Հովհ. Ա 3)՝ թե՛ երևացողները և թե՛ չերևացողները:

Ինչպես որ ուսուցիչների մեջ մեկը, մորից վերցնելով երեխային, նրան սովորեցնում է նախ գիրը, մյուսը, աշակերտին ընդունելով ուրիշ ուսուցչից, նրան տանում է դեպի բարձրագույն ուսմունքները, այդպես էլ արեցին Մովսեսը, Պողոսը և Հովհաննեսը: Մովսեսը, գործ ունենալով մեր բնության հետ, որը ոչինչ չգիտեր, որն հենց նոր էր կտրվել կաթից, նրան սովորեցրեց աստվածճանաչության այբուբենը, իսկ Հովհաննեսն ու Պողոսը, Մովսեսից՝ իբրև ուսուցչից, մեզ առնելով՝ տանում հանում են դեպի բարձրագույն ուսմունքը՝ կարճառոտ հիշեցնելով նախկինում ուսուցանվածը: Տեսա՞ր երկու վարդապետությունների ազգակցությունը, տեսա՞ր նրանց միաբանությունը: Լսեցի՞ր (Հին Ուխտում) զգայական արարածների արարման մասին, դարձյալ՝ լսի՛ր և այլ (զորությունների) մասին Դավթից, ով ասում է. «Նա ասաց, և եղան» (Սաղմ. ԼԲ 9): Այդպես էլ Նորում (առաքյալը), խոսելով անեբևույթ զորությունների մասին, խոսեց զգալի արարածների մասին. «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»: Այս խոսքը կարճ է ու պարզ՝ մեկ արտահայտություն. բայց այն կարող է կործանել հակառակորդների պարիսպները:

Նայի՛ր. մանիքեցին ասում է՝ նյութը ստեղծված չէ: Դու նրան ասա՛. «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը», և անմիջապես կկործանես նրա ամբարտավանությունը: «Բայց, կասի մեկը, նա չի հավատում Գրքի խոսքին»: Այդ դեպքում փախե՛ք նրանից՝ իբրև մոլագարից: Ով չի հավատում այն ամենին, ինչ ասում է Աստված, այլ մեղադրում է ճշմարտությունն իբրև սուտ, մի՞թե այդ անհավատությամբ հայտնի չի դարձնում իր խելագարությունը: Բայց, ասում են, ինչպես կարող է ոչնչից ինչ-որ բան առաջանալ: Իսկ դու ասա՛ ինձ՝ ինչպե՞ս կարող է գոյություն ունեցողներից առաջանալ ինչ-որ բան: Որ երկիրը ոչնչից եղավ, հավատում եմ, իսկ դու կասկածում ես, բայց որ մարդը հողից ստեղծվեց, խոստովանում ենք երկուսս էլ: Արդ, ասա՛ ինձ՝ այն, ինչ երկուսս էլ խոստովանում ենք և ավելի դյուրին է. հողից ինչպե՞ս գոյացավ մարմնի բնությունը. չէ՞ որ հողից լինում է կավ, աղյուս, սափոր, խեցի, բայց հողից գոյացած մարմին ոչ ոք երբևէ չտեսավ: Ինչպե՞ս եղավ մարմնի բնությունը, ինչպե՞ս ոսկոր ստեղծվեց, ինչպե՞ս ստեղծվեցին ջղերը, երակները, շնչերակները, նյարդերը, ճարպը, միսը, մաշկը, եղունգները, մազերը և այսպիսի զանազան բաները մեկ պատճառից՝ հողից: Դու այդ բացատրել չես կարող: Եվ տարօրինակ չէ՞, որ հայտնին ու դյուրինը չիմացողները քննում ու դատում են դժվարինների ու ծածուկների մասին:

Գ. Կամենո՞ւմ ես՝ ուշադրություն դարձրու մեկ այլ, ավելի դյուրին բանի, որ լինում է ամեն օր, և որի բացատրությունը նույնպես չես կարող տալ ինձ: Մենք ամեն օր հաց ենք ուտում, ասա՛ ինձ՝ ինչպես է հացի բնությունը դառնում արյուն, լորձ, մաղձ և դրանց նման այլ խոնավություններ: Չէ՞ որ հացը խիտ ու ծանր է, արյունը՝ հեղուկ ու տարածվող, այն սպիտակ է կամ էլ ցորնագույն, իսկ արյունը՝ կարմիր կամ սև: Եթե քննես որակական մյուս տարբերությունները, կտեսնես, մեծ տարբերություն հացի ու արյան միջև: Ինչպե՞ս է տեղի ունենում այդ, ասա՛ ինձ և ավարտի՛ր խոսքը:

Բայց չես կարող: Եվ արդ, չկարողանալով բացատրել հանապազօրյա կերակուրի փոփոխությունը, կարո՞ղ ես ինձնից պահանջել Աստծո արարչագործության քննությունը: Վերջին անմտություն չէ՞ այդ:

Եթե Աստված նման է մեզ, պահանջի՛ր բացատրությունն այն ամենի, ինչ կատարվում է: Բայց ավելի լավ է՝ այդ դեպքում էլ չպահանջել, քանի որ մարդկային արվեստի գործերում էլ չենք կարող ասել, թե ինչպես են դրանք կատարվում, օրինակ՝ ինչպես է հանքում կազմվում ոսկու բնությունը, ինչպես է ավազը փոխարկվում պարզ ապակու: Կարելի է այսպիսի բազում ուրիշ բաներ թվարկել, որոնք լինում են մարդկային արվեստով, բայց ինչպես՝ մենք չգիտենք: Բայց եթե Աստված նման է մեզ, պահանջի՛ր բացատրություն, իսկ եթե անհունորեն հեռու է մեզնից և առանց հավասարության գերազանց, ինչպե՞ս ծայր հիմարություն չի լինի, եթե մենք, խոստովանելով Նրա անսահման իմաստությունն ու զորությունը՝ աստվածային և անհասանելի, Նրանից եղածների, իբրև մարդկային ինչ-որ ստեղծագործությունների համար հաշիվ պահանջենք:

Բայց թողնենք իմաստակելը և վերստին ելնենք անսասան վեմին: «Ի սկզբանե Աստված արարեց երկինքն ու երկիրը»: Կանգնի՛ր այս հիմքի վրա, որպեսզի քեզ չփոփոխի դեպի մարդկային իմաստակության խռովությունը. քանզի մահկանացուների մտածումներն անստույգ են, և մեր գիտելիքները՝ անհաստատ» (Իմաստ. Թ 14): Մի՛ թողնիր հաստատուն հիմքը և մի՛ վստահիր քո հոգու փրկությունը թույլին ու անհուսալիին, այլ «հաստա՛տ մնա այն բանի մեջ, որ սովորեցիր և որին հավատարիմ եղար» (Բ Տիմ. Գ 14) և ասա՛ «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»: Եթե մոտենա մի մանիքեցի, մարկիոնական, վաղենտիանոսյան աղանդով ախտացած կամ մեկ ուրիշը, նրա առջև դի՛ր այս խոսքը: Եթե տեսնես, որ նա ծիծաղում է, լա՛ց եղիր նրա համար, իբրև մոլագարի: Նրանց (հերձվածողների) դեմքը գունատ է, հոնքերը՝ կախ, խոսքերը՝ ցածրաձայն: Բայց փախի՛ր խաբեությունից և ճանաչի՛ր

ոչխարի մորթիով ծածկված գայլին: Ատի՛ր նրան հատկապես այն բանի համար, որ նա քո՝ իր նման ծառայի հանդեպ խաղաղ ու խոնարհ է թվում, իսկ մեր բոլորի Տիրոջ հանդեպ՝ ավելի կատաղի է, քան գազազած շունը, անհաշտելի պատերազմ է մղում երկնքի դեմ և Աստծո դեմ է դնում հակառակ զորություն[1]: Փախի՛ր պղծություններից, ատի՛ր մահացու թույնը և մեծ զգուշությամբ պահի՛ր հայրերից ստացած ժառանգությունը՝ հավատը և աստվածային Գրքերի ուսուցումները: «Ի սկզբանէ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»: Ի՞նչ է նշանակում, որ նախ (անվանվում է) երկինքը, և ապա՝ երկիրը, նախ՝ ձեղունը, և ապա հատակը: (Աստված) չի ենթարկվում բնական անհրաժեշտության և ոչ էլ ենթակա է արվեստի կանոններին, քանի որ բնության, արվեստի և բոլոր մյուս գոյերի Արարիչն ու ստեղծագործողը Աստծո կամքն է:

«Եվ երկիրը անձև ու անկազմ էր» (Ծն. Ա 2): Ինչո՞ւ Մովսեսը երկինքը ավարտուն ներկայացրեց, իսկ երկիրը՝ աստիճանաբար՝ կազմվելիս: Որպեսզի դու, լավագույն տարերքով ճանաչելով Նրա ամենակարողությունը, համոզվես, որ Նա կարող էր երկիրը նույնպես երկնքի նման ստեղծել, բայց քեզ համար և քո փրկության համար այդպես չարեց: «Ինչպե՞ս, կհարցնի մեկը, ինձ համար և իմ փրկության համար»: Երկիրը ընդհանուր սեղան է, հայրենիք, դայակ և մայր, նաև ընդհանուր քաղաք և գերեզման: Մեր մարմինը և մարմնի կերակուրը նրանից է, նրա վրա ենք մենք ապրում, կենցաղավարում և մեռնելով՝ դարձյալ վերադառնում են դեպի այն: Արդ, որպեսզի անհրաժեշտ օգուտը չմղի քեզ հարկ եղածից ավելի զարմանալու նրանով, որպեսզի բարեգործությունների բազմաքանակությունը չշեղի դեպի ամբարշտություն, Մովսեսը քեզ ցույց է տալիս այն անկազմ ու անձև, որպեսզի դու, տեսնելով նրա անկատարությունը, աքանչանաս Նրանով, Ով արարեց այն և դրա մեջ դրեց այս ամբողջ զորությունը, որպեսզի դու փառավորես Նրան, Ով կազմեց այն մեզ համար: Աստված փառավորվում է ոչ միայն ուղիղ վարդապետությամբ, այլ նաև առաքինությամբ. «Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. Ե 16):

Դ. Կամենում եմ ավելացնել նաև խոսք ողորմության մասին, բայց ինձ ավելորդ է թվում խոսքով ուսուցանելը, երբ ձեզ գործերով սովորեցնում է այժմ ձեր մեջ նստածը՝ ձեր բոլորի հայրը և վարդապետը[1]: Նա կարծես իր նախահայրերից հայրենի տունը ստացավ այն բանի համար, որպեսզի այն (ծառայեցնի) օտարականներին մխիթարելուն: Նա բոլոր կողմերից այնտեղ է ընդունում ճշմարտության համար հալածվողներին և բոլոր ծառայությունները մատուցում նրանց, մինչև իսկ չգիտեմ՝ առավել նրա՞ տուն անվանեմ այն, թե՞ օտարականների, ավելի ճիշտ՝ հենց դրա՝ օտարականների տուն լինելու համար էլ հարկ և արժան է այն նրա տունը համարել: Քանզի մեր ունեցվածքը մերն է լինում այն ժամանակ, երբ մենք այն օգտագործում ենք ոչ թե մեզ, այլ աղքատների համար: Ինչպե՞ս: Հիմա կասեմ: Եթե փողը աղքատի ձեռքը տաս, ո՛չ զրպարտողը կարող է քեզ զրկել, ո՛չ նախանձի աչքերը կտեսնեն, ո՛չ ավազակը կհափշտակի, ո՛չ գողը պատը կծակի, ո՛չ էլ ծառան կվերցնի ու կփախչի, քանի որ այդ տեղն անկողոպելի է : Իսկ եթե թաղես տան մեջ, ավազակի, մարդասպանի, նախանձի, զրպարտողի, ծառաների և բոլոր վնասների համար տեղը դյուրամատչելի կդարձնես: Շատերը կարողանում են բազում դռներով ու նիգերով ամրացնել արտաքին հարձակումներից, բայց պահապաններից փախցնել չեն կարող, այլ նրանք իսկ՝ պահապաններն են վերցնում ու փախչում: Տեսնո՞ւմ ես, որ մենք մեր ունեցված-

---

1 Մանիքեն կամ Մանեսը ասում էր, թե նյութը հավերժ է: Նրա գիրքը, ինչպես վկայում է Եպիփանը, սկսվում էր այսպիսի բառերով. «Եղել է Ապրված և նյութը, լույսն ու խավարը»: Մարկիոնը ասում էր, որ կա երկու սկիզբ՝ բարի և չար. նա, ինչպես վկայում է Եպիփանը, ասում էր, որ բարի Ապրված չի մասնակցել աշխարհի արարչագործությանը: Վաղենտիանոսականները որդեգրվել էին Էոններին, որոնց թիվը առաջին սկզբում Վաղենտիանոսի կարծիքով եղել է երեսուն՝ տասնհինգ արական, և տասնհինգ իգական:

1 Հավանաբար Անտիոքի Փլաբիանոս եպիսկոպոսը:

քի տերն ենք մանավանդ այն ժամանակ, երբ այն տալիս ենք աղքատներին:

Եվ ոչ միայն պահպանության համար է այն ամենաապահով տեղը, այլ նաև այն պատճառով, որ մեծ շահ ու օգուտ է բերում: Քանզի եթե փոխ տաս մարդկանց, կստանաս հարյուրերորդ մասը, իսկ եթե փոխ տաս Աստծուն աղքատների միջոցով, ոչ թե հարյուրերորդ մասը, այլ հարյուրապատիկ ավելին կստանաս: Եթե սերմանում ես բարեբեր հողում, ապա նաև այնժամ, երբ այն բերում է առատ բերք, ստանում ես տասն անգամ ավելի, քան ցանել ես, իսկ եթե երկնքի համար սերմանես, ապա հարյուրապատիկ ավելի արդյունք կհավաքես և հավիտենական կյանք կունենաս: Այստեղ սերմ ցանողները մեծապես չարչարվում են, իսկ այնտեղ առանց արորի, եզների, մշակների և սերմանողների բոլոր չարչարանքների աճում են պտուղները. ո՛չ խորշակ կա, ո՛չ հեղեղ, ո՛չ ժանգ, ո՛չ կարկուտ, ո՛չ մարախի գնդեր, ոչ գետերի հեղեղումներ և ոչ այլ բան կարող է վախեցնել նրանց, ովքեր սերմանում են այնտեղ, այլ բոլոր վնասներից գերիվեր են այնտեղ սերմանողներն ու սերմերը:

Արդ, եթե չկա ո՛չ չարչարանք, ո՛չ վտանգ, ո՛չ վախ, ո՛չ ուրիշ անբարենպաստ պայման, աճում է շատ ավելի, քան ցանված է, և բարիքներն այնքան են շատանում, որ «աչքը չտեսավ, ականջը չլսեց, և մարդու սրտի մեջ չընկավ» (տե՛ս Ա Կոր. Բ 9), ապա մի՞թե մեծ հիմարություն չի լինի թողնել շատը և գնալ քչի ետևից, թողնել վստահելին և ձգտել անվստահելիին, վտանգավորին ու մահացուին: Ինչպիսի՞ ներում պիտի գտնենք այդ անողներս, ինչպիսի՞ պատասխան: Անշուշտ մեր աղքատությունն ենք առաջ բերում. բայց ավելի աղքատ չենք, քան այն այրին, ով ընդամենը երկու լումա ուներ և այն էլ գցեց (տե՛ս Ղուկ. ԻԱ 2): Այսուհետև նախանձե՛նք նրա հարստությանը,, նմանվե՛նք նրա հոժար առատամտությանը, որպեսզի մենք էլ ստանանք այն առատ բարիքներից, որոնց թող արժանանանք բոլորս շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Որի հետ Հորը և Սուրբ Հոգուն փառք և զորություն հավիտյանս հավիտենից. ամեն:

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ՃԱՌԸ ԹՈՎՄԱՍԻ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ահա դարձյալ տոն է, ահա դարձյալ հոգիների փրկություն է: Այսօր վայելուչ կերպով ձեզ եմ ընծայում այս խոսքը՝ և՛ ինձ՝ ընծայողիս հարստանալու, և՛ ձեր՝ լսողներիդ օգուտի համար: Հասել եմ՝ պատմելու Թովմասի մասին, ով սկզբում չհավատալով մեր Փրկչի հարությանը՝ տեսնելով և շոշափելով [Նրա վերքերը]՝ «Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ» (Հովհ. Ի 28) խոստովանեց Նրան:

Բոլորդ միասին ձեր սրտերը դեպի ինձ ուղղեք, հանդարտությամբ լսեք իմ խոսքերը և դրանից օգուտ պտղաբերեք:

Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս խարխլեց դժոխքի ամենակեր որովայնը, եղավ անդրանիկը մեռելներից և փակված դռներով մտավ Իր աշակերտների մոտ: Երկվորյակ անվանված Թովմասն այնտեղ նրանց հետ չէր, երբ Հիսուս եկավ:

Ո՛վ սքանչելիքին: Փափագում էր մեռնել Նրա հետ, և ով փափագում էր, հեռու էր: Քաջ հովիվը հասավ Իր հոտին, իսկ ոչխարները գավթից դուրս էին ու մոլորված: Երկնքի Թագավորը մերձենալով՝ եկավ հասավ, իսկ զորականը դեգերում էր աստվածային զորքից հեռու : Արդյո՞ք Թովմասի՝ աշակերտների հետ չլինելը աստվածային տնտեսության խորհուրդ չէր: Որովհետև եթե նա նրանց հետ լիներ, չէր երկմտի, եթե չերկմտեր, թերևս չէր էլ վիճաբանի, և եթե չվիճաբաներ, չէ՛ր շոշափի: Կհավատա՞ր արդյոք, եթե չշոշափեր: Եթե չհավատար, թերևս մեզ էլ չէր ցույց տա այնպե՛ս հավատալ:

Թովմասի անհավատությունը մայրը եղավ մեր հավատի, որով էլ մենք, չտեսնելով Քրիստոսին, քարոզում ենք Նրան:

Քանի որ Թովմասը Նրան երկրպագեց տեսնելով և շոշափելով, այդ պատճառով ենք մենք առանց տեսնելու և շոշափելու վերօրհնում Նրան:

Երբ Թովմասը եկավ, [մյուս] աշակերտները նրան ասացին. «Տեսանք Տիրոջը: Տեսանք «երեք օրից հարություն պիտի առնեմ» (Մատթ. ԻԷ 63) Ասողին, և խոսքի ճշմարտությունը գործերից տեսանք: Տեսանք «Ես եմ հարությունը և կյանքը» (Հովհ. ԺԱ 25) Ասողին, քանզի կյանք և կյանքի հարություն ստացանք: Տեսանք «Իշխանություն ունեմ դնելու իմ անձը և իշխանություն ունեմ կրկին առնելու այն» (Հովհ. Ժ 18) Ասողին և Նրա իշխանությունը Նրա գործերից ընդունեցինք:

Մեր Փրկիչը հանկարծակի ներս մտավ. ո՛չ թե դուռը բացելով եկավ, իսկ մենք՝ Նրա սքանչելիքի և գալստյան պատճառով վայելչապես զարհուրածներս, զարմացանք: Եվ նորագործված տեսանք Նրա ձեռքերը, որոնք ընդունեցին մեխերի հարվածները և ջնջեցին մարդկանց մեղքերը:

Տեսանք Նրա ձեռքերը, որոնք խորտակեցին մահը, իսկ Նրա հարությունը տեսան բոլոր մարդիկ: Տեսանք նաև Նրա սուրբ կողը, որից արյուն և ջուր բխեց»: Թովմասն ասաց. «Դուք բոլորդ տեսաք մեր Տիրոջը, միայն ե՞ս եմ, որ Նրան տեսնելու արժանի չեմ: Մի՞թե ես էլ Նրան այնպես չպատվեցի, ինչպես բոլորդ, մի՞թե բոլորիդ պես ես էլ Նրա կողմից չկանչվեցի, մի՞թե բոլորիդ պես ես էլ խաչված չտեսա Նրան: Արդ, ինչպես ձեզ հետ տեսա տրտմեցնող իրադարձությունները, կամենում եմ տեսնել նաև պայծառ բաները: Ինչպես որ տեսա Քրիստոսի մեռնելը, կամենում եմ նաև Նրա հարությունը տեսնել: Սակայն մինչև Նրա ձեռքերի վրա մեխերի հետքերը չշոշափեմ և իմ ձեռքերը Նրա կողի մեջ չխրեմ, չե՛մ հավատա» (տե՛ս Հովհ. Ի 25):

Հապաղի՛ր, ո՛վ Թովմաս, քո այդ անհավատության մեջ: Հապաղի՛ր, մինչև ընդունես հավատը իբրև խարիսխ հոգուդ: Հապաղի՛ր փոխվել այդպիսի հավատի և կտեսնես Ցանկալիին:

Սիրո՛ւմ եմ երկմտությանդ խորհուրդը, որն հեռացնում է ամեն մի երկմտություն: Գովո՛ւմ եմ քո քրիստոսասեր օրինակը՝ որպես անհավատության բոլոր վճիռները ջնջող, որպեսզի ես առավել ևս հավատամ, հաստատությամբ փնտրեմ Տիրոջը և կոչեմ մոտեցողներին: Որպեսզի քո՝ Նրան փնտրելով ու կոչելով, նաև ես իմ Փրկչի գիրկն ընկնեմ:

Թովմասն ասաց. «Եթե չտեսնեմ և իմ ձեռքերով [չշոշափեմ Նրա վերքերը], ձեր ասածին չեմ հավատա: Որովհետև ձեր ասածը իմ ականջին է հավատալ տալիս, սակայն վկա աչքերս են. միայն այն ժամանակ կընդունեմ ձեր խոսքերը և կհավատամ սքանչելիքին, երբ մատներս խրեմ նրա մեխերի տեղերը: Ձեռքերով կստուգեմ կողը, որն ինձ համար խոցվեց, և այն ժամանակ կերկրպագեմ Նրան, Ով մահվանից դեպի ինձ դարձավ»:

Մինչ Թովմասն այս էր ասում իր աշակերտակիցներին, փակված դռների միջով նրանց մոտ մտավ Հիսուսը: Մտավ կյանքի Դուռը այնպես, ինչպես Ինքը միայն գիտի: Քանի որ ինչպես երբ ծնվեց, և չապականվեց կուսության դուռը, այնպես էլ տան ներսում գտնվեց առանց տան փակը հեռացնելու:

Եվ դարձյալ՝ ինչպես մատանիով կնքված գերեզմանից հարություն առավ, այնպես էլ փակված դռներով ներս մտավ՝ ինչպես Ինքը կամեցավ: Եվ ոչինչ չարգելեց Նրան, որովհետև ամեն բան Նրա կամքով է շարժվում: Համայնի Տերը լինելով՝ այստեղ էր. այդպես նաև Նրա ծնունդն է ամեն բանում: Սակայն Նրա՝ գերեզմանից դարձը գերազանցո՛ւմ է բոլոր մտքերը: Նմանապես նաև Իր աշակերտների մոտ Նրա մուտքն է անճառելի և անպատմելի: Քանզի ընկալեցի մտնելը, բայց թե ինչպես մտավ, չսովորեցի: Ո՛չ հասկացա այդ և ո՛չ էլ հանդգնում եմ ճառել [այդ մասին]:

Օրհնո՛ւմ ենք Մտնողին և մտացածին խոսքերով չենք քննում, [թե ինչպես մտավ]: Խորհուրդն եմ քարոզում և ո՛չ բացատրելին: Սքանչանում եմ կատարվածով, իսկ թե ինչպես եղավ, չե՛մ փնտրում: Անխռովաբար հավատում եմ գրվածին

և փրկվում, քանի որ տերունական սքանչելիքների մասին լսողն եմ և ո՛չ փնտրողը աստվածային ազդեցությունների:

Եթե անհավատներից մեկն ինձ ասի. «Ամբողջովին օտար բան ես քարոզում. ինչպե՞ս կարող էր մարմինն անցնել փակ դռնով՝ առանց այն բացելու», ես նրան կասեմ. «Ինչպե՞ս կարողացավ հրեշտակը Ամբակում մարգարեին իջեցնել առյուծների գուբը և այնտեղից հանել նրան, իսկ կնիքը, որ փոսի վրա էր դրված, ամբողջական մնաց» (տե՛ս Դան. ԺԴ 32-37): Արդ, ինչպես ծառան արեց, ինչ որ կամեցավ, այնպես էլ Տերն արեց, ինչ որ կամեցավ: Այդպես է լինում Աստծո կամքով: Այդպես է լինում մարդացած Բան Աստծո կամքով:

Մեր Փրկիչը ճշմարտապես մտավ Իր աշակերտների մոտ, ինչպես որ Ինքը կամեցավ, որպեսզի ողորմի բոլորին: Եվ նրանց ասաց. «Խաղաղությո՛ւն ձեզ: Խաղաղություն եմ և խաղաղություն եմ շնորհում ձեզ, որպեսզի իմ բնության հատկությունը ձեզ տամ» (տե՛ս Հովհ. Ի 26): Իմ խաղաղությունը [խաղաղեցնում է] բոլոր պատերազմները և [ամեն բան] հնազանդեցնում ձեր ոտքերի տակ: Այդ խաղաղությունը ձեր ծառան կդարձնի ամբողջ աշխարհը: Իմ խաղաղությունը] հաղթանակ կպարգևի ձեզ արարածների դեմ»:

Աշակերտներն ուրախացան Տիրոջ երևմամբ և որ Նրա ձայնը լսելուն արժանացան: Երբ արմունկներով խփում էին Թովմասին, աչքերով ակնարկում նրան՝ ասելով.«Քեզ չասա՞ցի՞նք, թե Տիրոջը տեսանք, իսկ դու չհավատացիր մեր խոսքերին: Ահա եկավ Փափագելին Ինքը, վայելի՛ր, ինչ փնտրում էիր: Մոտեցի՛ր Նրան, Ով մեր փրկության համար եկավ մեզ մոտ, և տե՛ս Փնտրածդ»: Իսկ Թովմասը կանգնած էր՝ աչքերը հառած Նրա մարմնի անդամներին՝ մտածելով՝ իրենց մոտ եկողն իսկապե՞ս Նա է. մի՞թե հարություն է առել Նա, Ով մեռավ: Իսկ ի՞նչ արեց միակ Բարերարն ու Մարդասերը, Ով կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարտության գտությանն հասնեն: «Բե՛ր մատներդ այստեղ,- ասաց,- և տե՛ս Իմ ձեռքերը, որովհետև քե՛զ համար եկա ձեզ մոտ և քե՛զ համար հասա այստեղ, քե՛զ համար ձեռքերս մեխերի

հարվածների տակ դրեցի, որպեսզի փրկության առիթ տամ քեզ: Մոտեցի՛ր ինձ մարմնով, հոգով և հավատով, և հայտնապես իմացի՛ր, ինչ որ կամենում էիր իմանալ, կամենում էիր ստուգել իմ ձեռքերը, տե՛ս իմ կամավոր մահվան վերքերը, իմ մարմնի բոլոր անդամները քո առջև են, քննի՛ր: Ամոթ չե՛մ համարում վերքերս, չեմ ամաչում մարմնիս խոցվածքներից, որոնք ձեզ համար ընդունեցի: Ձեմ թաքցնում իմ փառքի հաղթությունը, հայտնում եմ ի լուր աշխարհի: Ինձ հայտ-հանդիման գիտի արեգակը, այդ պատճառով էլ խավարեց և ցերեկը գիշեր դարձրեց: Ինձ գիտի նաև երկիրը, այդ պատճառով էլ փախչելու տեղ փնտրեց: Գիտեն այս վեմերը, այդ պատճառով էլ պատռվեցին, որպեսզի ողբան ինձ, գիտեր նաև Տաճարի վարագույրը, այդ պատճառով էլ նախապես պատռվելով՝ ողբաց հրեաների կործանումը: Այդ վկայեցին նաև մեռյալները, այդ պատճառով էլ գերեզմաններից դուրս ելան:

Դո՛ւ էլ տես իմ ձեռքերը, ինչպես որ կամենում էիր, ձեռքդ բեր և դի՛ր իմ վերքերի մեջ: Կամենում էիր կողս տեսնել և ստուգել, ահա և այն եմ քեզ մատուցում, բե՛ր քո ձեռքը և խրի՛ր իմ կողի մեջ, շոշափի՛ր իմ մարմինը, որ առա կույս Մարիամից, և Կույսը անարատ մնաց: Շոշափի՛ր մարմինս, որ չարչարվեց իմ կամքով:Հպվի՛ր իմ մարմնին, որ ձեզ համար մեռավ, սակայն մահվան ապականություն չընդունեց: Մոտեցի՛ր մարմնիս, որ ահավոր է քերովբեների և պաշտելի՝ սերովբեների համար, և մի՛ եղիր անհավատ, այլ հավատացյալ: Գիտեմ, որ թանձր է հոգիդ, գիտեմ, թե ինչու ես ուզում այդ ամենը: Այդ պատճառով էլ կողերս այսպես թողեցի, որպեսզի նայես, շոշափես, հավատաս և փրկվե՛ս: Որպեսզի երբ գամ դատելու ողջերին ու մեռածներին, իմ թշնամիներին ցույց տամ խոցվածքներս և դատապարտեմ աստվածամարտներին, և որպեսզի հրեաները տեսնեն, ում որ խոցեցին» (տե՛ս Սաղմ. ԻԱ 18, Հովհ. ԺԹ 37):

Թովմասը պատասխանեց և ասաց.«Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ: Հավատում եմ Քո հարությանը, թագավորների Թագա-

վո՛ր: Հավատում եմ և չեմ փնտրում, ում որ գտա: Հավատում եմ և չեմ քննում իմ Տիրոջը: Հավատում եմ և չեմ վիճում Քո հարության մասին, որն ընկալեցի: Գիտե՛մ, թե Ում շոշափելու արժանացայ: Գիտե՛մ՝ Ում բռնեցին, Ում որ դժոխքը չկարողացավ բռնել: Գիտե՛մ՝ Ում եմ պաշտում՝ իմ Տիրոջը և Աստծուն: Դու ես իմ Տերն ու Աստվածը: Դու ես նախահավիտենականը, միաժամանակ նաև առժամանակյան: Դո՛ւ երկնային և երկրավոր: Դու, Ում հնարավոր չէ տանել, և տեսանելի: Դու մշտնջենավոր և [մարդկային] կերպի մեջ: Դու ճշմարիտ Աստված, որ [Քո] կամքով մարդացար մեր փրկության համար: Դու երկնքում և խաչի վրայ: Դու թագավորական աթոռին: Դու անչարչարելի ըստ հոգու և չարչարելի ըստ մարմնի: Դու անմահ՝ համագո Հոր պես, նույնպես և մահկանացու: Դու Ծնողի մշտնջենավորակից: Դու հարություն տվեցիր Քո մարմնի տաճարին՝ զորությամբդ Աստված լինելով: Քեզ եմ տեսնում մարմնի մեջ: Քեզ հավատում եմ՝ տեսնելով: Եվ քեզ Աստված եմ խոստովանում: Ընդունում եմ, ինչ որ տեսնում եմ: Եվ Ում որ նայում եմ, իմ ձայնով օրհնում եմ՝ Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ: Որովհետև Դու Քո իջմամբ իմ անձը հանեցիր անհավատության խորքերից: Դու Քո անմեղ մարմնի վրայ մեղքը դատապարտեցիր: Դու գերեվարված մարդկանց ազատեցիր: Դու ոտնակոխ արեցիր բանսարկուին, երբ կամեցար: Դու մեռցրիր մահը Քո զորությամբ և մեզ բոլորիս լուսավորեցիր: Դու երեքօրյա թաղմամբդ մեռելների հարությունը թողեցիր: Դու մարդկանց՝ երկնային, երկիրը՝ երկնքից պայծառ և ամեն բան վեհագույն դարձրիր: Դու մարդասեր Աստված եղար, որպեսզի մարդուն աստվածասեր դարձնես, Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ»:

Տերը նրան ասաց. «Ահա դու տեսար և հավատացիր: Երբ դարձյալ մարմնով բարձրանամ այնտեղ, որտեղից իջա, դարձյալ մի՛ դարձիր անհավատության և մի՛ ասա, թե՝ «Եթե չտեսնեմ Նրա ձեռքերի վրայ մեխերի հետքերը, չեմ հավատա»: Մի անգամ փափագեցի չհավատալդ, մի անգամ շոշափեցիր: Այսուհետև քարոզի՛ր, ինչ որ ընդունեցիր: Որովհետև երանելի՛ են նրանք, ովքեր չեն տեսնի և կհավատան» (տե՛ս Հովհ. Ի 29):

Եղբայրնե՛ր, թող այս երանությունը մեզ անցնի, որ չտեսանք և հավատում ենք: Որովհետև երանելի են նրանք, ովքեր հավատով տեսնում են անտեսանելին: Ովքեր բոլոր տոների և պատարագների ժամանակ տեսնում են Նրան հավատի աչքերով, երկրպագում են Նրան, իրենց բերանով համբուրում և իրենց ատամներով ուտում են Նրան, և սակայն չի հատնում Նա, Ում ուտում են: Երանելի՛ են նրանք, ովքեր ճշմարտությամբ և ամբողջ սրտով խոստովանում են իրենց մեղքերը և այլևս չեն վերադառնում դրանց, ինչպես շունը իր փսխածին:

Ո՜վ սքանչելի խորհուրդ, ո՜վ սոսկալի խորհուրդ. Նա Ով նստում է Հոր աջ կողմում, բարեպաշտների աջ կողմում է: Եվ Ով հրեշտակների կողմից օրհնվում է, վերցվում է աղտեղի ձեռքերով և չի բոցակիզում մեր դատապարտված բնությունն ու մատները: Այլ Արարիչն Ինքը հորդորում է մեզ և ասում. «Առե՛ք, կերե՛ք և խմե՛ք, սա է իմ մարմինը» (Ղուկ. ԻԲ 19-20): Բերե՛ք ձեր ձեռքը, խրե՛ք իմ կողի մեջ և վայելե՛ք իմ անդամներից»:

Արդ, այսուհետ մոտենանք մաքուր սրբությամբ և ընդունենք մեր Տիրոջը, Որին փառք հավիտյանս. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ ՃԱՌԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ՂՈՒԿԻԱՆՈՍ ՎԿԱՅԻՆ[1]

Ա. Ինչից երեկ վախենում էի, տեղի ունեցավ, կատարվեց այսօր. երբ տոնն ավարտվեց, նրա հետ միասին մեզնից հեռացավ նաև ժողովուրդը, և ահա սակավաթիվ եք ժողովածներդ: Լավ գիտեի, որ այդպես էլ լինելու է, բայց այդ երբեք պատճառ չի դառնա, որ հրաժարվեմ իմ այս խրատից: Թեև երեկվա մեր բոլոր ունկնդիրները չէ, որ հավանեցին մեր [խոսքերը], բայց նաև բոլորը չէ, որ չհավանեցին. և մեզ համար փոքր մխիթարություն չէ այդ. ուստիև այսօր էլ չեմ դադարի խրատելուց, որպեսզի նրանք, ովքեր մեզնից չլսեցին, ասած խոսքերս լսեն ձեզնից:

Ո՞վ կկարողանա լռությամբ համբերել դրանց այդչափ անփութությանը և կամ երբևէ ներել և անմեղ համարել նրանց, որ այդքան ժամանակ տեսան մորը [Եկեղեցին], նրա մեջ վայելեցին շնորհներ, իսկ հետո փախան նրանից, այլևս չկամեցան դառնալ նրա մոտ և ոչ թե Նոյի աղավնուն, այլ ագռավին նմանվեցին, և այն էլ՝ երբ դեռ շարունակվում են ձմեռն ու ալեկոծությունները, ամեն օր դաժան մրրիկներ են բարձրանում, իսկ այս սուրբ տապանը կանգնած է մեջտեղում, բոլորին կանչում և խնդրում է ապաստանել իր մեջ և իրեն ապավինածներին մեծ ապահովություն է տալիս: Քան-

[1] Այս Ղուկիանոսը անտիոքացի աստվածիմաց քահանան է, ով սովով ու զանազան տանջանքներով, ինչպես այստեղ պատմում է Ոսկերերանը, նահատակվեց Մաքսիմինոս կայսեր հալածանքների ժամանակ՝ 311 կամ 312 թվականին: Ներբողը խոսվել է Անտիոքում, 387 թվականին՝ Տիրոջ Ծննդյան տոնի հաջորդ օրը:

զի կասեցնում ու սանձում է ոչ թե ջրերի ու ալիքների հարձակումները, այլ անմիտ կրքերի անդադար շարժումները, վերացնում է նախանձը և ճնշում ամբարտավանությունը:

Այստեղ մեծատունը չի կարող արհամարհել աղքատին, որովհետև աստվածային Գրքերից լսում է, թե՝ «Ամենայն մարմին խոտ է, և մարդու ամբողջ փառքը նման է խոտի ծաղկի» (Ես. Խ 6): Իսկ աղքատը երբեք նախանձով չի լցվում, երբ տեսնում է մեկին հարստության մեջ, քանի որ ինքն էլ լսում է մեկ ուրիշ մարգարեի, ով ասում է. «Մի՛ վախենա, երբ մարդ հարստանում է, և մեծանում է փառքը նրա տան, քանզի մեռնելիս հետը ոչինչ չի տանի, և նրա տան փառքը նրա հետ չի թաղվի» (Սաղմ. ԽԸ 17-18):

Այսպիսին է այդ հարստության բնույթը. այն չի փոխադրվում իր տերերի հետ, իրեն ձեռք բերողների հետ այստեղից չի գնում, չի պաշտպանում նրանց դատավորների և հաշիվ պահանջողների առջև, այլ նրանցից սրընթաց փախչում է մահվան ժամին, շատերին էլ թողեց ու լքեց նրանց մահից առաջ. նրանից օգտվելը խաբուսիկ է, վայելքները՝ անհաստատ, դրանք ունենալը՝ վտանգաբեր:

Բայց առաքինությունն ու ողորմությունն այդպիսիք չեն. այլ անմատչելի են այդ գանձերը: Որտեղի՞ց է այդ հայտնի: Ով իմաստասիրեց այդ հարստության մասին՝ ասելով, թե՝ «Նրա տան փառքը նրա հետ չի թաղվի նրանից հետո», խոսում է նաև ողորմության գանձերի մասին, որոնք մնում են հավիտյան և երբեք չեն կողոպտվում, երբ ասում է. «Բաժանեց նա և տվեց աղքատներին. նրա արդարությունը կմնա հավիտյանս հավիտենից» (Սաղմ. ՃԺԱ 9):

Ի՞նչը կարող է լինել սրանից ավելի զարմանալի ու չքնաղ. ինչ որ հավաքվում է, կորչում է, իսկ ինչ որ բաժանվում է, մնում է. և միանգամայն արդարացի է, քանզի Աստված Ինքն է ընդունում դրանք, իսկ Աստծու ձեռքից ոչ ոք չի կարող հափշտակել. իսկ մյուսն ամբարվում է մարդկանց գանձերի մեջ և ենթակա է բազմապիսի դարանների. այնտեղ շատ են նախանձն ու չարակամությունը:

Ուրեմն, ո՛վ սիրելի, մի՛ ծուլանա այստեղ ժամանակ անցկացնելու, քանի որ եթե քեզ տակնուվրա է անում որևէ տրտմություն, այն հալածվում է այստեղ. եթե կենցաղական հոգսերը, տեղի են տալիս ու փախչում, եթե անմիտ կրքերը, հանգչում են. մինչդեռ այդ հրապարակներից, թատրոններից և արտաքինների այլ հավաքներից տուն ենք դառնում բազում հոգսերով, թախծությամբ ու հոգու ախտերով լցված:

Եթե դու մշտապես այստեղ անցկացնես ժամանակդ, ամբողջովին կթոթափես այն բոլոր չարիքները, որ դրսից ես ընդունում քո մեջ, իսկ եթե այստեղից խուսափես ու փախչես, ապա իսպառ կկորցնես նաև այն բարիքները, որ սեփականել էիր աստվածային Գրքերից, քանզի արտաքինների հետ գործակցությունից ու զրույցներից քիչ-քիչ քեզնից կկողոպտվի հարստությունդ: Եվ որ իսկապես այդ այդպես է, այստեղից դուրս ելնելիս ջանացեք նայել նրանց, ովքեր այսօր հեռու մնացին այսպիսի վայրերից, և այնժամ կհասկանաք, թե որքան տարբերություն կա ձեր խաղաղության ու նրանց անձկության միջև:

Առագաստին բազմած հարսն այնքան գեղեցիկ ու շնորհաշուք չէ, որքան սքանչելի ու փառավորված է հոգին, երբ երևում է Եկեղեցում՝ շնչելով հոգևոր բուրմունքները: Քանզի ով հավատով ու սիրով է գալիս այստեղ, հեռանում է բյուր գանձեր ստացած. բերանը բացելիս իր կենակիցներին լցնում է ամենայն անուշահոտությամբ ու հոգևոր հարստությամբ. և եթե անգամ բյուրավոր աղետներ հարձակվեն նրա վրա, նա թեթևությամբ կտանի դրանք, քանզի այստեղ աստվածային Գրքերից համբերության ու իմաստության բավական դասեր է ստացել:

Եվ ինչպես մշտապես ժայռի վրա կանգնածն է ծիծաղում ալիքների վրա, այդպես էլ մշտապես սուրբ հավաքներում եղողը և աստվածային խոսքերով ոռոգվողը, իրեն հաստատելով իբրև իրերի մասին ուղիղ դատելու ժայռի վրա, չի տարվում մարդկային ոչ մի բանով՝ բարձր գտնվելով կենցաղային գործերի ճնշումից: Ոչ միայն խրատներից, այլ նաև

աղօթքներից, հայրական օրհնությունից, ընդհանուր հավաքից, եղբայրների սիրուց և բյուր այլ բաներից բազմապատիկ օգուտ և հոգևոր մխիթարություն է ստանում և վերադառնում է՝ տուն տանելով բյուր բարիքներ:

Եվ արդ, նայեցե՛ք, թե որքան օրհնության եք դուք արժանանում այսօր, իսկ նրանք՝ որքան կորուստ են կրում: Դուք այստեղից կգնաք՝ մարտիրոսների վարձն ստացած, իսկ նրանք, բացի այն բանից, որ զրկվեցին այստեղ լինելուց, կկրեն նաև այլ վնասներ՝ մեծ հոգսերով ու տարակուսանքներով լցվելով անօգուտ զբաղմունքներից: Ինչպես որ. «Ով մարգարեին ընդունում է իբրև մարգարեի, մարգարեի վարձ կստանա, և ով արդարին ընդունում է իբրև արդարի, արդարի վարձ կստանա» (Մատթ. Ժ 41), այդպես էլ, ով ընդունում է մարտիրոսին՝ իբրև մարտիրոսի, մարտիրոսի վարձ կստանա. իսկ մարտիրոսին ընդունելը նրա հիշատակի համար հավաքվելն է, նրա նահատակության պատմությունը լսելը, նրա գործերով սքանչանալը, նրա առաքինությանը նախանձախնդիր լինելը, նրա փառավոր արիության մասին բոլորին պատմելը:

Այսպիսին է մարտիրոսների մեծարումը, այսպես են ընդունում սուրբերին, այդպես և դուք արեցիք այսօր:

Բ. Երեկ մեր Տերը մկրտվեց ջրով, իսկ այսօր Նրա ծառան մկրտվում է արյունով. երեկ բացվեցին երկնքի դռները, այսօր ոտնակոխ արվեցին դժոխքի դռները: Մի՛ զարմացեք, որ ես մկրտություն անվանեցի մարտիրոսությունը. այստեղ նույնպես Հոգին ճախրում է՝ բազում պտուղներ տալով, լինում է մեղքերի ջնջում և հոգու մաքրություն՝ սքանչելի, նոր ու չքնաղ: Եվ ինչպես մկրտվողներն են լվացվում ջրով, այդպես էլ մարտիրոսները՝ իրենց արյունով, որ և պատահեց նրան: Բայց մինչև նրա մարտիրոսության մասին խոսելը, հարկ է, որ պատմենք սատանայի խորամանկ հնարների մասին:

Քանզի երբ չարը տեսավ, որ նա ծաղրի ենթարկեց տանջանքների ու չարչարանքների բոլոր տեսակները, և ինքը ո՛չ բորբոքուն հնոցով, ո՛չ փորված խորխորատով, ո՛չ անիվներով, ո՛չ երկճյուղ փայտից կախելով, ո՛չ դարավանդից ցած նետելով և ո՛չ էլ գազանների ատամների առջև նետելով չկարողացավ պարտության մատնել սուրբի իմաստությունը, մտածեց մեկ այլ դժնդակագույն հնար և ջանաց գտնել այնպիսի չարչարանք, որ լինի միաժամանակ խիստ սաստիկ և երկարատև: Բայց քանի որ անտանելի տանջանքները արագ են վախճանի հասցնում, իսկ երկարատև տանջանքները ավելի քիչ են ցավ պատճառում, նա ջանաց գտնել տանջանքի այնպիսի տեսակ, որ միաժամանակ ունենա երկուսն էլ. լինի երկարատև, անտանելի, դառը ցավեր պատճառող, որպեսզի երկարժամանակյա սաստիկ ցավերով տապալի նրա հոգու անսասանությունը:

Արդ, ի՞նչ է անում: Սուրբին քաղցի է մատնում: Իսկ դու, երբ լսում ես քաղցի մասին, անուշադրության մի՛ մատնիր այս բառը. սա ամենադաժանն է բոլոր մահերից: Կարող են վկայել նրանք, ովքեր կրել են այդ փորձությունը. թող մենք երբեք չկրենք այդ. մեզ գեղեցիկ կերպով վարդապետվեց աղոթել, որ փորձության չմատնվենք (Մատթ. ԻԶ 41): Քանզի այն նման է ներսում՝ աղիքների մեջ բազմած դահճի, որ հոշոտում է բոլոր անդամները, բոլոր տեսակի կրակներից ու դազաններից ավելի դաժանորեն է լափում մարմինը բոլոր կողմերից և անդադարելի ու անպատմելի ցավերով տանջում: Եվ որպեսզի պատկերացնես, թե ինչ բան է քաղցը, ահա բազում անգամ մայրերը, չդիմանալով այդ չարիքի բռնությանը, պատառոտեցին ու կերան իրենց մանուկներին: Մարգարեն այս աղետի մասին է խոսում՝ իր Ողբում ասելով. «Գթասիրտ կանանց ձեռքերը եփեցին իրենց մանուկներին» (Ողբ, Դ 10): Մայրերը կերան իրենց ծնած զավակներին, և այդ մանուկներին ծնող որովայնը նրանց գերեզմանը դարձավ: Քաղցը հաղթող եղավ [մարդկային] բնությանը, ոչ միայն բնությանը, այլ նաև կամքին, սակայն այն երբեք չհաղթեց այս սուրբի արիությանը:

Ո՞վ չի հիանա՝ լսելով խոսքերս. ի՞նչն է բնությունից առավել զորեղ: Ի՞նչն է կամքից առավել հեղհեղուկ: Բայց

որպեսզի իմանաս, որ Աստծո երկյուղից առավել զորավոր ոչինչ չկա, կամքը ավելի զորեղ երևաց, քան բնությունը, և այն, ինչը պարտության մատնեց մայրերին և նրանց ստիպեց մոռանալ իրենց ծննդյան ցավերը, չկարողացավ գլորել, կործանել այդ սուրբին, տանջանքները պարտության չմատնեցին նրա առաքինությունը, և չարչարանքները չհաղթեցին նրա արիությունը, այլ մնաց առավել ամուր, քան ամենայն ադամանդ, և բերկրեց, ուրախացավ բարի հույսով՝ զմայլվելով հաղթության պատճառով, ունենալով բավական սփոփանք մարտի պատճառի մեջ, մանավանդ մշտապես լսում էր Պողոսին, ով ասում է. «Բազում անգամ եղա քաղցի ու ծարավի, ցրտի ու մերկության մեջ» (Բ Կոր. ԺԱ 27), և դարձյալ՝ «Մինչև այսօր և՛ քաղցած ենք մնում, և՛ ծարավում, և՛ մերկ շրջում ու բռնցքահարվում» (Ա Կոր. Դ 11), քանզի գիտեր, շատ լավ գիտեր, որ «մարդն ապրում է ոչ միայն հացով, այլ ամեն խոսքով, որ ելնում է Աստծու բերանից» (Մատթ. Դ 4):

Իսկ երբ չար այսը տեսավ, որ նա չի ընկնում, չի կոտրվում նաև այդպիսի սաստիկ նեղությունից, առավել դժնդակ դարձրեց տանջանքը. վերցնելով կուռքերին զոհաբերվածից և դրանցով սեղանը լցնելով՝ հրամայեց դնել նրա աչքերի առջև, որպեսզի պատրաստի հնարավորությամբ թուլացնի նրա կամքի ամրությունը: Քանի որ մենք այնպես չենք ընկնում թակարդը, երբ չեն երևում գայթակղեցնող բաները, ինչպես այն ժամանակ, երբ դրանք գտնվում են մեր աչքի առջև, ինչպես որ կանանց ցանկությունը առավել հեշտությամբ է հաղթահարվում, երբ չեն տեսնում գեղեցիկ կանանց, քան երբ հաճախ տեսնում են նրանց:

Բայց արդարը հաղթեց նաև այս խորամանկությանը, և ինչով սատանան մտածում էր թուլացնել նրա արիությունը, նրանով առավել ամրապնդեց նրան պատերազմում. նա ոչ միայն չտուժեց կուռքերին զոհաբերվածին նայելուց, այլև առավել գարշեց դրանցից ու ատեց դրանք: Եվ այն, ինչ մենք զգում ենք մեր թշնամիների նկատմամբ. որքան շատ ենք տեսնում նրանց, այնքան առավել ենք ատում ու գարշում նրանցից, նույնը նա կրեց այդ պիղծ զոհերի առջև. երբ նայում էր դրանց՝ ավելի էր գարշում ու հեռու փախչում, դրանք անընդհատ տեսնելը առավել էր դրդում նրան փախուստի դիմել ու ատել դրանք: Զնայած քաղցը ներքուստ խիստ աղաղակում էր և պահանջում էր վերցնել, ճաշակել պատրաստված կերակուրներից, բայց Աստծո երկյուղը կապում ու սանձում էր նրա ձեռքերը և ստիպում մոռանալ բնությունը: Նայելով այդ պիղծ ու անմաքուր սեղանին՝ նա հիշեց մեկ այլ՝ սարսափելի և Հոգով լցված սեղանի մասին և այնպես այրվեց բորբոքվեց, մինչև հաստատապես ընտրեց՝ կրել տանել ամեն բան, չարչարվել, քան թե ուտել այդ պիղծ կերակուրները:

Հիշեց սեղանը երեք մանուկների, որոնք պատանության տարիքում գերի վերցված, ամենայն պաշտպանությունից զրկված, մենակ, օտարության մեջ, բարբարոսների երկրում առաքինության այնպիսի սեր ցույց տվեցին, որ մինչև այսօր գովվում է նրանց քաջությունն ու արիությունը: Հրեաները, որ իրենց սեփական երկիրն ստացան, ամբարշտացան. նրանք, որ շրջում էին տաճարում, կուռքերին պաշտեցին, իսկ այդ պատանիները, գերեվարվելով բարբարոսների երկիր, ուր կռապաշտություն էր և ամբարշտանալու բոլոր պատճառները, պահեցին հայրենի սովորությունը: Եվ արդ, եթե գերիները, ծառաներն ու պատանիները, նախքան շնորհը այսպիսի առաքինություն ցույց տվեցին, ասում է, մենք ո՞ր թողությանը արժանի կլինենք, եթե չկարողանանք հասնել նրանց նույն առաքինությանը:

Գ. Այս ամենի մասին մտածելով՝ նա ծիծաղում էր սատանայի չարության վրա, արհամարհում էր նրա խորամանկությունը և անձնատուր չէր լինում տեսածին: Այդ պատճառով էլ երբ ամենապիղծը տեսավ, որ այդ ամենից ոչ մի օգուտ չստացավ, դարձյալ ատյան բերեց նրան և սկսեց չարչարել անդադար հարցաքննությամբ: Իսկ նա բոլոր հարցե-

ին միայն մի պատասխան էր տալիս. «Ես քրիստոնյա՛ եմ»: Դահճի այն հարցին, թէ՝ ո՞րն է հայրենիքդ, պատասխանում էր՝ քրիստոնյա՛ եմ: Որտե՞ղ ես ապրում: Քրիստոնյա՛ եմ: Ովքե՞ր են քո ծնողները: Նա, ի պատասխան բոլոր հարցերի, ասում էր՝ քրիստոնյա՛ եմ: Եվ այս մեկ պարզ բառով ջախջախելով բանսարկուի գլուխը՝ իրար ետևից բազում վերքեր էր հասցնում նրան:

Թեև տեղյակ էր հեթանոսական ուսուցումներին, բայց շատ լավ գիտեր, որ այսպիսի պատերազմում ոչ թե հռետորություն է անհրաժեշտ, այլ հավատ, ոչ թե խոսքի զորություն, այլ աստվածասեր հոգի: «Միայն մեկ խոսքը բավական է, ասում էր, սատանայի ամբողջ փաղանգը փախուստի մատնելու համար»:

Հավանաբար այս պատասխանը հարմար չի թվա նրանց, ովքեր ճիշտ չեն քննում կատարվածը, բայց եթե մեկը խելամուտ լինի, նաև դրա մեջ կտեսնի մարտիրոսի իմաստությունը: Քանզի երբ ասաց՝ քրիստոնյա եմ, ամբողջովին նրա առջև դրեց և՛ իր հայրենիքը, և՛ իր ազգը, և՛ բնակության վայրը. ցույց տվեց ամեն բան: Ինչպե՞ս: Կասեմ: Քրիստոնյան երկրի վրա քաղաք չունի, նրա քաղաքը Վերին Երուսաղեմն է: Քանզի. «Վերին Երուսաղեմը, որը մեր բոլորի մայրն է, ասում է, ազատ է» (Գաղ. Դ 26): Քրիստոնյան չունի երկրավոր զբաղմունք, նա իրեն նվիրում է երկնային կենցաղավարության, քանզի. «Մեր քաղաքացիությունը երկնքում է» (Փիլիպ. Գ 20): Քրիստոնյայի ազգակիցներն ու համաքաղաքացիները բոլոր սուրբերն են, քանզի ասում է. «Համաքաղաքացի ենք սուրբերին և ընտանի՝ Աստծուն» (Եփես. Բ 19):

Այսպես այս մեկ խոսքով ճշգրիտ ցույց տվեց, թե ո՛վ է, ո՛րտեղից է, ի՛նչ ազգից և ի՛նչ գործ է անում: Այդ խոսքով էլ նա ավարտեց իր կյանքը և գնաց՝ Քրիստոսին տանելով ողջ ավանդը և իրենից հետո եկողներիս յորդորեց քաջալերվել, հաստատուն մնալ և երբևէ չվախենալ ոչ մի բանից, այլ միայն մեղքերից և [Աստծուն] ուրանալուց:

Ուրեմն, իմանալով այս ամենը, մենք նույնպես խաղաղության ժամանակ հոգանք այն մասին, թե ինչ է պետք պատերազմի համար, որպեսզի երբ մարտնչելու ժամանակը գա, մենք էլ կանգնեցնենք հաղթության փառավոր նշանը: Նա արհամարհեց քաղցը, մենք արհամարհենք փափկակեցությունը, քակենք, տապալենք որովայնի բռնությունը, որպեսզի երբ ժամանակը գա, և մեզնից այդչափ արիություն պահանջվի, նախապես վարժված լինելով փոքր հաղթանակների՝ մրցասպարեզում շքեղ երևանք: Նա համարձակորեն խոսեց իշխանների ու թագավորների առջև, նույնը մենք անենք այժմ. և եթե լինենք հարուստ ու փառավոր հեթանոսների հավաքներում, համարձակորեն խոստովանե՛նք մեր հավատը, ծիծաղե՛նք նրանց մլորության վրա: Եվ եթե նրանք երբևէ հավակնեն փառքով բարձրացնել իրենցը, իսկ մերը՝ նվաստացնել, բնավ չլռե՛նք և հեզաբար չհամբերե՛նք, այլ բացե՛նք նրանց պղծությունը, գովենք քրիստոնեականը մեծ իմաստությամբ ու համարձակությամբ, և ինչպես թագավորն է իր գլխին կրում իր թագը, այդպես էլ մենք ամենուրեք տանենք հավատի խոստովանությունը: Պսակը նրան այնպես չի զարդարում, ինչպես հավատն ու նրա խոստովանությունը՝ մեզ: Եվ ոչ միայն խոսքով, այլ նաև գործերով անենք այդ և մեր կյանքն ամեն բանով արժանի դարձնենք այս խոստովանությանը, որպեսզի վատթար գործերով չանպատվենք մեր վարդապետությունը: Այլ ամեն բանում փառավորելով մեր Տիրոջը՝ վայելենք պատիվը և՛ այս ժամանակում, և՛ հանդերձյալում: Որին թող բոլորս հասնենք շնորհներով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Որով և Որի հետ Հորը և կենդանարար Սուրբ Հոգուն փառք, իշխանություն և պատիվ այժմ, միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Եվ այսպես, եթե կանգնած ենք, մեր հույսը մեզ վրա չդնենք, այլ ինքներս մեզ ասենք. «Ով կարծում է, թե կանգնած է հաստատ, թող զգույշ լինի. գուցե թե ընկնի»: Իսկ եթե ընկել ենք, չհուսահատվենք, այլ ինքներս մեզ ասենք. «Միթե՞ գլորվողը չի բարձրանում»: Իսկապես էլ, շատերը, որ հասել էին մինչև երկնքի բարձունքները՝ համբերելով ամեն բանի, ապրելով անապատում և կին չտեսնելով անգամ երազում, սակավ ժամանակ անց չարի խորխորատի մեջ ընկնելով՝ կործանվեցին: Ուրիշները, հակառակը՝ այդ անդունդից երկինք բարձրացան, իսկ շատերը խեղկատակությունից ու պարերից դարձան հրեշտակային կյանքի, հալածեցին դևերին և բազում հրաշքներ գործեցին. այդպիսի օրինակներով լեցուն են Սուրբ Գրքերն ու մեր կյանքը: Պոռնիկներն ու խգացողները խցում են մանիքեականների բերանները, որոնք չարիք են տարածում, ծառայում են սատանային, թուլացնում են բարիք գործել կամեցողների ձեռքերը և կործանում մարդկանց կյանքը: Նրանք, ովքեր այդպես են անում, ոչ միայն այն աշխարհի համար են վնասում, այլ նաև այստեղ են փչացնում ամեն բան՝ ըստ հնարավորության: Ինչպե՞ս կձգտի առաքինանալ չարիքի մեջ գտնվող մեկը, երբ նա անհնարին է համարում դեպի լավը փոփոխությունը: Եթե նաև հիմա, երբ կան և՛ օրենքները, և՛ պատժի սպառնալիքը, շատերին է գրավում փառքը, երբ սպասվում է գեհեն և խոստացվում է արքայություն, երբ մեղավորները դատապարտվում են, իսկ բարիները՝ գովվում, հազիվ է որևէ մեկը հանձն առնում ճգնել ու քրտինք թափել առաքինության համար, ապա այս ամենը ոչնչացվելուց հետո ոչինչ չի լինի, որ արգելի բոլորի կորուստն ու կործանումը:

Այսուհետ ճանաչե՛նք բանսարկուի խարդախությունը և այն, թե ինչպես նշված մարդիկ, այնպես էլ նրանք, ովքեր ճգնում են արմատավորել ճակատագրի մասին ուսմունքները, ովքեր հակառակն են խորհում և՛ հեթանոսական օրենքներին, և՛ Աստծո հրամաններին, և՛ բանականությանը, և՛ բոլոր մարդկանց ընդհանուր կարծիքին, և՛ բարբարոսներին, և՛ սկյութներին, և՛ թրակացիներին, նրանք բոլորին են հակառակ:

Արթո՛ւն լինենք, սիրելինե՛ր, և հեռանալով ճշմարտության այս բոլոր թշնամիներից՝ նեղ ճանապարհով գնանք համարձակ ու երկյուղով. երկյուղով՝ երկու կողմից թափվող քարերի պատճառով, և համարձակ՝ առջևից գնացող Առաջնորդի՝ Հիսուսի պատճառով: Գնանք արթուն, զվարթ, մի մտքով: Եթե մեկը փոքր-ինչ նիրհի, նույն պահին կվրիպի: Քանզի ոչ ոք ավելի զգույշ չէ, քան Դավիթը, ով փոքր-ինչ ծուլացավ և ընկավ մեղքերի հատակը, սակայն շտապ կանգնեց: Զնայե՛նք միայն նրա մեղանչելուն, այլ նաև նրա՝ մեղքերից մաքրվելուն: Նրա անկումի պատմությունը գրվեց այն բանի համար, որ դու նայես ոչ թե նրա անկումին, այլ նաև զարմանաս նրա ոտքի կանգնելու վրա, որպեսզի սովորես, թե գլորվելուց հետո ինչպես պետք է ոտքի կանգնես: Ինչպես որ բժիշկներն ընտրում են ամենածանր հիվանդությունները, դրանց մասին գրում գրքերում և ուրիշներին սովորեցնում են դրանք բժշկել, որպեսզի, իմանալով ամենածանր հիվանդությունները, նրանք հեշտությամբ կարողանան բուժել նաև թեթև հիվանդությունները: Նույնպես և Աստված պարզ ցույց տվեց ամենամեծ մեղքերը, որպեսզի նրանք, ովքեր ընկնում են փոքր մեղքերի մեջ, կարողանան դրանց միջոցով ուղղել իրենց: Քանի որ եթե մաքրվեցին մեծ մեղքերը, որքան առավել կմաքրվեն փոքր մեղքերը:

Եվ այսպես, տեսնենք, թե ինչպես բժշկվեց, ինչպես շուտափույթ ոտքի կանգնեց երանելին և ապաքինության ինչ օրինակ եղավ: Նա շնացավ և սպանեց: Ես չեմ ամաչում այս մասին բարձրաձայն ասելուց: Եթե Սուրբ Հոգին ամոթ չհամարեց այդպիսի պատմություն կարգել, առավել ևս մե՛նք չպետք է թաքցնենք այն: Այդ պատճառով էլ ես ոչ միայն հայտարարում եմ այդ մասին, այլ նաև դրան այլ բան եմ ավելացնում: Քանի որ նրանք, ովքեր թաքցնում են Դավթի անկումը, ամբողջովին խամրեցնում են նրա առաքինությունը: Ինչպես երբ լռում են Գողիաթի հետ նրա պատերազմի մասին, նրան զրկում են ոչ քիչ պսակներից, ճիշտ այդպես են անում նաև նրանք, ովքեր անուշադրության են մատնում այսպիսի պատմությունը:

Իմ խոսքերը տարօրինա՞կ են թվում: Փոքր-ինչ սպասեք և կիմանաք, որ մեր ասածներն արդարացի են: Ես մեղքը ծանրացնում և այն ավելի անսովոր կերպով եմ ներկայացնում այն պատճառով, որպեսզի ավելի մեծ պատրաստեմ բժշկությունը:

Այսպիսով, ի՞նչ է այն, որ պիտի ավելացնեմ: Այդ մարդու առաքինությունը, որը մեծացնում է նրա մեղքը: Զէ՞ որ բոլորը նույն կերպ չեն դատվում: «Հզորները, ասում է Գիրքը, ավելի խիստ են դատվելու», «Իսկ այն ծառան, ով գիտե իր տիրոջ կամքը, բայց նրա կամքի համաձայն չի պատրաստի, շատ ծեծ կուտի»: Ուրեմն շատ գիտելիքը պատճառ է դառնում նաև մեծ պատիժների: Նույն պատճառով էլ քահանան, որ նույն մեղքն է գործում, ինչ որ ժողովուրդը, ավելի դաժան պատիժ է կրում, քան նրանք: Թերևս տեսնելով, որ հանցանքը մեծանում է, վախից դողում եք և զարմանում ինձ վրա. կարծես ես քայլում եմ վիհի վրայով: Բայց ես այնքան վստահ եմ (ձեր) արդարամտությանը, որ ավելի հեռուն եմ տարածվում: Որքան ավելի մեծացնեմ մեղքը, այնքան կկարողանամ ավելի գովաբանել Դավթին: Սակայն, կհարցնես, հնարավո՞ր է դրանից ավելի որևէ բան ասել: Հնարավո՛ր է: Հատկապես, թե ինչպես սպանեց Կայենը. այն ամենադժնդակն էր բոլոր սպանություններից, քանի որ ո՛չ թե օտարի, այլ իր եղբորը, ո՛չ թե մեղավորի, այլ անմեղի սպանեց, և ո՛չ թե բազում սպանություններից հետո, այլ առաջինն ինքն էր, որ այդպիսի չարիք գործեց: Այդպես նաև այստեղ հանցան-

քը միայն սպանությունը չէր, քանի որ հասարակ մարդ չէր այն գործողը, այլ մարգարե, սպանեց ոչ թե իրեն վիրավորածին, այլ (իրենից) վիրավորվածին (վերջինս վիրավորվեց այն ժամանակ, երբ հափշտակվեց նրա կինը), և այսպիսով, այդ հանցանքին Դավիթն ավելացրեց նորը: Տեսնո՞ւմ եք, որ ես չեմ խնայում արդարին և առանց նվազեցնելու պատմում եմ նրա արարքների մասին: Չնայած սրան՝ ես այնպես եմ ուզում պաշտպանել նրան, որ չնայելով այդքան մեծ մեղքի ծանրությանը՝ կկամենայի, որ այստեղ լինեին մանիքեականեր, որոնք հեգնում են նրան, ինչպես նաև Մարկիոնի ուսմունքով վարակվածներ, որպեսզի վերջնականապես խցեի նրանց բերանները: Նրանք ասում են, որ Դավիթն սպանեց ու չնացավ: Իսկ ես ոչ միայն այդ եմ ասում, այլ նաև ապացուցում եմ, որ նրա սպանությունը կրկնակի է, քանի որ սպանվեց վիրավորվածը, և քանի որ հանցագործը բարձր մեկն էր: Նույն բանը չէ, երբ այդպիսի հանցանք գործել հանդգնում է մի մարդ, ով արժանացել էր Հոգուն, ով այնքան բարերարություններ էր արել, այդքան համարձակություն ունեցել, և այն էլ՝ այդ տարիքում, և երբ նույն բանն էր անում նա, ով զուրկ է այդ ամենից:

Սակայն այս այրը մեծ զարմանքի է արժանի, քանի որ ընկնելով չարիքի հատակը՝ նա չընկավ ոգով, չկորցրեց հույսը և չկործանվեց՝ սատանայից այնպիսի վտանգավոր վերքեր ստանալով: Այլ շատ շուտով, այդ իսկ պահին, մեծ արագությամբ հասցրեց ավելի վտանգավոր վերք, քան իր ստացածն էր: Եղավ այնպես, ինչպես երբ ճակատամարտում կամ պատերազմի ժամանակ թշնամին խոցում է քաջարի մարտիկի սիրտը կամ նետը նրա սրտի մեջ մխած տեսնելով՝ դրան ավելացնում է մեկ այլ մահացու վերք, իսկ ծանր վերքեր ստացած մարտիկը, ամբողջովին արյան մեջ թաթախված, վեր է կենում և նույն պահին սպանում իրեն խոցողին՝ գետնին տապալելով նրան: Ճիշտ այդպես եղավ այստեղ. որքան ծանր ներկայացնես վերքը, այնքան զարմանալի ցույց տված կլինես վիրավորվածի հոգին: Քանի որ նա, չնայելով վերքի ծանրությանը, ուժ ունեցավ շարքում կանգնելու և վիրավորելու նրան, ով խոցել էր իրեն: Որ այդ կարևոր է, գիտեն նրանք, ովքեր ընկնում են ծանր մեղքերի մեջ: Քաջ և աննկուն հոգին բացվում է ոչ այն ժամանակ, երբ մեկն առանց ընկնելու է գնում ճանապարհով (քանի որ այդպիսին իրեն ուղեկից ունի իր բարության հույսը, որ քաջալերում, ամրապնդում և ջլապինդ է դարձնում նրան), որքան երբ մեկը, անհամար պսակներից ու հաղթանակներից հետո անասելի վնասներ կրելով, կարողանում է կրկին բարձրանալ նույն ճանապարհը: Որպեսզի խոսքս պարզ լինի, փորձեմ ձեզ առաջարկել նախորդից ոչ պակաս կարևոր մեկ ուրիշ օրինակ: Պատկերացրեք մի նավապետի, ով կտրել-անցել է բազում ծովեր, շատ փոթորիկների, ստորջրյա խութերի ու ալիքների միջով անցել, կորցրել է բեռները, եկել հասել է նավահանգիստ և հազիվ կարողացել է մերկ մարմնով ճողոպրել վտանգավոր նավաբեկությունից: Այդպիսի նավաբեկության ենթարկվածը ինչպե՞ս կմտածի կրկին ծովում նավարկելու և այդպիսի չարչարանքներ հանձն առնելու մասին: Զլինելով ուժեղ՝ նա կկամենա՞ երբևէ նայել ափին, նավին: Զե՛մ կարծում: Նա կխուսափի դրանից, մտաբերելով այն օրը՝ կընկնի վհատության մեջ, ավելի լավ կհամարի մուրալ, քան կրկին կրել այդպիսի չարչարանք:

Երանելի Դավիթն այդպիսին չէր. անչափ չարչարանքից ու քրտինքից, ծանր նավաբեկություն կրելուց հետո չհապաղեց, չխուսափեց, այլ նավը դեպի իրեն ձգեց և պարզելով առագաստները՝ ձեռքն առավ նավի ղեկը, կրկին անցավ նույն գործին և կրկին հարստություն հավաքեց, ավելի, քան նախկինում: Ընկնելուց հետո ոտքի կանգնելը և հավետ հատակում չպառկելը զարմանքի է արժանի: Սակայն ինչպիսի պսակների է արժանի այն մարդը, ով նույն պահին կանգնում և մեծագույն գործեր է անում: Թեպետև Դավթին վհատության մեջ գցող բազում բաներ կային. նախ՝ մեղքերի մեծությունը, երկրորդ՝ որ նա սասանվեց ոչ թե իր կյանքի արշալույսին, երբ հույսերն ավելի մեծ են, այլ մայրամուտին (չէ՞

որ նավահանգստից ծով մտած և անմիջապես նավաբեկության ենթարկված վաճառականը նույն չափով չի վշտանում, ինչպես, ասենք, նա, ում նավը անթիվ-անհամար բեռներով հանդիպում է ստորջրյա խութերի): Երրորդ՝ այն, որ նա սասանվեց այն բանից հետո, երբ մեծ հարստություն էր ամբարել: Եվ իրոք, քիչ չէին նրա գանձերը, գանձեր, որոնք նա ձեռք էր բերել երիտասարդ հասակում, երբ հովիվ էր (Գողիաթի դեմ մարտնչելուց հետո, երբ ձեռք բերեց փառահեղ ավար), և երբ Սավուղի հետ իմաստությամբ վարվեց: Ճշմարտապես՝ Դավիթն ավետարանական մեծահոգություն դրսևորեց. բազմաթիվ անգամներ, երբ թշնամին հայտնվում էր նրա ձեռքում, նա խնայում էր նրան: Եվ հայրենիքից, ազատությունից, նույնիսկ իր կյանքից հրաժարվելը գերադասում էր իր դեմ հանիրավի որոգայթներ լարած մարդուն սպանելուց: Գահին նստելուց հետո էլ չեն պակասում նրա առաքինությունները: Այս ամենից զատ, հիշենք ժողովրդի վատ կարծիքը, նաև այնքան մեծ փառքը, որոնք քիչ չէին խռովեցնում նրան: Նրան այնքան փառավոր չէր դարձնում ծիրանին, որքան ամաչեցնում էր մեղքի աղտը:

Անշուշտ գիտենք, թե որքան է նեղսրտում այն մարդը, ում մեղքերն հայտնի են դառնում, և որքան մեծ արիություն է պետք այդպիսի մեկին, որպեսզի համընդհանուր մեղադրանքի և իր մեղքերի վկաների շատանալուց հետո չվհատվի: Սակայն այդ քաջարի մարդը, ով իր հոգուց հանում էր այն նետերը, լուսավորվեց, ախտը սրբեց, այնպես մաքրագործվեց, որ անգամ իր մահից հետո էլ քավում էր իր ժառանգների մեղքերը: Եվ Աստված ինչ որ ասել էրԱբրահամի մասին, ասում է Դավթի մասին, վերջինիս մասին՝ նույնիսկ ավելի շատ: Տերը Աբրահամի մասին ասում է . «Աստված հիշեց Աբրահամի հետ կնքած ուխտը», իսկ Դավթի մասին խոսելիս ուխտի մասին չէ, որ ասում է: Իսկ ինչի՞ մասին է ասում: «Այս քաղաքը պիտի հովանավորեմ իմ ծառա Դավթի համար»:

Դավթի նկատմամբ բարեհաճության պատճառով թույլ չտվեց, որ վերանա թագավորությունը Սողոմոնի, ով չափազանց մեծ մեղք էր գործել: Եվ Դավթի փառքն այնքան մեծ էր, որ Պետրոսը շատ ու շատ տարիներ անց հրեաներին ուղղած իր թղթում այսպես է ասում. «Պետք է վստահությամբ ասել Դավիթ մարգարեի մասին, որ և՛ մեռավ, և՛ թաղվեց»: Քրիստոս նույնպես հրեաների հետ խոսելիս ցույց տվեց, որ Դավիթը մեղք գործելուց հետո արժանացավ Սուրբ Հոգու այնպիսի շնորհի, որ արժանի եղավ մարգարեանալու Քրիստոսի Աստվածության մասին: Նրա մարգարեությամբ փակելով նրանց բերանները՝ Հիսուս ասաց. «Իսկ Դավիթն ինչպե՞ս է Սուրբ Հոգով Տեր անվանում նրան. «Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստի՛ր իմ աջ կողմում»:

Եվ այն, ինչ կատարվեց Մովսեսի հետ, կատարվեց նաև Դավթի հետ: Ինչպես որ Աստված, հակառակ Մովսեսի կամքի, արդարի սիրուն պատժեց Մարիամին՝ իր եղբորը վիրավորելու պատճառով, այդպես էլ վրեժխնդիր եղավ Դավթի համար, ում վիրավորել էր որդին, թեև Դավիթն այդ չէր կամենում: Այսքանն էլ է բավական՝ ցույց տալու համար այդ մարդու առաքինությունը, և սա ավելին է՝ այլ բաներից առավել ապացույց ծառայելու համար. երբ Աստված է հաստատում, այլևս քննության կարիք չկա: Իսկ եթե կամենում եք ավելի մանրամասնորեն իմանալ Դավթի իմաստության մասին, ապա , կարդալով նրա՝ մեղանչելուց հետո պատմությունը, կարող եք տեսնել նրա՝ Աստծուն ապավինելը, սերը, առաքինությունը, մինչև վերջին շունչը աստվածպաշտությունը:

Մեր աչքի առջև ունենալով նման օրինակ՝ արթո՛ւն մնանք և զգուշանա՛նք սայթաքելուց: Իսկ եթե ընկնենք էլ, պառկած չմնանք: Ես հիշատակեցի Դավթի մեղքերը ոչ թե այն բանի համար, որ ձեզ անհոգության մեջ գցեմ, այլ որպեսզի ավելիով փրկության առիթ տամ: Քանի որ եթե այդպիսի արդար մարդը, փոքր-ինչ հեղգանալով, ենթարկվեց այդօրինակ տառապանքների և այդպիսի վերքեր ստացավ, ապա մեզ՝ անհոգներիս, ի՞նչ չի պատահի:

Այսպիսով, ճանաչելով նրա սայթաքումը՝ անձնատուր մի՛ լինիր անհոգության, այլ պատկերացրու, թե նա ինչեր արեց դրանից հետո, որքան արցունք թափեց, որքան խորը զղջաց՝ զօրուգիշեր աչքերից արտասուքի հեղեղներ թափելով և դրանցով իր անկողինը լվանալով, քուրձ հագնելով:

Եվ եթե նրան էր վայել այդպիսի վարք, ապա ինչպես կարող ենք փրկվել մենք, որ այնքա՜ն մեղքեր են գործում և չենք զղջում: Ով մեծ առաքինություններ ունի, նա կարող է դրանցով դյուրությամբ ծածկել իր մեղքերը, իսկ առաքինություն չունեցողը, որ կողմից էլ նետահարվի, այն մահացու կլինի իր համար:

Այսպիսով, խուսափելու համար այս ամենից, բարի գործերո՛վ զինվենք: Եվ եթե ինչ-որ հանցանք գործենք, մաքրե՛նք ինքներս մեզ, որպեսզի մեր երկրավոր կյանքն ապրելով Աստծո փառքի համար, արժանանանք գալիք կյանքի երանությանը, որին թող բոլորս արժանի լինենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհնեով ու մարդասիրությամբ. Նրան փառք և իշխանություն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՃԱՌԸ ԱՔՍՈՐԻՑ ԱՌԱՋ[1]

Ա. Բարձրացել են ալիքները, և սաստկացել է մրրիկը, սակայն մենք բնավ չենք վախենում, թե երբևէ անդնդասույզ կլինենք, քանի որ հաստատվել ենք ժայռի վրա: Թող գազազի ծովը, վեմին ոչինչ անել չի կարող: Թող բարձրացնի ալիքները, Հիսուսի նավը չի ջրասույզ չի լինում:

Ինչի՞ց վախենանք մենք, ասա՛ ինձ. մահի՞ց. «Ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլիպ. Ա 21): Մի՞թե աքսորվելուց. «Տիրոջն է երկիրն իր ամբողջությամբ» (Սաղմ. ԻԳ 1): Թերևս արքունիքի՝ մեր ունեցվածքը գրավելո՞ւց. «Ոչինչ չբերեցինք աշխարհ և ոչինչ էլ չենք կարողանալու տանել» (Ա Տիմ. Զ 7): Աշխարհում սարսափելի բաներն արհամարհելի են ինձ համար, իսկ հաճելի բաները՝ ծիծաղելի: Աղքատությունից չեմ վախենում, հարստություն չեմ ցանկանում, մահից չեմ սարսափում, չեմ խնդրում ապրել, այլ միայն ձեր առաջադիմության համար:

Այդ պատճառով էլ այժմ հիշում եմ այս ամենը և աղաչում եմ ձեզ քաջալերվել, սիրելինե՛ր: Զկա մեկը, որ կարողանա բաժանել մեզ, քանի որ ում Աստված զուգեց, մարդը բաժանել չի կարող: Եթե ամուսնու և կնոջ մասին է ասում այս, թէ՝ «Դրա համար տղամարդը պիտի թողնի իր հորը և մորը և պիտի գնա իր կնոջ ետևից. և երկուսը մեկ մարմին պիտի

[1] Ճառիս պատճառը հայտնի է վերնագրից: Քանզի երբ արդարն իմացավ, որ թշնամիներն իսկապես խորհում են վերացնել իրեն, ինչպես հայտնի է նրա վարքից, անարի վախկոտի պես չթուլացավ, այլ առավել ևս առյուծացավ, իրրև զրահ՝ առավ հոգու անվեհեր արիությունը, պարզերես ապրյան ելավ նա, ով ոչ մի չարիք չէր գործել. այս ճառն ասվել է եկեղեցում: Ճառիս ժամանակն է 403 թ. վայրը՝ Կոստանդնուպոլիսը:

լինեն: Արդ, ինչ որ Աստված զուգեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ 5-6): Եթե ամուսիններին բաժանել չես կարող, ապա որքան առավել չես կարող քակտել Աստծո Եկեղեցին: Բայց դու մարտնչում ու կռվում ես նրա դեմ, որն անհնար է, որ վնաս կրի քո պատերազմից: Սակայն դու ինձ առավել գեղապանծ ես դարձնում, իսկ քո զորությունը՝ վատնում՝ ինձ հետ մարտնչելով: Քանզի. «Քեզ համար խիստ դժվար է սուր խթանի դեմ աքացի տալը» (Գործք, ԻԶ 14). խթանը բթացնել անկարող ես, իսկ ոտքերդ կարյունոտես, այդպես ալիքներն էլ չեն կարողանում փչրել վեմը, այլ իրենք են հեռանում՝ փրփուր դառնալով:

Եկեղեցուց զորավոր ոչինչ չկա, ո՛վ մարդ: Դադարեցրո՛ւ պատերազմդ, որպեսզի ուժերդ չվատնես: Մի՛ վազիր՝ պատերազմելու երկնքի դեմ: Եթե կռվես մարդու հետ, կա՛մ կհաղթես, կա՛մ կպարտվես, բայց եթե Եկեղեցու դեմ ես ելնում, անհնարին է վնասել նրան, որովհետև Աստված Իր զորությամբ հզոր է ամեն բանից: «Ուզում ենք Տիրոջ նախա՞նձը գրգռել. մի՞թե ավելի զորեղ ենք, քան նա» (Ա Կոր. Ժ 22): Աստված ամրացրեց, ո՞վ է նա, որ կհանդգնի սասանել:

Հասու չե՞ս Նրա զորությանը. «Նա նայում է երկրին և դող պատճառում նրան» (Սաղմ. ՃԳ 32): Նա հրամայում է, և հաստատվում են երերացողները: Եթե նա ամրացրեց երերացող քաղաքը[1], առավել ևս կարող է ամրացնել Եկեղեցին: Երկնքից ավելի զորեղ է Եկեղեցին. «Երկինքն ու երկիրը պիտի անցնեն, իսկ իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. ԻԴ 35): Ո՞ր խոսքերը. «Դու ես վեմը, և այդ վեմի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չպիտի հաղթահարեն նրան» (Մատթ. ԺԶ 18):

Բ. Եթե խոսքին չես հավատում, գործերի՛ն հավատա: Քանի՛ բռնակալ ջանաց վերացնել Եկեղեցին, քանի՛ տապակ, քանի՛ հնոց, որքա՛ն գազանների ժանիքներ, սուրսայր սուսերներ. ոչինչ չկարողացան անել: Ո՞ւր են հակառակամարտները. լռեցին ու մոռացվեցին: Իսկ ո՞ւր է Եկեղեցին. արեգակից ավելի պայծառ է: Հանգան նրանք, անմահ են սրանք: Եթե քրիստոնյաները չպարտվեցին, երբ նվազ էին թվով, ինչպե՞ս կարելի կլինի հաղթել, երբ տիեզերքը հորդում է բարեպաշտությամբ:

«Երկինքն ու երկիրը պիտի անցնեն, իսկ իմ խոսքերը չպիտի անցնեն»: Երկնքից ավելի Եկեղեցին է սիրելի Աստծուն: Քրիստոս ոչ թե երկնքի, այլ Եկեղեցու մարմինն առավ: Եկեղեցու համար է երկինքը, ոչ թե երկնքի համար՝ Եկեղեցին: Այստեղ կատարվածները թող չխռովեցնեն քեզ: Շնորհեցեք ինձ այս անսասանելի հավատը: Չտեսա՞ք ջրերի վրայով քայլող Պետրոսին. փոքր-ինչ երկմտեց և սկսեց ընկղմվել ոչ թե ծփացող ալիքների, այլ իր հավատի տկարության պատճառով:

Մի՞թե մարդկային ընտրությամբ այստեղ եկանք, մի՞թե մարդը մեզ բերեց այստեղ, որ մարդն էլ դուրս հանի: Ո՛չ թե հանդուգն համարձակությամբ եմ բարբառում այս ամենը, քա՛վ լիցի, և ո՛չ հպարտությամբ, այլ կամենալով հաստատուն դարձնել այն, ինչ ձեր մեջ անհաստատ է: Սատանան կամեցավ Եկեղեցին սասանել այն բանից հետո, երբ քաղաքը հանդարտվեց:

Բայց պի՛ղծ, ամենապի՛ղծ բանսարկու, դու չհաղթահարեցիր պարիսպները[1] և հույս ունես Եկեղեցի՞ն սասանել, մի՞թե եկեղեցին պատվար է ոմանց համար: Եկեղեցին հավատացյալների բազմությունն է: Ահա որքան անսասանելի են այս-ները. երկաթով չեն կապված, այլ հավատով են ամրացված: Չեմ ասում, թե այդքան բազմությունը կրակից զորեղ է, այլ եթե անգամ մի հոգի լիներ, անկարող կլինեիր պարտության մատնել: Դու գիտես, թե որքան վերքեր հասցրին քեզ նահատակները: Եղավ, որ բազում անգամ ներս բերվեց օրիորդ՝ փափկասուն, առագաստին անփորձ, մոմից առավել կակուղ, և կարծր երևաց ժայռից առավել: Բզկտում, պատառոտում էիր նրա կողերը, բայց հավատը նրանից հանել չէիր կա-

[1] Նկատի ունի քաղաքում տեղի ունեցած երկրաշարժը:

[1] Երկրաշարժից երերացող քաղաքի պարիսպների մասին է ասում:

բողանում: Հաղթվում, տեղի էր տալիս մարմնի բնությունը, բայց հավատի զորությունը չէր թուլանում: Մեռնում էր մարմինը, նահատակվում էին խորհուրդները, վերանում, սպառվում էր գոյությունը, և կար, մնում էր բարեպաշտությունը: Դու չկարողացար բռնանալ մի կնոջ, հույս ունես այսքան բազմությա՞նը հաղթել: Զլսեցի՞ր Տիրոջը, որ ասում է. «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես՝ նրանց մեջ» (Մատթ. ԺԸ 20), իսկ ուր սիրով կապված է այսքան մեծաքանակ ժողովուրդը, Նա այնտեղ չի՞ լինի:

Նրա գրավականն ունեմ, մի՞թե իմ զորությանն եմ ապավինում: Ես Նրա Գիրքն ունեմ: Այն ինձ համար գավազան է, այն ինձ համար հանգիստ վայր է, այն ինձ համար խաղաղ նավահանգիստ է: Եթե անգամ ամբողջ տիեզերքը տակնուվրա լինի, ես Նրա Գիրքն ունեմ, ես կարդում եմ այն. նրա խոսքերն ինձ համար պատվար են, ապավենի տեղ: Որո՞նք են այդ խոսքերը: «Ես ձեզ հետ եմ ձեր կյանքի բոլոր օրերին, մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20): Քրիստոս ինձ հետ է, ես ումի՞ց վախենամ: Զնայած իմ դեմ խռովվեցին, բարձրացան ալիքները, ծովերը, իշխանների բարկությունը, այդ ամենն առավել հեշտ հաղթահարելի են ինձ համար, քան սարդոստայնը:

Եվ եթե ձեր հանդեպ սերը չլիներ, այսօր իսկ տեղի կտայի և կմեկնեի: Քանզի անընդհատ այս եմ ասում. «Տե՛ր, թող քո կամքը լինի. ո՛չ այսպես և ո՛չ այնպես, այլ ինչպես Դու ես կամենում» (Մատթ. Զ 10): Սա ինձ համար աշտարակ է, սա ինձ համար անսասանելի ցուպ է: Եթե Աստծո կամքն է, որ այդ լինի, թո՛ղ լինի: Եթե Նրա կամքն է, որ ես մնամ այստեղ, շնորհակալ եմ. ինչ որ կամենա, շնորհակալ կլինեմ:

Գ. Թող ոչ ոք ձեզ չխռովեցնի: Հաճա՛խ աղոթեցեք: Սատանան այս հնարը մտածեց, որպեսզի կտրի ձեր՝ պաղատանքներ մատուցելու ճիգերը: Բայց նրան այդ չհաջողվեց. մենք տեսնում ենք ձեզ առավել նախանձախնդիր, առավել ջերմ:

Վաղ առավոտյան ձեզ հետ պաշտամունքի կելնեմ: Ուր որ ես եմ, այնտեղ էլ դուք, ուր դուք, այնտեղ էլ ես: Մեկ մարմին ենք, ոչ մարմինը գլխից, և ոչ էլ գլուխը մարմնից չի բաժանվում: Բաժանվում ենք տեղով, բայց միավորված ենք սիրով, և մահն էլ չի կարող քակտել այն: Թեև մարմինս պիտի մահանա, բայց հոգիս կենդանի է և կհիշի ժողովրդիս:

Դուք իմ հայրերն եք, ինչպե՞ս կարող եմ մոռանալ ձեզ: Դուք իմ հայրերն եք, դուք իմ կյանքն եք, դուք իմ փառքն եք: Եթե դուք առաջադիմեք, փառք է ինձ համար, քանզի իմ կյանքի հարստությունը ձեր գանձի մեջ է ամբարված:

Մեջքս պնդված է՝ ձեզ համար բյուր անգամ մահվան գնալու. և ես այդ իմ կողմից ծառայություն չեմ համարում, այլ պարտքս եմ հատուցում, քանզի. «Լավ հովիվը իր կյանքն է տալիս ոչխարների համար» (Հովհ. Ժ 11): Թող բյուր անգամ սպանեն ինձ, բյուր անգամ գլխատեն. այդ մահն ինձ համար անմահության մայր է, այդ դարանները՝ միջոցներ՝ հասնելու հանգստության: Մի՞թե հարստության պատճառով եմ որոգայթներով պատվում, որ ցավեմ, մի՞թե մեղքերի պատճառով, որ սգամ: Ո՞չ ահա սիրո պատճառով, որ ունեմ ձեր հանդեպ: Քանզի բոլոր հնարները մտածում եմ, որ ապահով լինի ձեր հանգիստը, որ օտարը չմտնի դավիթ, որ անարատ մնա հոտը:

Այդ ինձ բավական է՝ պսակների արժանանալու համար: Ի՞նչ չկրեցի ձեզ համար. դուք իմ քաղաքակիցը, դուք իմ հայրերը, դուք իմ եղբայրները, դուք իմ որդիները, դուք իմ անդամները, դուք իմ մարմինը, դուք իմ լույսն եք, ավելի ճիշտ՝ այս լույսից առավել քաղցր եք: Ձեր սիրուց առավել ի՞նչ կպարգևի ինձ արևի լույսը: Արևի լույսը ինձ պետք է այս կյանքում, իսկ ձեր սերը ինձ համար պսակ է բոլորում այն կյանքի համար:

Ահա այդ եմ բարբառում ունկնդիրներիդ ականջին, և դրանից առավել քաղցր ի՞նչ կա լսելու: Այդքան օրեր տքնեցիք, և ոչինչ չթուլացրեց քեզ. ո՛չ ժամանակի երկարությունը, ո՛չ վախը, ո՛չ սպառնալիքները: Արի եղաք ամեն

բանում. ի՞նչ ասեմ, եղաք այնպիսին, ինչպիսին հանապազ ցանկանում էի. արհամարհեցիք այս աշխարհինը, հրաժարվեցիք այս աշխարհից, տեղափոխվեցիք երկինք, ազատվեցիք մարմնի կապանքներից, նախանձախնդիր եղաք այն երանելի իմաստությանը: Սրանք ինձ պսակ են, սրանք ինձ մխիթարություն են, սրանք ինձ քաջալերություն են, սրանք ինձ օծություն են, սրանք ինձ կյանք են, սրանք ինձ անմահության գրավական են:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ ԱՌԱՋԻՆ ԱՔՍՈՐԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ[1]

Ա. Ի՞նչ ասեմ կամ ի՞նչ խոսեմ: Օրհնյալ է Աստված: Այս խոսքերը ես ասացի, երբ հեռանում էի ձեզնից. դարձյալ նույնն եմ ասում. մանավանդ այնտեղ եղած ժամանակ էլ չէի դադարում այդ ասելուց:

Յիշո՞ւմ եք՝ ինչպես մեջբերեցինք Հոբի գոհաբանության խոսքը. «Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը հավիտյան» (Հոբ Ա 21): Ես այն իբրև ողջերթի խոսք թողեցի ձեզ գնալիս. նույնը կրկնում եմ այժմ իբրև գոհաբանություն. «Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը հավիտյան»:

Տարբեր է իրադրությունը, բայց նույնն է փառաբանությունը: Արտաքսվելիս գոհաբանում էի և վերադառնալիս բարեբանում եմ: Տարբեր են հանգամանքները, բայց ձմռան և ամռան վախճանը նույնն է, մեկ է վախճանը՝ անդաստաններին պտղաբերություն:

Օրհնյալ է Աստված, որ հաճեց, որ ես մեկնեմ: Օրհնյալ է կրկին, որ վերադարձրեց ինձ: Օրհնյալ է Աստված, որ թույլ

[1] Երբ Թեոփիլոս Աղեքսանդրացու ձեռնարկությամբ արդարը ժողովի կանչվեց և դատապարտվեց ու աթոռից ընկավ, ողջ մայրաքաղաքն ալեկոծվեց: Ժողովուրդն սկսեց բողոք բարձրացնել իր Ոսկերերան հայրապետի աքսորի դեմ: Նա ինքը ժողովրդից գաղտնի իրեն հանձնեց զինվորների ձեռքը, որոնք նրան տարան՝ Պրենետոս քաղաք՝ Բյութանիա: Այս իմանալով՝ ժողովուրդը, որ սուրբ հայրապետի հետ անխզելի կապով էր կապված, մեծ բազմությամբ ու աղաղակով արքայից պահանջեց վերադարձնել սուրբին իր աթոռը: Այդ ժամանակ երկրաշարժը դղրդացրեց պալատն ու քաղաքը, որից զարհուրած՝ Եվդոքսիա թագուհին Ոսկերերանին ետ բերել տվեց: Նույն օրը Եկեղեցի մտնելով՝ Ոսկերերանը խոսեց այս ճառը: Ճառիս ժամանակն է 403 թվականը:

տվեց, որ մրրիկ լինի, օրհնյալ է Աստված, որ վերացրեց մրրիկը և խաղաղություն արեց:

Նույն խոսքն եմ ասում և ձեզ ուսուցանում՝ օրհնելու Աստծուն: Բարի՞ք պատահեց, օրհնի՛ր Աստծուն, և կմնան բարիքները: Չարիքնե՞ր պատահեցին, օրհնի՛ր Աստծուն, և կվերանան չարիքները:

Քանզի և Հոբը, մինչ հարուստ էր, գոհանում էր, իսկ երբ աղքատացավ, փառաբանեց. ո՛չ այնժամ մոռացավ Աստծուն, ո՛չ հետո հայհոյեց: Տարբեր էին հանգամանքները, բայց նույնն էին խորհուրդները: Առաքինության ղեկը բռնողին ո՛չ խաղաղությունը կարող է թուլացնել, և ո՛չ էլ մրրիկը՝ ջրասույզ անել: Օրհնյալ է Աստված և՛ այնժամ, երբ ձեզնից հեռացա, և՛ երբ կրկին ձեզ մոտ դարձա. երկուսն էլ Նրա նախախնամությամբ եղան: Ես ձեզնից բաժանված էի մարմնով, բայց բաժանված չէի մտքով:

Տեսեք, թե թշնամիները որքան քաջացան՝ դարաններ նյութելու, ճիգեր թափեցին, բոցավառեցին սերը և ինձ համար բյուր բարեկամներ պատրաստեցին: Սրանից առաջ սիրելի էի իմ ազգակիցներին, այժմ հրեաներն էլ են ինձ պատվում: Հույս ունեին ինձ անջատել, բաժանել իմ ազգակիցներից, և դեպի ինձ բերեցին օտարներին: Սակայն գոհություն ոչ թե նրանց, այլ Աստծո անվանը, որ նրանց չարությունը ուղղվեց դեպի մեր պատիվը: Այդպես հրեաները մեր Տիրոջը գամեցին խաչին, և Նրանով աշխարհը փրկվեց, բայց դրա համար ոչ թե հրեաներից, այլ Խաչյալից եմ գոհանում:

Թող իմանան, թե ինչպիսին է մեր Աստված. ինչպիսի՜ խաղաղություն ծնեց նրանց նենգությունը, ինչպիսի՜ փառք պատրաստեց: Սրանից առաջ լցվում էր միայն եկեղեցին, այժմ ամբողջ հրապարակը եկեղեցի դարձավ. մեկ գլուխ է այնտեղ և այստեղ: Ոչ ոք ձեր ժողովին չպատվիրեց այդ հանդարտությունը, բայց բոլորը լուռ էին, բոլորի սիրտը ցավում էր: Մի մասը սաղմոսում էր, մյուս մասը երանի էր տալիս սաղմոսողներին:

Ջիարշավներ են այսօր, և ոչ ոք չկա այնտեղ, այլ բոլորը միասին հեղեղի պես այստեղ՝ եկեղեցի հորդեցին: Առատահոս ջրերը ձեր այդ բազմություններն են, գետերը՝ ձեր ձայները, որ վեր՝ դեպի երկինք են ելնում և ցույց են տալիս Հոր հանդեպ ձեր սերը:

Ձեր աղոթքներն ինձ համար լուսափայլ են պսակից ավելի: Տղամարդիկ, միաժամանակ նաև կանայք (քանզի Հիսուս Քրիստոսով խտրություն չկա ո՛չ արուի և ո՛չ էգի միջև (Գաղ. Գ 26): Ինչպե՞ս խոսեմ Տիրոջ զորության մասին: Տեսնում եք, որ ճշմարիտ են ասածներս. որ երբ մարդ քաջասրտորեն համբերում է փորձություններին, առատ պտուղներ է քաղում դրանցից:

Բ. Այդ պատճառով էլ ձեզ ժողովեցի առաքյալների մոտ[1]. տարագրվածներս եկանք հալածվածների մոտ. մենք դավերի ենթարկվեցինք, նրանք հալածվեցին: Եկանք Տիմոթեոսի՝ նոր Պողոսի մոտ: Եկանք սուրբ մարմինների մոտ, որ իրենց վրա կրեցին Քրիստոսի խոցվածքները:

Փորձություններից երբեք չես զարհուրի, եթե լինես արի հոգով զինվոր. բոլոր սուրբերը դրանցով պսակների արժանացան. բազում են նեղությունները մարմնի համար, բայց շատ ավելին է հոգիների խաղաղությունը: Երանի՜ մշտապես լինեին այդպիսի տանջանքները: Այդպես և Հովիվն է ուրախանում՝ չարչարվելով իր ոչխարների համար:

Ի՞նչ խոսեմ: Որտե՞ղ սերմանեմ. չունեմ թափուր վայր: Որտե՞ղ մշակեմ. խոպանացած այգի չունեմ: Որտե՞ղ կառուցեմ շինությունս. լեցուն է տաճարը: Ուռկաններս պատռվում են ձկների առատությունից: Ի՞նչ անեմ. գործելուս ժամանակը ավարտվել է:

Ուսուցանում եմ ձեզ ոչ իբրև վարդապետության կարիք ունեցողների, այլ որպեսզի ձեզ հայտնեմ ձեր հանդեպ սերս: Ահա փթթում ու լցվում են հասկերը: Բազում են խաչները, և ոչ մի տեղ դայլ չկա: Հասունանում են հասկերը, և փուչ չի երևում երբեք: Ահա բազում են այգիները, և չկա աղվես:

[1] Այսինքն՝ Կոստանդնուպոլսի՝ Սուրբ Առաքելոց եկեղեցի, որտեղ հանգչում էին սուրբ Տիմոթեոսի նշխարները:

Թունավոր գազաններն ընկղմվեցին, և գայլերը խուճապահար եղան: Ո՞վ փախստյան մատնեց դրանց. ո՛չ ես՝ հովիվս, այլ դուք՝ խաչներդ: Զարմա՛նք խաչների բարետոհմությունը. հովիվը հեռվում էր, և վանեցին գայլերին:

Ո՛վ հարսի գեղեցկություն, ավելի ճիշտ՝ ողջախոհություն. ամուսինը մոտիկ չէր, և վանեց հոմանիներին: Ո՛վ գեղեցիկ և ողջախոհ հարս. հայտ-հանդիման ցույց տվեց գեղեցկությունը, ցույց տվեց և անարատությունը: Ինչպե՞ս հալածեցիր չնացողներին. որովհետև սիրում էիր ամուսնուդ: Ինչպե՞ս հալածեցիր չնացողներին. սրբությանդ առավելությամբ: Զենք չառա ձեռքս, ո՛չ գեղարդ բարձրացրի և ո՛չ ասպարներ: Իմ գեղեցկությունը ցույց տվեցի նրանց, և չդիմացան նրա պայծառությանը: Ո՞ւր են նրանք այժմ: Անարգության մեջ: Ո՞ւր ենք մենք: Ցնծության մեջ: Մեզ հետ են թագավորները, մեզ հետ են իշխանները: Էլ ի՞նչ ասեմ: Ի՞նչ խոսեմ. «Տերը թող լիացնի ձեզ՝ ձեզ և ձեր որդիներին» (Սաղմ. ՃԺԳ 14) և ձեր ջանքերը պահի իր ուռկանում: Բայց այստեղ ավարտենք մեր խոսքը՝ ամեն բանի համար գոհանալով մարդասեր Աստծուց, Որին փառք հավիտյանս. ամեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ, ԵՐԲ ՁԵՌՆԱԴՐՎԵՑ ՔԱՀԱՆԱ 11

ԸՆԿԱԾ ԹԵՈԴՈՐՈՍԻՆ 21

ՆՈՅՆ ԸՆԿԱԾ ԹԵՈԴՈՐՈՍԻՆ 73

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԽՈՍՔԸ ԵԹԵ ՄԱՐԴՆ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՉՎՆԱՍԻ, ՆՐԱՆ ՈՉ ՈՔ ՎՆԱՍԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ 85

ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ՄԱՍԻՆ 119

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՍԱԾ ՃԱՌԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԵՒ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏԻ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ՄԱՍԻՆ 141

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌԸ. 169

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌԸ 187

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌԸ. 211

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 223

ՍԱՏԱՆԱՅԻ ՄԱՍԻՆ 235

ԸՆԴԴԵՄ ԱՐԲԵՑՈՒԹՅԱՆ 247

ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ, ԵՒ ԹԵ ԻՆՉՈՒ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՆԴՅԱՆ ԱՎԱԶԱՆԸ ԹՈՂՈՒԹՅԱՆ [ԱՎԱԶԱՆ] ՉԻ ԱՍՎՈՒՄ, ԵՒ ՈՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ՈՉ ՄԻԱՅՆ ՍՈՒՏ ԵՐԴՎԵԼԸ, ԱՅԼԵՒ ԵՐԴՎԵԼՆ [ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ], ԱՆԳԱՄ ԵԹԵ ԱՐԴԱՐ ԵՆՔ ԵՐԴՎՈՒՄ 261

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՍԱԾ ՃԱՌԸ՝
ՄԱՔՍԱՎՈՐԻ ԵՒ ՓԱՐԻՍԵՑՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ
ԱՂՈԹԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՈՒՄ 275

ԽՈՆԱՐՀՈՒԹՑԱՆ ԵՒ ԱՌԱՔՑԱԼԻ ԱՅՍ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ.
«ԹԵ՛ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԵՒ ԹԵ՛ ՃՇՄԱՐՏՈՒԹՑԱՄԲ
ՔՐԻՍՏՈՍՆ Է ՔԱՐՈԶՎՈՒՄ» (Փիլիպ. Ա 18) 279

ԱՐԱՐԱԾՈՑ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ 295

ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ՃԱՌԸ ԹՈՎՄԱՍԻ
ԱՆՀԱՎԱՏՈՒԹՑԱՆ ՄԱՍԻՆ 305

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ ՃԱՌԸ՝
ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ՂՈՒԿԻԱՆՈՍ ՎԿԱՅԻՆ 313

ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹՑՈՒՆԻՑ 323

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՃԱՌԸ ԱՔՍՈՐԻՑ ԱՌԱՋ 331

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ
ԱՌԱՋԻՆ ԱՔՍՈՐԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ 337

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՃԱՌԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ Եղնիկ Արքեպիսկոպոս Պետրոսյան
Թարգմանությունը գրաբարից՝ Մարթա Արաբյանի
Էջադրումը՝ Արտակ Տիգրանյանի

Սուրբ Էջմիածին - 2009

Չափսը՝ 60x84 1/16, թուղթը՝ 80 գ.,
տեքստը՝ 2 գույն, կազմը՝ 4 գույն, կոշտ,
ծավալը՝ 344 էջ, տպաքանակը՝ 1000:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարան